

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼ ԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿՈՍՏԻԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՊԵՏՐՈՍԻ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ (XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍ)

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն»  
մասնագիտություն

պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար

ԵՐԵՎԱՆ 2017

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

.....4

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....18

1.1 ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ

ՀԱՎԱՔԱԾՈՒՆ.....18

1.2 ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

ՓՈԽԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....27

1.3 ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՋԱՆՔԵՐԸ XVIII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ

ԳՈՐԾՈՒՄ.....35

1.4 ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆԸ, ՏԱԹԵՎԻ, Ս. ԹԱԴԵԻ ԵՎ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱԿԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԻՆ ՎԵՐԱՔԵՐՈՂ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.....48

1.5 ՀԱՅ ՄԵԼԻՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ.....55

1.6 ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԸ ԳՐՈՂ ԵՎ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՂ ԳՐԱԳԻՐՆԵՐԸ.....86

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱՔԵՐՈՂ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ...92

2.1 ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵԻ ՈՒ ԻՄԱՄ ԱԼԻԻ ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀՐՈՎԱՐՏԱԿ-ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՆԱՀՊԱՏԱԿ ՀԱՅԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....92

2.2 ԻՐԱՆԱՀՊԱՏԱԿ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX

ԴԱՐԻ	I	ԿԵՍԻ	ՊԱՐՍԿԵՐԵՆ
ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ.....			110
2.3 ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՎԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ.....			141
2.4 ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՔԻՆ ՈՐՈԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐՈՒՄ.....			157
2.5 ԿԱԹՈԼԻԿԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԱՀՊԱՏԱԿ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ ՈՒ ՆՐԱ ԴԵՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ	XVIII	ԴԱՐԻ	ՊԱՐՍԿԵՐԵՆ
ՎԱԿԵՐԱԳՐԵՐՈՒՄ.....			180
<b>ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ</b>			
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ ԼԵՉՎԱ-ՈՃԱԿԱՆ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԵՉՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....			196
3.1 ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ			ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....			196
3.2 ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՊԱՏՎԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԻՏՂՈՍԱԾԱՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐՈՒՄ.....			239
3.3 ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐՈՒՄ			ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ.....			245
ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....			275
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....			279
<b>ՀԱՎԵԼ ՎԱԾ</b>			
ԲԱՌԱՐԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ XVII- XIX ԴԱՐԵՐԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ			ԱՅԼ
ԵՉՐՈՒՅԹՆԵՐԻ.....			299

**ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ**

**Թեմայի արդիականությունը:** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը արժեքավոր տվյալներ ու տեղեկություններ են պարունակում XIV դարից մինչև XIX դարի I կեսն ընկած ժամանակաշրջանի տարբեր փուլերում իրանական տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի ու Հայոց Եկեղեցու սոցիալ-տնտեսական ու իրավաքաղաքական դրություն վերաբերյալ: Նրանց փաստագրական նյութը լրացնում, ճշգրտում ու հարստացնում է հայոց պատմության բազմաթիվ հարցեր: Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի տվյալների քննությունը հնարավոր է դարձնում հայագիտության ու հատկապես Հայոց Եկեղեցու նշված շրջանի պատմության տարաբնույթ հարցերի համակողմանի լուսաբանումը: Այդ տվյալները բացահայտում են հայ-իրանական փոխհարաբերությունների պատմության խորքային հարցերին վերաբերող իրողություններ, որոնք կարևոր են այդ հարաբերությունների լիարժեք ըմբռնման ու արժևորման համար:

Հիշյալ վավերագրերի տվյալների քննության հիման վրա տեսանելի են դառնում շիա մահմեդական աստվածաբանության ու իրավագիտության տեսակետները իրանական տիրապետության տակ բնակվող հայ-քրիստոնյաների ու Հայոց Եկեղեցու իրավունքների մասին, դրանց պաշտպանության ուղիները, նրանց հարկային ու այլ պարտավորությունները իշխանությունների նկատմամբ: XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի տեղեկությունների հիման վրա բացահայտվում է հայ ժողովրդի հանդեպ իրանական իշխանությունների վարած քաղաքականության հիմնական միտումները պատմական հիշյալ ժամանակաշրջանի տարբեր փուլերում, նաև տեղական պաշտոնեության բռնած դիրքորոշումը հայությանը վերաբերող զանազան հարցերի առնչությամբ: Ատենախոսության մեջ քննվող վավերագրերի հաղորդումները արդիական նշանակություն ունեն նաև իրանական տիրապետության շրջանում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Գանձասարի կաթողիկոսության ու հայոց նշանավոր վանքերի՝ Տաթևի, Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի, Մակվի Ս. Թադեի ու Ագուլիսի Ս. Թոմա Առաքյալի վանքերի պատմության որոշ հարցերի, մասնավորապես, նրանց

հոգևոր առաջնորդների գործունեության ու կալվածատիրական ունեցվածքի ու սուսմասիրության համար:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի բազմաթիվ անդակ նյութը հնարավորություն է տալիս նոր մանրամասներով հարստացնել XVII դարի II կես - XIX դար I կեսի այլ աղբյուրների հաղորդումներն իրանի ու նրա տիրապետության տակ գտնվող հայկական տարածքների ներքին սոցիալ-տնտեսական հարցերը կարգավորող մեխանիզմների, գործող օրենքների ու դրանց գործադրման միջոցների մասին, լրացնել սոցիալ-տնտեսական ու վարչական եզրույթերի մեկնաբանությունները:

Դիտարկվող ժամանակահատվածի վավերագրերի տվյալների քննությունն ու դրանց հիման վրա կատարվող եզրահանգումները իրանահպատակ հայության իրավա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական դրության հարցերի շուրջ մեծ կարևորություն ունեն այնտեղի հայ համայնքի անցյալի ու ներկայի դրության մասին հստակ պատկերացում ունենալու, ինչպես նաև արդի փուլում իրանի հետ միջպետական փոխհարաբերությունների ներքին շերտերի ու զարգացման ուղիները հասկանալու համար:

Արևելյան Հայաստանի հայկական բնակավայրերի պատմությանն առնչվող պարսկերեն վավերագրերում պահպանված տեղանվանական տարբերակներն արտացոլում են օտարահունչ անվանումների առաջացման պատճառներն ու հանգամանքները՝ մատնանշելով նրանց կապը այլալեզու հարևանների ընկալումների և մահմեդական իշխանությունների լեզվա-հնչյունական նախապատվությունների հետ, այլ ոչ բնակավայրերի էթնիկ կազմի հետ: Որոշակի տվյալներ բովանդակելով օտար անվանումներով հանդես եկող բնակավայրերի հայկական բնակչության սոցիալ-տնտեսական դրության զանազան հարցերի վերաբերյալ՝ այս փաստաթղթերն ինքնին հանդիսանում են նրանց էթնիկ կազմի հայկական լինելու հիմնավոր ապացույցներ, որոնք հերքում են օտար անունների վրա հենվող ադրբեջանցի կեղծարարների շահարկումները այդ բնակավայրերի բնակչության վերաբերյալ:

**Աշխատանքի նպատակն ու ինդիքները:** Սույն

ատենախոսությունը նվիրված է Մատենադարանի XVII դարի II կես - XIX

դար I կեսի պարսկերեն վավերագրերի բովանդակած պատմական բազմաթիվ տվյալների ընդհանրական քննությանը՝ առանձնացնելով ու արժևորելով դրանք ըստ իրենց սոցիալ-տնտեսական, իրավաբանական ու պատմա-աշխարհագրական արժեքի:

Այս նպատակով ատենախոսության մեջ մեր առջև խնդիր ենք դրել՝

- ընդհանրացնելով հայագիտության մեջ պարսկերեն վավերագրերի օգտագործման փորձը և հենվելով նրա ձեռքբերումների վրա՝ ուսումնասիրել, խմբավորել ու համակարգել Մատենադարանի վավերագրերի տվյալները, վերհանել նրանց առանձնահատկությունները,

- ընդգրկված վավերագրերի ու գուգահեռ այլ աղբյուրների տվյալների համադրմամբ ուրվագծել Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի հետազոտվող մասի նմուշների ստեղծման ու հավաքման պատմությունը,

- քննել ու ներկայացնել այդ վավերագրերի տվյալները իրանահայտակ հայության իրավաբանական կարգավիճակի, նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության որոշ հարցերի ու իրողությունների մասին,

- հետազոտել ու արժևորել ուսումնասիրվող վավերագրերի տեղեկությունները Հայոց եկեղեցու ու հայկական վանքերի իրավաբանական ու սոցիալ-տնտեսական դրության գնահատման հարցերի, ներքին որոշ խնդիրների շուրջ,

- ուսումնասիրել տարբեր ժամանակահատվածներում Մատենադարանի պարսկերեն վավերագրերի և հատկապես հրովարտակների գրության սկզբունքները, նրանց էզվա-ոճական ու կառուցվածքային առանձնահատկությունները, նրանց վրա առկա գրանցումների բնույթն ու նշանակությունը,

- հետազոտել հայաբնակ վայրերի անվանումները պարսկերեն վավերագրերում, նրանց ծագման բնույթն ու պատմությունը:

**Ուսումնասիրության ժամանակագրական սահմանները:**

Հետազոտությունն ընդգրկում է Մատենադարանի XVII դարի II կես - XIX դար I կեսի պարսկերեն վավերագրերը, որոնք նախկինում հատուկ ուսումնասիրության առարկա չեն եղել և նրանց

բովանդակած պատմական նյութն ու տվյալները հիմնականում դուրս են մնացել գիտական շրջանառությանից: XVII դարի երկրորդ կեսը նշանավորվում է Սեֆյան շահերի կողմից կրոնական փոքրամասնությունների ու մասնավորապես հայերի նկատմամբ տարվող ներքին քաղաքականության հիմնական ուղղվածության ձևավորմամբ, որն առանց նշանակալի փոփոխությունների շարունակվում է մինչև XIX դարի կեսերը արտացոլվելով իրանահպատակ հայերին տրված հրամանագրերում ու այլ պարսկալեզու փաստաթղթերում:

### **Հիմնականորեն ուսումնասիրվածության աստիճանը:**

Ատենախոսության մեջ քննվող վավերագրերի մի մասի՝ էջմիածնի վանքին վերաբերող պարսկերեն հրովարտակաների ու կալվածագրերի ուսումնասիրությամբ XVIII դարում զբաղվել է Սիմեոն Երևանցի Կաթողիկոսը, որը նրանց հիման վրա մանրամասն հետազոտել է վանքի կալվածատիրության պատմությունը իր «Ջամբռ» աշխատության մեջ և հիմնականում ճիշտ ներկայացրել նրանց հակիրճ բովանդակությունը:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերից ընդամենը մի քանիսը ուսումնասիրվել ու հրատարակվել են Ս. Ջալալյանի<sup>1</sup>, ու Մ. Սմբատյանցի<sup>2</sup> աշխատություններում:

Մատենադարանի XVII դարի II կեսի հրովարտակաների մի մասը ուսումնասիրվել և օգտագործվել է Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերություններին նվիրված Հ. Փափազյանի հետազոտության մեջ<sup>3</sup>: Հայագիտության մեջ մինչև վերջին ժամանակներս շրջանառվում էին Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալների չնչին մասը՝ մատչելի լինելով հիմնականում միջնորդավորված կերպով՝ Սիմեոն Երևանցու աշխատության և վավերագրական նյութերում թարգմանական տարբերակների առկայության դեպքում:

<sup>1</sup> Սարգիս Ջալալեանց, ճանապարհորդությունի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տիփլիս, 1858, էջ 480-498:

<sup>2</sup> Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտաւորէաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք 'ի Շամախւոյ թեմի, Տիփլիս, տպարան Մովսէս Վարդանեանցի, 1896, էջ 225:

<sup>3</sup> А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, 1972.

Մեր աշխատանքները պարսկերեն վավերագրերի ու սուլմնասիրության ուղղությամբ սկսելով 2001 թվականից` XVII - XVIII դարերի 145 պարսկերեն հրովարտակաների բնագրերը, հայերեն ու անգլերեն թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրությամբ, հրատարակեցինք Մատենադարանի պարսկերեն հրովարտակաների հաջորդական երրորդ ու չորրորդ արականերում: Բացի այդ, առանձին հոդվածներում ու սուլմնասիրել և հրատարակել ենք շուրջ երկու տասնյակի հասնող այլ պարսկերեն փաստաթղթեր ու հրովարտականեր:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել ու հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արևելյան աղբյուրագիտության բաժնի կողմից: Ուսուլմնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած երկու մենագրություններում, հոդվածներում և հանրապետական ու միջազգային գիտաժողովներում ներկայացված գեկուցումներում:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Աշխատանքի մեթոդաբանական հիմքը Մատենադարանի XVII-XIX դարերի պարսկերեն վավերագրերի աղբյուրագիտական վերլուծությանն է, որի ընթացքում փորձել ենք այլ աղբյուրների հաղորդումների հետ համեմատելով, արժևորել հետազոտվող վավերագրերի բովանդակած տեղեկության ու տվյալները հայագիտությանն ու իրանագիտությանը վերաբերող տարբեր հարցերի առնչությամբ:

**Աշխատանքի գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:**

Մատենադարանի XVII դարի II կես - XIX դար I կեսի պարսկերեն վավերագրերի հարուստ տվյալների օգտագործումը հնարավորություն է տվել նորովի մոտեցում ցուցաբերել նախկինում բավարար չափով չմեկնաբանված պատմական իրողություններին ու բացահայտել որոշ մանրամասներ: Մասնավորապես, հիշյալ պարսկերեն վավերագրերի տվյալների բազմակողմանի քննությունն ու համադրումը այլ աղբյուրների տեղեկության ներքին հետ թույլ են տվել հստակություն մտցնել տվյալ ժամանակահատվածում իրանական տիրապետության տակ ապրող



հայ ության ու Յայոց Եկեղեցու իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական դրույթանը, հայ-իրանական փոխարարությունների պատմության մի շարք հարցերում: Այդ հարցերից են՝

- Իրանահպատակ հայ գիմմիների իրավունքներն ու պարտականությունները դիտարկվող ժամանակահատվածում, դրանք կարգավորող հիմնական օրենքներն ու վարչաքաղաքական մեխանիզմները, դրանց ծագման ակունքներն ու ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները,
- իրանական տիրապետության ներքո ապրող հայ ության, նաև Յայոց Եկեղեցու իրավունքների հարցում ծագած խնդիրների բնույթը, երևան գալու պատճառները ու դրանց կարգավորման ուղիները,
- Յայոց Եկեղեցու ու նրա նվիրյալների, նաև Նոր Ջուղայի ազդեցիկ հայ ության դերը իրանական իշխանությունների հետ փոխարարություններում և հայ ության ու հայոց վանքերի կենսական շահերի պաշտպանության գործում:
- առավել լիարժեք գնահատական տալ ընդգրկված ժամանակաշրջանի տարբեր փուլերում իրանահպատակ հայ ության ու Յայոց Եկեղեցու նկատմամբ վարվող շահական քաղաքականության հիմնական ուղղվածությանն ու ներքին ծավալներին,
- բացահայտել Յարավային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտության սրման շրջանում հայ ության տարբեր հատվածների ու Յայոց Եկեղեցու քաղաքական դրույթանը վերաբերող որոշ իրողությունները և այդ հակամարտության ազդեցությունը հայ-իրանական փոխարարությունների վրա,
- քննվող վավերագրերի տվյալների հիման վրա նոր մանրամասներով է հարստացվել հայ ազնվականության ու մելիքական տոհմերի պատմությունը, պարզաբանումներ են կատարվել նրանց քաղաքական վարքագծի ու կողմնորոշման դրդապատճառների և այլ խնդիրներում,

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հարուստ հավաքածոյի բնագրագիտական վերլուծությունը թույլ է տվել մանրամասն քննել և նոր դիտարկումներով ու պարզաբանումներով

հարստացնել տվյալ շրջանի պարսկերեն փաստաթղթերի տեսակների կառուցվածքի ու լեզվա-ոճական առանձնահատկությունների, որոշ եզրույթների ուսումնասիրության միջազգային փորձը: Ատենախոսության մեջ նորովի մեկնաբանությանը պարզաբանումներ են կատարվում վավերագրերում հիշատակվող տեղանունների բովանդակային նշանակության, ստուգաբանության ու ծագման պատմա-մշակութային իրողություններում:

**Սկզբնաղբյուրների ու գրականության համառոտագրություն:**

Ատենախոսության մեջ ուսումնասիրվել ու հաշվի են առնվել Մատենադարանի արխիվային մի քանի ֆոնդերում ու արաբատառ ձեռագրերի հավաքածոյի մեջ պահվող բոլոր XVII դարի II կեսից XIX I կեսի պարսկերեն վավերագրերը<sup>4</sup>, տարբեր հարցերի քննության ժամանակ ներգրավվել են նրանց հաղորդումները՝ ճշտվելով ու արժևորվել ժամանակաշրջանի այլ աղբյուրների տեղեկությունների հետ պատմա-համեմատական վերլուծության միջոցով:

Աշխատանքում ներառել ենք նաև թվով շուրջ 700 այն վավերագրերը, որոնք ընդգրկված լինելով Կաթողիկոսական դիվանի 1Է ու 1ը թղթապանակներում, որպես վավերագրեր 1033-1470, 1471-1788, երբևէ մշակված ու նկարագրված չեն եղել և մատչելի չեն եղել ուսումնասիրողներին:

Պարսկերեն վավերագրերի ուսումնասիրման, նրանց բովանդակած պատմա-փաստագրական տեղեկությունների արժևորման ու օգտագործման սկզբունքները մշակելիս և պատմական տարբեր հարցերը քննելիս կարևոր ենք համարել այդ բնագավառում տարբեր ուսումնասիրողների փորձի հետ ծանոթացումը և պարսկերեն վավերագրերի այլ հավաքածոների հրատարակություններում առկա տվյալների օգտագործումը: Մեր համար այս բնագավառում ուղեցույցի դեր են կատարել և մեծապես օժանդակել Հ. Փափազյանի

<sup>4</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա-1ե, 1գ-1ը, վավ. 30-828, 869-1787; թղթ. 2ա-2բ, վավ. 25-379; թղթ. 4, վավ. 1-150; Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 18-136; արաբատառ ձեռ. ֆոնդ, ձեռ. 272, 357, 358 Տե'ս այդ վավերագրերի նկարագրությունը Kostikyan K. Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran, Yerevan, 2017, p. 122-123, 143-144:

հետազոտությունները և վավերագրերի շարքի հրատարակությունը երեք պրակներով<sup>5</sup>:

Ատենախոսության գլուխներում պարսկերեն վավերագրերի պատմության ու բովանդակության քննության համար ներգրավել ենք հայերեն, անգլերեն, պարսկերեն ու թարգմանական տարբերակներով մատչելի տարալեզու այլ աղբյուրների հաղորդումներն ու տվյալները:

Հայկական աղբյուրներից մեր աշխատանքում օգտվել ենք հայ պատմիչներ Առաքել Դավրիժեցու, Եղիա Կարնեցու, Չաքարիա Ազուլեցու, Չաքարիա Քանաքեռցու, Եսայի Հասան-Ջալալյանցի, Աբրահամ Կրետացու ու Մ. Չամչյանի պատմագրական երկերից<sup>6</sup>: Օգտագործել ենք Դիվան Հայոց պատմության շարքում ընդգրկված Ամենայն հայոց կաթողիկոսների նամակագրության ու այլ վավերագրերի նմուշների տվյալները<sup>7</sup>: Ատենախոսության մեջ Հայոց եկեղեցու ու Նոր Ջուղայի դերը իրանական իշխանությունների հետ փոխհարաբերություններում լուսաբանելու նպատակով ներգրավել ենք այդ հարցի ուսումնասիրության համար մեծ արժեք ներկայացնող Սիմեոն Երևանցու, Մ. Օրմանյանի, Հ. Տեր-Հովհանյանի, Ալ. Երիցյանի, Հ. Շահխաթունյանի, ու Վ. Ղուկասյանի հետազոտությունները<sup>8</sup>: Հայկական բնակավայրերի անվանումներին ու պատմությանը վերաբերող հարցերի ուսումնասիրության համար արժեքավոր

<sup>5</sup> А. Папазян, Եզվ. աշխ., 1972. Հ. Փափագյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Բ, Երևան, 1956, 1959, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրերը, պրակ Ա, Երևան, 1968:

<sup>6</sup> Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, Եղիա Կարնեցի, Դիվանը, աշխ. Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1968, Չաքարիա Ազուլեցու որագրությունը, Երևան, 1938, Չաքարիա Սարկավագ, Պատմություն, հ. Բ, Վաղարշապատ, տպ. Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 1870, Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն Համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց, 1868, Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, Երևան, 1973, Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984:

<sup>7</sup> Դիվան Հայոց պատմության, գիրք Գ., Ը, Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը, Թիֆլիս, 1894, 1908, Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմության, կազմեց Վ. Գրիգորյանը, գիրք I, հատոր Ա, Բ, Երևան, ՀԱՍՏ ԳԱ հրատ., 1984, 2003:

<sup>8</sup> Յ. Տեր Հովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որյ Ասպահան, հ. Ա, Բ, Նոր Ջուղա, տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց, 1880, 1881; Մ. Արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Գ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2001; Ա. Դ. Երիցեանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը եւ Կովկասի հայք XIX դարում, մաս Ա (1800 - 1832), Թիֆլիզ, 1894; Հ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ Գաւառացն Արարտայ, հ. Ա, Բ, Էջմիածին, 1842; Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Երևան, 2003; V. Ghougassian, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the 17<sup>th</sup> Century, Columbia University, 1995,

հետազոտությունները շարքում անփոխարինելի են Ղ. Ալիշանի ու Մ. Բարխուդարյանի աշխատությունները<sup>9</sup>:

Հայոց մելիքների պատմությանը վերաբերող պարսկերեն վավերագրերի տեղեկությունների արժևորման համար ընդգրկել ենք նրանց պատմությանը վերաբերող աղբյուրները՝ վիմագիր արձանագրությունների, հայերեն ձեռագրերի հիշատակարանների, տարբեր վավերագրական ժողովածուների մեջ հրատարակված փաստաթղթերի ու պատմագրական երկերի տվյալները<sup>10</sup>, նաև Գեղարքունիքի ու Արցախի մելիքությունների պատմությանը նվիրված ուսումնասիրությունները<sup>11</sup>:

Իրանական պետությանը հպատակ հայ-գիմմիների իրավաքաղաքական կարգավիճակի հիմքում տեսնելով դեռևս վաղ արաբական խալիֆայության շրջանում այլակրոնների հետ Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անուններից կնքված հրովարտակապյամանագրերը՝ նախևառաջ աղբյուրագիտական վերլուծության ենթ ենթարկել նրանց տպագիր ու անտիպ պարսկերեն տարբերակները<sup>12</sup>՝ համեմատելով նրանց բովանդակային

<sup>9</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 2003: Մ. Եսա. Բարխուդարյանց, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երեւան, Գանձասար աստուածաբանական կենտրոն, 1999:

<sup>10</sup> Դիվան հայ վիմագրություն, պրակ IV, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան 1973; պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982; Հայերեն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններ, հ. Ա (1601-1620թթ.), հ. Գ, Երևան, 1974, 1984; Присоединение Восточной Армении к России, ред. Ц. Агаян, т. 1, 2, Ереван, 1972, 1978; Тбилисская коллекция персидских фирманов, т. I, II, подг. М. Тодуа, К. Шамс, Кутаиси, 1995, Тбилиси, 1989; Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. I- VIII, Тбилиси, 1866- 1881, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. 2, ч. I, II, сост. П. Арутюнян, С. А. Тер-Авакимова, Ереван, 1964, 1967. Армяно-русские отношения, т. 4, сост. А. В. Алексанян, В. М. Мартиросян, М. Г. Нерсисян, П. А. Чобанян, Ереван, 1990.

<sup>11</sup> Գ. Շերմազանեան, Նիւթեր ազգային պատմութեան համար. Երեւելի հայ կազուկի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 124-125; Կ. Տեր-Մկրտչյան, Նիւթեր հայ մելիքութեան մասին, Բ. Պրակ, Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք, Ս. Էջմիածին, 1914; Մ. արք. Սմբատեանց Նախիջևանցի, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի որայ ժմ Նոր Բայագիտ գաւառ, Վաղարշապատ, 1895; Մ. Հասրաթյան, Պատմահնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985; Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, 1959; Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, Բանբեր Հայաստանի արխիվների, 1966, № 1, էջ 197-208; Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 158:

<sup>12</sup> Մատենադարան, արաբատառ ձեռ. ֆոնդ, ձեռ. 272, 357, 358; 1327, عهدنامه محمد پیغمبر، اصفهان، 1377، Մատենադարան, Ձեռագրատանից ստացված նյութեր, թղթ. 80գ, վավ. 38; Իրանի պառլամենտի գրադարան, ձեռ. 8855, էջ 3բ-6ա; Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Ա, Երևան, 1956, վավ. 21; Histoire Nestorienne (Chronique de Seert), Patrologia Orientalis, vol. 13, Paris, 1918, pp. 610-617. Տարբեր երկրների ու քաղաքների բնակչության հետ կնքված վաղ իսլամական շրջանի հրովարտակ-ապամանագրերի օրինակներ են հավաքվել ու տպագրվել Սեիդ Մոհամմադ Հուսեյնի ժողովածուի մեջ՝ تهران 1377, نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقیق و گردآوری دکتر سید محمد حسینی، تهران 1377.

առանձնահատկությունները արաբերեն ու հայերեն օրինակների հետ<sup>13</sup>: Այդ վավերագրերը դիտարկվել են՝ ելնելով նրանց ստեղծման հետ կապված պատմական իրողություններից ու հանգամանքներից, մահմեդական իրավագիտության հետ նրանց առնչությունից ու խաղացած դերից: Ուսումնասիրվել են հայ պատմիչների, մասնավորապես Ղևոնդի, Սամուել Անեցու երկերում<sup>14</sup> ցրված տեղեկություններ հիշյալ դաշնագրերի մասին ու հայ ուսումնասիրողների՝ Բ. Կյուլեսերյանի<sup>15</sup>, Տ. Սավալանյանցի<sup>16</sup>, Յ. Անասյանի<sup>17</sup>, Ս. Դադոյանի<sup>18</sup> ու Գ. Մկրտումյանի<sup>19</sup> հետազոտություններն այս բնագավառում:

Իրանահպատակ հայության դրության հարցերի քննության ժամանակ Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները զուգակցել ենք մահմեդական իրավագիտությանը վերաբերող սկզբնաղբյուրների տեղեկությունների ու ուսումնասիրությունների հետ. ինչպիսիք են շիա չորրորդ իմամ Ալի իբն Յուսեյնի (658/9-713/4 թթ.) իրավագիտական աշխատությունը<sup>20</sup>, Աբու Յուսուֆի (մ. 798 թ.) «Չարկամայանում» *զիմմիների* իրավունքներին ու նրանց կողմից վճարվող *ջիզյային* վերաբերող տվյալները, որոնք Ա. Տեր-Ղևոնդյանի հայերեն թարգմանությամբ մատչելի են հետազոտողների լայն շրջանակներին<sup>21</sup>, Բահալ-դին Մոհամմադ իբն Յուսեյն ալ-Ամելիի (1546/7-1620/21 թթ.) շիա դավանանքի իրավագիտությանը և օրենքներին վերաբերող «Ջամե'ե Աբբասի» (Աբբասի ժողովածո) աշխատությունը<sup>22</sup>: Մահմեդական

<sup>13</sup> Մատենադարան, ձեռ. 2622, 2826, 2968:

<sup>14</sup> Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, էջ 35: Սամուել Անեցի, Չալաքմունքի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Երևան, «Նաիրի», 2011, էջ 100,

<sup>15</sup> Տե՛ս հայ պատմիչների հաղորդումների հիման վրա այդ խնդրին անդրադարձը Բ. Եպս. Կիւլեւսերեան, Իսլամը հայ մատենագրութեան մէջ Վիեննա, 1930:

<sup>16</sup> Տ. Սավալանյանց, Պատմութիւն Երուսաղէմի, Կ. Ա., Երուսաղէմ, 1931:

<sup>17</sup> Յ. Ա. Անասեան, Թուրքական ֆուլթուվաթը եւ հայերը, Մանր երկեր, Լոս Անջելես, 1988, էջ 581-620; Յ. Ա. Անասեան, Մահմեդականութիւնը եւ քրիստոնեայ հարկատուները, Ա. Մահմեդի Դաշնագիրը, Բ. Ալիի հրովարտակը, Մանր երկեր, Լոս Անջելես, 1988, էջ 627-632:

<sup>18</sup> Seta B. Dadoyan, The Armenians in the Medieval Islamic World. Paradigms of Interaction seventh to Fourteenth Centuries, v. I, Transaction Publishers New Brunswick (U.S.A.) and London (U.K.), 2011.

<sup>19</sup> Գ. Մկրտումյան, Յրովարտակ – պայմանագրերը որպէս հայ-արաբական հարաբերությունների աղբյուր, Երևան, 2017:

<sup>20</sup> Յիսուս իրավունք ըստ Ալի Էբն Յուսեյնի, Երևան, 2014:

<sup>21</sup> Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ Մատենագիրներ Թ – Ժ դարեր, Ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 100-115:

<sup>22</sup> بها الدين محمد بن حسين عاملي، جامع عباسي، سنة 1331،

տարբեր ուղղությունների ու իրավագիտական դպրոցների տեսակետները գիմմիների ժառանգության կարգի վերաբերյալ հանգամանալից վերլուծության են ենթարկվել Աս'ադ Շեյխ-Օլ-Էսլամիի «Չիմմիների կտակի ու ժառանգության օրենքները մահմեդական ֆակիհների տեսանկյունից» հետազոտության մեջ, որը Լսներգրավել ենք ատենախոսության մեջ<sup>23</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները իրանահպատակ հայ գիմմիների ու Յայոց Եկեղեցու իրավաբանական ու սոցիալ-տնտեսական բնույթի հարցերը քննելիս հաշվի են առնվել իրանական պետականության պատմության ընթացքը և նրա տարբեր փուլերին բնորոշ պատմական իրողությունները: Այս հարցում կարևոր նշանակություն ունեն հայ և օտար հետազոտողների աշխատությունները, որոնցից Սեֆյան պետության պատմության համար հիշատակության են արժանի Մարիամ Միր Ահմադիի «Կրոնն ու պետություն Սեֆյան դարաշրջանում»<sup>24</sup>, Ռոջեր Սեյվորիի «Իրանը Սեֆյան ժամանակաշրջանում»<sup>25</sup> աշխատությունները, և ևս Քեմբրիջի Յամալսարանի Իրանի պատմության Սեֆյան շրջանին վերաբերող հրատարակությունները<sup>26</sup>: Իրանին հպատակ հայկական շրջանների տնտեսական պատմության համար կարևոր նշանակություն ունեն Սիմեոն Երևանցու, Յ. Փափազյանի, Յ. Թորոսյանի, Ի. Պետրոուչևսկու, Մ. Արուստյանի, Կ. Աշրաֆյանի և Վ. Ֆլորի հետազոտությունները<sup>27</sup>, որոնք ընդգրկվել են սույն ատենախոսության համապատասխան բաժիններում արժարժվող խնդիրների քննության ժամանակ:

Աղվանից կաթողիկոսությանը վերաբերող խնդիրների ու սումնասիրման ժամանակ ընդգրկվել ենք այդ հարցերին

<sup>23</sup> اسعد شيخ الاسلامی، احکام وصیت و ارث ذمی از نظر فقهای اسلامی، دانشکده الهیات نشریه گروه تحقیقاتی،

<sup>24</sup> میراحمدی مریم، دین و دولت در عصر صفوی، تهران، نشریت امیر کبیر، 1369

<sup>25</sup> سیوری راجر، ایران عصر صفوی، ترجمه کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1372.

<sup>26</sup> 1380 The Cambridge History of Iran, vol. 6 (The Timurid and Safavid Periods), edited by P. Jackson, Cambridge-London-New York-New Rochelle-Melbourne Sydney, Cambridge University Press, pp. 306-7, 311.

<sup>27</sup> Սիմեոն Երևանցի, նշվ. աշխ.; А. Папазян, նշվ. աշխ.; Յ. Թորոսյան, Էջմիածնի վանական տնտեսությունը XV- XVIII դարերում, Երևան, 2007; И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIXвв., Ленинград, 1949; Арунова М. Р. И Ашрафян, К. З., Государство Надир шаха Афшара, Москва, изд. Восточной Литературы, 1958, W. Floor, The Charkhāna System in Qajar Iran, Iran, vol. 39 (2001), British Institute of Persian Studies,

فلور و.، تاريخچه مالی – مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ترجمه مرتضی کاظمی، تهران، نشر تاریخ ایران، 1394،

անդրադարձող Լ. Մկրտումյանի աշխատությունը<sup>28</sup>: Հայոց վանքերի պատմության հարցերի քննության համար օգտվել ենք Հ. Ռսկյանի հետազոտությունից, որոնցում առավել ամբողջական են ներկայացված ու ուսումնասիրված են Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախակայի ու Մակվի Ս. Թադեի վանքերի պատմությանը վերաբերող աղբյուրագիտական նյութը<sup>29</sup>:

Կաթոլիկական քարոզչության դեմ Հայ Եկեղեցու պայքարն արտացոլող շահական հրովարտակաների ուսումնասիրության ժամանակ օգտագործել ենք Կարմելյան տարեգրության մեջ ընդգրկված հարուստ պատմագրական նյութը<sup>30</sup>՝ համեմատելով այն ժամանակաշրջանի այլ՝ հայ և օտար աղբյուրների հաղորդումների հետ և հաշվի առնելով այս բնագավառում Հ. Հակոբյանի, Վ. Բայբուրդյանի, Մ. Կարապետյանի, Ս. Ճեմճեմյանի, Լ. Խաչիկյանի, Մ. Փանախյանի և Լ. Սեմյոնովայի հետազոտությունները<sup>31</sup>: Իրանի շահերի դիրքորոշումը կաթոլիկական քարոզչության նկատմամբ բացահայտելու նպատակով Մատենադարանի այդ խնդրին վերաբերող հրովարտակաների տվյալները համեմատվել են կաթոլիկական առաքելություններին ի նպաստ ու նրանց գործունեությունն իրանում ապահովելու նպատակով հրապարակված հրովարտակաների նյութի հետ<sup>32</sup>:

Իրանի XVII դարի սոցիալ-տնտեսական պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից է հայ կաթոլիկ հեղինակներից Պետրոս Պետիկի լատիներեն աշխատությունը, որի կարևորության մասին է

<sup>28</sup> Լ. Մկրտումյան, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX, դարերում, Երևան, Տնտեսագետ, 2006:

<sup>29</sup> Հ. Համազասպուկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ. Մաս, Վիեննա, 1942:

<sup>30</sup> A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, v. I, II London, 1939; Թ. Մարտոյան, «Կարմելյանների տարեգրությունը» որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմագիտական աղբյուր, Երևան, 2011

<sup>31</sup> Տ. Հ. Հակոբյան, Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIII դարերում), Արևելագիտական ժողովածու, Երևան, 1960, էջ 267: Վ. Ա. Բայբուրդյան, Արևելյան Հայաստանում միսիոներների գործունեության պատմությունից, ՊԲՀ, 1989, № 2, էջ 147-157; Մ. Կարապետյան, Հայ կաթողիկե թեմը եւ Էթնոգրաֆիկական գործընթացները Նախիջևանում XVII-XVIII դարերում, Հ. Սահակ Ճեմճեմյան, Նախիջևանի հայոց վարժարանը եւ Հռոմը, Վենետիկ Ս. Ղազար, 2000, Հովհաննես Բռնեցի, Յաղագս քերականին, աշխ. Լ. Ս. Խաչիկյանի, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1977, Մ. Գ. Панахиян, О режиме капитуляций в Иране (1568-1715), Автореферат диссертации, Москва, 1962; Л. А. Семенова, Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, Ближний и средний Восток. Сборник статей, Москва, 1962, В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке, Ереван, 1969.

<sup>32</sup> شاه عباس: مجموعه اسناد و مکاتبات تاریخی همراه با یادداشت‌های تفصیلی، جلد سوم، به اهتمام دکتر عبد الحسن نوابی، تهران، انتشارات بنیاد فرهنگ ایران، 2537، ص. 286-7. یکصد و پنجاه سند تاریخی از جلایریان تا پهلوی، بکوشش سرهنگ جهانگیر قایم مقامی، ص. 24

խոսում նրա լատիներեն բնագրի անգլերեն թարգմանությունը և հրատարակությունը նշանավոր իրանագետ Վ. Ֆլորի ու Կ. Օահեի աշխատասիրությամբ<sup>33</sup>:

Սեֆյան ժամանակաշրջանի վարչա-տնտեսական կառուցվածքի, հարկային և այլ եզրույթների ուսումնասիրության ու մեկնաբանության համար մեծ կարևորություն ունեն իրանում աֆղանական տիրապետության շրջանում գրված երեք աշխատություններ, որոնք նվիրված են Սեֆյան պետության վարչա-քաղաքական կառուցվածքին, պաշտոնյաներին, նրանց գործունեության շրջանակներին, վարձատրության ձևերին ու տիտղոսներին: Այդ աշխատություններն են «Թեզքիրաթ ալ-մոլուք» (Թագավորների հիշատակարանը), «Դասթուր ալ-մոլուք» (Թագավորների կարգը) և «Էլ դաբ վամավաջիբ-ե դովրե-ե սալաթին-ե սեֆևիե» (Սեֆյան թագավորների ժամանակաշրջանի տիտղոսներն ու ռոճիկները): «Թեզքիրաթ ալ-մոլուք» աշխատությունը արևելագետների ու շադրությանն էր արժանացել դեռևս XX դարի առաջին կեսին և 1943 թ. նրա, այն ժամանակ հայտնի միակ Բրիտանական թանգարանում պահվող ձեռագիր օրինակը (B.M. 9496) ֆաքսիմիլե տարբերակով, անգլերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով հրատարակվել էր Վ. Մինորսկու աշխատասիրությամբ<sup>34</sup>: Այդ աշխատության բնագիրը 1954 թ. Դաբիրսիյադի կողմից հրատարակվում է Թեհրանում<sup>35</sup>: Յետագայում 1969 թ. Մուհամմադ Թադի Դանեշ փաժուհի կողմից հայտնաբերված այդ աշխատության մեկ այլ ձեռագրի հիման վրա ճշտվում է նրա հեղինակի անունը՝ Միրզա Սամի'ա: Իրանցի հետազոտողն այդ մասին նշում է նույն թեմատիկայով գրված մեկ այլ աշխատության՝ Մուհամմադ Ռաֆի' Անսարիի «Դասթուր ալ-մոլուքի» առաջաբանում<sup>36</sup>: «Թեզքիրաթ ալ-մոլուքի» հեղինակն իր աշխատությունը գրելիս հենվել է ավելի վաղ գրված «Դասթուր ալ-մոլուքի» վրա, որի հեղինակը եղել է Սեֆյան պետության բարձրաստիճան պաշտոնյա՝

<sup>33</sup> A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, translated from the Latin and annotated by Collette Ouahes and Willem Floor, Washington, Mage publishers, 2014.

<sup>34</sup> Tadhkirat al-mulūk, A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, 1943.

<sup>35</sup> تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، تهران، کتابفروشی زوار، 1332.

<sup>36</sup> دستور الملوك ميرزا رفيعا، به کوشش وتصحيح محمد اسماعيل مارچينکوفسکي، ترجمه علی کردآبادی، تهران، 1385.



*մուսթովֆի ալ-մամալիք*: Այս աշխատությունը որպես Սեֆյան պետության վարչա-քաղաքական կառուցվածքի սկզբնաղբյուր խմբագրվել ու հրատարակվել է Իրաջ Աֆշարի կողմից 2001 թ., ապա անգլերեն թարգմանությամբ և մանրամասն մեկնաբանությամբ ներկայացվել Մուհամմադ Իսմայիլ Մարչինկովսկու կողմից<sup>37</sup>:

Երրորդ աշխատությունը գրվել է 1720-ական թվականների վերջին՝ *մաջլեսնևիս* Միրզա Ալի Նադի Նասիրի կողմից, որը սերում էր Օրդուբադում ապրող տոհմական *մոնշի ալ-մամալիքների* ընտանիքից<sup>38</sup>: Այս սկզբնաղբյուրը, որ տպագրվել է Թավրիզում Յաջի Յուսեյն Աղա Նախջևանիի հավաքածոյում գտնված միակ ձեռագրի հիման վրա հարուստ տեղեկություններ է բովանդակում Սեֆյան վարչակարգի պաշտոնյաների, այդ պաշտոնները զբաղեցրած անձանց տիտղոսաբարերի, գործառույթների, նրանց ենթակաների, ռոճիկի, եկամտի աղբյուրների ու աշխատավայրի մասին: Սկզբնաղբյուրում առատ տեղեկություններ կան ինչպես կենտրոնական ապարատի պաշտոնյաների, այնպես էլ երկրի շրջանները կառավարող *վալիների*, *բեկլարբեկերի* ու *հաքիմների* մասին: Երեք աշխատություններն էլ գրվել են որպես Սեֆյան վարչական ապարատի ուղեցույց Իրանի աֆղան տիրակալների պաշտոններում պատվերով երկրի կառավարման նախորդ շրջանի փորձը նոր իշխանություններին փոխանցելու համար: Նրանք թեև որոշ հարցերում բովանդակում են միմյանց հակասող տվյալներ, այնուամենայնիվ միմյանց լրացնելով՝ տալիս են Սեֆյան վարչա-քաղաքական կառուցվածքի առավել ամբողջական պատկերը:

Սեֆյան շրջանի պարսկերեն գրագրության կանոնների ու որոշ եզրույթների, հատկապես վավերագրերի տեսակների առանձնահատկությունների ու սումնասիրության ու բնորոշման համար արժեքավոր սկզբնաղբյուր է «Մոնշաթ-ե Սուլեյմանի» (Սուլեյմանի նամակագրությունը) աշխատությունը՝ գրված շահ Սուլեյմանի գրագրատան անհայտ գրագրի կողմից<sup>39</sup>: Պարսկերեն վավերագրագիտության սկզբունքային հարցերի

<sup>37</sup> M. Ismail Marcinkowski, Dastur al-Moluk, Encyclopædia Iranika, originally published 2005, տես կայքէջ. <http://www.iranicaonline.org/articles/dastur-al-moluk> .

<sup>38</sup> نصیری میرزا علی نقی، القاب و مواجب دورة دور سلاطين صفوی، به تصحیح یوسف رحیم لو، مشهد، 1371، ص. 17

<sup>39</sup> منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، به کوشش رسول جعفریان، تهران، 1388.

ուսումնասիրությանը նվիրված արժեքավոր աշխատություններին ցենզահանգիր Ղայեմմաղամիի և Սամ Ալիի հետազոտությունները, որոնցում աղբյուրագիտական լայն հենքի վրաներկայացվում են Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական ժամանակաշրջանի վավերագրերի տեսակները, նրանց գրություն ու կառուցվածքի առանձնահատկությունները<sup>40</sup>:

## **ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ**

### **ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԱՌԼՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

#### **1.1 Պարսկերեն վավերագրերի օգտագործումը հայ ազգիտական հետազոտություն և Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուն**

Հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրների մեջ իրենց հատուկ տեղն են զբաղեցնում պարսկերեն վավերագրերը: Պատմական Հայաստանի արևելյան շրջանները դարեր շարունակ գտնվելով իրանական պետությունների տիրապետության տակ, ինչպես նաև

<sup>40</sup> سام علی، بررسی فرمان نویسی دوره اول قاجار، تهران، انتشارات کلک زرین، 1392، 40  
قایم مقامی ج، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، تهران، سلسله انتشارات انجمن آثار ملی 1350،

բռնագաղթերի ենթարկվելով դեպի Իրանի ներքին նահանգեր՝ հարկադրաբար առնչվել են իրանական իշխանության ունեցած հետու ապրել իրանական օրենքներով: Յետևաբար զարմանալի չէ պարսկերեն փաստաթղթերի առատությունը Էջմիածնի կաթողիկոսարանի, հայոց վանքերի ու այլ արխիվային հավաքածուներում:

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում պահվող պարսկերեն վավերագրերի հարուստ հավաքածուն դեռևս XIX դարից գտնվել է հայագետների ու իրանագետների ուշադրության կենտրոնում: Այս վավերագրերից շատերի բովանդակած տվյալներն իր պատմության մեջ օգտագործել և շուրջ երկու տասնակ վավերագրեր՝ հրովարտակներ, կտակագրեր և այլ փաստաթղթեր թարգմանաբար ներկայացրել է Յ. Տեր-Յովհանյանը<sup>41</sup>: Շուրջ մեկ տասնյակ պարսկերեն վավերագրեր անգլերեն թարգմանությամբ հրատարակվել են Վ. Ղուկասյանի Նոր Ջուղայի պատմությանը նվիրված ուսումնասիրությանը կից<sup>42</sup>: Նոր Ջուղայի հայ համայնքի պատմությանը նվիրված հիմնարար հետազոտությունն է անցկացրել իրանցի ուսումնասիրող Շոքուհալ-Սադաթ Արաբի Յազեմին, որն իր գրքի հավելվածում ներկայացրել է Ս. Ամենափրկիչ վանքի հավաքածուի Սեֆյան շահերի 101 հրովարտակների բնագրերը՝ ընդգրկելով նաև Յին Ջուղայի պատմությանը վերաբերող շահական հրամանագրերը<sup>43</sup>: Ս. Ամենափրկիչ վանքի հավաքածուի մեջ Նադիր շահի 9 հրովարտակներ են ուսումնասիրվել ու ներկայացվել մեր կողմից Նոր Ջուղայի այդ շրջանի պատմությանը նվիրված առանձին հոդվածում<sup>44</sup>:

Խորհրդային իշխանության տարիներին որոշակի աշխատանք է կատարվել պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության ուղղությամբ: Այս շրջանի ուսումնասիրողներից առաջիններից էր հայ նշանավոր լեզվաբան ու արևելագետ Յ. Աճառյանը, որը վերծանել և թարգմանաբար հրատարակել է Ղարաբաղի պատմությանը

<sup>41</sup> Տեր Յովհանեանց Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 36-40, 46, 48, 52, 84, 130, 135, 170, 193, 312, 479-485, հ. Բ, էջ 239, 243-251:

<sup>42</sup> V. Ghougassian, նշվ. աշխ., էջ 250-277, 324-335:

<sup>43</sup> هاشمی، شکوه السادات اعرابی، ارامنه جلفای نو در عصر صفوی، تهران، 1394، صص. 374-265.

<sup>44</sup> Կոստիկյան Բ., Նոր Ջուղան Իրանի Նադիր շահի իշխանության շրջանում, Յանդե սամսօրեայ, Վիեննա-Երևան, 2016, էջ 279-308:

վերաբերող Մոսկվայի Արտաքին գործերի նախարարության արխիվում Աշոտ Յովհաննիսյանի հայտնաբերած ու պատճենած 6 պարսկերեն և 1 օսմաներեն վավերագիր<sup>45</sup>:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի պարսկերեն պատմական փաստաթղթերի հավաքածուն աշխարհում խոշորագույններից է իր հարստությամբ՝ բաղկացած լինելով շուրջ 2000 միավորից: Հավաքածուի կորիզը եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մատենադարանի արխիվը: Դեռևս Սիմեոն Երևանցի կաթողիկոսը հավաքել է ու Էջմիածնի արխիվում կենտրոնացրել Երևանի խանության մեջ մտնող Գեղարդ, Հավուց Թառ, Խորվիրապ, Ձագավանք, Կեչառիս, Սևան, Հայրեվանք, Բջնի, Կոշավանք, Յովհաննավանք, Սաղմոսավանք ու այլ վանքերի վավերագրերը<sup>46</sup>: XIX դարում Էջմիածնի հավաքածուին ավելացվել են Գանձասարի, Տաթևի, Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի (Մաղարդա), Մակվի Ս. Թադեի, Ագուլիսի Ս. Թովմա Առաքյալի վանքերի հավաքածուները: Մաշտոցյան Մատենադարանի պարսկերեն հավաքածուն հարստացել է հետագայում Դավիթ Մելիք-Շահնազարյանի ու նրա ժառանգների գործով հավաքված փաստաթղթերի, նաև որոշ անհատ նվիրատուների՝ մասնավորապես Խաչիկ վարդապետ Դարյանի, Ավո Յովհաննիսյանի և այլոց ջանքերով:

Պարսկերեն վավերագրերի այս մեծ քանակը պայմանավորված է հայոց պետականության կորստից հետո դարեր շարունակ իրանական տիրապետության տակ ապրող հայության ու Հայոց եկեղեցու կյանքի տարբեր ոլորտներում այդ լեզվի որպես պաշտոնական գրագրության լեզվի կիրառությանամբ: Հիմնականում պարսկերենով էին գրվում մահմեդական իշխանությունների ու հարևան մահմեդականների հետ փոխհարաբերություններն արտացոլող բոլոր պաշտոնական փաստաթղթերը սկսած XIV դարից մինչև XIX դարի կեսերը:

Պարսկերեն վավերագրերի բնագրեր մեզ են հասել սկսած XIII դարից: Սակավաթիվ են XIII-XV իլ խանական և Ակ Կոյունլու ու Կարա Կոյունլու թուրքմեն տիրակալների ժամանակաշրջանի պարսկերեն վավերագրերը, որոնց նմուշներից մի քանիսը պահպանվում են

<sup>45</sup> Հ. Աճառյան, Վավերագրեր հայ-պարսկական յարաբերությունների մասին, Երևան, 1927:

<sup>46</sup> Հ. Փափազյան, Իրավարտական, պրակ Ա, էջ 15:

Մատենադարանի արխիվում<sup>47</sup>: Սակայն որքան մոտենում են դեպի մեր ժամանակները, վավերագրերի թիվն ավելի մեծանում է: Համեմատաբար ավելի շատ են Սեֆյան ու Ղաջարական շահերի ժամանակներից պահպանված վավերագրերը:

Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի մեջ առկա են հետևյալ տեսակները՝

Ա. Հրովարտակներ կամ հրամանագրեր (շահական, խանական, բարձրաստիճան պաշտոնյաների ու հոգևորականների վճիռներ)

Բ. *Շարի'աթական*-նոտարական փաստաթղթեր (առքուվաճառքի, վարձակալության, նվիրատվության, կտակի ու ժառանգության բաժանման, դատական վեճերն ու համաձայնություններն արձանագրող որոշումներ, պարտամուրհակներ, ստացականներ, համախոսականներ՝ երկուսից ավելի անձանց ստորագրությամբ ու կնիքներով հաստատված վկայագրեր և այլն),

Գ. Պետական պաշտոնյաների ու այլ մասնավոր անձանց գրություններ (անձնական ու պաշտոնական նամակագրություն, դիմում-խնդրագրեր ուղղված շահին, խանին, բարձրաստիճան պաշտոնյաներին ու կաթողիկոսին, զեկուցագրեր ու հաշվետվություններ և այլն),

Դ. Պայմանագրեր (արաբ նվաճողների ու հայերի միջև Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անունից կնքված համաձայնագրեր):

Այս տեսակներից յուրաքանչյուրին պատկանող նմուշները իրենց բովանդակած տվյալներով, կիրառման ոլորտով ու նպատակներով արտացոլելով գրության հանգամանքները, պատմական արժեքավոր աղբյուր են տվյալ ժամանակաշրջանի գանազան իրողությունների ու հարցերի ուսումնասիրության համար:

Հարկ է նշել, որ շահական հրամանագրերը որպես կանոններ կայացնում են ընդհանուր պետական մոտեցումը նրանցում արժարժվող խնդրի կամ խնդիրների նկատմամբ և այն գործում էր որպես օրենք հրամանագիրը հրապարակած շահի գահակալության,

<sup>47</sup> 1330 թ. երկու իլխանական հրովարտակների, նաև թուրքմեն տիրակալների հրովարտակների ուսումնասիրությունն ու հայերեն թարգմանությամբ հրատարակությունը տե՛ս Հ. Փափազյան, Երկու նորահայտ իլխանական յառլիղներ, Բանբեր Մատենադարանի, 6, Երևան, 1962, էջ 379-401; Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Ա, Երևան, 1956, վավ. 1-7:

հաճախ նաև տվյալ թագավորական տան մյուս ներկայացուցիչների իշխանության շրջանում, թեև պետության թուլացման պայմաններում չէր բացառվում դրանց խախտումը տեղական պաշտոնյաների կողմից, հատկապես երկրի հեռավոր շրջաններում, որոնցից էր նաև Երևանի նահանգը: Որպես կանոն յուրաքանչյուր նոր գահակալի իշխանության շրջանում հրամանագրերը վերահաստատվում էին՝ նրանցում առկա դրույթներին նոր ուժ հաղորդելու ու ավելի ազդեցիկ դարձնելու նպատակով և հաճախ այդ վերահաստատումը կատարվում էր նախկին հրամանագրի հիման վրա, որի մասին նշվում էր թե՛ բուն տեքստում և թե՛ շահի կնիքի մոտ առկագրության նշաններով:

Մատենադարանի պարսկերեն հրովարտակները ձեռք են բերվել բարձրաստիճանի հոգևորականության կամ ազնվականության ներկայացուցիչների կողմից շահից կամ իշխանական այլևայլ օղակներից (գերագույն դիվանից, սադրի դիվանից, մուֆթիից) իրենց կամ ի պաշտոնե նրանց կողմից ներկայացվող հաստատության նշանների կամ համայնքների իրավունքները պաշտպանելու նպատակով:

Բոլոր մյուս վավերագրերը ևս իրենց բովանդակած նյութով ու զանազան տվյալներով (տնտեսական գործարքների մանրամասներ, տեղանուններ, ազդեցիկ անձանց անուններ, հարկային եզրույթներ, Էթնո-դավանական տեղեկություններ) արտացոլելով իրենց ստեղծման շրջանի պատմական իրողությունները՝ կարևոր սկզբնաղբյուր են այդ ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության համար:

Այնուամենայնիվ, պատմական իրողությունների ու դեպքերի քննության ժամանակ պարսկերեն վավերագրերն օգտագործելիս հարկավոր է հաշվի առնել ժամանակաշրջանը և քաղաքական իրադրությունը Իրանում ու Կովկասում, որովհետև այդ փաստաթղթերի դերն ու ուժը հաճախ պայմանավորված էր կենտրոնական իշխանության դրությամբ: Որքան այն ուժեղ էր, այնքան քննվող փաստաթղթերն ավելի զորեղ ու ազդեցիկ էին, իսկ որքան այն թուլանում էր, այնքան նրանց ուժը նվազում ու կորում էր: Այս իրողությունը զգալի է թեկուզ այն հանգամանքից, որ

Սեֆյան պետության հզորության շրջանի, ինչպես նաև Նադիր շահի կամ Աղա Մուհամմադ խանի հրովարտականերից միայն մեկական հրովարտակ է առնչվում մեկ կոնկրետ խնդրի՝ բովանդակելով հրաման և որոշում նրա կապակցությամբ, մինչդեռ Սեֆյան շահ Սուլեյմանի, Սուլթան Յուսեյնի և հետագա տարիների հրովարտակաները կարող էին կրկնել միևնույն հրահանգը երկու, երեք և ավելի անգամ և այնուամենայնիվ լինել անարդյունավետ: Իրանում կենտրոնական իշխանության անկման շրջանի հեղինակները փաստում են պետական փաստաթղթերի անզորության, տեղական պաշտոնյաների կամայականությունների ու կառավարման ամենատարբեր օղակների անզորության մասին<sup>48</sup>: Ինչպես օրինակ, Եղիա Կարնեցին 1721-2 թթ. իր նամակներում նշում է իր պարտապաններից պարտամուրհակներով նախատեսվող գումարների ետ ստանալու անկարողության մասին, որը դժվար էր անգամ դատարանների դիմելու միջոցով<sup>49</sup>:

Էջմիածնի պարսկերեն փաստաթղթերի առաջին ուսումնասիրողներից Էր Սիմեոն կաթողիկոս Երևանցին (1763-1780), որը նրանց հիման վրա գրում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Երևանի խանության հայոց վանքերի կալվածատիրության ու հարկային իմունիտետի պատմությանը նվիրված «Ջամբռ» աշխատությունը: Այս աշխատության 20-ից 25-րդ գլուխներն ամբողջովին նվիրված են նրա ձեռքի տակ եղած պարսկերեն ու օսմաներեն վավերագրերի հակիրճ բովանդակության ներկայացմանը<sup>50</sup>: Մատենադարանի պարսկերեն վավերագրերից շատերն իրենց հակառակ կողմում կրում են նրա ցուցումներով կամ անձամբ նրա կողմից արված գրառումները նրանց բովանդակության վերաբերյալ: Բարձր գնահատելով այդ օտարալեզու փաստաթղթերը՝ Սիմեոն Երևանցին իր աշխատության մեջ նշում էր. «Արդ՝ քանի որ շատ (նյութեր ու փաստաթղթեր) չգտնվեցին, ինչպես ասացի, դրահամար էլ (բավարարվեցի) այս քչով, որ ձեռքիս տակ ունեցա, տեսա եւ վերահասու եղա նրանց մտածումներին եւ դիտավորություններին, եւ այստեղ (դրանք) գրի

<sup>48</sup> Այս մասին տե՛ս Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխ. Ա. Մաղալյանի, Երևան, 2010, էջ 41-42:

<sup>49</sup> Եղիա Կարնեցի, դիվան, էջ 92, 96, 98, 107, 134, 136 և այլն:

<sup>50</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 292-378:

առա, որպեսզի դրանք ևս չկորչեն: Քանզի թեեւ տվողներն այլ ազգիներ են եւ մեր կրոնին թշնամի, սակայն նրանց տվածներն ու հրամանագրերը մեր այս երկրի համար օգուտ տվող են, (ցավեր) բուժող եւ ապահովություն (բերող)... Սա նրա համար եմ երկար ասում, որպեսզի դու եւս զգուշությամբ պահես քեզ մոտ այն մնացածները, որ դու ունես: Եվ չասես, թե այժմ այսինչ հրովարտակը պիտանի չէ, այլ եւ եթե թագավորները չկան, ինչի են պետք նրանց հրամանները, որովհետև կրող են պիտանի լինել շատ անգամ ...Եվ հատկապես այն, որ ինչքան թագավորական թուղթ գտնվելիս լինի (Սուրբ) Աթոռում, այնքան պատվաբեր է նրա համար...»<sup>51</sup>:

Սիմեոն Երևանցու «Ջամբռ» ոչ միայն էջմիածնի տնտեսական պատմությանը նվիրված արժեքավոր հետազոտություն է, այլ և երկար տարիներ միջնորդ աղբյուր է հանդիսացել հետագա հետազոտողների համար, որոնք զբաղվել են Երևանի նահանգի ու Մայր Աթոռի պատմության զանազան հարցերի ուսումնասիրությամբ:

XIX դարում պարսկալեզու վավերագրեր իրենց աշխատություններում ընդգրկել ու նրանց հաղորդումներից օգտվել են Ս. Ջալալյանը, Մ. Սմբատյանցը, Բաֆֆին, Կ. Տեր-Մկրտչյանը և ուրիշներ: Մասնավորապես Ս. Ջալալյանն իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Յայաստան» աշխատության վերջում թարգմանաբար տպագրել է Աղվանից կաթողիկոսությանը վերաբերող 14 պարսկերեն հրովարտակ<sup>52</sup> մտավախություն ունենալով, որ հետագայում դրանք հնարավոր է, որ կորեն, ինչպես, որ դա պատահեց նրա ճանապարհորդության ընթացքում<sup>53</sup>: Այնուամենայնիվ այդ վավերագրերը կամ նրանց պատճենները պահպանվել են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում և վերահրատարակվել են Մատենադարանի պարսկերեն հրովարտակների մատենաշարում<sup>54</sup>:

Մ. Սմբատյանցը Շամախու թեմի նկարագրությանը նվիրված իր աշխատության մեջ թարգմանաբար ներկայացնում է շահ Աբբաս Բ-ի (1632-1666 թթ.) հիջրայի 1062թ. (1651/2 թ.) հրովարտակը՝ հրապարակված ի

<sup>51</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 292:  
<sup>52</sup> Սարգիս Ջալալեանց, նշվ. աշխ., Մասն Բ, Տիփսիս, 1858, էջ 480-498:  
<sup>53</sup> Սարգիս Ջալալեանց, նշվ. աշխ., Մասն Բ, էջ 480:  
<sup>54</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա., վավ. 3, պրակ Բ, վավ. 5, 23, Բ. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Գ, Երևան, 2005, վավ. 1, 14, 43, Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ վավ. 210:



հաստատումն Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքների<sup>55</sup>: Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել է այդ վավերագրի միայն պատճենը, որը որոշ անճշտություներ ունի Սմբատյանցի ձեռքի տակ եղած բնագրի համեմատությամբ<sup>56</sup>: Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը ծանոթ է եղել նաև Դավիթ Մելիք-Շահնազարյանի Գեղարքունիքում ունեցած կալվածքների ժառանգական իրավունքի կապակցությամբ ռուսական իշխանության տարիներին հարուցված գործին կցված փաստաթղթերին, որոնց մի մասը թարգմանաբար ներկայացրել է իր մյուս՝ Գեղարքունիքի տեղագրությանը նվիրված աշխատության մեջ<sup>57</sup>: Հարկ է նշել, որ Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանց անձամբ չի ընթերցել այդ վավերագրերը, այլ ծանոթացել ու իր աշխատանքներում դրանք ընդգրկել է միջնորդավորված կերպով: Գանձասարի կաթողիկոսի իրավունքները հաստատող վավերագիրը նավերցրել է Ս. Ջալալյանի աշխատություններից<sup>58</sup>, իսկ Գեղարքունիքի վավերագրերին, ինչպես հեղինակն ինքն է նշում, ծանոթացել է եփրեմ կաթողիկոսի դիվանից սարկավազ Հովսեփ Աբուլեանց Տիփսեցու միջոցով<sup>59</sup>: Ինչպես ցույց է տալիս Մ. Սմբատյանցի և Մատենադարանում պահվող Մելիք-Շահնազարյանների արխիվի փաստաթղթերի համեմատությունը, դրանց թարգմանությունները հիմնականում ճիշտ են ներկայացնում նրանց բովանդակությունը<sup>60</sup>: Մ. Սմբատյանցի աշխատությունից էլ օգտվել է Կարապետ Տեր-Մկրտչյանը<sup>61</sup> Դոփեան և Մելիք Շահնազարյան տոհմի պատմությանը նվիրված իր աշխատությունը գրելիս:

Արցախի պատմությանը վերաբերող պարսկերեն վավերագրերի թարգմանությունների մի հավաքածու է կազմած եղել Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը, որի նմուշներից օգտվել ու դրանցից մի քանիսը ծանոթագրություններում տպագրել է Գրիգոր

<sup>55</sup> Մ. արք. Սմբատյանց, Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի, էջ 225:

<sup>56</sup> Համեմատի՛ր ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 1:

<sup>57</sup> Մ. արք. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի, էջ 781-808:

<sup>58</sup> Համեմատի՛ր Ս. Ջալալյան, Ճանապարհորդութիւն ՚ի Մեծն Հայաստան, մասն Բ. Տիփսիս, 1858, էջ 488-9:

<sup>59</sup> Մ. արք. Սմբատյանց Նախիջևանցի, Տեղագիր Գեղարքունի, էջ 781:

<sup>60</sup> Համեմատի՛ր ք. Կոստիկյան, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, Երևան, 2005, էջ 310-322

<sup>61</sup> Կ. Տեր-Մկրտչյան, Դոփեանք եւ Մելիք Շահնազարեանք, էջ 145-146:

Տեր Յովհաննիսյանցը նրա կենսագրությանը նվիրված իր հետազոտության մեջ<sup>62</sup>:

Րաֆֆին ևս, ինչպես ինքն է նշում իր «Խամսայի մելիքությունները» աշխատության վերջաբանում, այն գրելիս օգտվել է «Բաղդասար միտրոպոլիտի հրովարտակաների, ֆիրմանների, կալվածագրերի, արձանագրությունների ու զանազան պաշտոնական թղթերի հավաքածոյից», որոնք նագտել էր Շուշիում<sup>63</sup>:

Մատենադարանի մի քանի պարսկերեն վավերագրերից օգտվել է Ի. Պ. Պետրուշևսկին և Յայաստանի ու Ադրբեջանի XVI-XIX դարերի ագրարային հարաբերությունների նվիրված իր հետազոտության հավելվածում կարճ հատվածներ ներկայացրել մի քանի վավերագրերից<sup>64</sup>:

Յայ իրանագետներից ամենահիմնավոր աշխատանքը այս բնագավառում կատարվել է պրոֆ. Յ. Դ. Փափազյանի կողմից: Երկար տարիներ աշխատելով Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ վերջինս ձեռնամուխ է լինում այնտեղ պահվող արաբատառ վավերագրերի ու սումնասիրման ու հրատարակման գործին: Նրա ուսումնասիրությանը են հրատարակվել Մատենադարանի հնագույն պարսկերեն հրովարտակաները, որոնք նաև աշխարհի հնագույն պարսկերեն վավերագրերից են՝ հրապարակված լինելով 1330 թ.<sup>65</sup>: Յ. Փափազյանի աշխատանքի արգասիքն են պարսկալեզու, օսմաներեն և արաբերեն աղբյուրների, հատկապես վավերագրերի վրա հիմնված գիտական հետազոտությունները՝ հայոց պատմության ու իրանագիտական տարաբնույթ հարցերի շուրջ, ինչպես նաև պարսից վավերագրերի եռալեզու (հայերեն, ռուսերեն, պարսկերեն) գիտական հրատարակությունը՝ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» երեք պրակներով: Առաջին պրակում, որ լույս է ընծայվել 1956թ., ընդգրկված են 23 հրովարտակ, որոնցից 4-ը հրապարակված են եղել Ղարա-Ղոյունլու, 3-ը՝ Աղ-Ղոյունլու տիրակալների կողմից, 4-ը՝

<sup>62</sup> Գ. Տեր Յովհաննիսյանց, Բաղդասար Մետրապոլիտ Յասան-Չալալեանցի համառօտ կենսագրություն, Փորձ, Տիփլիս, 1880, հ. 5, էջ 145:

<sup>63</sup> Րաֆֆի, Խամսայի մելիքություններ, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 367:

<sup>64</sup> И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIXвв., Ленинград, 1949, сс. 8-10, 360-364

<sup>65</sup> Յ. Փափազյան, Երկու նորահայտ իլխանական յառլիղներ, Բանբեր Մատենադարանի, հ. 6, Երևան, 1962, էջ 379-401:

Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ի կողմից, 7-ը՝ Թահմասպ Ա-ի կողմից և 1-ական հրովարտակ շահ Իսմայիլ Բ-ի, Ատրպատականի բեկլարբեկի, Սեֆյան Սուլթան Մոհամմադ Խուդաբանդեի, Վրաց Սիմեոն թագավորի կողմից և Մոհամմադ մարգարեին վերագրվող պայմանագիրը: Ընդ որում նրանցից հնագույնը 1449թ. Ղարա-Ղոյունսլու Ջհանշահի հրովարտակն է, իսկ վերջինը՝ 1594թ. վրաց Սիմեոն թագավորինը: Երկրորդ պրակում, որ հրատարակվել է 1959թ., ընդգրկված են 43 հրովարտակ, այդ թվում շահ Աբբաս Ա-ի 16, շահ Սեֆի Ա-ի 6, շահ Աբբաս Բ-ի 17, Երևանի բեկլարբեկեր Ամիր Գուլնախանի 1 ու Քեյխոսրով խանի 2 հրամանագիր և 1 *Ֆայզլա*, որ հրատարակվել է շեյխուլլահիսլամը: Այդ հրովարտակներից հնագույնը հրատարակվել է 1603թ., իսկ վերջինը՝ 1650թ.: Երրորդ պրակն ընդգրկում է 27 կավածագիր, որոնցից հնագույնը կազմվել է 1305թ., իսկ վերջինը՝ 1592թ.:

Յիշյալ պրակների հրատարակումը ծանրակշիռ ներդրում էր պարսկերեն վավերագրագիտության զարգացման գործում: Այն ոչ միայն ուսումնասիրողների համար մատչելի էր դարձնում հիշյալ փաստաթղթերը, այլև հնարավորություն է տվել անվանի գիտնականին հիմնավոր հետազոտությամբ ներկայացնել Արևելյանի Յայաստանի XVI-XVII դարերի հողային հարաբերություններին<sup>66</sup>: Փափազյանի ուսումնասիրությունները այս բնագավառում առաջին հիմնարար գործերից էին, որոնք լայն արձագանք գտան արտերկրում ու որոշակի խթան հանդիսացան իրանագիտության այս ճյուղի զարգացման համար:

Յ. Փափազյանը որպես այս բնագավառում առավել հմուտ մասնագետ, խմբագրել է Վրաստանի արխիվների պարսկերեն հրովարտակների ժողովածուները, որի առաջաբանում բարձր է գնահատված հայ արևելագետի ներդրումն այդ ժողովածուի արժանի գիտական մակարդակով հրատարակության պատրաստելու գործում<sup>67</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության բնագավառում Յակոբ Փափազյանի մշակած սկզբունքները և նրա ուսումնասիրությունները ցույց տվեցին այդ աղբյուրների կարևորությունն ու պատմական բարձր արժեքը,

<sup>66</sup> Папазян А. Д., *ևշվ. աշխ.*, էջ 302:

<sup>67</sup> Тбилисская коллекция персидских фирманов, т. I, с. 9, т. II, с. 8.

նաև ուղեցույց հանդիսացան այդ բնագավառում ոչ միայն մեր, այլև արտերկրի շատ ուսումնասիրողների համար: Մեր ջանքերով Մատենադարանի պարսկերեն հրովարտակների հաջորդ երկու պրակներում՝ հայերեն ու անգլերեն թարգմանություններով և գիտական մեկնաբանություններով հրատարակվեցին XVII դարի երկրորդ կեսի-XVIII դարի 145 պարսկերեն հրովարտակները<sup>68</sup>:

Այսպիսով, Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերը որպես հայոց պատմության սկզբնաղբյուրներ, մշտապես գտնվել են հայագետների ու շաղրության կենտրոնում և օգտագործվել հայոց պատմության տարբեր հարցերի քննության ժամանակ: Պարսկերեն վավերագրերի տվյալների գիտական շրջանառությանը մեծապես նպաստել են որոշ հայագետների ուսումնասիրությունները և հատկապես նրանց բնագրերի ու թարգմանված տարբերակների գիտական հրատարակումը «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» հինգ պրակներում: Այնուամենայնիվ, այդ ահռելի աղբյուրագիտական նյութի միայն մի փոքր մասն էլ իարժեք կերպով օգտագործվել հայագիտության մեջ:

## **1.2 Նոր Ջուղայի դերը Յայոց եկեղեցու և իրանական իշխանությունների միջև փոխարաբերություններում**

Դեռևս XII դարում Յայոց եկեղեցու առաջնորդները գիտակցելով հարևան ժողովուրդների հետ տանելի փոխարաբերությունների հաստատելու անհրաժեշտությունը՝ քրիստոնյա ու մահմեդական պետությունների հետ բանակցություններում հանդես էին գալիս ողջ ժողովրդի անունից և ջանում էին լուծել նրա առջև կանգնած խնդիրները<sup>69</sup>: Յայոց պետականության կորստից հետո Յայոց եկեղեցին դառնում է հայ ժողովրդի շահերը ներկայացնող այն կարևոր օղակը, որի միջոցով ձևավորվում են մահմեդական

<sup>68</sup>Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Գ, Դ, Երևան, 2005, 2008:

<sup>69</sup> Ա. Ա. Բոգոյան, Յայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, Երևան, 1995, էջ 15:

տիրապետության տակ բնակվող հայության կեցության պաշտոնական փաստաթղթերում արձանագրված իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական պայմանները: Այս փաստաթղթերը, որոնք այժմ պատմագիտական բարձր արժեք ունեցող սկզբնաղբյուրներ են, իրենց ժամանակին ունեին կարևոր իրավական ուժ:

Որոշակի նյութական միջոցների ու ազդեցիկ անհատների ջանքերի հետ էր կապված հրովարտականների և *շարի'աթական*-նոտարական փաստաթղթերի ձեռքբերումը: Անուրանալի է Յայեկեղեցու առաջնորդների, հատկապես նրանցից մի քանիսի հանդես բերած նախանձախնդրությունը իրանի աշխարհիկ և հոգևոր իշխանություններից ձեռք բերված փաստաթղթերով իրանահպատակ հայության ու Յայոց եկեղեցու շահերի և իրավունքների պաշտպանության գործում: XVII- XVIII դարերում այս հարցում զգալի դեր էր խաղում Սպահանում հաստատված Նոր Ջուղայի հայ համայնքը ի դեմս նրա ազդեցիկ հոգևոր առաջնորդների ու վաճառականների:

Նոր Ջուղայի հայ վաճառականներն ունեին բարձր սոցիալական կարգավիճակ: Նրանք համարվում էին իրանական հասարակության բարձր խավի ներկայացուցիչներ և նրանցից շատերը կրում էին «խոջա» տիտղոսը, մի տիտղոս, որը տրվում էր մարդկանց՝ ի նշան նրանց հարստության, հատուկ ծառայությունների, խելքի ու արժանիքների<sup>70</sup>: Գտնվելով թագուհի մոր հատուկ հովանավորության տակ՝ հայ խոջաներից շատերը մուտք ունեին դեպի պարսից արքունիք ու արտոնյալ դիրք էին զբաղեցնում: Նրանցից ոմանք հանդես էին գալիս տնտեսական գծով շահի խորհրդականի դերում և մասնակցում Սեֆյան շահի ու եվրոպական երկրների միջև վարվող առևտրական բանակցություններին:

Դեռևս XVII դարի սկզբին Նոր Ջուղայի հայությունն իր ազդեցիկ խոջաների միջոցով կարողանում է կանգնեցնել շահ Աբբաս Ա-ի հերթական կործանարար ձեռնարկումը Արևելյան Յայաստանի հայության դեմ: Բռնագաղթված հայությանը իրենց նոր բնակավայրին՝ Նոր Ջուղային, կապելու նպատակով և կաթոլիկ քարոզիչների խրախուսմամբ շահ Աբբաս Ա-ը մտադիր էր այնտեղ հայերի համար կառուցել մի մեծ կաթոլիկական վանք, որտեղ ըստ

<sup>70</sup> V. Ghougassian, նշվ. աշխ., էջ 80.

Նրա կողմից հրապարակված հրամանագրի, կրոնական արարողությունները պետք է անցկացնեն Յոզեֆ Դապի հոգևորականներից մեկը<sup>71</sup>: Այս նպատակով շահի հրամանով Սպահան են բերվում Ս. Էջմիածնի քարերից մի քանիսը: Այնուամենայնիվ, Նոր Ջուղայի ազդեցիկ հայ վաճառականները և մասնավորապես Խոջա Նազարը կարողանում են կանգնեցնել հայերի համար կործանարար հետևանքներով հղի այդ ծրագրի իրականացումը<sup>72</sup>:

Նոր Ջուղայի թեմը XVII դարում դառնում է Հայոց Եկեղեցու կարևոր թեմերից մեկը, իսկ թեմական կենտրոնը հանդիսացող Ս. Ամենափրկիչ վանքը իր վրա է վերցնում Հայոց Եկեղեցու և Սեֆյան արքունիքի միջև կապն ապահովող կամուրջի դերը: Հարուստ հայ վաճառականների ֆինանսական ու բարոյական աջակցությունը և Էջմիածնի կաթողիկոսի ու Նոր Ջուղայի առաջնորդների համագործակցությունը ապահովում են այդ հայկական թեմի եզակի կարևորությունն ունեցող դիրքը, որը թույլ է տալիս նրան վերահսկել Ամենայն Հայոց կաթողիկոսների գործունեությունը: Իրենց արտոնյալ դիրքի շնորհիվ հայ ազդեցիկ վաճառականները կարողանում են միջամտել իրանահպատակ հայությանը վերաբերող հարցերին և ազդել շահի կայացրած որոշումների վրա: Բացի ժամանակաշրջանի մյուս աղբյուրներից, այս իրողության փաստացի վկաներն են Մատենադարանում, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում և այլուր պահպանված պարսկերեն վավերագրերը:

Նոր Ջուղայի ազդեցիկ հոգևորականների ու վաճառականների անունները հաճախակի են հիշվում այս կամ այն հրովարտակի մեջ որպես շահի առաջ դրա համար միջնորդ հանդես եկած անձի, որն օգնել է Հայոց Եկեղեցուն ձեռք բերել անհրաժեշտ շահական հրամանագիրը: Այդ մասին փաստում են ինչպես հիշյալ փաստաթղթերը, այնպես էլ այլ աղբյուրներում պահպանված տեղեկությունները:

Նոր Ջուղայի հայության առաջին *քալ անթարներ* Խոջա Սաֆարը, Նրա եղբայր Խոջա Նազարը (մահացել է 1636թ.)<sup>73</sup>, ապա Խոջա Սաֆնազը, որոնք հեղինակություն ունեին Սեֆյան շահ Աբբաս Ա-ի ու նրա

<sup>71</sup> St'ou այդ հրովարտակը ص 24، انتشارات ارتش، ۱۳۴۸ ج. قائم مقامی، یکصد و پنجاه سند تاریخی از جلیریان تا پهلوی، انتشارات ارتش،

<sup>72</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 173-4:

<sup>73</sup> V. Ghougassian, նշվ. աշխ., էջ 32:

հաջորդների մոտ, շահին էին դիմում հայ ությանը վերաբերող տարբեր խնդիրներով<sup>74</sup>:

Այսպես, ինչպես փաստում է շահ Սեֆիի 1629թ. հրամանագիրը, Նոր Ջուղայի խոջա Նազարը անձամբ միջնորդել է Էջմիածնի վանքը նրա վրադրված ամեն տարի որպես *փիշաք* 100 թումանի հարկից ազատելու համար<sup>75</sup>: Ըստ Առաքել Դավրիժեցու, այս խնդրի կապակցությամբ Սպահան էր գնացել նաև Մովսես վարդապետ խոտանանցին, որն այդ ժամանակ Էջմիածնի լուսարարապետն էր և խոջա Նազարի միջնորդութեամբ, մեծ գումար ծախսելով, կարողանում է վերացնել հարյուր թումանի հարկը<sup>76</sup>: Վերջինիս օժանդակությանն էին դիմում նաև հայոց մյուս վանքերի առաջնորդները, ինչպես օրինակ Դարաշամբի Պետրոս եպիսկոպոսը<sup>77</sup> իրենց խնդիրները լուծելու և իրավունքները շահական հրամանագրերով հաստատելու համար:

Չաքարիա Սարկավագի հավաստմամբ Արդեբիլ քաղաքի հայկական եկեղեցին լինելով փոքր՝ չէր բավարարում այնտեղի հայ ության պահանջները, և նրանք որոշում են այն ընդարձակել: Սակայն տեղի մահմեդական հոգևորականությունը, այդ չհանդուրժելով, փակում է հայկական եկեղեցին: Այս հարցով տեղի հայ համայնքը շահ Աբբաս Բ-ին է դիմում և Նոր Ջուղայի խոջա Սաֆնազի միջնորդությամբ հրովարտակ ձեռք բերում, որպեսզի տեղի մահմեդականները հայոց եկեղեցու վերանորոգմանն ու վերակառուցմանը ոչ միայն չխոչընդոտեն, այլ և ամեն կերպ օժանդակեն<sup>78</sup>: Սեֆյան շահ Աբբաս Բ-ի այս, 1661թ. հրովարտակը առկա է Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ<sup>79</sup>:

Իրանահպատակ հայ ության XVII - XVIII դարերի քաղաքական կյանքում Նոր Ջուղայի ունեցած կարևոր դերով պայմանավորված հանդես են գալիս ծագումով ջուղայեցի մի քանի կաթողիկոսներ, որոնք իրենց կապերի ու հեղինակության շնորհիվ կարողանում են լավագույնս կարգավորել Սեֆյան Իրանին հպատակ հայ ության խնդիրները, պաշտպանել նրանու Հայոց եկեղեցու իրավունքները:

<sup>74</sup> Յ. Տեր Յովհաննեսն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 78:

<sup>75</sup> Հ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 19:

<sup>76</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 208:

<sup>77</sup> Հ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 20, էջ 107:

<sup>78</sup> Չաքարիա Սարկավագ, Պատմություն, հ. Բ, էջ 35-37:

<sup>79</sup> Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 11:

Կաթողիկոս Յակոբ Ջուղայեցին<sup>80</sup> Սպահանում ունեցած իր կապերն ու հեղինակությունը ծառայեցնելով Յայոց եկեղեցու ու իրանահպատակ հայության շահերին՝ կարողանում է ձեռք բերել շահական հրամանագրեր, որոնցով ամրագրվում էին նրանց իրավունքները: Մասնավորապես, պահպանվել են նրա ձեռք բերած հրովարտակաները, տրված ի պաշտպանությունն Մայր Աթոռի կալվածատիրական իրավունքների Վաղարշապատ գյուղի ու Շահի արխի ջրանցքի նկատմամբ<sup>81</sup>, նաև շահական հրամանագրերը, որոնք ազատում էին Ս. Էջմիածնի հոգևորականությանը որոշ հարկերից, հայ վաճառականներին ու նվիրակներին՝ Իրանի տարածքներում անօրինական հարկազանձումներից<sup>82</sup>: Ընդհանուր առմամբ, նրա ջանքերով հաստատվում են Մայր Աթոռի նախկին վանական կալվածքները և ձեռք բերվում նորերը Ամիրի (Յայջի), Բոխենիս, Ղարաղոյունսլու, Մելիքի, Օջական, Նորագյուղ, Քասաղ, Թեղնեաց, Սանտոյ, Սևալեր, Բաթռնչ և Բյուրական գյուղերում<sup>83</sup>: Նահագում է նաև վանական կալվածքները ջրով ապահովելու մասին՝ երկու տարբեր տեղերից ջուր բերելով՝ մեկը Նորագյուղի արտերը ոռոգելու ու մյուսը Մայր Աթոռի կարիքների համար<sup>84</sup>: Նրա ջանքերով Իրանի մահմեդական հոգևորականության բարձրագույն ատյանից ձեռք են բերվում հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող կրոնական իրավունքները (օրինակ հայկական օրենքներով ամուսնանալը, հանգուցյալներին թաղելը, եկեղեցու գանգեր խփելը, ժամերգություն կատարելը, ինչպես նաև եկեղեցիների վերանորոգելն ու նորերը կառուցելը<sup>85</sup>) պաշտպանող *ֆաթվաներ* և դրանք վավերացվում շահական հրովարտականերով<sup>86</sup>:

Նախկինում Ս. Ամենափրկչի առաջնորդը և Պարսկաստանի մետրապոլիտը հանդիսացող Ալեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսը<sup>87</sup> հայտնի էր հայ լուսավորչական եկեղեցու դավանանքը պաշտպանող

<sup>80</sup> Յակոբ Դ Ջուղայեցին Ամենայն Յայոց կաթողիկոս է եղել 1655-1680 թթ.:

<sup>81</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 38, 40:

<sup>82</sup> Նույն տեղում, վավ. 8, 9, 21:

<sup>83</sup> Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 2990:

<sup>84</sup> Նույն տեղում, էջ 2918:

<sup>85</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 20, 29, 33, 35 և այլն:

<sup>86</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 28, 31, 34:

<sup>87</sup> Ս. Ալեքսանդր Ա Ջուղայեցին ամենայն հայոց կաթողիկոս է օծվել 1706թ. դեկտեմբերի 7-ին և մահացել է 1714թ. նոյեմբերի 22-ին (Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3183, 3240):



իր աշխատություններով<sup>88</sup>: Սիմեոն Երևանցին նշում է, որ նաեղել է աստվածաբանական գիտելիքներ ունեցող, «շնորհներով լի» մի անձնավորություն, որը հոգ է տարել նաև Մայր Աթոռի վանքի շինությունների վերանորոգման ու կալվածքների ընդարձակման մասին<sup>89</sup>: Պահպանվել են նրա կողմից մի քանի կալվածքների գնումն ու էջմիածնին *վակֆ* արվելը արձանագրող կալվածագրեր<sup>90</sup>: 1712թ. Ալեքսանդր կաթողիկոսը մեկնում է Սպահան, որտեղ արժանանում է շահի սիրալիր ընդունելությանը<sup>91</sup>: Այս այցելության ընթացքում կաթողիկոսին հաջողվում է ձեռք բերել շուրջ մեկ տասնյակ հրովարտակներ, որոնցով նա հաստատում է Մայր Աթոռի գանազան իրավունքները: Նրա կաթողիկոսության շրջանից (1706-1714թթ) պահպանվել են 14 հրովարտակներ<sup>92</sup>, այդ թվում նաև կաթողիկական քարոզչությունը հայության շրջանում սահմանափակող հրամանագրերը:

Նոր Ջուղայի հետսերտկապեր ունեցող կաթողիկոսների դերը հայության իրավունքների պաշտպանության գործում ավելի ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք Հակոբ Ջուղայեցու ու Ալեքսանդր Ջուղայեցու օրոք ձեռք բերված շահական հրովարտակների քանակն ու բովանդակությունը նրանց միջև կաթողիկոսական գահը զբաղեցրած Եղիազար Այնթապցու<sup>93</sup> ու Նահապետ Ուռհայեցու<sup>94</sup> ժամանակաշրջանից մեզ հասած հրովարտակների հետ: Վերջիններս իրենց կաթողիկոսության 26 տարիների ընթացքում կարողանում են ձեռք բերել ընդամենը 5 շահական հրամանագիր, որոնցից չորսը հաստատում էին նրանց կաթողիկոսական իրավունքները և միայն մեկը նպատակ ուներ պաշտպանել Մայր Աթոռի վանական կալվածքները մահմեդականացած հայերի հավակնություններից<sup>95</sup>: Այս իրողության պատճառներից էր այն, որ նրանք չէին օգտվում Նոր Ջուղայի հայության

<sup>88</sup> Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3184-5:

<sup>89</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 39:

<sup>90</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1թ, վավ. 225, 232, թղթ. 1գ, վավ. 950, 1ե, վավ. 1118, 1123, 1125:

<sup>91</sup> Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 604-605, հղում, Մատենադարան, ձեռ 3786:

<sup>92</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 69, 71, 73-84:

<sup>93</sup> Եղիազար Այնթապցին Ամենայն Յայնոց կաթողիկոս է եղել 1681-1691 թթ.:

<sup>94</sup> Նահապետ Ուռհայեցին (կամ Եդեսացին) Ամենայն Յայնոց կաթողիկոս է եղել 1691-1705 թթ.:

<sup>95</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 50, 51, 56, 57, 62, 67:

աջակցությունն ից: Նահապետ Ուռհայեցու կաթողիկոսությունը ջուղահայությունը ընդհանրապես չէր ընդունում՝ համարելով նրան անօրինական և այդ կապակցությամբ անգամ տպագրում է շրջաբերական<sup>96</sup>:

Շատ չեն նաև այս կաթողիկոսների կողմից ձեռք բերված կալվածքները: Պահպանված վավերագրերից հայտնի է դառնում, որ եղիազար կաթողիկոսը գնել էր Դարաքենդում (Ձորագեղ) մեկ կտոր այգի և մեկ տուն<sup>97</sup>, իսկ Նահապետ Ա Եդեսացին՝ 1692թ. Չանանաբի հողը Դարաքենդում<sup>98</sup> և 1700թ. ջրանցքը, որով ջուրը Չանգի գետից Նորագեղով հասցնում էր դեպի Էջմիածին<sup>99</sup>:

Իր մահից առաջ գրված կտակով Ալեքսանդր Ջուղայեցին որպես իր հաջորդ մատնանշում է Նոր Ջուղայի առաջնորդ Մովսես Ջուղայեցուն<sup>100</sup>: Նոր Ջուղայի առաջնորդների կաթողիկոսությունը ջուղայեցիներին հաճոյանալու նպատակով էր արվում և ինչպես իրավամբ նկատում է Մ. Օրմանյանը, կարող և ունևոր ջուղայեցիների օժանդակութեամբ էր, որ կաթողիկոսները «շինարար կը դառնային»<sup>101</sup>: Այնուամենայնիվ, Մովսես Ջուղայեցին հրաժարվում է դառնալ կաթողիկոս և իր փոխարեն առաջարկում Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի եպիսկոպոս Աստվածատուրի թեկնածությունը, որը և 1715թ. մայիսի 7-ին օծվում է որպես կաթողիկոս<sup>102</sup>: Վերջինիս կաթողիկոսության շրջանը (մահացել է 1725թ.) համընկնում է Իրանի Սեֆյան պետության անկման և Յարադային Կովկասում Օսմանյան կայսրության տիրապետության հաստատման շրջանի հետ, ուստի քիչ են նրա կաթողիկոսության ժամանակ ձեռք բերված պարսկերեն վավերագրերը: 1722թ. Սեֆյան շահ Սուլթան Յուսեյնը (1694 – 1722 թթ.) իր գահը հանձնում է գրեթե ողջ Իրանը իրենց ենթարկած և Սպահանը երկարատև պաշարման մեջ առած աֆղան ապստամբների զորքի առաջնորդ Մահմուդին: XVIII դարի 20-ականների սկզբին վերանում է իրանական տիրապետությունը

<sup>96</sup> Ար. Այվազյան, Յայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, 2003, էջ 171-181:

<sup>97</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 180, 187:

<sup>98</sup> Այդ մասին տե՛ս Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 967, թղթ. 1դ, վավ. 451:

<sup>99</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 1016:

<sup>100</sup> Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3239:

<sup>101</sup> Նույն, էջ 3241:

<sup>102</sup> Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3242-3:

Այս րկոՎկաս ու մ` աստիճանաբար փոխարինվելով թուրքական գերիշխանությամբ: Աֆղանական ապստամբությունը և Սեֆյան պետության անկումը ծանր հետևանքներ են ունենում նաև Նոր Ջուղայի հայկական համայնքի համար, որը դրանից հետո խիստ թուլանում է: Այնուամենայնիվ, Նոր Ջուղայի հետ սերտ կապեր ունեցող Աստվածատուր կաթողիկոսը կարողանում է ձեռք բերել երկու կարևոր հրովարտակ, որոնցից մեկը 1718թ. վերահաստատում էր շահ Սուլթան Յուսեյնի 1710թ. հրովարտակը կաթոլիկական քարոզչությունը հայության շրջանում սահմանափակելու մասին<sup>103</sup>, իսկ մյուսը 1724թ. հրամանագիրն է, որով մի շարք դատական ու վարչական առյաններում իրենց իրավունքները հաստատելուց հետո միայն Նոր մահմեդականացած հայերին թույլ էր տրվում հավակնել իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքին<sup>104</sup>: Այս հրովարտակը գործադրվելու դեպքում, փաստորեն, պետք է դժվարացներ Իմամ Ջաֆարի օրենքի գործադրումը մահմեդականացած հայերի ժառանգության խնդիրներում, որի համաձայն վերջիններս կարող էին իրենց հեռավոր և մոտ ազգականների ունեցվածքին տեր դառնալը<sup>105</sup>: Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահվող հիջրայի 1131թ. ռաբի Աամսին (1719 թ.) գրված առքուվաճառքի պայմանագրի համաձայն Աստվածատուր կաթողիկոսը 25 թուման գումարով գնում է Ալիբեկլու գյուղում գտնվող ցանքատարածություններ<sup>106</sup>: Ընդհանրապես, ինչպես իրավացի կերպով նկատում է այդ շրջանում էջմիածնի դրությունը ուսումնասիրած Ա. Այվազյանը, 1706-1723 թթ. ընկած ժամանակահատվածը «եղավ Մայր Աթոռի համար բարեկարգման ու բարգավաճման համար բացառիկ հաջող մի շրջան»<sup>107</sup>:

Սեֆյան պետության անկումից հետո Նոր Ջուղան աստիճանաբար թուլանում է, որի հետևանքով նաև նվազում է նրա դերը իրանահպատակ հայության շահերի պաշտպանության հարցում:

<sup>103</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 272:

<sup>104</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 86:

<sup>105</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Յ. Փափագյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, Երևան 1956, № 3, էջ 87-88, նաև Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, էջ 24:

<sup>106</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1127:

<sup>107</sup> Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 68:

Այնուամենայնիվ, Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալներից երևում է, որ Հայոց Եկեղեցու իրավունքներին լավատեղյակ գործիչներից մեկին՝ Սիմեոն Երևանցուն<sup>108</sup>, հաջողվում է օգտվել Նոր Ջուղայի թեև թուլացած, սակայն դեռևս որոշ հնարավորություններ ունեցող հայերի աջակցությունից: Էջմիածնին պատկանող ջրային ռեսուրսների, մասնավորապես Իմամարխ կոչված ջրանցքի նկատմամբ ոտնձգություններ էին կատարում մոտակայքում ապրող մահմեդականները<sup>109</sup>, որոնց կարողանում է վերջ դնել Սիմեոն Երևանցին՝ ձեռքբերելով փաստաթուղթ այն մասին, որ դրանք «խեյրաթ» են արվել կամ նվիրվել են և կալվածք չեն: 1766թ. Նոր Ջուղայի *քալանթար* Սարգսի աջակցությամբ նա կարողանում է հաստատել Մայր Աթոռի իրավունքները Խան-արխի, Խաթուն-արխի ու Իմամ-արխի կոչված ջրանցքների նկատմամբ<sup>110</sup>:

Ինչպես տեսնում ենք, քննվող վավերագրերի հաղորդումները մատնանշում են Հայոց Եկեղեցու որոշ վաստակաշատ առաջնորդների դերը իրանական տիրապետության ներքո հայության իրավունքների պաշտպանության, հայ-իրանական փոխարաբերությունների կառուցման գործում, որը հատկապես XVII-XVIII դարերում մեծապես հենվում էր Նոր Ջուղայի հայ համայնքի ու նրա ազդեցիկ վաճառականների գործունեության վրա: Պարսկերեն վավերագրերի տվյալներից ակնհայտ է, որ Նոր Ջուղայի դերը XVII-XVIII դարերում այնքան վճռորոշ էր, որ թույլ էր տալիս նրան միջամտել Հայոց կաթողիկոսների ընտրության հարցին, առաջ քաշել իրեն ցանկալի թեկնածուներին, ուղղորդել կաթողիկոսներին և վերահսկել նրանց գործունեությունը:

### **1.3 Էջմիածնի կաթողիկոսների դերը XVIII-XIX դարերում պարսկերեն փաստաթղթերով Հայոց Եկեղեցու իրավունքները պաշտպանելու գործում**

<sup>108</sup> Սիմեոն Ա Երևանցի Ամենայն Հայոց կաթողիկոս է եղել 1763-1780 թթ.:

<sup>109</sup> Դիվան Հայոց պատմության, գիրք Գ., Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը 1763-1767, էջ 74:

<sup>110</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 456:

Թեև 1724-1735թթ. Երևանի նահանգը փաստացի կերպով գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ, այնուամենայնիվ 1731թ. գարնանը շահ Թահմասպ Բ-ի Այսրկոկասյան արշավանքի ժամանակ Աբրահամ Բ. Խոշաբեցի կաթողիկոսին<sup>111</sup> հաջողվում է ստանալ ոչ միայն իր կաթողիկոսական իրավունքները հաստատող, այլև երկու այլ, հայերի համար օգտակար փաստաթղթեր<sup>112</sup>: Նրանցից մեկը վերահաստատում էր նախկին շահերի կողմից Էջմիածնի տրված բոլոր հրամանագրերը, մյուսը՝ արգելում մահմեդականացած հայերին ժառանգության վեճ սկսել իրենց հարազատների հետ:

Նադիր շահի օրոք (1735-1746 թթ.) վերականգնվում է իրանական տիրապետությունը Չարավային Կովկասում, այդ թվում Երևանի, Ղարաբաղի ու Նախիջևանի նահանգներում: Այս շրջանների հայությունն իր հոգևոր ու աշխարհիկ վերնախավի հետ աջակցում էր այդ գործընթացին՝ համագործակցելով իրանական զորքերի հետ օսմանյան բանակի դեմ մարտերում: Նադիր շահն իր հերթին սիրաշահում էր Ամենայն Չայոց կաթողիկոսին ու տեղի հայության՝ նրանց աջակցությունը ստանալու նպատակով: Աբրահամ Կրետացի կաթողիկոսը<sup>113</sup> օգտվելով իր հանդեպ Նադիր շահի ունեցած հատուկ բարեհաճությունից՝ իր կարճատև կաթողիկոսության ընթացքում ձեռք է բերում ավելի քան 50 հրովարտակ<sup>114</sup>, որոնց մի մասը պահպանվել է Մատենադարանի հավաքածուի մեջ<sup>115</sup>: Մատենադարանում պահպանված այս հրովարտակների շարքում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանքից, նրա նվիրակներից ու կալվածքներից անօրինական հարկազանձումները, վանքի եկամուտների նկատմամբ ոտնձգությունները արգելելու և նրանից գանձվող հարկերը հստակեցնելու նպատակով հրապարակված հրովարտակները<sup>116</sup>:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանված 11 հրովարտակ ձեռք են բերվել Ղազար Ջահկեցի կաթողիկոսի<sup>117</sup>

<sup>111</sup> Աբրահամ Բ. Խոշաբեցին Ամենայն Չայոց կաթողիկոս է եղել 1730-1734 թթ.:

<sup>112</sup> Այս մասին տե՛ս Բ. Կոստիկյան, Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-31թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Երևան, 2004, էջ 356-371, նաև Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ., վավ. 88-90, էջ 25-26:

<sup>113</sup> Աբրահամ Գ. Կրետացին Ամենայն Չայոց կաթողիկոս է եղել 1734-1737 թթ.:

<sup>114</sup> Աբրահամ Կրետացի, նշվ. աշխ., էջ 52, 70, 73, 128, 149:

<sup>115</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 5-11:

<sup>116</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1175, 1178, 1180, 1187

<sup>117</sup> Ղազար Ա Ջահկեցի Ամենայն Չայոց կաթողիկոս 1737 – 1751թթ.:

ջանքերով Նադիր շահից և Նրաորդի ու 1738 – 1740 թթ. Իրանի փոխարքա Ռեզա Դոլլի Միրզայից: Ղազար Ջահկեցի կաթողիկոսի ձեռք բերած հրովարտականերից ևս 8-ը հրապարակվել են Իբրահիմ շահի<sup>118</sup> կողմից 1748 – 1749 թվականներին<sup>119</sup>: Այս հրովարտականերն ի հայտ են բերում կաթողիկոսի ջանքերը Յայոց եկեղեցու և հայ ժողովրդի իրավունքներն ու շահերը հարևան քոչվոր բնակիչների, մահմեդականացած հայերի, պետական պաշտոնյաների և մահմեդական հոգևորականների ոտնձգություններից, նաև կաթոլիկ քարոզիչների հայություն համար պառակտիչ հետևանքներ ունեցող գործունեությունից պաշտպանելու ուղղությամբ<sup>120</sup>:

Իր կարճատև կաթողիկոսությունյան ընթացքում Մինաս Ակնեցի կաթողիկոսը<sup>121</sup> փորձում է կարգավորել Էջմիածնի դրությունը Ատրպատականում իշխանության գլուխ անցած և Երևանի նահանգի նկատմամբ հավակնություններ հանդես բերող Ազատխանից ձեռք բերած երեք հրովարտականերով՝ ջանալով գերծ պահել Մայր Աթոռ ռազմական ընդհարումների ժամանակ հասցվող վնասներից<sup>122</sup>:

Էջմիածնի իրավունքները հաստատող 8 հրովարտակ է ձեռք բերում Ազատխանից Ալեքսանդր Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը, որը զբաղեցրել է կաթողիկոսական աթոռը 1753-55 թթ.: Այդ հրամանագրերով ոչ միայն հաստատվում էին նրա կաթողիկոսական իրավունքները, այլև նախորդ շահերի կողմից Էջմիածնին տրված բոլոր հրովարտակաները, արգելվում ավելորդ հարկապահանջությունն ու հավելազանձումները վանքի նվիրականերից, ուխտավորներից ու վանական կալվածքներից<sup>123</sup>: Նույնատիպ բովանդակությամբ հրամանագրեր է ձեռք բերում

<sup>118</sup> Նույն թվականի վերջին Ադիլ շահի դեմ ապստամբում է նրա հարազատ եղբայրը՝ Իբրահիմ Միրզան և դեկտեմբերի 8-ին իրեն շահ հայտարարում (J. R. Perry, Afsharids, Encyclopædia Iranica, 1/6, pp. 587-589, available online at <http://www.iranicaonline.org/articles/afsharids-dynasty> (accessed on 14 March 2014):

<sup>119</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 28-32, 34, 35:

<sup>120</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Բ. Կոստիկյան, Յայոց եկեղեցու շահերի և հայ ապահայանություն համար Ղազար Ջահկեցի կաթողիկոսի ձեռք բերած շահական հրովարտակաների մասին, Բանբեր Մատենադարանի, 18, Երևան, 2008, էջ 115-123, նաև Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1279:

<sup>121</sup> Մինաս Ա. Ակնեցին Ամենայն Յայոց կաթողիկոս է եղել 1751-1753 թթ.:

<sup>122</sup> Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1323, 1325, 1326:

<sup>123</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Դ, վավ. 42-47, նաև Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1327:

Ալ Եքսանդր կաթողիկոսը նաև Երևանի Խալիլ և Յասան Ալի խաներից<sup>124</sup>:

Սիմեոն Երևանցին գովեստի խոսքեր է շռայլում իր նախորդ Յակոբ Շամախեցի<sup>125</sup> կաթողիկոսի հասցեին՝ նշելով, որ նա «տեղյակ էր արքունական ու իրավական օրենքների... գրում և հոգ էր տանում արքունական ու իրավական փաստաթղթերի մասին»<sup>126</sup>:

Յայոց եկեղեցու իրավունքները 1759թ. Յակոբ Շամախեցի կաթողիկոսը ձևակերպում է 14 կետերով և ձեռք բերում դրանք հաստատող հրամանագիր Երևանի Յուսեյն Ալի խանից<sup>127</sup>: Պահպանվել են Քերիմ խանից Յակոբ Շամախեցի կաթողիկոսին ուղղված երկու նամակներ, որոնց բովանդակությամբ հայտնի է դառնում, որ Ամենայն Յայոց կաթողիկոսը նվերներ էր ուղարկել Քերիմ խանին և մտադիր էր նրան այցելել<sup>128</sup>՝ ամենայն հավանականության վերոհիշյալ փաստաթուղթը իր իսկ կողմից ձեռք բերելու նպատակով, որը սակայն չի կարողանում անել վերահաս մահվան պատճառով:

Շատ արագ հասկանալով Էջմիածնի իրավունքների մասին Յակոբ Շամախեցու կողմից Երևանի խանից ձեռք բերված վերը նշված հրամանագրի կարևորությունը՝ Ամենայն Յայոց կաթողիկոս դարձած Սիմեոն Երևանցին առաջին հերթին 1763 թ. այդ հրամանագիրը վերահաստատել է տալիս նույն խանի<sup>129</sup>, ապա նաև Իրանի տիրակալ Քերիմ խանի հրամանագրերով<sup>130</sup>: Սիմեոն Երևանցի կաթողիկոսն իր կաթողիկոսական իրավունքները հաստատող հրամանագրերը ստանում է Իրանի Քերիմ խանից և Օսմանյան Սուլթանից 1763 թ.<sup>131</sup>: Ժամանակաշրջանի աղբյուրները հավաստում են հայությանը խանական իշխանության վայրագություններից պաշտպանելու ուղղությամբ Սիմեոն Երևանցու ձեռնարկած քայլերի մասին<sup>132</sup>: Վերջինիս դերը բացառիկ էր հատկապես Էջմիածնի սոցիալ -

<sup>124</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 411, թղթ. 1Է, վավ. 1338:

<sup>125</sup> Տ. Յակոբ Ե Շամախեցի Ամենայն Յայոց Կաթողիկոս 1759 – 1763թթ.:

<sup>126</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Էջ 46:

<sup>127</sup> Այս հրամանագրի պատճենը տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 428:

<sup>128</sup> Այս մասին տե՛ս Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1397, 1413

<sup>129</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1353:

<sup>130</sup> Ք. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Դ, վավ. 49:

<sup>131</sup> Դիվան Յայոց պատմության, գիրք Գ., Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը 1763-1767, Էջ 55:

<sup>132</sup> Хубов Е., Описание достопамятных происшествій въ Арменіи, СПб, 1811, сс. 3-4.

տնտեսական ու իրավական դրույթ ունը անհրաժեշտ փաստաթղթերով ապահովել ու հարցում: Գիտակցելով պարսկերեն կալվածագրերի ու հրովարտակների կարևորությունը՝ Սիմեոն Երևանցին հիմնովին ուսումնասիրում է դրանք և հենվելով նրանց վրա՝ ետ վերադարձնում էջմիածնի որոշ կալվածքներ ու ջրային ռեսուրսներ<sup>133</sup>՝ ամրապնդելով նրանց պատկանելությունը Մայր Աթոռին Երևանի Յուսեյն Ալի խանի, *շեյխուլլի-իսլամի* ու այլ պաշտոնյաների կողմից ստորագրված ու կնքված փաստաթղթերով<sup>134</sup>: Յայնոց հովվապետին հաջողվում է նաև հատուկ փաստաթղթերով ազատել էջմիածինը Երևանի խանին վճարվող ծանր հարկերից<sup>135</sup>: Սիմեոն Երևանցին ջանում էր պաշտպանել էջմիածինը նաև Քերիմ խանի հնարավոր հարձակումից, ուստի հարկ է համարում նվերներով արժանանալ նրա բարեհաճությանը, որի մասին փաստում է Իրանի տիրակալից ստացված 1778 թ. հրամանագիրը<sup>136</sup>:

Ղուկաս Կարնեցին<sup>137</sup> իր կաթողիկոսական իրավունքների հաստատումը ստանում է Երևանի խանից<sup>138</sup>: Պահպանվել են Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի ու Երևանի Մուհամմադ խանի միջև նամակագրության նմուշները<sup>139</sup>: Նրա կաթողիկոսության շրջանում (1780-1799 թթ.) տեղի են ունենում Աղա Մուհամմադ խանի 1795 և 1797 թթ. արշավանքները Յարավային Կովկաս, որոնցից առաջինի ժամանակ Երևանի նահանգ մտած իրանական զորքերը գլխավորում են Ալի Ղուլի և Ջաֆար Ղուլի խաները<sup>140</sup>: Առաջին արշավանքի ընթացքում իրանական կողմի հետ վարվող բանակցությունների արդյունքում վճարված ծանր փրկագնի գնով<sup>141</sup> հրապարակվում են Աղա Մուհամմադ խանի ու նրա գորավար Ալի Ղուլի խանի հրամանագրերը, որոնցով ապահովվում են էջմիածնի ու նրա միաբանների անվտանգությունը<sup>142</sup>:

<sup>133</sup> Տե՛ս ատենախոսության էջ 42:

<sup>134</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 51-52:

<sup>135</sup> Նույն տեղում, էջ 206, 208:

<sup>136</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 51:

<sup>137</sup> Ղուկաս Ա. Կարնեցին Ամենայն Յայնոց կաթողիկոս է եղել 1780-1799:

<sup>138</sup> Մատենադարան, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռ. 233, էջ 85բ:

<sup>139</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1441, 1448, 1451, 1452, 1457, 1461:

<sup>140</sup> Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Երևան, 1958, էջ 158, 160:

<sup>141</sup> Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմության, գիրք I, հատոր Ա, էջ 30:

<sup>142</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ., վավ. 53; նաև Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 521, 522, 529:



Մեծ հույսեր կապելով Կովկասում Ռուսաստանի առաջխաղացման հետ՝ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը չի անտեսում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ Իրանի տիրակալի դրական վերաբերմունքի պահպանման կարևորությունը: Այս նպատակով 1796 թվականի դեկտեմբերին կաթողիկոսը Դավիթ ու Յովհաննես վարդապետների միջոցով ընծաներ է ուղարկում Իրանի շահին՝ հայտնելու իր հնազանդությունը նրան և հրովարտակ խնդրելու: Կաթողիկոսի պատվիրակները շահի բարեհաճ ընդունելություն են արժանանում ու հրովարտակով վերադառնում<sup>143</sup>: Ադա Մուհամմադ շահի 1797թ. փետրվար-մարտ ամիսներին հրապարակված այդ հրամանագրով Իրանի գինվորականներին ու պետական պաշտոնյաներին արգելվում էր առանց օրինական հիմքի հարկեր պահանջել Վաղարշապատ գյուղից: Այլ Ղուլի խանի նույն շրջանում հրապարակված հրամանագրերն ուղղված Ղուկաս կաթողիկոսին խոսում են այն մասին, որ հայոց հովվապետը Ադա Մուհամմադ խանի երկրորդ արշավանքի նախօրեին գործնական քայլերի էր դիմել նախատեսվող նոր արշավանքի ժամանակ Էջմիածնի ու նրա միաբանների անվտանգությունն ու ազատ երթևեկությունը իրանական տարածքներում ապահովելու համար<sup>144</sup>:

Ղուկաս Կարնեցին հոգ է տանում 1798թ. Իրանում գահ բարձրացած Ֆաթիալի շահի բարեհաճությունը և ստանալու և նրա հրամանագրով Էջմիածնի իրավունքները պաշտպանելու մասին: Ֆաթիալի շահից ստացած (1798 թ.) հրամանագրում հայտնվում էր նրա ուղարկած ընծաների ու *Վիշքաշի* ստացման և նրա նկատմամբ շահական ողորմածության մասին, նաև նշվում էր, որ ծանոթացել են նրա կողմից ուղարկված նախկին շահերի հրամանագրերին և դրանք հաշվի կառնվեն<sup>145</sup>:

XVIII դարի վերջից սրվում է Ռուսաստանի ու Իրանի միջև պայքարը Յարավային Կովկասի նկատմամբ գերիշխանության համար, որը հանգեցնում է XIX դարի սկզբին երկու երկրների անմիջական բախմանը և երկու ռուս-իրանական պատերազմներին (1804-1813 և 1826-1828 թթ.): Այս ժամանակաշրջանից պահպանված պարսկերեն

<sup>143</sup> Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմություն, գիրք I, հատոր Ա, Էջ 31:

<sup>144</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ., վավ. 530, 531:

<sup>145</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ., վավ. 539:

վավերագրերը՝ հրամանագրերը, նամակագրությունն ու մյուս փաստաթղթերը արտացոլում են ռուս-իրանական ու հայ-իրանական փոխարաբերությունների մանրամասները, Յայոց եկեղեցու ու հոգևորականների դիրքորոշումը ստեղծված լարված քաղաքական իրադրության պայմաններում<sup>146</sup>:

Այս պայքարի հորձանուտում հայտնված Ամենայն Յայոց կաթողիկոսների գահը, որը Ղուկաս Կարնեցիի մահից հետո թափուր էր մնացել, դառնում է երկու հզոր տերությունների կողմից առաջադրված թեկնածուների պայքարի առարկան<sup>147</sup>: Շահական կառավարությունը պաշտպանելով Դավիթ կաթողիկոսի իրավունքները՝ նրան նույնով է հրապարակում 1802 – 1805թթ. Մայր Աթոռին տրված հրամանագրերը<sup>148</sup>: Պահպանվել են Ֆաթիալի շահի կողմից 1802թ. հրապարակված հրամանագրերը, որ հաստատում են Դավթի կաթողիկոսական իրավունքները, խրախուսում ու հովանավորում նրան այդ դիրքում, նաև պահանջում այլ ազդեցիկ անձանց հովանավորությունը նրա նկատմամբ<sup>149</sup>: 1804թ. Դավիթ կաթողիկոսի անունով հրապարակված շահական հրովարտակովն ապա 1805թ. Ատրպատականի կառավարիչ թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրով հաստատվում էին Էջմիածնի կալվածատիրական ու ապահարկության, նաև ողջ իրանահպատակ հայ բնակչության կրոնական իրավունքները<sup>150</sup>: Յետագայում փոխելով իր տեսակետը՝ 1807թ. մայիս-հունիս ամիսներին թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրով հաստատվում են Դանիելի կաթողիկոսական իրավունքները<sup>151</sup> և հայտնվում նրա հանդեպ շահական ողորմածության մասին<sup>152</sup>:

<sup>146</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ք. Կոստիկյան, Յայ-իրանական հարաբերությունները ԺԹ. դարի առաջին երեսնամյակում, Լևոն Խաչիկյան, 90 (Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսուներեամյակին նվիրված միջազգային գիտաժողովի), Երևան, 2010, էջ 182-190:

<sup>147</sup> Այս խնդիրն ավելի մանրամասն դիտարկվում է առենախոսության երկրորդ գլխի չորրորդ բաժնում:

<sup>148</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ., վավ. 554, 571, 572, 574, 575:

<sup>149</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1471, 1475, թղթ. 1դ., վավ. 554, 561:

<sup>150</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1478, 1489

<sup>151</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ., վավ. 584:

<sup>152</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ., վավ. 581:

Միաժամանակ ռուսական իշխանությունների կողմից Երևանի ու Նախիջևանի խաներին հասցեագրված նամակներում արտացոլվում է նրանց օժանդակությունը Դանիելին<sup>153</sup>:

1809թ. Ամենայն Յայոց Կաթողիկոս ընտրված Ռուսաստանի թեմի առաջնորդ Եփրեմը չեզոքություն է պահպանում, որպեսզի չվտանգի ռուս-իրանական հակամարտության գոտում բնակվող հայ ժողովրդի ճակատագիրը: Պահպանվել են նրա կաթողիկոսության շրջանին վերաբերող շուրջ 100 վավերագրեր. նամակներ, նրա անունով հրամանագրեր, որոնք ցույց են տալիս Ամենայն Յայոց կաթողիկոսի բարյացակամ փոխարարությունները իրանական իշխանությունների, ինչպես նաև Երևանի, Ղարաբաղի ու Նախիջևանի խաների հետ<sup>154</sup>: 1810թ. հոկտեմբերին Էջմիածին գալուց մի քանի օր անց Եփրեմ կաթողիկոսն ընծաներով այցելության է գնում թագաժառանգ Աբբաս Միրզային, որն իր զորքով գտնվում էր Խորվիրապի մոտակայքում<sup>155</sup>: Վերջինս Ամենայն Յայոց Կաթողիկոսին պատվում է արժանավայել ընդունելությանմբ ու թանկարժեք նվերներով<sup>156</sup>:

Ինչպես փաստում են Մատենադարանի վավերագրերը Ամենայն Յայոց կաթողիկոսները Ֆաթիալի շահի իշխանության հենց սկզբից իրենց կաթողիկոսական իրավունքները հաստատելու համար բավականին մեծ՝ 400 թուման գումար ու շքեղ նվերներ էին որպես *փիշաք* ուղարկում ղաջարական արքունիք: Այդ գումարի ու նվերների ուղարկման փաստերը արձանագրված են Ֆաթիալի շահի 1798 թ. Ղուկաս, 1802 թ. Դավիթ և 1807 թ. Դանիել կաթողիկոսների անունով հրապարակված շահական հրամանագրերում<sup>157</sup>: Այնուամենայնիվ նույնը տեղի չի ունենում Եփրեմ կաթողիկոսի կաթողիկոսության շրջանում, որն ակնհայտ փոփոխություն էր հայության նկատմամբ ղաջարական իշխանությունների վարած տակտիկայում:

<sup>153</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 561, թղթ. 1ը, վավ. 1476:

<sup>154</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 585, թղթ. 1ե, վավ. 596, 599, 606, 610, 616-621, 624, 625, 630, 632-4, 650-2, 661, 667-675, 679-80, 682-686, 691-2, 698, 702-4, 707, 710, 725 -6, 730, 732-733, 748, 782, թղթ. 1գ, վավ. 979-982, թղթ. 1ը, վավ. 1473, 1484, 1486, 1505, 1507, 1511-2, 1527, 1538, 1542, 1545, 1550-2, 1557, 1572-3, 1585-6, 1665, 1670, 1675, 1690, թղթ. 4, վավ. 141,

<sup>155</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Գ, Էջ 3931:

<sup>156</sup> Ա. Դ. Երիցեանց, նշվ. աշխ., մաս Ա, Էջ 58:

<sup>157</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 539, 554:

1810 թ. հոկտեմբերին հրապարակված իր հրամանագրով թագաժառանգը արգելում է Էջմիածնի նվիրակներից հարկեր պահանջելը, պետական պաշտոնյաների միջամտությունը եկեղեցական գործերին, իսկ վանական կալվածքները ազատվում են ամեն տեսակի հարկերից և Մայր Աթոռին տարեկան 400 թումանի ռոճիկ է նշանակվում պետական գանձարանից, մի հանգամանք, որն աննախադեպ էր իրանի անցյալ ողջ պատմության համար<sup>158</sup>: 1810-1815թթ. Եփրեմ կաթողիկոսին հաջողվում է վերահաստատել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքները Մուղնիոմ<sup>159</sup>, Օշականոմ<sup>160</sup>, Աշտարակոմ<sup>161</sup>, Եղվարդոմ<sup>162</sup>, Նորքոմ<sup>163</sup> և Երևանոմ<sup>164</sup> գտնվող կալվածքների նկատմամբ: Այնուամենայնիվ Երևանի խանի դիրքորոշումը, տեղական պաշտոնյաների կամայականությունները և համատարած կաշառակերությունը թղթի վրա էին թողնում շահական իշխանությունների շնորհած իրավունքներն ու հրամանագրերը: Ղաջարական պետության սոցիալ-տնտեսական պատմությունն ուսումնասիրելով՝ Վ. Ֆլորը հանգել է այն եզրակացության, որ այդ պետության հարկերի գանձման հարցում կարևոր դեր ունեին տեղական և ոչ թե կենտրոնական իշխանությունները<sup>165</sup>: Թերևս այս իրողությամբ պայմանավորված ղաջարական իշխանությունների որոշումներն ու հրամաններն ընդհանուր առմամբ չեն բարելավում Էջմիածնի դրությունը:

Երևանի սարդարը 1000 թուման գումարի *փիշաք* էր պահանջում Էջմիածնի տնօրինությանը պաշտոնապես տրամադրված Աշտարակ գյուղի համար, որը հրամանից 13 տարի հետո էլ վանքին չէր հանձնվել: Նույն վիճակում էր նաև Մայր Աթոռի Եղվարդոմ գտնվող կալվածքը: Երևանի խանը ամեն տարի Մայր Աթոռին ենթակա գյուղերից ավելի քան 400 թումանի հարկ էր գանձում<sup>166</sup>:

Հայերի լայն աջակցությունը ռուսներին Ղարաբաղում անհանգստացնում էր իրանի իշխանություններին ու նրան հպատակ

<sup>158</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 615:

<sup>159</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 612:

<sup>160</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 613:

<sup>161</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 627, 630:

<sup>162</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 664, 674:

<sup>163</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 663:

<sup>164</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 622, 624:

<sup>165</sup> فلور و.، تاريخچه مالی - مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ص. 339.

<sup>166</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 707:

Երևանի խանին, որոնք մի կողմից սաստկացնում են հայերի նկատմամբ քաղաքական զգոնությունն ու հետապնդումները, մյուս կողմից՝ փորձում սիրաշահել նրանց<sup>167</sup>:

Ինչպես իրավացի կերպով նկատում է Մ. Օրմանյանը տվյալ շրջանի իրողությունների առթիվ՝ «պարսկական հարստահարությունց պարագաները գրեթե բոլոր դրամ շորթելու շուրջ կը դառնային, եւ ամեն դժուարութիւն եւ բարուրանք դրամական վճարմամբ կը հարթուէր: Անտեղի առաջարկներու դիմաց՝ պարտքի մուրհակն ալ կ'ընդունուէր, որ ետքէն խտիւ պահանջումներու հիմ կը դառնար: Պաշտօնեաներու եւ միջնորդներու զիջողութիւնն ալ առատ ընծաներով կը գնուէր, որոնք ի չգոյէ պատրաստ դրամի փոխառութեամբ կը հայթայթուէին, եւ այս կերպ Մայրաթոռոյ պարտքը հետզհետէ կ'աճէր, եւ 184,000 արծաթ րուբլու գումարի հասած էր, որ է իբր 36800 օսմանեան ոսկի, մէջն ըլլալով վաշխի վաշխից վերայ բարդումները»<sup>168</sup>:

Դավիթ-Դանիելյան կաթողիկոսական աթոռակազմի, խանական ճնշումների ու պատերազմական ծախսերը փակելուն ուղղված դրամաշորթության հետևանքով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Եփրեմ կաթողիկոսի աթոռակազմության տարիներին ծանր հարկերի տակ է հայտնվում:

Պարտքերից ազատվելու համար Յայոց եկեղեցու առաջնորդը դիմում է թագաժառանգ Աբբաս Միրզայի, ապա նաև շահի օգնությանը, որոնք սակայն Եական փոփոխությունն դրության մեջ չէին մտցնում: Այսպես, Աբբաս Միրզայի 1227 հ. թ. ռաբի' առաջին ամսի (1812 թ.) երկու հրամանագրերով Երևանի Յուսեյն խան սարդարին հրահանգվում էր նախկին կաթողիկոս Դավիթ պարտքերից նրանք, որոնց գումարը ծախվել էին Էջմիածնի վանքի ու միաբանների կարիքների վրա, պահանջել Եփրեմ կաթողիկոսից, իսկ որոնք, որ Դավիթն իր վրա էր ծախվել, նրանից պահանջելն<sup>169</sup>: Ֆաթհալի շահի հիջրայի 1237 թ. (1821/2 թ.) հրամանագրով Աբբաս Միրզային կարգադրվում էր, որ քանզի որոշ անօրինականությունների ու խնդիրների հետևանքով Մայր Աթոռը

<sup>167</sup> Վ. Ա. Դիլոյան, Արևելյան Յայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 132-133:

<sup>168</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 4014-5:

<sup>169</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 634, 639:

25-26 հազար թուամանի պարտքի տակ է հայ տնվել, որի վճարումը այն տեղի հոգևորականության ուժերից վեր է, բայց պարտատերերը նրանց նեղում են, ուստի անհրաժեշտ է, որպեսզի այդ խնդիրը լուծվի միայն բուն գումարի վճարմամբ<sup>170</sup>: Երկու տարի անց 1239 հ. թ. ջոմարի առաջին ամսին (1824 թ.) հրապարակված Աբբաս Միրզայի հրամանագրով Ներսես արքեպիսկոպոսին հայ տնվում էր, որ ստացվել են նրա երկու խնդրագրերը և ըստ այդմ կարգադրվել է, որպեսզի տարվա մեջ երկու անգամ Էջմիածնից որևէ մեկը տեղեկացնի այն տեղի դրության ու խնդիրների մասին, իսկ պարտքերի կապակցությամբ կարգադրվել է, որպեսզի գումարի 20 տոկոսից ավելի չպահանջեն, նաև տեղապահ է նշանակվում, որպեսզի կաթողիկոսի բացակայության դեպքում կարգավորի այդ հարցերը<sup>171</sup>:

Ինչպես տեսնում ենք, թեև շահական իշխանությունների կողմից հրապարակված այս հրամանագրերը ուղղված էին Էջմիածնի պարտքերի թեթևացմանը, սակայն դրանք լիովին չէին ազատում դրանցից:

Պահպանվել են այն շրջանի մեծ թվով պարտամուրհակներ ու ստացականներ, որոնք վկայում են Մայր Աթոռի կողմից արված ծանր պարտքերի ու դրանց վճարման մասին<sup>172</sup>:

Ծանր պարտքերը մարելու համար փող հայթայթելու նպատակով Եփրեմ կաթողիկոս 1821 թ. սեպտեմբերին որոշում է գնալ Արցախ այն տեղի հայ մեծահարուստներից օգնություն նստանալու նպատակով: Որոշ հետազոտողների ուսումնասիրության համաձայն կաթողիկոսի Երևանից հեռանալու պատճառը խանի սպառնալիքներն էին կապված ռուսական կայսեր շքանշաններն ու ժապավենները կրելու հետ<sup>173</sup>: Այս առթիվ հարկ է նշել, որ այդ շքանշանները կրելու թույլ տվություն կաթողիկոսը ստացել էր դեռ 1814 թ. թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրով<sup>174</sup>, սակայն նման պարգևներով ներկայանալը Նովոռուզի տոնակատարությանը, իրոք,

<sup>170</sup> Մատենադարան, Կաթողիկոս դիվան, թղթ. 1ե, վավ. 695:

<sup>171</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 709:

<sup>172</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 982, 983, թղթ. 1ը, վավ. 1654, 1656-9, 1662

<sup>173</sup> Վ. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 135:

<sup>174</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 652:

պետք է, որ հաճելի չլինեն ընդգծված իրանական կողմնորոշում ունեցող Յուսեյն խանին:

Արդեն 1821 թ. հոկտեմբերի 2-ին լուր է ստացվում, որ Երևանի խանը զոջացել է կաթողիկոսին հեռանալ ու թույլ տվույթյուն տալ ու համար և հեծյալներ է ուղարկել նրան վերադարձնել ու, այնուամենայնիվ կաթողիկոսին հաջողվում է ծուշի հասնել, որտեղ կարողանում է ստացված գումարներով պարտքերի մի մասը մարել<sup>175</sup>: Եփրեմը թեև դիմել էր Ռուսաստանի իշխանության ունենորին՝ նրանց տարածքն անցնել ու թույլ տվույթյան խնդրանքով, բայց չէր ստացել: 1822թ. նահրաժարական է տալիս ու քաշվում Յաղբատի վանքը, ուր մնում է մինչև 1826թ., որից հետո էլ հեռանում է Թիֆլիս և այնտեղ մնում մինչև 1828 թ. հրաժարեալ կաթողիկոսի անունով: Այնուամենայնիվ, նրա հրաժարականը ոչ ոք չի ընդունում և նոր կաթողիկոսի ընտրության չի լինում, թեև 6 տարի շարունակ էջմիածնում կաթողիկոս չկար<sup>176</sup>:

Այս ընթացքում անդադար գրագրության էր վարվում մի կողմից Իրանի իշխանության ունենորի ու Երևանի խանի, մյուս կողմից էջմիածնի միաբանների, Ներսես Եպիսկոպոսի ու Կովկասի ռուսական իշխանության ունենորի միջև Եփրեմ վերադարձի շուրջ: Յրապարակվում են Երևանի խանի, թագաժառանգի ու շահի հրամանագրերը ապահովության ու էջմիածնի պարտքերի թեթևացման խոստումներով, որոնք սակայն որևէ արդյունքի չեն հանգեցնում<sup>177</sup>:

Մեծ թվով պարսկերեն վավերագրեր են պահպանվել XIX դարի Յայոց եկեղեցու եռանդուն գործիչներից Ներսես Աշտարակեցու անվան հիշատակությամբ: Վերջինս դեռևս Ղուկաս կաթողիկոսի ժամանակներից չնայած իր երիտասարդ տարիքին, խառնվում էր «Յայոց եկեղեցույ բարձրագոյն վարչութեան գործերում և խոնարհ խորհրդականի քօղի տակ՝ թե Ղուկասին, թե Դանիելին և թե Եփրեմին գործել էր տալիս այն, ինչ որ ինքն էր կամենում»<sup>178</sup>: Նա էջմիածնում Դանիել կաթողիկոսի օրոք ստեղծված եկեղեցական խորհրդի՝ սինոդի, ամենից կրտսեր, բայց ամենաեռանդուն անդամն

<sup>175</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 4017-8:

<sup>176</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 4022-3:

<sup>177</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 698ա, 702, 704, 725, 730, 732, 733, թղթ. 1ր, վավ. 1572, 1665, 1669, 1670, 1675, 1676, 1706 և այլն:

<sup>178</sup> Ալ. Երիցեանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 70:

Եր, որը «ինչ ուզում է, այն է անում և ոչ ոք կարայ նորան ընդդիմանալ»<sup>179</sup>: Այնպես, որ Էջմիածնի հիշյալ կաթողիկոսների ձեռնարկումներից շատերի հետևում Ներսեսի նախաձեռնությամբ էր, ինչպես օրինակ Էջմիածնի սինոդի ստեղծումը, Դավթի մորուքը խուզելու հրամանի արձակումը, թագաժառանգ Աբբաս Միրզայի դիրքորոշման փոխումը հօգուտ Դանիելի: Ներսես Աշտարակեցին դիվանագիտական հմտությամբ կարողանում է Եփրեմի Էջմիածնից բացակայության շրջանում փոխարարությունները պահպանել նաև Երևանի խանի ու Իրանի ղաջարական իշխանությունների հետ, շահել նրանց բարեհաճությունը և ապահովել Մայր Աթոռի անվտանգությունը ռուս-իրանական հակամարտության պայմաններում: Մայր Աթոռի թափուր մնացած պահին «հանդիսով ընդունեց Աբբաս Միրզային վանքում, պարսկերեն նրան ճառասաց, սիրելի եղաւ շահգատէին... ձեռք բերեց պարսից տերութիւնից Եփրեմի հաստատութեան հրովարտակը և Աբբաս Միրզայի հրաւիրագիրը»<sup>180</sup>:

Այս բոլոր իրողությունները հաստատվում են Մատենադարանի տվյալ շրջանի պարսկերեն փաստաթղթերով, որոնց մեջ կարելի է մատնանշել Երևանի Սուլիամադու ու Յուսեյն Դուլի խաների նամակներն<sup>181</sup> ու հրամանագրերը<sup>182</sup>, թագաժառանգ Աբբաս Միրզայի ու բարձրաստիճան պաշտոնյաների նամակներն<sup>183</sup> ու հրամանագրերը<sup>184</sup> հասցեագրված Ներսեսին՝ Էջմիածնին ու կաթողիկոսությանը վերաբերող զանազան հարցերի առնչությամբ: Պահպանվել են նաև Ներսես Աշտարակեցու նամակները, դիմում-խնդրագրերն ու այլ փաստաթղթեր ուղղված պարսից իշխանություններին Էջմիածնի զանազան խնդիրների՝ պարտքերի ու իրավունքների ոտնահարման դեպքերի մասին<sup>185</sup>, որոնք ի ցույց են հանում նրա գործադրած

<sup>179</sup> Ալ . Երիցեանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 70:

<sup>180</sup> Ալ . Երիցեանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 71:

<sup>181</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 607, 725, 729, թղթ. 1ը, վավ. 1496, 1619, 1621:

<sup>182</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 592, 593, 642, թղթ. 1ը, վավ. 1539:

<sup>183</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 705:

<sup>184</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 604, 606, 610, 709, թղթ. 1ը, վավ. 1505, 1532:

<sup>185</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 707, 745, թղթ. 1ը, վավ. 1707, 1708, 1710:



եռանդուն ջանքերը Մայր Աթոռի շահերը պաշտպանելու ուղղությամբ:

Ներսես Աշտարակեցու անունը գտնում ենք XIX դարի սկզբի պարսկերեն նաև շատ այլ վավերագրերում. նամակներ, պարտամուրհակներ, ստացականներ, անգամ 1814 – 1828 թթ., երբ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին վարում էր Վրաստանի Յայոց թեմի առաջնորդի պաշտոնը: Այս շրջանի վավերագրերը որոշակի նյութ բովանդակելով Թիֆլիսում նրա ծավալած գործունեության մասին՝ վկայում են Էջմիածնի ինդիքների լուծմանը նրա ունեցած շարունակական մասնակցության ու հոգածության մասին<sup>186</sup>:

1828 թ. Արևելյան Յայաստանի Ռուսաստանին միացումից հետո նվազում է այդ տարածաշրջանին վերաբերող պարսկերեն վավերագրերի թիվը: Մատենադարանում պահվող հետագա շրջանի ոչ մեծ թվով հրամանագրերն ու մյուս վավերագրերը հիմնականում վերաբերում են Ատրպատականի հայոց Ս. Ստեփաննոս Նախավկայի ու Ս. Թադեի վանքերի պատմությանը՝ արտացոլում նրանց խղճուկ դրությունը շրջակա հայ բնակչության 1828 թ. արտագաղթից հետո և իրանական կառավարության մասնակի աջակցությունը նրանց դրության բարելավման գործին:

Այսպիսով, Մատենադարանի XVIII-XIX դարերի պարսկերեն վավերագրերը մատնանշում են Յայոց եկեղեցու առաջնորդների եռանդուն ջանքերը Յայոց եկեղեցու ու հայ ժողովրդի շահերը պաշտպանելու ուղղությամբ և նրանց դերը Իրանի իշխանությունների հետ փոխարաբերությունները կարգավորելու գործում:

### **1.5 Աղվանից կաթողիկոսությանը, Տաթևի, Ս. Թադեի և Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքերին վերաբերող պարսկերեն փաստաթղթերի ձեռքբերման հանգամանքները**

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում զգալի տեղ են զբաղեցնում Աղվանից կաթողիկոսությանը և Արցախ-Ղարաբաղի պատմությանը վերաբերող պատմական վավերագրերը: Յարկ է նշել,

<sup>186</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1661ա, 1663, 1666, 1712:

սակայն որ այս վավերագրերի մի մասի, մասնավորապես Աղվանից կաթողիկոսությանը և հայ մելիքների պատմության վերաբերող շատ փաստաթղթերի բնօրինակները Մատենադարանի արխիվային հավաքածուի մեջ չկան, պահպանվել են դրանց մի մասի ուշ շրջանի (XIX դարի) ոչ այնքան գրագետ պատճենները, որոնք հաճախ լինել սխալ ներով ու տեքստի աղավաղումներով:

Արցախի պատմությանը առնչվող փաստաթղթային բնօրինակները վերաբերում են հիմնականում մի քանի բնակավայրերի պատմությանը, որոնց հավաքման գործում մեծ դեր է ունեցել Խաչիկ վարդապետ Դադյանը: Նա XIX դարի վերջին Արցախի Առաջածոր ու Քուլատակ գյուղերի մոտակայքում հնագիտական պեղումներ անցկացնելու և արձանագրություններ հետազոտելու հետ մեկտեղ հավաքում է նաև տեղի հայկական շրջաններում մասնավոր անձանց մոտ գտնվող հնությունները, ձեռագրերն ու վավերագրերը, որոնք նա, 1894 թ. դառնալով Էջմիածնի վանքի վարդապետ, հանձնում է նրա գրադարանին: Այնտեղից էլ վերոհիշյալ վավերագրերը փոխանցվել են Երևանի Մատենադարանին: Նրա ջանքերի շնորհիվ Մատենադարանի կաթողիկոսական դիվանում իրենց արժանի տեղն են զբաղեցնում Արցախի մի շարք բնակավայրերի՝ Առաջածոր (Դոշանլու), Քուլատակ, Թաղեր և այլ գյուղերի պատմական փաստաթղթերը, որոնք բովանդակում են տվյալ ներգանազան տիպի գործարքների, տեղի հայ մելիքների ու հասարակ ժողովրդի սոցիալ տնտեսական դրություն, նրան կյանքում ծագած գանազան խնդիրների, հարևանների հետ փոխարաբերությունների մասին:

XVII-XIX դարերում Գանձասարի կաթողիկոսների գահը զբաղեցրած կաթողիկոսներից իրենց քաղաքական գործունեությամբ աչքի են ընկել Պետրոս Խանձկեցի, Եսայի, Յովհաննես և Սարգիս Յասան-Ջալալյան կաթողիկոսները, որոնք ձեռք են բերել շահական և այլ փաստաթղթերի պաշտպանությունն հայ բնակչության ու Աղվանից եկեղեցու շահերի:

Այսպես, Պետրոս Խանձկեցի կաթողիկոսի ջանքերով ձեռք է բերվում Սեֆյան շահ Սուլեյմանի 1669 թ. հրովարտակը, որով արգելվում է «Գանձակի, Ղարաբաղի, Չառուզիքի ի ու Շամախու» պետական պաշտոնյաներին հավատի պատճառով նեղել այնտեղի հայ

բնակչությանը, նրա նկատմամբ չարաչափ ուժեր կատարել ու անօրինակ անուշաբույր թույլ տալ<sup>187</sup>: Հրամանագրի տեքստում նշվում է նաև, որ այն հրապարակվել է նույն կաթողիկոսի կողմից նախորդ շահ Աբբաս Բ-ից ձեռքբերված 1074 թ. մոհարամ ամսին (1663թ. օգոստոսի 5 - սեպտեմբերի 4) հրապարակված հրովարտակի հիման վրա: Այն վերահաստատվել է նաև Աղվանից Եսայի կաթողիկոսի ջանքերով շահ Սուլթան Յուսեյնի կողմից 1700թ. հրապարակված հրամանագրով<sup>188</sup>: Պետրոս Խանձկեցի և Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսները հոգ են տարել նաև Շիրվանի ենթակայությանը Աղվանից կաթողիկոսությանը շահական հրովարտակներով հաստատելու մասին: Այսպիսով, չնայած այն իրողությանը, որ Եսայի Հասան-Ջալալյանը որոշակի հույսեր էր փայփայում Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազգային ազատագրական գաղափարներն իրագործելու հարցում<sup>189</sup>, այնուամենայնիվ փորձում էր հավասարակշռությանը պահել և շահել նաև Իրանի շահի բարեհաճությանն ու նրա հրամանագրերով ապահովել իր դիրքը:

Մեծ թիվ են կազմում Արցախ-Ղարաբաղի (ներառյալ Քաջաթաղի ու Գանձակի շրջանները), Շաքի-Շիրվանի հայ մելիքների ու Աղվանից կաթողիկոսների գանազան խնդիրների շուրջ կազմված համախոսականները, որոնցում պահպանվել են տվյալներ ժամանակաշրջանի հայ կական բնակավայրերի ու նրանց տեղանվանական տարբերակների մասին:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում են պահվում նաև Տաթևի, Մակվի Ս. Թադեի, Դարաշամբի Ս. Նախավկայի ու Ագուլիսի Ս. Թովմա Առաքյալի վանքի պարսկերեն վավերագրերի հավաքածուները, որոնց նմուշները ձեռք են բերվել նրանց հոգևոր առաջնորդների ջանքերով: Այդ վավերագրերը արձանագրում են վանական կալվածքների շուրջ վեճերը, նրանց առքուվաճառքի, նվիրատվությանը վերաբերող գործարքները, հաստատում վանական հողատիրության հարկային իմունիտետի և նրան պատկանող սեփականության հասույթները տնօրինելու իրավունքները:

<sup>187</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ. Գ, վավ. 37, էջ 91

<sup>188</sup> Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 131աբգ:

<sup>189</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. I, дд. 149-151, сс. 360-364.

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող պարսկալեզու վավերագրերից շուրջ 50-ը վերաբերում են բացառապես Տաթևի վանքի XVII դարի երկրորդ կեսի պատմությանը<sup>190</sup>: Դրանց մեծ մասը շահական ու տեղական կառավարիչների հրովարտակներն են, որոնք ձեռք է բերել Տաթևի առաջնորդ Յովհաննես Շապանօղլի եպիսկոպոսը, իսկ երկուսը՝ Նրա հաջորդ Չաքարիան: Հիշյալ հրովարտակները ձեռքբերելու նպատակով Յովհաննես եպիսկոպոսը յոթ անգամ գնում է Սպահան<sup>191</sup> և մահանում իր վերջին այցելության ընթացքում 1694-7 թթ. միջև ընկած ժամանակահատվածում: Նրա ու Նրա հաջորդ Չաքարիայի ձեռքբերած վավերագրերը փաստում են հիշյալ հոգևոր առաջնորդների համար պայքարը Տաթևի թեմի մեջ մտնող շրջանների՝ «Գոքջան, Քաշաթաղը, Արասբարը, Ղափանաթը, Բարգուշատը, Ազատ-Ջիրանը և Ղարադաղը» և վանական -կալվածքների՝ 16 գյուղերի (Բնունիս, Թաս, Ղարաքիլիսա, Դաստակերտ, Գոլյազի, Սվարի, Տաթև, Խոտանան, Հալիծոր, Շնհեր, Խոտ, Դաշու, Աղաբենդ, Տանձատափ, Բորդի ու Կից) նկատմամբ իրավունքները գանազան ոտնձգության եններից պաշտպանության համար<sup>192</sup>: Հիշյալ հրովարտակների հիմնական մասի նպատակը վանքի կալվածքների պաշտպանությունն ու նրանցից ստացվող եկամուտների ապահովումն էր տեղական իշխանավորների չարաշահումներից, վաշխառուների, քոչվոր ցեղերի<sup>193</sup> ու այլ օրինախախտ տարրերի, այդ թվում Սյունիքի Օրբելյանների Բուրթելյան ճյուղի մահմեդականացած հետնորդների ոտնձգության եններից<sup>194</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի մեջ զգալի տեղ են զբաղեցնում Մակվի Ս. Թադեի վանքի պատմությանը

<sup>190</sup> Այս վավերագրերի ու Տաթևի նշված շրջանի պատմության մասին մանրամասն տե՛ս Ք. Կոստիկյան, Տաթևի վանքի XVII դարի երկրորդ կեսի պատմությունն ըստ պարսկալեզու հրովարտակների տվյալների, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, XXII, Երևան, 2003, էջ 186 – 200:

<sup>191</sup> Ս. Օրբելեան մետրապոլիտ Սիւնեաց, Պատմութիւն նահանգին Սիսական, Կ. Բ, Փարիզ, էջ 275:

<sup>192</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, էջ 14-16:

<sup>193</sup> Տե՛ս Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 26 և 54, նաև Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 113:

<sup>194</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 23, 27, 36, 45, 52, նաև Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2ա, վավ. 73, 87 և թղթ. 2բ, վավ. 107ա, 109:

վերաբերող շուրջ 30 փաստաթղթերը<sup>195</sup>: XVII դարի երկրորդ կեսին Ս. Թադեի տնտեսական դրույթան ու կալվածքների ձեռքբերման ու պահպանման մասին հոգ են տանում վանքի Իսահակ Մակվեցի և Սարգիս Կաֆայեցի առաջնորդները: Նրանց նախաձեռնությամբ են գնվում վանքի կալվածքների մի մասը, նաև կազմվում համախոսականներ ի հաստատումն նրանց պատկանելության<sup>196</sup>: Ս. Թադեի վանքը վակֆային նվիրատվություններ է ստանում նաև XVIII դարի սկզբին<sup>197</sup>: XVIII դարի առաջին կեսում Մակվի Ս. Թադեի վանքի կալվածքների ձեռքբերման ու շահական հրամանագրերով նրանց ապահարկությունը ապահովելու ուղղությամբ որոշակի քայլեր են ձեռնարկում Մինաս և Չաքարիա վարդապետները: Նրանց հաջողվում է 1746 թ. Նադիր շահից և ապա 1748 թ. նրան հաջորդած Իբրահիմ շահից ստանալ վանական կալվածքների հարկերից ազատված լինելը հաստատող, ինչպես նաև զանազան ոտնձգություններից, ավազակային հարձակումներից վանքի պաշտպանությունը տեղական իշխանությունների կողմից ապահովող հրովարտակներ<sup>198</sup>: Մինաս և Չաքարիա վարդապետները Ս. Թադեի համար ձեռք են բերել այգիներ ու տներ<sup>199</sup>, նաև Բաբաջիքի Արքավուն գյուղը և մեկ կտոր այգի Գոհարանում<sup>200</sup>:

Մակվի Ս. Թադեի վանքի բարեկարգմանն ու տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված իր ջանքերով աչքի է ընկնում 1810թ. նրա առաջնորդը դարձած Սիմեոն Եպիսկոպոսը<sup>201</sup>: Մակվի հայոց վանքի պատմության վերաբերող պարսկերեն վավերագրերից 7-ը թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրերն են հրապարակված 1808-1824թթ. վանքի վերանորոգմանը նյութական աջակցություն և ցուցաբերելու ու Ղարաթուլլի գյուղի հարկերի նկատմամբ վանքի իրավունքները հաստատելու մասին<sup>202</sup>, որոնք մատնանշում են նրա

<sup>195</sup> Սեֆյան վաղ շրջանի հրովարտակները տե՛ս հրատարակված K. Kostikyan, Documents in Persian on the St. Thaddeus Monastery of Maku, Aramazd, vol. IV, 2, Yerevan, 2009, pp. 164-171:

<sup>196</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Զ. Կոստիկյան, Պարսկալեզու վավերագրերը Մակվի Ս. Թադեի վանքի մասին, «Մեր ձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXV, Երևան, 2006, էջ 353, նաև Զ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Մաս Բ, էջ 487-9:

<sup>197</sup> Յ. Թովմեան, Ցուցակ ժողովածու և Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, 1878-1898, Վաղարշ ապատ, 1900, էջ 14:

<sup>198</sup> Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 27, 36:

<sup>199</sup> Յ. Թովմեան, Ցուցակ ժողովածու և Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, էջ 14-15:

<sup>200</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 37, 40:

<sup>201</sup> Զ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ. Մաս, էջ 496:

<sup>202</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 135-141, 143:

ջանքերը հայոց վանքի բարեկարգման և իրանական կողմի օժանդակությամբ ստանալու ուղղությամբ: Ուշագրավ է Աբբաս Միրզայի 1808թ. հրամանագիրը, որով Ս. Թադեի վանքի Սիմեոն վանահորը հրահանգվում է հավաքել Ղարաբիլիսա գյուղի ցրված հայ բնակիչներին և հուսադրել իր՝ նրանց հանդեպ ունեցած բարեհաճությամբ<sup>203</sup>:

Ղարաթուլի գյուղից հարկագանձումներ անելու իրավունքը Ս. Թադեի վանքին է շնորհվում 1814թ. թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրով<sup>204</sup> և հետագայում՝ XIX դարում, մի քանի անգամ վերահաստատվում Ղաջար շահերի ու Ատրպատականը կառավարող արքայորդիների, մասնավորապես Բահրամ Միրզայի ու Ջհանգիր Միրզայի հրովարտակներով<sup>205</sup>:

XIX դարի առաջին կեսում Սիմեոն արքեպիսկոպոսի առաջնորդությամբ տարիներին Ս. Թադեի վանքը վերանորոգվում է և դառնում Ատրպատականի Հայոց առաջնորդարանը<sup>206</sup>: Ամենայն հավանականությամբ թագաժառանգ Աբբաս Միրզան մտադիր էր Ատրպատականում ստեղծել նոր հոգևոր կենտրոն հայոցան համարի հակադրության և էջմիածնի: Վերանորոգման ընթացքում, որին նաև լայն օժանդակություն է ցուցաբերում, վանքի կենտրոնական ու արևմտյան պատերի սև քարերը փոխարինվում են սպիտակով, նաև վանքի գլխավոր մուտքի վերևում պարսկերեն նաթա՛լիզ գրով արձանագրություն է փորագրվում թագաժառանգի ցուցաբերած օգնության մասին<sup>207</sup>:

Իրանի Ատրպատական նահանգի հյուսիսում Արաքս գետի հարավային կողմում է գտնվում հայոց հնագույն վանքերից մեկը՝ Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, որը հայտնի է նաև Մաղարդավանք, Դարաշամբի վանք և պարսկական աղբյուրներում նշվող Ս. Դանիելի վանք անուններով: Մատենադարանի պարսկերեն վավերագրերից 50-ից ավելին վերաբերում են Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի

<sup>203</sup> Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարան, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 3945տ:

<sup>204</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 138:

<sup>205</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 750, 753, 754, 763, 775, 776, թղթ. 4, վավ. 139, 140, 149:

<sup>206</sup> Ե. Ֆրանգեան, Ատրպատական (պատկերագրող ժողովածու), Թիֆլիս, 1905, էջ 30:

<sup>207</sup> Տե՛ս այդ արձանագրությունը հրատարակված մեր կողմից՝ Ա. Հախնազարյան, Արտագիտերեք վանքերը, Երևան, 2012, էջ 169:

վանքի պատմությանը, որոնցից շուրջ 20-ը վերաբերում են նրա XIX դարի ժամանակաշրջանին: XIII դարի իլխանական հրովարտակները, որոնք միաժամանակ աշխարհում պահպանված հնագույն պարսկերեն փաստաթղթերից են, նույնպես վերաբերում են այդ վանքի պատմությանը<sup>208</sup>: Մաղարդա վանքը, որը ծանր հարված է կրում շահ Աբբաս Ա-ի կողմից իրականացված հայերի հատկապես նրա թեմի մեջ մտնող Ջուղայի բնակիչների արտագաղթի հետևանքով, XVII դարի կեսերից, վերանորոգվում է նրա առաջնորդ և ապագա կաթողիկոս Յակոբ Ջուղայեցու առաջնորդության շրջանում<sup>209</sup>:

Յակոբ Ջուղայեցու կաթողիկոս դառնալուց հետո (1655թ.) վանքի առաջնորդ է դառնում Միքայել արքեպիսկոպոսը, որի օրոք էլ թերևս խնդիրներ են ծագում՝ կապված վանքի կալվածքների նկատմամբ հարևան մահմեդականների հավակնությունների հետ: Ինչպես հայտնի է դառնում պարսկերեն վավերագրերից մեկի բովանդակությունից<sup>210</sup>, վանքի ու նրա կալվածքների նկատմամբ XVII դարի 60-ական թվականներին հավակնություններ էին ցուցաբերում որոշ մահմեդականներ, որոնք *սադրի դիվանին* էին դիմել ու հրամանագիր ձեռքբերել այն մասին, թե վանքի մոտակայքում է գտնվում Դանիել մարգարեի գերեզմանը և կան նրան պատկանող *վակֆային* կալվածքներ, որոնց *մութավալլին* է հայցորդը: Ու թեև այս պնդումը, ինչպես նշվում է վավերագրում, անցկացված քննության արդյունքում հերքվում է, սակայն, անշուշտ, նման խնդրի առկայությունը պետք է, որ լուրջ դժվարությունների պատճառ դառնար վանքի միաբանների համար:

Շահ Սուլթան Յուսեյնի 1696թ. հրովարտակով Պետրոսը հաստատվելով Նախիջևանի Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա վանքի առաջնորդի պաշտոնում՝ միաժամանակ հրովարտակով ամրագրում է «Խոյի ու նրան մոտակա Դարաշամլուղի Դորուղի, Շիրդարի, Մահլազանի ու Թուման-ե Նախիջևանի Ջուղայի ու Եզդաբարի» մտնելը նրա թեմի ու վիճակի մեջ<sup>211</sup>:

<sup>208</sup> Այս մասին տե՛ս Յ. Փախազյան, Երկու իլխանական հրովարտակ, Էջ 379-401:

<sup>209</sup> Յ. Շահխաթունեանց, Նշվ. աշխ., հ. Բ, Էջ 313:

<sup>210</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 22:

<sup>211</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 58:

1820-40 թթ. Ս. Ստեփաննոսի վանահայրն Էր Սարգիս Դավթյանը<sup>212</sup>: Ինչպես հայտնի է դառնում Մատենադարանի որոշ պարսկերեն հրամանագրերի բովանդակություներից, Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի առաջնորդ Սարգիս Եպիսկոպոսը, ելնելով ժամանակի պահանջներից ու իր վանքի շահերից, համագործակցում էր իրանական իշխանությունների հետ՝ տեղեկություններ հաղորդելով ռուս-իրանական 1826-1828թթ. պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գործողությունների մասին<sup>213</sup>: Իրանական կողմը բարձր գնահատելով Մաղարդա վանքի վանահոր ծառայություններն ու նվիրվածությունը Իրանին՝ պաշտպանում էր վանքի շահերն ամեն տեսակի ոտնձգություններից ու օժանդակում վանքի բարօրությունը: Մասնավորապես, XIX դարի մի շարք հրովարտակներ արգելում են հարևան քոչվոր ցեղերին ու այլ մահմեդականներին (վարմազիարցիներ) ոտնձգություններ կատարել վանքի կալվածքների ու նրա եկամուտների նկատմամբ<sup>214</sup>: Աբբաս Միրզան հատուկ հոգաճություն է հանդես բերում Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի նկատմամբ, որը ծանր վիճակում է հայտնվում 1828թ. Ատրպատականի հայության արտագաղթից հետո՝ զրկվելով եկամտի աղբյուրներից:

1829թ. թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրով Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքին որպես *թիռլլ* հատկացվում է Դարաշամբ գյուղը<sup>215</sup>, որն այնուհետև դառնում է վանքի *վակֆայի* կալվածքը: Այս իրողությունը արձանագրված է նաև Նախավկայի վանքի արևմտյան դռան վրայի պարսկերեն արձանագրության մեջ<sup>216</sup>: Յետագայում ևս այս գյուղի պատկանելությունը վանքին հաստատվել է տեղական իշխանությունների մի շարք հրամանագրերով<sup>217</sup> և ինչպես փաստում են նաև հայկական աղբյուրները, Դարաշամբ գյուղն այնուհետև, ողջ XIX դարի ընթացքում, շարունակում էր պատկանել վանքին<sup>218</sup>:

<sup>212</sup> Հ. Համագասպոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ. Մաս, Էջ 564:

<sup>213</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 750, 751, 752:

<sup>214</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 753, 763, 775, 776:

<sup>215</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 754:

<sup>216</sup> Այս արձանագրությունը տե՛ս հրատարակված մեր կողմից՝ Ա. Յախնազարյան, Արտագի երեք վանքերը, Երևան, 2012, Էջ 308:

<sup>217</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 762, 678, 776, 792, 794բ, 797:

<sup>218</sup> Ե. Ֆրանգեան, Նշվ. աշխ., Էջ 9:



Այս ախտով, Մատենադարանի պարսկերեն փաստաթղթերի մի մասը ստեղծվել ու ձեռք է բերվել Հայոց վանքերի ու խոշոր վանական համալիրների առաջնորդների ջանքերով՝ արտացոլելով նրանց պատմության շրջափոփումներն ու կարևոր իրադարձությունները, ելնելով նրանց ու նրանց հպատակ հայկական բնակավայրերի շահերից, ուստի նրանք հայ ժողովրդի ու Հայոց Եկեղեցու պատմության անբաժան մասնիկն են և արժեքավոր սկզբնաղբյուրները:

### **1.6 Հայ մելիքներին տրված պարսկերեն փաստաթղթերի ստեղծման հանգամանքները և նրանց պատմական արժեքը**

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի արխիվային ֆոնդերում ցրված են XVII-XIX դարերում Երևանի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արցախի ու Նախիջևանի նահանգներում իշխած և հաճախ տեղի վարչական համակարգում բարձր պաշտոններ զբաղեցրած հայ մելիքների ու խոջաների անուններ, որոնք լրացնում են հայ ուսումնասիրողների տվյալները հայ ազդեցիկ անձանց ու նրանց գործունեության մասին: Այս վավերագրերը սովորաբար արտացոլում են ոչ միայն նրանց գործունեությունը, այլ և բովանդակում արժեքավոր տեղեկություններ այդ փաստաթղթերի ստեղծման հանգամանքների ու նրանց հետ կապվող պատմական իրադարձությունների մասին, ուստի հայ-իրանական առնչությունների ու երկու հարևան ժողովուրդների պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներն են:

### **Գեղարքունիքի Մելիք – Շահնազարյաններին վերաբերող փաստաթղթերը**

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Մելիք-Շահնազարյանների ֆոնդում են պահվում Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյաններին վերաբերող շուրջ 136 պարսկերեն փաստաթղթերի պատճեններ ու բնօրինակներ՝ կցված Միր-Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի ժառանգական կալվածքների խնդրի կապակցությամբ հարուցված

դատական առաջին գործին<sup>219</sup>: Այդ վավերագրերը վերաբերում են հիշյալ մելիքական տոհմի պատմությանը, որոնցից ժամանակին օգտվել է Մ. Սմբատյանցը ու դրանցից մի քանիսը թարգմանաբար ներկայացրել իր «Նկարագիր ծովագարդ գաւառին Գեղարքունու» երկում: Մելիք-Շահնազարյանների ֆոնդում պահվող գործ № 1-ը հարուցվել էր Արևելյան Հայաստանի Ռուսաստանի կայսրության կազմի մեջ մտնելու սկզբնական շրջանում Միր Դավիթ Մելիք-Շահնազարյանի կալվածատիրական իրավունքների վերականգնման հարցի կապակցությամբ: Նրան կցված են 29 պարսկալեզու փաստաթղթեր՝ իրենց ռուսերեն թարգմանություններով: Այդ փաստաթղթերի մեծ մասը պատճեններ են՝ գրված XIX դարի 20-ականներին և հաստատված միևնույն (3 արաբատառ և 1 հայատառ) նոտարական կնիքներով, սակայն կան նաև 8 բևոթինակներ:

Այդ գործում ընդգրկված փաստաթղթերում նշվում է, որ Միր Դավիթ-խանը Շափուրի որդի Մելիք Շահնազարի ժառանգներից է<sup>220</sup>: Այս Մելիք Շահնազարին է վերաբերում գործում ընդգրկված ժամանակագրական կարգով վերջին փաստաթուղթը<sup>221</sup>: Այն իրենից ներկայացնում է Երևանի շարի'աթի 1121 հ. թ. մուհարրամ ամսի (1708թ. հոկտեմբերի 16 - նոյեմբերի 14) արձանագրությունը, ըստ որի, հակառակ Մեհդի Ղուլի Բեկ Ջաբրայիլլուի հավակնություններին, 18 հեղինակավոր անձանց վկայությունների ու փաստաթղթերի հիման վրա հաստատվում է Ղարանլուղ գյուղի<sup>222</sup> պատկանելությունը Մելիք Բեկի ու Մելիք Շահնազարի տոհմին և ժառանգաբար փոխանցվել է Մելիք Շափուրի որդի Մելիք Շահնազարին և նրա ազգական Միրզաջանին, որը Սպահանում է գտնվում՝ հանդիսանալով շահի պալատականը:

Իր տոհմաբանության վերաբերյալ Միր Դավիթ Մելիք-Շահնազարյանը նշում է, որ Շափուրի որդի Մելիք Շահնազարի

<sup>219</sup> Մատենադարան, թղթ. 241, գործ 1: Տե՛ս այս գործի մեջ ներառված պարսկերեն փաստաթղթերի նկարագրությունը՝ ք. Կոստիկյան, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, էջ 310-316:

<sup>220</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 241, գործ 1, վավ. 43, 49:

<sup>221</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 241, գործ 1, վավ. 33:

<sup>222</sup> Պատճեններում այս գյուղը հիմնականում նշվում է Ղանդուլ եղդարածևով, որը սխալ է: Վերին և Ներքին Ղարանլուղդարա բնակավայրերը նշվում են Շոաֆեհի կողմից Երևանի մարզի Գյոթջա մահալում (И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху ея присоединения к Российской империи, СПб. 1852, с. 496): Սաներկայիս Մարտունի քաղաքատիպավան է (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 538):

ժառանգներից (կամ որդիներից) Միրզաջան Բեկի թոռն էր և Ծառուրի որդին<sup>223</sup>: Դավիթ Մելիք-Շահնազարյանի վերաբերյալ որոշ կենսագրական տվյալներ է հաղորդում Գ. Շերմազանեանը, որն անձամբ ծանոթ էր նրան<sup>224</sup>: Նրա մանկության ու պատանեկության շրջանի մասին տվյալները փոքր-ինչ անորոշ են: Ըստ Շերմազանեանի՝ Դավիթ Մելիք-Շահնազարյանի հայրը սպանվել էր Գեղարքունիքի Մազրա գյուղում, և նրա մայրը հղի վիճակում գերեզմանավել էր Իրան, որտեղ Նոր Ջուղայի մեծահարուստ հայերը իմանալով, որ նա Գեղամա մելիքական տան հարսն է, գնում են նրան: Սպահանում ծնվում է Դավիթը, որը լավ կրթություն է ստանում և այնուհետև դիվանագիտական առաքելությամբ հայտնվում է Ֆրանսիայում: Այստեղ նա ծանոթանում է Հակոբ Շահան-Ջրպետյանի հետ, որի կողմից էլ նա որպես հայերեն, պարսկերեն ու ֆրանսերեն լեզուներին տիրապետող անձնավորություն ներկայացվում է Նապոլեոնին՝ նրա ու Ֆաթիալի շահի միջև նամակագրական կապ հաստատելու համար: Ըստ Շերմազանեանի, Դավթի միջոցով նամակներ են փոխանակվել Նապոլեոնի ու Ֆաթիալի շահի միջև<sup>225</sup>: Այս առիթով մի քանի անգամ Դավիթ Մելիք-Շահնազարյանը Ֆրանսիայից գնում է Իրան ու ետ վերադառնում: 1811թ. Իրանից Փարիզ գնալու ճանապարհին Դավիթը հանդիպում է Ներսես Աշտարակեցուն: 1816թ. Փարիզից Ներսես արքեպիսկոպոսին Շահան-Ջրպետյանի կողմից հղված մի նամակում նշվում է, որ պարսկական դեսպան Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի միջոցով ստացել է նրա նամակը: Ֆրանսիայում գտնվելու տարիներին նա գրում է մի ակնարկ Իրանի տվյալ ժամանակաշրջանի դրության մասին<sup>226</sup>:

1816 թ. Դավիթ Մելիք-Շահնազարյանը վերադառնում է Պարսկաստան, որտեղ պետական ծառայության է անցնում՝ ստանալով գլխավոր թարգմանչի պաշտոն և «խանի» տիտղոս<sup>227</sup>: Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել է Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզայի հիշրայի 1233 թ. (1817/8թ.) հրամանագիրը հրապարակված Մելիք Շահնազարի որդի Դավիթի անունով՝ նրան իր խնդրանքին

<sup>223</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 37:

<sup>224</sup> Գ. Շերմազանեան, նշվ. աշխ., էջ 124-125:

<sup>225</sup> Գ. Շերմազանեան, նշվ. աշխ., էջ 119-120:

<sup>226</sup> Myr Davoud Zadour de Melik Schahnazar, Notices sur L'Etat Actuel Dela Perse, Paris 1818.

<sup>227</sup> Գ. Շերմազանեան, նշվ. աշխ., էջ 122:

համապատասխան պետական ծառայություններից ազատ արձակելու հրահանգով<sup>228</sup>: Յրամանագրում բարձր են գնահատվում նրա ծառայությունները Իրանին:

1824 թ. թագաժառանգ Աբբաս Միրզայի և երկու տարի անց նաև Ֆարսի շահի հրամանագրերով Գեղարքունիքի գյուղերի նկատմամբ կալվածատիրական իրավունքը հանձնվում է Դավիթ Մելիք-Շահնազարյանին<sup>229</sup>: Այս հրամանագրերը տրվել են հենց այն շրջանում, երբ Գեղարքունիքի ու Սադարաքի կապակցությամբ տարածքային վեճեր էին ընթանում Իրանի և Ղարաբաղում ու Վրաստանում հաստատված ռուսական իշխանությունների միջև<sup>230</sup>: Յետևաբար այս քայլով և հաշվի առնելով նրաամուր կապերը Իրանի հետ՝ շահական իշխանությունները ցանկանում էին Դավիթ Մելիք-Շահնազարյանի միջոցով հսկողության տակ առնել այդ տարածքում գտնվող կալվածքները: Բնականաբար, նման պայմաններում Դավիթ Մելիք-Շահնազարյանի հավակնությունները չէին կարող խրախուսվել ցարական իշխանությունների կողմից: Այս պատճառով Դավիթ Մելիք-Շահնազարյանի կողմից այս խնդրի շուրջ Այսրկովկասի ռուսական կառավարչապետ Երմոլովին ուղղված նամակը, անհետևանք է մնում<sup>231</sup>: Դավիթ խանը նշում է, որ իր կալվածքների կապակցությամբ նա Երմոլովին էր դիմել Ներսես արքեպիսկոպոսի միջնորդությամբ, որի հետ նա որոշ հարաբերություններ է ունեցել նաև Էջմիածնի պարտքերի հարցով: Պահպանվել են 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի շրջանի մի շարք փաստաթղթեր, որոնք վկայում են Եփրեմ կաթողիկոսի օրոք Էջմիածնի պարտքերի գեղջման նպատակով, հայ բարձրաստիճան հոգևորականների ու պարսից իշխանությունների միջև վարվող բանակցություններում Դավիթ Մելիք-Շահնազարյանի որպես միջնորդ հանդես գալու մասին<sup>232</sup>:

Նախքան ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ավարտը (1828թ.) Դավիթ խանը աշխատել է նաև Բաղդադում գտնվող Ֆրանսիական

<sup>228</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1560:

<sup>229</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 43, 44; Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 701:

<sup>230</sup> Кавказский сборник, т. 21, Тифлис 1900, с. 1-2, 12, 14-42

<sup>231</sup> Գ. Շերմազանեան, Նշվ. աշխ., էջ 122-123:

<sup>232</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 730, 731, 742, 745:

հյուսիսարևմտյան<sup>233</sup>, որպես իրանական խնդիրներով զբաղվող հանձնակատար, իսկ 1828թ. գաղթում է Արևելյան Հայաստան:

Գործ 1-ին կցված բնագրերից առաջինը<sup>234</sup> Միր Դավիթ Մելիք-Շահնազարյան Շափուրյանի կողմից 1828թ. մարտի 6-ին թավրիզում գրված խնդրագիրն է գեներալ-ֆելդմարշալ կոմս Ի. Ֆ. Պասկևիչին, որով խնդրում է թույլ տալ անցնել Ռուսաստանի տարածքները և, ընդունելով ռուսական հպատակություն, ստանալ Գեղարքունիքում գտնվող իր տոհմական կալվածքները, որոնք ձգվում են արևելքում Թուխլիջե գյուղից<sup>235</sup> մինչև Մազրա<sup>236</sup>, և այնտեղից մինչև Ղոթ (Կոթ)<sup>237</sup>, ներառյալ Մեծ Ենգիջա (Երբեջի (Երբեաջ), ապա՝ Վերին Ատիեաման), Ամարսաղ (Ամրբարը, Աւդալաղալու), Միրաբաղ (Բալախատաղը, ապա՝ Նորագյուղ), Մաբար (Շակբար), Գյուրջի Վերան (Վրացաշեն, Ալիդրաղ), Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա (Քթափոր, Ղարախլըխ), Փոքր Արաք (Կարմիր քար, Չուխաչ), Ղանդուլեղդարա (Կանուտներքին, Թուխուջա) գյուղերը<sup>238</sup>, որոնք Ֆաթիալի շահին և նրա թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրերով իրեն էին հանձնվել:

Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի կալվածատիրական իրավունքների պաշտպանության օգտին հանդես է գալիս նաև Երևանի Հուսեյն խան սարդարը: Պահպանված վավերագրերից մեկի համաձայն Երևանի Հուսեյն խանը Դավիթ խան Մելիք-Շահնազարյանին ուղղված իր նամակում նշում է, որ նրա խնդրագիրը և թագաժառանգի հրամանագրի պատճենը ստացվել են և Ռուսաստանի գլխավոր հրամանատարը ևս թույլատրել է, որպեսզի վերջինս գարնանը գնա իր ժառանգական տիրույթների տերը դառնա, ուստի նա ևս հավանություն է տալիս նրա գալստյանը<sup>239</sup>: Այս ուղղությամբ նա անգամ որոշ քայլեր էր ձեռնարկել՝ 1825թ. նույն տոհմին պատկանող

<sup>233</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 18:

<sup>234</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 18:

<sup>235</sup> Նախկին Դրախտիկ գյուղն է, որը Ի. Շոպենը XIX դարում նշում է Երևանի մարզի Գյոզամահալի բնակավայրերի թվում (Ս. Մոսեհ, նշվ. աշխ., էջ 506):

<sup>236</sup> Մեծ և Փոքր Մազրա գյուղերը XIX դարում հիշատակվում են Երևանի մարզի Գյոզամահալի Գեղարքունիքի բնակավայրերի թվում (Ս. Մոսեհ, նշվ. աշխ., էջ 500):

<sup>237</sup> Կոթը Գեղարքունիքի գավառի գյուղերից է, որ գտնվում է ներկայիս ՀԱՀ Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղի տեղում (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1991, հ. 3, էջ 186):

<sup>238</sup> Տեղանվանական տարբերակների մեծ մասը նշված են Մ. Սմբատյանցի տվյալների հիման վրա (Մ. Սմբատյանց, Տեղագիր, էջ 808):

<sup>239</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 727:

Մելիք Բարսեղի անունով հրապարակելով մի հրամանագիր, որով նրան հանձնարարվում էր գնալ, կառավարել Գեղարքունիքի շրջանը (Գյոքչայի *մահալը*) և Դավիթ խանի կալվածքներից գանձել մալիքանեն<sup>240</sup>: Նույն ֆոնդի գործ 1-ում կանան Երևանի Մուհամմադ Յուսեյն խան Սարդարի գրույթյունը Դավիթ խան Մելիք-Շահնազարյանին, որում սարդարը վերջինիս տեղեկացնում է, որ շուրջ 300-400 բնակիչ է գաղթեցրել Թուրքիայի տարածքներից նրա կալվածքներում բնակեցնելու և դրանք շենացնելու նպատակով<sup>241</sup>: Այս ամենը ընդհատվում է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառով: Այնուհետև Երևանի խանությունը միացվում է Ռուսական կայսրությանը, որից հետո, չնայած իր կողմից Ռուսաստանի հպատակությունն ընդունելուն, երկարատև համառ պայքարին ու դատական քաջքույակներին, Դավիթ Մելիք-Շահնազարյանին չի հաջողվում տեր դառնալ իր պապենական կալվածքներին:

Գ. Շերմազանեանը հետևյալն է հաղորդում նրա հետագա ճակատագրի մասին. «1830-1831թթ. երբ ես Երևան էի, յաճախ կը տեսնուէի Դաւիթ խանի հետ: Յամարեաթէ ամենայն օր նա կը յաճախէր իւր վեճի յամար դատարանները, մանաւանդ դատաւորների և նահանգապետի մօտ»<sup>242</sup>: Որևէ եկամուտի աղբյուր ու աշխատանք չունենալով՝ Դավիթ Մելիք-Շահնազարյանը հետզհետե վաճառում է իր մոտեղած բոլոր քիչ թե շատ արժեքավոր իրերը (նաև շահի պարգևած «առյուծի և արևի» շքանշանը), ընկնում պարտքերի տակ: Ի վերջո Երևանի նահանգապետ Բ. Բեհբուլթովը, որը «թերևս համոզուած էր, որ Ռուսաց այնտեղի կառավարութիւնը դատարկ թղթակցութիւններով է զբաղեցնում Դաւթի միտքը, խորհուրդ է տալիս որ մէկ աղերսագիր գրէ Կայսեր անունով և նրամէջնասէ, թէ իմ հայրենական կալուածներն ընծայեցի Ռուսաց կայսերութեան, հետևաբար աղերսէ, որ Տէրութիւնը նրան գոնէ մէկ գումար նշանակէ, որով նա կարողանայ ապրիլ»<sup>243</sup>: Ինչպես հայտնի է դառնում վերը նշված գործ 1-ին կցված ռուսական պաշտոնյաների

<sup>240</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 58

<sup>241</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 39:

<sup>242</sup> Գ. Շերմազանեան, նշվ. աշխ., էջ 125:

<sup>243</sup> Գ. Շերմազանեան, նշվ. աշխ., էջ 126:

գեկուցագրերի բովանդակությամբ, Դավիթ խանը իրոք խնդրագիր է հղում Ռուսաց կայսերը և նրա գանձարանին նվիրում իր կալվածքները: Դրա դիմաց կայսրը նրան տարեկան թոշակ է նշանակում 1000 ոսկե դրամ (червонец), որը սակայն չստացած, Դավիթ խանը մահանում է 1831 թ. փետրվարին<sup>244</sup>: Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի մահից հետո տարեկան 60 ոսկե դրամ (червонец) է նշանակվում նրա ազգականներ Խաչատուր, Մելիք Բարսեղ և Ստեփան Շահնազարովներին:

Մատենադարանի վերոհիշյալ \$ոնդի գործ 1-ի վերջին վավերագրերը<sup>245</sup>, ինչպես նաև գործ 2-ի և 3-ի փաստաթղթերը վերաբերում են Դավիթ խանի հեռավոր ու մոտ ազգականների ազգակցական կապը նրա հետ և պատկանելությանը Մելիք-Շահնազարյանների տոհմին հաստատելուն, ինչպես նաև նրանց Ռուսաստանի կայսրության պետական գանձարանից ստացվող թոշակի հետկապված զանազան խնդիրներին:

Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների ծագումը հայ ուսումնասիրողները կապում են Չաքարիա սպասալարի ու Իվանե աթաբեկի քույր Դոփից սերած Դոփյան իշխանական տոհմի հետ<sup>246</sup>:

Մելիք-Շահնազարյանների գործին կցված պարսկերեն վավերագրերի բովանդակության հիման հնարավոր է դառնում ծանոթանալ այս մելիքական տան պատմության որոշ մանրամասների: Մասնավորապես հայտնի է դառնում, որ դեռևս 1538թ. շահ Թահմասպա-ի հրամանագրով հաստատվել էին Գեղարքունիքի Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Միրաբադ, Գյուլբջի Վերան և Ամրսաղ գյուղերի *մուլլքերի* պատկանելությանը Մելիք Բեկին: Ինչպես հաստատում է XVII դարի հիշատակարաններից մեկը, Մելիք Բեկ էր Գեղարքունիքի Մելիք Շահնազար Ա-ի հոր անունը<sup>247</sup>: Այնպես, որ վստահաբար կարելի է պնդել, որ շահ Թահմասպա-ի հիշյալ հրամանագիրը Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությանը վերաբերող մեզ հայտնի ամենահին փաստաթուղթն է:

<sup>244</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների \$ոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 91, 92, 93:

<sup>245</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների \$ոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 101, 136:

<sup>246</sup> Ա. Մաղալյան, Արցախի մելիքությանը, էջ 158; Կ. Տեր-Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 97-104:

<sup>247</sup> Հայերեն ձեռագրերի Ժեղարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 219:

XVII դարի սկզբին այդ տոհմի նշանավոր ներկայացուցիչն էր Մելիք Շահնազար Ա-ը, որը շահ Աբբաս Ա-ին մատուցած հավատարիմ ծառայությունների դիմաց վերահաստատվել էր Գեղարքունիքի մելիքի պաշտոնում: Պարսից շահի ռազմական ձեռնարկումների մասնակցում են նաև Մելիք Շահնազարի որդիները, որոնցից Յավրին հաջորդում է հորը (վերջինս մահանում է 1606 թ.<sup>248</sup>) Գեղարքունիքի մելիքի պաշտոնում, իսկ նրա մահից հետո 1610թ. մելիք է դառնում Մելիք Շահնազարի մյուս որդին՝ Քյամալը:

Մելիք Քյամալի մահից հետո<sup>249</sup>, Սեֆյան շահ Աբբաս Ա-ի 1621թ. հրամանագրով<sup>250</sup> հաստատվում են Գեղարքունիքի Մելիք Քյամալի որդի և Մելիք Շահնազարի թոռ Աստվածաբովի<sup>251</sup> (կամ կրճատ ձևը՝ Ածաբովի) մելիքական իրավունքները: Աստվածաբովի, որպես Մելիք Շահնազարի թոռան մասին նշվում է 1606թ. մի հիշատակարանում<sup>252</sup>: Այս Աստվածաբովը (կամ Ածաբով) որպես Գեղարքունիքի մելիք հիշատակվում է նաև 1652թ. Երևանի բեկլարբեկի կողմից հրապարակված փաստաթղթում<sup>253</sup>: Աստվածաբովին Գեղարքունիքի մելիքի պաշտոնում փոխարինում է նրա որդի Մելիք Բեկը: Ըստ շահ Սուլթան Յուսեյնի 1709թ. հրովարտակի բովանդակության<sup>254</sup> Աստվածաբովի որդի Մելիք Բեկը 1656-7թթ. հաստատվել էր Գեղարքունիքի մելիքի պաշտոնում: Մելիք Բեկը որպես Գեղարքունիքի մելիք 1657թ. հիշատակվում է նաև հայոց ձեռագրերի հիշատակարաններից մեկում<sup>255</sup>: Ամենայն հավանականությամբ այս Մելիք Բեկին են վերաբերում Մաքենյաց վանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի վերին մասում գտնվող<sup>256</sup>, նաև հետևյալ վիմագիր արձանագրությունները.

«ՍԲ. ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԿՍ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔ ՊԵԿԻՆ, ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ԱԾԱՊՈՎԻՆ, ԹՈՌ ՊԱՐՈՆ ՔԱՄԱԼ ՊԵԿԻՆ, ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՊԵԿ

<sup>248</sup> Հայ երեն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 219:

<sup>249</sup> Մելիք Քյամալը մահացել է 1621թ. (Դիվան հայ վիմագրության, արակ IV, էջ 342):

<sup>250</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 126:

<sup>251</sup> Պարսկերեն վավերագրերում նրա անունը հիշատակվում է Ուշաբով կամ Ուսաբով ձևերով:

<sup>252</sup> Հայ երեն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 219:

<sup>253</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 125:

<sup>254</sup> Տե՛ս հրովարտակը հրատարակված Ք. Կոստիկյան, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, էջ 320-322:

<sup>255</sup> Հայ երեն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 775:

<sup>256</sup> Դիվան հայ վիմագրության, արակ IV, էջ 291:



ԹԿԻՆ: ՌՃԻԷ (1678) ԿԱՄԱԲՆ ԱՅ ՄԵՔ: Ե (5) ԵՂԲԱՐՔՍ ԵՍ՝ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՇԱՐՆԱԶԱՐՍ, ՄԱՅԻԼ ՊԵԿՍ, ՏԱԹԼՈՒ ՊԵԿՍ, ՄԻՐԶԱՅ ՊԵԿՍ, ՄԵԼՔՈՒՄ ՊԵԿՍ, ՊԵԿՍ, ՄԱՅՐ ՄԵՐ ԽԱՆՈՒՄԱՂԵՍ՝ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱԶՍ ԲԱՐԷԽԱԲՍ ԶՕՐՆ ՄԵՐՈՅ ՄԵԼԻՔ ՊԵԿԻՆ»<sup>257</sup>:

Այս արձանագրության ծանոթագրության մեջ նշվում է, որ «Մյուս կողմից՝ թիկունքի արձանագրության սկզբի թվականը՝ ՌՃԻԷ: ուղղել են: ՌԻԷ: (1578), որը ճիշտ է: Ավել որդի հարյուրավորը պետք է համարել փորագրողի սխալ մունք»<sup>258</sup>:

Մեր կարծիքով այս նկատառումը ճիշտ է, այլ ճիշտ է վիմագրի վերը նշված 1678 թվականը, և խոսքը Աստվածաբովին 1656թ. հաջորդած նրա որդի Մելիք Բեկի մասին է, որը ևս Մելիք Շահնազար անունով որդի է ունեցել: Մեր տեսակետի օգտին է նաև այն հանգամանքը, որ եթե ուսումնասիրողի ուղղումը ճիշտ լիներ, ապա վիմագրում նշված Մելիք Շահնազարը պետք է լիներ Մելիք Շահնազար Ա-ը, որի մոր անունը Ֆախրական<sup>259</sup> կամ Ֆախրաջահան էր<sup>260</sup>, մինչդեռ այն նշված է Խանումաղա:

Այս երկու անձանց՝ Մելիք Բեկ Բ-ի և Մելիք Շահնազար Բ-ի անունները առկա են XVIII դարի սկզբի պարսկերեն վավերագրերում: 1708-9թթ. երկու պարսկալեզու վավերագրերով հաստատվում է Գեղարքունիքի վերը նշված Ղարանլուղ գյուղի պատկանելությունը «Մելիք Շափուրի որդի Մելիք Բեկի որդի Մելիք Շահնազարին»<sup>261</sup>: Իսկ շահ Սուլթան Յուսեյնի 1709թ. մայիսի 11-ից – հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում հրապարակված հրամանագիրը հաստատում է Մելիք Աստվածաբովի որդի Մելիք Բեկի թոռ Մելիք Բեկի մելիքական իրավունքները Գեղարքունիքի շրջանում<sup>262</sup>:

Մատենադարանի Մելիք-Շահնազարյանների ֆոնդում պահվող հրովարտականերից մեկը տրված է Մելիք Միանսարի (կամ Մեխասարի) անունով<sup>263</sup>: Այդ հրովարտակի ձախեզրը, ներառյալ նաև թվականը,

<sup>257</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ IV, էջ 339

<sup>258</sup> Նոյն տեղում:

<sup>259</sup> Յայ երեն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 219:

<sup>260</sup> Մ. Սմբատյանց, Տեղագիր, էջ 809:

<sup>261</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 33, 35:

<sup>262</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 127:

<sup>263</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 124, Տե՛ս այն հրատարակված ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 1:

վնասված է: Չնայած դրան, նրա բովանդակությունը գրեթե լիովին հասկանալի է, իսկ թվականը հնարավոր է վերականգնել: Վավերագրում առկա է Նադիրի թողրան, իսկ կնիքի դրոշմը ամենայն հավանականությամբ եղել է ստորին ձախեզրում, ինչպես բոլոր այն հրովարտակներում<sup>264</sup>, որոնք հրապարակվել են նախքան նրա պաշտոնական թագադրությունը Մուղանի դաշտում 1736թ. մարտի 6-ին: Նադիր շահնայդ հրովարտակը Գեղարքունիքի մելիքին է հղել Երևանի նահանգը Օսմանյան Թուրքիայից ետ գրավելու նպատակով դեպի Արարատյան դաշտը ձեռնարկած արշավանքի ընթացքում, որը տեղի է ունեցել 1734-5թթ.: Քանի որ այնտեղ նշվում է դեպի Երևան ձեռնարկվող արշավանքի մասին, իսկ վավերագրի վերջում նշվում է զի դասդե ամիսը, ապա թվականը պետք է լինի հիջրայի 1146 թվականը, որը համապատասխանում է 1734 թվականի ապրիլի 5-ից մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածին, այսինքն այն շրջանին, երբ Նադիրը դեռ շարունակելով Գանձակի երկարատև պաշարումը, մտադրվում է շարժվել դեպի Երևան<sup>265</sup>: Այդ հրովարտակով շահը պահանջում էր մելիքի հավատարմությունը և թուրքական կայսրոսերի դիրքերի հետախուզման հարցում նրա լրտեսների գործնական օժանդակությունը՝ խոստանալով դրա դիմաց ականջ չդնել «մելիքի դեմ չարախոսողներին» ու կարգավորել նրա խնդիրները:

Շահնագարի որդի Մելիք Միանսարի (Մեհասար) անվան հիշատակությունը պահպանվել է նաև 1726թ. մի ռուսերեն փաստաթղթում Գեղարքունիքի ու Ղարաբաղի մելիքների շարքում<sup>266</sup>: Այդ փաստաթուղթը Ջրաբերդի ու Գեղարքունիքի ավագների դիմումն է հղված Ռուսաստանի կայսերը, որով խնդրվում է նրա հովանավորությունը: Ամենայն հավանականությամբ մելիք Միանսարի մասին վերը նշված «չարախոսությունները» կապված էին վերոհիշյալ դիմումում արտացոլված նրա նախկին ռուսամետ դիրքորոշման հետ, որը չէր կարող Նադիրի դրական վերաբերմունքին արժանանալ:

Այս փաստաթղթերը վկայում են Գեղարքունիքի մելիքական տան շարունակականության մասին, որը չնայած ժամանակների

<sup>264</sup> Մատենադարան, Մելիք-Շահնագարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 1-11:

<sup>265</sup> میرزا مهدی خان استرآبادی، جهانگشای نادری، باہتمام سید عبداللہ انوار، تہران 1377، ص. 245-239.

<sup>266</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. 2, ч. II, с. 283.

վայրիվերու մներին ու իշխանական փոփոխություններին, քաղաքական ճկունության շնորհիվ գոյատևում է XVI-ից մինչև XVIII դարերը: Հետագայում այդ տոհմի ներկայացուցիչները հայտնվում են Իրանում ու չնայած շահական իշխանություններին հովանավորությանը՝ չեն կարողանում վերստանալ իրենց իրավունքներն ու կալվածքները այդ տարածքում հաստատված ռուսական տիրապետության հետևանքով:

### **Արցախի հայ մելիքներին տրված փաստաթղթերը**

XV – XVII դարերում Սյունիքի Քաշաթաղ գավառում իշխել են Մելիք Յայկազյանները, որոնց են վերագրվում նույնանուն ավանում և Խնածախում հայտնաբերված մելիքական ապարանքները<sup>267</sup>: Այդ տոհմի մեզ հայտնի առաջին ներկայացուցիչը XV դարում ապրած Մելիք Յայկազ Ա-ն է<sup>268</sup>: 1930-ականներին դեռևս կանգուն էր նրա որդի ու ժառանգ Հախնազար իշխանի տապանը (1551 թ.)<sup>269</sup>: Այս տոհմի առավել ակնառու ներկայացուցիչը Մելիք Յայկազ Բ-ն էր (1551 – 1623 թթ.): Առ. Դավրիժեցին հիշատակում է նրան նույնը շահ Աբբաս Ա-ի բռնագաղթի ժամանակ Իրան տարված Աղվանից երկրի մելիքների, հետագայում՝ արքունիքի խորհրդականների թվում<sup>270</sup>: Կենտրոնական պատմական արխիվում պահպանվող մի քանի պարսկերեն վավերագրեր տեղեկություններ են բովանդակում Քաշաթաղի Մելիք Յայկազի ու նրա հաջորդների իշխանության ու կալվածատիրական ունեցվածքի մասին: Օսմանյան բանակների Յարավային Կովկասի տարածքից դուրս քշվելուց հետո 1606-1607 թթ. Մելիք Յայկազը ոչ միայն ետ է ստանում իր կալվածքները, այլև Քաշաթաղից դուրս ևս իրավունքներ է ստանում<sup>271</sup>: Ճահ Աբբաս Ա-ը իր ծառայություններով աչքի ընկած Մելիք Յայկազին ոչ միայն 1609 թ. հրովարտակով առնում է իր հովանու ներքո, այլև 1620 թ. շահական հրամանագրով հաստատում նրա կալվածքները Քաշաթաղի և Ղափանի շրջաններում<sup>272</sup>:

<sup>267</sup> Այդ ապարանքների մասին տե՛ս Ա. Ղուլյան, Արցախի ու Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, էջ 17, 23:

<sup>268</sup> Մ. Յարաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 158:

<sup>269</sup> Մ. Յարաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, էջ 162:

<sup>270</sup> Առ. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 63, 195:

<sup>271</sup> Մ. Յարաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, էջ 165:

<sup>272</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 9, 15:

Նա եղել է Տաթևի Հարանց անապատի հիմնադիրներից, որի մասին իմանում ենք այդ անապատի հիմնադրմանը նվիրված ներբողից<sup>273</sup>:

1691 թ. գրված մի համախոսական գրություն մեջ պահպանվել են Մելիք Հայկազյան տոհմի հետևորդներից՝ Մելիք Հախնազարի ու նրա որդի Իլիասի (Ելիաս կամ Եղիա) անունները: Այդ համախոսականով, որը գրվել էր Քաջաթաղի մի շարք հայաբնակ գյուղերի հայության անունից<sup>274</sup>, նրանց լիազոր ներկայացուցիչ է ընտրվում Մելիք Հախնազարի որդին՝ Եղիան, պարսից արքունիքին իրենց խնդիրները ներկայացնելու ու նրանց շահերը պաշտպանելու համար: Այս Իլիասի անունը Ելեսու ձևով նշվում է նաև 1681թ. գրված մեկ այլ հիշատակարանում. «Ես մելիք Հախնազարս որդի պարոն մահդասի Գասբար պեկին որդի պարոն Հայկազին, Ետուև նորոգել զսուրբ գիրքս որ կոչի Այսմաուրք, բարի յիշատակի ինձ և ծնողաց իմոց պարոն Գասբար մահդասուն և մօրն իմոյ Սօլտան աղին և Եղբօր իմոյ պարոն Հայկազին և ամուսնոյն իմոյ Մահֆարուն և հարազատ որդոց իմոց պարոն **Ելեսու** Բովամին, պարոն Բախտամին, պարոն Աղաճան պեկին, պարոն Պիաթուրին, պարոն Գասբարին»<sup>275</sup>:

Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների տոհմի մի ճյուղը հանձինս Մելիք Շահնազար Ա-ի կրտսեր եղբայր Միրզաբեկի<sup>276</sup> ու նրա շառավիղների, դեռ XVII դարի սկզբին հաստատվում է Արցախի Վարանդա գավառում՝ սկիզբ դնելով այնտեղի Մելիք-Շահնազարյանների մելիքական տանը:

Հազվադեպ են հայ մելիքների անունները հիշատակվում պարսկերեն պատմագրական երկերում, ուստիև դրանք խիստ արժեքավոր են, քանի որ խոսում են այդ տեղեկությունների կարևորության ու հայ մելիքների հեղինակության մասին: Այս առումով հետաքրքրական են պարսից պատմագիր Մուհամմադ Քյազիմի Նադիր շահի պատմությանը նվիրված երկում Մելիք Եգանի ու Մելիք Թամրազի անունների հիշատակությունը 1723 թ. Գանձակում ու Երևանում ապստամբություն բարձրացնելու նպատակով Իրանի

<sup>273</sup> Այդ մասին տե՛ս Հ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 161-2:

<sup>274</sup> Այդ փաստաթուղթը տե՛ս հրատարակված Ք. Կոստիկյան, Քաջաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Երևան, 2001, էջ 168-175:

<sup>275</sup> Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 313:

<sup>276</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները, էջ 161:

շահից օգնություն չունեցող պատվիրակների թվում<sup>277</sup>: Սա այն շրջաններ, երբ Օսմանյան գործերը լայնածավալ ռազմական գործողություններ էին ծավալել Չարավային Կովկասում՝ նպատակ ունենալով օգտվել Իրանի Սեֆյան պետության անկումից և իվել այդ տարածքները:

Սակավաթիվ են նաև Մատենադարանի արխիվային ֆոնդերում հայ իշխանական ու մելիքական տոհմերի ներկայացուցիչներին վերաբերող հրովարտակաները, մեզ հասած նյութերն էլ հիմնականում ուշ շրջանի պատճեններ են:

Պատճենի տեսքով է մեզ հասել մասնավորապես Թահմասպ-ի հրովարտակը, որով Վարանդայի մելիքությունը 1730թ. շնորհում է Մելիք [Մոհամմադ] Յուսեյնին: Ամենայն հավանականությամբ այս հրովարտակը տրված է եղել Վարանդայի մելիք Մելիք Շահնազարի որդի Մելիք Յուսեյնին, որն իր հոր մահից հետո վարել է այնտեղի մելիքի պաշտոնը մինչև իր մահը (1736թ.)<sup>278</sup>: Իսկ Մոհամմադ անունը կամ բնագրի սխալ ընթերցման ու արտագրության արդյունքն է, կամ նա այդ անունը ևս կրել է:

Յայ մելիքների իրավունքներին վերաբերող հրովարտականերից շատերը հրապարակվել են Նադիր շահի կողմից 1734-1736 և 1744-1745 թվականներին, երբ նա, գտնվելով Չարավային Կովկասում, ռազմական գործողություններ էր իրականացնում Օսմանյան Թուրքիայի ու Դաղստանի լեզգիների դեմ: Յայ արևակ շրջաններում իրանական գործերի հաջողությանը մեծապես նպաստում է տեղի բնակչության օժանդակությունը: Նադիրը գիտակցելով այդ օժանդակության կարևոր դերը՝ սիրաշահում էր Ամենայն Յայոց կաթողիկոսին ու հայ մելիքներին, խրախուսում նրանց խոստումներով, ինչպես նաև վավերացնում նրանց իրավունքները հրովարտականերով: Այս վավերագրերի դերը պատմական առանձին դեպքերի և իրողությունների լուսաբանության հարցում անփոխարինելի է:

Նադիր շահի Մատենադարանում պահպանվող հրամանագրերից Ղարաբաղի այդ շրջանի պատմության համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նրա երեք հրովարտակաները հրապարակված 1734թ. հոկտեմբերից 1735թ. հունվարն ընկած

<sup>277</sup> Мухаммед Казим, Наме-йи алам-ара-йи Надири, (перс.) т. 1, Москва, 1960, с. 99.

<sup>278</sup> Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 187: Նաև Դիվան հայ վիմագրության, արակ V, էջ 149:

Ժամանակահատվածում Դովչանլու (Առաջածոր) գյուղի ավագերեց և մելիք Դավթի անունով: Այս հրամանագրերից առաջինը<sup>279</sup> հաչենի մելիքության տարածքում գտնվող Դովչանլու գյուղի ավագերեց Դավթի ու մյուս բնակիչների կողմից ներկայացված խնդրագրի բովանդակությանը համապատասխան հաստատում է վերոհիշյալ հոգևորականին այդ շրջանի ավագի դիրքում:

Ինչպես փաստում են Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանված հայերեն վավերագրերը, այս Դավիթը դեռևս իր հոր՝ Առաջածոր գյուղի ավագերեց Եսայու<sup>280</sup> մահից հետո 1716թ. Եսայի կաթողիկոսի կոնդակով հաստատվել էր Առաջածոր գյուղի ավագերեցի դիրքում, իսկ հաչենի Մելիք Գրիգորի 1727թ. հրամանով նա նշանակվում է նաև այդ գյուղի «առաջնորդ ու տանուտեր»<sup>281</sup>: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դեռևս մինչև Նադիր շահի մտնելը Ղարաբաղ Առաջածորի ավագերեց Դավիթը հոգևոր գործերից զատ իրականացնում էր նաև գյուղի տանուտերի պարտականությունները: Ուստի պատահական չպետք է համարել Նադիր շահի կողմից նրա նշանակումը «հաչենի *մահալի* ավագի» պաշտոնում: Նամանավանդ, որ այս կապակցությամբ կազմված է եղել նաև համախոսական գրությունն՝ հաստատված «հաչենի Ղազանչի, Չորման, Ներքին Քոլատակ, Բազարքենդ, Բալլուղայա, Դոչանլու, Խնձիրստան, Տամկալե, Վանք, Շավվա» և մի քանի այլ գյուղերի տանուտերերի ու ավագների կողմից, որոնք իրենց համաձայնությունն են տվել, որպեսզի Առաջածոր գյուղի ավագերեց Դավիթը դառնա իրենց առաջնորդն ու մելիքը<sup>282</sup>:

Նադիր շահի հիշյալ հրովարտակի խնդրագրի մասում նկարագրվում է լեզգիների գործի կողմից հաչենի շրջանին հասցված ծանր վնասը, երբ նրա բնակիչներից «շուրջ 4000 հոգի՝ մեծ ու փոքր, թե՛ այր, թե՛ կին, գերի են տարվում, նրանց տներն ու ունեցվածքը, հացահատիկի ողջ բերքը ոչնչացվում», որի պատճառով խնդրանք է հայտնվում նաև, որպեսզի Դավիթին ենթակա կիսավեր շրջանը հարկերից ազատվի և նշվում բեռնակիր կենդանիների

<sup>279</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 182

<sup>280</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 240, վավ. 10:

<sup>281</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 240, վավ. 108:

<sup>282</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 177, նրա պատճեն տե՛ս վավ. 376:

պակասի պատճառով հավաքված հարկերը իրանական բանակ տեղափոխելու հարցում ծագած դժվարությունների մասին: Սակայն հրամանագրի հատվածում ոչ մի խոսք չկա այդ շրջանի հարկերը թեթևացնելու մասին, թեև հանձնարարվում է Դավիթն ջանք թափել այդ շրջանը վերականգնելու ուղղությամբ: Ավելին, Նադիր շահը Մելիք Դավիթին ուղղված իր մյուս երկու հրամանագրերում անգիջում դիրք է բռնում նրան ենթակա շրջանից *սոյուրսաթ* կոչված հարկը կրկնակի չափով, ինչպես նաև մյուս հարկերը վճարելու հարցում: Այս վավերագրերում ակնառու է այն իրողությունը, որ Նադիր շահի ռազմական հաջողությունները ձեռք էին բերվում ժողովրդի համար խիստ ծանր գնով<sup>283</sup>:

Յիշյալ վավերագրերից մեկի խնդրագրի մասում նկարագրելով իրեն ենթակա շրջանի աղետալի դրությունը՝ մելիք Դավիթը նշում է, որ. «այնտեղ ընդամենը չորս գյուղ կա, յուրաքանչյուրում՝ 10-15 ընտանիք... և այդ գյուղերից մեկի՝ Խնձիրստանի տանուտեր Պողոսը գիշերով ամբողջ գյուղի հետ փախել է...»<sup>284</sup>: Այդ շրջանը ի հարկե չէր ընդգրկում ողջ Խաչենի մելիքությունը, հետևաբար Մելիք Դավիթը չի կարող դիտվել որպես այդ մելիքության միանձնյա ղեկավարը: Այս ժամանակաշրջանից պահպանված Խաչենի մելիքության տարածքին վերաբերող կալվածագրերում նշվում են նաև Մելիք Գրիգորի<sup>285</sup>, Մելիք Ալլահվերդի<sup>286</sup> և Մելիք Ուլուխանի<sup>287</sup> անունները: Մեզ հայտնի չէ որևէ վկայություն Մելիք Դավիթի և Խաչենի Յասան-Ջալալյանների միջև ազգակցական կապի գոյության մասին: Այս մելիքի մասին հետագա տարիներից ևս որևէ հիշատակություն չի պահպանվել: Արդեն երկու տարի անց 1736թ. նրա անունը չի հիշատակվում Նադիր շահի մեկ այլ հրովարտակում<sup>288</sup>, որտեղ Դովչանլու գյուղը նշվում է Խաչենի մելիք Գրիգորին ենթակա շրջանի գյուղերի թվում: Իսկ արդեն 1746 թվականին

<sup>283</sup> Ann K. S. Lambton, *Landlord and Peasant in Persia*, London-NewYork-Toronto, 1953, p. 132.

<sup>284</sup> Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 2բ, վավ. 181

<sup>285</sup> Պատմական փաստաթղթերում Մելիք Գրիգորը հաճախ հանդես է գալիս որպես Խաչենի մահալի վեքիլ (տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 167, 198):

<sup>286</sup> Խաչենի Մելիք Գրիգորի ու վաքիլ Ալլահվերդիի անունները տե՛ս 1752թ. Գանձասարի վակֆային կալվածքների կապակցությամբ կազմված համախոսականում (Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 204):

<sup>287</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 198, 199:

<sup>288</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 188:

կազմված պարսկերեն կալվածագիրը ստորագրած անձանց թվում նշվում է Առաջածորի Մելիք Դավթի որդի Կիրակոս ավագերեցի անունը<sup>289</sup>, որի անունով պահպանվել է նաև Ներսես կաթողիկոսի կոնդակը թվագրված 1764 թվականով<sup>290</sup>:

Խաչենի Յասան-Ջալալյաններից սերած Մուլլաի Բեկի (մահ. 1716թ.) որդիներ Մելիք Գրիգորն ու Մելիք Ալլահվերդին շահական ու սուլթանական հրովարտակներով, որ հրապարակվել էին 1126 (1714), 1131 (1718/19), 1141 (1728/29), 1148 (1735/36) թվականներին իշխում էին Խաչեն գավառում<sup>291</sup>: Այն հանգամանքը, որ Նադիր շահի ժամանակաշրջանից մեզ հասած վավերագրերում Խաչենի մելիքների թվում հիշվում են նաև Մելիք Ուլուխանի ու Մելիք Դավթի անունները, խոսում է տվյալ ժամանակաշրջանում Խաչենի մելիքության մասնատվածության մասին:

1735 թ. մայիսին Մելիք Եգանի անունը հիշվում է Եղվարդի մոտ Նադիրի բանակատեղին ներկայացած հայ մելիքների մեջ: Իրանցի պատմագիր Մուհամմադ Քազիմը մատնանշում է նրա ջանքերը Յայոց եկեղեցու ու Ամենայն Յայոց կաթողիկոսի նկատմամբ Նադիրի բարեհաճությանը շահելու ուղղությամբ, որի արդյունքում վերջինս այցելում է Էջմիածին, 1000 թուման հատկացնում նրա վերանորոգմանը և մատուցելով թանկարժեք նվերներ, հրովարտակներով հաստատում է վանքի ու կաթողիկոսի իրավունքները<sup>292</sup>: Նադիր շահը 1736թ. իր պաշտոնական թագադրումից անմիջապես հետո Ղարաբաղի հինգ մելիքությունները հաստատում է Ատրպատականի փոխարքայի ենթակայության տակ գտնվող «մահալ-ե խամսե» կոչվող առանձին վարչական միավորի մեջ: Դիզակի Մելիք Եգանը, որ մասնակցում է Նադիրի թագադրությանը Մուղանի դաշտում<sup>293</sup>, նշանակվում է այդ վարչական միավորի կառավարիչ: Թեև չի պահպանվել Մելիք Եգանի այս իրավունքը հաստատող շահական որևէ հրամանագիր, սակայն վերը նշված հրովարտակը և այդ շրջանից պահպանված մի շարք կալվածագրեր (կաթող. դիվան, թղթ. 2բ, վավ. 175, 178, 184բ, 189ա, 208ա և այլն), որոնց վրա կա Մելիք Եգանի կնիքը և

<sup>289</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 199:

<sup>290</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 240, վավ. 10:

<sup>291</sup> Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները, էջ 135:

<sup>292</sup> Мухаммед Казим, Наме-йи алам-ара-йи Надири, (перс.) т. 1, с. 632-634.

<sup>293</sup> Աբրահամ Կրետացի, նշվ. աշխ., էջ 80:



որոնք պատմական այլ սկզբնաղբյուրների հետ փաստում են Ղարաբաղում նրա ունեցած և այն և իազորությունների ու անվիճելի հեղինակություն մասին:

1745թ. Դիզակի մելիքը դարձած Մելիք Եգանի որդի Եսային, նրա տապանաքարի վրայի գրության համաձայն մելիք Էր նշանակվել Նադիր շահի կողմից<sup>294</sup>: Նադիր շահի կողմից 1746թ. Մելիք Եսայուն տրված մի հրովարտակի մասին, որ պահվում է Ադրբեջանի Պետական Կենտրոնական Պատմական արխիվում, տվյալներ ենք գտնում Ֆ. Պողոսյանի հոդվածում. «նշանակում եմ նրան Դիզակ գավառի մելիք կամ կառավարիչ՝ դնելով նրա վրա պարտականություն հետևել պետական շահերին՝ ցույց տալով իր ջերմեռանդությունը դեպի կառավարությունը»<sup>295</sup>:

Մելիք Եգանի աճած հեղինակություն մասին է խոսում Նադիր շահի 1736թ. հրովարտակը՝ հրապարակված Խաչենի Մելիք Գրիգորի խնդրանքով, որով նրան ենթակա տարածքում գտնվող Դովչանլու և Ղարաթու գյուղերի պետական հարկերը գանձելու իրավունքը հանվում է Բարդայի կառավարիչների իրավասության շրջանակներից և տրվում Մելիք Եգանին, որպեսզի վերջինս այդ հարկերը փոխանցի Ատրպատականի փոխարքա Մուհամմադ Իբրահիմին<sup>296</sup>:

Թեև Մատենադարանի արխիվներում չեն պահպանվել Խամսայի մելիքությունների մյուս հայ մելիքներին տրված Նադիր շահի հրովարտակները, սակայն վկայություններ կան այն մասին, որ նրանցից ոմանց մելիքական իրավունքները հաստատված են եղել Նադիր շահի կողմից:

Մասնավորապես, Ջրաբերդի Մելիք Ալլահղուլին օսմանյան գործի դեմ Նադիր շահի մղած պատերազմում մեծ արիություն է ցուցաբերում, որի համար շահը նրան շնորհում է «սուլթան» տիտղոսը<sup>297</sup>, իսկ Մելիք Ալլահղուլիի եղբայր Յաթամին, որ մանուկ հասակից պատանդ է եղել Դաղստանի խոսրով սուլթանի մոտ, ազատել էր Նադիր շահը:

<sup>294</sup> Դիվան, V, Արցախ, Էջ 178:

<sup>295</sup> Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, Բանբեր Յայաստանի արխիվների, 1966, № 1, Էջ 203:

<sup>296</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 12:

<sup>297</sup> ՄիրզաՅուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., Էջ 43:

Պատմական աղբյուրները փաստում են, որ հայ մելիքների կողմից Նադիր շահին ցուցաբերած անհնազանդությունը ու հարկերի վճարումից խուսափելը ճակատագրական էր լինում նրանց համար: Որպես օրինակ հիշենք Վարանդայի Մելիք-Շահնազարյանների տոհմի ներկայացուցիչ Մելիք Միրզաբեկին, որը դրա համար իր կյանքով է վճարում՝ սպանվելով Նադիր շահի հրամանով<sup>298</sup>: Նադիր շահը մահապատժի ենթարկված Մելիք Միրզաբեկի փոխարեն Վարանդայի տիրակալ է նշանակել 1743 թ. Մելիք Շահնազարին<sup>299</sup>:

Վարանդայի մելիք Միրզաբեկը մահապատժի է ենթարկվում Նադիր շահի գործերի Ղարաբաղով Շիրվան գալու ժամանակահատվածում, որի ընթացքում Շամախու, Գանձակի ու նրանց շրջանների բնակիչները ծանր վնասներ են կրում:

Վրաստանի Կ. Կեկելիձեի անվան ինստիտուտի արխիվում պահպանվում են Նադիր շահի այս շրջանի երեք հրովարտակներ՝ հրապարակված Գանձակի Քուրակբասանի Մելիք Մնացականի անունով: Դրանցից առաջինը, որը հրապարակվել է 1744թ., նշանակում է Մելիք Մնացականին 100 նադիրի տարեկան ռոճիկ, որը նա պետք է ստանար իրեն ենթակա շրջանից<sup>300</sup>: Երկրորդ և երրորդ հրովարտակներով 1745թ. Նադիր շահը հաստատում է Մելիք Մնացականի կողմից Մուհամմադ Ղուլի Խան Չիադօղլիից Գետաշենի մոտակայքում գտնվող հողատարածքի գնման կալվածագիրը և արգելում Գանձակի կառավարչի ոտնձգությունները մելիքին պատկանող գյուղերի նկատմամբ<sup>301</sup>: Այս Մելիք Մնացականի մելիքությունը սակայն ըստ Մ. Բարխուդարյանի շարունակությունն չի ունեցել և ավարտվել է նրա մահվամբ: Եվ իրոք նրա որդու՝ Գորգիի տապանաքարի վրա (1781) նրա անվան հետ չի նշվում մելիք տիտղոսը, այն դեպքում, երբ հոր անունը նշվում է «Մելիք Մնացական» ձևով<sup>302</sup>:

<sup>298</sup> Ա. Մաղալյան, Վարանդայի Մելիք-Միրզաբեկի մահապատժի պատճառը, Հայոց պատմություն հարցեր, Երևան, 2006, № 15, էջ 33-34:

<sup>299</sup> Чобанян П., Проблема легитимности карабахских ханов в контексте политической истории Шуши, Պատմա-բանասիրական հանդես, 1 (195), Երևան, 2014, с. 179.

<sup>300</sup> Тбилисская коллекция персидских фирманов, т. II, док. 37, с. 67

<sup>301</sup> Тбилисская коллекция персидских фирманов, т. II, док. 39, с. 68; док. 41, с. 71.

<sup>302</sup> Մ. Եսա . Բարխուդարյանց, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, էջ 179:

## **Երևանի և Նախիջևանի հայ մելիքներին ու ազդեցիկ ազատնյ աներին վերաբերող պարսկերեն վավերագրերը**

Նադիր շահի հրապարակած հրամանագրերից պահպանվել է 1738թ. հրովարտակը<sup>303</sup>, որով հաստատվում են Երևանի մելիքներ Մկրտումի և Յակոբջանի հարկային իմունիտետի (*մուլ աֆուլ թյան*) իրավունքները: Այս մելիքները ևս մասնակցել էին 1734թ. թուրքերի դեմ Նադիրի ձեռնարկած ռազմական միջոցառումներին, որոնց մատուցած ծառայությունները Նադիրը բարձր էր գնահատել<sup>304</sup>: Նրանք Աբրահամ կաթողիկոսի<sup>305</sup> հետ ներկա են գտնվել 1736թ. Մուղանում կազմակերպված Նադիրի թագադրության հանդեսին<sup>306</sup>: Դեռ մինչև Նադիրի թագադրությունը Աբրահամ կաթողիկոսի միջնորդությամբ Իրանի տիրակալի հրամանագրով Մելիք Յակոբջանին իրավունք էր տրվել Երևանում բացել դրամահատարան<sup>307</sup>: Երևանի Մելիք Յակոբջանի անունը նշվում է Մատենադարանի արխիվային հավաքածուի ևս երկու պարսկերեն փաստաթղթերում, որոնցից մեկը կալվածագիր է՝ գրված հիջրայի 1159 թ. զի հեջջե ամսին (1746 թ.), ըստ որի Մելիք Յակոբջանը վաճառում է Ղրխբուլաղի Նորագեղ գյուղում գտնվող իր մեկ կտոր այգին Նորագավիթից Օհանեսի որդի Գաբրիելին 12 թավրիզի թուման գումարով<sup>308</sup>: Երկրորդը Ազատխանի հիջրայի 1166թ. ռաջաբ ամսի (1753 թ.) հրամանագիրն է ուղղված Էջմիածնի Մինաս կաթողիկոսին<sup>309</sup>, որում նշվում է Մելիք Յակոբջանի միջոցով ուղարկված նրա խնդրագիրը ստացել է, և Երևանի բնակչության անդորրն ապահովելու համար այնտեղի բեկլարբեկ է նշանակել Խալիլ Բեկին՝ հանձնարարելով նրան լավ վարվել կաթողիկոսի ու բնակչության հետ: Մելիք Յակոբջանը, որը սերում էր Երևանի Մելիք-Աղամալյանների տոհմից, մահացել է 1759 թ.<sup>310</sup>:

<sup>303</sup> Տե՛ս Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 13:

<sup>304</sup> Աբրահամ Կրետացի, նշվ. աշխ., էջ 244:

<sup>305</sup> Տ. Աբրահամ Գ Կրետացի, Ամենայն Յայնոց Կաթողիկոս 1734–1737թթ.:

<sup>306</sup> Աբրահամ Կրետացի, նշվ. աշխ., էջ 80:

<sup>307</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>308</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 394:

<sup>309</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 1326:

<sup>310</sup> R. Hewsen, *The Meliks of Eastern Armenia*, VI, *The House of Ałamaleanc՛*, Բազմավեպ, 1984, թ. 3-4, էջ 321.

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի 1Է թղթապանակի մինչ այժմ երբեք է չնկարագրված ու չուսումնասիրված շուրջ 110 վավերագրեր հանդիսացել են Սրապիոնի որդի Խոջա Յովհաննեսի ու նրա եղբայր Խոջա Մարտիրոսի անձնական փաստաթղթերի հավաքածուն: Այդ հավաքածուն ներառելով նրանց առնչվող 1722-1757 թթ. զանազան շարհ'աթակալ-նոտարական փաստաթղթեր (առքուվաճառքի, վարձակալություն, ունեցվածքի բաժանման վկայագրեր), նամակներ, նրանց կողմից ձեռքբերված տեղական կառավարիչների, Նադիր շահի ու հետագայում Նախիջևանն իրենց ենթարկած Ազատ խանի հրովարտական, պարտամուրհակներ, գեկուցագրեր ու ստացականներ՝ լույս են սփռում Նախիջևանի վերոհիշյալ ազդեցիկ անձանց գործունեության տարբեր ոլորտների ու ընդհանրապես Նախիջևանի հայության տվյալ շրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության զանազան հարցերի վրա: Փաստաթղթերի նախնական քննությունից պարզ է դառնում, որ Խոջա Յովհաննեսը, վաճառական լինելով հանդերձ, զբաղվել է նաև Ազուլիսի ու շրջակա մի քանի հայկական գյուղերի հարկերի գանձման ու պետական գանձարանին հանձնելու գործերով<sup>311</sup>: Նաիր եղբոր Մարտիրոսի հետ հողային կալվածքներ էր ձեռքբերել Ազուլիսում, Տրունիսում, Վանանդում ու շրջակա մի քանի վայրերում<sup>312</sup>, Օրդուբադում նա ունեցել է մեկ քար ջրաղաց<sup>313</sup> երկու մահմեդականների հետ համատեղ՝ մեկ իջևանատուն ու չիթ պատրաստելու արհեստանոց, որը 1720-ականներին վարձակալության էին տալիս<sup>314</sup>: Վավերագրերի բովանդակությունից պարզ է դառնում, որ անանձին դեպքերում նա հանդես է եկել ի պաշտպանություն նախիջևանի ի պաշտոնե նրա հարկագանձմանը հանձնված բնակչության շահերի՝ ձեռքբերելով հրամանագրեր տեղական ու շահական իշխանություններից: Մասնավորապես, Ատրպատականի փոխարքա և Նադիրի եղբայր Իբրահիմ Միրզան հիջրայի 1151թ. (1738/9թ.) իրեն ներկայացված խնդրագրին համապատասխան կարգադրում է, որ Նախիջևանի մի շարք գյուղերի

<sup>311</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1171, 1209

<sup>312</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1132, 1166, 1174, 1183, 1205, 1212, 1214

<sup>313</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1200:

<sup>314</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1164

հայ բնակիչների ու ռայաթների նկատմամբ չարաշահումներ չկատարվեն<sup>315</sup>:

Խոջա Յովհաննեսսին վերաբերող որոշ այլ փաստաթղթեր վկայում են նրա կողմից Այսրկովկասի ու Օսմանյան կայսրության տարածքներում իրականացված վաճառականական գործունեության մասին<sup>316</sup>:

Նրա վաճառականական գործերին մասնակից էր վերը հիշատակված Մոհամմադ Մո'ինը<sup>317</sup>: Պահպանվել են Խոջա Յովհաննեսսին ուղղված նամակները, որոնք տեղեկություններ են պարունակում ինչպես նրա վաճառականական գործերի<sup>318</sup>, այնպես էլ Նախիջևանի հայության տնտեսական դրության մասին<sup>319</sup>:

Նադիր շահի իշխանության հատկապես վերջին շրջանին բնորոշ ծանր հարկային քաղաքականությունը, տուգանքների ձևով գանձվող մեծ գումարները, դրամաշորթությունն ու չարաշահումները, չէին կարող չարտացոլվել նաև պարսկերեն վավերագրերում: Այս առումով շատ պատկերավոր է Խոջա Յովհաննեսսի այս մասին հանգամանակից պատմող ինդրագիրը, որում նշվում է, որ Նախորդ 1743 թ. որոշ հայերի ու մահմեդականների հարկեր են նշանակվել, և նրանից ևս գանձվել է 320 թուման: Յակառակ կողմում երկու կնիքներով հաստատվում է, որ Նախիջևանի *օլքայի* գրասենյակի 1742 թ. գրանցման համաձայն 6400 թումանի հարկ էր դրվել Խոջա Ավանեսսի և Խոջա Ստեփանի ժառանգի վրա<sup>320</sup>:

Այս ինդրով նա դիմել է նաև Նադիր շահին և ստացել նրա հիջրայի 1155թ. (1742/3 թ.) հրամանագիրը: Ինդրագրում նշվում է, որ իրենց բնակության վայրում նրանք բոլոր հարկերը վճարում են, բայց տարբեր *վիլայեթների* պաշտոնյաները *դասթանդագ*, *շիլթադ* ու չարաշահումներ են կատարում վաճառականների հանդեպ, որի պատճառով իրենք չեն կարողանում դիվանի հարկերը վճարել: Ինդրում է, որ բարձրագույն հրամանով դրանք արգելվեն: Յամապատասխանաբար հրահանգվում է, որ եթե ինդրարկունն իր

<sup>315</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1216

<sup>316</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1233, 1301:

<sup>317</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1238, 1240:

<sup>318</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1236, 1238, 1239, 1242, 1255, 1264

<sup>319</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1265

<sup>320</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1286:

բնակության վայրում հարկերը վճարել է, ապա չպետք է այլ վայրերում նրանից հարկեր պահանջեն ու նեղեն, դիվանի օգտին ապօրինի գանձումներ կատարեն<sup>321</sup>:

Նախիջևանի հայության վիճակն էլ ավելի ծանրանում է Նադիր շահի մահից, հատկապես Ատրպատականում իշխանությունն իր ձեռքը վերցրած Ազատ խան Աֆղանի տիրապետության շրջանում: Նրա վայրագություններից տուժում են նաև Ագուլիսի հայերը, որոնք հրաժարվում են պահանջված դրամական տուրքերը վճարել<sup>322</sup>: Սիմեոն Երևանցու հիշատակարանում պահպանված տեղեկության համաձայն 1751 թ. Ազատ խանը մեծ զորքով մտնում է Նախիջևան և ավերում այն, որի ընթացքում մեծապես տուժում է նաև Ագուլիսը<sup>323</sup>: Խոջա Յովհաննեսի անունը պարսկերեն վավերագրերում հանդիպում է մինչև 1754 թ.<sup>324</sup>, որից հետո նշվում է միայն նրա եղբոր՝ Մարտիրոսի անունը: Յավանաբար, նա այդ թվականին կամ մահացել է, կամ արտագաղթել:

Խոջա Յովհաննեսը և նրա եղբայր Մարտիրոսը այն անձանցից էին, որոնց կալվածքները հետագայում թվարկվում են Ագուլիսի Ս. Թովմա Առաքյալի վանքին հանձնված կալվածքների մեջ: Մատենադարանի կաթողիկոսական դիվանի վավերագրերից մեկն իրենից ներկայացնում է Նախիջևանից հեռացող անձանց կողմից Ս. Թովմա Առաքյալի վանքին հանձնված կալվածքների ու դրանց ձեռքբերմանը վերաբերող կալվածագրերի հայերեն հակիրճ բովանդակությունների ցանկ. «ի սահմանին Օրտուպատույ Ագուլիս քաղաքի եղեալ տանց պարտեզաց և անդաստանաց և այլոց դապալայք, զորս տեարքևոցա ի ժամանակի ցրուելոյ իւրեանց և գաղթական լինիլոյ յալևայլ տեղիս բերեալ թողեալ են ՚ի սուրբ Աթոռս վասն չափագանցն բռնաւ որու թեանց պարսկային տերութեան»<sup>325</sup>:

## **Երևանի խանության հայ մելիքները XIX դարի սկզբին Յարավային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտության սրման շրջանում**

<sup>321</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 1288:

<sup>322</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Չամչյանց, Յայոց պատմությունն, հ. 9, էջ 853-4:

<sup>323</sup> Դիվան Յայոց պատմութեան, գիրք Ը, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, էջ 220:

<sup>324</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 1330, 1332

<sup>325</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 242, վավ. 184:

XIX դարի սկզբին Հարավային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտության սրման ու պատերազմական բախումների ընթացքում տեղի հայ բնակչությանը իր աշխարհիկ ու հոգևոր առաջնորդների գլխավորությամբ դառնում է Ռուսաստանի և Իրանի իշխանությունների քաղաքական շահարկումների թիրախը<sup>326</sup>: Կեղծ խոստումներով ու սիրաշահող քայլերով հակամարտ կողմերը ջանում էին իրենց կողմը գրավել հայերին՝ ռազմական բախումների ընթացքում նրանց նյութական ու մարտական աջակցությունը ստանալու նպատակով: Հայ ժողովրդի ազատագրության հույսերը կապելով Ռուսաստանի հետ՝ Ղարաբաղի ու Երևանի հայ մելիքներից շատերը լայն աջակցություն էին ցուցաբերում ցարական իշխանություններին:

Նշված ժամանակահատվածում Ռուսաստանը ակտիվորեն իրականացնելով իր նվաճողական ծրագրերը Հարավային Կովկասում՝ Արևելյան Վրաստանի հետ իր իշխանության տակ է առնում նաև Երևանի խանության հյուսիսային տարածքները՝ ներառյալ Լոռու, Փամբակի, Բորչալուի, Ղազախի ու Շամշադինի շրջանները: Ադա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքի արդյունքում բավականին նոսրացած բնակչություն ունեցող այս շրջանների վերաբնակեցման հարցը Հարավային Կովկասի ռուսական վարչության ու շարժողության կենտրոնում էր, և այդ նպատակով այստեղ տարածքներ են հատկացվում Ղարաբաղից իրենց հպատակների հետ հեռացած հայ մելիքներին: Մելիք Ջումշուդը, որն իր հոր՝ Մելիք Շահնազար Բ-ի մահից հետո իր ձեռքն էր վերցրել Վարանդայի իշխանությունը՝ Ղարաբաղի Իբրահիմ խանի դեմ վճռական պայքարի մտադրությամբ<sup>327</sup>, Ադա Մուհամմադ խանի 1797թ. արշավանքի ժամանակ ձերբակալվում է և իր կյանքը կարողանում փրկել 70000 ռուբլու տուգանք վճարելով<sup>328</sup>: Իրանի շահի Շուշիում սպանվելուց հետո Մելիք Ջումշուդն իր հպատակների հետ փախչում է Վրաստան<sup>329</sup>: Այնուհետև նա և նրա հետ Ղարաբաղից հեռացած Մելիք Ֆրիդուն

<sup>326</sup> Այս մասին տե՛ս նաև Ք. Կոստիկյան, Երևանի խանության հայ մելիքները ժ.թ. դարի սկզբին Հարավային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտության սրման շրջանում, Հանդես ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2017, թիվ 1-12, էջ 221-234:

<sup>327</sup> Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները, էջ 185-6:

<sup>328</sup> Армяно-русские отношения, т. 4, Ереван, 1990, с. 461.

<sup>329</sup> Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները, էջ 187-8:

Մեկ իք-Բեգլ արյանը դիմում են Ռուսաստանի կայսր Պավել Ա-ին՝ նրա հպատակությանը ունեն ընդունելու ցանկությանը և իրենց բնակության վայր տրամադրելու խնդրանքով, որին համապատասխան Վրաց Գեորգի ԺԲ թագավորին հրահանգվում է նրանց բնակության վայր տրամադրել Ղազախում<sup>330</sup>: Վերջինս Ղարաբաղից ավելի վաղ հեռացած Մեկ իք Աբովին հանձնում է Բուլնիսի գավառը, Մեկ իք Ֆրիդունին՝ Աղջակալան և Բորչալուի մի մասը, իսկ մյուս մասը և Լոռին տրվում են Մեկ իք Ջումշուկ Մեկ իք Ծահնագարյանին<sup>331</sup>: Վերաբնակիչների հաստատումն իրենց հատկացված տարածքներում սակայն հարթ չի ընթանում՝ հանդիպելով տեղի ազնվականության ներկայացուցիչների դիմադրությանը: Այս կապակցությամբ Մեկ իք Ջումշուկը Պ. Կովալենսկուն ուղղված 1800 թ. իր մի նամակում հայցում է ռուս իշխանավորի կարգադրությունը, որ իր հետգաղթած ժողովուրդն իրենթակայության տակ գտնվի. «որպես և բնականապես կանօնեցեա կայ ի մեջ, որ ոչ ոք մեկ իք չի կարող միևս մեկ իքի սեփական ժողովրդոցն ձեռնամուխ լինել: Եւ վասն միևս ժողովրդոցն հրամայեա պարոն Կարապետին և միոյ քահանայի, զի զայնս աստուածակոյս կողմանէ կարգաւորեցեն ի մեջ մեր սիրով խաղաղութեամբ»<sup>332</sup>: 1804 թ. ռուսների երևանյան առաջին արշավանքից հետո Լոռու, Փամբակի և Բորչալուի շրջաններ են բերվում շուրջ 2000 հայ ընտանիք<sup>333</sup>: Այս շրջաններում հաստատված, այդ թվում նաև հայ մեկ իքների հետ եկած վերաբնակիչների դրությունը բավականին ծանր էր, այնպես, որ նրանց մի մասը իրենց իսկ կամքով, ինչպես նաև ռուսական իշխանությունների ցուցումներին համապատասխան, կարճ ժամանակ անց տեղափոխվում է Ելիսավետպոլի (կամ Գանձակի) նահանգ<sup>334</sup>: Այնտեղ է հաստատվում նաև Մեկ իք Ջումշուկ Մեկ իք-Ծահնագարյանը իր հպատակների հետ<sup>335</sup>: Նա ռուս-պարսկական պատերազմի հետագա շրջանում աչքի է ընկնում Իրանի

<sup>330</sup> Армяно-русские отношения, т. 4, д. 328, 342, 355, с. 471, 493, 507.

<sup>331</sup> Армяно-русские отношения, т. 4, д. 370, с. 527. Այս մասին տե՛ս նաև Ա. Մաղալյան, Արցախի մեկ իքությունները, էջ 94:

<sup>332</sup> Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 40.

<sup>333</sup> Դիլոյան, նշվ. աշխ., էջ 38-39:

<sup>334</sup> Դիլոյան, նշվ. աշխ., էջ 44:

<sup>335</sup> Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 310, 399.



դեմ ռուսական գորքերի հետ մղված կռիվներում և արժանանում ռուսական իշխանության պարգևներին<sup>336</sup>:

Եթե Արցախի հայ մելիքները վճռական էին իրենց ռուսական կողմնորոշման հարցում և դեռևս XVIII դարում բազմիցս փորձում էին խաների դեմ պայքարում հենվել Ռուսաստանի աջակցության վրա, ապա նույնը չի կարելի ասել Երևանի խանության հայ մելիքների մասին: Այստեղի մելիքները հիմնականում խուսափում էին ռազմական պայքարից և գերադասում բարիդրացիական հարաբերությունները տեղի և Իրանի մահմեդական իշխանությունների ու քոչվոր ցեղերի հետ: Այս առումով հատկանշական է, որ գիտակցելով ռազմական գործողությունների ծանր հետևանքները խաղաղ բնակչության բնականոն կյանքի վրա Երևանի Աբրահամ Մելիք-Աղամալյանը և յուզբաշի Գաբրիել Գեղամացին գրավոր դիմում են հղում Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանին՝ միջնորդելու, որպեսզի Ցիցիանովը հաշտություն և կնքի Երևանի խանի հետ «ոյր չըլիսի թե այս երգիրս էլ Ղարաբաղու նըման քրիստոնեից ավերումն լիսի»<sup>337</sup>:

Արցախի հայ մելիքների մեծ մասի ակնհայտ ռուսական կողմնորոշումը վտանգում էր Երևանի հայ մելիքների ու հասարակ ժողովրդի կեցությունը: Չգալի թվով հայ զինվորներ կային Երևանի բերդը պաշտպանող կայազորում<sup>338</sup> և նրանց ղեկավարների դիրքորոշումը կարող էր վճռական դեր խաղալ բերդի համար մղվող մարտերում: Այս հարցում բնորոշ օրինակ է Երևանի Մուհամմադ խանի վերաբերմունքը հայ հարյուրապետ Գաբրիել Գեղամացուն կատմամբ: Գանձակի բերդի 1804 թ. գրավումից հետո լուրեր ստանալով ռուսների կողմից դեպի Երևան նախաձեռնվող արշավանքի մասին՝ նա կարգադրում է խեղդամահ անել Գաբրիել Գեղամացուն, որը սակայն հաջողվում է կանխել, վերջինիս որոշ բարեկամների միջնորդությամբ<sup>339</sup>: Ինչպես հետագա փաստերն են ցույց տալիս, անհիմն չէին տեղի խանի ու իրանական հրամանատարության կասկածները հայերի հավատարմության վերաբերյալ: Պահպանվել են

<sup>336</sup> Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 401, 648.

<sup>337</sup> Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 172:

<sup>338</sup> АКАК, т. I, с. 118:

<sup>339</sup> Վ. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 133:

Երևանի մելիք Աբրահամի և Գաբրիել յուզբաշու նամակները ռուսական իշխանության ներքին՝ նրանց աջակցելու իրենց պատրաստակամության մասին վստահեցումներով, նաև իրանական կողմի ռազմական համալրումների ու այլ գործունեության վերաբերյալ տվյալներով<sup>340</sup>: Իսկ այն մասին, որ Երևանի Մուհամմադ խանը լավատեղյակ էր Գաբրիել Գեղամացու քաղաքական կողմնորոշմանը, փաստում է Եգոր Խուբովը՝ նշելով, որ խանը իր և Գաբրիելի միջոցով էր կապվում Կովկասի ռուսական իշխանության ներքին հետ Ռուսաստանի հպատակության ընդունելու և նրանից Իրանի դեմ օգնություն ստանալու ակնկալիքով<sup>341</sup>: Իրանի ղաջարական իշխանության ներքին չվստահելով բերդի հայ պաշտպաններին՝ բերդի կայազորի մեջ ներգրավում են Քերմանի հետևակազորայիններին<sup>342</sup>:

Յայ մելիքների դրության անկայունությունը Երևանի իշխանությունում՝ դրդում է նրանց դիմելու Կովկասի ռուսական իշխանության ներքին իրենց ենթակա տարածքներում, հատկապես Գանձակի իշխանությունում հողեր հատկացնելու խնդրանքով: Նման դիմումներով հանդես են գալիս Երևանի մելիքներ Աբրահամ ու Սահակ Աղամալյանները, Օհանես, Գաբրիել և Ալլահվերդի յուզբաշիները<sup>343</sup>: Կովկասի ռուսական հրամանատարության հետագա գրագրությունից հայտնի է դառնում, որ 1807 թ. իրենց կողմից ներկայացված դիմումներին համապատասխան Գաբրիել և Օհանես Յուզբաշի Գեղամյաններին էլիսավետարլի նահանգում բնակության վայր տրամադրելու մասին<sup>344</sup>:

Մատենադարանի արխիվային ֆոնդերում պահպանված պարսկերեն վավերագրերը ցույց են տալիս, որ իրանական իշխանություններն իրենց հերթին ջանում էին իրենց կողմը գրավել հայ ազնվականներին և հատուկ արտոնություններով խրախուսում էին իրենց նկատմամբ հավատարմություն ցուցաբերած հայ հողատերերին ու վաճառականներին:

<sup>340</sup> АКАК, т. II, док. 1205, 1256, с. 604, 626.

<sup>341</sup> Хубов Е., նշվ. աշխ., էջ 7, 22:

<sup>342</sup> عبد الرزاق مفتون دنبلی، مآثر سلطانیہ، ص. 116.

<sup>343</sup> АКАК, т. III, док. 441, 817, с. 236-7, 443.

<sup>344</sup> Присоединение Восточной Армении к России, ред. Ц. Агаян, т. 1, д. 374, с. 425.

XIX սկզբին հայ երեսն ու ռուսերեսն փաստագրական նյութերում պահպանվել են նամակներ գրված Շամշադինում ու Ղազախում գտնվող *քալ անթար* Յովհաննեսի կողմից 1805 թ. Լ. Էրիսթովին, որում նա իր մտահոգություներն է հայտնում ռուս-իրանական բախումների արդյունքում Երևանի խանության բնակչությանը, թե՛ հայ երեսն ու թե՛ այլ ազգիներին հասցվող վնասների մասին<sup>345</sup>: Նամակներից մեկում նշվում է նաև, որ պարսիկները Փիր Ղուլի սարդարի գլխավորությամբ մտնում են Ղզղալա, որտեղ Յովհաննես քալ անթարն էր, ապա նրանից պահանջում են ներկայանալ թագաժառանգ Աբբաս Միրզային, որպեսզի վերջինս նրան *խալ 'աթով* պատվի, և մոտակատարածքում գտնվող մյուս հայ գեղջավազների հետ տանում են Երևան<sup>346</sup>: Կարծում ենք, որ թերևս այս անձին է տրված եղել Աբբաս Միրզայի 1808թ. հրամանագիրը, որով Մելիք Յովհաննեսը նշանակվում է Երևանի ու Նախիջևանի հայության մելիք և համապատասխանաբար կարգադրվում Յուսեյն խան սարդարին նրան հիշյալ շրջանների հայության մելիք ճանաչել<sup>347</sup>: Յովհաննեսի բովանդակությունից պարզ է, որ վերոհիշյալ Մելիք Յովհաննեսը ազնվականական տոհմից էր, վայելում էր իրանական իշխանությունների վստահությունը և նրան որոշակի դեր էր վերապահված Երևանի հայ բնակչության վերաբերությամբ. «[1808թ.] տարվա սկզբից Երևանի ու Նախիջևանի հայության մելիքությունը վերոհիշյալին հանձնեցինք, որպեսզի ամենայն ջանասիրությամբ, ինամքով ու զգոնությամբ պաշտպանի նրանց ու հավաքի ցաքուցրիվ եղածներին՝ դրսևորելով իր հավատարմությունն ու նվիրվածությունն [շահական] ամենալուսավոր մտքին: Եվ թող ստանա հարկերը, որ նրան էին հատկացված եղել մշտապես և ժառանգաբար՝ ծախելով դրանք իր ապրուստի ու կարիքների համար»:

1813 թ. կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով սահմանը Իրանի ու Ռուսաստանի միջև սկսվելով արևմուտքում Շորազյալի շրջանից՝ ձգվում էր նրան կից Փամբակի, Ղազախի, Շամշադիլի և Ելիսավետպոլի շրջաններով, այնուհետև ընդգրկելով

<sup>345</sup> Присоединение Восточной Армении к России, ред. Ц. Агаян, т. 1, д. 257, сс. 322-3, д. 266, сс. 328-9.

<sup>346</sup> Присоединение Восточной Армении к России, ред. Ц. Агаян, т. 1, д. 266, сс. 328-9.

<sup>347</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ը, վավ. 1504:

Ղարաբաղի խանությունը՝ ավարտվում Արաքս գետի մոտ<sup>348</sup>: Այս պայմանագրի թերի կողմերից էին սահմանների վերաբերյալ ոչ հստակ ու վիճահարույց ձևակերպումները, որոնք հետագայում կողմերի միջև երկարատև վիճաբանությունների պատճառ են դառնում և այդպես էլ լուծում չստանալով՝ ձգվում մինչև նոր պատերազմի բռնկումը:

Կովկասի կառավարչապետ Ա. Պ. Երմոլովը 1820 թ. սահմանային վեճերի կապակցությամբ իր գրած մի նամակում նշում է, որ պարսիկները ջանում են ստանալ մի տարածք Փամբակի շրջանում, որպեսզի կապ ունենան Ռուսաստանի տիրապետության տակ անցած «թաթարների» հետ, որը նաանթույլատրելի է համարում սահմանների պահպանության տեսանկյունից: Բացի այդ, պայմանագրով Իրանին էր պատկանում Շամշադիլի դիստանցիայի ու Սևանա լճի միջև գտնվող մի անբնակ տարածք, որը ռուսահպատակ «թաթարների» քոչվայրն էր և հակառակորդ կողմի քոչվորների հետ հանդիպման վայրը, որտեղ դավեր էին նյութվում ռուսական իշխանությունների դեմ: Այս երկու տարածքները Երմոլովն առաջարկում էր Ռուսաստանին պահել՝ փոխարենը Իրանին հանձնելով Սյունիքի Կապան-չայ և Կապանակ-չայ գետերի միջև ընկած տարածքը<sup>349</sup>: Սահմանների հարցը կարգավորելու նպատակով անգամ կողմերը 1823 թ. որոշում են իրենց ներկայացուցիչների մասնակցությամբ հանձնաժողով ստեղծել և սահմանների հստակեցման հարցում փոխհամաձայնության գալ<sup>350</sup>: Ռուսական իշխանությունները հանձինս Կովկասի կառավարչապետ Ա. Պ. Երմոլովի անգամ պատրաստակամություն են հայտնում զիջելու Շորագյալի շրջանից մի զգալի մաս<sup>351</sup> և այնուամենայնիվ այս հարցում կողմերը փոխհամաձայնության չեն գալիս:

Ինչպես ստորև կտեսնենք, առաջին և երկրորդ ռուս-պարսկական պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում (1813-1826 թթ.) ղաջարական իշխանությունների կողմից հրապարակված հրամանագրերը հաստատում են հայ մելիքներից մի քանիսի

<sup>348</sup> AKAK, т. VI, ч. II, с. 141.

<sup>349</sup> AKAK, т. VI, ч. II, с. 228.

<sup>350</sup> AKAK, т. VI, ч. II, дд. 517-9, 521, 524, с. 277-282 և այլն.

<sup>351</sup> Այդ մասին նշվում է գեներալ Եյտ. Վելյամինովի կողմից թագաժառանգ Աբբաս Միրզային 1824 թ. հղված մի նամակում (AKAK, т. VI, ч. II, д. 589, с. 328):

իրավունքները հիմնականում վիճելի տարածքներում և ջանում այդ կերպամրապնդել իրանական կողմի դիրքերն այդ վայրերում:

Մինչև 1805 թ. Երևանի խանություն մեջ էր գտնվում Շորազյալի *սուլթանությունը*, որն այդ թվականին գրավվում է ռուսական զորքերի կողմից և միացվում Ռուսաստանին<sup>352</sup>: Շորազյալի գավառի միացումը Ռուսաստանին հաստատվում է առաջին ռուս-պարսկական պատերազմի ավարտին կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով, սակայն, ինչպես վերը նշեցինք, այն հակամարտ կողմերի միջև վիճելի տարածքներից էր: Երևանի Յուսեյն խանի 1811 թ. և թագաժառանգ Աբբաս Միրզայի 1812թ. հրամանագրերով Մնացականի որդի Յարությունի որդի Կարապետ Աղան, որը շահին հավատարիմ հայ ազնվականներից էր, իր ծառայությունների դիմաց, ազատվում է Շորազյալում գտնվող իր կալվածքների համար մի շարք հարկերի վճարումից<sup>353</sup>: Աղա Կարապետի հիշյալ իրավունքը հաստատվում է նաև Ֆաթհալի շահի 1820թ. սեպտեմբերի հրամանագրով<sup>354</sup>: Այս հրամանագրերն ինքնին վկայում են այն մասին, որ ոչ Երևանի խանը և ոչ էլ Իրանի շահական իշխանությունները չէին հաշտվել Շորազյալի շրջանի կորստի հետ: 1817 թ. ռուսական հրամանատարության տվյալներով ռուս-իրանական առաջին պատերազմի ընթացքում Շորազյալի բնակչության թիվը խիստ նվազել էր նախապատերազմյան 1000 ընտանիքից հասնելով 200-ի<sup>355</sup>: Ակներև է, որ շահական իշխանությունները իրենց այս քայլով ազատում էին հայ մելիքին ու նրան ենթակա շրջանը Իրանի հանդեպ հարկային պարտավորություններից, և թերևս այդ կերպ՝ արտոնյալ պայմաններով, փորձում խրախուսել նրան ունենալու իրանական կողմնորոշում:

Իրանի դաջարական իշխանությունն իր շահերից ելնելով՝ անգամ փորձում է վերականգնել արդեն քաղաքական ասպարեզից դուրս եկած Սյունիքի Օրբելյանների ու Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների ազնվականական տոհմերը՝ կալվածքներ

<sup>352</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974, էջ 14, 121:

<sup>353</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 1018, 1022:

<sup>354</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 1024:

<sup>355</sup> AKAK, т. VI, ч. II, с. 142.

շնորհելով այդ տոհմերից սերած և Իրանում գտնվող իրենց հարմար թեկնածուներին: Այսպես, Ֆաթիալի շահի 1813թ. հունիսի հրամանագրով հաստատվում են Սամ Բեկի որդի Պետրոս Օրբելյանի ժառանգական իրավունքները Սյունիքի Ամաղու գյուղի և Նորավանքի նկատմամբ<sup>356</sup>:

Նույն պատճառներով 1824թ. թագաժառանգ Աբբաս Միրզայի և երկու տարի անց Ֆաթիալի շահի հրամանագրերով Գեղարքունիքի մի շարք գյուղերի նկատմամբ կալվածատիրական իրավունքը հանձնվում է Դավիթ Մելիք-Շահնազարյանին<sup>357</sup>, որի կենսագրության մանրամասների մասին արդեն խոսել ենք նախորդ բաժնում: Իր այս քայլով Իրանի թագաժառանգը, հավանաբար, ցանկանում էր իր դիրքերը հաստատել Գեղարքունիքի վիճելի տարածքում, քանի որ Դավիթ Խանը նրա արքունի նախկին պաշտոնյաներից ու հավատարիմ անձանցից էր: Բնականաբար, նման պայմաններում Դավիթ Մելիք-Շահնազարյանի հավակնությունները չէին կարող խրախուսվել ցարական իշխանությունների կողմից և ապարդյուն են լինում, ինչպես արդեն նշեցինք նախորդ բաժնում<sup>358</sup>:

Երևանի հայ մելիքներից Մելիք Սահակի քաղաքական կողմնորոշման վրա ազդելու նպատակով է տեղի ունենում Իրանում շահի հովանավորության ներքո գտնվող վրաց արքայ որդի Ալեքսանդր Միրզայի և Երևանի հիշյալ մելիքի դստեր՝ Մարիայի ամուսնությունը: Մելիք Սահակ Աղամալյանը տվյալ ժամանակաշրջանի Երևանի խանության ազդեցիկ անձնավորություններից մեկն էր, որը մեծ հեղինակություն էր վայելում նաև Երևանի սարդարի ու իրանական իշխանությունների շրջանում<sup>359</sup>: Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզան հիջրայի 1234 թ. (1818/9 թ.) և 1235 թ. (1819/20 թ.) իր հրամանագրերով առաջարկում է Եփրեմ կաթողիկոսին քրիստոնեական օրենքներով թույլատրել

<sup>356</sup> Այս հրովարտակի բնագիրը տե՛ս հրատարակված (Ք. Կոստիկյան, Սյունիքի Օրբելյանները XVIII-XIX դարերում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIX, Երևան, 2000, էջ 70-78):

<sup>357</sup> Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 43, 44; Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 701: Այս մասին ավելի մանրամասն տես Ք. Կոստիկյան, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, էջ 303-329:

<sup>358</sup> Ք. Կոստիկյան, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, էջ 306:

<sup>359</sup> R. Hewsen, նշվ. աշխ., էջ 323.

նրանց ամուսնությունը և կատարել պապականության արարողությունը<sup>360</sup>: Պահպանվել է այս կապակցությամբ նաև Երևանի խան Յուսեյն սարգսի նամակը, որով տեղեկացնում է Եփրեմ կաթողիկոսին Մելիք Սահակի դստերը վրաց արքայ որդի Ալեքսանդր Միրզայի հետ ամուսնացնելու մտադրության և այդ կապակցությամբ թագաժառանգի հրամանագիր հրապարակված լինելու մասին և նշվում, որ կաթողիկոսը կարող է դա իրականացնել մոտակա հարմար ժամանակահատվածում<sup>361</sup>: Մելիք Սահակ Աղամալյանը Երևանի Յուսեյն Ղուլի խան սարգսի մերձավոր պաշտոնյաներից Երևանություն հայկական հետևակազորի հրամանատարը, որը ռուսական արխիվային փաստաթղթերում հանդես է գալիս ռուսական կողմնորոշմամբ: Իրական իշխանություններն իրենց հերթին ջանում էին նրան ազգակցական կապերով կապել իրանամետ վրաց արքայ որդու հետ: Մելիք Սահակը դեռևս 1805 թ. դիմել էր Վրաստանում հաստատված ռուսական իշխանություններին իրեն ու իր հպատակ գյուղացիներին տեղ հատկացնելու համար Վրաստանի Ցինցկարո անբնակ վայրում, որը դրական լուծում է ստանում<sup>362</sup>: Մելիք Սահակի մասին ռուսական փաստագրական նյութերում առաջին անգամ հիշատակվում է կոմս Ի. Գուդովիչի 1807թ. գեներալ-մայոր Նեսվետաին ուղղված հանձնարարականում, որտեղ նշվում է որ Երևանի մելիքներ Սահակին ու Իբրահիմին (Աբրահամ?) անհրաժեշտ է բնակության ու հողամշակության վայր տրամադրել Փամբակի շրջանում<sup>363</sup>: Յետագա տվյալներից հայտնի է դառնում, որ չնայած վերը նշված ամուսնությանը Մելիք Սահակը ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի ընթացքում շարունակում էր համագործակցել ռուսների հետ ու անհրաժեշտ տեղեկություններ էր հաղորդում ռուսական հրամանատարությանը Երևանի խանությունում գտնվող պարսկական զորքերի վերաբերյալ<sup>364</sup>: 1828 թ. պատերազմից հետո ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ի. Պ. Կրասովսկին իր մի նամակում շեշտում է նրա ծառայությունները Ռուսաստանին և հոգ տանում նրան ռուսական տիրապետության տակ անցած Երևանի

<sup>360</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 680, 682:

<sup>361</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1724:

<sup>362</sup> Присоединение Восточной Армении к России, т. 1, д. 210, с. 659.

<sup>363</sup> АКАК, т. III, д. 817, с. 443.

<sup>364</sup> Присоединение Восточной Армении к России, т. 2, д. 176, с. 300, д. 204, с. 365.

Նահանգ վերադառնալու թույլ տվող թյուրևերը ստանալու մասին<sup>365</sup>: Մելիք Սահակն այնուհետև ծառայության է անցնում Հարավային Կովկասի շրջանային վարչության մեջ որպես «ասսետոր»<sup>366</sup>: 1833 թ. ռուսական պաշտոնյաների նամակագրության մեջ որոշակի տեղեկություններ կան վերը նշված ամուսնությունից ծնված 7-ամյա Հերակլի կրթությունը Ս. Պետերբուրգում պետական գանձարանի հաշվին կազմակերպելու և թե՛ նրան և թե՛ նրա մորը որպես վրացական արքայական տոհմի ներկայացուցիչների պետական թոշակ նշանակելու մասին<sup>367</sup>: Մելիք Սահակի նախածեռնությամբ արդեն ռուսական տիրապետության շրջանում վերանորոգվում է Երևանի մոտակայքում գտնվող Եկեղեցին, որտեղ էլ իր մահից հետո 1835թ. թաղվում է<sup>368</sup>:

Այսպիսով, Մատենադարանի դաջարական շրջանի պարսկական հրամանագրերը ուրվագծում են հայ մելիքական իրավունքների շահարկումը շահական իշխանության կողմից քաղաքական նպատակներով, որոնք սակայն միշտ էլ, որ հարթ ընթացք էին ստանում և իրենց նպատակին ծառայում: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հետագայում 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Երևանի խանությունը դուրս է գալիս իրանական ազդեցության գոտուց, ապա ակնհայտ է նաև այն, որ այդ թվականից ի վեր վերը նշված հրամանագրերը կորցնում են իրենց գործառական նշանակությունը:

Հայ մելիքներին ու խոջաներին վերաբերող պարսկերեն վավերագրերի տվյալների հակիրճ ակնարկն ու ուսումնասիրությունը մատնանշում են նրանց սերտ կապը ժամանակաշրջանի պատմական ընթացքի ու դեպքերի զարգացման հետ, արդյունքում նաև նրանց արժեքը հայ մելիքական տների պատմության ու նրանց առնչվող հարցերի քննության համար: Այդ տվյալները ճշգրտում ու լրացնում են ժամանակաշրջանի քաղաքական պատմության իրողություններն ու որոշ

<sup>365</sup> Присоединение Восточной Армении к России, т. 2, д. 241, с. 442.

<sup>366</sup> R. Hewsen, նշվ. աշխ., էջ 325:

<sup>367</sup> АКАК, т. VIII, Тифлис, 1881, д. 135, 136, с. 216.

<sup>368</sup> R. Hewsen, նշվ. աշխ., էջ 325:



իրադարձությունների ընթացքը՝ կապելով այն հիշյալ անձանց քաղաքական գործունեության մանրամասների հետ:

#### **1.4 Մառնադարանի պարսկերեն վավերագրերը գրող և ընդօրինակող գրագիրները**

Սեֆյան ժամանակաշրջանում շահական հրամանագրերը գրում էին արքունի գրագիրները՝ *վադիեենևիսը* (կամ *մաջլե սենևիսը*), *մունշի ալ-մամալիբը*, *ռադամնևիսները*՝ յուրաքանչյուրն աշխատելով իրեն հատկացված մասի վրա:

*Մաջլե սենևիսների* պարտականություններից է եղել պալատական պատմագրության շարադրումը և հաճախ նրանց այս աշխատությունների շնորհիվ պահպանվել են նրանց անունները: Մասնավորապես, շահ Աբբաս Բ-ի *մաջլե սենևիս* Մուհամմադ Յուսուֆ Վալեհի Իսֆահանին<sup>369</sup> առավել ապես հայտնի է իր պատմագրական «Խուլդեբարին» (Երկնային դրախտ) աշխատության մեջ: XVII դարի 70-ականներին Իրան այցելած կաթոլիկ Պետրոս-Պետիկի հավաստմամբ Սեֆյան արքունիքի *մաջլե սենևիսի* պաշտոնը վարում էր Միրզա Մուհամմադ Յուսեյնը, որը հաճելի վարվեցողության տեր և փլիհսովայական ճարտասանության մեջ որոշակի հմտություններ ունեցող անձնավորություն էր<sup>370</sup>: XVII դարի վերջից XVIII դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում *մաջլե սենևիսի* պաշտոնը զբաղեցնում էր Մուհամմադ Իբրահիմ բ. Չեյնալ-Աբեդին Նասիրին, որը հայտնի է իր «Դասթուր-ե շահրիարան» (Տիրակալների կարգը) պատմագրական երկով<sup>371</sup>: Նրան այդ պաշտոնում հաջորդում է Միրզա Ալի Նադի Նասիրին, որը 1720-ական թվականների վերջին Սեֆյան պալատի *մաջլե սենևիսն* էր, որը ծագումով լինելով Օրդուբադում ապրող տոհմական *մունշի ալ-մամալիբների* ընտանիքից, հեղինակել է Սեֆյան պետության պաշտոնյաների ու ռոճիկների մասին աշխատություն<sup>372</sup>: Նրա հետևամակագրական կապի մեջ է եղել Եղիա Կարնեցին՝ բանակցելով Նախիջևանի հայ կաթոլիկներին վերաբերող

<sup>369</sup> 81. ثواقب جهانبخش، تاریخ نگاری عصر صفویو شناخت منابع و مأخذ، شیراز، انتشارات نوید شیراز، 1380، ص. 81

<sup>370</sup> A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, p. 275.

<sup>371</sup> ثواقب جهانبخش، تاریخ نگاری عصر صفویو شناخت منابع و مأخذ، ص. 88-89.

<sup>372</sup> میرزا علی نقی نصیری، القاب و مواجب دوره سلاطین صفوی، به تصحیح یوسف رحیم لو، مشهد، 1371، ص. 17

ու շահ Թահմասայ Բ-ի կողմից նրա գլխավորությամբ Ռուսաստանի ցարի մոտուղարկված պատվիրակության գործերի շուրջ<sup>373</sup>:

Նադիր շահի 1735 թ. հրամանագրերից մեկում նշվում է Երևանի նահանգի *մալ իյյ աթի գաթիթ* և գրագիր Միրզա Մուհամմադ Քազիմի<sup>374</sup> անունը, որն անց է կացնում Էջմիածնի կալվածքների հաշվառումը:

Յետագա Ղաջարական շրջանում 1805 թ. *մոնշի ալ-մամալ եք* է նշանակվում Միրզա Ռեզա Ղուլի Նավային, որի գրական կեղծանունն էր Սուլթանի<sup>375</sup>:

Մինչև XVIII դարի երկրորդ կեսը աղբյուրներում սակավ են տեղեկությունները այն մասին, թե ովքեր էին վարում Էջմիածնի կաթողիկոսների ու մյուս հայոց վանքերի վանահայրերի գրագրությունը պարսից արքունիքի հետ: Ավելի հավանական է, որ թեև հայ հոգևոր առաջնորդներից շատերը, հատկապես նրանք, ովքեր ծագումով Իրանի ներքին շրջաններից ու բնակավայրերից, մասնավորապես Նոր Ջուղայից էին, տիրապետում էին պարսկերենին ու կարողանում էին հաղորդակցվել պարսկական իշխանությունների հետ այդ լեզվով, սակայն խնդրագրերն ու նամակներն այնուամենայնիվ, թերևս գրվում էին պարսից գրագրության կանոններին ծանոթ անձանց, հավանաբար գրագիրների կամ միրզաների ձեռքով: Վերջիններիս ծառայություններից էր օգտվում մասնավորապես պարսից արքունիքի հետ XVIII դարի 20-ականներին սերտ նամակագրական կապերի մեջ գտվող Եղիա Կարնեցին<sup>376</sup>:

XVIII դարից գանազան պատմական աղբյուրներում որոշակի տեղեկություններ կան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում աշխատող պարսկալեզու գրագիրների մասին, որոնց ծառայություններից կաթողիկոսներն օգտվում էին իրենց հարաբերությունները պարսից արքունիքի ու խանական կառավարության հետ անխափան պահելու համար:

Սիմեոն Երևանցու բազմարդյուն գործունեությունը ցույց է տալիս Էջմիածնի փաստագրական նյութերի իմացության

<sup>373</sup> Եղիա Կարնեցի, դիվան, Երևան, 1968, էջ 121, 188, 215, 216, 237-9 և այլն:

<sup>374</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, էջ 31, 36-38:

<sup>375</sup> قائم مقامی ج، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، ص. 258

<sup>376</sup> Եղիա Կարնեցին, նշվ. աշխ., էջ 270, 271:

կարևորությունը Մայր Աթոռի ու ողջ հայության համար: Չնայած իր  
լեզվական և այն գիտելիքներին հիշյալ կաթողիկոսը ևս օգտվում  
էր գրագիրների ծառայություններից: Թեև չեն պահպանվել  
մանրամասն տեղեկություններ նրա մոտ աշխատող թարգմանիչների  
ու գրագիրների մասին, սակայն նրա հիշատակարանում հաճախ է  
նշվում նրա ենթակայության տակ աշխատող Միրզայի՝ գրագրի մասին՝  
անվանելով նրան «Միրզայն մերոյ» կամ «մեր Միրզայն», սակայն  
առանց նրանում նշելու<sup>377</sup>, որին երբեմն, տարբեր առիթներով, այս  
կամ այն կառավարչի մոտ էր ուղարկում<sup>378</sup>:

Նրա հաջորդ Ղուկաս Կարնեցին<sup>379</sup> գիտակցելով օտար  
լեզուներով և հատկապես պարսկերենով գրագրության  
կարևորությունը՝ քայլեր է նախաձեռնում վանքում պարսկալեզու  
գրագիրներ ունենալու ուղղությամբ: Նրա ցանկությամբ և Կրաց  
արքայազն Գեորգիի հրամանով Միրզա Ահմադը *վակֆ* է արվում  
Էջմիածնի վանքին և դառնում նրա գրագիր սպասավորը: Պահպանված  
այդ հրովարտակում նշվում է նաև, որ «քանի որ այն արժանավոր  
անձը (Միրզա Ահմադը) ժառանգաբար հանդիսացել է Բորչալուի բնիկ  
*ռայ աթևերից* ու երկար ժամանակ է, ինչ բնակվում է  
Ուչքիլիսայում, որոշվել էր նրան գաղթեցնել իր հին բնակավայրը:  
Բայց երկրորդ անգամ այն պատվարժան կաթողիկոսի գրավոր  
խնդրանքով և գիտակցելով նրա հետ բարեկամական կապերի  
ամրության կարևորությունը՝ Նորին Գերագանցությունը այն  
հպատակին իր ժառանգների ու ընտանիքի հետ *վակֆ* արեց  
Ուչքիլիսայի վսեմ ու սրբազան օջախին և հանձնեց այն  
բարձրաստիճան անձին, որպեսզի այսուհետև իր զավակների հետ  
գտնվի այն սուրբ վայրում, հանդիսանա նրա *ռայ աթև* ու փառահեղ  
կաթողիկոսի արժանի սպասավորը, հանգիստ ու ապահով  
անձնվիրաբար ծառայի նրան»<sup>380</sup>: Մատենադարանի կաթողիկոսական  
դիվանում կան մի շարք փաստաթղթեր, որոնց վրա առկա է Միրզա

<sup>377</sup> Դիվան Չայոց պատմության, գիրք Ը, Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը, էջ 254, 278, 282:

<sup>378</sup> Դիվան Չայոց պատմության, գիրք Գ., Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը, էջ 127-130:

<sup>379</sup> Տ. Ղուկաս Ա Կարնեցի Ամենայն Չայոց Կաթողիկոս 1780 – 1799:

<sup>380</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 52:

Ահմադի ու Նրա որդի Միրզա Քյալբալիի<sup>381</sup> ստորագրությամբ<sup>382</sup>։ Նրանք են հիմնականում վարել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պարսկերեն գրագրությամբ, հանդես եկել որպես կաթողիկոսի բանագնացները Երևանի խանի, նաև Իրանի ղաջարական իշխանությունների մոտ, կազմել բազմաթիվ փաստաթղթերի պատճեններ<sup>383</sup>։

Հայ հոգևորականները զանազան ոլորտներում գործարքներ կատարելիս օգտվել են նաև այլ գրագիրների ծառայություններից։ Կաթողիկոսական դիվանի փաստաթղթերից մեկով, մասնավորապես, Միրզա Քյարիմը շնորհակալություն է հայտնում Ներսես կաթողիկոսին, իր կատարած ծառայությունների, մասնավորապես Էջմիածնի կալվածագրերի ու պարտավորականների գրության ու թարգմանության դիմաց, նրան նվիրված ժամացույցի համար<sup>384</sup>։

Հարավային Կովկասում հանդես են գալիս նաև մի քանի անկախ հայագրի և մահմեդական պարսկալեզու գրագիրներ<sup>385</sup>։

Երևանի խանի հետ փոխանակված նամակներում նշվում է գրագիր Միրզա Թաթոսի անունը<sup>386</sup>։ Վերջինս եղել է Երևանի Հուսեյն խանի գրագիրներից, որի համար խանը միջնորդում է կաթողիկոսի առաջ, որպեսզի նա վերջինիս տրամադրի Երևանաբնակ, սակայն Ռուսաստան արտագաղթած ոմն Մելիքսեթի բնակարանը<sup>387</sup>։ Ամենայն հավանականությամբ այս գրագիրն է հետագայում Ռուսաստանի տիրապետության շրջանում հանդես գալիս որպես պաշտոնական թարգմանիչ և Նրա ստորագրություն ենք գտնում Դավիթ Մելիք-Շահնազարյանների խնդրով հարուցված գործին կցված պարսկերեն փաստաթղթերի պատճեններում, որտեղ նա հաստատում է պատճենի համապատասխանությունը բնօրինակին և ստորագրում՝ «թարգմանիչ կառավարության Յայաստանի Միրզա Թադեոս Կամսարական» կամ

<sup>381</sup> Այն, որ Միրզա Քյալբալին եղել է Միրզա Ահմադի որդին, հայտնի է դառնում հետևյալ փաստաթղթի բովանդակությամբ։ Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 748։

<sup>382</sup> Այս մասին տե՛ս նաև Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, էջ 19-20։

<sup>383</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 429ա; թղթ. 1դ, վավ. 519; 1ե, վավ. 593, 671, 615ա, դ, 617բ, 671, 748, թղթ. 1ե, վավ. 1438, 1456, 1495, թղթ. 1ը, վավ. 1524, 1527, 1544, 1560, 1582, 1634, 1637, 1638։

<sup>384</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 793։

<sup>385</sup> Այս մասին տե՛ս նաև К. Костикян, Персоязычные писцы и переписчики Закавказья конца XVIII-начала XIX в. Армения – Иран: История. Культура. Современные перспективы взаимодействия: Сборник статей, Москва, 2013, сс. 87-90։

<sup>386</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 664, 690; թղթ. 1ը, վավ. 1514, 1551։

<sup>387</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 690։

«Չամեմատեալ իմ գայս ընդ նախագաղափարին իւրոյ տեսի զի միևնոյնն է: Թարգման գրաւոր կառավարութեան Չայաստանի: Միրգայ Թադէոս Կամսարական»<sup>388</sup>: Այս թարգմանչի անուէն ենք գտնում նաև Մատենադարանի վավերագրերից մեկի հակառակ կողմի մեկնաբանության մեջ, որը մատնանշում է նրա առավել գիտակլիները իր գործում և վավերագրերի բովանդակության ըմբռնման հարցում նրա խորհրդատվությանը Էջմիածնից<sup>389</sup> դիմած կլիներու փաստը. «Միրգայ Թադէոսն այսպէս մեկնեաց ...»<sup>390</sup>

Մեկ իք-ճահնագարյանների գործին կցված փաստաթղթերի պատճենների հավաստիությունը հաստատված է երեք այլ անձանց՝ Մոհամմադ Սալեհի, Ռաջաբ Ալիի և Իբն Ֆաթիալիի ստորագրությամբ ու կնիքներով<sup>391</sup>:

Կաթողիկոսական դիվանի վավերագրերից մեկի<sup>392</sup> ընդօրինակողը հայագի Միրզա Յուսուֆ Ներսեսովն է<sup>393</sup>, որն իր կրթությունը ստացած կլիներու Իրանում, մինչև 1826թ. վարում էր պարսից բարձրաստիճան անձանց գրագրությունը: 1856 թ. նա Դերբենդում խմբագրել է Դադստանի վաղ միջնադարի պատմությանը նվիրված «Դերբենդ-նամե» աշխատությունը, որի մեզ հայտնի միակ ինքնագիր ձեռագիրը<sup>394</sup> պահվում է Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ֆոնդում: Ներսեսովը հեղինակն է նաև «Թարիխ-ե սաֆի» (ճշմարտացի պատմություն) աշխատության, որի բնագիրը պահվում է Վրաստանի Չանրապետության Ձեռագրերի Ազգային Կենտրոնում P-195 համարի տակ և որը Այսրկովկասի ու հատկապէս Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմության կավագույն սկզբնաղբյուրներից է<sup>395</sup>:

Մատենադարանի մի քանի վավերագրերի պատճեններ և պատճենների մեկ ժողովածու գրանցված են արաբատառ ձեռագրերի ֆոնդում: Այդ պատճեններն ունեն գրչի հիշատակարաններ, որոնցից իմանում ենք գրչի անուէն ու ընդօրինակության ժամանակը:

<sup>388</sup> Մեկ իք-ճահնագարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 21, 39:

<sup>389</sup> Չիբացառվում, որ գրառումը կատարված կլինի Սիմեոն Երևանցու կողմից:

<sup>390</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 6, էջ 37:

<sup>391</sup> Մեկ իք-ճահնագարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 21, 23, 25, 27 և այլն:

<sup>392</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 109:

<sup>393</sup> Նրա մասին կենսագրական մանրամասները տես Միրզա Յուսուֆ Ներսեսով, ճշմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 13-15:

<sup>394</sup> Մատենադարան, արաբ. ձեռ. ֆոնդ, ձեռ. 239:

<sup>395</sup> Տես այն հրատարակված՝ Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ:

Այսպես, ձեռ. հ. 231-ը բովանդակում է Գանձասարի վանքի պատմությանը վերաբերող երկու հրովարտակաների պատճեններ, որոնց բնագրերը կան Մատենադարանի կաթողիկոսական դիվանում և հրատարակվել են Յ. Փափագյանի կողմից. առաջինը Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները շարքի արակ Ա-ում, վավերագիր 3-ն է, մյուսը՝ արակ Բ-ում, վավերագիր 6-ը: Ձեռագիրն ընդօրինակվել է XIX դարում Թավրիզում ԽոջաՇիմշար Մոհարամ 'Ալիի կողմից:

Որպես ձեռագիր հ. 272 գրանցված է Մոհամմադ մարգարեի դաշնագիրը՝ կնքված արաբական տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների հետ, որով *ջիզյա* վճարելու պայմանով ամրագրվում են նրանց կրոնական իրավունքները մահմեդականների տիրապետության տակ: Այն ընդօրինակել է Թավրիզում հայերի ուսուցիչ Մուհամմադ Ալի Թաբրիզին հիջրայի 1296 թ. շաբան ամսին (1879 թ. հունիսի 21-օգոստոսի 19):

Երևանի Յուսուբյանի Ալիի ու նրա որդիներ Ղուլամ Ալիի ու Մուհամմադի շուրջ 200 նամակների ու հրամանագրերի պատճենների ժողովածու է կազմել խաների գլխավոր քարտուղար (մուսշիբաշի) Միրզա Մոհամմադ Մուսալլամը<sup>396</sup>: Ինչպես նշում է ժողովածուի հեղինակը, 1778 թ. նա Սպահանից գալիս է Երևան և ծառայության անցնում Երևանի Յուսուբյան 'Ալիի խանի մոտ որպես նրա գավակների ուսուցիչ: Այնուհետև դառնում է խանի գրագիրների պետը (դաբիր-եդառ-օլ-ինշա): Ձեռագիրը գրի է առնվել նրա ենթակայության տակ գտնվող մեկ այլ գրագրի կողմից, որի անունը նշված չէ:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ընդօրինակողների մեջ են նաև մասնագիտությամբ բժիշկ ոմն Միրզա Ջաֆար և Քարբալայի Մուսթովֆիի որդի Ջաբրահիլ, որոնք հիջրայի 1309 թ. ջումադի Ա. Ամսի 24 և 25-ին (1891 թ. դեկտեմբերի 27 և 28) ճուշիում ընդօրինակել են պարսկերեն մեկ փաստաթղթի երկու երեսների բնագրերը<sup>397</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ու ժամանակաշրջանի մյուս աղբյուրների տվյալները թույլ են տալիս բացահայտել Յոնգ Եկեղեցու առաջնորդների և Իրանի կենտրոնական իշխանությունների ու Երևանի խանի միջև գրագրությունը վարող

<sup>396</sup> Մատենադարան, արաբ. ձեռ. Ֆոնդ, հ. 233, էջ 22:

<sup>397</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 3:

և պարսկերեն փաստաթղթերը կազմող գրագիրներից շատերի անունները, որոնց մի մասը իրանական կառավարության բարձրաստիճան գրագիրներն էին, մի քանիսն էլ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու Երևանի խանին ենթակա, հետագայում նաև ռուսական զանազան այդ աններում աշխատող գրագիրները: Այս վերջին տեսակի գրագիրների մեջ կային նաև հայ ազգի ծագում ունեցողները, որոնք այնքան էին հմտացել այս բնագավառում, որ անգամ ինքնուրույն պատմագրական երկերի հեղինակ էին:

## ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

### ՄՍՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

#### 2.1 ՄՈԼԻՏԱՄԱՊ ՄԱՐԳԱՐԵԻ ՈՒ ԻՄԱՄ ԱԼ ԻԻ ԱՆՈՒՆՆԵՐԻԿԻ ԿԱՅ ԵՐԻ ԿԵՏԻ ԿՆՔՎԱԾ ԻՐՈՎԱՐՄԱԿ-ԱՅՅ ՄԱՆԱԳՐԵՐԸ ՈՐԱՔԵՍ ԻՐԱՆՍԻՍՏԱՆԻ ԿԱՅ ԵՐԻ ԿԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅ ՈՒՆՆԵՐԸ ԱՊՄԻՈՎՈՂ ՎՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ըստ իսլամի սկզբունքների օրենքներ հաստատել ու իրավունքն Աստծունն է, որը դակատարում է Մոլիտամաթ մարգարեի (ըստսուննիների) ու նաև իմամների (ըստշիաների) միջոցով: Ուստի մահմեդական իրավագիտության օրենքների աղբյուրը հիմնականում Ղուրանն ու հադիսներն են, որոնցից առաջինը Աստծո խոսքն է՝ մարդկությանը փոխանցված Մոլիտամաթ մարգարեի միջոցով, մյուսը՝ մարգարեի ու նրա հետևորդների, նաև իմամների մասին ավանդապատում-պատմությունները՝ լի նրանց ասույթներով: Ուստի այդ երկու աղբյուրներից են մահմեդական իրավագետները բխեցնում (تفريع و تشريع) իրենց որոշումները իրավական զանազան հարցերի ու խնդիրների վերաբերյալ<sup>398</sup>:

Այս պատճառով պատահական չէ, որ շիա մահմեդական երկրի տիրապետության պայմաններում գտնվող հայ ու թյուրքական իրավունքների հիմնական մասը հենվում է դեռևս Մոլիտամաթ մարգարեի ու շիա

<sup>398</sup> محمد جعفری هرندي، فقها و حكومت، تهران، 1379، ص. 15

իմամների հետ կապվող պատմական իրողությունների ու նրանց տեսակետների վրա:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերում առկա են իրանահպատակ հայություն իրավա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական դրություն այն բոլոր սկզբունքային դրույթները, որոնք կարևոր դեր էին խաղում նրակյանքում:

Իրանական տիրապետության տակ ապրող հայության դրության հիմքում ընկած էր դեռևս վաղ խալիֆայության շրջանից հայ քրիստոնյաներին տրված *զհիմմի* կարգավիճակը: Այդ կարգավիճակն իր հերթին ձևավորվել է Մուհամմադ մարգարեի օրոք նվաճվող այլադավանների հետ կնքված պայմանագրերի հիման վրա և նրա հիմնական դրույթներն իրենց ընդհանուր տեսական ձևակերպումն են ունեցել Մուհամմադ մարգարեի (շիաների մոտևաև Իմամ Ալիի) անուններից հայերի ու ընդհանրապես մահմեդական տիրապետության տակ գտնվող մյուս այլակրոն բնակչության հետ կնքված պայմանագրերում, որոնք հենց այդպես էլ կոչվում են պարսկերեն և արաբերեն լեզուներով՝ «ադդ-ե գեմմե – *عقد الذمه*»: «Չեմմե-*ذمه*» բառը նշանակում է պայմանագիր, իսկ «ահլ-ե գեմմե-*اهل الذمه*» կամ «զհիմմի - *ذمى*» կոչվում էին այն այլակրոնները (հրեաները, քրիստոնյաները և այլ հավատի հետևորդները), որոնք ընդունելով ադդ-ե գեմմեի պայմանները, ապրում էին իսլամական երկրում: Մահմեդական ֆակիհները «ադդ-ե գեմմե – *عقد ذمه*» բառակապակցությունը մեկնաբանելիս նշում են, որ այլակրոններից ոմանք *ջիզյա* վճարելու և իսլամի օրենքներին ենթարկվելու պայմանով կարող են մահմեդական երկրում բնակվել ու հետևաբար նրանք մշտապես գտնվում են իսլամական պետության պաշտպանության տակ<sup>399</sup>: «Ադդ-ե գեմմեն» (կամ զհիմմիության պայմանագիրը) գործածության մեջ է դրվել հիջրայի 9 թվականին (630/1 թ.) Մեքքայի գրավումից հետո, և նրա կնքման նպատակը, ըստ իսլամական իրավագետների, նյութական օգուտը չէր, որ ստացվելու էր *ջիզյայի* գանձմամբ, այլ *զհիմմիներին* մահմեդականների դեմ պատերազմից հետ պահելն էր, նրանց բնակությունը մահմեդական

<sup>399</sup> Anver M. Emon, Religious pluralism and Islamic law. *Dhimmīs and Others in the Empire of Law*, Oxford University Press, 2012, pp. 3-4.



երկրում ապահովելը և նրա օրենքների իմացությունն ու իսլամին հակելն էր<sup>400</sup>:

*Ձիմմիների* հիմնական պարտավորություններն էին՝ չպարսավել Ալլահի գիրքը՝ Ղուրանը և չանվանարկել այն, չանվանել Ալլահի մարգարեին խաբեբա, չարատավորել մահմեդական հավատքը, չգայթակղել մահմեդականին իր հավատից հրաժարվելու, չօգնել մահմեդականների հետ կռվողներին<sup>401</sup>, վճարել ջիզյա: Նրանք ազատվում էին գինվորական ծառայությունից և չէին կարող լինել պետության ղեկավարը<sup>402</sup>:

Ինչպես Մուհամմադ մարգարեի, այնպես էլ նրա հաջորդների օրոք արաբական նվաճումների ընթացքում այլադավան ժողովուրդների կամ նրանց առանձին հատվածների հետ կնքվող այս պայմանագրերում արձանագրվում էր նրանց հպատակեցումը արաբական տիրապետությանը ու նաև որոշվում նրանց հետագա կարգավիճակն ու իրավունքները մահմեդական իշխանության պայմաններում: Նման պայմանագրեր տրվել էին Մուհամմադ մարգարեի կողմից հիջրայի 5 թ. Մակնայի հրեաներին, Նաջրանի քրիստոնյաներին, Սալման Փարսիի գրադաշտականներին<sup>403</sup>: Իսլամական օրենքներով այդ պայմանագրերի կնքումը օրինական էր համարվում Ս. Գրքի ժողովուրդների (հայեր, հրեաներ և գրադաշտականների) հետ<sup>404</sup>: Հայ պատմագրության մեջ հիշատակվում է “մարգարեի պայմանագիրը”՝ տրված 630-ականների սկզբին կամ ավելի վաղ Մեքքա այցելած Երուսաղեմի քրիստոնեական պատվիրակությունը գլխավորող հայոց Աբրահամ պատրիարքին<sup>405</sup>: Հիշյալ պայմանագրերից շատերը հետագայում հաստատվում են Աբու Բաքր, Օմար և Ալի արդարադատ խալիֆաների կողմից<sup>406</sup>: Երուսաղեմի հայոց պատրիարքին տրված հիշյալ պայմանագիրը, որը հայոց պատմագրության մեջ հայտնի է “Ալի Մանշուր” անվամբ, հաստատվել է

<sup>400</sup> اسعد شيخ الاسلامي، احكام وصيت و ارث ذمی از نظر فقهای اسلامي، دانشکده الهيات نشریه گروه تحقیقاتی، ص. 137

<sup>401</sup> Գ. Մկրտումյան, Հրովարտակ - պայմանագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր, Երևան, 2017, էջ 28:

<sup>402</sup> A. M. Emon, Նշվ. աշխ., 37:

<sup>403</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقیق و گردآوری دکتر سید محمد حسینی، تهران، 1377، ص. 165-169, 228-240, 623

<sup>404</sup> اسعد شيخ الاسلامي، احكام وصيت و ارث ذمی از نظر فقهای اسلامي، ص. 139

<sup>405</sup> S. Սալալանեանց, Նշվ. աշխ., հ. Ա., էջ 261:

<sup>406</sup> Նույն տեղում, էջ 241, 248:

Ալի և Օմար խալիֆաների կողմից<sup>407</sup>, որը հետագոտողների կարծիքով գուրկ չէ պատմական հիմքից<sup>408</sup>: Հայ-արաբական առնչությունները և արաբական նվաճումները հայկական տարածքներում նշանավորվում են Օսման խալիֆայի օրոք (644-656թթ.) Սիրիայի կառավարիչ Մու'ավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև 652 թ. կնքված, նաև Մուհամմադ իբն Մրվանի կողմից Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի խնդրանքով 703թ. տրված պայմանագրերով<sup>409</sup>, որոնց մասին հիշատակում են հայ պատմիչները<sup>410</sup>: Արաբ մատենագիրներից մի քանիսի (Բալագուրին, Թաբարի) երկերից հայտնի է Օմար խալիֆայի օրոք Արմինիայի Դվին, Բարագ<sup>411</sup> և հետագայում այլ քաղաքների հայ բնակչության հետ կնքված պայմանագրերի բովանդակությունը<sup>412</sup>:

Մուհամմադ Մարգարեի ու առաջին արդարադատ խալիֆաների անունից նվաճվող քաղաքների այլադավան բնակչության հետ կնքվող պայմանագրերը մեծ թիվ են կազմել և կարևոր դեր խաղացել իսլամական տիրապետության տակ անցած ժողովուրդների կյանքում: Նրանցում որոշակի պայմաններով ամրագրվել են այդ ժողովուրդների կրոնական ազատությունները, կարգավորվել նրանց սոցիալ-տնտեսական դրության հարցերը: Այս կապակցությամբ տեղին է նշել նաև, որ որոշ հետագոտողների ոչ անհիմն կարծիքով այդ պայմանագրերից շատերը ստեղծվել են հենց իրենց՝ *զիմմիների* կողմից, քանի որ դրանց կարիքն առավելապես ունեին նրանք, մասնավորապես նաև հայերը, որոնց իրավունքները դրանք պաշտպանում էին<sup>413</sup>: Այս իսկ պատճառով պատահական չէ նաև այն, որ այդ պայմանագրերը խնամքով պահպանվել ու ժամանակ առ ժամանակ նորացվել են այդ համայնքների կողմից՝ հարմարեցվելով նոր պայմաններին: Արդյունքում այս փաստաթղթերի բազմաթիվ օրինակների առկայությունն է աշխարհի տարբեր ձեռագրական հավաքածուներում: Մուհամմադ Մարգարեի ու վաղ իսլամի

<sup>407</sup> Տ. Սալալ անեանց, նշվ. աշխ., հ. Ա., էջ 264:

<sup>408</sup> Այս մասին տե՛ս Գ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 60-67:

<sup>409</sup> Seta B. Dadoyan, նշվ. աշխ., հ. I, էջ 57:

<sup>410</sup> Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 100, Ղևոնդ, Պատմություն, էջ 35: Տե՛ս հայ պատմիչների հաղորդումների հիման վրա այդ խնդրին անդրադարձը Բ. Եսա. Կիլիկեսերեան, նշվ. աշխ., էջ 122:

<sup>411</sup> Այդ դաշնագրերի տեքստերն ընդգրկված են վաղ իսլամի շրջանի փաստաթղթերի ժողովածուի մեջ (520-519, 6-515صناديد صدر اسلام, محمد و اسناد حضرت محمد و اسناد صدر اسلام):

<sup>412</sup> Արաբական աղբյուրներ, Գ, էջ 270-271:

<sup>413</sup> Seta B. Dadoyan, նշվ. աշխ., հ. I, էջ 59.

փաստաթղթերի ժողովածուի հեղինակ Մուհամմադ Յամիդալլահը Սիրիայում, Եգիպտոսում, Իրաքում և Յնդկաստանում կատարած իր ճանապարհորդությունների ընթացքում, նաև Փարիզի, Լոնդոնի, Յռոմի, Լեյդենի և այլ գրադարաններում հանդիպել է քրիստոնյաների հետ կնքված պայմանագրերի բազմաթիվ օրինակների, որոնց մի մասը տրված էին Մուհամմադ մարգարեի, մի մասը՝ առաջին արդարադատ խալիֆաների անունից<sup>414</sup>: Այս պայմանագրերի օրինակները հանդիպում են նաև Իրանի գրադարաններում, այդ թվում Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրական արխիվային հավաքածուի մեջ:

Մատենադարանի արխիվային ֆոնդում ու արաբատառ ձեռագրերի հավաքածուի մեջ կան այդ պայմանագրերի պարսկերեն թարգմանական տարբերակներ<sup>415</sup>, որոնց պատմահամեմատական ու աղբյուրագիտական վերլուծությունը լույս է սփռում նրանց ստեղծման պատմության որոշ իրողությունների վրա<sup>416</sup>:

Արաբ նվաճողների և այլադավան ժողովուրդների հետ կնքված պայմանագրերը նախապես բնականաբար գրված են եղել արաբերեն, որը Արաբական խալիֆայության պետական լեզուն էր: Այս պայմանագրերի նախնական տարբերակները, որոնք պահպանվել են արաբ պատմիչների երկերում, հիմնականում հակիրճ են: Պայմանագրերի երկլեզվյա (արաբերեն ու տողատակում պարսկերեն) և միայն պարսկերեն թարգմանական տարբերակները ստեղծվել են ավելի ուշ շրջանում՝ XI – XIX դարերում, ինչպես Իրանում, այնպես էլ Օսմանյան կայսրության տարածքում: Պարսկերեն տարբերակների առատությունը պայմանավորված է նշված ժամանակաշրջանում Արևելքում այդ լեզվի խաղացած պատմամշակութային կարևոր դերով: Մահմեդական տիրապետության տակ ապրող հայության համար որոշակի կարևորություն ունեցող այս փաստաթղթերը թարգմանվել են նաև հայերեն և մեզ հասել հայերեն տարբերակներով ևս: Ընդ որում, ըստ այդ թարգմանությունները հետազոտած Յ. Անասյանի,

<sup>414</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص-165

<sup>415</sup> Մատենադարան, Ձեռագրատանից ստացված նյութեր, թղթ., 80գ, վավ. 38, էջեր 5-4, 16բ; Կաթողիկոս. դիվան, թղթ. 3, վավ. 130; ձեռ. 272, 357, 358 Տե՛ս այդ վավերագրերի նկարագրությունը K. Kostikyan, նշվ. աշխ., էջ 122-123, 143-144:

<sup>416</sup> Այս մասին տե՛ս նաև Կոստիկյան Է., Մկրտումյան Գ., Մուհամմադ մարգարեի ու Ալի իբն Աբու Թալիբ խալիֆայի անունից հայերի հետ կնքված դաշնագրերը որպես պատմական փաստաթղթեր, էջ 118-149:

դրանք կատարվել են տարբեր լեզուներից՝ արաբերենից, պարսկերենից ու թուրքերենից<sup>417</sup>:

Մեր ձեռքի տակ եղած տարալեզու տարբերակների համեմատություները միմյանց և պահպանված արաբերեն օրինակների հետ ցույց է տալիս, որ դրանք հիմնականում հանդիսանում են երկու տարբեր արաբերեն բնագրերի թարգմանական տարբերակները և իրենց բովանդակային առանձնահատկություներով նույնանում են նրանց հետ:

Դարեր շարունակ մահմեդական տիրապետության տակ ապրող հայության իրավունքների պաշտպանության համար շրջանառվող պայմանագրերի մի խմբի մեջ կարելի է առանձնացնել Մատենադարանի արաբատառ \$ոնդի երկու փաստաթղթեր, որոնցից մեկը երկլեզվյա է՝ արաբերեն, պարսկերեն (ձեռ. 358, ընդօրինակված հավանաբար XVII դարում), մյուսը՝ պարսկերեն (ձեռ. 272, ընդօրինակված 1879թ.): Նույն բովանդակությամբ պայմանագրի մի համառոտ տարբերակ, որը հաստատված է Ուռհայի ղազիներ Նադի \$եզլիզադեի ու Մուլլա Չելեբիի կնիքներով, հրատարակվել է Երզրումի Չամալսարանի Իսլամագիտության \$ակուլտետի պատմական բաժնում հայտնաբերված մի փաստաթղթի հիման վրա՝ տողատակում թուրքերեն թարգմանությամբ<sup>418</sup>: Բովանդակային առանձնահատկություներից ելնելով այս խմբի մեջ կարելի է ներառել նաև Գրիգորիս Աղթամարցու նախաձեռնությամբ 1583թ. Ոստանի Կարախան Բեկի կողմից հաստատված Մուհամմադ մարգարեին վերագրվող պարսկերեն պայմանագիրը, որն ուսումնասիրել ու հրատարակել է Յ. Փախազյանը՝ «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները» շարքի Ա պրակում<sup>419</sup>:

Ամենայն հավանականությամբ այս խմբի պայմանագրի մի օրինակի հիման վրա է XII դարում Սամուել Անեցին նշում, որ Մուհամմադ մարգարեն «անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ հայոց աշխարհիս համարձակ ունել զքրիստոնեութիւնն եւ վաճառեաց նոցա

<sup>417</sup> Յ. Ս. Անասեան, Մահմեդականութիւնը եւ քրիստոնեայ հարկատուները, Էջ 627-632:

<sup>418</sup> نامه ها و پيمانهای سياسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 630-631

<sup>419</sup> Յ. Փախազյան, հրովարտակներ, հ. Ա, վավ. 21:

զիս ատու նոցայ ամենայն տանէ առեալ Դ (4) դրամ և Գ (3) մոթ խորբալ (հացահատիկ) և ձիատոպրակ մի և պարան<sup>420</sup> մի մազէ և ձեռնարար մի...»<sup>421</sup>

Այս խմբին են պատկանում մեզ հայտնի մի քանի ուշ միջնադարյան հայերէն թարգմանական տարբերակները ևս<sup>422</sup>: Վերջիններս թեև իրենց բառային ձևակերպումներով տարբերվում են, սակայն ունեն բովանդակային ընդհանրություն թե՛ միմյանց և թե՛ արաբատառ օրինակների հետ<sup>423</sup>: Հայերէն թարգմանական տարբերակներից մեկը (ձեռ. 2622) ընդօրինակվել է 1851թ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, ընդ որում թարգմանվել է պարսկերէն բնագրից, որը պահվում է հիշյալ վանքում<sup>424</sup>: Հարմարեցվելով իրանի շիական պետության սահմաններում շրջանառության պայմաններին՝ նրա վերնագրային հատվածում նշվում է՝ «Թարգմանութիւն ի պարսից լեզուէ Մեծ Մանշուր ասացեալ պայմանագրոյ: Պայմանագիր Մեհեմմէտի, որ ի քրիստոնեայս, գրեալ ձեռամբ Ալիի»<sup>425</sup>: Այսինքն, պայմանագրի կնքումը վերագրվել է շիաների առաջնորդ Իմամ Ալիին, որի անվան հետ կապելը օգտակար էր շիական պետության տարածքում բնակվող հայերի համար: Նույն բնագրի մեկ այլ հայերէն թարգմանություն հրատարակել է Նոր Ջուղայի պատմության հեղինակ Յ. Տեր-Հովհանյանցը, որի մոտ սակայն Իմամ Ալիի մասին խոսք չկա: Փոխարենը փաստաթղթի վավերականությունն, ըստ վերջում առկա նշումի, հաստատված է շիաների վեցերորդ Իմամ Ջաֆար Սադեղի կողմից<sup>426</sup>, որը Իմամներից ամենահեղինակավորն էր և մեծ դեր ուներ շիական ուսմունքի ու իրավագիտության ձևավորման գործում: Ինչպես տեսնում ենք, այս տարբերակում ևս փաստաթուղթը պատմականորեն կապվում է շիա Իմամի անվան հետ, որը ևս համապատասխանում էր շիական իրանին հպատակ հայերի շահերին:

<sup>420</sup> Այս մասը համեմատի՛ր վերը նշված 1583թ. դաշնագրի համապատասխան մասի հետ. «...1 մոդ ու կես հացահատիկ, 1 ձիան տոպրակ և 1 պարան» (Յ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 71):

<sup>421</sup> Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 100:

<sup>422</sup> Մատենադարան, ձեռ. 2622, 2826, 2968:

<sup>423</sup> Մատենադարան, ձեռ. 2622, էջ 115ա-116բ, ձեռ. 2826, էջ 243ա-244բ:

<sup>424</sup> Մատենադարան, ձեռ. 2622, էջ 116բ, տե՛ս նաև Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Ը, Երեւան, 2013, էջ 760:

<sup>425</sup> Մ. Մատենադարան, ձեռ. 2622, էջ 115ա:

<sup>426</sup> Յ. Տեր Յովհաննանց, նշվ. աշխ., Կ. Բ, էջ 153:

Սեֆյան պետությունը որպես պետական կրոն հռչակելով շիա մահմեդականությունը՝ պահպանել էր գիմմիի կարգավիճակին հատուկ իրավունքներն ու ազատությունները՝ նոր ուժ հաղորդելով Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անուններից քրիստոնյաների հետ կնքված պայմանագրերին: Պայմանագրերի նոր օրինակներ են ստեղծվում՝ հարմարեցվելով Սեֆյան պետության ու շիախալամի պայմաններին:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ այս խմբի ոչ հրանին ենթակա տարածքներում շրջանառության համար ստեղծված հայերեն տարբերակներում փաստաթղթի գրության վկաների թվում բացի Իմամ Ալիի ու Իմամ Ջաֆարի անուններից հիշատակվում են Մուհամմադ մարգարեի հետևորդներից ու խալիֆայության վաղ շրջանի քաղաքական ազդեցիկ գործիչներից 25-ից ավելի անձանց, այդ թվում Աբու Բաքր ալ-Սադեդի, Օմար իբն ալ-Խաթթաբի, Օսման իբն Աֆֆանի, Ալի իբն Աբի Թալեբի, Մուավիա իբն Սուֆյանի, Աբու Յուսուբ իբն Աբդալահ իբն Մասուդի, Աբդալահ իբն Աբբասի, Յամադ իբն Աբդալ-Մաթաբի և այլոց անունները<sup>427</sup>:

Այս խմբի փաստաթղթերի բովանդակային առանձնահատկությունները հետևյալն են՝

- Նշվում է, որ պայմանագրերը տրված են Մուհամմադ մարգարեի անունից,
- “Յայ” բառի փոխարեն օգտագործվում է “քրիստոնյա” բառը անգամ հայերեն տարբերակներում<sup>428</sup>,
- Պայմանագրով պարտադրվում է մահմեդականներին պաշտպանել քրիստոնյաներին և օգնել նրանց հարկ եղած դեպքում, մասնավորապես եկեղեցիների վերանորոգման, դրամական անհրաժեշտության և այլ հարցերում,

<sup>427</sup> Մատենադարան, արաբատառ ֆոնդ, ձեռ. 358, հայերեն ձեռ. 2968, էջ 236ա, ձեռ. 2826, էջ 244բ:

<sup>428</sup> Այս հարցում բացառություն են կազմում Օսմանյան պետության տարածքում շրջանառվող երկու բավականին ձևափոխված տարբերակները: Մեկը վերը նշված Օսմանյան Թուրքիայում տպագրված տարբերակն է (نامه ها و پيمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر) 631-630ص, اسلام, մյուսը՝ Յ. Փախազյանի կողմից հրատարակված փաստաթուղթը, որտեղ ոչ միայն շեշտվում է նրա հայերին տրված լինելը, այլև նշվում է Սահակ Ջորափորեցի կաթողիկոսի անունը, Աղթամարի հայոց վանքը իրեն ենթակա թեմական շրջաններով (Յ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 69-71):

- Արգելվում է քրիստոնյաներին բռնի մահմեդականացնելը, նրանց բնակության վայրերը փոխելը, պաշտամունքի վայրերը ոչնչացնելը կամ տեղափոխելը, քրիստոնեական օրենքներով ապրելուն և կրոնական արարողությունները կատարելուն խոչընդոտելը,
- Արգելվում է քրիստոնյա կանանց հետ բռնի ամուսնությունը, և վերջիններիս կամավոր ամուսնության դեպքում՝ նրանց մահմեդականություն պարտադրելը,
- Նշվում է գանձվող *ջիզյայի* չափը՝ (միջին կարողության տեր չափահաս տղամարդկանցից) 4 և (հարուստներից) 12 (*դինար, դիրհեմ*, նաև աղչե) չափով,
- Վավերագրերի վերջում որպես կանոն նշվում են մի շարք վկաների՝ արդարադատ խալիֆների, արաբ գորավարների ու Արաբական խալիֆայության վաղ շրջանի այլ պատմական նշանավոր անձանց (շուրջ 25-30 հոգու) անուններ:

Հիշյալ խմբի պայմանագրերը թեև տարբերվում են այլ *զիմմիների* (հրեաների, զրադաշտականների) հետ կնքված պայմանագրերից<sup>429</sup>, այնուամենայնիվ բովանդակային հիմնական հատկանիշներով, բառային ձևակերպումներով և գանձվող *ջիզյայի* չափով կապվում են Մուհամմադ մարգարեի և Եգիպտոսի Թուրվանքի<sup>430</sup>, նաև Նաջրանի քրիստոնյաների միջև կնքված պայմանագրերի օրինակների հետո: Նաջրանի քրիստոնյաների հետ կնքված պայմանագիրն ընդգրկված է IX և XI դարերի միջև ընկած Ժամանակահատվածում գրված Նեստորականների պատմության մեջ<sup>431</sup>, իսկ Եգիպտոսի Թուրվանքի քրիստոնյաների միջև կնքված պայմանագրի օրինակները պահպանվել են ավելի ուշ շրջանի աղբյուրներում<sup>432</sup>:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նշված խմբի պայմանագրերի մեզ հայտնի տարբերակները կարելի է թվագրել X-XIX դարերով, և նրանք շրջանառվում էին մահմեդական տիրապետության

<sup>429</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص. 9-623

<sup>430</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص. 634-632

<sup>431</sup> Histoire Nestorienne (Chronique de Seert), Patrologia Orientalis, vol. 13, pp. 610-617.

<sup>432</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص. 632-635

տակ ապրող ոչ միայն հայ, այլև քրիստոնյա այլ համայնքների շրջանում:

Հարկ է նշել, որ այս խմբի փաստաթղթերի մի մասում նշվող *ջիզյայի* գումարը (*դիևարով* կամ *դիրհեմով*) շփոթմունքի առարկա է դարձել: Մատենադարանի ձեռագիր 358-ում այն նշված է “4 *դիևար*”, ապա ջնջված և ուղղված է “4 *դիրհեմ*”, իսկ հարուստներից գանձվող գումարը նշվում է 12 “*դիրհեմ*” արաբերեն մասում, իսկ պարսկերեն թարգմանական տողատակում՝ նույն չափը “*դիևարով*”: 1879թ. Թավրիզում ընդօրինակված ձեռագիր պարսկերեն տարբերակում *ջիզյայի* չափը նշվում է 4 “*դիևար*” և ապա 12 “*դիրհեմ*”<sup>433</sup>: Նոր Ջուղայում թարգմանված հայերեն թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր տարբերակներում ևս այն նշվում է “4 *դիևար*” և “12 *դրամ*” ձևով<sup>434</sup>, իսկ մյուս երկու ձեռագրերում, որոնք իրենց բնագրերով գրեթե նույնական են, “4 *դիևարը*” բաց է թողնված և նշվում է միայն վաճառականներից ու հարուստներից գանձվող *ջիզյայի* չափը՝ “12 *դրամ* արծաթ”<sup>435</sup>: Մուհամմադ Յամիդալլահի կողմից հրատարակված ժողովածուի մեջ հայ *զիմմիների* կողմից վճարվող ամենամյա *ջիզյան* սահմանվում է 4 դիրհեմի և մեկ հերաթյան հագուստի չափով<sup>436</sup>: Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրում գանձվող *ջիզյայի* չափը նշվում է 4 դիրհեմ կամ եմենական կտորի տեսակ, հարուստներից՝ 12 դիրհեմ<sup>437</sup>, իսկ Եգիպտոսի Թուր վանքի քրիստոնյաների հետ կնքված պայմանագրում նշվում է միայն հարուստներից գանձվող 12 դիրհեմը<sup>438</sup>: Ինչպես վերը նշել ենք, «4 դրամ» չափով է *ջիզյան* նաև Սամուել Անեցու մոտ: Ոստանի կառավարիչ Կարախանի կողմից 1583թ. հաստատված պայմանագրով սահմանվում էր *ջիզյայի* չափը յուրաքանչյուր չափահաս տղամարդու և 4 աղջե՝ 1 միսղալ<sup>439</sup> մաքուր արծաթ<sup>440</sup>:

<sup>433</sup> Մատենադարան, արաբատառ ձեռ. 272:

<sup>434</sup> Մատենադարան, ձեռ. 2622, 115ա, ՏԵր-Յովհանեսյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 149:

<sup>435</sup> Մատենադարան, ձեռ. 2968, էջ 235ա, ձեռ. 2826, 243բ:

<sup>436</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص. 631.

<sup>437</sup> Histoire Nestorienne (Chronique de Seert), Patrologia Orientalis, vol. 13, p. 612. ثوب حبره او عصب اليمين

<sup>438</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص. 633

<sup>439</sup> Աղջ են (أفچه) (թուրք.) – Արծաթ դրամի միավոր: 4 աղջ են կշռել է 1 միսղալ (մոտ 4,5 գրամ) և հետևաբար մեկ աղջ են կշռում էր մոտավորապես 1.10 գրամ (Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 104):

<sup>440</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 69:



Թե՛ դիրհեմը և թե՛ դինարը հնագույն դրամական միավորներ են (առաջինը<sup>441</sup> արծաթի, երկրորդը՝ ոսկու<sup>442</sup>), որոնք շրջանառության մեջ են գտնվել Արևելքում դեռ նախախլամական շրջանից:

Յիշյալ վավերագրերի ու ձեռագրային ընդօրինակությունների ստեղծման շրջանում (X - XIX դարեր) թե՛ դրամական միավորները և թե՛ գանձվող *ջիզյայի* չափը զգալի փոփոխություններ էին կրել, որտեղից էլ հավանաբար ծագել են վերը նշված օրինակներում առկա անհամապատասխանություններն ու տարընթերցումները: Ինչպես կտեսնենք ստորև պայմանագրերի մյուս խմբի օրինակների մեծ մասում *ջիզյայի* չափը նշող մասն ընդհանրապես հանվել է:

Օսմանյան կայսրության տարածքում հայտնաբերված մի պայմանագիրը հրատարակող Յամիդալլահն այն կարծիքին է, որ այդ փաստաթուղթը ստեղծվել է քրիստոնյաների կողմից և հայերը որևէ կերպ չեն առնչվել Մուհամմադ մարգարեի հետ, որպեսզի կարողանային նրանից պայմանագիր ստանալ: Բացի այդ, նրա կարծիքով այդ պայմանագիրը միակողմանի է և պաշտպանում է միայն քրիստոնյաների շահերը: Նա թվարկում է փաստաթղթում նշվող մի շարք վկաների անուններ (Մուավիա իբն Սուֆյան, Աբդալլահ իբն Աբբաս, Աբդալլահ իբն Ամրու իբն Ասևալ), որոնք պայմանագրի

<sup>441</sup> Դիրհեմը (հուն. *drakhmē*՝ “drachma”; միջ. պարսկ. *drahm*, պարսկ. درهم) արծաթ դրամական միավորն էր, որը շրջանառության մեջ է եղել դեռ Աքեմենյան ժամանակաշրջանից՝ պահպանելով իր կշիռը 4 գրամ չափով ողջ նախախլամական շրջանում: Նրա կշիռը վաղ խալիֆայության տարածքում 2.80 - 2.95 գրամ էր: Աբբասյան խալիֆայության սկզբից այն որոշ փոփոխություններ կրելով թե՛ իր արտաքին տեսքում և թե՛ կշռում՝ ի վերջո պարսկ. -Մու՛թասիմ խալիֆայի իշխանության սկզբից ֆիքսվում է և այդ կերպ շարունակում շրջանառվել մինչև XI դար: Լենգ Թեմոնրի նվաճումից հետո Իրանում իսլամ դուրս է գալիս շրջանառությանից և այլևս չի կիրառվում՝ փոխարինվելով շահի կամ ռիալ դրամներով (Philippe Gignoux, Michael Bates, Dirhem, Encyclopædia Iranica, Vol. VII, Fasc.4, pp. 424-428, տե՛ս կայքէջ <http://www.iranicaonline.org/articles/dirham>).

<sup>442</sup> Դինարը (նոր պարսկ. *dīnār*, միջ. պարսկ. *dēnār* < լատ. *denarius aureus*), ոսկի դրամն է: *Denarius* բառը գործածվում էր դեռ Հռոմի Հանրապետության շրջանից դրամի իմաստով: Իրանում այն սկսում է հատվել Սասանյան Արտաշիր Ա-ի օրոք և կշռում էր 7 - 7.4գ: Իսլամական ոսկի դինարները սկսել են հատվել սկսած 696 թվականից և կշռով հավասար էին 4.25 գրամի: Իսլամական ոսկե դինարներ սկսում են հատվել սկսած 835 թվականից Մերվում, այնուհետև նաև Ահվազում, Մուհամմադիեում, Սամարղանդում, Կովկասի, Իրաքի ու Ատրպատականի քաղաքներում մինչև XIII դարը (Philippe Gignoux, Michael Bates, Dinar, Encyclopædia Iranica, Vol. VII, Fasc. 4, pp. 412-416 <http://www.iranicaonline.org/articles/dinar>): XV դարից դինարը խիստ արժեզրկվում է՝ վերածվելով արծաթի դրամի: XVII դարում 200 դինարը, որ կոչվում էր մեկ արասի, կշռում էր 7-9 գրամ մաքուր արծաթ (Հ. Փափազյան, Իրավարտականեր, պրակ Ա, էջ 108):

կնքման ժամանակ չէին կարող հանդես գալ որպես վկաներ՝ ժամանակագրական անհամապատասխանությունների պատճառով<sup>443</sup>:

Իրականում վերը նկարագրված պայմանագրերը կոմպիլյատիվ բնույթի փաստաթղթեր են, որոնցում նշվող անձիք պատմական անձնավորություններ են և առնչություններ ունեն տարբեր պայմանագրերի ստեղծման հանգամանքների հետ: Մասնավորապես, Մուավիա իբն Սուֆյանի անվան առկայությունը նրանցում ակնարկ է թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կառավարիչ Մուավիա իբն Սուֆյանի միջև 652թ. կնքված պայմանագրի մասին<sup>444</sup>: Պատմական Յայաստանի տարածքում ապրող հայերը իրոք Մուհամմադ մարգարեի հետ որևէ առնչություն չեն ունեցել: Այս կապակցությամբ վերը նշված 1583թ. վավերագիրն ուսումնասիրող Յ. Փափազյանը կարծիք է հայտնել, որ իրականում իսլամի մարգարեի անվան հետ է նույնացվել Աբդալ-Մելիք ամիրայի կողմից 703թ. Յայաստան արշավող Մուհամմադ գորավարի անունը<sup>445</sup>: Վերջինիս ընդառաջ դուրս է եկել Սահակ Ձորափորեցի կաթողիկոսը, որի խնդրանքով էլ պայմանագիրը կնքվել է<sup>446</sup>: Այս միտքը հաստատում է նաև այն հանգամանքը, որ 1583թ. պայմանագրում նշվում է, որ այն տրվել է Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի խնդրանքով<sup>447</sup>: Իսկ այն, որ Մուհամմադ գորավարը ևս կարող էր կնքած լինել նման պայմանագիր, չի կարելի բացառել, քանի որ պահպանվել են բազմաթիվ պայմանագրեր կնքված արաբ գորավարներ Խալեդի, Նամանի, Յազիֆա իբն Յամանի<sup>448</sup> կողմից: Փաստաթղթերի ուշ շրջանում ստեղծված լինելու հանգամանքով կարելի է բացատրել տարբեր միմյանց ոչ ժամանակակից անձանց անունների հիշատակումը վկաների շարքում:

Այսպիսով, տվյալ դեպքում գործ ունենք պատմական հենքի վրա կառուցված միևնույն մեզ անհայտ արաբերեն բնագրի ուշ շրջանի (IX-XIX դարերի) ընդօրինակությունների և թարգմանական տարբերակների հետ: Եվ փաստորեն այդ փաստաթղթերը տեքստային աննշան տարբերություններով շրջանառվել են մահմեդական

<sup>443</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 631.

<sup>444</sup> Պատմություն Սեբեոսի, աջ խատասիրություն Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 169:

<sup>445</sup> Յ. Փափազյան, հրովարտական, պրակ Ա, էջ 99:

<sup>446</sup> Ղևունդ, Պատմություն, էջ 35:

<sup>447</sup> Յ. Փափազյան, հրովարտական, պրակ Ա, էջ 70:

<sup>448</sup> نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص. 505, 504, 449, 446.

տիրապետության տակ ապրող ոչ միայն հայերի, այլ և քրիստոնյա այլ դավանանքներին պատկանող ժողովուրդների շրջանում՝ դարեր շարունակ փոփոխվելով ու հարմարեցվելով ժամանակի և միջավայրի պահանջներին, որպեսզի ավելի արդյունավետ կերպով պաշտպանեն նրանց իրավունքները մահմեդական հարևանների ու իշխանության ունենների ոտնձգություններից:

Առավել մեծաքանակ խումբ են կազմում չորրորդ արդարադատ խալիֆա (Իմամ) Ալի իբն Աբու Թալեբի անունից տրված պայմանագրի օրինակները, որոնց հիմքում ևս ուրվագծվում է հնագույն արաբերեն տարբերակի առկայությունը: Այս խմբի պայմանագրերից են Մատենադարանի արաբատառ ֆոնդում որպես ձեռագիր հ. 357 գրանցված 1694թ. փաստաթուղթը<sup>449</sup> և 1767թ. Աստրախանում ընդօրինակված պարսկերեն վավերագրերը, որոնցից երեքի վրա գրված է, որ ընդօրինակվել են Պետերբուրգում պահվող պատճենից<sup>450</sup>: Գրեթե նույն բովանդակությամբ պայմանագրի մեկ այլ ընդօրինակություն պահվում է Թեհրանում, Պառլամենտի գրադարանի մի պարսկերեն ձեռագիր ժողովածուի մեջ, որը գրվել է XIX դարում<sup>451</sup>: Իմամ Ալիի անունից կնքված այս խմբի պայմանագրերի երկու օրինակի մասին էլ նշում է Լ. Մինասյանը, ըստ որի դրանցից մեկը պահվում է Սպահանի պետական թանգարանի Չեհել սոթուն պալատում հ. 98-ի տակ, մյուսը՝ Նոր Ջուղայում<sup>452</sup>: Նոր Ջուղայի փաստաթուղթը ևս բնօրինակը չէ, և նրա հատվածային ֆոտոպատճենում երևում է, որ այն նոտարական կնիքով հաստատված պատճենն է՝ «պատճենը համապատասխանում է իսկականին» նշումով<sup>453</sup>: Սպահանի Չեհել սոթուն պալատում պահվող Իմամ Ալիի կողմից տրված երկվեզյա (արաբերեն և պարսկերեն) պայմանագիրը 1909թ. տպագրվել է Թեհրանում: Այն ունի առաջաբան, որտեղ նշվում է, որ տպագրվել է Սեֆյան ժամանակաշրջանից մեզ հասած քուֆի

<sup>449</sup> Տե՛ս այդ վավերագրի նկարագրությունը և Ն. Կ. Kostikyan, նշվ. աշխ., էջ 143-144:

<sup>450</sup> Մատենադարան, Ձեռագրատանից ստացված նյութեր, թղթ., 80գ, վավ. 38, էջեր 5-4, 16բ:

<sup>451</sup> Իրանի պառլամենտի գրադարան, ձեռ. 8855, էջ 3բ-6ա:

<sup>452</sup> Լ. Գ. Մինասյան, Երկու հրովարտակ Մահամմադ մարգարեից և Ալի ամիրապետից, Սպահան 1363 (1985), էջ 1-2:

<sup>453</sup> Լ. Գ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 15:

գրչ ու թյամբ գրված մի փաստաթղթի հիման վրա, որը պահվում էր Սպահանի Չեհել սոթուն պալատում<sup>454</sup>:

Վերը նշված փաստաթղթերի և տպագիր տարբերակի արաբերեն բնագրի տեքստաբանական համեմատությունից պարզ է դառնում, որ պարսկերեն տարբերակները հանդիսանում են միևնույն արաբերեն փաստաթղթի տարբեր թարգմանական օրինակները և ստեղծվել են նրա հիման վրա՝ կամայականորեն բաց թողնելով նրա որոշ հատվածներ, այդ թվում նաև *ջիզյայի* չափը նշող մասը:

Յիշյալ խմբի բովանդակային առանձնահատկություններից է այն, որ կնքվել է Իմամ Ալիի հանձնարարությունից հիջրայի 40 թվականի սաֆար ամսին (660 թ. Յունիսի 16 – հուլիսի 15) Յիշամ իբն Ութբա Վաղղասի կողմից 40 հոգուց բաղկացած քրիստոնյա (կամ հայ) հոգևորականների հետ (հիշատակվում են Յակոբ (Ակոբ), Աբրահամ (Իբրահիմ), Եսայի (Իսա) անունները): Վերը նշված Յիշամ իբն Ութբա իբն Աբի Վաղղասը եղել է Ալիի զորավարներից, որը մասնակցել է 636 թ. տեղի ունեցած Յարմուքի ճակատամարտին և այնուհետև Երուսաղեմի նվաճմանը, իսկ Աբրահամը հայ պատմագրության մեջ հիշատակվում է որպես 630-ականներին “մարգարեի պայմանագիրը” կնքած Երուսաղեմի քրիստոնեական պատվիրակությունը գլխավորող «հայոց պատրիարք»<sup>455</sup>:

Չնայած որ տպագրված վավերագրի արաբերեն տարբերակում “հայ” բառը չի նշվում, նրա փոխարեն մի քանի անգամ նշվում է “քրիստոնյաներ” (نصارى) բառը<sup>456</sup>, սակայն տողատակում պարսկերեն թարգմանության մեջ փոխարենը նշվում է «հայեր» բառը: «Յայեր» բառն է նշվում նաև մյուս պարսկերեն թարգմանական տարբերակներում<sup>457</sup>:

1909թ. տպագրված պայմանագրում նշվում է վճարվող *ջիզյայի* չափը՝ «33 դիրհեմ արծաթ» ձևով<sup>458</sup>, որն առավել մոտ է Աբբասյան խալիֆայության շրջանում գանձվող *ջիզյայի* չափին, որը կազմում է

<sup>454</sup> عهدنامه محمد پیغمبر، اصفهان، 1327، ص. 2-3.

<sup>455</sup> S. Սաալ անեանց, նշվ. աշխ., հ. Ա., էջ 261:

<sup>456</sup> عهدنامه محمد پیغمبر، ص. 4, 5, 8.

<sup>457</sup> Մատենադարան, ձեռ. 357, Ձեռագրատանից ստացված նյութերի ֆոնդ, թղթ. 80գ, վավ. 38; Իրանի Պառլամենտի գրադարան, ձեռ. 8855, էջ 3բ:

<sup>458</sup> عهدنامه محمد پیغمبر، ص. 15.

Եր 12, 24 և 48 դիրիհեմ<sup>459</sup>: Կարծում ենք հենց այս պատճառով հետագա տարբերակներում, չհամապատասխանելով ժամանակի իրողություններին և, մասնավորապես, գանձվող ջիզյայի չափին, վավերագրերի այդ հատվածը բաց էր թողնվել :

Այս խմբի պայմանագրերը ևս իրենց բովանդակային առանձնահատկություններով և անգամ բառային ձևակերպումներով նույնական են Մուհամմադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրի օրինակներից մեկի հետ<sup>460</sup>:

Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրի օրինակի մասին նրահրատարակիչը նշում է հետևյալը. “Այս պայմանագիրը, որ Մուհամմադ մարգարեն տվել է Նաջրանի ու մյուս քրիստոնյաներին, ընդօրինակվել է Փիր Մաշայի (?) կողմից հիշրայի 260 թվականին (873/4 թ.) Զաբիբ հոգևորականի մոտեղած նմուշից, որն իր հերթին ընդօրինակվել է Բեյթ ալ-Զիքմաթի գրադարանում<sup>461</sup> պահվող կաշվի վրագրված Մուհամմադ մարգարեի կնիքը կրող օրինակից”<sup>462</sup>:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվում է անթվակիր արաբերեն մի փաստաթուղթ՝ գրված գոմեշի կաշվի վրա, որը բովանդակում է Իմամ Ալիի անունից քրիստոնյաներին տրված պայմանագրի մի մասը<sup>463</sup>: Այն սկզբից թերի է և տեղ-տեղ այրվածքի հետևանքով անընթեռնելի: Այդուհանդերձ նրա առանձին հատվածների համեմատությունը մեր ձեռքի տակ եղած այլ պայմանագրերի հետ, հաստատում է բովանդակային

<sup>459</sup> Արաբ մատենագիրներ Թ-Մ դարեր, Երևան, 2005, էջ 100-101:

<sup>460</sup> Գրեթե նույն անձնանուններն են նշվում Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրում՝ “Սեհիդ Աբդ Յաշու՛, Իբն Յաշարա, Իբրահիմ վանական և Իսա Եափսկոպոս”: Այս դաշնագրում հանդիպում են գրեթե նույն ձևակերպումները, ինչ որ քրիստոնյաներին տրված խմբի դաշնագրերում. “Այս պայմանագիրը պետք է հաշվի առնեն մինչև այն ժամանակը, երբ ծովը կթռչի բուրդը, երկնքից անձևի կաթիլները կթափվեն, գետինն բույս կբուսնի, աստղերը երկնքում կփայլեն և անունն անվանվեն”

عهدنامه محمد پیغمبر، ص. 6-7-ر ۶-۷. بیانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 234

<sup>461</sup> Բեյթ ալ-հիքմաթ կամ “Իմաստունության տունը” իսլամի ոսկե դարի խոշոր մտավորական կենտրոնն էր, որ հիմնել էր խալիֆ Յարուս ալ-Ռաշիդը (իշխել է 786–809 թթ.) Բաղդադում և որն իր զարգացման գագաթնակետին է հասնում խալիֆ Մամունի օրոք (813-833): Այս գիտական հաստատության մաս են կազմել ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա ու հրեա ծագում ունեցող հետազոտողները: Բացի տարբեր լեզուներով գրքերի արաբերեն թարգմանումը, այստեղ աշխատողները հեղինակել են նաև մի շարք կարևոր գիտական գործեր: Այն ոչնչացվել է 1258թ. մոնղոլների կողմից Բաղդադի պաշարման ժամանակ:

<sup>462</sup> 232 نامہ ہا و بیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 232

<sup>463</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 3, վավ. 130: Տե՛ս այդ մասին նաև Վ. Մակարյան, Ալի իբն Աբու Թալիբի՝ քրիստոնյաներին տրված երաշխավորագիրը, Լևոն Խաչիկյան, 90, Նյու Յեյքի Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի, Երևան, 2010, էջ 170-172:

նույնականությունը նրանց հետ, և այն հնագույնն է այս խմբի մեզ հայտնի օրինակներից: Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրի նախնական տարբերակի վերը նշված արտաքին հատկանիշները համապատասխանում են Մատենադարանի հնագույն փաստաթղթին: Ուստի չի բացառվում, որ վերջինս կարող է լինել Բեյթ ալ-Յիբմաթում պահվող օրինակի մասը կամ նրա նմանօրինակը<sup>464</sup>:

Այս խմբի պայմանագրերի վերոհիշյալ հատկանիշներն ու առանձնահատկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ տվյալ դեպքում ևս գործ ունենք ուշ շրջանում ստեղծված կոմպիլյատիվ բնույթի փաստաթղթերի հետ, որոնք կրում են Մուհամմադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյաներին, Իմամ Ալիի կողմից հաստատված Երուսաղեմի հայ հոգևորականներին տրված պայմանագրերի տարրերը և ինչպես երևում է, դրանք ևս շրջանառվել են ինչպես հայերի, այնպես էլ այլ քրիստոնյաների իրավունքների պաշտպանության նպատակով:

Մի կողմ դնելով պայմանագրերի վավերականության հարցը, որն ինչպես տեսնում ենք, վիճելի է բնօրինակների բացակայության պատճառով (մեզ հասած անգամ հնագույն տարբերակները X դարից հետո ստեղծված կոմպիլյատիվ բնույթի պատճեններ են), կցանկանայինք մի քանի խոսքով անդրադառնալ նրանց պատմական նշանակությանը:

Այլակրոնների իրավունքները իսլամական երկրներում ձևավորվում են՝ հենվելով հենց այս պայմանագրերի վրա: Այդ իրողությունն ակնհայտ է իսլամական իրավագիտության ակունքներում կանգնած Ալի իբն Յուսեյնի (կամ Իմամ Սաջջադի)<sup>465</sup> իսլամական երկրում ոչ մահմեդականների իրավունքների մասին արված ձևակերպումներում: Վերջինս, մասնավորապես, նշում է. “Նրանց [ոչ մահմեդականների] իրավունքն այն է, որ ընդունես այն, ինչ Աստված է ընդունել նրանցից, հավատարիմ լինես այն

<sup>464</sup> Կաթողիկոսական դիվանի նկարագրության մեջ նշված է, որ այն գնվել է Գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ալիս Մանուկյանից: Նրա հայրը այն բերել է իր հետ Կարինից:

<sup>465</sup> Աբու Մուհամմադ Ալի իբն Յուսեյն ալ-Սաջջադը (658-712 թթ.) շիա մահմեդականների չորրորդ իմամն է, որը գրել է իսլամական իրավագիտությանը վերաբերող “իրավունքների գիրքը” աշխատությունը:

պայ մանին, որ կնքվել է իսլամական պետության և նրանց միջև..., և քո անձի ու նրանց միջև պատնեշ թող լինի Աստծո ուխտն ու հավատարմությունը Աստծո ու նրա մարգարեի հանձնարարությունների նկատմամբ: Քանզի մեծ մարգարեն պատվիրել է “Ես նրա թշնամին եմ լինելու, ով բռնություն և կգործադրի իսլամական պետություններում ապրող այլ կրոնների հետևորդների նկատմամբ”<sup>466</sup>:

Ոչ մահմեդականների (*զհմմի*) կարգավիճակը, նրա հարկային պարտավորություններն ու իրավունքները հստակ ձևակերպում են ստանում իսլամական իրավագիտությանը առնչվող Աբու Յուսուֆի “Չարկերի մատյան” աշխատության համապատասխան բաժիններում<sup>467</sup>: Մասնավորապես “Եկեղեցիների, տաճարների ու խաչերի մասին” բաժնում նշվում է, որ նվաճվող այլադավան բնակչության պաշտամունքային վայրերը չեն քանդվել, որովհետև “մահմեդականների ու *զհմմիների* միջև կնքվել է հաշտության պայմանագիր ջիզյավճարելու պայմանով և քաղաքները նվաճվեցին այն պարտավորությամբ, որ նրանց տաճարներն ու եկեղեցիները թե՛ քաղաքի ներսում, թե՛ նրանից դուրս չպետք է քանդվեն, որ նրանց կյանքը երաշխավորվում է նրանով, որ մահմեդականները նրանց համար կռվելու են ու թշնամիներից պաշտպանելու: Այս բոլորի դիմաց *զհմմիները* պետք է մահմեդականներին ջիզյավճարեն: Այս պայմաններով հաշտության պայմանագիր է կնքվել և գրվել պայմանագիր՝ պարտավորվելով նոր տաճարներ ու եկեղեցիներ չկառուցել”<sup>468</sup>: Չետագայում որոշ խալիֆաներ ցանկացել են քանդել քրիստոնեական տաճարները: Այն ժամանակ բնակիչները ցույց են տվել այդ պայմանագրերը, որով խաղաղությունն է կնքվել մահմեդականների ու նրանց միջև: Ինչ վերաբերում է նոր կառուցված տաճարներին ու եկեղեցիներին, ապա դրանք պետք է քանդվեն”<sup>469</sup>:

Պայմանագրերից յուրաքանչյուրը, կախված նրա վերարտադրման ժամանակաշրջանից ու գործածության համար

<sup>466</sup> Չիսու և իրավունքը ստԱլի Էբն Չոսեյնի, Երևան, 2014, էջ 57:

<sup>467</sup> Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, էջ 99-107:

<sup>468</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>469</sup> Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, էջ 116:

նախատեսված կոնկրետ աշխարհագրական միջավայրից, ունի իր ամանձնահատկությունները: Պատահական չէ, որ Իրանում, որտեղ XVI դարից ի վեր պետական կրոնն էր շիա իսլամը, շրջանառվող պայմանագրերի գերակշիռ մասը կամ տրված են Իմամ Ալիի անունից կամ հաստատված նրա կամ մեկ այլ շիա իմամի կողմից (տե՛ս վերը): Սեֆյան պետության ժամանակաշրջանում (1694թ.) ընդօրինակված մի վավերագրի լուսանկարում, նրան էլ ավելի մեծ ու ժ հաղորդելու նպատակով նշվում է, որ պատճենի համապատասխանությունը քննօրինակին հաստատված է շեյխ Սեֆիի՝ Սեֆյան թագավորական տան հիմնադրի կողմից<sup>470</sup>:

Ինչպես վերը նշեցինք, որոշ տվյալների համաձայն Իմամ Ալիի անունից տրված պայմանագրերի հնագույն օրինակը պահվում էր Սպահանի Չեհել սոթուն պալատում, որը կառուցվել է Սեֆյան շահ Աբբաս Բ-ի կողմից: Ուստի կարելի է ենթադրել, որ Սեֆյան պետության մայրաքաղաքում գտնվող շահական պալատում պահվող հիշյալ փաստաթուղթը բավականին մեծ կարևորություն է ունեցել իրանահպատակ հայության կյանքում: Նաև կարծում ենք, պատահական չէ, որ հենց շահ Աբբաս Բ-ի օրոք են սկսում հրապարակվել շահական հրովարտակաների պաշտպանություն հայ *զիմմիների* իրավունքների՝ ամրացնելով նրանց այն լայն ազատություններն ու իրավունքները, որն նրանք ունեին որպես Սեֆյան պետության հպատակներ:

Այսպիսով, վերը քննված պայմանագրերում Աստճո անունից և Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի հաստատմամբ ամրագրվում էին բոլոր այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որ ունեին իրանական տիրապետության տակ ապրող հայերը: Ընդ որում իսլամական օրենքների համաձայն այդ պայմանագրերը պարտադիր էին մահմեդականների համար և իսլամական պետությունն իրավունք չուներ այն խախտելու, սակայն այն կարող էր չեղյալ համարվել *զիմմիների* կողմից նրանց որոշ արարքների համար, որպիսիք էին նրանց մահմեդականացումը, նրանց հեռանալը այդ երկրից, նաև

<sup>470</sup> Մատենադարան, արաբատառ ձեռ. ֆոնդ, հ. 357:



ջիզյայի վճարումից հրաժարվելը, իսկ ամը ու Ղուրանը ծաղրելը, Աստծուն հայ հոյելը...<sup>471</sup>

Յիշյալ պայմանագրերում նշվող դրույթներից են այն, որ «*զիմմիների* վրա դրված *ջիզյայի* չափից ավելին չպահանջեն..., նրանց դեմ թշնամություն չանեն..., բռնի հավատափոխ չանեն և նրանց չարգելեն ճգնավորի կյանքով ապրել ..., տեղից-տեղ շրջել ..., եկեղեցական գանգերը հնչեցնել ..., չքանդեն նրանց տներն ու պաշտամունքի վայրերը..., ոչ մի բան չմտնի նրանց տներից մզկիթների շինությունները և ոչ էլ մուսուլմանների տները..., անգամ եթե *զիմմիները* օգնության կարիք ունենան, մահմեդականները պետք է այն անհատույց տրամադրեն»<sup>472</sup>, «քրիստոնյա կանանց հետ բռնի չպետք է ամուսնանան, և վերջիններիս կամավոր ամուսնության դեպքում՝ նրանց մահմեդականություն չպարտադրեն»<sup>473</sup>:

Այնուամենայնիվ, Մուհամմադ մարգարեի անունից կնքված պայմանագրերի դրույթները պատմության ընթացքում հաճախ են խախտվել մահմեդական իշխանությունների կողմից: Յայ պատմիչների երկերում ցրված են բազում վկայություններ բռնի հավատափոխության, կրոնական արարողությունների կատարմանն ու հայոց վանքերի նորոգմանը խոչընդոտելու դեպքերի մասին: Բազմաթիվ են հայ և օտար աղբյուրների վկայությունները մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում տեղի ունեցող բռնի հավատափոխության դեպքերի մասին<sup>474</sup>:

Յայ պատմիչները գրի են առել մի շարք դեպքեր, որոնցում երևում է նաև այս պայմանագրերի խաղացած դրական դերը մասնավորապես Օսմանյան սուլթանի կողմից հայերի համար կայացրած վճիռներում<sup>475</sup>:

Պայմանագրերում նշվող դրույթներից շատերը հետագայում արտացոլվել են մահմեդական իշխանությունների ու դատական ատյանների վճիռներում (*Ֆաթվա, միսալ*) և վերահաստատվել Սեֆյան,

<sup>471</sup> اسعد شيخ الاسلامي، احكام وصيت و ارث ذمی از نظر فقهای اسلامي، ص. 151

<sup>472</sup> عهدنامه محمد پيغمبر، ص. 14

<sup>473</sup> Մատենադարան, արարատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռ. 358:

<sup>474</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 150-3, 158-61, Չաքարիա Սարկավազ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 29-32, Եսայի Յասան Զալալեանց, նշվ. աշխ., էջ 18:

<sup>475</sup> Գրիգոր Դարանաղցի, ժամանակագրություն, Երևան, 1915, էջ 133, 211:

ԱՖշարական, Չենդյան ու Ղաջարական թագավորական տներին ներկայացուցիչների հրովարտականերով: Այստեղից էլ գալիս է պայմանագրերի նկատմամբ դարեր շարունակ չթուլացող հետաքրքրությունը, որի մասին է փաստում նրանց ընդօրինակությունների ու թարգմանական տարբերակների առատությունը ընդհուպ մինչև XX դար և այն իրողությունը, որ 1909 թ. (հիշրայի 1327թ.) այդ փաստաթղթի արաբերեն տարբերակը՝ տողատակում պարսկերեն թարգմանությամբ վիմատիպ եղանակով տպագրվել է Թեհրանում Միրզա Ալի Ասղարի տպարանում: Ըստ տպագիր օրինակի վերջաբանի՝ այն տպագրվել է Իրանում սահմանադրական շարժման առաջնորդ և ներքին գործերի նախարար Սարդար Աս'ադ Ալի Ղուլի Բախթարիի հրամանով, Քաշանի բժիշկ Աղա Միրզա Ալի Ռեզայի հոգածությամբ և Մուսթոֆի Մուհամմադ Նաջմաբադիի ձեռքով գրված օրինակից<sup>476</sup>: Կարծում ենք, որ այս հարցում պետք է, որ կարևոր դեր խաղացած լինի հայերի ակտիվ մասնակցությունը Իրանում սահմանադրական հեղափոխությանը և նրա հայազգի առաջնորդ Եփրեմ խանը, որը 1909 թ. նշանակվել էր Թեհրանի ոստիկանապետ:

Սահմեդական տիրապետության տակ գտնվող թե՛ հայ Առաքելական և թե՛ քրիստոնեական մյուս դավանանքների առաջնորդների ձեռքում եղած տարալեզու պայմանագրերի (որոնց ուշ միջնադարի ընդօրինակությունների օրինակներ կան նաև Մատենադարանի պարսկերեն արխիվային հավաքածուի մեջ) աղբյուրագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք ունեն բովանդակային և ձևակերպումների ընդհանրություններ, որոնք խոսում են երկու տարբեր արաբերեն սկզբնաղբյուրներից ծագած լինելու մասին: Այդ պայմանագրերը ստեղծվել են IX-XIX դարերում պատմական հենքի վրա՝ որոշակի չափով պահպանելով իրենց սկզբնաղբյուրներում առկա պատմական իրողությունների հետքը և հարմարեցվելով ժամանակի ու միջավայրի պահանջներին: Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անուններից հայերի ու մյուս քրիստոնյաների հետ կնքված հրովարտակ-պայմանագրերը դարեր շարունակ եղել են այն հենարանը, որի վրա խարսխվել է նրանց կացությունը

<sup>476</sup> عهدنامه محمد پیغمبر، ص. 19

մահմեդականների տիրապետության պայմաններում: Հիշյալ փաստաթղթերն էլ ավելի կարևորվել են մահմեդականների կրոնական մոլեռանդության պրոթեկումների և անհանդուրժողականության աճի շրջաններում: Հարմարեցվելով ժամանակի ու միջավայրի պահանջներին՝ հիշյալ փաստաթղթերը հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդների կողմից օգտագործվել են համայնքի դրությունը բարելավելու և մահմեդականների հետ հարաբերություններում ծագած խնդիրները կարգավորելու նպատակով:

**2.2 Իրանահպատակ հայության իրավունքներն ու  
պարտավորություններն ըստՄատենադարանի XVII դարի II կես - XIX  
դարի I կեսի պարսկերեն վավերագրերի**

Նախորդ բաժնում քննված Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անունից հայերի հետ կնքված հրովարտակ-պայմանագրերում նշվող դրույթներն այն հիմնական նորմերն էին, որոնք բնութագրում էին իրանահպատակ հայության իրավա-քաղաքական դրությունը XVII-XIX դարերում:

Մահմեդական տիրապետության պայմաններում թե՛ Իրանի կենտրոնական նահանգները տեղափոխված, թե՛ նրա սահմանային շրջաններում բնակվող հայության համար կենսական նշանակություն ուներ նրա՝ որպես *զհմմիհի* վիճակին համապատասխանող իրավունքների կանոնակարգումն ու պաշտպանությունը, որը կատարվում էր դրանց առանձին խնդիրների կապակցությամբ հրապարակված հրամանագրերի ու կրոնական բարձրաստիճան հոգևորականության և նրանց գլխավորած բարձրագույն ատյանների կայացրած վճիռների (*Ֆաթվաների* ու *միսալների*) հիման վրա: XVII դարը Սեֆյան պետության այն ժամանակահատվածն էր, երբ հրապարակվում են առավել մեծ թվով նման փաստաթղթեր: Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի մեջ կան շուրջ 50 *Ֆաթվաներ*՝ տրված ինչպես կենտրոնական *դիվան ակ-սադարայի*՝ այնպես էլ տեղական (Թավրիզի, Նախիջևանի ու Երևանի) *շարի*՝ ատյաններում հայ քրիստոնյաների, որպես *զհմմիհների*, իրավական գանազան հարցերի կապակցությամբ,

որոնք շահի կամ տեղի կառավարչի կողմից հրամանագրով հաստատվելուց և համապատասխան առյաններում գրանցվելուց հետո օրենքի ուժ էին ստացել:

Մահմեդական հոգևորականների բարձրագույն առյանից մեծ թվով *Ֆայզլաներ* է ձեռքբերել Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը: 1668թ. գարնանը կաթողիկոսական *փիշաքով* ու առատ նվերներով նա Սպահան է գնում<sup>477</sup> և ձեռքբերում հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հրամանագրեր՝ հիմնված մահմեդական հոգևորականության բարձրագույն առյանների որոշումների վրա: Այս կարգի փաստաթղթերի առատությունը տվյալ ժամանակաշրջանում պայմանավորված էր նաև Իրանի պատմության այդ ժամանակահատվածի որոշ իրողությունների հետ, որոնց կարճ անդրադարձը հասկանալի կդարձնի այս կարգի փաստաթղթերի ստեղծման ու ձեռքբերման պատճառները:

Սեֆյան Սուլթանի (1666-1694 թթ.) և Սուլթան Յուսեյն (1694 – 1722 թթ.) շահերի իշխանության տարիներին Սեֆյան պետության քաղաքական թուլացմանը զուգընթաց ուժեղանում էր մահմեդական հոգևորականության դերն ու ազդեցությունը երկրի կյանքում: Տվյալ ժամանակաշրջանում Իրանում կրոնական գործերը տնօրինում էր Մոհամմադ Բադեր Մաջլիսին (1627-1699թթ.)<sup>478</sup>, որը շահ Սուլթանի օրոք *շեյխուլլ-իսլամն* էր, իսկ շահ Սուլթան Յուսեյնի իշխանության տարիներին հասնելով իր փառքի գագաթնակետին՝ ստանում է նոր ու ամենաբարձր հոգևորականի՝ *մուլլափաշիի* պաշտոնը<sup>479</sup>: Վերջինիս մահից հետո *մուլլափաշիի* պաշտոնն անցնում է նրա թոռանը՝ Մոհամմադ Յուսեյնին<sup>480</sup>: Մոհամմադ Բադեր Մաջլիսին մեծ ազդեցություն ուներ վերոհիշյալ շահերի վրա և նրանց հրապարակած հրովարտակաները հաճախ հիշյալ հոգևորականի կամքի դրսևորումներն էին<sup>481</sup>: Այս պատճառով Սեֆյան վերջին շահերի իշխանության տարիներին ուժեղանում են հալածանքները այլադավան փոքրամասնությունների, այդ թվում

<sup>477</sup> Մ. արք. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 2990:

<sup>478</sup> Նրա հայրը՝ Մոհամմադ Թաղի Մաջլեսին (Մուլլա Մոհամմադ Թաղի իբն Մաղսուդ Ալի Իսֆահանի) ևս եղել է մահմեդական ազդեցիկ շիա ուլամներից (մահ. 1070 հ.թ. (1659/60 թ.):

<sup>479</sup> 74. میراحمدی مریم، دین و دولت در عصر صفوی، تهران، نشریت امیر کبیر، 1369، ص.

<sup>480</sup> 61. میراحمدی مریم، دین و دولت در عصر صفوی، ص.

<sup>481</sup> 124. تاریخ ایران: دوره صفویان، پژوهش از دانشگاه کمبریج، ترجمه یعقوب آژند، تهران، چاپ شفق، 1380، ص.

նաև քրիստոնյա հայերի նկատմամբ<sup>482</sup>: Շահ Սուլթան Յուսեյնի ժամանակաշրջանը բնութագրելիս պատմագիր Ստեփանոս Երեցը նշում է, որ հայության նկատմամբ անհանդուրժողականության արտահայտություններից էր այն, որ անձրև օրերին քրիստոնյաներին թույլ չէր տրվում գնալ քաղաք, շուկա, փողոց<sup>483</sup>: Յայնության մի շարք հոգևոր առաջնորդներ ձերբակալվում են, իսկ Նոր Ջուղայի հայ եկեղեցին սկսում է տարեկան որոշ գումար վճարել պետությանը<sup>484</sup>: Նույն շրջանում ծանր (30 թումանի *մուղաթթա*) հարկ է դրվում նաև Յազարջրիբի Ս. Աստվածածին վանքի վրա, որի հետևանքով վանքի հոգևորականներն այնտեղից հեռանում են<sup>485</sup>: Մահմեդական կրոնական առաջնորդների, հատկապես *մուլլաթաշի* Մոհամմադ Բադեր Մաջլեսիի և նրա թոռան ու հաջորդի՝ Մոհամմադ Յուսեյնի հրահրմամբ շահ Սուլթան Յուսեյնը անարդարացի հրովարտակներ էր հրապարակում կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ<sup>486</sup>: Այսպիսի կրոնական քաղաքականության պայմաններում հաճախակի էին դառնում բռնի մահմեդականացման դեպքերը ինչպես հայ քրիստոնյաների, այնպես նաև հրեաների, զրադաշտականների և իրանի մյուս կրոնական փոքրամասնությունների շրջաններում, որը արյունահեղությունների ու անհանգստությունների պատճառ էր դառնում<sup>487</sup>:

Որքան էլ ծանր էր հայության դրությունը Սեֆյան պետության անկման շրջանում՝ այն էլ ավելի ծանրանում է աֆղանական տիրապետության, Նադիր շահի ու հատկապես նրանից հետո Իրանը փոթորկող երկպառակչական պատերազմների ու այսպես կոչված «անիշխանության» շրջանում: Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ չկան Իրանի աֆղան տիրակալների հրամանագրերից, քանի որ Արևելյան Յայաստանի շրջանները և Մայր Աթոռը Ս. Էջմիածինը չէին ընդգրկվել նրանց ստեղծած պետության կազմի մեջ: Նադիր շահի ստեղծած ռազմական բռնապետությունը

<sup>482</sup> 125 تاریخ ایران: دوره صفویان، ص.

<sup>483</sup> Ստեփանոս Երեց, Պատմագիրք, Թեհրան, 2017, էջ 152:

<sup>484</sup> میراحمدی مریم، دین و دولت در عصر صفوی، ص. 60

<sup>485</sup> Ստեփանոս Երեց, նշվ. աշխ., էջ 155:

<sup>486</sup> سیوری راجر، ایران عصر صفوی، 250

<sup>487</sup> 126 تاریخ ایران: دوره صفویان، ص.

բնորոշվում է հարկերի խիստ ծանրացմամբ ու աննշան պատրվակներով գանձվող ծանր տուգանքներով, որից հատկապես տուժում է Նոր Ջուղայի հայ ությունը<sup>488</sup>: Նադիր շահի մահվանից հետո Արևելյան Յայաստանի շրջանները նորից դուրս են գալիս իրանական տիրապետության տակից: Թեև ժամանակ առ ժամանակ իրանի շահի գահին հավակնորդ իշխանավորներից ոմանց հաջողվում է իրենց ազդեցության տակ առնել Յարավային Կովկասի տարածքում ստեղծված Երևանի, Նախիջևանի ու Ղարաբաղի խանությունները, այնուամենայնիվ նրանց խաները խուսանավելով իրանի, Օսմանյան ու Ռուսական կայսրությունների միջև՝ կարողանում են իրենց կիսանկախ դրությունը պահպանել մինչև խանությունների վերջնական միացումը Ռուսաստանին 1828 թ.: Ինչ վերաբերում է իրանի ներքին նահանգներում՝ Նոր Ջուղայի ու Սպահանի շրջակա մյուս հայկական բնակավայրերի հայ ության դրությունը, ապա այն սաստիկ վատթարանում է տեղի ունեցող ներքին կռիվների ու անսանձ հարստահարումների հետևանքով, որի մասին առավել գունեղ պատմվում է Ստեփանոս Երեցի պատմագրության էջերում<sup>489</sup>:

Այսպիսով, իրանահպատակ հայ ության իրավունքներն ու պարտավորությունները առավել մանրամասն ու լիարժեք կարելի է ուսումնասիրել Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական թագավորական տների հրովարտակների, ինչպես նաև գուգահեռ այլ աղբյուրների համադրությամբ, որը և կփորձենք կատարել ստորև:

**Ջիզյան** ոչ մահմեդական ռայաթներից (քրիստոնյաներ և հրեաներ) գանձվող գլխահարկն էր: Ի սկզբանե *ջիզյան* կարևոր տեղ էր զբաղեցնում այլակրոնների իսլամացման ոչ բռնի միջոցների մեջ և ամենայն հավանականությամբ ծագում էր պահլավերեն «*gazitak*» բառից, որը Սասանյան Պարսկաստանում ցածր խավից գանձվող հարկի անվանումն էր: Տեսականորեն *ջիզյա* պետք է վճարեին ազատ չափահաս տղամարդիկ (այդ հարկից ազատված էին կանայք, ծերերը, երեխաները, ստրուկները, մուրացկաններն ու հաշմանդամները): Մահմեդականացածներն ազատվում էին ջիզյայից, և սա նպաստում է խալիֆայության վաղ շրջանում իսլամի արագ տարածմանը: Այնուամենայնիվ մասսայական հավատափոխությունը լրջորեն

<sup>488</sup> Կոստիկյան Բ., Նոր Ջուղան իրանի Նադիր շահի իշխանության շրջանում, էջ 276-7:  
<sup>489</sup> Ստեփանոս Երեցի, նշվ. աշխ., 187, 192, 193-6:

պակասեցնում էր պետական գանձարանի եկամուտները, այնպես որ VII դարի վերջին VIII դարի սկզբին նոր մահմեդականացածները (մավալիները) նույնպես պարտավոր էին հարկ վճարել<sup>490</sup>: *Չիմմիների* կողմից վճարվող *ջիզյայի* չափը տարբեր ժամանակներում և տարբեր շրջաններում նույնը չի եղել՝ կախված լինելով վայրի տնտեսական պայմաններից և հարկատուների ունեցվածքի չափից: Փաստենք, որ Մուհամադ մարգարեի օրոք գլխահարկի կոնկրետ չափը դեռևս որոշված չէր, հարկերի գանձման մեխանիզմը մահմեդական տիրապետության տակ գտնվող հպատակ ժողովուրդներից սահմանվել է ավելի ուշ: Աբբասյան խալիֆայության շրջանում *ջիզյան*, կախված *զիմմի* ունեցվածքի չափից, գանձվում էր 1, 2, 4 *դինարի* չափով, որը համապատասխանում է 12, 24 և 48 դիրհեմի<sup>491</sup>:

IX-X դարերում տարբեր տարածաշրջաններում գործել է *ջիզյայի* գանձման ճկուն համակարգ, որը հարմար էր ծանր ժամանակներում հարկային բեռը թեթևացնելու տեսանկյունից, սակայն նաև հնարավոր էր դարձնում պաշտոնյաների չարաչափումները, որոնք առավել աճում են Սելջուկյան պետությունում՝ կապված պայմանական հողատիրության՝ *իքթաների* համակարգի ներմուծման հետ<sup>492</sup>: Յայտնի է, որ Ջելայիրյան Շեյխ Ուվեյսի օրոք *ջիզյան* գանձվել է հարուստներից 8, միջին խավից՝ 6, իսկ կարիքավորներից 4 *դինարի* չափով<sup>493</sup>: Իլխանական պետության վաղ շրջանում մինչև Ղազան խանը, քանի որ իլխանները մահմեդական չէին, *ջիզյա* չի գանձվել: Յայկական աղբյուրներում նշվում է, որ միայն Օլջայթուլ խանի 1306թ. հրամանից հետո սկսվում է այն գանձվել 8 դահեկանի չափով<sup>494</sup>:

Յավաթի համար գանձվող *ջիզյան* բավական ծանր հարկ էր, որը XIV-XV դարերում գանձվելով տնտեսապես քայքայված երկրում, սովի հետ միասին նպաստում էր մահմեդական տիրապետության տակ

<sup>490</sup> Vera B. Moreen, Jizya, Encyclopædia Iranica, vol. XIV, Fasc. 6, pp. 643-645, ինտերնետային կայքէջ . <http://www.iranicaonline.org/articles/jezya>

<sup>491</sup> Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, էջ 100-101:

<sup>492</sup> Vera B. Moreen, Jizya, Encilopedia Iranica, vol. XIV, Fasc. 6, pp. 643-645, տե՛ս կայքէջ . <http://www.iranicaonline.org/articles/jezya>

<sup>493</sup> Նույն տեղում:

<sup>494</sup> Վ. Յակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. Բ, Երևան, 1956, էջ 381: Ըստ Յայկական բառարանի դահեկան բառը գործածվում էր թե՛ դիրհեմի և թե՛ դինարի փոխարեն (Նոր Բառգիրք Յայկազեան լեզուի, հ. Ա, Երևան, 1979, էջ 592):

տարբեր շրջաններում ապրող հայ ության որոշ հատվածների դավանափոխությանը<sup>495</sup>:

Սեֆյան ժամանակաշրջանում յուրաքանչյուր գյուղից գանձվող *ջիզյան* հաշվված էր և ընդհանուր գումարով հարկային մասնաններում գրանցված տվյալ գյուղական համայնքի անունով: Շահ Աբբաս Ա-ի օրոք (1588-1629թթ.) հայերի հարկային բեռը բավական թեթև էր, XVII դարի ընթացքում նրանցից գանձվող *ջիզյան* շարունակում էր աճել<sup>496</sup>: 1637թ. Իրան այցելած Ադամ Օլեարիոսի վկայությամբ Իրանում բնակվող շուրջ 100000 հայեր վճարում էին 2 ռայխսթալերին համարժեք գլխահարկ: Մինորսկին համարում է, որ կշռով մեկ ռայխսթալերը համարժեք էր 4 աբբասի կամ 4/50 թումանի<sup>497</sup>: Եթե հաշվի առնենք, որ մեկ աբբասին XVII դարում հավասար էր 200 *դինարի*, ապա *դինարով ջիզյայի* գումարը կազմում էր 1600 *դինար*: Ըստ Չաքարիա Ագուլեցու Ագուլիսի գլխահարկը 1666թ. նշանակվում է 2500 *դինար*<sup>498</sup>: XVII դարի երկրորդ կեսում ըստ որոշ տվյալների<sup>499</sup> յուրաքանչյուր չափահաս հրեա ու հայ տղամարդուց գանձվող *ջիզյան* կազմում էր մեկ միսղալ (4,69 գրամ) ոսկի<sup>500</sup>, նույնքան էր նաև զրադաշտականներից գանձվող *ջիզյայի* չափը<sup>501</sup>: *Ջիզյայի* նույն չափն է նշվում նաև Իրանի հրեաների անունով հրապարակված 1691թ. շահ Սուլեյմանի հրովարտակում, որը պահվում է Ռուսաստանի Պետական Յանրային Պատմական գրադարանի (ГПИБ) հազվագյուտ գրքերի բաժնում հ. 644652 –ի տակ<sup>502</sup>:

Իրանահպատակ հայերի տարբեր խնդիրների կապակցությամբ մահմեդական աստվածաբանների ու իրավագետների (ուլամաներ ու ֆակիհներ) և մահմեդական հոգևորականների գերագույն ատյանի (*դիվան ալ-սադադաթ*) կայացրած այդ վճիռներում ու

<sup>495</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Երանյան, Յայերի բռնի իսլամացման և մահմեդականությունն ընդունելու դեպքերը XIV – XV դդ., Պատմաբանասիրական Յանդես, 1, Երևան, 2016, էջ 47-51, 58:

<sup>496</sup> Vera B. Moreen, Jizya, Encilopedia Iranica, vol. XIV, Fasc. 6, pp. 643-645:

<sup>497</sup> Tadjikrat Al-Mulūk: A manual of Safavid Administration, V. Minorsky, Cambridge, 1943, p. 179.

<sup>498</sup> Չաքարիա Ագուլեցու որագրում էր նշվում էր 68:

<sup>499</sup> Այս մասին վկայում է ինչպես Ռաֆայել Դյու Մանը (Raphael Du Mans, L'etat de la Perse en 1660, Paris, 1890, p. 46):

<sup>500</sup> V. Ghougassian, նշվ. աշխ., էջ 78: Raphael Du Mans, նշվ. աշխ., էջ 46.

<sup>501</sup> .ا. تاجبخش، تاریخ صفویه، ص. 315.

<sup>502</sup> Այդ մասին տե՛ս И. В. Зайцев, К. П. Костилян, Указ сефевидского шаха Сулеймана еврейской общине Гиляна из собрания Государственной публичной исторической библиотеки в Москве, Ирано-славика, 2010, н. 2 (22), сс. 48-49:



հրամանագրերում (*Ֆաթվա* և *միսալ*) մշտապես առկա է այն դրույթը, որ խնդրարկուները «*գիմմի* են և կատարում են իրենց *գիմմիական* պարտականությունները՝ ըստ ամենալուսավոր *շարի*՝ օրենքների *ջիզյա* վճարելով»: Այսպիսով, «ջիզյա վճարող *գիմմի*» լինելը պարտադիր պայման էր *Ֆաթվաներում* ու *միսալներում* նշվող որոշումներից ու իրավունքներից օգտվելու համար: Յետևաբար, իրանահպատակ հայություն իրավական կարգավիճակի մասին խոսելիս, նախ և առաջ պետք է նշել, որ նրանք համարվում էին *գիմմի* և կատարում էին իրենց *գիմմիական* պարտականությունները՝ *շարի*՝ օրենքներին համապատասխան վճարելով *ջիզյա*. *Ջիզյայի* վճարմամբ պայմանավորված *գիմմիի* կարգավիճակը ամրագրված է Ղուրանի *Թուբե սուրայի* 29-րդ Այաթ ալ-ջիզյայում նշվող *գիմմիական* պայմանագրերով, որոնց մասին վերը արդեն խոսել ենք առաջին գլխի առաջին բաժնում:

XVII դարի երկրորդ կեսին հրապարակված *Ֆաթվաներից* մի քանիսում քննվում ու լուծում էին ստանում *ջիզյայի* վճարմանը վերաբերող մի շարք հարցեր, ինչպես օրինակ այն, որ *գիմմի* պարտավոր էր *ջիզյա* վճարել նաև իր *գիմմի* ծառայի համար և պարտավոր չէր այն վճարել իր այլակրոն ծառայի համար, որը *գիմմի* չէր<sup>503</sup>; նաև որ *ջիզյա* չպետք է պահանջեն իրանի տարբեր շրջաններում շրջող հայ վաճառականներից<sup>504</sup>: 1668 և 1669 թթ. հրապարակված այս *Ֆաթվաներից* երկում է, որ տարածված երևույթ է եղել այն, որ երբ հայերը առևտրական կամ այլ նպատակներով մի տեղից մի այլ տեղ էին գնում, այնտեղ նրանցից պահանջում էին կրկին անգամ *ջիզյա* վճարել, հակառակ դեպքում ստիպում էին հավատափոխ լինել: Ուստի Յակոբ կաթողիկոսը հարկադրված է եղել շեշտել տալ, որ «համաձայն գոյություն ունեցող օրենքների, հայ *ռայաթները ջիզյան* վճարում են միայն իրենց հիմնական բնակության վայրում, մեկ անգամ, և արգելվում է այլ վայրերում ճամփորդելիս նրանցից *ջիզյա* պահանջելը»: Սակայն չնայած դրան, նույն *Ֆաթվաների* բովանդակությունից պարզվում է, որ հեռավոր վայրերում շատ հայ վաճառականներ ստիպված են եղել առերես հավատափոխ լինել և վերադառնալով իրենց բնակավայրը վերստին

<sup>503</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 6:

<sup>504</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 21, 35:

մկրտվել, որն իր հերթին տեղի մահմեդական հոգևորականությանը առիթ է տվել նոր հետապնդումների համար<sup>505</sup>:

Սեֆյան պետության անկումից հետո *ջիզյայի* գանձման մասին տեղեկությունները ավելի քիչ են: Ըստ Աբրահամ Կրետացու, Նադիր շահի օրոք *ջիզյան* սահմանվում է 3,5 դուռուշ<sup>506</sup>: Եթե հաշվի առնենք, որ 15 դուռուշը հավասար էր 1 թումանի<sup>507</sup>, ուստի *ջիզյայի* չափը հավասար էր մոտավորապես 2333 *դիևարի*, ապա դա գրեթե նույն չափն էր, ինչ Սեֆյան ժամանակաշրջանում: *Ջիզյան* շարունակել է գանձվել նաև XVIII երկրորդ կեսին Յարավային Կովկասում ստեղծված կիսանկախ խանություններում բնակվող հայերից: Այդ հարկից ազատված էր Էջմիածինը: Յայտնի է, որ Ամենայն Յայոց Կաթողիկոս Սիմեոն Երևանցուն հաջողվում է 1765 թ. Էջմիածինն ազատել Նադիր շահի օրոք նրավորաորապես *ջիզյա* դրված 17 թումանի հարկից<sup>508</sup>: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ դեռևս Ազատիանի հիջրայի 1168 թ. ռամազան ամսի (1755 թ.) հրամանագրով հրահանգվում է, որ Ալեքսան Կաթողիկոսի խնդրանքով այն հարկերը, որոնք թվարկում է, և նախկինում կրճատվել էին, այժմ ևս չգանձվեն, նաև *ջիզյան* հանեն<sup>509</sup>:

Ինչպես պարզվում է XIX դարի սկզբին մի փաստաթղթի բովանդակությունից, *ջիզյան* ու *թաֆալութ-ե ջիզյան* հանված էին միայն Էջմիածնի կալվածքներից գանձվող հարկերի ցանկից, իսկ մյուս հայկական գյուղերից այդ հարկերն ըստ երևույթին շարունակում էին գանձել: Այս մասին է փաստում Յուսեյն խան սարդարի 1224 հ. թ. ռաջաբ ամսի (1809 թ.) հրամանագիրն՝ ուղղված Բարսեղ վանականին, որում նշվում է, որ այդ տարի անցկացված գորաշարժերի հետևանքով Օշական գյուղից գանձվեց *ջիզյա*, սակայն քանի որ այն Էջմիածնի կալվածքն է, այսուհետև այն չի պահանջվի<sup>510</sup>:

Որոշակի տեղեկություններ կան Նախիջևանի հայերից գանձվող գլխահարկի՝ *ջիզյայի* մասին, որը կիսով չափ գանձվում էր

<sup>505</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 21:

<sup>506</sup> Աբրահամ Կրետացի, նշվ. աշխ., էջ 135:

<sup>507</sup> Աշ. Յովհաննիսյան, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 141:

<sup>508</sup> Սիմեոն Երևանցի, նշվ. աշխ., էջ 208:

<sup>509</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1339:

<sup>510</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 605:

նաև դեռահաս պատանիներից<sup>511</sup>, չնայած, որ դա իսլամի օրենքներով անթույլատրելի էր:

Յարավային Կովկասի մյուս խանությունների *զիմմի* բնակչությունից *ջիզյայի* գանձման մասին տեղեկությունները խիստ սուղ լինելով՝ հնարավորություն չեն տալիս լիովին լուսաբանել նրա գանձմանը վերաբերող մանրամասները: Տեղեկություններ կան միայն Ռուսաստանի տիրապետության տակ անցած Շաքիի խան Ջաֆարի խանի օրոք այնտեղի հայերից *ջիզյայի* գանձման մասին, որը առաջ էր բերել նրանց վրդովմունքը թերևս նախկինում չգանձվելու պատճառով: Վերջիններս, իրենց հոգևոր առաջնորդների ու Եփրեմ կաթողիկոսի միջոցով այդ խնդրի կապակցությամբ դիմում են ռուսական իշխանություններին, որպեսզի հանվի այդ հարկի գանձումը<sup>512</sup>:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել է այս խնդրին առնչվող մի փաստաթուղթ, որն իրենից ներկայացնում է Շաքիի Վարդանաշեն և Նիգ գյուղերի նոր մահմեդականացած հայերի դիմում-նամակն՝ ուղղված Յովհաննես արքեպիսկոպոսին, իշխան Դ. Օրբելիանիին և կոմս Ի. Գուդովիչին: Նրանում նշվում է, որ նահանգի կառավարիչը հավատի հարկ էր պահանջում, որ նրանք անվանում են արբիշոմ-ե դինի (հավատի մետաքս): *Ջիզյան*, ինչպես վերը տեսանք, հիմնականում գանձվում էր դրամով, բայց տվյալ դեպքում այն գանձվում էր բնամթերքով՝ մետաքսով, որը Շաքիի տարածքում արդյունահանվող հիմնական հումքն էր: Փաստաթղթում մատնանշվում է հայոց պատմության ցավալի իրողություններից մեկը, երբ հայերը չհամաձայնվելով վճարել հարկ հավատի համար, մահմեդականություն էին ընդունել և այնուամենայնիվ նրանցից շարունակում էին հավատի հարկ պահանջել, ուստի նրանք խնդրում էին հավատի հարկ չգանձել<sup>513</sup>:

Սկսած XV դարից *ջիզյա* եզրույթի հետ զուգահեռ փաստաթղթերում հանդիպում է նաև *թաֆավուր-ե ջիզյա* հարկատեսակը, որը ներկայացնում էր *ջիզյայի* գումարի վրա

<sup>511</sup> Ե. Լալայեան, Նախնաւան կամ Նախիջեւանի ոստիկանական շրջան, արտատպւած Ազգագրական հանդէսից, Թիֆլիս, էջ 25-6:

<sup>512</sup> Присоединение Восточной Армении к России, т. I, с. 429, 516, 534.

<sup>513</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1526:

ավելացումը, որը մի քանի տարին մեկ կատարվում էր ընդհանուր մարդահամարից հետո<sup>514</sup>: Թաֆավուլ-ե ջիզյան (éërV MkDžN), որ բառացի՝ «ջիզյայի տարբերություն» էր նշանակում, հայերից գանձվող գլխահարկի կամ «ջիզյայի» վրա ժամանակի ընթացքում բարդված գումարներն էր, որ հարկային մատյաններում գրանցվում և հաշվվում էր առանձին՝ դիտելով որպես առանձին պարտավորություն<sup>515</sup>: Ընդ որում *թաֆավուլ-ե ջիզյայի* գումարը ուղղակի կապուկներ դրամի արժեգրկման հետ: *Ջիզյան* ու *թաֆավուլ-ե ջիզյան* կարևոր տեղ էին զբաղեցնում Սեֆյան պետության բյուջեում, և նրանց գումարը երբեմն կազմում էր որոշ գյուղերից հավաքվող հարկագումարի կեսից ավելին<sup>516</sup>: 1682թ. Դաստակերտ գյուղից և Գոլյազի *մազրաեից* գանձվող *թաֆավուլ-ե ջիզյան* կազմում էր 39900 դինար (կամ 3 թուման 9900 *դինար*), որը կազմում էր այդ վայրերից գանձվող հարկերի 2/3-ը<sup>517</sup>: XVII դարի երկրորդ կեսում հրապարակված մի այլ հրամանագրով Ղարաքիլիսագյուղից գանձվող *թաֆավուլ-ե ջիզյայի* գումարը սահմանվում է 4 թուման<sup>518</sup>:

Պատմական աղբյուրների համաձայն 1881/2 թ. Ղաջար շահ Նասրադդինի հրամանով *ջիզյայի* գանձումը զրադաշտականներից դադարեցվել էր: Սահմանադրական հեղափոխությունից հետո *ջիզյան* այլևս չէր գանձվում նաև քրիստոնյաներից ու հրեաներից<sup>519</sup>:

### Եկեղեցիների կառուցման ու նորոգման իրավունքը

Մատենադարանի պարսկերեն վավերագրերից շատերը ներկայացնում են Սեֆյան իշխանությունների պաշտոնական տեսակետը հայ *-գիմմիների* կարգավիճակին ու իրավունքներին վերաբերող տարբեր խնդիրների ու մանրամասների կապակցությամբ:

<sup>514</sup> Այս մասին տե՛ս А.Д. Папазян, նշվ. աշխ., էջ 234:

<sup>515</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 109:

<sup>516</sup> А.Д. Папазян, նշվ. աշխ., էջ 234-235:

<sup>517</sup> Ք. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 47:

<sup>518</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 112:

<sup>519</sup> حقوق اقلیتهای دینی در قوانین ایران (منابع دانشنامه جهان اسلام، بنیاد دائره المعارف اسلامی برگرفته از مقاله «حقوق اقلیتهای دینی در قوانین ایران» شماره 6348 (տե՛ս ինտերնետային կայքէջ .

<http://www.rwgn.net/index.aspx?siteid=1&pageid=287>)

Շահ Աբբաս Ա-ի ժամանակաշրջանը բնութագրելով՝ Առաքել Դավրիժեցին նշում է, «[շահ Աբբաս Ա-ը] յօժար կամօք հրամայեաց եկեղեցիս շինել յամենայն տեղիս, և Ջուղայ և ի գեղօրայս մեծանիստու բարձրաշեն ...»<sup>520</sup>:

Սա նշանակում է, որ շահ Աբբաս Ա-ի իշխանության տարիներին, թույլատրվել էր ոչ միայն նախկինում կառուցված ու հետագայում վնասված վանքերի նորոգումը, այլև նոր եկեղեցիների կառուցումը Սեֆյան իրանի տարածքում: Սա աննախադեպ երևույթ էր մահմեդական պետության համար, որովհետև նախորդ բաժնում քննվող պայմանագրերի և մահմեդական իրավունքի տեսանկյունից ընդունելի էին համարվում միայն նախքան արաբական նվաճումները կառուցված եկեղեցիների նորոգումը: Այնուամենայնիվ, այս գիշումը իրան տեղափոխված հայությանը՝ այնտեղ նրան պահելու կարևոր նախապայմաններից էր: Իրողությանը նայելով, որ շահ Աբբաս Ա-ի օրոք իրանում կառուցվում են զգալի թվով հայկական եկեղեցիներ, ինչպես նաև կաթոլիկական վանքեր: Հայկական վանքեր են կառուցվել իրանում նաև հետագայում, մասնավորապես շահ Սեֆի Ա-ի 1042 թ. հրամանագրով հաստատվում էին հայերի կրոնական ազատությունները, այդ թվում նաև իրենց բնակության վայրում եկեղեցիներ կառուցելու ու նորոգելու իրավունքը<sup>521</sup>, նաև շահ Աբբաս Բ-ի օրոք, մասնավորապես պատմագիր Ստեփանոս Երեցի հավաստմամբ շահը «թղթով ու արքունական կնիքով հրաման տվեց աներկյուղ ու ապահով կառուցելու վանքը»<sup>522</sup>:

Այնուամենայնիվ, նոր հայկական վանքեր կառուցելու իրավունքի մասին որևէ նշում չկա Մատենադարանի Սեֆյան շրջանի պարսկերեն հրովարտակներում և ֆաթվաներում: Միակ նմանատիպ ձևակերպումն այս մասին Նադիր շահի Հնդկաստանյան արշավանքի ժամանակ իրանը կառավարող թագաժառանգ Ռեզա Դուլլի Միրզայից Ղազար Ջահկեցի կաթոլիկոսի 1740թ. ստացած հրովարտակում է, որ տեղ վերջինիս խնդրագրին համապատասխան արգելվում է խոչընդոտել

<sup>520</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 94:

<sup>521</sup> هاشمی، شکوه السادات اعرابی، ارامنه جلفای نو در عصر صفوی، 284-285:

<sup>522</sup> Ստեփանոս Երեցի, նշվ. աշխ., էջ 150:

հայերին իրենց եկեղեցիների վերանորոգման ու նորերը կառուցելու հարցում<sup>523</sup>:

Մահմեդական հոգևորականության բարձրագույն ատյանի կողմից XVII դարի երկրորդ կեսին հրապարակված *Ֆաթվաներում*, սակայն, մշտապես շեշտվում է, որ թույլատրվում է նորոգել այն հայկական վանքերը, որոնք կառուցված են եղել նախքան արաբական նվաճումը: Ընդ որում այդ *Ֆաթվաները* հրապարակվել են ինչպես կոնկրետ մի վանքի վերանորոգումը<sup>524</sup>, այնպես էլ ընդհանրապես հայաբնակ մի քանի շրջանների՝ Սյունիքի, Չուխուր Սաադի, Ղարաբաղի ու Ատրպատականի վանքերինը թույլատրելու կապակցությամբ<sup>525</sup>:

Հակոբ Ջուղայեցու ջանքերով ձեռքբերված այս *Ֆաթվաները*, որոնք հաստատված են Շահ Աբբաս Բ-ի և Սուլեյմանի հրամանագրերով, արտացոլում են այն իրողությունը, որ XVII դարի երկրորդ կեսում հայաբնակ շրջաններում շարունակվում էր նույն դարի առաջին կեսում սկսված լայնածավալ եկեղեցական շինարարությունը: Ըստ Առ. Դավրիժեցու XVII դարի կեսերին վերանորոգվում էին Ս. Ստեփանոս Նախավայի, Երնջակի Ս. Կարապետի, Օհանավանքը, Ուշիի Ս. Սարգսի և այլ վանքերը<sup>526</sup>: Չաքարիա Քանաքեռցու վկայությամբ շահ Աբբաս Բ-ը դեմ գնալով տեղի մահմեդական հոգևորականության կամքին՝ հատուկ հրամանագրով հովանավորում է Արդեբիլում հայկական հին եկեղեցու վերակառուցումը և կարգադրում տեղական կառավարիչներին գործնական օժանդակություն ցուցաբերել այդ հարցում<sup>527</sup>: 1661թ. հրապարակված այդ հրովարտակով հրահանգվում է հայաբնակ շրջանների տեղական իշխանություններին ու մահմեդական հոգևորականությանը որևէ կերպ չնեղել հայերին՝ նրանց եկեղեցիների ավելի բարձր կառուցված լինելու ու վերանորոգման համար<sup>528</sup>: 1664-1665 թթ. շահ Աբբաս Բ-ի

<sup>523</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 14, էջ 45:

<sup>524</sup> Ինչպես օրինակ Սուլեյմանի Ս. Գևորգ վանքի, Ներքին Ազուլիսի Ս. Թովմա Առաքյալի, Շատիկի Հարանց Անապատի վանքի վերանորոգման համար ձեռքբերված *Ֆաթվաները* (Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 19, 20, 29):

<sup>525</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 32, 35:

<sup>526</sup> Առ. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 281-285:

<sup>527</sup> Չաքարիա Սարկալ ազի պատմագրություն, հ. Բ, էջ 35-36:

<sup>528</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 11:

թույլ տվո՞ւթյամբ<sup>529</sup> ու տեղի կառավարիչ Միրզա Իբրահիմի հանձնարարությամբ վերանորոգվում է Ագուլիսի Ս. Յովհաննես եկեղեցին<sup>530</sup>, 1669թ. սկսում են կառուցել Խորվիրապի եկեղեցին, Սուղնու Ս. Գևորգ եկեղեցին<sup>531</sup>: 1679-1685թթ. վերանորոգվում է Ս. Թադևոս Առաքյալի վանքը<sup>532</sup>, 1698թ.՝ Ս. Գեղարդիներ<sup>533</sup> և այլն: Արևելյան Յայաստանի տարբեր շրջաններում եկեղեցական շինարարությունը թույլատրող ու հովանավորող հրովարտակաների տվյալները հաստատվում են այդ շրջանների թե՛ վիճագրական արձանագրությունների և թե՛ այլ պատմական սկզբնաղբյուրների տեղեկություններով:

### **Յայ գիմմիների կրոնական ազատությունները և նրանց պաշտպանվածությունը բռնություններից**

Պաշտոնապես Սեֆյան Իրանում XVII-XVIII դարերում հայ *գիմմիներին* կրոնական ծեսերի ու արարողությունների կատարման հարցում տրված էր լիակատար ազատություն, որի մասին հավաստում է Առաքել Դավրիժեցին. «զամենայն կարգ և զաւանդութիւնս քրիստոնէական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայքն. զկոչնակ հարկանել, զժամ կանչել. և զջրօրհնէքն մեծախումբ հանդիսիւ առնել ... Եւ զմեռեալսն խաչալամով և ձայնիւ շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ և տանէին ի թաղել»<sup>534</sup>:

Կրոնական ծեսերի ու արարողությունների ազատ կատարման իրավունքը Յակոբ Ջուղայեցու կաթողիկոսի ջանքերով ամրագրվել էին *դիվան ակ -սարարաթի* կողմից 1669թ. հրապարակված *միսալ ով* ու *ֆաթվայ ով* և հաստատվել դրանց կից Սեֆյան շահ Սուլեյմանի հրամանագրերով<sup>535</sup>:

Քրիստոնեական օրենքներով ապրելու իրավունքը պաշտպանելու համար 1669 թ. շահ Սուլեյմանից հրամանագիր է

<sup>529</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 15:

<sup>530</sup> Չաքարիա Ագուլեցու որագրությունը, էջ 65:

<sup>531</sup> Նույն տեղում, էջ 83, տե՛ս նաև Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ վավերագիր 19:

<sup>532</sup> Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 310:

<sup>533</sup> Նույն տեղում, հ. 1, էջ 395:

<sup>534</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 94:

<sup>535</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 31, 34:

ստանում նաև Աղվանից Պետրոս կաթողիկոսը, որտեղ նշվում է, որ «մահալ ների քալ անթարները, մելիքները, հաքիմները, թիռլղարներն ու համեսալ եղարները ապրինաբար նեղում են իրենց, միջամտում նրանց ազգին ու կրոնին վերաբերող գործերին»<sup>536</sup>: Իրանի հոգևորականության բարձրագույն ատյանի կայացրած վճիռները արգելում էին նաև տարբեր շրջաններում բնակվող հայ *զիմմիներից* իրենց իրավունքներին համապատասխան վարվելու համար հավելյալ գումարներ պահանջելն ու խոչընդոտելը<sup>537</sup>, նրանց նկատմամբ բռնի ու անօրինական գործողությունները<sup>538</sup>:

Յետագայում ևս (թե՛ Նադիր շահի, թե՛ Քերիմ խանի ու թե՛ Ղաջար շահերի օրոք) հայ *զիմմիների* իրավունքների մասին վերը ներկայացվող ընդհանուր ձևակերպումները հանդիպում են շահական հրովարտակներում, բայց առանց կից շարադրվող *ֆաթվաների* ու *միսալ ների*:

Այսպես, Նադիր շահի Յնդկաստանյան արշավանքի ժամանակ Իրանը կառավարող թագաժառանգ Ռեզա Ղուլի Միրզայից Ղազար Ջահկեցի կաթողիկոսի 1740թ. ստացած հրովարտակով նրա խնդրագրին համապատասխան արգելվում է խոչընդոտել հայերին եկեղեցական զանգերը հնչեցնելու ու ծիսական արարողությունները անցկացնելու հարցում<sup>539</sup>: Նմանատիպ հրովարտակներ են հրապարակվում 1741թ. Նադիր շահի և 1748 թ. Իբրահիմ Միրզայի կողմից, որով արգելվում են պետական պաշտոնյաների ու հոգևորականների միջամտությունը հայերի հավատին վերաբերող խնդիրներին և նրանց կրոնական օրենքների խախտումը<sup>540</sup>:

Չնայած բռնի մահմեդականացումը արգելվում էր դեռևս Մուհամմադ մարգարեի անունից քրիստոնյաների հետ կնքված պայմանագրերով ու իսլամի օրենքներով, այնուամենայնիվ այն հաճախակի էր գործադրվում հայերի հանդեպ, որը մատնանշում են

<sup>536</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 37:

<sup>537</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 28:

<sup>538</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 31, 37:

<sup>539</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 14

<sup>540</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 20, 31:



Նման երևույթներն արգելող Նադիր շահի 1741 թ. և Իբրահիմ Միրզայի 1748 թ. հրամանագրերը<sup>541</sup>:

### **Սեփականության իրավունքը**

Մահմեդական հոգևորականության կողմից XVII դարի երկրորդ կեսին հրապարակած *Ֆաթվաներից* մի քանիսը հաստատում են հայ *զիմմիների* սեփականատիրական իրավունքներն իրենց կողմից գնված կալվածքների եկամուտների ու հարկերի նկատմամբ:

Մասնավորապես, ըստ 1658թ. հրապարակված մի *Ֆաթվայի* հայ *զիմմիներ* իրավունք ունեռ տնօրինելու իր կողմից գնված *մուլլեի* եկամուտները, իսկ նախկին սեփականատիրոջ ժառանգները դրան կատմամբ իրավունքներ չունեն<sup>542</sup>, նույն թվականին հրապարակված մեկ այլ *Ֆաթվայի* համաձայն իրավունք ունի գանձելու իրեն պատկանող *մազրաեի մալիքներ* հարկը<sup>543</sup>:

Վերը նշված *Ֆաթվաները* ձեռքբերված լինելով Յակոբ Ջուղայեցու հայրապետության տարիներին, բնականաբար նախատեսված էին նախ և առաջ Մայր Աթոռի ու Ամենայն Յայոց կաթողիկոսի իրավունքները կալվածքների նկատմամբ ապահովելու համար:

Այս *Ֆաթվաները* բովանդակում էին ընդհանուր ձևակերպումներ իրավունքների մասին, որոնցով հնարավոր էր դառնում պաշտպանել *զիմմիի* մասնավոր սեփականությունը միայն այդպիսին լինելը ապացուցելուց հետո: Իսկ յուրաքանչյուր կալվածքի նկատմամբ իրավունքները հնարավոր էր ապացուցել *շարի'աթական*-նոտարական այլևայլ փաստաթղթերով, որպիսիք էին առքուվաճառքի և նվիրատվության կալվածագրերը (*ղաբալե, վակֆևամե*): Երբեմն տեղի ազդեցիկ պաշտոնյաների ոտնձգություններից պաշտպանվելու համար կաթողիկոսը հարկադրված էր դիմել *շարի'* բարձրագույն դատական ատյանին՝ *դիվան ալ-սադարաթին*, իր ու Մայր Աթոռի իրավունքները հաստատելու և շահի հրամանով դրանք պաշտպանելու համար, ինչպես դա պատահում է Վաղարշապատ գյուղի նկատմամբ Երևանի նախկին

<sup>541</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Դ, վավ. 17, 30:

<sup>542</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 4:

<sup>543</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 7:

բեկլ արբեկ Աբբաս Ղուլլի խանի (1663 – 1666թթ.) հավակնոթյունների դեպքում: Պահպանվել է Սեֆյան շահ Սուլեյմանի 1672 թ. հրամանագիրը՝ հրապարակված ի հաստատումն *դիվան ավ-սարարաթի* Վաղարշապատ գյուղի Էջմիածնին պատկանելու վերաբերյալ կայացրած վճռի՝ *միսալի*<sup>544</sup>: Այդ ծավալուն *միսալի* բովանդակությունից հայտնի է դառնում, որ Վաղարշապատ գյուղի նկատմամբ ապացուցելու համար Յակոբ կաթողիկոսը *դիվան ավ-սարարաթի* քննությանն է ներկայացրել մի շարք փաստաթղթեր, որոնց մեջ էին այդ գյուղի 1450 թ. *վակֆնամչեն*, 1620 թ. Մովսես կաթողիկոսի և 1662 ու 1668 թվականներին իր կողմից ձեռքբերված *միսալ ները*<sup>545</sup>: Էջմիածնի համար կարևոր նշանակություն ունեցող այդ կալվածքի պահպանության նպատակով ձեռքբերված հիշյալ փաստաթուղթը նույն շրջանում պատճենվել է մի քանի օրինակով, նաև 1675 թ. վերահաստատվել նոր հրովարտակով<sup>546</sup>:

Յետագայում վերը նշված իրավական դրույթներից շատերը անհրաժեշտության դեպքում վերահաստատվում էին շահական հրովարտակներով: Մասնավորապես, շահ Սուլթան Յուսեյնի 1712 թ. մեկ հրամանագրով վերահաստատվում են վեց *ֆաթվաներ* բովանդակող հրովարտակներ<sup>547</sup>: Յրամանագրի տեքստում հակիրճ նշվում է *ֆաթվաների* բովանդակությունն ու նրանց հրապարակման ժամանակը: Ահանշված հրամանագրով վերահաստատված *ֆաթվաները*.

Ա. «Դրախտաբնակ աշխարհակալ միապետի 1022թ. շաբան ամսի (1613թ. սեպտ. 16 - հոկ. 15)<sup>548</sup> հրամանագիրը, որ հրապարակվել էր շիա *ուլլամաների* [անցկացրած] *ֆաթվայի* հիման վրա հայերի կողմից Ուչքիլիսային վակֆարված հողային *մուլլթերի* մասին, որ ոչ ոք չպետք է *շարի'ն* հակառակ դրանք գավթի:

Բ. Բարեբախտ միապետի 1068թ. ռաջաբ ամսի<sup>549</sup> հրամանագիրը՝ հրապարակված հայերի միջև կնքվող առք ու վաճառքի գործարքների վերաբերյալ շիա *ուլլամաների* անցկացրած *ֆաթվայի* հիման վրա,

<sup>544</sup> Մատենադարան, Կաթող. Դիվան, թղթ. 1բ, 156ա: Այդ վավերագիրը տե՛ս հրատարակված Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 38:

<sup>545</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, 2005, վավ. 38, էջ 93-95:

<sup>546</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավերագիր 163:

<sup>547</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 79:

<sup>548</sup> Սեֆյան շահ Աբաս Ա-ի հրամանագիրն է (տե՛ս Յ. Դ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 11, էջ 91-92):

<sup>549</sup> Տե՛ս հրատարակված Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 4:

Գ. Վերոհիշյալ միապետի 1069թ. ջուլմարի Բ. ամսի<sup>550</sup> *ուլլամաների ֆաթվայի* հիման վրա հրապարակած հրամանագրի սավադը, այն մասին, որ *զիմմի* հայերի նկատմամբ ոչ ոք չպետք է բռնություն գործի,

Դ. Նորին Մեծությունն վերոհիշյալ միապետի կողմից 1071թ. շաբան ամսի<sup>551</sup> շիա *ուլլամաների ֆաթվայի* հիման վրա հրապարակված հրամանագրի *սավադը* այն մասին, որ հայերի կտակով *վակֆ* արվածը, [նախկին սեփականատիրոջ] ժառանգները չեն կարող ետվերցնել,

Ե. Սուրբ դրախտում բնակվող Նորին Մեծությունն միապետի 1079թ. սրբազան զիղասդե ամսի<sup>552</sup> մահմեդական *ուլլամաների ֆաթվայի* հիման վրա հրապարակած հրամանագիրը այն մասին, որ ոչ ոք *զիմմի* բնակչության նկատմամբ բռնություն գործադրելու իրավունք չունի,

Զ. Նորին Մեծությունն վերոհիշյալ միապետի 1086թ. ջուլմարի երկրորդ ամսի<sup>553</sup> հրամանագիրը հրապարակված *սադրի միսալի* հիման վրա Ուլլախիսայի (Էջմիածնի) *մուլլաբերի* վերաբերյալ և ուղղված Չուխուր Սաադի *բեկլարբեկին*, որպեսզի սրբազնագույն *շարի*՝ համաձայն թույլ տրվի վանքին տնօրինել իր [մուլլաբերի] եկամուտները»<sup>554</sup>.

Այսպիսով, Ալեքսանդր կաթողիկոսը, որն այդ տարվամեջ ձեռք էր բերել շահ Սուլթան Յուսեյնի մի քանի 9 այլ հրամանագրեր ևս<sup>555</sup> ստանում է մեկ հրովարտակ, որով վերահաստատվում են 5 *ֆաթվա* և 1 *միսալ*՝ ուղղված հիմնականում Էջմիածնի կալվածատիրական իրավունքների պաշտպանությանը:

Ինչպես տեսնում ենք, մահմեդական բարձրաստիճան հոգևորականների կայացրած վճիռները (*ֆաթվաներ* և *միսալներ*) և նրանց դրույթները բովանդակող հրովարտակները հիմնականում կրկնում ու վերահաստատում էին Սուլթանի մարգարեի ու Իմամ Ալիի անուններից կնքված պայմանագրերում ձևակերպված

<sup>550</sup> 1659թ. փետրվարի 24 - մարտի 25:

<sup>551</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 112:

<sup>552</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 35:

<sup>553</sup> Այս հրովարտակով (տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 163) վերահաստատվում է նույն շահի կողմից հիջրայի 1082 թ. հրապարակված հրամանագիրը (Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 38):

<sup>554</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 79, Էջ 172-3:

<sup>555</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, 2005, վավ. 74-84:

ընդհանուր դրույթները հայ-գիմմիների իրավունքներին վերաբերող մասնավոր դեպքերում:

### **Իրանահայասկ հայ ության ժառանգական իրավունքին վերաբերող շիախսլամի օրենքը**

Թե՛ Սեֆյան և թե՛ հետագա շրջանի իրանական իշխանությունները որքան էլ ընդհանուր առմամբ հանդուրժողական էին իրենց հպատակ այլակրոնների նկատմամբ, որը բխում էր Մուհամմադ մարգարեի ու նրա հետևորդների ժամանակաշրջանում նրանց հետ կնքված պայմանագրերի դրույթներից, այնուամենայնիվ հայերի ու մյուս այլակրոնների մահմեդականացումը Իրանում մշտապես խրախուսվել է բռնի ու ոչ բռնի, այլևայլ մեթոդներով<sup>556</sup>:

Մուհամմադի անունից կնքված պայմանագրերի ոգուն համահունչ Սեֆյան շահ Սուլեյմանի 1669թ. հրովարտակով հաստատված *ֆաթվայով* արգելվում էր բռնի հավատափոխությունը, մի երևույթ, որը հաճախ էր կիրառվում մահմեդական իշխանությունների կողմից ինչպես Իրան բռնագաղթված հայ ության, այնպես էլ Արևելյան Հայաստանի հայ բնակչության հանդեպ:

Բացի այն, որ *գիմմի* համարվել են ինքնին ենթադրում էր որոշակի իրավական անհավասար կարգավիճակ այլակրոնի համար, ինչպես նաև *ջիզյայի* կամ գլխահարկի և ժամանակի ընթացքում նրա վրա բարդվող հավելյալ գումարների (*թաֆավուլ-ե ջիզյայի*) կանոնավոր վճարում<sup>557</sup>, ժամանակ առ ժամանակ այլակրոնները ենթարկվում էին կրոնական հալածանքների և դառնում մահմեդականների մոլեռանդության ու անհանդուրժողականության զոհը: Երբեմն էլ հավատափոխությունը իրականացնելու համար գործի էին դրվում խոստումները, ինչպես օրինակ շահ Սուլեյան Հուսեյնի օրոք, երբ յուրաքանչյուր ամսվա սկզբին շահի

<sup>556</sup> Հ. Փափագյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական, էջ 85-86:

<sup>557</sup> Հ. Փափագյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական, էջ 87:

մուսուլմանները ազդարարում էր, թե «Նա, ով կընդունի մեր՝ Մահմեդի կրոնը, ինչ խնդրանք, որ ունի, կկատարվի անթերի»<sup>558</sup>:

Վերև արդեն նշել ենք իսլամական իրավագետների տեսակետը *ադդ-ե գիմմի* կամ *գիմմի* պայմանագրի կնքման նպատակների մասին, որը տեղին ենք համարում կրկնել՝ դա «*գիմմիների* շփումն էր մահմեդականների հետ և նրանց ծանոթացումը իսլամական կրոնի բարձր նպատակներին, որպեսզի նրանք լուսավորվելով ընդունեն իսլամը»<sup>559</sup>: Այսպիսով, հենց պայմանագրերով թելադրվող մահմեդականների հանդուրժողականության ու *գիմմիներին* տրված պետական հովանավորության վերջնական նպատակը համարվում էր նրանց մահմեդականացումը:

Ստեփանոս Երեցի հավաստմամբ մահմեդականացած հայերը իրավապես ավելի պաշտպանված էին, քանի որ նրանք կարող էին զրպարտել թե՛ «Այս այրը պարտք է ինձ այսքան դահեկան, ես չկարողացա առնել, դրա համար էլ եկա դեպի Ձեր կրոնը», կամ «Զքավորության պատճառով իմ որդին բազմաթիվ տարիներ ծառայեց այս մեծատունի մոտ, բայց նա չտվեց իմ որդու վարձը, դրա համար եկադեպի ձեր կրոնը» և այդ կերպ դրամ կորզել քրիստոնյաներից<sup>560</sup>:

Գործում էին նաև օրենքներ, որոնք ուղղակի կամ ոչ ուղղակի կերպով ինքնին նպաստում էին այլակրոնների կամ *գիմմիների* մահմեդականացմանը: Օսմանյան կայսրության ընդունված գործող այդ կարգի օրենքներից մեկը վերաբերում էր հայ արհեստավորների անդամակցությանը թուրքական արհեստավորական միավորումներին, որի համար «ենթարկվում էին իսլամական սահմանված ծիսակատարություններին և այդ միջոցով» մահմեդականությունը ընդունելու հարկադրանքին<sup>561</sup>:

Բոլոր մահմեդական իրավագիտական դպրոցների և ուղղությունների (համբալիական, շիա իմամական, շաֆի'ի, մալիքի ու զեյդիե մազհաբներ) իրավագետներն ընդունում են հարիսներում առկա այն տեսակետը, որ այլակրոնը չի կարող ծառանգել մահմեդականի ունեցվածքը<sup>562</sup>: Մինչդեռ այլակրոնից

<sup>558</sup> Ստեփանոս Երեցի, նշվ. աշխ., էջ 152:

<sup>559</sup> اسعد شيخ الاسلامي، احكام وصييت و ارث ذمي از نظر فقهای اسلامي، ص. 143-144:

<sup>560</sup> Ստեփանոս Երեցի, նշվ. աշխ., էջ 152:

<sup>561</sup> St'us S.U. Անասեան, Թուրքական ֆուրուվվաթը եւ հայերը, էջ 583:

<sup>562</sup> اسعد شيخ الاسلامي، احكام وصييت و ارث ذمي از نظر فقهای اسلامي، ص. 164:

մահմեդականի ժառանգությունն ստանալու իրավունքը ժխտում են մահմեդական իրավագիտական դպրոցներից ոչ բոլորը<sup>563</sup>: ժառանգության մասին շիա իմամական մահմեդականների շրջանում գործող օրենքների համաձայն մահմեդականը կարող էր ժառանգել իր այլակրոն անգամ հեռու ազգականի ունեցվածքը՝ զրկելով այդ իրավունքից ավելի մոտ ազգականներին<sup>564</sup>: Իրանում Սեֆյան ժամանակաշրջանում շրջանառության մեջ է դրվում շիա իմամական իսլամի այս օրենքը: Նրա մասին առաջին հիշատակությունը առկա է շահ Թահմասպ Ա-ի հիշրայի 952 թ. (1545 թ.) հրովարտակում, որտեղ նշվում է, որ հայերի մահմեդականացած ազգականները իրավունքներ չեն կարող ունենալ վակֆային կալվածքների նկատմամբ<sup>565</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերից առաջինները, որ բովանդակում են այս օրենքի գործադրության մասին փաստեր, կազմվել են XVII դարի 20-ականների սկզբին<sup>566</sup> և կապվում են շահ Աբբաս Ա-ի անվան հետ: Շահ Աբբաս Ա-ը, չնայած քրիստոնյա և հրեա բնակչության հանդեպ նրա վարած բավական հանդուրժողական քաղաքականությանը, ուներ բարեպաշտ մահմեդականի նկարագիր: Այս առումով հատկանշական են նրա հետինոտն ու խտազնացությունը դեպի Մեշհեդ, ուզբեկների հարձակումների հետևանքով ավերված Ցորդ իմամ Ռեզայի դամբարանի վերանորոգումը և նրա հաճախակի այցելությունները շիական ու խտավայրերը Արդեբիլում, Մեշհեդում, Քարբալայում և Նաջաֆում: Բացի այդ, նա իրեն շարունակում էր համարել Սեֆյան միաբանության առաջնորդ, որը սերում էր Ալիի տոհմից, նաև սերտկապ էր պահպանում մահմեդական հայտնի աստվածաբանների (ուլլամա) հետ<sup>567</sup>: Շահ Աբբասի կողմից իրականացված բռնագաղթերի արդյունքում մայրաքաղաք Սպահանում և նրան հարակից բնակավայրերում քրիստոնյաների քանակը զգալիորեն աճում է, որը չէր կարող չանհանգստացնել մահմեդական հոգևորականությանը և իշխանական օղակներին: Կարծում ենք հենց

<sup>563</sup> اسعد شيخ الاسلامی، احکام وصیت و ارث ذمی از نظر فقهای اسلامی، ص. 166

<sup>564</sup> اسعد شيخ الاسلامی، احکام وصیت و ارث ذمی از نظر فقهای اسلامی، ص. 167-168

<sup>565</sup> Այս հրովարտակը պահվում է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում, նրա բնագիրը տե՛ս հրատարակված՝ 167-168 Վ. Ե. Կարապետյանի «Սպահանի իսլամական հայտնի աստվածաբանների (ուլլամա) հետ» հոդվածում, հրատարակված էր 1997 թ. 16-րդ համարում, 16-17 էջերում:

<sup>566</sup> St 'u 3. Փախազյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 16:

<sup>567</sup> The Cambridge History of Iran, vol. 6, p. 272-3.

այս պատճառով XVII դարի սկզբից Իրանում նոր խթան է ստանում շիական այս օրենքի գործադրությունը, որն ավելի ազդեցիկ էր, քան բռնի հավատափոխությունը, քանի որ վերջինս, ինչպես վերը նշվեց, իսլամի օրենքներով ու Մուհամմադ մարգարեի անունից կնքված այս մանագրերով արգելված էր:

Այդ օրենքի սկզբունքները, մասնավորապես, առկա են Շեյխ Բահալ -Դին Ամելիի (հայտնի է նաև Շեյխ Բահայի անվամբ, մահ. 1621 թ.) կողմից գրված իսլամական իրավագիտությանը վերաբերող «Ջամե'ե Աբբասի» (Աբբասի ժողովածու) աշխատության մեջ, որտեղ նշվում է, որ «մահմեդականը ժառանգում է անհավատի ունեցվածքը և [նրա այդ իրավունքը] անհավատ [ժառանգի իրավունքից] առաջնային է, հեռու լինի [նա], թե մոտիկ»<sup>568</sup>: Վերոհիշյալ իրավագետը շահ Աբբասի օրոք Սպահանում բնակվելով դառնում է շեյխ օլ-իսլամ և իր ժամանակաշրջանի առավել ազդեցիկ շիահոգևորականն էր<sup>569</sup>:

Եվ քանի որ, ինչպես վերև արդեն նշել ենք, մահմեդական իրավագիտության մեջ ցանկացած օրենքի հեղինակությունը վերագրվում էր Աստծուն, որն այն մարդկանց է փոխանցել Մուհամմադ մարգարեի և իմամների միջոցով, ուստի պատահական չէ, որ այն կապվել է նրանց անվան հետ: Չայ ուսումնասիրողներից Տեր Յովհանյանցն այդ օրենքը համարում է «սահմանադրեալ 'ի Մահմեդե»<sup>570</sup>, իսկ Յ. Փափազյանը այն կապում է Իմամ Ջաֆարի անվան հետ<sup>571</sup>: Շիաների վեցերորդ իմամ Ջաֆար Սադեդը իմամներից ամենահեղինակավորն էր և մեծ դեր ուներ շիական ուսմունքի ու իրավագիտության ձևավորման գործում: Նրան էին վերագրվում շիա ուսմունքին վերաբերող բազում արտահայտություններ ու գաղափարներ, նաև աղոթքներ ու քարոզներ<sup>572</sup>: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ մեզ հայտնի չէ այդ իմամի հեղինակած կամ նրան վերագրվող որևէ աշխատություն, որտեղ այդ օրենքը կամ նրամասին նշված է:

Շահ Աբբաս Ա-ի կողմից իր մահից (1629թ.) քիչ առաջ հրապարակվում է մի հրամանագիր, որի համաձայն «յ ուրաքանչյ ուր

<sup>568</sup> بها الدين محمد بن حسين عاملی، جامع عباسی، سنة 1331، ص. 264

<sup>569</sup> Այս մասին մանրամասն տե՛ս The Cambridge History of Iran, vol. 6, p. 667.

<sup>570</sup> Յ. Տեր Յովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 205:

<sup>571</sup> Յ. Փափազյան, Սեֆյան Իրանի սաիմիլյատորական, էջ 87-88:

<sup>572</sup> M.G.S. Hodgson, Djafar al-Sadiq, The Encyclopædia of Islam, vol. 2, p. 375.

քրիստոնյա, որ մահմեդականություն էր ընդունում, իրավունք էր ստանում ժառանգելու իր բոլոր ազգականների ունեցվածքը մինչև յոթ արրտ»<sup>573</sup>: Այդ հրամանագիրը փաստորեն նոր ուժ էր հաղորդում այլակրոնների ժառանգական խնդիրներին վերաբերող այդ օրենքին և փաստացի խրախուսում քրիստոնյաների մահմեդականացումը:

Շահ Աբբաս Ա-ի իշխանության շրջանում այս օրենքի գործադրման և նրա ծանր հետևանքների մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին: Ըստ նրա, Իրան բռնագաղթված հայերից ոմանք մահմեդականություն էին ընդունում, «զիտան կաշառս Մահմետականաց՝ և կացուցանեն սուտ վկայս, և քարշեն գքրիստոնեայս առ դատաւորս Մահմետականս ի դատաստան, և պահանջեն ի քրիստոնեից գոր ինչ և հնարել կարեն», պնդում, թե՝ «ազգական քո եմ, ամենայն ինչք և ստացուածք քո ինձ հասանի, տուր ինձ: Եւ դատաւորքն ըստ անօրէն օրինաց իւրեանց իրաւացուցանեն զբանս ուրացողաց, թէ որովհետև նա եկեալ է յօրէնս Մահմետի, նմա հասանին ամենայն ինչք իւրոց ազգականաց: Եւ այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս՝ յախշտակեալ զամենայն ինչս և տան ուրացողացն»<sup>574</sup>:

Այդ օրենքը հետագայում ևս մեկ անգամ վերահաստատվում է շահ Աբբաս Բ-ի իշխանության (1642-1666 թթ.) շրջանում<sup>575</sup>՝ ավելի սաստկացնելով նրա ազդեցությունը քրիստոնյաների ժառանգության խնդիրներում:

Մեծ թվով պարսկերեն վավերագրեր իրենցից ներկայացնում են *դիվան ալ-սադարաթի* և Երևանի, Նախիջևանի ու այլ վայրերի *շարի'* ատյանների *ֆաթվաներ*՝ հրապարակված հայերի ժառանգական խնդիրներում այս օրենքի գործադրման կապակցությամբ<sup>576</sup>: Վավերագրերի տվյալները հնարավորություն են տալիս նաև պարզելու, որ եթե *զիմմի* ժառանգորդները ևս մահմեդականություն էին ընդունում նախքան ժառանգության բաժանումը, կարող էին վերականգնել իրենց ժառանգական իրավունքը<sup>577</sup>, այնուամենայնիվ «եղբայրներից ավագը լինելով հանդերձ, ավելի ուշ մուսուլման

<sup>573</sup> Այս հրամանագրի մասին տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia vol. I, p. 288.

<sup>574</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 95-6:

<sup>575</sup> A Chronicle of the Carmelites in Persia, vol. I, p. 366.

<sup>576</sup> Չ. Փախազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական, էջ 88:

<sup>577</sup> Նույն տեղում, էջ 91:



դարձածը չէր կարող ավելի վաղ մուսուլման դարձած եղբորից խլել ժառանգության իրավունքը»<sup>578</sup>:

Առանձին դեպքերում ավելի վաղ մահմեդականացած ժառանգներից իրենց ժառանգական իրավունքը պաշտպանելու համար նոր մահմեդականացած հայերը հարկադրված էին լինում որոշակի գումար վճարել: Կաթողիկոսական դիվանի վավերագրերից մեկի համաձայն Օրդուբադի *շարհ'* դատարանում 1694 թ. քննվում է մի խնդիր, որ ծագել էր մի կողմից *ջադիդ օլ-իսլամ* (նոր մահմեդականացած) Մուհամմադ Ամինի գավակներ Շահիջանի ու Արեգու խանումի և մյուս կողմից Ագուլիսի քրիստոնյա Գուլնազարի որդի Խոջա Նահապետի դստեր Թարիֆի միջև վերջինիս հորից նրան հասնող ժառանգության շուրջ: Ըստ այդ փաստաթղթի Թարիֆի որդի Առաքելը մահմեդականություն է ընդունում, որից հետո վճարում է 18 թուման իրեն հասնող ժառանգությունը տնօրինելու համար<sup>579</sup>:

Այս օրենքի կիրառությունը բացահայտ կերպով խրախուսում էր այլակրոնների մահմեդականացումը, որը լայն թափ է ստանում Իրան տեղափոխված հայության շրջանում: Որոշ տվյալների համաձայն այդ հրամանագրի հրապարակումից 15 տարի անց ավելի քան 50000 քրիստոնյա էր մահմեդականացել՝ խուսափելու համար աղքատացումից և ունեզրկումից<sup>580</sup>: Իրանում հայերի մահմեդականացումը շարունակվում է լայն թափով նաև հետագայում: Ստեփանոս Երեցի հավաստմամբ Նադիր շահի իշխանության շրջանում գանգվածային կերպով մահմեդականություն են ընդունում Բուրվառի գավառի Չամըխրիսի, Ջանխոշի, Խմստունի և Շավրավա հայկական չորս գյուղերի բնակիչները, իսկ 1787 թ. տվյալներով այդ նահանգի բոլոր գյուղերը բացի Փահրայից մահմեդականացել էին<sup>581</sup>: Մահմեդականացած հայերի կողմից բարձրացված ժառանգության վեճերի մասին դեպքեր են նկարագրել հայ պատմիչները, մասնավորապես Չաքարիա Ագուլեցին, որի վկայությունը նման վեճի

<sup>578</sup> Զ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 16, էջ 102:

<sup>579</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1107:

<sup>580</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. 1, p. 288.

<sup>581</sup> Ստեփանոս Երեց, նշվ. աշխ., էջ 181:

պատճառով Ղարենց օյմաղին հասցված վնասը գնահատում է 100 թուման<sup>582</sup>: Մահմեդականացած հայերի կողմից հաճախակի էին զրպարտություններն ու մատնություններն իրենց քրիստոնյա ազգականներին հանդեպ<sup>583</sup>:

Յ. Տեր Յովհանյանցի հավաստմամբ XVII դարի երկրորդ կեսին Նոր Ջուղայի հայությունը առավել մեծ վնաս էր պատճառում «անիրավապահանջ ժառանգութիւնը... զի յայնմ ժամանակի զօրացաւ օրէնքն սահմանադրեալ 'ի մահմեդէ, զի զամենայն ստացուածս վախճանեալ ընտանեաց՝ ուրացողին են իրաւունք ժառանգելոյ, անմասն ըստ ամենայնի մնալով օրինաւոր ժառանգաց վախճանելոյն»<sup>584</sup>:

Մեծ թվով հայեր, «կամավոր» մահմեդականություն են ընդունում ազահությունից դրդված կամ էլ մահմեդական դարձած ազգականներից իրենց ժառանգությունը պաշտպանելու նպատակով: Ժառանգության պատճառով տեղի ունեցող հավատախոխության դեպքերը հատկապես շատ էին քաղաքաբնակ ունևոր դասի ներկայացուցիչների՝ առևտրականների ու արհեստավորների շրջանում<sup>585</sup>: Յայ ունևոր դասի ներկայացուցիչներից շատերն էլ չցանկանալով մահմեդականանալ, հեռանում էին Իրանից: Այդ մասին խոսուն վկա է Յայոց կաթողիկոս Աստվածատուր Յամադանցու կոնդակներից մեկը<sup>586</sup>:

Իմամ Ջաֆարի օրենքի կապակցությամբ բազմաթիվ բողոքագրեր ու փաստաթղթեր կան պահպանված<sup>587</sup>: Վավերագրական նյութերում ու այլ աղբյուրներում քիչ չեն նաև տեղեկություններն այն մասին, որ մահմեդականացած հայերը կամ պարզապես մահմեդականներից ոմանք ջանացել են տեր դառնալ իրենց հետորևէ ազգակցական կապ չունեցող անձանց ժառանգությունը<sup>588</sup>:

Իմամ Ջաֆարի օրենքը հավասարապես կիրառվում էր ինչպես Յայ Առաքելական եկեղեցու հետևորդների, այնպես էլ

<sup>582</sup> Չաքարիա Ազուլեցու որագրությունը, Երևան, Էջ 146:

<sup>583</sup> Յ. Տեր Յովհանեանց, նշվ. աշխ., հ. Ա, Էջ 204:

<sup>584</sup> Յ. Տեր Յովհանեանց, նշվ. աշխ., հ. Ա, Էջ 205, 230:

<sup>585</sup> Այս մասին տե՛ս Յ. Փախազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյացիայի պատմություն, Էջ 92:

<sup>586</sup> Մ. Կարապետյան, Իմամ Ջաֆարի օրենքը և արևելահայերը, «Պատմաբանասիրական հանդես», 1988, թիվ 1, Էջ 220:

<sup>587</sup> Յ. Փախազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյացիայի պատմություն, Էջ 87-88:

<sup>588</sup> Բ. Կոստիկյան, Իրավաբանական, պրակ Գ, վավ. 18: Նման մի դեպք է նկարագրում է Չաքարիա Բանաբեռնցին (Չաքարեայ Սարկա ազգի պատմագրություն, հ. Ա, Էջ 71-74):

կաթուղի կացած հայերի ժառանգության հարցերում: Կաթուղի կ հայրերի զեկուցումներում հստակ ուրվագծվում են այս օրենքի ծանր հետևանքները Նախիջևանի հայ կաթուղիկական գյուղերում տեղի ունեցող էթնոդավանական գործընթացներում<sup>589</sup>: Պատահական չէ, որ այդ առթիվ իր բողոքն է ժամանակին արտահայտել Զոմմի Պապ Ալեքսանդր VII-ը շահ Աբբաս Բ-ին ուղղված իր ուղերձում<sup>590</sup>:

Բնականաբար, այդ օրենքի գործադրումը չէր կարող չմտահոգել Զայ Եկեղեցու առաջնորդներին: Պատահական չէ, որ նրանք ջանում էին ձեռքբերել այդ օրենքի դեմ, կամ նրա ուժը թուլացնող շահական հրամանագրեր: Սեֆյան պետության անկման շրջանում հայոց կաթողիկոսներ Աստվածատուր Ա Յամադանցուն և Աբրահամ Բխշաբեցուն հաջողվում է Իրանի շահ Թահմասպ-ի-ց, որի իշխանությունն ավելի շատ ձևական բնույթ էր կրում, այս հարցի վերաբերյալ ձեռքբերել հայ քրիստոնյաների շահերը պաշտպանող հրովարտակներ: Մասնավորապես, շահ Թահմասպ Բ-ի 1724թ. հրամանագրով մի շարք դատական ու վարչական առյաններում իրենց իրավունքները հաստատելուց հետո միայն նոր մահմեդականացած հայերին իրավունք էր տրվում հավակնել իրենց ազգականների ունեցվածքին<sup>591</sup>: Նույն շահի 1731թ. հրովարտակը<sup>592</sup> հրահանգում էր Չուխուր Սա'ադի կառավարչին արգելել նոր մահմեդականացած հայերին ժառանգության վեճ սկսել իրենց հարազատների հետ: Փաստորեն, այն ընդհանրապես արգելում էր Իմամ Ջա'ֆարի օրենքի կիրառությունը հայերի ժառանգական խնդիրներում: Աբրահամ Կրետացի կաթողիկոսը ևս, իր հավաստմամբ, 1735 թ. Նադիր շահից ձեռք է բերում հրովարտակ «զի թուրքացողին ի հայրենյաց գրկեսցեն»<sup>593</sup>: 1740 թ. Ղազար Ջահկեցի կաթողիկոսին հաջողվում է ձեռքբերել նույնաբովանդակ հրամանագիր Իրանի փոխարքա Ռեզա Ղուլի Միրզայից, որը կառավարում էր երկիրը իր հոր՝ Նադիր շահի դեպի Զնդկաստան իրականացրած արշավանքի շրջանում<sup>594</sup>: Կարևոր համարելով նշված խնդրի լուծումը հայ ժողովրդի համար՝ Ղազար

<sup>589</sup> Մ. Կարապետյան, Զայ կաթողիկե թեմը եւ էթնոդավանական գործընթացները, էջ 8-10:

<sup>590</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. 1, p. 366.

<sup>591</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 86:

<sup>592</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 89:

<sup>593</sup> Աբրահամ Կրետացի, նշվ. աշխ., էջ 52:

<sup>594</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 16:

կաթողիկոսը նույն բովանդակությամբ հրովարտակ է ձեռքբերում նաև Նադիրին հաջորդած Իբրահիմ շահից 1748թ.<sup>595</sup>:

Յայոց կաթողիկոսների ջանքերը իմամ Ջաֆարի օրենքի ազդեցությունը չեզոքացնելու ուղղությամբ որոշ չափով մեղմում են նրա ծանր հետևանքները մահմեդական տիրապետության տակ գտնվող հայերի համար: Թեև փաստեր կան այդ օրենքի կիրառման մասին նաև Երևանի խանություն շրջանում (XVIII դարի երկրորդ XIX), բայց ինչպես երևում է պարսկերեն վավերագրերի տվյալներից, դրանք հազվադեպ էին և երբեմն, ինչպես օրինակ Երևանի շարի՝ դատարանի 1761 թ. որոշումը ներկայացնող փաստաթղթում<sup>596</sup>, վեճը թեթև տուգանքներով լուծվում էր հօգուտ քրիստոնյա ժառանգի: Այս օրենքի չեզոքացման լուրջ փորձ է կատարվում XIX դարի սկզբին Յարավային Կովկասում ռուս-իրանական հակամարտության շրջանում: Նպատակ ունենալով սիրաշահել հիմնականում ռուսական կողմնորոշում ունեցող հայությանը՝ թագաժառանգ Աբբաս Միրզան 1825 թ. հրապարակում է մի հրամանագիր, որով հայ *զիմմիների* ժառանգական իրավունքները փաստացի կերպով հավասարվում էին նոր-մահմեդականացած ժառանգների իրավունքներին<sup>597</sup>: Յենվելով այս հրամանագրի վրա՝ հետագայում հրապարակվում է Ղաջար Նասրեդդին շահի 1848 թ. հրամանագիրը, որով հայերից նրանք, ովքեր մահմեդականություն են ընդունում, զրկվում են թե՛ իրենց հայրական ժառանգությունից և թե՛ ընդհանրապես իրենց հարազատներից որևէ մեկից ժառանգություն ստանալու իրավունքից<sup>598</sup>:

Այդուհանդերձ հիշյալ օրենքը Իրանում գործում էր նաև Ղաջարական ժամանակաշրջանում՝ շարունակելով նպաստել քրիստոնյաների մահմեդականացմանը և ասիմիլյացիային: Այդ մասին փաստում է, մասնավորապես XIX դարի կեսին Նոր Ջուղայացելած անգլիացի պաշտոնյա Բիննինգը՝ վկայելով քաղաքի հայության խեղճության ու փոքրաքանակ լինելու մասին<sup>599</sup>: Չնայած վերոհիշյալ հրամանագրերի հրապարակմանը, Իրանի բարձրաստիճան

<sup>595</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 28:

<sup>596</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 437:

<sup>597</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 144:

<sup>598</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 51:

<sup>599</sup> R. Binning, A Journal of Two Years' travel in Persia, Ceylon, etc. vol. II, London, 1857, p. 80.

հոգևորականությունը, որի ձեռքում էր քաղաքացիական շատ խնդիրների, այդ թվում նաև ժառանգական հարցերի քննությունը, շարունակում էր նշված օրենքի գործադրումը հայերի ժառանգության խնդիրներում<sup>600</sup>:

Հայերն այդ օրենքի գործադրմանը փորձում էին հակադդել նաև Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անունից քրիստոնյաների հետ կնքված հրովարտակ-պայմանագրերով: Մի այդպիսի դեպք է նկարագրում Յ. Տեր-Յովհանյանը, որը տեղի է ունեցել XIX դարի կեսերին: Ըստ նրա, Նոր Ջուղայեցի պարոն Մնացականի մահից հետո վերջինիս ունեցվածքը ժառանգում է նրա հեռավոր ազգական ոմն Դուլաբի Խաթուն, որը մահմեդականացել էր, հակառակ այն հանգամանքին, որ տեղի մահմեդական հոգևոր առաջնորդին հայ հոգևորականների միջնորդությամբ ներկայացվել էր «զթուղթն՝ գորմե ասեն ձեռագիր գուլ Մահմեդի, որոյ նիւթ է չնեղել զՀայսայլ ամենայնիւ պատուել զնոսա...»<sup>601</sup>: Ինչպես երևում է այս վկայությունից, Իմամ Ջաֆարի օրենքը ավելի ազդեցիկ էր, քան Մուհամմադ մարգարեին վերագրվող հրովարտակ-պայմանագիրը, որով ինչպես նախորդ գլխում այդ մասին նշվեց, հաստատվում էր նրանց կյանքի ու գույքի անձեռնմխելիությունը: Եվ քանի որ դատական իշխանությունն Իրանում գտնվում էր հոգևորականների ձեռքում, այդ հարցի կապակցությամբ հրապարակված հայերի համար նպաստավոր շահական հրամանագրերը ևս, փաստորեն, այդ խնդրին լուծում չէին տալիս:

Այդ օրենքի գործառույթը Յ. Տեր-Յովհանյանը համարում է Նոր Ջուղայի հայ համայնքի անկման պատճառներից մեկը: Նրա դիտարկմամբ այդ օրենքի ծանր հետևանքները Իրանում սաստկանում են հատկապես շահ Սուլթան Յուսեյնի իշխանության տարիներին և այն շարունակում էր գործել մինչև հեղինակի ժամանակները: Նրա հավաստմամբ թեև «քաղաքական կառավարությունն ընդդեմ այնմիկ օրինի, ոյր վասն ըստբողոքելոյ Հայոց՝ տուեալ կան հրովարտակք և հրամանաթուղթք զի մի ներգործութիւն ունիցի այն օրենք, այլ պաշտպանութիւն դենպէտաց զօրաւոր առնէ զուրացողսն»<sup>602</sup>:

<sup>600</sup> Յ. Տեր Յովհանեանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 209:

<sup>601</sup> Յ. Տեր-Յովհանեանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 453:

<sup>602</sup> Յ. Տեր-Յովհանեանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 366:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ միայն եկեղեցական վակֆային կալվածքներն էին պաշտպանված նոր մահմեդականացած ժառանգների ոտնձգություններից, քանի որ նրանք տեսականորեն համարվում էին անձեռնմխելի ու որևէ կերպ օտարման ենթակա չէին<sup>603</sup>: Ճիշտ է, նման հավակնություններ հիշյալ կալվածքների նկատմամբ նոր մահմեդականացած ժառանգները ունեցել են, սակայն *շարի*' դատական ատյանները որպես կանոն դրանք մերժել են: Մասնավորապես, Սեֆյան պետության մահմեդական հոգևորականության բարձրագույն դատական ատյանի 1658 և 1684 թթ. որոշումներում մերժվում են նրանց հայցերը էջմիածնին փոխանցված վակֆային կալվածքների նկատմամբ<sup>604</sup>: Դեռևս 1658թ. Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ջանքերով հրապարակվում է մահմեդական աստվածաբանների ու իրավագետների կայացրած վճիռը հաստատող շահ Աբբաս Բ-ի հրամանագիրը, որի համաձայն էջմիածնին հանձնված *վակֆերի* հասույթը նրա տնօրինության տակ է գտնվում, և նրա նկատմամբ նվիրատուների ժառանգները, լինեն նրանք քրիստոնյա կամ նոր մահմեդական, իրավունքներ չունեն<sup>605</sup>: Այս *ֆաթվայով* փաստորեն շեշտվում էր *վակֆերի* անձեռնմխելիությունը՝ պաշտպանելով դրանք նախկին նվիրատուների մահմեդականացած ժառանգների հավակնություններից:

Էջմիածնի վակֆերի նկատմամբ նոր մահմեդականացած ժառանգների հավակնությունները չէին բավարարվում նաև Երևանի խանության շրջանում, ինչպես օրինակ Երևանի Յուսեյն Ալի խանի 1760 թ. հրամանագրում, որի համաձայն այն պետք է մնար վանքի տնօրինության տակ<sup>606</sup>:

Այս օրենքի վնասներից և ունեզրկումից իրենց ժառանգներին պաշտպանելու ուղիներից մեկն էլ, ըստ Տեր Յովհանյանցի, դրանք պարգևագրով (սուլհնամե - صلح نامه) իր զավակներին փոխանցելն էր, որից հետո «ուրացեալ ընտանին զկնի մահուանն նորա ոչ կարէ

<sup>603</sup> Յ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 120:  
<sup>604</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1068, թղթ. 1բ, վավ. 181 (այդ վավերագիրը տե՛ս նաև Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 51):  
<sup>605</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1068:  
<sup>606</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 427:

առնել զպահանջ ինչ»<sup>607</sup>: Նման սուլ հնամեի կնքման մասին նշում կա հայ ազգային-ազատագրական ու հոգևոր-եկեղեցական գործիչ Յովհաննես Թուրունջիի կողմից 1669 թ. գրված կտակում<sup>608</sup>, որով թերևս նա փորձել է ապահովել իր ունեցվածքը ազամեմեդականացած ազգականների ոտնձգություներից՝ այդ կերպ փոխանցելով այն իր կնոջը՝ Դադեամին:

Փաստորեն, այս օրենքից պաշտպանվելու միակ ճանապարհը նվիրատվությունն էր, որը կարող էր արվել օրինական ժառանգներին *սուլ հնամեի* միջոցով կամ *վակֆի* ձևով՝ եկեղեցուն հանձնելով ունեցվածքը<sup>609</sup>:

Առանձին դեպքերում իրենց ունեցվածքը մահմեդականացած հայերի հավակնություններից պաշտպանելու համար հայ մեծահարուստները նաև զանազան այլ ուղիներ էին գտնում: Նման մի դեպք է նկարագրում Եղիա Կարնեցին: Ըստ նրա, ջուղայեցի Շիրիմանյանների Թավրիզում գտնվող բաղնիքը նրանց մահմեդականացած ազգական Մեհրալիի ձեռքից կարողանում են ազատել մի քանի մեծահարուստ ջուղայեցիների հետ կեղծ վկայագիր կազմելով այն մասին, թե իբր այդ բաղնիքը նրա վեքիլ Անդրիասի կողմից պարտքի դիմաց գրավ է դրված եղել պատրի Պիղատոսի մոտ<sup>610</sup>:

Այսպիսով, ուսումնասիրվող վավերագրերի ու այլ աղբյուրների տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անուններից քրիստոնյաների և մասնավորապես հայերի հետ կնքված պայմանագրերը, նաև Յայոց եկեղեցու առաջնորդներին տրված շահական հրովարտակները հիմնականում պաշտպանում էին մահմեդական տիրապետության տակ ապրող հայության իրավունքներն ու կրոնական ազատությունները, ապա այլակրոնների ժառանգության հարցերում գործող այսպես կոչված Իմամ Ջաֆարի օրենքն, ընդհակառակը, անհավասար ու անշահեկան պայմանների մեջ էր դնում նրանց մահմեդականների

<sup>607</sup> Յ. Տեր Յովհաննես, նշվ. աշխ., հ. Ա, էջ 209:

<sup>608</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 25:

<sup>609</sup> Յ. Տեր Յովհաննես, նշվ. աշխ., հ. Ա, էջ 367:

<sup>610</sup> Եղիա Կարնեցի, նշվ. աշխ., էջ 292-3:

համեմատության ամբ` դրդելով հայ-քրիստոնյաներին  
հավատափոխության ու ասիմիլյացիայի:

### **Բնակավայրը փոխելու նվերաբերող օրենքը**

Բացի *զիմմիների* կարգավիճակին համապատասխանող իրավունքներն ու պարտականությունները, իրանահպատակ հայության կյանքը կարգավորում էին նաև իրանի բուրձ *ռայ աթների* համար XVII-XIX դարերում գործող որոշ օրենքներ, որոնք իրենց արտացոլումն են գտել Մատենադարանի պարսկերեն վավերագրերում:

Այդ օրենքներից էր *ռայ աթների* տեղաշարժման հարցերին վերաբերող օրենքը: Թեև շահը կարող էր առանց որևէ մեկի հետ հաշվի նստելու տեղափոխել իր հպատակներին երկրի մի շրջանից մյուսը, կազմակերպել առանձին շրջանների բնակչության զանգվածային տարահանումներ ու բռնագաղթեր, որպիսիք բազմիցս հիշատակում են թե՛ Սեֆյան և թե՛ հետագա ժամանակաշրջանի աղբյուրները (բավական է հիշել շահ Աբբաս Ա-ի, Նադիր շահի կողմից իրականացված Կովկասի թե՛ հայ, թե՛ վրացի բնակչության, նաև մահմեդական ցեղերի բազմակի բռնագաղթերը), այնուամենայնիվ որպես կանոն նստակյաց գյուղացիությունը ամրացված էր իր բնակչության վայրին ու նրա սեփականատերերին: Նրանք ազատ տեղաշարժման իրավունք չունեին և պարտավոր էին տվյալ վայրում վարուցանք անել ու ապրել<sup>611</sup>:

Այնուամենայնիվ, ինչ-ինչ պատճառով, մասնավորապես պատերազմների ժամանակ գյուղացիները փախչում էին իրենց բնակավայրերից, և հաճախ որոշ ժամանակ անց վերադառնում էին, կամ հաստատվում նոր վայրում: Այս երևույթի մասին տեղեկությունները ցրված են տարբեր աղբյուրներում, այդ թվում նաև պարսկերեն վավերագրերում<sup>612</sup>: Նստակյաց հողագործների տեղափոխությանը վերաբերող հարցերը ևս կարգավորվում էին շահական հրովարտական երգով:

611 فلور و.، تاريخچه مالی – مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ص. 25 .

612 Թ. Կոստիկյան, հրովարտական երգ, արակ Դ, վավ. 4, էջ 28:



Սեֆյան ժամանակաշրջանում շահ Սուլթան Յուսեյնի հրովարտակներում<sup>613</sup> արձանագրված կարգի համաձայն *նայ աթները*, որոնք 12 տարվանից ավելի էին բնակվել որևէ վայրում, չպետք է հեռացվեին այնտեղից և ընդհակառակը, եթե 12 տարին դեռ չէր լրացել, ապա նրանց կարող էին վերադարձնել նախկին բնակավայրը: Յրովարտակներից մեկը հրապարակվել է 1698/9 թ. Սավարի (Սվարանց) գյուղի բնակիչ քրիստոնյա Աղամի խնդրանքով, որը նշում է, որ նախկինում բնակվել է Դարաբազ (Աղվերձ) գյուղում, իսկ այժմ բավական ժամանակ է ինչ Սավարի գյուղում է՝ վճարելով այնտեղի *մալ* և *թաֆավուլ-ե ջիզյա* հարկերը: Յրամանագրում նշվում է, որ եթե 12 տարուց ավելի է, ինչ տեղափոխվել ու բնակվում է այլ վայրում՝ վճարելով այնտեղի հարկերը, ապա չպետք է նրան նեղություն պատճառեն, եթե՝ ոչ, ապա պետք է վերադառնա իր նախկին բնակավայրը և այդ կապակցությամբ հրահանգվում է Ատրպատականի *վեզիրին* պարզել իրողությունը<sup>614</sup>: Մյուս հրովարտակը, որ հրապարակվել է 1710 թ., հրահանգում է Չուխուր Սաֆիի կառավարչին Դարաբազից Աստապատ գյուղը տեղափոխված 15 հայ ընտանիքներին ետ վերադարձնել իրենց նախկին բնակավայրը (Դարաբազ), որովհետև նրանց արտագաղթից հետո 12 տարի դեռևս չէր անցել, և համաձայն իսլամի օրենքների, միայն այդքան ժամանակ անցնելուց հետո արտագաղթողները իրավունք ունեն մնալ ու իրենց նոր բնակության վայրում<sup>615</sup>:

Նադիր շահի իշխանության շրջանում այդ ժամկետը երկարացվում է: Ինչպես հայտնի է դառնում Նադիր շահի 1740 թ. հրովարտակի բովանդակությունից<sup>616</sup> հաստատված նոր կարգի և հրապարակված «վճռորոշ հրովարտակի համաձայն այն անձիք, որոնք 18 տարի որևէ տեղ բնակվել են, ազատվում են հեռանալու հարկադրանքից», այսինքն՝ այդ տարիների քանակը պետք է գերազանցեր 18 տարին, որպեսզի այլևս նրանց ետ դարձնելու իրավունք չլիներ: Այդ հրովարտակում մատնանշվում է նաև այն

<sup>613</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1110; թղթ. 1գ, վավ. 234 (այս վավերագիրը տե՛ս նաև հրատարակված Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 72): Այս հարցի մասին մանրամասն տե՛ս նաև Ա. Դ. Папазян, նշվ. աշխ., էջ 210-4:

<sup>614</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1110:

<sup>615</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 72:

<sup>616</sup> Ք. Կոստիկյան, Նոր Ջուղան Իրանի Նադիր շահի իշխանության շրջանում, Յանդե սամսօրեայ, Վիեննա-Երևան, 2016, թիվ 1-12, վավ. 3, էջ 287-288:

իրողությունը, որ պաշտոնյաների կամայականությունները այն աստիճանի էին հասնում, որ արտագաղթելու պահանջներ էին ներկայացվում նաև 30, 40 և 50 տարի Նոր Ջուղայում բնակվող արհեստավորներին և առևտրականներին, առանց հաշվի առնելու նրանց սոցիալական զբաղմունքները՝ այդ պատրվակով դրամ կորզելու համար:

Նադիրի իշխանության շրջանում այդ օրենքը ճկուն էր և անհրաժեշտության դեպքում փոփոխվում էր պայմաններին ու իրանի տիրակալի կամքին համապատասխան: Պահպանված այլ վավերագրերի տվյալների համաձայն<sup>617</sup> այդ ժամկետը երկարացվել էր ևս երկու տարով՝ այսինքն միայն նրանք, ովքեր բնակվում էին Նոր Ջուղայում 20 տարվանից ավելի, ենթակա չէին հեռացման: Այդ նշանակում էր, որ հեռանալու պահանջներից չէին ազատվում աֆղանների կողմից Սպահանի գրավումից հետո (1722 թ.) այնտեղ հաստատված հայերը:

Ինչպես տեսնում ենք, Մուհամմադ մարգարեի անունից կնքված պայմանագրերում հայ զիմմիներին վերաբերող իրավական ձևակերպումները, նաև ընդհանրապես իրանական պետությանը հպատակ մահմեդական բնակչությանը ևս վերաբերող որոշ այլ օրենքներ արտացոլվել են Մատենադարանի XVII- XIX դարերի պարսկերեն վավերագրերում: Պարսկերեն վավերագրերի տվյալները որոշ կոնկրետացում են մտցնում այդ հարցերի մանրամասներում և հնարավորություն են տալիս հանգամանալից քննել և լուսաբանել իրանական տիրապետության տակ ապրող հայության իրավունքներն ու պարտավորությունները, այդ իրավունքների պաշտպանության ճանապարհները և միջոցները: Քննվող վավերագրերի տվյալներն օգնում են պարզաբանումներ կատարել զիմմիների ժառանգական իրավունքին վերաբերող շիա իսլամի իմամ Ջաֆարին վերագրվող օրենքի նրբություններում, որոշել նրա շրջանառության դրվելու ժամանակը, պատճառները, հայության համար կործանարար հետևանքները և նրա դեմ Յայոց եկեղեցու առաջնորդների ձեռնարկած քայլերը:

<sup>617</sup> Բ. Կոստիկյան, Նոր Ջուղան իրանի Նադիր շահի իշխանության շրջանում, վավ. 4, էջ 290:

## **2.3 Հայ ոց Եկեղեցու իրավաքաղաքական ու սոցիալ -տնտեսական դրու թյ ան հարցերն ըստդիտարկվող ժամանակաշ ռջ անի պարսկերեն վավերագրերի**

Պետու թյ ան բացակայ ու թյ ան պայ մաններում Հայ ոց Եկեղեցու , որպես մահմեդական իշխանու թյ ու նների տիրապետու թյ ան տակ գտնվող հայ ժողովրդի իրավունքների ու շահերի պաշտպանի դերը մեծապես կախված էր նրա տնտեսական դրու թյ ու նից, որի կայ ու նու թյ ու նն ու բարվոք վիճակը կարևոր նախապայ ման էր շահական արքունիքի հետ հարաբերու թյ ու նները կարգավորել ու հարցում:

Մատենադարանի XVII-XIX դարերի պարսկերեն վավերագրերի տվյալները օգնում են որոշ պարզաբանումներ կատարել այդ շրջանում Հայ ոց Եկեղեցու իրավաքաղաքական ու սոցիալ -տնտեսական դրու թյ ան մանրամասներում:

### **Էջմիածնի կալ վածքներն ու հարկայ ին արտու թյ ու նները**

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը դարեր շարունակ ու նեցել է մեծ թվով կալ վածքներ, որոնք ձեռքբերել ով նվիրատվու թյ ու նների ու գնման ճանապարհով, հոգ է տարել նրանց նկատմամբ իր իրավունքների պաշտպանու թյ ան մասին: Իրավական տեսանկյ ու նից ինչպես վերն արդեն նշել ենք, առավել պաշտպանված էին *վակֆերը*: Ուստի ձեռքբերված կալ վածքները հաճախամրացվում էին *վակֆայ ին* նվիրատվու թյ ան ձևով:

Կարա-Կոյ ու նլ ու ների և Ակ-Կոյ ու նլ ու ների մահմեդական իշխանու թյ ու նները հետևողականորեն իրականացնում էին հայ ազնվականների հողայ ին սեփականու թյ ան վերացման քաղաքականու թյ ու ն: Դա կատարվում էր ոչ այնքան ռազմական բախումների ժամանակ, որքան կրոնական անհանդուրժողականու թյ ան, հայ ազնվականների ոչնչացման ու նրանց հողերի բռնագրավման միջոցով, որը թուրքլատրում էր *բեյթ ու լլ -մալ ի* հաստատու թյ ու նը՝ հենվել ով *շարի'աթական* նորմերի

վրա<sup>618</sup>: Հայ հողատերերի ունեցվածքը նման ոտնձգության ունենեց  
պաշտպանելու միջոցներից մեկն է դառնում դրանց փոխանցումը  
հայոց վանքերին ու հայ ազնվականական տոհմերի  
ներկայացուցիչների անցումը հայ հոգևորականների շարքը,  
ինչպես դա կատարվում է Գանձասարի կաթողիկոսության հետ, որի  
կաթողիկոսները XIV դարից նշանավոր իշխանական Հասան-Ջալալյան  
տոհմի ներկայացուցիչներն էին և Տաթևի եպիսկոպոսության հետ,  
որը գլխավորում էին Օրբելյան իշխանական տան ժառանգները և  
այլն<sup>619</sup>:

Հայ ազնվականության ձեռքից *բեյթ ուլլ-մալի* կողմից  
բռնագրավված որոշ կալվածքներ հաջողվում է ետ վերադարձնել`  
վերածելով դրանք եկեղեցական կալվածքների<sup>620</sup>: Այդպես, 1431թ.  
Գրիգոր Մակվեցի կաթողիկոսի կողմից Էջմիածնի համար գնվել էին  
Վաղարշապատ, Աշտարակ, Բաթռինջ, Նորագավիթ, Աղավնատուն,  
Թեղենիս-Քիրաջլու և Մուղնի գյուղերի վեցական դանգ *մուլլ բերը*<sup>621</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալների հիման  
վրա հնարավոր է վերականգնել Էջմիածնի կալվածքների գնման ու  
վաճառման, նրանց շուրջ տեղի ունեցած վեճերի մանրամասն  
պատմությունը: 1585թ. Մայր Աթոռը ձեռք է բերում Դիբաբլու  
գյուղը<sup>622</sup>: Փլիխարս կաթողիկոսի օրոք Էջմիածինը շարունակում է  
ձեռքբերել գանձագին *մուլլ բեր*<sup>623</sup>, մի գործառույթ, որը հետագայում  
շարունակվում է Հակոբ Ջուղայեցի ու մյուս կաթողիկոսների  
աթոռակալության տարիներին: XVII դարում Փլիխարս Աղբակեցի,  
Հակոբ Ջուղայեցի ու մյուս կաթողիկոսների կողմից Էջմիածնի  
համար մաս-մաս գնվում է Օջական գյուղը<sup>624</sup>: Պահպանվել են Մաստարա  
գյուղի գնման ու Էջմիածնին *վալյֆ* արվելու կապակցությամբ  
կազմված կալվածագրերը` թվագրված 1656, 1657, 1709 և 1719  
թվականներով<sup>625</sup>: Ֆրանկանոց գյուղը ևս ամբողջովին գնվել է Հակոբ

<sup>618</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Папазян, նշվ. աշխ., էջ 64-80.

<sup>619</sup> Ա. Папазян, նշվ. աշխ., էջ 130:

<sup>620</sup> Ա. Папазян, նշվ. աշխ., էջ 71-75:

<sup>621</sup> Հ. Փախազյան, կալվածագրեր, Երևան, 1968, վավ. 5:

<sup>622</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 166:

<sup>623</sup> Հ. Փախազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 40:

<sup>624</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 61ա, բ, 64, 65ա, 66, 70, 74, 100, 101;  
թղթ. 1բ, վավ. 123, 160, 176:

<sup>625</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 947, 948, 950, 951:

Ջուղայ եցի կաթողիկոսի կողմից 1655թ<sup>626</sup>: Նույն կաթողիկոսի կողմից գնվում են 1660 թ. Կարբիի Ջաշոմլու <sup>627</sup> գյուղի 6 դանգերը և վակֆ արվում էջմիածնին<sup>628</sup>:

1661 թ. Յակոբ Ջուղայ եցին Չուխուր Սաադի նախկին քալ անթար Իսհակ անունով հայտնի Խոջա Սահակից 30 թումանով գնում է Դարաչիչակի (Ճաղկաձորի) Յայջի գյուղի վեց դանգը, Գեղարքունիքի Ամիրքենդի (կամ Ամիրի) գյուղի 4,5 դանգը, Դարաքենդում (Ձորագեղում) Չանգի գետի ափին գտնվող մեկ քար ջրաղացը, Նորագեղում գտնվող մեկ տունը<sup>629</sup>:

Յակոբ կաթողիկոսը 1664 թ. 2 թումանով գնում է Ապարանի Մելիքի գյուղի բոլոր 6 դանգերը<sup>630</sup>, 1675 թ.՝ 55 թումանով գնում է Նորք (Չուլմաքչի) գյուղի 6 դանգերը<sup>631</sup>:

XVII դարում ընդհանուր առմամբ 23 գյուղ է հիշվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալվածքների թվում, որոնց մի մասը, սակայն, վանքը Յակոբ Ջուղայ եցի կաթողիկոսի մահից հետո կորցնում է<sup>632</sup>: Դատեղի է ունենում Էջմիածնի պարտքերի դիմաց նրա կալվածքների գրավադրման<sup>633</sup>, ինչպես նաև Մայր Աթոռի կալվածքների, այդ թվում նաև *վակֆերի* նկատմամբ պարտատերերի կատարած ոտնձգությունների արդյունքում: Այդ խնդրի կապակցությամբ Էջմիածնի միաբանները դեռևս 1680 թ. դիմել էին շահ Սուլեյմանին և ձեռքբերել այդ ոտնձգություններն արգելող նրա հրովարտակը<sup>634</sup>: Յրովարտակին կցված խնդրագրում նշվում էր. «Փոքրաթիվ *մուլլեր*, այգիներ ու աղացներ [ուսենք], որոնց մի մասը վանքի *վակֆ* է, մի մասն էլ թշվառներիս ու վանքի սպասավորների կողմից կանխիկ դրամով գնված կալվածքներն ու նրանց սեփականություն են: Երևանի նախկին բեկլարբեկ հանգուցյալ Սեֆի Ղուլի խանը... մի խումբ խարդախների կողմից կաշառվելով, թշվառներիս *մուլլերի*,

<sup>626</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 158:

<sup>627</sup> Սաքստերևույթին Սիմեոն Երևանցին նշած ծոմլու գյուղն էր, որը գտնվում է Վաղարշ ապարտի մոտ (Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 215):

<sup>628</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1073:

<sup>629</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1076:

<sup>630</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1080:

<sup>631</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1089:

<sup>632</sup> Յ. Փափազյան, Վանական կալվածքների սեփականատիրական մի քանի առանձնահատկություններ, Բանբեր Մատենադարանի, № 10, Երևան, 1971, էջ 243:

<sup>633</sup> Ա. Папазян, նշվ. աշխ., էջ 118-120:

<sup>634</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 46:

այ գիների ու աղացների, նաև Ուչքիլիսայի *վակֆերի* մի մասը ապրիկնաբար, առանց *շարի*՝ հաստատման, իվել ու տվել է նրանց»: Այս առթիվ տեղին է նշել նաև, որ ընդհանրապես XVII դարի երկրորդ կեսում Արևելյան Հայաստանի վանքերի կալվածքների նկատմամբ հաճախի էին ոտնձգությունները: Դասկներն է հատկապես Տաթևի վանքի օրինակով, որի կալվածքների նկատմամբ ոտնձգությունների մասին փաստող հրովարտակները մեծ թիվ են կազմում, իսկ մի քանիսում նշվում են նաև *վակֆային* կալվածքների յուրացման փաստեր<sup>635</sup>:

Ինչպես ցույց են տալիս փաստաթղթերի նյութերը, Էջմիածնի կալվածքների պաշտպանության նպատակով հետագայում ևս կարիք է լինում դիմել Սեֆյան շահի՝ այս անգամ Սուլթան Հուսեյնի հրամանին, և 1712 թ. Ալեքսանդր կաթողիկոսի ջանքերով ձեռք են բերվում հրովարտակներ, որոնք արգելում են ոտնձգությունները Մայր Աթոռի կալվածքների, այդ թվում նաև *վակֆային* սեփականության նկատմամբ<sup>636</sup>:

Վաղարշապատ գյուղի 1725թ. հարկացուցակից, որտեղ թվարկված են նաև հարկերից ազատվող վանքապատկան կալվածքներն ու այլ ստացվածքները, պարզվում է, որ այդ թվականներին Էջմիածնին էին պատկանում միայն Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Քիրաջլու և Ֆրանկանոց գյուղերը<sup>637</sup>:

Նադիր շահի օրոք 1735թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսին հաջողվում է շահական հրովարտակով ամրագրել Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրաջլու, Դիբաբլու և Չալաբիքենդ գյուղերի պատկանելությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին<sup>638</sup>: Սակայն արդեն Իբրահիմ շահից 1748թ. Ղազար կաթողիկոսի ձեռքբերած հրովարտակի համաձայն Մայր Աթոռին էին պատկանում միայն Վաղարշապատ, Օշական, Ֆրանկանոց ու Մաստարա գյուղերը<sup>639</sup>:

Ինչպես նշում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, հետագայում Մայր Աթոռ Ս. Էջմիածնից իվվում են նաև Օշական և Ֆրանկանոց

<sup>635</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 24, 52, 53:

<sup>636</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 78, 81:

<sup>637</sup> Հ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 – 1728 թթ. թուրքական հարկացուցակները, Բանբեր Մատենադարանի, № 5, Երևան, 1960, էջ 453:

<sup>638</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 8:

<sup>639</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթապանակ 1գ, վավ. 398ա:

գյուղերը, որոնք սակայն հիշյալ կաթողիկոսը կարողանում է վերադարձնել: Բացի այդ, Գրիգոր Մակվեցի կաթողիկոսի *վակֆնամեի* հիման վրա Սիմեոն Երևանցին ետ է վերադարձնում նաև Աշտարակ, Եղվարդ, Մուղնի և Աղավնատուն գյուղերը՝ ամրապնդելով նրանց պատկանելությունը Մայր Աթոռին Երևանի Յուսեյն Ալիխանի, *շեյխու* *ուլլ-իսլամի* ու այլ պաշտոնյաների կողմից ստորագրված ու կնքված փաստաթղթերով<sup>640</sup>:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կալվածքներ է ունեցել նաև Թավրիզում և Դեհխարղանում: Ըստ Սիմեոն Երևանցու, Ատրպատականի Դեհխարղան գյուղում գտնվող կալվածքը, որը նրաօրոք «շեն և ընդ ձեռամբ սրբոյ Աթոռոյս» էր, բաղկացած էր երեք կտոր այգիներից և մաս-մաս ձեռք էր բերվել Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից<sup>641</sup>: Պահպանվել է Դեհխարղանում Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից 1657 թ. 14 թուման 5000 դինարով գնված այգու կալվածագիրը<sup>642</sup>: Թավրիզում գտնվող կալվածքի ձեռքբերման ժամանակին և հանգամանքներին վերաբերող վավերագրեր Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում չկան, սակայն Սիմեոն Երևանցին հիշատակում է այնտեղ Միրիմ կոչված ջրից օգտվելու կալվածագրերի մասին<sup>643</sup>: Այդ կալվածքները բավականին հեռու էին Էջմիածնից և նրանց հասույթներից օգտվելը կապված էր որոշ դժվարությունների հետ: Ուստի շատ կարևոր էր նրանց հետ կապն իրականացնող գործակալների ազատ երթևեկության ապահովումը տեղական կառավարիչների ու ճանապարհները հսկող ծառայողների ունձգություններից: Այս նպատակով Աբրահամ Կրետացի կաթողիկոսը Նադիր շահից ձեռք է բերում 1148 թ. սաֆարամսի (1735թ.) հրովարտակը՝ հրապարակված Աբրահամ կաթողիկոսի խնդրագրի հիման վրա Մայր Աթոռի Դեհխարղանում ու Թավրիզում գտնվող կալվածքների կապակցությամբ երթևեկող վանքի սպասավորներին արգելքներ չհարուցելու ու նրանցից հավելազանձումներ չկատարելու հրամանով<sup>644</sup>: Նույն բովանդակությամբ հրամանագիր է

<sup>640</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 51-52

<sup>641</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 253:

<sup>642</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1066:

<sup>643</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 377:

<sup>644</sup> Տե՛ս Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 7, բնօրինակը՝ Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1178:

ծեռքբերում նաև 1814թ. Եփրեմ կաթողիկոսը Ատրպատականի կառավարիչ Աբբաս Միրզայից<sup>645</sup>:

Թավրիզում գտնվող վակֆերի եկամուտների ստացման հետ կապված դժվարություններն են թերևս պատճառը, որ Սիմեոն Երևանցին 1766 թ. այնտեղի այգին 99 տարով վարձակալության է տալիս Մուհամմադ Շաֆի'ին՝ նրախնդրանքի համաձայն<sup>646</sup>:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար կարևոր նշանակություն ունեցող նրա հարկերից ազատված լինելու՝ *մու'աֆուլթյան* իրավունքի պաշտպանությունը: Ուստի պատահական չէ, որ մեծ թվով հրովարտակներ ծեռք են բերվել այս խնդրի առնչությամբ: *Մու'աֆ* (معاف) բառը համանիշ լինելով «մուսալլամ», «թարխան» բառերին, նշանակում էր հարկային իմունիտետ, ազատում բոլոր տեսակի պետական հարկերից, երբեմն միայն որոշ հարկերից ու պարտավորություններից<sup>647</sup>: Հարկային իմունիտետի այս տարբերակները պարզորոշ երևում են պարսկերեն հրովարտակներում:

Եթե XV-XVI դարերում գրված հրովարտակներում շեշտվում էր վանքերի ու հայ հոգևորականների լիակատար *մու'աֆուլթյունը* բոլոր տեսակի հարկերից, այդ թվում նաև *մալից* ու *ջիզյայից*, ապա XVII դարի հրովարտակները մեծ մասամբ վկայում են այդ իրավունքների հետզհետե սահմանափակման մասին և որ վանքերից շատերը ստիպված են եղել այլևայլ անվան տակ սիստեմատիկ կերպով որոշ գումար մուծել պետական գանձարան<sup>648</sup>: XVII դարի առաջին կեսում Էջմիածնի վանքի ստացած *մու'աֆուլթյան* հրովարտակներով պետական հարկերից ազատվում էին միայն *վակֆային* կալվածքները, մինչդեռ գանձագին *մուլլթերը* ենթակա էին հարկման<sup>649</sup>: XVII դարի երկրորդ կեսում, ինչպես փաստում են պահպանված պարսկերեն հրովարտակների տվյալները, Էջմիածնի ու հայոց մյուս վանքերի *վակֆային* կալվածքներից ևս հարկեր էին գանձվում, մասնավորապես *ջիզյա* Այսպես, Շահ Սուլեյմանի 1674թ. հրամանագրով արգելվում են տեղական պաշտոնյաների միայն

<sup>645</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1542:

<sup>646</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 457, 458:

<sup>647</sup> Տե'ս Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 114:

<sup>648</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 55-6:

<sup>649</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 60-1:



ապրիլի պահանջները Էջմիածնի վանքի *վակֆայի* կալվածքներից և ունձգությունները վանքի եկամուտների նկատմամբ, իսկ նրան կից Էջմիածնի կաթողիկոսի տեղապահ Օնոփրիոս վանականի ներկայացրած խնդրագրում նշվում է տարբեր պաշտոնյաների կողմից կատարվող չարաշահումների ու դրամաշորթության մասին<sup>650</sup>: Հիշյալ վավերագրում ընդգծվում է այն հանգամանքը, որ այդ շրջանում Էջմիածինն իր գանձագին և *վակֆայի* կալվածքների համար հարկադրված էր հարկ վճարել, նաև հաճախակի ենթարկվում էր տեղի պաշտոնյաների կողմից գործվող անօրինականություններին: Այս նույն հրովարտակը հետագայում Ալեքսանդր կաթողիկոսի խնդրանքով վերահաստատվում է շահ Սուլթան Յուսեյնի 1712 թ. հրովարտակով<sup>651</sup>:

Բացի հիշյալ հարկը, դեռ 1620թ. Չուխուր Սա՛ադի (կամ Երևանի) նահանգի վանքերի համար վճարվում էր *թաֆավուլթ-ե ջիզյա* հարկը, որի գանձման ժամանակ պաշտոնյաների չարաշահումների մասին ահազանգումները առկա են Սեֆյան շահեր Աբբաս Բ-ի 1645 թ. և Սուլթան Յուսեյնի 1712 թ. հրովարտակներում<sup>652</sup>:

Երևանի բեկլարբեկ Քեյխոսրով խանից 1647 թ. Փիլիպոս կաթողիկոսի ստացած հրամանագրից երևում է, որ Էջմիածնի կալվածքներից շատերը ենթակա են եղել հարկման և այդ հրամանագրով կալվածքների *մալոջհաթը* (47.694 *դիևար*) և վանքապատկան 950 գլուխ մանր եղջերավոր անասուններից գանձվող *չոբանբեկի* (52.250 *դիևար*) գիջում է կաթողիկոսին, որպես նրան շնորհվող ամենամյա պարգև<sup>653</sup>: Ավելի վաղ Փիլիպոս կաթողիկոսին հաջողվել էր շահ Սեֆիի 1638 թ. հրովարտակով Մայր Աթոռը ազատել մեկ սարք գութանի համար վճարվող *մալիե* հարկից: Այդ իրավունքը վերահաստատվում է հետագայում 1645 և 1659 թթ. հրապարակված շահ Աբբաս Բ-ի հրովարտակներով<sup>654</sup>, իսկ 1712 թ. հաստատվում է արդեն երկու սարք գութանի ու 500 ոչխարի *չոբանբեկիի մու'աֆուլթյան*

<sup>650</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 39:

<sup>651</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 73:

<sup>652</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 28, Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 76:

<sup>653</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 34:

<sup>654</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 29, Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 8:

իրավունքը<sup>655</sup>: Այնուամենայնիվ, թուլացած Սեֆյան իշխանությունը ի գործը չէր վերահսկել երկրի ծայրամասային շրջաններում կատարվող կամայականությունները: Այնպես, որ որոշ տեղեկությունների համաձայն հիշյալ հարկային արտոնությունը չի գործադրվում<sup>656</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերը մանրամասն տվյալներ են բովանդակում Նադիր շահի օրոք և նրա մահից հետո Երևանի կիսանկախ իսկանությունների շրջանում Էջմիածնի *մու'աֆոլթյան* իրավունքի ու նրա կողմից վճարվող հարկերի մասին: Աբրահամ Կրետացի կաթողիկոսի խնդրագրի համաձայն անց է կացվում Մայր Աթոռի կալվածքների մանրամասն հաշվառում և Նադիր շահի հրովարտակով հաստատվում 106910 *դիևարի* հարկերից ազատված լինելու (*մու'աֆոլթյան*) իրավունքը<sup>657</sup>: Ըստ այդ վավերագրի՝ կաթողիկոսը Երևանի նահանգի 19 վանքերի համար ամեն տարի պետք է 175000 *դիևար* վճարեր շահին:

Ինչպես այս կապակցությամբ իրավացի կերպով նշում է Սիմեոն Երևանցին՝ «եթե (Սուրբ Աթոռը) ավելի *մուլլթ* ունենար, քան այս գրածները, այլև ավելին ցանի, պիտի հարկ վճարի՝ համաձայն սահմանված կարգի, ինչպես տալիս է (որջ) երկիրը<sup>658</sup>»:

Սակայն արդեն երկու տարի անց Ղազար կաթողիկոսի կաթողիկոսությունների շրջանում Էջմիածնի հասույթների ու բերքի հաշվառման ընթացքում հարկերի հավելագրման հետևանքով Մայր Աթոռը հարկադրված էր վերը նշված 175000 *դիևարից* գատվճարել նաև 117550 *դիևար*<sup>659</sup>: Ըստ Սիմեոն Երևանցու, հարկազանձման այս կարգը պահպանվում է մինչև Նադիր շահի մահը<sup>660</sup>: Բացի այս մի շարք աղբյուրներ պնդում են Նադիրի օրոք Մայր Աթոռից մի քանի անգամ գանձված ծանր տուգանքների մասին<sup>661</sup>: Ամենայն հավանականությամբ մի այդպիսի տուգանքի կապակցությամբ է անցկացվել 1744թ. Մայր Աթոռի կալվածքներից գանձվող հարկերի

<sup>655</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ 9, վավ. 74:

<sup>656</sup> Զ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 110:

<sup>657</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ 7, վավ. 9:

<sup>658</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 201:

<sup>659</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 203-204:

<sup>660</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 204:

<sup>661</sup> Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 265; Մ. Չամչյան, նշվ. աշխ., պատմություն, հ. 9, էջ 821; A Chronicle of the Carmelites, v. I, p. 642; Յովհաննես Ծախաթունեսանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 227-228:

մանրամասն հաշվարկը, ըստ որի, բացի Երևանի նահանգի մյուս վանքերի համար վճարվող 175000 դիևարը, Էջմիածնից գանձվել է՝ 212200 դիևարի գումար<sup>662</sup>:

Ազատ խանի իշխանություն շրջանում 1753թ. անց է կացվում Մայր Աթոռի հասուն թների ու հարկերի հաշվառում և կազմվում մի փաստաթուղթ, որում հաշվի առնելով վանքի մոլ'աֆոնյան իրավունքը (որը նշվում է 107100 դիևարի չափով), մատնանշվում է վանքի կողմից վճարվելիք գումարը 109125 դիևարի չափով, որը պետք է վճարվեր Երևանի նահանգի մյուս վանքերի համար վճարվող 175000 դիևարի հետ միասին<sup>663</sup>: Նույն թվականի իր մեկ այլ հրովարտակով Ազատ խանը հրահանգում է հիշյալ հաշվառմանը համապատասխան հարկագանձումները կատարել «այնպես, որ դրամաշորթություն և տեղի չունենա»<sup>664</sup>: Երկու տարի անց նույն Ազատ խանի հրամանագրերից մեկով կարգադրվում է Նադիր շահի հրովարտակով սահմանված հարկաչափին ավելացված հարկագումարը հանել<sup>665</sup>, իսկ նույն թվականի հունիսի 6-ի հրամանագրով՝ արգելվում է հարկագանձումը Երևանի նահանգի ավերված վանքերի համար<sup>666</sup>: Վերջին հրովարտակը համահունչ է Երևանի Յասան Ալի խանի կողմից Ալեքսանդր կաթողիկոսի<sup>667</sup> խնդրագրի հիման վրա դեռ 1755թ. ապրիլի 15-ին հրապարակված հրովարտակին, որով արգելվում է Երևանի խանություն ավերված վանքերից մալոջհաթ հարկի գանձումն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հողային կալվածքների չափագրումը<sup>668</sup>: Այս հրովարտակների կիրառության դեպքում Մայր Աթոռը լիովին ազատված էր լինելու ամեն տեսակի հարկային պարտավորություններից: Սակայն ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, հաջորդ երեք տարիներին Երևանի խանը օգտվելով նորընտիր կաթողիկոսի բացակայությունից<sup>669</sup> «գանազան վեճեր է առաջ բերում, նոր հարկեր նշանակում և առնում (Սուրբ) Աթոռից»՝

<sup>662</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 392:

<sup>663</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 414:

<sup>664</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 41:

<sup>665</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 45:

<sup>666</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 44:

<sup>667</sup> Տ. Աղեքսանդր ԲԲյուզանդացի Ամենայն Յայնոց Կաթողիկոս 1753 – 1755թթ.:

<sup>668</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 417:

<sup>669</sup> 1755 թվականին մահանում է Ալեքսանդր կաթողիկոսը, իսկ 1756թ. կաթողիկոսը նտրված Սահակ Ահագինը տարիներ շարունակ չի գալիս Մայր Աթոռ, մինչև, որ նրա տեղապահ Յակոբ Շամախեցին 1759թ. ընտրվում է կաթողիկոս:

մու'աֆուլթյան հավելյալը՝ դարձնելով այն 117500 դիւարի<sup>670</sup>: Միաժամանակ նորից հաստատում և շարունակում է գանձել նաև վանքերի համար վճարվող 175000 դիւարի գումարը<sup>671</sup>:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը Քերիմ խանի իշխանության սկզբնական շրջանում հատուկ փաստաթղթով հաստատում է Մայր Աթոռի 186300 դիւարի մու'աֆուլթյան իրավունքը<sup>672</sup>, իսկ որոշ ժամանակ անց 1765թ. նրան մեծ ջանքերի գնով հաջողվում է Երևանի Յուսեյն Ալի խանի հրամանագրով Մայր Աթոռը ազատել բոլոր տեսակի հարկային պարտավորություններից, մասնավորապես նաև Երևանի խանության մյուս վանքերի համար վճարվող 175000 դիւարի հարկագումարից<sup>673</sup>:

### **Յայ ոց Եկեղեցու իրավունքները պաշտպանող հրամանագրերը**

Յայ ոց Եկեղեցու նվիրյալ առաջնորդները հոգ տանելով Մայր Աթոռի տնտեսական դրության մասին՝ հրամանագրերով ու շարի'աթական-նոտարական փաստաթղթերով ձեռք են բերել կալվածքներ ու պաշտպանել դրանք գանազան ոտնձգություններից՝ հնարավորինս ազատելով այդ կալվածքները հարկերից: Մայր Աթոռի տնտեսական դրությունը կախված էր նաև մի շարք այլ գործոններից, որոնցից էր Իրանի ու Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի հետ դյուրին հաղորդակցության ապահովումը՝ նրանցից Եկեղեցական տուրքերն անարգել հավաքելու ու Էջմիածին հասցնելու, մեռն Եփելու ու բաժանելու<sup>674</sup>, նաև ուխտավորների այցելությունը խթանելու նպատակով: Յամապատասխանաբար Յայ ոց կաթողիկոսները ջանում էին անխափան պահել կապը հայ ժողովրդի տարբեր հատվածների հետ հնարավորինս հեշտ ու ապահով կերպով՝ առանց մաքսավճարների ու այլ խոչընդոտների: Այս նպատակով ձեռք են բերվում հրովարտակներ, որոնցով ապահովվում էին նրա

<sup>670</sup>Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Էջ 205-206:

<sup>671</sup>Նույն տեղում:

<sup>672</sup>Նույն տեղում, Էջ 206:

<sup>673</sup>Նույն տեղում, Էջ 208:

<sup>674</sup> Մեռն Եփելու ու Յայ ոց թեմերին այն բաժանելու Էջմիածնի բացառիկ իրավունքը հաստատող միայն մեկ հրամանագիր է պահպանվել (տե'ս Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 62):

նվիրակների ու մյուս սպասավորների առանց տուրքերի, ազատ երթևեկությունը հրանի տարածքներում<sup>675</sup>:

XVIII դարի դարի կեսերից Երևանի խանը սկսում է հարկեր գանձել Ս. Էջմիածին այցելող ու խտավորներից: Ժամանակակիցների հավաստմամբ Երևանի խանը Ս. Էջմիածին այցելող ու խտավորներից «մի մի ոսկի հարկ էր առնում»<sup>676</sup>, որը բնականաբար ծանր էր անդրադառնում այցելուների վրա՝ նվազեցնելով նրանց քանակը: Ինչպես ցույց են տալիս այս կապակցությամբ հրապարակված հրամանագրերի բովանդակությունը՝ ու խտավորներից հարկերը գանձվում էին հիմնականում սահմանային պահակակետերի ու մաքսատների ծառայողների (*ռահդարներ*) կողմից: Նրանց ու տեղի մյուս պաշտոնյաներին ուղղված Երևանի խալիլ խանի 1753 թ.<sup>677</sup>, Երևանի խանության նկատմամբ իր գերիշխանությունը հաստատած Ազատ և Մուհամմադ Յասան խաների 1755 և 1757 թթ. հրամանագրերով արգելվում են Յայոց եկեղեցու սպասավորներից և ու խտավորներից հարկագանձումները<sup>678</sup>: Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով Էջմիածնի ու խտավորների ազատումը հարկերից ամրագրվում է նաև Էջմիածնի իրավունքները 14 կետերով հաստատող հրանի Քերիմ խան Վեթիլի ու նաև Երևանի Յուսեյն Ալի խանի 1763 թ. հրամանագրերով<sup>679</sup>:

Այնուամենայնիվ այս խնդիրը Սիմեոն կաթողիկոսի օրոք վերջնական լուծում չի ստանում: Ինչպես հայտնի է դառնում Երևանի Մուհամմադ խանի 1801 թ. հրամանագրից՝ հին կարգի համաձայն Էջմիածին եկող հարուստ ու խտավորներից գանձվում էր 100 դինար, իսկ աղքատներից՝ 50, և խանի այդ հրամանագրով ընդամենը արգելվում է հավելյալ գումարների պահանջը ու խտավորներից<sup>680</sup>: Իսկ նույն խանի 1803 թ. հրամանագրով ու խտավորներից գանձվող *ռահդարի* հարկի վճարումը ըստ նախկին կարգի դրվում է Էջմիածնի կաթողիկոսի վրա<sup>681</sup>:

<sup>675</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 9, արակ Դ, վավ. 10, 15, 32, 43, 48:

<sup>676</sup> Դիվան Յայոց պատմության, գիրք Գ., Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը 1763-1767, Թիֆլիս, 1894, էջ 67:

<sup>677</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 411:

<sup>678</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 43, 48:

<sup>679</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 49, էջ 93, նաև՝ Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 441:

<sup>680</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 551:

<sup>681</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 556:

1731թ. Աբրահամ Խոշաբեցի կաթողիկոսին<sup>682</sup> հաջողվում է շահ թահմասալ Բ-ից ձեռքբերել մի հրովարտակ, որով վերահաստատվում էին Էջմիածնին նախկին շահերի կողմից տրված բոլոր հրամանագրերը: Եթե հաշվի չառնենք հրովարտակի հրապարակման ժամանակաշրջանն ու քաղաքական իրադրությունը Իրանում, այն կարելի էր համարել շահական ողորմածության մի աննախադեպ երևույթ՝ հայ-իրանական փոխհարաբերությունների ողջ պատմության համար: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել այն, որ այդ ունույն շրջանի մի քանի այլ հրովարտակները հրապարակվել են նրա 1731 թ. Երևանյան անհաջող արշավանքի ընթացքում<sup>683</sup>, որի ժամանակ Օսմանյան գործերի դեմ պայքարում Սեֆյան տոհմի գահակալը Ամենայն Հայոց կաթողիկոսի ու նրա միջոցով նաև հայության աջակցության կարիքն ուներ և ջանում էր նրանց սիրաշահել<sup>684</sup>:

Սեկ հրովարտակով նախկին շահերի բոլոր հրամանագրերը վերահաստատելու գործառույթը նորությունն չէր Սեֆյան պետության գրագրության մեջ: Նմանատիպ հրովարտակ էր ձեռք բերել նաև Եղիա Կարնեցին 1723 թ. շահ Սուլթան Յուսեյնից Նախիջևանի հայ կաթողիկոսների համար, որի հրապարակումը նա բացատրում է հրամանագիր ստանալու դժվարությամբ և նշում. «վերջին րադամումն գրել տվի, թե որչանք որ րադամ և սաաառլինի ֆռանկաց ձեռն, ամենեքեան հաստատ են, որ այս խոսիլքն ամեն րադամներն հաստատգլնի, այլ ոչ է պարտնորել»<sup>685</sup>:

Էջմիածնին տրված բոլոր իրավունքների ընդհանրացման ու վերահաստատման միտումն իր շարունակությունն է գտնում Ազատ խանի 1754թ. Ալեքսանդր կաթողիկոսի կողմից հրապարակված հրովարտակում<sup>686</sup>: Այս և նախորդ հրովարտակները թեև վերահաստատում էին Էջմիածնին տրված բոլոր նախորդ շահերի հրամանագրերը մեկ հրամանով, սակայն չէին բովանդակում այդ

<sup>682</sup> Աբրահամ Բ Խոշաբեցին ամենայն հայոց կաթողիկոս է օծվել 1730թ. մարտին, մահացել է 1734թ. նոյեմբերի 11-ին (Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3323, 3332):

<sup>683</sup> Այդ հրամանագրերը տե՛ս Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 88-90:

<sup>684</sup> Այս հրամանագրերի ու շահ թահմասալ Բ-ի հիշյալ ձեռնարկման մասին մանրամասն տե՛ս Զ. Կոստիկյան, Թահմասալ Բ-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-31թթ. նրա արշավանքը դեպի Երևան, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, XXIII, Երևան, 2004, էջ 356 – 371:

<sup>685</sup> Եղիա Կարնեցի, նշվ. աշխ., էջ 211:

<sup>686</sup> Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 42:

հրամանագրերի դրույթները և նրանց կիրառումը անհնար էր առանց մյուս հրամանագրերի ներկայացման: Ուստի թերևս այս պատճառով հետագայում այս տիպի հրամանագրերում նշվում են վերահաստատվող հրամանագրերի հակիրճ դրույթները:

Յայոց Եկեղեցու իրավունքները 1759թ. Յակոբ Շամախեցի կաթողիկոսը ձևակերպում է 14 կետերով և ձեռքբերում դրանք հաստատող հրամանագիր Երևանի Յուսեյն Ալիխանից<sup>687</sup>: Յետագայում, 1763 թ. Սիմեոն կաթողիկոսը այդ հրամանագիրը վերահաստատել է տալիս նույն խանի<sup>688</sup>, ապա նաև Իրանում իշխանության գլուխանցած Քերիմ խանի հրամանագրերով<sup>689</sup>: Այս մասին մանրամասն խոսում է նաև ինքը՝ Սիմեոն Երևանցին իր «Ջամբռ» աշխատության մեջ<sup>690</sup>:

Այս հրամանագրերում, փաստորեն, ամփոփվում էին այն բոլոր իրավական հարցերը, որոնք Յայոց Եկեղեցին ջանացել է ձեռքբերել դարեր շարունակ:

Յիշյալ հրամանագրերում նշվող իրավունքների հիմնական մասի վերաբերյալ վերնարդեն խոսել ենք: Դրանցից են՝ առաջին ու վերջին կետերով հաստատվող Էջմիածնի հարկային իմունիտետը՝ *մուաֆուլթյունը* «մալոջհաթ, վջուհաթ, ավարիզաթ ու այլ ծանր հարկերից», երկրորդ կետով նշվող Մայր Աթոռի իրավունքը նրան պատկանող կալվածքներից գանձվող մալիքանեի նաև տասներեքերորդ կետով նշվող ջրային ռեսուրսների նկատմամբ: Նշված հրամանագրերի երրորդ կետով նախատեսվում էր Եկեղեցական արարողություններն ու ծեսերը անարգել կատարելու իրավունքի պաշտպանությունը, չորրորդ, յոթերորդ ու տասներկուերորդ կետերով մատնանշվում էջմիածնի վակֆային կալվածքների անձեռնմխելիությունը նվիրատուների ժառանգների հավանություններից, ապրիլի զավթումներից և այդ կալվածքներում ապրիլնաբար հողագործությանը զբաղվողներից, հինգերորդ կետով սահմանվում էր Յայոց Եկեղեցու պաշտպանվածությունը մահմեդական պաշտոնյաների ու

<sup>687</sup> Այս հրամանագրի պատճենը տես՝ Սատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 428: Այս մասին տես նաև Костикян К., Указы Ереванских ханов как источники истории армянского народа, Проблемы источниковедения, историографии и истории Востока, Луганск, ДЗ «ЛНУ имени Тараса Шевченко, 2013, сс. 113-114.

<sup>688</sup> Սատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 1353:

<sup>689</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ. Դ, վավ. 49:

<sup>690</sup> Ս. Երևանցի, Ջամբռ, էջ 323-326:

հոգևորականության միջամտությունն ինչ, ութերորդ կետով՝ շեշտվում է բռնի մահմեդականացման արգելումը, տասներորդով՝ Յայնոց եկեղեցու սպասավորների և ուխտավորների ազատ ու առանց հարկավճարների երթևեկության իրավունքը հրանի ու Երևանի խանության տարածքներում<sup>691</sup>:

Յրամանագրի կետերից մի քանիսը լրացուցիչ մեկնաբանության կարիք են զգում: Այդ կետերից են վեցերորդն ու իններորդը՝ ուղղված Մայր Աթոռի պաշտպանությանը պարտատերերից, ընդ որում պարտատերերից են նշվում նաև պատերազմական իրադարձությունների ժամանակ իրենց ունեցվածքը էջմիածնին պահ տված անձիք: Այդ առթիվ Երևանի կառավարչին հրահանգվում է քննություն անցկացնել ու օրենքին համապատասխան վճիռ կայացնել:

Այս հարցն առաջին անգամ չէ, որ շոշափվում է պարսկերեն հրովարտակներում: Ղազար Ջահկեցի կաթողիկոսի կողմից 1740 թ. Իրանի փոխարքա Ռեզա Ղուլի Միրզայից ստացած հրովարտակը ևս հրապարակվել է նմանատիպ խնդրի առնչությամբ<sup>692</sup>: Վավերագրի խնդրագրային մասում, մասնավորապես, Ղազար Ջահկեցին նշում է՝ «Երբ սրանից առաջ Օսմանցիների օրոք հանգուցյալ Թահմասա Միրզան մտավ Երևան, այնտեղի բոլոր ցեղերին գաղթեցրեց Իրաքի կողմերը: Ցեղերի մարդկանցից յուրաքանչյուրն իր ունեցվածքն ու գույքը թողեց գյուղերում՝ հայերի տներում: Օսմանցիները այդ ամենը որպես *իլթիզամ* բոլոր տեղերից հավաքեցին ու զավթեցին՝ տանտերերին նույնպես վնաս հասցնելով»: Նմանատիպ դեպքերը թերևս կրկնվել են նաև հետագայում՝ մասնավորապես, Նադիր շահի մահվանը հաջորդած Իրանում տիրող անիշխանության ու երկարատև երկպառակտչական պատերազմների ու նաև Յարավային Կովկասում ձևավորվող խանական իշխանությունների միջև հաճախակի բախումների շրջանում, որը և հրատապ է դարձրել նաև այս կետի ներառումը էջմիածնի իրավունքների ցանկում: Այս կապակցությամբ Քերիմ խանի հրովարտակում նշվող իրավունքների վեցերորդ կետն ունի հետևյալ ձևակերպումը. «...պատերազմի ժամանակ, երբ մարդիկ որոշ իրեր ու գույք Ուչքիլիսա տարան ու

<sup>691</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ. Դ, վավ. 49, էջ 91-94:

<sup>692</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ. Դ, վավ. 16:



որպես գրավ թողեցին, ոմանք եկել, մի մասը տարել են, մի մասը խառնաշփոթի ժամանակ ոչնչացել է, մի մասն էլ հաքիմները զավթեցին: Այժմ այդ ունեցվածքի տերերի ժառանգները և այլ ոք այդ պատճառով անօրինական վեճ են սկսել: Կարգադրվեց, որ, եթե ինչ պես, որ զեկուցել են, պահանջատերերի պահանջածը տարել են, ապա թող բարձրաստիճան բեկլ արբեկը թույլ չտա [այդ պատճառով] որևէ մեկին նեղեն»<sup>693</sup>:

Չայոց եկեղեցու իրավունքներին վերաբերող հրովարտակի 11-րդ կետում նշվում է. «Իրանի, հատկապես Երևանի բարձրաստիճան բեկլ արբեկն ու ամիլները [իրենց տարածքում] շրջող հոգևորականներից ու [վանքի] մյուս սպասավորներից նախորդ ռադամներին համապատասխան պետք է չափարի (սուրհանդակի) ձիու պահանջով չնեղեն»<sup>694</sup>:

Սա հարկատեսակ էր, որը գանձվում էր ձիով՝ չափարի կամ սուրհանդակների կողմից: Այն ի հայտ էր եկել Իրանում ու տարածաշրջանում փոստային ծառայության խաթարման հետևանքով և իշխանությունների թողտվությամբ՝ փոստային կապը իրականացնելու նպատակով: Բանն այն է, որ Սեֆյան պետության անկումից հետո չափարի կամ սուրհանդակների կայանների համակարգը Իրանում գրեթե լիովին շարքից դուրս էր եկել, պահպանվել էին միայն որոշ կայաններ երկրի հյուսիսում<sup>695</sup>: 1724 թ. չափարի համար ձի «բռնելու» համար բողոք էր ներկայացված եղել Եղիա Կարնեցու դեմ<sup>696</sup>: Չափարի կամ սուրհանդակի ձիու պահանջների մասին հիշատակությունը պարսկերեն վավերագրերում հանդիպում է սկսած Նադիր շահի իշխանության սկզբից: Սուրհանդակները (չափար) ձիեր էին վերցնում ումից ցանկանային և որտեղ, որ ցանկանային, անգամ հեծյալներին ձիուց իջեցնում ու նրա ձին խլում էին: Չափարի ձիու դիմաց որոշ տվյալների համաձայն գյուղացին ստանում էր 2 ռիալի չափով հատուցում, որը կարող էր կատարվել նրա կողմից վճարվող այլ հարկի կրճատման ձևով<sup>697</sup>:

<sup>693</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 49, էջ 92-93:

<sup>694</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 49, էջ 93:

<sup>695</sup> Willem Floor, The Chaparkhāna System in Qajar Iran, Iran, vol. 39 (2001), British Institute of Persian Studies, p. 257.

<sup>696</sup> Եղիա Կարնեցին, նշվ. աշխ., էջ 281:

<sup>697</sup> Willem Floor, The Chaparkhāna System in Qajar Iran, p. 257.

Վավերագրերի տվյալները ցույց են տալիս, որ 1734 թ. *չախարի* ձիու պահանջ էր ներկայացվել Ղարաբաղի մելիքներին<sup>698</sup>, որոնք աջակցում էին Նադիրի զորքերին: Այդ հարկը գանձվում էր նաև *խալիսե* և *թիռլլային* սեփականությունն հանդիսացող հողերի վրա բնակվող գյուղացիներից<sup>699</sup>: Նրա մասին հիշատակությունն կանան ու շրջանի աղբյուրներում, որպես մասնավորապես 1825 թ. Մեհդի Ղուլի խանի ձիավորների օգտին գանձվող հարկի մասին<sup>700</sup>: Դասավորական երևույթ էր Իրանի տարածքում, որից ապահովագրելու նպատակով արդեն 1735թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսի խնդրագրի հիման վրա հրապարակված Նադիր շահի հրամանագրով արգելվում էր սուրհանդակներին ու մյուս պաշտոնյաներին անհանգստացնել Դեհխարդան ու Թավրիզ գնացող-եկող վանականներին: *Չախարի* ձիու պահանջից ազատելու մասին նշվում է նաև Ղազար Ջահկեցի կաթողիկոսի կողմից ձեռքբերված 1745, 1746 և 1748 թվականների հրովարտակներում<sup>701</sup>, որը մատնանշում է այդ հարցի կարգավորման կարևորությունը Էջմիածնի համար: Այսպիսով, նշված տուրքի ծանրությունը ու նրանից ազատվելու անհրաժեշտությունը հայ կաթողիկոսներին դրդում է մտցնել այն նաև Էջմիածնի իրավունքները 14 կետերով ամրագրող XVIII դարի երկրորդ կեսում հրապարակված Երևանի խանի ու Իրանի Քերիմ խանի հրամանագրերի մեջ:

Յիշյալ հրամանագրում շոշափող խնդիրների մեջ չկամիայն Էջմիածնի կաթողիկոսներին վերապահվող մեռն էփելու և բաժանելու մասին կետը, որի մասին հրովարտակ է ձեռքբերվել, մասնավորապես, Սեֆյան ժամանակաշրջանում Նահապետ կաթողիկոսի կողմից 1700թ.<sup>702</sup>, որից իմանում ենք, որ Էջմիածնի այդ բացառիկ իրավունքը հաստատող հրամանագրեր են հրապարակված եղել նաև ավելի վաղ հիջրայի 1019 (1610 թ.), 1104 (1692 թ.) թվականներին, որոնք այնուամենայնիվ չեն պահպանվել: Կարծում ենք, որ այս հարցը Յայոց եկեղեցուն վերաբերող այն խնդիրներից էր, որ կարգավորել

<sup>698</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 4:

<sup>699</sup> Арунова М. Р. И Ашрафян, К. З., նշվ. աշխ., էջ 78:

<sup>700</sup> Ե. Լալայեան, Գանձակի գաւառ, Ա. Յատոր, Արտատպւած Ազգագրական հանդիսից, Թիֆլիս, 1901, էջ 44:

<sup>701</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 7, 15, 26, 27, 32 և 35:

<sup>702</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 62:

են հենց իրենք կաթողիկոսները և կարիք չեն ունեցել դրա համար դիմել ու շահի հրամանին: Իսկ Նահապետ կաթողիկոսի առնչությամբ հարկ է հիշել, որ նրա դիրքերը շատ թույլ էին, քանի որ ստիպված էր մեծ նյութական ծախսերի գնով պայքարել հակաթոռ կաթողիկոս Ստեփանոս Ջուղայեցու դեմ և չեզոքացնել իր դեմ նյութվող դավերը:

Այսպիսով, Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն փաստաթղթերով ձեռք են բերվել կալվածքներ, հարկային և այլ արտոնություններ, պաշտպանել դրանք զանազան ոտնձգություններից: Եվ փաստորեն, այդ կերպ ամրագրվել են Էջմիածնի տնտեսական կայունությունը և իրավաքաղաքական պաշտպանվածությունը իրանական պետության գերիշխանության պայմաններում: Այս պատճառով դիտարկված վավերագրերն այն սկզբնաղբյուրներն են, որոնք առավել լիարժեք ու մանրամասն տվյալներ են բովանդակում Հայոց Եկեղեցու իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական դրության այդ շրջանի հարցերի շուրջ:

## **2.4 Հայոց Եկեղեցու ներքին որոշ խնդիրների արտացոլումը պարսկերեն վավերագրերում**

### **Կաթողիկոսական փիշքաջը և պոռոպանդիվներն ըստ Մատենադարանի**

#### **XVII-XIX դարերի պարսկերեն վավերագրերի**

Իրանում XVII-XIX դարերում լայն տարածում ունեցող երևույթներից էր բազմազան նվերների ընծայաբերությունը: Ստորադասից վերադասին տրվող նվերները աղբյուրներում առավել հաճախ նշվում են *փիշքաջ* անվամբ: Հ. Փափազյանը *փիշքաջ* տերմինը բացատրելիս տալիս է հետևյալ ընդհանուր ձևակերպումը, որը ճշգրիտ արտացոլում է տերմինի ընդհանուր իմաստը. «*Փիշքաջը* զանազան առիթներով բնակչության կողմից \$եոդալին կամ պետական պաշտոնյաներին նվերների անվան տակ հատուցվող տուրքն էր,

ինչպես նաև ստորադաս պաշտոնյաների կողմից իրենց վերադասին, կամ խոշոր ֆեոդալների կողմից՝ շահին մատուցվող նվերը»<sup>703</sup>:

Մեծ թիվ են կազմում ընծայաբերությունը կոնկրետառիթների հետ կապող անվանումները, ինչպես օրինակ՝ Էյդի, Նովրուզի, թուհաֆե, հադիե, արմաղան, սավարի, նոզուլ և այլն: Նշված անվանումներից առաջին հինգը մատուցվում էին կրոնական և այլ տոների առիթներով, իսկ սավարի և նոզուլ հարկերը աղբյուրներում հաճախ հանդիպելով միասին, սովորաբար մատուցվում էին տվյալ վայրով անցնող կամ այնտեղ իջևանած շահին կամ թագավորական ընտանիքի անդամներին<sup>704</sup>:

Ընդունված էր նաև վերադասից ստորադրյալին ի պատասխան տրված նվերի, կամ որոշակի ծառայության դիմաց նվեր ընծայելը, որը հիմնականում *խալ 'աթ* (թանկարժեք պատվավոր հագուստ) էր: *Փիշքաշի* դիմաց շնորհված *խալ 'աթների* մասին հաճախակի հանդիպում ենք այդ կապակցությամբ հրապարակված հրովարտակներում<sup>705</sup>:

*Փիշքաշ* եզրույթի նշանակությունը մանրամասն ուսումնասիրել է Ա. Լամբթոնը, որը եզրակացնում է, որ Սեֆյան և հետագա շրջանում մինչև 19-րդ դարի կեսերը *փիշքաշը* կարևոր տեղ էր զբաղեցնում հարկային համակարգում թե՛ որպես կանոնավոր հարկ և թե՛ որպես միանվագ հրամանով կամ առանց հրամանի գանձվող հարկատեսակ: Ավելի ն, այն դառնում է հարկատեսակ, որ ամրացվում է որոշակի պաշտոններին, իսկ *փիշքաշների* մասին տվյալները գրանցվում էին *փիշքաշնևիս* կոչված պաշտոնյայի կողմից<sup>706</sup>: Ինչպես ցույց են տալիս Սեֆյան շրջանի աղբյուրները, շատ պաշտոնյաների ռոճիկային հատկացումներում զգալի դեր ունեին *փիշքաշից* ստացվող տոկոսային մասերը<sup>707</sup>: Թե որքան կարևոր տեղ էր զբաղեցնում *փիշքաշը* ցույց է տալիս այն հանգամանքը, որ 1654 թ.

<sup>703</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 122:

<sup>704</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 120:

<sup>705</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 620, թղթ. 1ը, վավ. 1471, 1529, 1532, 1631 և այլն:

<sup>706</sup> A. K. Lambton, Pishkash: present or tribute? Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol.57, No. 1, In Honour of J. E. Wansbrough (1994), p. 148.

<sup>707</sup> A. K. Lambton, Pishkash: present or tribute?, p. 153-155.

շահ Աբբաս Բ-ն շարաթվա մեկ օրը հատկացնում էր *փիշաք* ընդունելուն<sup>708</sup>:

Շահին *փիշաք* վճարում էին նահանգային կառավարիչներն ու բարձրաստիճան մյուս պաշտոնյաները, որոնց կողմից *փիշաքի* վճարումը կատարվում էր պարբերաբար՝ ամեն տարի: Երբեմն էլ *փիշաքը* վճարվում էր արտաերթ, երբ որևէ վեճի լուծման համար անհրաժեշտ էր շահի հավանությունը:

Շահին *փիշաք* էին վճարում նաև Ամենայն Հայոց և Աղվանից կաթողիկոսները:

Իրանական տիրապետության տակ գտնվող Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսների, նաև խոշոր վանական կենտրոնների՝ Տաթևի, Դարաշամբի Մակվի Ս. Թադեի վանքի հոգևոր առաջնորդների ընտրությունը հաստատվում էր Իրանի տիրակալի հրամանագրով, ընդ որում շահի փոփոխման դեպքում այդ բարձրաստիճան հոգևորականները պետք է ստանային իրենց իրավունքները հաստատող նոր հրամանագիր: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում կարելի է գտնել Էջմիածնի ու Գանձասարի գրեթե բոլոր կաթողիկոսների իրավունքները հաստատող հրամանագրերը կամ նրանց պատճենները: Իրենց իրավունքները հաստատող հրովարտակ ստանալու համար կաթողիկոսները Սեֆյան արքունիքին որոշակի գումար էին վճարում որպես *փիշաք*:

Ինչպես պարզ է դառնում կաթողիկոսներին տրված որոշ հրամանագրերի բովանդակությունից, *փիշաքը* որոշակի գումարի չափով գրանցված էր հարկամատյաններում որպես կաթողիկոսների կողմից վճարվող հարկ:

Շահ Աբբաս Ա-ի օրոք XVII դարի սկզբին երկու աթոռակից կաթողիկոսների՝ Դավթի և Մելքիսեդեկի միջև պայքարը շարունակվում է այնքան ժամանակ մինչև, որ Մելքիսեդեկ կաթողիկոսն իր կաթողիկոսական իրավունքների հաստատման համար հանձն է առնում ամեն տարի 100 թուման հարկ վճարել պարսից արքունիքին<sup>709</sup>: Այսպիսով, շահի 1617 թ. հրովարտակով Էջմիածնի վրա դրվում է տարեկան 100 թուման որպես *փիշաք* վճարելու

<sup>708</sup> R. Matthee, Gift giving, i.v. in the Safavid period, Encyclopedia Iranica, X/6, pp. 609-614, available online at <http://www.iranicaonline.org/articles/gift-giving-iv> (accessed on 30 December 2012).

<sup>709</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 195-196:

պարտավորությունը<sup>710</sup>, որը շարունակում է վճարվել մինչև 1629 թ.: Այդ թվականին, արդեն շահ Սեֆիի գահակալումից հետո և նրա հրամանով<sup>711</sup>, Խոջա Նազարի միջնորդությամբ մեծ դժվարությամբ հնարավոր է լինում հանել այդ ամենամյա հարկի վճարման պարտավորությունը: Ըստ Դավրիժեցու այդ նպատակով Սպահան է գնում Մովսես կաթողիկոսը և «միջնորդությամբ Խոջա Նազարիս... յոյժ բազում գանձս ծախելով իբր թե Ռ. թուման, հազիւ թե կարաց բառնալ գծանր բեռն հարկին»<sup>712</sup>:

Բացի իրենց իրավունքները հաստատող հրովարտակաների համար վճարվող *փիշքաջը*, կաթողիկոսները գանազան առիթներով ևս պարտավոր էին *փիշքաջ* ուղարկել, որի դիմաց հաճախ պարսից արքունիքի կողմից պատվավոր հագուստ՝ *խալ 'աթ* էին ստանում, ինչպես այդ մասին նշվում է շահ Աբբաս Բ-ի հրամանագրում<sup>713</sup>:

Չաքարիա Քանաքեռցու հավաստմամբ XVII դարի երկրորդ կեսին կաթողիկոսներն իրենց իրավունքները հաստատող հրամանագրեր ստանալու համար վճարում էին 300 ոսկեդրամ<sup>714</sup>: Այնուամենայնիվ կարծում ենք, որ Քանաքեռցին ուռճացնում է թիվը, կամ էլ նկատի ունենր կաթողիկոսական աթոռակռիվների ժամանակ գանձվող մեծ գումարները: Ավելի իրականությանը մոտ է Օրմանյանի նշած գումարը, ըստ որի 1668 թ. իր կաթողիկոսական իրավունքները հաստատող հրամանագիրը ստանալու համար Յակոբ Ջուղայեցին առատ նվերներով Սպահան է գնում և վճարում 50 ոսկի<sup>715</sup>: Օրմանյանի նշած գումարը հաստատվում է Աղվանից Եսայի կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքները հաստատող Սեֆյան շահ Սուլթան Յուսեյնի 1701 թ. հրովարտակի<sup>716</sup> տվյալներով, որտեղ նշվում է, որ որպես փիշքաջ վճարվել է 50 աշրաֆի<sup>717</sup>:

<sup>710</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, վավ. 12:

<sup>711</sup> Այդ հրամանագիրը տե՛ս Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, վավ. 19:

<sup>712</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 256:

<sup>713</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պ. Բ, վավ. 37

<sup>714</sup> Закарий Канакерци, Хроника, перев. с арм., пред. И комментарий М. О. Дарбинян-Меликян, Москва, 1969, с. 159 (1870 թ. հրատարակության մեջ այս տեղեկությունը բացակայում է):

<sup>715</sup> Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 2990:

<sup>716</sup> Հրովարտակի լրիվ տեքստը տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 65, էջ 149-152:

<sup>717</sup> Աշրաֆի - իրանական ոսկեդրամի անվանումը, որը համարժեք էր թումանին և հաճախ օգտագործվում էր նրա փոխարեն:

Ընդ որում հրամանագրի բնագրում այդ կապակցությամբ նշվում է հետևյալը. «Մեծ մուսթովֆիները թող 50 աշրաֆիները, որոնք [Եսայիս] *փիշաք* էր արել, նրա [կաթողիկոսության] առաջին տարվա համար *աբվաբ-ե ջամ'* անեն, որպեսզի նա միապետի մերձավոր պալատական գանձապետի միջոցով փոխանցի արքունի գանձարան»<sup>718</sup>:

XVII դարի երկրորդ կեսից Սեֆյան իրանում կենտրոնական իշխանության թուլացման ու կաշառակերության աճի պայմաններում, ինչպես նաև ներքին ու արտաքին քաղաքական ուժերի պայքարի արդյունքում շահական ու սուլթանական հրամանագրերը տարբեր ճանապարհներով ձեռք էին բերում նաև հակաթոռ կաթողիկոսները՝ հիմնավորելով համար իրենց հավակնությունները կաթողիկոսական աթոռի նկատմամբ: Կաթողիկոսական աթոռակռիվները եկամտի աղբյուր էին իրանական ու օսմանյան իշխանությունների համար: Մեծ գումարներ էին վճարվում ինչպես կաթողիկոսական գահի հավակնորդների իրավունքների հաստատման, այնպես էլ նաև արդեն հաստատված կաթողիկոսների իրավունքների վերահաստատման համար: Երբեմն այդ երևույթը հրահրվում էր իշխանությունների կողմից պառակտելու և ջլատելու համար Յայոց Եկեղեցու ուժերը և այդպիսով ժամանակ առ ժամանակ սանձելու նրա առաջնորդների կողմից հանդես բերվող անջատողական ձգտումները:

Կաթողիկոսական աթոռակռիվների ժամանակ շահական արքունիքին վճարվող *փիշաքները* կրում էին զուտ կաշառքի բնույթ, որը գանձվում էր ոչ հաստատագրված չափով, այլ այնքան, որքան ներում էին հավակնորդի հնարավորությունները և ստացողի համաձայնության արժեքը: Բնականաբար, հայության իշխանատենչ հոգևոր առաջնորդները կաթողիկոսական գահին տիրելու նպատակով օգտագործում էին թե՛ իրենց նյութական հնարավորությունները և թե՛ պարտքեր անում, որոնք հետագայում ծանրանում էին Յայոց Եկեղեցու և հայ ժողովրդի վրա՝ բարդացնելով նրանց վիճակը օտար տիրապետության տակ:

Կաթողիկոսական աթոռակռիվները ուղեկցում էին Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսներին ողջ XVII-XVIII դարերի ընթացքում,

<sup>718</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 65, Էջ 151-152:

ընդհուպ մինչև և ռուսական տիրապետության հաստատումը Արևելյան Յայաստանում XIX դարի սկզբին:

Առաքել Դավրիժեցին բնութագրելով իր ժամանակի հայ հոգևորականներին՝ նշում է. «ոչ թե մի էր, այլ երեք և չորք կաթուղիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան, և ագահութեան իբրև զմաքսաւորս ղաբալայիւ և հարկիւ ի Պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ և զսուրբ Աթոռն Էջմիածին. և ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանս, թագաւորական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս, և զիրաւունս և զհասս՝ որք ի ժողովրդենէն՝ ճշդիւ և բռնութեամբ ուժգին առնուին որպէս զորդիսն Յեղեայ. և կաթուղիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զաստիճան կաթուղիկոսութեան, սոյնալէս և ինքեանց ձեռնադրեալ եպիսկոպոսուքն և քահանայքն, տգէտք, խոտանք, և անախտանք»<sup>719</sup>:

Էջմիածնի Մայր Աթոռին բազմելու համար աթոռակռիվներ են տեղի ունենում XVII դարի երկրորդ կեսին Յակոբ Ջուղայեցի և Նահապետի Ուռհայեցի կաթողիկոսների օրոք: Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ու նրան հակաթոռ կաթողիկոս Եղիազար Այնթափցու միջև պայքարի հետևանքով Մայր Աթոռը հայտնվում է ծանր պարտքերի տակ: Այդ պարտքերի հետևանքով Էջմիածինը կորցնում է իր կալվածքներից շատերը<sup>720</sup>: Այս առումով հետաքրքրության է արժանի 1684թ. Եղիազար կաթողիկոսի խնդրագրի հիման վրա շահ Սուլէյմանի կողմից հրապարակված հրովարտակը, որը պետք է պաշտպաներ Էջմիածնի կալվածքների անձեռնմխելիությունը Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք արված պարտքերի դիմաց պարտատերերի ոտնձգություններից<sup>721</sup>: Ըստ Չաքարիա Սարկավազի, նորընտիր Եղիազար կաթողիկոսը հրաժարվում է վանքի պարտքերից<sup>722</sup>: Վերոհիշյալ վավերագիրը ցույց է տալիս, որ կաթողիկոսը հրաժարվում է պարտքերի վճարումից՝ հիմք ունենալով շահ Սուլէյմանի նշված հրովարտակը: Այնուամենայնիվ, շահական իշխանությունը տվյալ

<sup>719</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 242:

<sup>720</sup> Папазян А., նշվ. աշխ., էջ 122:

<sup>721</sup> Բ. Կոստիկյան, Մատենադարանի, արակ. Գ, վավ. 50:

<sup>722</sup> Չաքարիա Սարկավազ, Պատմությունն հ. Բ, էջ 107:



ժամանակահատվածում թուլացած լինելով, ի գորու չէր վերահսկել իրադրությունը երկրի հեռավոր շրջաններում: Ուստիև գարմանալի չէ, որ Իսրայել Օրու գրառումներում տվյալներ կան Հակոբ Ջուղայեցու և Եղիազարի պարտքերի դիմաց Ղափանի մելիքների կողմից 2000-ական քսակ արծաթ վճարված լինելու մասին<sup>723</sup>:

Հայոց եկեղեցու կաթողիկոսական գահի համար աթոռակռիվները հիմնականում տեղի էին ունենում հայության տարբեր հատվածների ազդեցիկ շրջանների հրահրմամբ, ինչպես նաև արտաքին քաղաքական ուժերի հանդես բերած միջամտության արդյունքում:

Հայության արևելյան ու արևմտյան հատվածների ներքին պայքարի արդյունք կարելի է համարել XVIII դարի վերջին Նահապետ Ա Եդեսացու և Ստեփանոս Ջուղայեցու միջև տեղի ունեցած աթոռակռիվը: Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել են Նահապետ Ա. Եդեսացու կաթողիկոսական իրավունքները հաստատող երեք հրովարտակ: Առաջինը հրապարակվել է շահ Սուլեյմանի կողմից 1692 թ. Նահապետ կաթողիկոսի օժուկից մեկ տարի անց, երկրորդը ձեռք է բերվել գահակալող շահի փոփոխության պատճառով՝ ի վերահաստատումն նրա կաթողիկոսական իրավունքների՝ նոր շահ Սուլթան Հուսեյնից 1694 թ.: Երրորդը հրովարտակը տրվել է նույն շահի կողմից՝ 1704 թ. և մատնանշում է կաթողիկոսի դեմ լարված խարդավանքներն ու կաթողիկոսական գահի համար պայքարը<sup>724</sup>:

Ատենախոսության առաջին գլխի երկրորդ բաժնում արդեն խոսվել է Նոր Ջուղայի, նրա ազդեցիկ հոգևորականների ու վաճառականների դերի մասին: Ինչպես իրավացի կերպով նշում է Օրմանյանը. [Նոր Ջուղայի վերնախավին] «ախորժելի պիտի չ'երեւար տաճկահպատակ Հայութենէն եկած Եղիազարի ու Նահապետի իրենց վրայ իշխելը»: Վերջիններս միանալով Նահապետի խտուրթյուններից տուժած Էջմիածնի հոգևորականների հետ՝ նախաձեռնում են նրա գահընկեցությունը<sup>725</sup>: Կաթողիկոսական աթոռի համար Նահապետի դեմ պայքարը գլխավորում է Ստեփանոս

<sup>723</sup> Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 295:

<sup>724</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 193, 195, 215:

<sup>725</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3097-9:

Ջուղայ եցին, որը 5000 թուամսով կաթողիկոսական հրամանագիր է ստանում և գալով Էջմիածին՝ 1696թ. նոյեմբերին կաթողիկոս է օծվում<sup>726</sup>: Վերջինս Լուսավորչի աթոռին բազմում է ընդամենը 2 ամիս: Նահապետը փախչում է Թավրիզ, ուր նրան հաջողվում է Նոր Ջուղայի *քալ անթար* Ավետիսի միջոցով կրկնակի գին վճարելով ետ գնել իր կաթողիկոսական իրավունքները<sup>727</sup>: Ստեփանոսը ստիպված է լինում ոչ միայն զիջել գրաված աթոռը, այլ և 1000 թուամս տուգանք վճարել, և չնայած դրան չի խուսափում դաժան պատժից՝ մահանալով գնդանում 1696թ.: Նահապետը արդարացվում է և նորից բազմում կաթողիկոսական գահին: Այս դեպքերից որոշ ժամանակ անց 1704թ. հրապարակվում է Նահապետի կաթողիկոսական իրավունքները վերահաստատող վերը նշված երրորդ հրովարտակը, որում նշվում է Նահապետի դեմ մեղադրանքների անհիմն լինելը<sup>728</sup>:

Սեֆյան պետության անկումից հետո որոշ ժամանակով Յարավային Կովկասը նվաճվում է Օսմանյան կայսրության կողմից՝ մնալով նրա տիրապետության տակ մինչև Նադիրի կողմից այդ տարածքի վերանվաճումը: Նադիր շահի օրոք ևս *Փիշքաքը* հիշատակվում է տարբեր պաշտոնյաների կողմից վճարվող հարկերի թվում<sup>729</sup>, և այն վճարում էին նաև կաթողիկոսները: Այդ մասին նշվում է, մասնավորապես, 1735 թ. Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսին տրված հրովարտակում<sup>730</sup>: Ընդ որում Նադիրի օրոք ևս *Փիշքաքը* որոշակի գումարի չափով որպես հարկ գրանցված էր հարկամատյաններում: Այս մասին փաստում է Նադիր շահի Յնդկաստանյան արշավանքի ժամանակ Իրանում որպես փոխարքա իշխանության գլուխ կանգնած Նադիրի որդի Ռեզա Դուլի Միրզայի հրամանագրում տեղ գտած հետևյալ միտքը Էջմիածնից հավելագանձումների արգելման հրամանով. «Փիշքաքի գումարի հարցում Երևանի *բեկլ արբեկն* ու *հաքիմը* որքան, որ *դաֆթարում* ու *դիվանում արվար-ե ջամ'* է արված խնդրարկուին, թող այնքան գանձեն և իրենց օգտին չարաշահումներով չենդեն»<sup>731</sup>: Նույն հրովարտակի

<sup>726</sup> Ա. Յովհաննիսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 300:

<sup>727</sup> Նույն տեղում, էջ 300-301:

<sup>728</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 67:

<sup>729</sup> Арунова М. Р. И Ашрафян, К. З., նշվ. աշխ., էջ 78:

<sup>730</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 9, էջ 35:

<sup>731</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 15, էջ 46:

շարունակությունից իմանում ենք, որ *փիշաքի* դիմաց Յայոց կաթողիկոսին շնորհվում է թանկարժեք *խալ 'աթ*:

Նադիր շահի մահից հետո (1747 թ.) տևական ժամանակով Յարավային Կովկասը դուրս է գալիս իրանական տիրապետության տակից, և այստեղ սկսվում է կիսանկախ խանությունների ժամանակաշրջանը մինչև նրա շուրջ ռուս-իրանական հակամարտության սրումն ու վերջնական միացումը Ռուսաստանի կայսրությանը 1828 թ.: Այս ընթացքում ևս ժամանակ առ ժամանակ հանդիպում են տեղեկություններ այս կամ այն կաթողիկոսի կողմից Իրանում իշխանության գլուխանացած իշխանավորին *փիշաք* ուղարկված լինելու ու *խալ 'աթի* արժանացած լինելու մասին: Մասնավորապես, պահպանվել է Քերիմ խան Չենդի 1778 թ. հրամանագիրը Սիմեոն կաթողիկոսին, որում Իրանի տիրակալն իր բարեհաճությունն է հայտնում այն կապակցությամբ, որ ստացվել են որպես *փիշաք* 72 բեռնակիր կենդանիների վրա ուղարկված նվերները<sup>732</sup>:

Իրանի Ղաջարական շրջանում ևս ընդունված էր *փիշաք* վճարելու սովորությունը պաշտոնյաներից, որը հատկապես XIX դարի II կեսում պաշտոնը դարձնում է առուժախի առարկա<sup>733</sup>: Նահանգային կառավարիչներն ամեն տարի *փիշաք* էին ուղարկում շահի արքունիք<sup>734</sup>:

Աղա Մուհամմադ խանի 1795 թ. Կովկասյան արշավանքից հետո Երևանի խանությունը անցնում է Իրանի Ղաջարական պետության գերիշխանության տակ և այդ կարգավիճակում մնում մինչև նրա միացումը Ռուսաստանին 1828 թ.: Այս շրջանում շարունակվում է հայ կաթողիկոսների կողմից իրենց կաթողիկոսական իրավունքները հաստատելու համար *փիշաք* վճարելու սովորությունը:

Չնայած Ռուսաստանի Կովկաս ներթափանցման շրջանում հայոց պետականության վերականգնման մասին տրվող առատ խոստումներին Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը չի անտեսում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ Իրանի տիրակալի դրական վերաբերմունքի

<sup>732</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 51:

<sup>733</sup> فلور و.، تاريخچه مالی - مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ص. 351.

<sup>734</sup> Lambton A., Qajar Persia, London, 1987, p. 15.

պահպանման կարևորությունը: Այս նպատակով 1796 թվականի դեկտեմբերին կաթողիկոսը Դավիթ ու Յովհաննես վարդապետների միջոցով ընծաներ է ուղարկում շահին՝ հայտնելու իր հնազանդությունը նրան և հրովարտակ խնդրելու: Կաթողիկոսի պատվիրակները շահի բարեհաճ ընդունելությանն են արժանանում ու հրովարտակով վերադառնում<sup>735</sup>: 1798 թ. Ղուկաս կաթողիկոսը 400 թումանի փիշքաջ ու այլ նվերներ է ուղարկում նաև ԱղաՄուհամմադ շահին հաջորդած Ֆաթհալի շահին<sup>736</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերում արտացոլվել է XIX դարի սկզբին ընթացող Դավիթ-Դանիելյան աթոռակռիվը, որը Կովկասյան տարածքում զարգացող ռուս-իրանական հակամարտության դրսևորումներից էր<sup>737</sup>: Չնայած, որ Յայոց եկեղեցու կարգին համապատասխան 1801թ. մարտի 20-ին կաթողիկոս է ընտրվում Դանիելը<sup>738</sup>, սակայն նրան չի հաջողվում հանգիստ տնօրինել Էջմիածնի կաթողիկոսական գործերը: Ռուսական իշխանությունների հրահրմամբ և Երևանի Մուհամմադ խանի թելադրանքով Մայր Աթոռին հաստատվում է Դավիթը<sup>739</sup>: Ռուսական իշխանություններն անգամ ճնշում գործադրելով Օսմանյան կառավարության վրա՝ հասնում են նրան, որ հրապարակվում է սուլթանական հրովարտակ, որ հաստատում էր Դավթի կաթողիկոսական իրավունքները<sup>740</sup>: Շուտով, սակայն, ռուսական իշխանությունները փոխում են իրենց դիրքորոշումը՝ դադարեցնելով Դավթին հովանավորել և անցնելով Դանիելի կողմը<sup>741</sup>:

Միաժամանակ ռուսական իշխանությունները աջակցելով Դանիել կաթողիկոսին՝ նամակներ են հղում Երևանի ու Նախիջևանի խաներին առաջարկելով նրանց օժանդակել իրենց հովանավորյալին<sup>742</sup>: Դանիելի կողմում հանդես է գալիս Ներսես Աշտարակեցին, որի ակտիվ մասնակցությամբ 1802 թ. մայիսի 25-ին

<sup>735</sup> Դիվան հայոց պատմության, հ. Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 31:

<sup>736</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 539:

<sup>737</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Վ. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 208-230:

<sup>738</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3786:

<sup>739</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3787, 3794:

<sup>740</sup> Ալ. Երիցեանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 19-20:

<sup>741</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3810:

<sup>742</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 561, թղթ. 1ը, վավ. 1476:

Օսմանյան կայսրության տարածքում գտնվող Բագրևանդի տաճարում Դանիելը կաթողիկոս է օծվում<sup>743</sup>: Մ. Օրմանյանի գնահատմամբ «Դանիել իրաւապէս ընտրեալ մըն էր, ամէն կողմէ պէտք եղած պայմանները լրացած էին, Մայրաթոռոյ միաբանութեան կամքը, Տաճկահայոց հաւանութիւնը, Օսմանեան եւ Ռուսական կայսերութեանց հաստատութիւնները կատարուած էին, բայց իրապէս իր իրաւունքին վայելման մտած չէր»<sup>744</sup>: Սա բացատրվում է տարածաշրջանում ստեղծված քաղաքական իրադրություններով: Վրաց թագավորության միացումը Ռուսաստանին ու թագավորական իշխանության վերացումը Երևանի խանին պարզորոշ ուրվագծում են նրա իշխանությանը սպառնացող վտանգը, որը չնայած արտաքուստ բարեկամական որոշ դրսևորումներին, նրան մղում էր դեպի Իրանը և նրա հետ համատեղ հակառուսական գործողությունների: Այն հայտ է, որ պաշտպանելով Դավթի իրավունքները՝ նա հանդես էր գալիս շահական քաղաքականությանը համապատասխանող դիրքից: Ղաջարական իշխանությունները իրենց հովանու տակ առնելով Դավթի կաթողիկոսին՝ նրան ունով են հրապարակում 1802 – 1805թթ. Մայր Աթոռին տրված հրամանագրերը<sup>745</sup>:

Պահպանվել են Ֆաթիալի շահի կողմից 1802թ. հրապարակված հրամանագրերը, որ հաստատում են Դավթի կաթողիկոսական իրավունքները, խրախուսում ու հովանավորում նրան այդ դիրքում, նաև պահանջում այլ ազդեցիկ անձանց հովանավորությունը նրան կատմամբ<sup>746</sup>:

Երկարատև և ծանր պայքարը ավարտվում է Դանիելի հաղթանակով, որի կաթողիկոսական իրավունքները 1807 թ. ճանաչում է շահական իշխանությունը՝ հրապարակելով հրովարտակ<sup>747</sup>: 1807 թվականի մայիս-հունիս ամիսներին Դանիելի կաթողիկոսական իրավունքները հաստատվում են նաև թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրով<sup>748</sup>: Այնուամենայնիվ արգելարանում վատացած առողջական վիճակը Դանիելին թույլ է տալիս վարել

<sup>743</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3821:

<sup>744</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3824:

<sup>745</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ., վավ. 554, 571, 572, 574, 575

<sup>746</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1471, 1475, թղթ. 1դ., վավ. 554, 561:

<sup>747</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3861:

<sup>748</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ., վավ. 584:

կաթողիկոսական իշխանությունը ընդամենը 17 ամիս, և նա վախճանվում է 1808 թ. հոկտեմբերի 9-ին<sup>749</sup>:

Մատենադարանի պարսկերեն հրովարտակները փաստում են հայ կաթողիկոսներ Դավթի կողմից 1802 թ., և Դանիելի կողմից 1807 թ. 400-ական թուման որպես *փիշքաջ* Ֆաթիալի շահին ուղարկված լինելու մասին<sup>750</sup>:

Ինչպես հայտնի է, Դանիելին հաջորդած Եփրեմ կաթողիկոսը նախապես եղել էր Ռուսաստանի Յայոց թեմի առաջնորդը, ապա ստանձնել Ամենայն Յայոց կաթողիկոսի դիրքը Դանիելի կտակի համաձայն և Ռուսաստանի կայսեր հավանություն ամբողջով հաստատվել նրա հրովարտակով<sup>751</sup>: Ուստի զարմանալի չէ, որ շահական հրովարտակը նրա իրավունքների հաստատմամբ ամենայն հավանականությամբ չի ել հրապարակվել: Եփրեմ կաթողիկոսի իրավունքները հաստատող հրամանագիր է հրապարակել 1810 թ. Ատրպատականի փոխարքա, թագաժառանգ Աբբաս Միրզան՝ միաժամանակ վերահաստատելով նաև Էջմիածնի նվիրակների ու վանական կալվածքների ամեն տեսակի հարկերից ազատված լինելը, արգելելով պետական պաշտոնյաների միջամտությունը եկեղեցական գործերին, հարկերից ազատելու և Մայր Աթոռին տարեկան 400 թումանի հատկացում կատարելու մասին<sup>752</sup>: Այսպիսով, ելնելով թերևս Եփրեմի կաթողիկոսության շրջանի քաղաքական իրադրությունից (ընթանում էր ռուս-պարսկական առաջին պատերազմը), ղաջարական իշխանությունները փոխում են իրենց վերաբերմունքը և փորձում սիրաշահել Ամենայն Յայոց կաթողիկոսին՝ նրան ու Մայր Աթոռին շնորհված իրավական ու տնտեսական արտոնություններով<sup>753</sup>:

Այնուամենայնիվ, Ղաջարական շրջանի մի շարք պարսկերեն վավերագրերում, մասնավորապես իրանական պաշտոնյաների, այդ թվում նաև Երևանի Յուսեյն խանի կողմից Եփրեմ կաթողիկոսին ուղղված մի քանի նամակներում հիշատակություն կա Ատրպատականի

<sup>749</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3883:

<sup>750</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 539, 554, թղթ. 1ը, վավ. 1502

<sup>751</sup> Ա. Երիցյան, Ամենայն Յայոց կաթողիկոսությունը եւ Կովկասի Յայք XIX դարում, մասն Ա, էջ 49-51:

<sup>752</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 1020:

<sup>753</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 599, 606, 610, 616, 632, 633, 652, 667, 668, 683, թղթ. 1ը, վավ. 1511, 1538, 1542, թղթ. 4, վավ. 141:

կառավարիչ թագաժառանգ Աբբաս Միրզային ևս ուղարկված *փիշքաշների* մասին, ընդ որում պահպանվել են նաև նրա պաշտոնյաների նամակները, որոնցով *փիշքաշ* տալու առաջարկությունն է արվում նրանց կողմից<sup>754</sup> և անգամ նշվում, թե ինչ էր ցանկալի որպես *փիշքաշ* ուղարկել. ժամացույց, հեռադիտակ և այլն<sup>755</sup>: Թագաժառանգն իր հերթին *խալ'աթով* և թանկարժեք նվերներով էր պատասխանում ուղարկված *փիշքաշներին*<sup>756</sup>:

Խանական վարչությունը գրեթե նույնությամբ կրկնում էր իրանական կենտրոնական իշխանությունը, ուստի և նմանատիպ հարաբերություններ էին ձևավորվել նաև խաների և էջմիածնի կաթողիկոսների միջև XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1828 թ. ընկած ժամանակաշրջանում: Մատենադարանի պարսկերեն վավերագրերից մի քանիսում հանդիպում ենք կաթողիկոսի կողմից խանին կատարված ընծայաբերության և դրան ի պատասխան երևանի խանից խալ'աթ շնորհված լինելու մասին հիշատակությունների<sup>757</sup>:

Այս թանկարժեք պարտադիր *փիշքաշների* ու նվերների ընծայման անհրաժեշտությունն ու այլևայլ առթիներով կաթողիկոսներից վճարվող մեծ գումարները պատճառ են դառնում, որ XIX դարի 20-ականներին Մայր Աթոռը ծանր պարտքերի մեջ թաղվի, որոնք շարունակաբար աճում էին նրանց վրա ավելացող տոկոսների հետևանքով:

Նմանատիպ իրավիճակում էր նաև Աղվանից կաթողիկոսությունը XVII-XIX դարերում: Այստեղ կաթողիկոսական գահի շուրջ կռիվներ էին ընթանում այդ աթոռը զբաղեցնող Խաչենի Յասան-Ջալալյան իշխանական տան ներկայացուցիչների ու նրանց այդ իրավունքը վիճարկողների միջև դեռևս XVI դարի կեսից<sup>758</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները որոշ մանրամասներ են բացահայտում Աղվանից կաթողիկոսության աթոռակռիվների պատմության մեջ և ճշգրտումներ մտցնում մինչ այժմ կատարված հետազոտություններում:

<sup>754</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 650, 667, թղթ. 1ը, վավ. 1563:

<sup>755</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1606, 1633:

<sup>756</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 620:

<sup>757</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 1455, 1464, թղթ. 1ը, վավ. 1514, 1624:

<sup>758</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 54-6:

Աղվանից կաթողիկոսության պատմությունը հետազոտող Լ. Մկրտումյանը գարմանում է, թե ինչու Պետրոս կաթողիկոսը, որ ստանձնել էր իր հոգևոր պաշտոնը Գրիգորի մահվանից հետո (1653 թ.), իր իրավունքները հաստատող շահական հրովարտակը ստանում է 1074 թ. սաֆար ամսին (1663 թ. սեպտեմբերի 4 – հոկտեմբերի 3), այսինքն, իր պաշտոնավարության սկզբից 10 տարի անց<sup>759</sup>: Այնուամենայնիվ, ուսումնասիրողի վկայակոչած վավերագրի<sup>760</sup> հակառակ կողմում առկա է հիշատակությունն Պետրոս կաթողիկոսի իրավունքների հաստատման կապակցությամբ 1065թ. զի դադե ամսին (1655 թ. սեպտեմբերի 2 – հոկտեմբերի 2) հրապարակված հրովարտակի մասին, որտեղ նշվում է՝ «Քանզի քրիստոնյա Պետրոս կաթողիկոսը տեղեկացրեց, որ արքայական *նաղամով* Գանձակի, Ղարաբաղի ու Շիրվանի կաթողիկոսությունը նրան է հանձնվել, իսկ այդ *նաղամ* իր իրերի միջից գողացել են, խնդրեց հիշյալ խնդրի վերաբերյալ վերահաստատող *նաղամ*: *խասսեի սարքարոն թյ ու նից* հաստատեցին, որ 1065թ. Ոչխարի տարվա (1654/5թ.) սկզբից արքայական *նաղամով...* այն նրան շնորհեցինք ու կարգադրեցինք, որ հիշյալ հայ ժողովուրդը նրան իր կաթողիկոս ու առաջնորդ ճանաչի»<sup>761</sup>:

Այն, որ Պետրոս խանձկեցին շահական հրովարտակ ստացել էր դեռ 1655 թվականին, հաստատում է նաև Ղարաբաղի բեկլարբեկ Մուրթուզա Ղուլի խանի 1066 թ. ջումարի Ա. ամսի (1656 թ.) հրովարտակը, որտեղ նշվում է, որ նրա հրամանագիրը հրապարակվել է 1065 թ. զի դադե ամսի (1655 թ.) շահական հրովարտակի հիման վրա<sup>762</sup>: Իսկ 1675 թ. Սեֆյան շահ Սուլեյմանի հրովարտակը<sup>763</sup> ձեռք էր բերվել, որովհետև նախորդը հրապարակվել էր շահ Աբբաս Բ-ի կողմից և կաթողիկոսը պարտավոր էր իր իրավունքները վերահաստատել նոր շահի հրամանագրով:

Պետրոս խանձկեցի կաթողիկոսն իր մահից առաջ Աղվանից կաթողիկոսությունը հանձնում է իր աշակերտ և Գանձասարի վանքի աթոռակալ Գանձակի թեմի եպիսկոպոս Սիմեոն Խոտորաշենցուն<sup>764</sup>:

<sup>759</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 62

<sup>760</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2ա, վավ. 58:

<sup>761</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 14, 50

<sup>762</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2ա, վավ. 47ա,բ:

<sup>763</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 43:

<sup>764</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 71:



Միաժամանակ Աղվանից կաթողիկոսի աթոռը զբաղեցնելու իրավունքը վիճարկում էր Երեմիա Յասան-Ջալալյանը, որը կարողանում է իր կաթողիկոսական իրավունքները հաստատող հրովարտակներ ձեռքբերել Սեֆյան շահ Սուլեյմանից հիջրայի 1086 թ. սաֆար ամսին (1675թ.) ու Ղարաբաղի բեկլարբեկից հիջրայի 1087 թ. (1676թ.), ապա 1679 թ.<sup>765</sup>: Ամենայն Յայոց Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը հաշվի նստելով ազդեցիկ Յասան-Ջալալյանների ձգտումների հետ՝ 1677 թ. Երեմիային կաթողիկոս է օժուկում<sup>766</sup>: Երեմիայի ու նրա կողմնակիցների ճնշման տակ Սիմեոն Խոտորաշենցին թողնում է աթոռանիստ Գանձասարի վանքը և տեղափոխվում իր ծննդավայր Խոտորաշեն գյուղը:

Աղվանից կաթողիկոսական գահի շուրջ պայքարը շարունակվում է Երեմիային 1701 թ. հաջորդած Եսայի Յասան-Ջալալյանի և Սիմեոն Խոտորաշենցուն 1702 թ. հաջորդած Ներսեսի միջև, որոնց ձեռք բերած հրովարտակներում նշմարվում են օտար ուժերի շահագրգռությունները իրենց հարմար թեկնածուների համար կատարված միջնորդություններում:

Այս պայքարն իր արտացոլումն է գտել Եսայի կաթողիկոսի իրավունքները հաստատելու կապակցությամբ 1701 թ. հրապարակված շահ Սուլեյման Յուսեյնի հրովարտակում, որում նշվում է և՛ Սիմեոն կաթողիկոսի հավակնությունների, և՛ Երեմիայի ու Եսայու կողմից ներկայացված համախոսական գրությունների, և՛ անգամ Ռուսաստանի կայսեր պատվիրակի կատարած միջամտության մասին. «Նա [Եսային] ներկայացրեց մի խումբ անձանց ու Գորջեսթանի (Վրաստանի) *թավադներին* ձեռքով գրված և կնքված մի համախոսական, որը հաստատել էր նաև Գորջեսթանի բարձրաստիճան վալին: Եվ ռուսաց վեհապետ կայսեր դեսպանը ևս Երեմիայի մահվան կապակցությամբ դիմում հղեց՝ խնդրելով, որպեսզի այդ գործը նրան հանձնվի: Ըստ այդմ, 1112թ. սաֆար ամսի (1700թ. հունիսի 18 - օգոստոսի 16) արքայական *նաղամի* օրինակով, Վիշապի տարվա ութերորդ ամսի սկզբից Ծիրվանի ու Ղարաբաղի հայերի կաթողիկոսությունը, ինչպես որ Երեմիայի կապակցությամբ էր արվել, վերոհիշյալին

<sup>765</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2ա, վավ. 88, 91, 93, 94աբ:

<sup>766</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 71:

հանձնեցինք, որպեսզի այդ գործի պարտականությունները նա կատարի...»<sup>767</sup>:

1728 թ. Եսայի կաթողիկոսի մահից հետո Արցախում իրենց տիրապետությունը հաստատած թուրքական իշխանությունները հիջրայի 1141 թ. (1728/9 թ.) Ներսեսին Աղվանից կաթողիկոս են ճանաչում, իսկ Գանձասարի վանքի աթոռակալությունը հանձնում Գրիգոր վարդապետին<sup>768</sup>: Վերջինիս ենթակայության տակ Էրզրումում Գանձասարի թեմը, որի մեջ մտնում էին նաև Չարուզբիլի (Ճարի գավառի) գյուղերը: Այսպիսով, թուրքական իշխանությունները ևս շարունակում էին Աղվանքի կաթողիկոսության պառակտման քաղաքականությունը: Ներսես կաթողիկոսին հաջողվեց վերահսկողության տակ առնել Գանձասարի վանքը միայն Գրիգոր Յասան-Ջալալյանի մահից հետո 1748թ.:

1763 թ. Ներսես Դ. կաթողիկոսի մահից հետո հակառակ վերջինիս կողմից կաթողիկոս օժված Իսրայելի, Սիմեոն Երևանցի կաթողիկոսը գերադասում է Աղվանից կաթողիկոսության գահին հաստատել Յովհաննես Յասան-Ջալալյանին<sup>769</sup>: Պահպանվել է արցախահայության անունից 1763 թ. գրված համախոսական գրությունը հաստատված 33 անձանց՝ հայ մելիքների ու այլոց կնիքներով, որով նրանք համաձայնություն են տալիս Յովհաննեսի կաթողիկոսությանը<sup>770</sup>: Ղարաբաղի մելիքները նաև խնդրագիր են հղել Յերակլ արքային Յովհաննես ու Իսրայել կաթողիկոսների հակամարտության վերաբերյալ, որի վերջում նրանք հավաստում են, որ առաջինին են ճանաչում որպես Աղվանից կաթողիկոս<sup>771</sup>:

Յովհաննեսին հակաթոռ Իսրայել կաթողիկոսը նստում էր Գանձակում՝ այնտեղի Շահվերդի խանի հովանու ներքո: Երկու հակաթոռ կաթողիկոսների միջև ըստ երևույթին պայքար էր ընթանում Շաքի-Շիրվանի թեմի համար և այդ պատճառով Յովհաննես Յասան-Ջալալյանը ձեռք է բերում Շիրվանի Մուհամմադ Սաիդ խանի

<sup>767</sup> Յրովարտակի լրիվ տեքստը տե՛ս Բ. Կոստիկյան, Իրովարտակներ, արակ Գ, վավ. 65, էջ 149-152:

<sup>768</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 78:

<sup>769</sup> Ս. Երևանցի, Ջամբռ, էջ 121:

<sup>770</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 208բ:

<sup>771</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 226:

հիջրայի 1180 թ. (1766/7 թ.) հրամանագիրն այդ թեմն իր ենթակայ ության տակ հաստատելու մասին<sup>772</sup>:

Աղվանից կաթողիկոս Յովհաննես Յասան-Ջալալյանի սպանությունից (1786 թ.) հետո կարճ ժամանակ անց Ղարաբաղի էփրահիմ խանի ու հայ մելիքներ Աբովի, Մեջլումի և Շահնազարի աջակցությամբ Աղվանից կաթողիկոս է հաստատվում Իսրայելը<sup>773</sup>: Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը 1787 թ. վերահաստատում է Իսրայել կաթողիկոսին որպես «միահեծան հայրապետի վերայ տանդ Աղուանից» և հորդորում Շամախու և Նուխու թեմերին ենթարկվել նրան<sup>774</sup>:

Ղարաբաղի խանը միաժամանակ ազատ է արձակում Յովհաննեսի եղբայր Սարգսին և հաստատում նրան Խաչենի առաջնորդի դիրքում<sup>775</sup>:

Սարգիս Յասան-Ջալալյանը չէր վախենում էփրահիմ խանին դիմադրություն ցուցաբերել, մասնավորապես հոգևոր հարցերում: Այնուամենայնիվ, 1791թ. Սարգիս եպիսկոպոսը ապահովություն և չտեսնելով Գանձասարում՝ փախչում է Գանձակ<sup>776</sup>:

1787թ. Յերակլ Բ-ի դեպի Ղարաբաղ կատարած անհաջող ռազմարշավին վրացիների կողմում հանդես գալուց հետո Մելիք Աբովն ու Մելիք Մեջլումը ստիպված տարագրվել էին Ղարաբաղից<sup>777</sup>: Նրանք ու նրանց հյուրընկալած Ջավադ խանը ձգտում էին վերացնել Գանձակի խանության տարածքի թեմերի նույնիսկ անվանական ենթակայ ությունը Ղարաբաղի խանի դրածո Իսրայել կաթողիկոսին:

Գանձակի Ջավադ խանի հիջրայի 1205 թ. (1790/1 թ.) հրովարտակով Սարգիս Յասան-Ջալալյանը հաստատվում է որպես Աղվանից կաթողիկոս<sup>778</sup>: Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահվում է այդ հրամանագրի պատճենը<sup>779</sup>: 1794թ. Գանձակի խանի ու այնտեղ հաստատված վերոհիշյալ հայ մելիքների գործունե աջակցությամբ Սարգիս եպիսկոպոսն օծվեց Աղվանից կաթողիկոս<sup>780</sup>:

<sup>772</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 215:

<sup>773</sup> Այս մասին մանրամասն տես Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 174-176, նաև Ղուկաս Կարնեցի, Դիվան Յայոց պատմության, հ. Բ, էջ 220:

<sup>774</sup> Ղուկաս Կարնեցի, Դիվան Յայոց պատմության, հ. Բ, էջ 241-252:

<sup>775</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 177:

<sup>776</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 178:

<sup>777</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 178:

<sup>778</sup> Գ. Տեր Յովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 146:

<sup>779</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 238:

<sup>780</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 180-1:

Ինչպես փաստում է Մատենադարանի կաթողիկոսական դիվանի վավերագրերից մեկը, փորձ է արվել նաև Սարգիս Յասան-Ջալալյանի կաթողիկոսական իրավունքները հաստատել Իրանի տիրակալ Աղա Մուհամմադ խանի հրամանագրով: 1794թ. կազմվել է պարսկերեն համախոսական՝ հաստատված Գանձակ գաղթած Արցախի մելիքների և շրջակա հայկական գյուղերի հայ ավագանու շուրջ 60 ներկայացուցիչների ստորագրությամբ կնիքներով, որով նրանք իրենց համաձայնությամբ էին տալիս Սարգսի կաթողիկոսությանը<sup>781</sup>:

Յետաքրքրության են արժանի այդ փաստաթղթի գրության հանգամանքները: Այն կազմվել էր Աղա Մուհամմադ խանի Այսրկովկասյան արշավանքի նախօրեին՝ Գանձակում, որի խանն ի տարբերություն Յարավ-Կովկասյան խաների մեծ մասի, այդ թվում նաև Ղարաբաղի խանի, ուներ ընդգծված իրանական կողմնորոշում: Յայտնի է, թե արդյոք Սարգիսը ստանում է իր կաթողիկոսական իրավունքները հաստատող հրովարտակ Աղա Մուհամմադ խանից, թե ոչ:

Սարգիս կաթողիկոսը 1798թ. «սաստկացած խռովության» պատճառով փախչում է Թիֆլիզ<sup>782</sup>: Այնուհետև որոշ ժամանակով հաստատվում է Յաղպատում որպես այնտեղի արքեպիսկոպոս: Ռուսաստանի կողմից Գանձակի ու Ղարաբաղի խանությունների նվաճումից հետո Սարգիսը վերադառնում է Գանձասար և զբաղեցնում կաթողիկոսի աթոռը: Պահպանված վավերագրերի բովանդակությամբ հայտնի է դառնում, որ Սարգսի կաթողիկոսական իրավունքները հաստատվել էին Ղարաբաղի Մեհդի Ղուլի խանի 1812, 1813 և 1815 թվականների հրամանագրերով<sup>783</sup>: Նույն շրջանում մի քանի (Ղարաբաղի խանի 1812, Շաքիի Ջաֆար խանի 1813 և Շամախու Մուսթովֆի խանի 1814 թթ.) հրամանագրերով ճիշդանի թեմը հաստատվում է Գանձասարի Սարգիս կաթողիկոսի ենթակայության տակ<sup>784</sup>: Այնուամենայնիվ, 1815թ. Աղվանից կաթողիկոսությանը վերացվում է և Սարգիսը պաշտոնապես հռչակվում է որպես միայն արքեպիսկոպոս կամ միտրոպոլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի<sup>785</sup>, որով

<sup>781</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 241ա:

<sup>782</sup> Ալ. Երիցեանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 251:

<sup>783</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 160, 248, 249, 258

<sup>784</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 247, 255ա, 256ա:

<sup>785</sup> Ալ. Երիցեանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 252:

Ել ավարտված կարելի է համարել Աղվանից կաթողիկոսական աթոռակազմի վերականգնման հարցը:

Այսպիսով, անժխտելի է Մատենադարանի պարսկերեն վավերագրերի արժեքն ու կարևորությունը իրանական իշխանությունների հետ Յայնոց եկեղեցու հոգևոր առաջնորդների փոխհարաբերությունների ենթադրության և կաթողիկոսական աթոռակազմի վերականգնման մանրամասների ուսումնասիրության տեսանկյունից: Այս աղբյուրների տվյալներով ճշգրտվում են Յայնոց կաթողիկոսների կողմից տարբեր ժամանակահատվածներում իրենց իրավունքների հաստատման համար վճարվող փիշաքի չափը և նրա, որպես հարկ, ամրագրված լինելը Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական թագավորական տների գերիշխանության շրջաններում: Վավերագրերի տվյալները նաև հստակություն են մտցնում կաթողիկոսական աթոռակազմի վերականգնման օտար միջամտության դերի, բնույթի ու դրդապատճառների հարցերում:

**XVII-XIX դարերի պարսկերեն վավերագրերի  
տեղեկությունները Յայնոց  
եկեղեցու թեմերի պատկանելության շուրջ ծագած  
խնդիրների մասին**

XVII-XIX դարերի պարսկերեն վավերագրերը փաստացի տվյալներ են բովանդակում Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսությունների միջև որոշ թեմերի պատկանելության հարցի շուրջ ընթացող պայքարի մասին: Հատկապես թեժ էր պայքարը Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսությունների միջև Շիրվանի թեմի համար XVII-XVIII դարերում: Շիրվանի շրջանում հայեր բնակվել են դեռևս վաղնջական ժամանակներից, որոնք զգալի քանակ կազմելով հատկապես XVII-XVIII դարերում, բաշխված էին շուրջ 60 հայաբնակ գյուղերում<sup>786</sup>:

Մասնավորապես, 1606 թ. շահ Աբբաս Ա-ի հրովարտակի բովանդակությունից պարզ է դառնում, որ Գանձասարի (կամ Աղվանից) իրավունքները տարածվում էին միայն Խաչենի ու

<sup>786</sup> Շիրվանի հայության պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Ստեփանյան, Բաբվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2010, էջ 19-34

Գանձակի շրջանների վրա<sup>787</sup>: Նույն շահից 1617 թ. ստացած Էջմիածնի Մելքիսեթ կաթողիկոսի հրովարտակում Գանձակի թեմը ևս նշվում է Էջմիածնապատկան թեմերի շարքում<sup>788</sup>: Մինչդեռ 1634 թ. շահ Սեֆիի հրովարտակում շեշտվում է, որ Գրիգոր կաթողիկոսի ենթակայության տակ են գտնվում «Գանձակի, Ղարաբաղի, Շիրվանի, Շամախիի ու Չարուզբիլի» հայ համայնքները<sup>789</sup>: Ինչպես հայտնի է դառնում շահ Աբբաս Բ-ի 1650թ. հրովարտակի բովանդակությունից, դեռ շահ Սեֆիի 1634թ. մեկ այլ հրովարտակով Շիրվանի թեմը հաստատվել էր Էջմիածնի ենթակայության տակ և այդ հրովարտակը վերահաստատվում է շահ Աբբաս Բ-ի հիշյալ հրովարտակով<sup>790</sup>: Միաժամանակ շահ Սեֆիի 1634թ. մի հրովարտակով նաև Քաջարաղի թեմ հաստատվում է Էջմիածնի ենթակայության տակ<sup>791</sup>:

Աղվանից Պետրոս կաթողիկոսի աթոռակալության տարիներին<sup>792</sup> Շիրվանի թեմը վերահաստատվում է որպես Աղվանից կաթողիկոսության պատկանող թեմերից մեկը<sup>793</sup>: 1663 թ. շահ Աբբաս Բ-ից ձեռքբերած հրովարտակով Պետրոսը հաստատվում է որպես Գանձակի, Ղարաբաղի և Շիրվանի հայության կաթողիկոս<sup>794</sup>: Այս հրովարտակի հակառակ կողմում նշումներ կան շահ Սեֆիի ու Աբբաս Բ-ի վերը նշված հրովարտակների մասին, նաև նույն Պետրոս կաթողիկոսի կողմից իր որպես Գանձակի, Ղարաբաղի և Շիրվանի հայության կաթողիկոսի իրավունքները 1655 թ. ձեռք բերված հրովարտակով հաստատելու մասին<sup>795</sup>:

Պայքարը Շիրվանի թեմի ենթակայության հարցի շուրջ շարունակվում է նաև Պետրոս Խանձքեցու մահից հետո, Երեմիա Յասան-Ջալալյանի կաթողիկոսության շրջանում (1676-1700 թթ.): Վերջինիս կաթողիկոսական իրավունքները հաստատող 1675 թ. շահ

<sup>787</sup> Հ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 44:

<sup>788</sup> Հ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 12:

<sup>789</sup> Հ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 23:

<sup>790</sup> Հ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 42:

<sup>791</sup> Հ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 22:

<sup>792</sup> Ըստ Մ. Սմբատյանցի Պետրոս Գ Խանձքեցին Աղվանից կաթողիկոս է եղել 1653-1675թթ. (Մ. Սմբատյանց, Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանացն Սաղիանի, էջ 237):

<sup>793</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 20-21:

<sup>794</sup> Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 14:

<sup>795</sup> Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 14, էջ 50:

Սուլ էյ մանի հրովարտակում նշվում է, որ նահաստավում է որպես Գանձակ - Ղարաբաղի ու Շիրվան – Շամախու հայերի կաթողիկոս<sup>796</sup>:

Ինչպես հայտնի է, գուգահեռ այլ աղբյուրների տվյալներից Ամենայն Յայոց կաթողիկոս Յակոբ Ջուղայեցու միջնորդությամբ Երեմիա Յասան-Ջալալյանի աթոռակալության տարիներին Շիրվանի ու Գանձակի թեմերը դրվել էին նրան հակաթոռ Սիմեոն Խոտորաշենցի կաթողիկոսի ենթակայության տակ<sup>797</sup>: Յետագայում Ամենայն Յայոց կաթողիկոս դարձած Եղիազար Այնթապցին այդ թեմը ենթարկում է էջմիածնին<sup>798</sup>:

Շիրվանի թեմը Աղվանից կաթողիկոսությանը ենթարկելու ուղղությամբ ավելի վճռական քայլեր է ձեռնարկում Եսայի Յասան-Ջալալյանը<sup>799</sup>: Վերջինիս նախաձեռնությամբ կազմվում են նաև համախոսականներ, որոնցում Շամախու, Շիրվանի ու Շաքիի հայերը իրենց ենթակա են համարում Աղվանից կաթողիկոսին: Այդ համախոսականներից մեկը հայերեն է և հաստատված Շիրվանի ու Շաքիի 14 գեղջավազների, հոգևորականների կնիքներով ու բազմաթիվ մատնադրոշմներով<sup>800</sup>, մյուսը՝ պարսկերեն և հաստատված 100-ից ավելի վկաների՝ Շաքի, Շիրվանի ու նաև Ղարաբաղի գեղջավազների, մելիքների ու հոգևորականների կնիքներով ու ստորագրությամբ ունենրով<sup>801</sup>:

1700 թ. հրապարակվում է շահ Սուլթան Յուսեյնի հրամանագիրը, որով հանձնարարվում էր Շիրվանի, Կախեթի ու Ղարաբաղի տեղական իշխանություններին օգնություն ցուցաբերել Աղվանից կաթողիկոսին՝ իրեն ենթակա Շիրվանի հայերից եկեղեցական հարկերը հավաքելու հարցում<sup>802</sup>: Նույն շրջանում Շիրվանի հայությանն ուղղված կոնդակ է գրում Նահապետ Եդեսացի կաթողիկոսը՝ պատվիրելով նրանց կաթողիկոս ճանաչել ու հնազանդվել Եսայիին<sup>803</sup>:

<sup>796</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 43:

<sup>797</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., 20:

<sup>798</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 21:

<sup>799</sup> Եսայի Յասան-Ջալալյանը Գանձասարի կաթողիկոս է եղել 1701-1728 թթ.:

<sup>800</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 240, վավ. 3:

<sup>801</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 208ա:

<sup>802</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 63:

<sup>803</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 22:

Աղվանից Եսայի Զասան-Ջալալյանին հաջողվում է այս հարցի կապակցությամբ Աղվանից կաթողիկոսությանը ձեռնտու պայմաններով համաձայնության գալ նաև Ամենայն Յայոց կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցու հետ: Վերջինիս 1708 թ. կոնդակով Շիրվանի թեմը հանձնվում է Աղվանից կաթողիկոսությանը<sup>804</sup>: Սակայն, որքան էլ տարօրինակ է, նույն Ալեքսանդր կաթողիկոսի կողմից ձեռքբերված շահ Սուլթան Յուսեյնի 1712թ. հրովարտակով Շիրվանի թեմը նորից ճանաչվում է Էջմիածնի անմիջական ենթակայության տակ<sup>805</sup>: Ամենայն հավանականությամբ հենց այս պատճառով Եսայի Աղվանից կաթողիկոսը չի ներկայանում Աստվածատուր Յամադանցի կաթողիկոսին, որը 1715թ. հաջորդել էր մահացած Ալեքսանդրին: Ինչպես իրավացի կերպով նկատում է Լ. Մկրտումյանը, Շիրվանի թեմի կարգավիճակը օգտագործում էին Աղվանից կաթողիկոսության գործերի վրա ներազդելու ու կաթողիկոսներին իրենց հնազանդ պահելու համար<sup>806</sup>: Դա երևում է Աստվածատուր Յամադանցու դիրքորոշումից, որը բարկանալով Եսայու չներկայանալու պատճառով «նորից տերուների է առնում Շամախին, Շաքին, Շիրվանը և սրանց ենթակա մասերը»<sup>807</sup>: Յետագայում, 1719թ. երբ Եսայի կաթողիկոսը աղքատությանից դրդված ներկայանում է Սուրբ Աթոռ, Աստվածատուր կաթողիկոսը կոնդակ է գրում՝ հորդորելով Շամախու և շրջակա շրջանների հայությանը նվիրակական գումարները հանձնել Աղվանից կաթողիկոսին<sup>808</sup>:

Պատմական տեղեկություններ չկան Աստվածատուր Յամադանցուն հաջորդած Ամենայն Յայոց կաթողիկոսների կողմից Շիրվանի թեմը իրենց ենթարկելու փորձերի մասին: Այնուամենայնիվ պահպանվել է Գանձակի Սաիդ խանի հրովարտակը՝ հրապարակված Յովհաննես Յասան-Ջալալյանի<sup>809</sup> անունով, որով հիջրայի 1180 թ. (1766/7 թ.) Շիրվանի թեմը հաստատվում է նրա ենթակայության տակ և նշվում, որ. «Շաքիի, Ղաբալայի, ...ի գյուղերի

<sup>804</sup> Նույն տեղում

<sup>805</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Գ, վավ. 82:

<sup>806</sup> Լ. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 22:

<sup>807</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 117:

<sup>808</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 117:

<sup>809</sup> Յովհաննես Յասան-Ջալալյան Աղվանից կաթողիկոս (1763-1787):



ու լ ավ քաղաք Շամախու բոլոր հայ բնակիչները վերոհիշյալ ին են հնազանդվել ու նրան մշտապես վճարել ռուսումը: Հիշյալ Օվանես խալիֆայի պահանջով և նախկին շահերի *նաղամների* հիման վրա այդ *մահալ ների* ու քաղաքի առաջնորդությունը վերոհիշյալ ին հանձնեցինք, որպեսզի նախկինի նրան հնազանդվեն ու նրան պատվել ն ու մեծարել ը պարտադիր համարեն և ամենամյա *ռուսումը* նրան վճարեն»<sup>810</sup>:

Տվյալ դեպքում սակայն Շիրվանի թեմը հանվում էր Հովհաննեսին հակաթոռ Իսրայելի ենթակայության տակից, որը համարվում էր «ինքնագլուխ» ու ոչ օրինական ճանապարհով կաթողիկոս դարձած<sup>811</sup>, և տրվում նրան:

Պարսկերեն վավերագրերում արտացոլվել է նաև հայոց վանքերի միջև տեղի ունեցած վեճերը որոշ գյուղերի թեմական պատկանելության հարցի շուրջ:

Մասնավորապես Ս. Թադեի ու Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքերի միջև երկար ժամանակ պայքար է ընթացել Կարիզ, Մահլազան ու Կորուղ գյուղերի թեմական պատկանելության հարցի շուրջ<sup>812</sup>, որի մասին տվյալներ են բովանդակում Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Պահպանվել են մի քանի հրովարտակներ, որոնք հաստատում են այդ գյուղերից *չրաղլ ըղ* հարկը ստանալու Ս. Թադեի վանքի իրավունքը<sup>813</sup>, ինչպես նաև՝ հրովարտակներ և կաթողիկոսական կոնդակներ, որոնք հաստատում են այդ գյուղերի գտնվելը Ստեփաննոս Նախավկայի վանքի թեմի և վիճակի մեջ<sup>814</sup>:

Այսպես, Սեֆյան շահ Թահմասպ Ա-ի 1562թ. հրովարտակով հաստատվում է, որ Կարիզ, Մահլազան և Կորուղ գյուղերի *չ ըրաղլ ըղը* Ս. Թադեի վանքին է պատկանում և Դարաշամբի Ս.

<sup>810</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 215:

<sup>811</sup> Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1907, էջ 106:

<sup>812</sup> Խոսքն ամենայն հավանականությամբ հայոց կաթողիկոսների կոնդակներում ժամանակ առ ժամանակ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի թեմի ու վիճակի մեջ հիշատակվող՝ Ղորուխ, Մահլազան և Կրերեց՝ գյուղերի մասին է (Հ. Ռսկյան, շվ. աշխ., մաս Բ, էջ 607, 639):

<sup>813</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 119; Հ. Դ. Փափազյան, Նշվ. աշխ., պրակ 1, վավ. 16:

<sup>814</sup> Տե՛ս Մելքիսեդեկ առնեցի կաթողիկոսի (1593-1599, 1600-1624), Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսի 1712թ. կոնդակները (Հ. Ռսկյան, Նշվ. աշխ., էջ 607, 639); նաև այլ կոնդակներ՝ Մատենադարան, թղթ. 244, վավ. 248, 254, 260 և այլն; նաև շահ Սուլթան Հուսեյնի 1696թ. հրովարտակը (Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 58, էջ 136):

Ստեփանոս Նախավկայի վանքը նրան կատմամբ իրավունքներ չունի<sup>815</sup>: Նույնատիպ բովանդակությամբ հրովարտակ է հրապարակվում Նոր Ջուղայի Խոջա Նազարի միջնորդությամբ 1633 թ. շահ Սեֆի Ա-ի կողմից<sup>816</sup>:

Այս վեճը հավանաբար հետագայում լուծվել է Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի օգտին, քանի որ առավել մեծ է նրա օգտին հրապարակված Մելքիսեդեկ Գառնեցի կաթողիկոսի (1593-1599, 1600-1624), Ալեքսանդր Ա Ջուղայեցի 1712թ. այլ կաթողիկոսների կոնդակների թիվը<sup>817</sup>, և ավելի ուշ շրջանում, շահ Սուլթան Յուսեյնի 1696 թ. հրովարտակով այդ գյուղերը հաստատվում են նրա թեմում<sup>818</sup>:

Գեղարքունիքը եղել է Սյունիքի կամ Սիսական աշխարհի գավառներից<sup>819</sup>: Ղևոնդ Ալիշանի ուսումնասիրության համաձայն այն չի ունեցել առանձին եպիսկոպոսություն, այլ եղել է Գառնիի կամ Սյունյաց եպիսկոպոսների վիճակում<sup>820</sup>: Սեֆյան շահ Իսմայել Ա-ի 1503թ. հրովարտակով Գյոգչայի վիլայեթը (կամ Գեղարքունիքի գավառը) հաստատվում է Ս. Տաթևի վանքի ենթակայության տակ<sup>821</sup>: 1513թ. գրված մի փաստաթղթում, որ ներկայացնում է Ալիշանը, նշվում է «Մեք Գեղարքունու մելիք ու տանուտերքս եկաք ի Սուրբ աթոռս Ստաթե, կոնդակն կարդացաք, որ Գեղարքունու թեմն Տաթևու աթոռինն է»<sup>822</sup>:

Տաթևի Յովհաննես եպիսկոպոսի իրավունքները հաստատող շահ Սուլթեյմանի 1682թ. հրովարտակում<sup>823</sup> նշվում են Տաթևի թեմի մեջ մտնող շրջանները՝ «Գյոգչան, Քաշաթաղը, Արասբարը, Ղախանաթը, Բարգուշատը, Ագատ-Ջիրանը և Ղարադաղը»<sup>824</sup>: Տաթևի վանքը այդ ժամանակահատվածում թեև ուներ բազմաթիվ խնդիրներ կապված իր կալվածքների նկատմամբ ոտնձգությունների և զանազան անձանց ու

<sup>815</sup> Զ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 16:

<sup>816</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 119:

<sup>817</sup> Զ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 607, 639; նաև Մատենադարան, թղթ. 244, վավ. 248, 254, 260 և այլն:

<sup>818</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 58, էջ 136:

<sup>819</sup> Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, «Սովետական գրող», 1986, էջ 70:

<sup>820</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 35:

<sup>821</sup> Զ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 8:

<sup>822</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 34:

<sup>823</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 49:

<sup>824</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 49 (Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2ա, վավ. 99), նաև Նույն ֆոնդի, թղթ. 2բ, վավ. 111:

ցեղերի կողմից հասցվող նեղու թյ ու նների հետ, այ նու ամենայ նի վ ձ գտում էր իր ազդեց ու թյ ան տակ պահել վերոհի շյ ալ շրջանները: Այ ս իրող ու թյ ու նը հաս տատում է նաև շահ Սուլ է թան Յ ու ս էյ նի 1696թ. հրովարտակը, որը հաս տատում է Պե տրոսին Դար աշ ամբի Ս. Ստե փան ոս Նախավկայ ի վանահոր պաշ տոնում: Այ ս հրովարտակում մեջ է բերվում նաև Տաթևի Յ ով հան նես եպիսկոպոսի կողմից ձեռք բերված վերոհի շյ ալ հրովարտակի այ ն հատվածը, ըստ որի Տաթևի վանքի ենթակայ ու թյ ան տակ են գտնվում Գեղարք ու նիքի, Սյ ու նիքի ու Արաքսից հարավ ընկած Դար ադ աղի ու Արաս բարի վերը նշված շրջանները, որոնց մեջ ընդգրկվում էր նաև Դար աշ ամբի Մաղարդավանքը:

Շահ Սուլ էյ մանի հի շյ ալ հրովարտակով Տաթևի թեմի մեջ է հի շատակվում նաև Քաշ աթաղի շրջանը, որը դեռևս շահ Սե ֆի ի 1634 թ. հրովարտակով հաս տատվել էր Էջմիածնի ենթակայ ու թյ ան տակ՝ հակառակ Աղվանից կաթողիկոսի հավակն ու թյ ու նների<sup>825</sup>:

Այ ս պի ով, ատենախոս ու թյ ան մեջ դիտարկվող պարսկերեն վավերագրերը մանրամասն տվյ ալ ներով հարստացնում են Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոս ու թյ ու նների ներքին այ նախսի խնդիրների պատմ ու թյ ու նը, որպիսիք են Յ այ ոց եկեղեց ու որոշ թեմերի ու բնակավայրերի թեմական պատկանել ու թյ ան շուրջ տեղի ու նեցած վեճերի պատմ ու թյ ու նը:

## **2.5 Կաթոլիկական քարոզ չ ու թյ ու նն իրանահպատակ հայ ու թյ ան շրջանում ու նրադեմ Յ այ ոց եկեղեց ու պայքարի արտաց ու ու մը Մառենադարանի XVIII դարի պարսկերեն վավերագրերում**

Յ այ երի շրջանում կաթոլիկ ու թյ ան տարած ու մը օտար տիրապետ ու թյ ան տակ ապրող պետական ու թյ ու նից գրկված հայ ժողովրդի մեջ պառակտում մտցնող առավել վտանգավոր երև ույ թներից էր<sup>826</sup>, որը մասնատում էր առանց այ ն էլ մահմեդական հարևանների կողմից բաժան-բաժան եղած հայ բնակչ ու թյ անը և գրկում կաթոլիկացած հայերին Յ այ ոց եկեղեց ու

<sup>825</sup> Յ . Փախազյ ան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 22:

<sup>826</sup> Այ ս մասին տե'ս նաև K. Kostikyan, European Catholic Missionary Propaganda among the Armenian population of Safavid Iran, Iran and the World in the Safavid Age, London, New York, 2012, pp. 374

պաշտպանությունն ից, հանգամանք, որն ինչպես պատմությունն է ցույց տալիս, ճակատագրական է լինում Նախօջևանի հայության համար: Էլ ավելի կործանարար հետևանքներ է ունենում հայերի կաթոլիկացումը Լեհաստանում, որտեղ հայկական գաղութը շատ արագ ձուլվում է:

Հայության շրջանում կաթոլիկական քարոզչությունը սկսվել էր դեռևս Կիլիկյան թագավորության և խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանից հանդես գալով որպես «ուսիթոռական» (միարարական) շարժում: Իրանում այն սկսվում է Իլխանության շրջանից՝ XIII դարի երկրորդ կեսում<sup>827</sup>: Առաջին միսիոներները իրանում, կաթոլիկ դոմինիկյաններն ու ֆրանցիսկյաններն էին, որոնք բնակություն են հաստատում Թավրիզում: 1318 թ. Հռոմի Պապի կոնդակով ստեղծվում է արևելյան գավառների արքեպիսկոպոսությունը, որի կենտրոնն էր Իրանի Սուլթանիե քաղաքը<sup>828</sup>: 1320-1329 թթ. կաթոլիկական եպիսկոպոսանիստ քաղաքներ են դառնում Մարաղան, Թավրիզն ու Թիֆլիսը: Մարաղայի եպիսկոպոս Բարթոլոմեոսը հանդիսանում էր հայ ուսիթոռների առաջնորդը<sup>829</sup>: Կաթոլիկ քարոզիչներին հաջողվում է հաստատվել նաև Նախօջևանի գավառի Ջահուկ, Երնջակ ու այլ շրջաններում:

Մահմեդականների կաթոլիկացման հարցում հանդիպելով հոգևորականության ու շահական կառավարության անկոտրում դիմադրությանը և նպատակ ունենալով ընդլայնել Հռոմի ազդեցության շրջանակները՝ պապական քարոզչությունն կենտրոնանում էր հիմնականում հայ ազգաբնակչության վրա<sup>830</sup>:

1330 թ. Քռնայում հավաքված 12 վարդապետներ՝ մեծ մասամբ Հովհաննես Քռնեցու աշակերտներից, որոշում են կայացնում ոչ միայն անձամբ այլև իրենց ենթակա հավատացյալ ժողովրդով հնազանդվել Հռոմի Պապին և ընդունել կաթոլիկ եկեղեցու դավանանքը<sup>831</sup>: 1350 թ. Նախօջևանը ևս դառնում է կաթոլիկական

<sup>827</sup> А. У. Мартиросян, Армянские поселения на территории Ирана в XI-XV вв., Ереван, 1990, с. 135.

<sup>828</sup> Վ. Ա. Բայբուրտյան, նշվ. աշխ., էջ 148:

<sup>829</sup> Հովհաննես Քռնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 22:

<sup>830</sup> А. У. Мартиросян, Армянские поселения на территории Ирана в XI-XV вв., сс. 135-6; В. А. Байбуртян, նշվ. աշխ., էջ 124:

<sup>831</sup> Հովհաննես Քռնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 24:

Եպիսկոպոսութեան նստավայր, որտեղ էլ մեկ դար անց Սուլթանի Եի անկումից հետո տեղափոխվում է Եպիսկոպոսութեան կենտրոնը<sup>832</sup>:

Կաթոլիկական քարոզչությունը արևելքում նոր թափ է ստանում XVII դարից՝ զարգանալով Եվրոպական երկրների գաղութատիրական շահերին համապատասխան և Արևելքի երկրներ նրանց ներթափանցման համար տեղեկատվական հող նախապատրաստելով:

Մատենադարանի պարսկերեն հրովարտականերից մի քանիսն ուղղված լինելով ընդդեմ կաթոլիկական քարոզչության՝ արտացոլում են Չայ Եկեղեցու պայքարը սահմանափակելու նրա քայքայիչ հետևանքները իրանահայության համար:

Շահ Աբբաս Ա-ի իշխանության շրջանում հակաթուրքական զինակցության նպատակով Եվրոպական երկրների հետ Իրանի փոխարաբերություններն աշխուժանում են: Նախջևանի հայ կաթոլիկները զգալի դեր էին խաղում Իրանի ու Արևմուտքի երկրների միջև հարաբերությունների զարգացման ու դիվանագիտական ճանապարհով հակաթուրքական դաշինքի մեջ նրանց ներքաշման գործում<sup>833</sup>: XVI դարի վերջերից Եվրոպայի հետ քաղաքական ու առևտրա-տնտեսական կապերի ընդլայնմամբ Իրանում ու նրան ենթակա Արևելյան Չայ աստանում ակտիվանում է Եվրոպացի կաթոլիկ միսիոներների գործունեությունը: Շահ Աբբաս Մեծը սիրաշահելով Չոռմի Պապին ու կաթոլիկ աշխարհին, չէր խոչընդոտում կաթոլիկական քարոզչությունը հայության շրջանում և հայերի կաթոլիկացմանը:

Միաժամանակ կաթոլիկական առաքելություններն Իրանում իրականացնելով իրենց երկրների քաղաքական ու տնտեսական հեռահար նպատակներին համապատասխան հետախուզական գործունեություն՝ հող էին նախապատրաստում Իրանի հետագա գաղութացման համար, ուստիև Սեֆյան իշխանության շրջաններից ձեռք էին բերում իրենց առավել ազատ գործունեությունն ապահովող իրավունքներ ու արտոնություններ, որոնք էին՝

1. Մասնավոր սեփականություն ունենալու իրավունքը,

832. تاریخ ایران: دوره صفویان (پژوهش از دانشگاه کمبریج), تهران, 1380, ص. 182.

833. Մ. Կարապետյան, Չայ կաթոլիկեթեմը Ե թևնդաւ անական գործընթացները, Էջ 2:

2. Արքունիքին ու պետական պաշտոնյաներին վճարվող հարկերից ու տուրքերից ազատված լինելու իրավունքը,
3. Ազատառևտրի իրավունքը,
4. Իրանի տարածքում շրջելու, այնտեղ ժամանակավորապես կամ մշտապես բնակվելու իրավունքը,
5. Քաղաքական պաշտպանվածության իրավունքը,
6. Պետական պաշտոնյաների հատուկ հարգանքը վայելելու իրավունքը,
7. Ցանկացած ժամանակ շահի մոտ ընդունելու թյուն ու նենալու իրավունքը,
8. Քրիստոնեական հավատը դավանելու ազատությունը,
9. Կաթոլիկական հոգևոր, կրթական ու այլ հաստատություններ բացելու իրավունքը,
10. Իրանում բնակվող բոլոր քրիստոնյաների հետ ազատ շփվելու իրավունքը,
11. Իրանում բնակվող Յոզմի Պապին ենթակա հոգևոր անձանց լիակատար իրավական անձեռնմխելիության իրավունքը<sup>834</sup>:

Դեռևս 1608թ. շահ Աբբաս Ա-ի հրամանագրով կաթոլիկ միսիոներներին Սպահանում բնակության համար տներ էին տրամադրվել հոսող ջրով և երկրում ազատ անցուդարձ կատարելու իրավունք՝ պաշտոնյաներին հրահանգելով նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերել<sup>835</sup>: Պահպանվել է նաև շահ Աբբաս Ա-ի հրովարտակը Դերբենդի կառավարչին՝ այդ քաղաքում ևս Կարմելյան հայրերին բնակության վայր տրամադրելու մասին<sup>836</sup>: Ինչպես Առ. Դավրիժեցին է նշում իր պատմության մեջ, կաթոլիկ հայրերը ազատ շրջում էին հայաբնակ վայրերում, մտնում հայոց վանքերը «հաճեցուցեալ են վանականացն և գեղականացն յինքեանս», նաև փորձում են ձեռքբերել սուրբ մասունքներ<sup>837</sup>: Չայտնի են մասնավորապես Ս. Յոզիսիմեի մասունքների հախճաթման հետ կապված դեպքերը, որոնց մասին մանրամասն պատմում է Առ.

<sup>834</sup> М. Г. Панахиян, նշվ. աշխ., էջ 15:

<sup>835</sup> Mufakhkham, Muhsin. "Asnad va mukatibat-i tarikhi." Barrasi-ha-yi tarikhi 2, 3-4 (1346/1967): 363-66. 363-64 (<http://www.asnad.org/en/document/22/>).

<sup>836</sup> شاه عباس: مجموعه اسناد و مکاتبات تاریخی همراه با یادداشتهای تفصیلی، جلد سوم، به اهتمام دکتر عبد الحسن نوایی، تهران، انتشارات بنیاد فرهنگ ایران، 2537، ص. 286-7.

<sup>837</sup> Առ. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 167-8:

Դավրիժեցի: Նրա հավաստմամբ Նոր Ջուղայի խոջա Նազարի ջանքերով այդ նշխարները վերադարձվում են, իսկ դրանք տարած կաթուղիկ հայրերը պատժվում են<sup>838</sup>: Այդ հարցին անդրադառնում է նաև շահ Աբբաս Ա-ի 1610 թ. հրովարտակը, որով կարգադրվում է տեղում հետաքննություն անցկացնել և պատժել Յռիփսիմեի մասունքների հախչ տակման գործի մասնակիցներին<sup>839</sup>:

Շահ Աբբաս Ա-ն անգամ մտադիր էր Սպահանում կառուցել մի մեծ եկեղեցի հայերի համար, որի քարերը բերվելու էին Ս. Էջմիածնից, իսկ եկեղեցական արարողությունները կատարելու էր Յռոմի Պապի սպասավորը և այդ մասին 1614 թ. հրապարակում է հրովարտակ<sup>840</sup>: Այնուամենայնիվ Նոր Ջուղայի հայ համայնքն ի դեմս ազդեցիկ հայ խոջաների և հատկապես խոջա Նազարի, որոնք վճռականորեն դեմ էին տրամադրվել այդ նախաձեռնության իրականացմանը, կարողանում են կանգնեցնել նրա իրագործումը<sup>841</sup>:

Կաթուղիկ հայրերին Սպահանում բնակության վայր տրամադրելու մասին վերը նշված հրովարտակը, ինչպես նաև քարոզիչների ազատ գործունեությունը հայության շրջանում ապահովող մի քանի այլ հրովարտակներ են հրապարակվում ու վերահաստատվում շահ Աբբաս Բ-ի կողմից 1642թ. և շահ Սուլթան Յուսեյնի կողմից 1699/1700 և 1708/9 թթ.<sup>842</sup>, նաև հետագայում՝ Նադիր շահի, Քերիմ և Ալի Մուրադ խաների կողմից<sup>843</sup>:

XVII- XVIII դդ. Իրանի գրեթե բոլոր խոջոր քաղաքներում՝ Սպահանում, Շիրազում, Բենդեր Աբբասում, Թավրիզում և այլուր Սեֆյան շրջանում գործում էին կաթուղիկական վանքեր ու եկեղեցիներ<sup>844</sup>:

XVII դարի վերջից սաստկանում է կաթուղիկական քարոզչությունը նաև Օսմանյան կայսրության տարածքում ապրող

<sup>838</sup> Առ. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 173-8:

<sup>839</sup> Զ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 10:

<sup>840</sup> Mufakhhkam, Muhsin. "Asnad va mukatibat-i tarikhi." Barrasi-ha-yi tarikhi 2, 5 (1346/1968): 151-63. 157-58 (<http://www.asnad.org/en/document/28/>)

<sup>841</sup> Իկսվ և Բնյահ սնդ տարիքի ազ յալիրյան տա քիլույ, Բկոշիտ սր հնգ յեանգիր զայմ զմայ, Վ. 24

<sup>842</sup> Այդ մասին մանրամասն տես՝ Առ. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 181-3:

<sup>843</sup> Իկսվ և Բնյահ սնդ տարիքի ազ յալիրյան տա քիլույ, Բկոշիտ սր հնգ յեանգիր զայմ զմայ, Վ. 65, 62, 28:

<sup>844</sup> Իկսվ և Բնյահ սնդ տարիքի ազ յալիրյան տա քիլույ, Բկոշիտ սր հնգ յեանգիր զայմ զմայ, Վ. 105, 103, 97:

<sup>844</sup> Մրիմ Միր ահմեդի, Դին և Դոլտ Դր Եսր Վսֆույ, Թեհրան, 1329, Վ. 104:

հայ ության շրջանում, որը հայ համայնքում սուր պայքարի է վերածվում՝ զոհեր տանելով հայ կաթոլիկների շրջանից<sup>845</sup>:

Մեծ նշանակություն տալով հայերի կաթոլիկացմանը՝ եվրոպացի միսիոներները անգամ որոշ մեթոդներ էին մշակել հայերի շրջանում արդյունավետ գործունեություն ծավալելու համար<sup>846</sup>: Շնորհիվ շահական արքունիքից ձեռքբերած արտոնությունների նրանք կարողանում էին ազատ քարոզչություն ծավալել, որի հետևանքով հետևորդների խմբեր ունեին Այսրկովկասի գրեթե բոլոր քաղաքներում:

Նախիջևանի հայ կաթոլիկների թիվը XVII դարի սկզբին կազմում էր շուրջ 1580 ընտանիք կամ 19400 շունչ, որը զգալիորեն պակասում է շահ Աբբաս Ա-ի կողմից իրականացված հայ ության մեծ բռնագաղթի հետևանքով՝ նվազելով մինչև 305 ընտանիք<sup>847</sup>:

Մի շարք հանգամանքներ նպաստում էին Հայաստանի ու հարևան երկրների հայ ության շրջանում կաթոլիկության տարածմանը: Նախ այն, որ հայ ժողովուրդը զուրկ էր պետականությունից, հետևաբար նաև պետության կողմից կրոնի պաշտպանությունից: Կաթոլիկ միսիոներները օգտվելով Հռոմի Պապի հեղինակությունից, նրանյութական ու կազմակերպչական լայն հնարավորություններից, հայ բնակչության համակրանքը շահելու համար քարեգործություն էին անում. անվճար բուժօգնություն ու առանձին դեպքերում նյութական օժանդակություն ցուցաբերում, երեխաներին կրթում և այլն<sup>848</sup>: Կաթոլիկական միսիոները գտնվում էին Սեֆյան պետության հովանավորության ներքո և ունեին հատուկ արտոնություններ<sup>849</sup>:

Կաթոլիկական քարոզչության հաջողության գրավականներից մեկը համարվում էր կաթոլիկական դպրոցների հիմնումը, երեխաների ընդգրկումն այդ դպրոցներում և նրանց դաստիարակումը կաթոլիկական ոգուն համապատասխան: Իրանի շահի թույլտվությամբ ու եվրոպացի միսիոներների ջանքերով հայ երեխաներին ու պատանիներին կաթոլիկական ոգով դաստիարակելու

<sup>845</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Ստեփանյան, Հայերի ներդրումը Օսմանյան կայսրությունում, Երևան, 2011, էջ 23-29:

<sup>846</sup> Տ. Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 267:

<sup>847</sup> Մ. Կարապետյան, Հայ կաթոլիկեթեմը եւ Էթնոդաւանական գործընթացները, էջ 2-3:

<sup>848</sup> В. А. Байбуртян, նշվ. աշխ., էջ 126:

<sup>849</sup> Տ. Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 268:



համար դպրոցներ են բացվում Շիրազում, Սպահանում ու Նոր Ջուղայում, նաև այլ հայաբնակ վայրերում<sup>850</sup>: Կարմելյանների ծրագրերում նախատեսված էր նաև քարոզչական աշխատանքների մեջ ներգրավել երիտասարդ, չափահաս, անգամ տարեց մարդկանց, որոնց համար Կարմելյանները Նոր Ջուղայում բացված դպրոցում դասավանդում էին գրաճանաչություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, լեզուներ և այլն<sup>851</sup>:

Եվրոպացի միսիոներները հայ ժողովրդի ու հոգևորականության առաջ այն պատրանքն էին ստեղծում, թե Յոզմի եկեղեցու դավանանքն ընդունելու դեպքում հայ ժողովրդի ազատագրումը եվրոպական երկրների օգնությամբ հնարավոր կլինի<sup>852</sup>: XVII դարում հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի գաղափարները կաթոլիկական աշխարհի հետ կապող որոշ եկեղեցական գործիչներ, անգամ կաթողիկոսներ, որպիսիք էին Յակոբ Ջուղայեցին<sup>853</sup> և Նահապետ Եդեսացին<sup>854</sup>, հանդուրժող դիրք էին բռնել կաթոլիկ հայրերի ու նրանց քարոզչական գործունեության հանդեպ: Այնուամենայնիվ ինչպես ճիշտ նկատել է Յ. Անասյանը՝ «հայոց լատինասիրությունը... առերեսային էր, լոկ կաթոլիկ եվրոպայի համակրանքը շահելու համար»<sup>855</sup>: Օգտվելով հայ եկեղեցու ներքին երկպառակություններից՝ կաթոլիկ միսիոներները օժանդակում էին մեկ այս, մեկ մյուս կողմին և ջանում հաղթող կողմի միջոցով հասնել կաթոլիկական ու առաքելական եկեղեցիների միավորմանը: Հաղթող կողմը, օգտվելով նրանց օժանդակությունից՝ այնուամենայնիվ հիասթափեցնում էր նրանց ակնկալիքները, քանի որ չէր կարող դեմ գնալ ամբողջ հայ եկեղեցականության ու ժողովրդի կամքին<sup>856</sup>:

XVII դարի վերջին կաթոլիկությունը տարածում էր գտել Երևանի, Նախիջևանի նահանգներում, Ղարաբաղի, Գանձակի, Ծամախու,

<sup>850</sup> Թ. Մարտոյան, նշվ. աշխ., էջ 72:

<sup>851</sup> Նույն տեղում:

<sup>852</sup> Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 175:

<sup>853</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3024-5:

<sup>854</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, p. 454.

<sup>855</sup> Յ. Ա. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 257:

<sup>856</sup> Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 304:

Շիրվանի, Բաքվի, Դերբենդի, Նուխուլ<sup>857</sup>, նաև Թավրիզի<sup>858</sup>, Շիրազի<sup>859</sup> ու Սպահանի հայ ության շրջանում:

Կաթուղիկ միսիոներներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին Նոր Ջուղայի հայ կական առևտրական կապիտալի կենտրոնի վրա՝ իրենց կողմը հակելով առավել խոշոր ու ազդեցիկ վաճառականներին և կարողանալով նրանց փողերն օգտագործել իրենց գործունեության համար<sup>860</sup>: Միայն Սպահանում կային յոթ կաթուղիկական եկեղեցիներ, որոնցից չորսը գտնվում էին Նոր Ջուղայում<sup>861</sup>: Տեղի հայ հոգևորականությունը համառ պայքար էր մղում կաթուղիկ միսիոներների դեմ, «սպառնում նրանց և թույլ չէր տալ իս բնակչությանը երեխաներին նրանց մոտ ուղարկել սովորելու»<sup>862</sup>: Դեռ 1653 թ. ջուղահայերի ջանքերով հրապարակվում է շահ Աբբաս Բ-ի հրամանագիրը, որով արգելվում է Նոր կաթուղիկական վանքի կառուցումը Նոր Ջուղայում<sup>863</sup>: Այդ պայքարը հատկապես սրվում է շահ Սուլեյմանի իշխանության տարիներին: Կաթուղիկների դեմ իրենց պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով հայ հոգևորականությունը Նոր Ջուղայում 1640թ. հիմնված տպարանում սկսում է տպագրել կաթուղիկական գաղափարները հերքող և հայ լուսավորչական եկեղեցու սկզբունքները պաշտպանող գրքեր<sup>864</sup>:

Լյուդովիկոս XIV կայսեր օրոք (1643-1715) իրանում ակտիվացել էր ֆրանսիական միսիոներների գործունեությունը: XVII դարի վերջին ֆրանսիացի կաթուղիկ միսիոներների ջանքերով շահ Սուլթան Յուսեյնը վերահաստատում է նրանց արտոնությունները, սակայն Նոր Ջուղայի հայոց եկեղեցին Յուսեյնի պապին ենթարկելու հարցում նրանք հաջողություն չեն ունենում<sup>865</sup>: Նոր Ջուղայի թեմական առաջնորդ Ստեփանոս Եպիսկոպոսի ջանքերի շնորհիվ շահ Սուլեյմանի հրամանով ճիզվիտ միսիոներները դուրս են քշվում

<sup>857</sup> Ա. Վ. Բայբուրդյան, նշվ. աշխ., էջ 155:

<sup>858</sup> Հ. Աճեմյան. Պատմական Թավրիզի հին հայ ությունը, Դիվան Ատրպատականի հին հայոց պատմության, հ. 1, Բեյրութ, 1980, էջ 73:

<sup>859</sup> Л. А. Семенова, նշվ. աշխ., էջ 99:

<sup>860</sup> В. А. Байбуртян, նշվ. աշխ., էջ 135.

<sup>861</sup> Յ. Տեր Յովհաննես, նշվ. աշխ., հ. Բ, չջ 265:

<sup>862</sup> Л. А. Семенова, նշվ. աշխ., էջ 100:

<sup>863</sup> Լ. Գ. Մինասյան, Դիվան Ս. Ամենափրկիչ վանքի 1606-1960, Նոր Ջուղա, 1983, էջ 111:

<sup>864</sup> В. А. Байбуртян, նշվ. աշխ., էջ 143

<sup>865</sup> تاریخ ایران: دوره صفویان, پژوهش از دانشگاه کمبریج, ص. 212.

Սպահանից և քանդվում է կարմելյանների վանքը<sup>866</sup>: Ըստ Կարմելյան հայր եղիայի 1694 թ. նամակի Նոր Ջուղայի Յայոց թեմի առաջնորդ Ստեփաննոսն այդ նպատակով շահական արքունիքը կաշառելու համար ծախսում է 3000 թուման կամ 45000 սկուդի<sup>867</sup>:

XVIII դարի սկզբին Իրանում գտնվող Ֆրանսիայի դեսպան Միշելը գբաղված էր ֆրանսիացի վաճառականների ձեռքբերած հին արտոնագրերի վերանորոգմամբ ու իրանա-ֆրանսիական առևտրական կապերի կարգավորմամբ: Նրա ջանքերով 1708թ. Ֆրանսիայի և Իրանի միջև կնքված պայմանագրի 27-րդ կետով ֆրանսիացի հոգևորականներին ու մյուս միսիոներներին իրավունք էր տրվում ազատ կերպով իրենց հավատի արարողություններն ու ծեսերը կատարել: Կովկասի քաղաքներում, Սպահանում, Թավրիզում ու Իրանի մյուս վայրերում բնակվող կաթոլիկ քահանաներին միանշանակ կերպով տրվում էր գործունեության ազատություն<sup>868</sup>: Միշելը միջամտում է նաև միսիոներների և իրանահայ եկեղեցականների բախումներին<sup>869</sup>: 1708թ. նա ձեռք է բերում «միսիոներներին նեղացնողներին պատժելու համար» շահական հրամանագրեր՝ հասցեագրված մեկը Վրաստանի Գեորգի XI թագավորի տեղապահ (ջանիշին) Վախթանգին, մյուսը՝ Թավրիզի բեկլարբեկին: Այդ հրամանագրերով հրահանգվում էր չնեղել միսիոներներին ու չարգելել հայերին հաճախել կաթոլիկական եկեղեցին<sup>870</sup>:

Կաթոլիկ միսիոներների ակտիվ գործունեությունը հայ բնակչության շրջանում սանձահարելու ուղղությամբ լուրջ քայլեր է ձեռնարկում Էջմիածնի Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսը: Դեռևս նախքան իր կաթողիկոս դառնալը 1706 թ. Ալեքսանդրը հանդես էր եկել որպես «բուռն պաշտպան հայ ադաւան ուղղափառութեան», որի մասին վկայում են նրա գրած «Գիրք ատենական, որ ասի վիճաբանականը» (տպագրվել է 1687) և «Աղօթամատոյցը» (1790): Ալեքսանդր կաթողիկոսն անգամ 1709 թ. փետրվարին մի նամակ է հղում Յոնմի Պապին՝ առաջարկելով նրան

<sup>866</sup> Յ. Տեր Յովհաննէանց, նշվ. աշխ., հ. Բ, շջ 266-267:

<sup>867</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, pp. 464-5.

<sup>868</sup> .273 .է , 1372 , ՄԿԵՆ , ճՅՂՄ քՄ ok DJԹOC Բ ՄԿԵԸ իvDիv ԴԿԹo , ինՅՍՍ ԿիweիCIGԻ

<sup>869</sup> Աշ. Յովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 582.

<sup>870</sup> Յ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 74:

դադարեցնել կաթոլիկ քարոզիչների գործունեությունը հայություն շրջանում<sup>871</sup>:

1710 թ. նրա կողմից շահ Սուլթան Յուսեյնից ձեռքբերված հրովարտակով հրահանգվում է հրանի բոլոր պաշտոնյաներին սահմանափակել միսիոներների քարոզչական գործունեությունը իրանահպատակ հայություն շրջանում<sup>872</sup>. Այդ հրովարտակով նշվում է և Ֆրանսիայի վերը նշված դեսպանի և նրա ջանքերով կնքված պայմանագրի մասին, այնուհետև մատնանշվում նրա անընդունելի լինելը հայ համայնքի համար և որ «շահական տիրապետության տակ գտնվող տարածքներում, հատկապես թագավորանիստ Սպահանում, Գորջեսթանում, Թավրիզում, Յամադանում, Գանջայում, Ղարաբաղում և Չուխուր Սա'ադում... պետք է արգելեն թուրք չտան նրանց որևէ կերպ միջամտել հայերի ու մյուս քրիստոնյաների հավատքի գործերին ու սովորույթներին, նրանց երեխաներին ու պատանիներին իրենց եկեղեցիներն ու դպրոցները տանեն, նրանցից պահանջեն դավանափոխ լինել, նրանց կանանց հետ ամուսնանան, նրանց բնակավայրերում եկեղեցիներ կառուցեն, տուն ու մուլլա գնեն և այնպես վարվեն, որպեսզի հայերի մոտ առաջ բերեն Ֆարանգիների հավատն ընդունել ու ցանկություն ունենան»<sup>873</sup>:

Ինչպես տեսնում ենք սույն հրովարտակով, հնարավորինս սահմանափակվում են կաթոլիկ քարոզիչների շփումները հայերի հետ և նրանց դավանափոխության հնարավորությունները:

Իրանի շահն այնուամենայնիվ հեռու էր իրանահպատակ հայերի շահերի վճռական պաշտպանությունից: Կամազուրկ ու հարեմի հաճույքներով տարված շահը և կաշառակերության մեջ թաղված վարչական համակարգը հրապարակում էր հրովարտակներ ինչպես ի շահ Յայ եկեղեցու, այնպես էլ՝ կաթոլիկ քարոզիչների<sup>874</sup>:

XVIII դարի սկզբին Ալեքսանդր կաթողիկոսի ձեռնարկումները կաթոլիկ քարոզիչների ու կաթոլիկացած հայերի դեմ թե՛ Իրանում և թե՛ Օսմանյան կայսրության տարածքում հանգիստ չէին թողնում

<sup>871</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3205:

<sup>872</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, արակ. Գ, վավ. 71:

<sup>873</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, արակ. Գ, վավ. 71, էջ 161:

<sup>874</sup> Այդ մասին տե՛ս նաև Ք. Կոստիկյան, Կաթոլիկ քարոզչությունը Իրանում և հայ իրականությունը, «Մեր ձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 206:

Նրանց<sup>875</sup>: Նրա ձեռնարկած քայլերի արդյունքում ծանր հարված է հասցվում Թավրիզի ու Թիֆլիսի հայ կաթոլիկների համայնքներին: Ալեքսանդր Ջուղայեցու ջանքերով նույն շահ Սուլթան Յուսեյնի կողմից կաթոլիկական քարոզչության դեմ ուղղված 1712թ. հրովարտակում նշվում է, որ «Թագավորանիստ Թավրիզում բնակվող պատրիսերը... Նորին Գերագանցությունն վերոհիշյալ *օլքայի բեկլարբեկի նայեբին* դիմելով՝ 25 հայերից 50-ական թումանի *իլթիզամ* են գանձել այն քանի համար, որ [վերջիններս] արգելել են հայերին պատրիսերի տներն ու եկեղեցիները հաճախել: Այս դեպքը հայերի մեջ իրարանցում առաջ բերեց, և քանի որ այն հակառակ է արքայական հրովարտակին, խնդրեց այն վերահաստատող *նաղամ* [շնորհել], որպեսզի հիշյալ պատրիսերը արքայական *փարվանջեին* համապատասխան վարվեն, նրա իմաստից ու բովանդակությունից չշեղվեն, վերը նշված արարքները չգործեն, իրենց չնեղեն ու հայերից բռնագանձված *իլթիզամները* նրանց ետվերադարձնեն»:

Յրովարտակի նշված հատվածը որոշակի տեղեկություն է հաղորդում կաթոլիկ քարոզիչների հայ եկեղեցու հակադեցույթյան դեմ ձեռնարկած քայլերի մասին: Այնուամենայնիվ Ալեքսանդր Ջուղայեցին այս հրովարտակով նոր հարված է հասցնում կաթոլիկ քարոզչությանը՝ պարտադրելով Թավրիզի կառավարչին հանդես գալ ի շահ Յայոց եկեղեցու և վերադարձնել հայերից որպես տուգանք վերցված գումարները: Ընդարձակ հրովարտակի հետագա շարադրանքով կարգադրվում էր «որպեսզի պաշտպանություն տակ գտնվող երկրների *վալիները, բեկլարբեկերը, մեծ ամիրները, հաքիմները, վեզիրները, դարուղաները, մեծահոգի ամիրները, դիվանի գործերի մութասադդիներն* ու *մուբաշիրները* ... այսուհետև թույլ չտան պատրիսերից ու ֆարանգիներից ոչ մեկին, անբիժ *շարի'ն* հակառակ, հայերին նեղել, նրանց երեխաներին մոլորեցնել ու դավանափոխանել կամ էլ նրանց կանանց բռնությամբ կնություն առնել: Եվ եթե պաշտպանության տակ գտնվող երկրներում, հատկապես թագավորանիստ Սպահանում, Թավրիզում, Գորջեսթանում, Գանձակում, Ղարաբաղում, Ծիրվանում, Չուխուր Սաադում ու

<sup>875</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, pp. 521-2, 525.

Համադանում բնակվող պատրիսներն ու ֆարանգիները հիշյալ արարքները գործեն և հայ քրիստոնյաների վերոհիշյալ առաջնորդը, Մովսես խալիֆան, մյուս խալիֆաներն ու քահանաները այդ մասին տեղեկացնեն, ապա պետք է արգելեն ու թույլ չտան ֆարանգիներին որևէ կերպ միջամտել հայերի հավատի գործերին ու սովորույթներին, նրանց երեխաներին ու պատանիներին գայթակղել կամ նրանց հարկադրել ընդունել ֆարանգիների դավանանքը, այլ պետք է թույլ տան, որպեսզի նրանք ամեն հարցում իրենց հավատին ու սովորույթներին համապատասխան վարվեն...Եվ այս հարցում թող ամեն կերպ օրինական օգնություներ ցուցաբերեն հայերին ու թույլ չտան, որպեսզի նրանցից այն մի քանիսը, որ ներկայումս ֆարանգի են դարձել, պատրիսների եկեղեցիները աղոթքի գևան ու նրանց հետ շփվեն»<sup>876</sup>:

Կաթոլիկ հայրերի զեկուցմամբ Ալեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսն ու Նոր Ջուղայի Հայոց թեմի առաջնորդ Մովսեսը միասին շուրջ 150000 պիաստրի հասնող գումար են ծախսում կաթոլիկական առաքելությունները տարբեր վայրերից դուրս բռնելու վրա<sup>877</sup>:

Այս հրովարտակներով հիմնավորված հայ հոգևորականության պայքարը կաթոլիկական քարոզչության դեմ արձանագրում է որոշակի հաջողություններ: Հ. Հովհանյանցի հավաստմամբ Ալեքսանդր կաթողիկոսը «հալածական վարեաց գևոսս [միսիոներներին] 'ի Պարսկաստանայ հասուցանելով զբազում խոշտանգանս ժողովրդեանն դարձելոց 'ի պապականութիւնն»<sup>878</sup>: Նա փակել է տալիս կապուչինների վանքը Թավրիզում, «տակնովրանում» Ծամախին, Գանձակը և Թիֆլիսը<sup>879</sup>: Արդյունքում Թավրիզում քայքայվում է կաթոլիկների միաբանությունը, վանքը քանդվում է և XVIII դարի կեսերին կաթոլիկության որևէ հետք չի մնում այնտեղ<sup>880</sup>: Կաթոլիկ միսիոներների հավաստմամբ շահի հիշյալ հրովարտակները լիովին չեզոքացնում են նախորդ հրովարտակներով նրանց տրված արտոնությունները և թուլացնում

<sup>876</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 83, էջ 179:

<sup>877</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, p. 528.

<sup>878</sup> Յ. Տեր Յովհանեանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 268:

<sup>879</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3207:

<sup>880</sup> Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 78:

կաթոլիկական առաքելության ունեները՝ հատկապես ծանր հետևանքներ ունենալով Թավրիզի Կապուչինների համար<sup>881</sup>:

Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ XVIII դարում կաթոլիկական քարոզչությունն իրանում իսպառ դադարում է: Թե՛ XVIII և թե՛ XIX դարերում մերթնդմերթ բորբոքվում էր պայքարը կաթոլիկ քարոզիչների ու լուսավորչական հայերի միջև Նոր Ջուղայում<sup>882</sup>: Ալեքսանդր Կաթողիկոսին 1715թ հաջորդած Աստվածատուր Յամադանցին կաթողիկոսը<sup>883</sup> շարունակում է իր նախորդի անհանդուրժողական վերաբերմունքը կաթոլիկական քարոզչության նկատմամբ և 1718 թ. շահ Սուլթան Յուսեյնի նոր հրովարտակով վերահաստատում նրա հրահանգները կաթոլիկ հայրերի գործունեությունը հայության շրջանում սահմանափակելու մասին<sup>884</sup>:

Ապարդյուն են լինում այս շրջանում կաթոլիկ քարոզիչների ջանքերը, այդ թվում նաև Յոզմի Պապի 1719թ. նամակը իրանի շահին Թիֆլիսում և այլուր փակված առաքելության ունեները վերահաստատելու և Աստվածատուր Կաթողիկոսին հակազդելու ուղղությամբ: Երկրում տիրող կաշառակերության ու աֆղան տիրապետողների թողտվության պայմաններում հայերը շարունակում են հետապնդել կաթոլիկ քարոզիչներին և նոր հարվածներ հասցնել նրանց<sup>885</sup>:

Ջուղահայերի կողմից կաթոլիկական քարոզչության դեմ XVIII դարի առաջին կեսում ձեռքբերված մի քանի հրովարտակներ էլ պահվում են Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, որոնց թվում են շահ Սուլթան Յուսեյնի 1710, 1711, 1712 թ., Աֆղան շահ Աշրաֆի 1726 թ. հրովարտակները<sup>886</sup>:

Նադիր շահն իր կրոնական համոզմունքներով մոլեռանդ էր և քաղաքական նպատակներով անգամ փորձում էր նոր մահմեդական ուսմունքի՝ ջաֆարիականության ներդրմամբ հաշտության եզրեր

<sup>881</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, p. 526.

<sup>882</sup> Յ. Տեր Յովհանեանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 270-1:

<sup>883</sup> Տ. Աստվածատուր Ա Յամադանցին ամենայն հայոց կաթողիկոս է օծվել 1715թ. մայիսին և մահացել է 1725թ. հոկտեմբերի 10-ին (Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 3243, 3286):

<sup>884</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 272:

<sup>885</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, p. 555.

<sup>886</sup> Լ. Գ. Մինասյան, Դիվան Ս. Ամենափրկիչ վանքի 1606-1960, Նոր Ջուղա, 1983, էջ 115-6:

գտնել իսլամի շիա ու սուննի ուղղությունների միջև<sup>887</sup>: Նա բավական չեզոք դիրքորոշում ունենալով տարբեր կրոնների ու դավանանքների նկատմամբ՝ հիջրայի 1149 թ. (1736/7 թ.) հրովարտակ է հրապարակում քրիստոնեական բոլոր դավանանքների ներկայացուցիչներին իրանում ապրելու ու գործունեության ազատություն շնորհելու մասին<sup>888</sup>: Այս պատճառով կաթոլիկ քարոզիչները կարողանում են որոշակի հաջողությունների հասնել նրա իշխանության շրջանում և իրենց իսկ գնահատմամբ հասնել իրենց գործունեության գագաթնակետին<sup>889</sup>: Նադիր շահի օրոք կաթոլիկ հայերը առանց լուրջ խոչընդոտների կարողանում են իրականացնել իրենց քարոզչական գործունեությունը ինչպես Նոր Ջուղայում, այնպես էլ իրանի այլ վայրերում հաստատված առաքելությունների միջոցով: Նրանք բավականին հանդարտ ու սահուն աճ են գրանցում հատկապես ջուղահայության շրջանում: 1740 թ. հայր Էմանուելի ղեկավարման համաձայն հայ կաթոլիկները կազմում էին Նոր Ջուղայում հայության ընդհանուր քանակի, որը նահաջվում էր 15-20000 շունչ, 1/3-ը<sup>890</sup>:

Այնուամենայնիվ Նադիր շահի իշխանության վերջին շրջանում Ամենայն Յայոց կաթողիկոսի աթոռը զբաղեցրած Ղազար Ջահկեցին համառ պայքար է սկսում կաթոլիկական քարոզչության դեմ: Ծագումով լինելով Նախիջևանի Ջահուկ գավառից, ուր հայ ունիթորների կենտրոնն էր՝ Ղազար Ջահկեցի կաթողիկոսը լավատեղյակ էր հայերի դավանափոխության ու կաթոլիկական քարոզչության կործանարար հետևանքներին, ուստի և «անզիջում դիրքորոշում» ուներ կաթոլիկ քարոզիչների և քարոզչության հանդեպ, որը դրսևորվել է ինչպես նրա գրչին պատկանող կրոնական գործերում ու քարոզներում<sup>891</sup>, այնպես էլ նրա ձեռքբերած հրովարտակներում: Կարմելյան միաբան Ֆիլիպ Մերիի խոսքերով, իրենք 1739-1740թթ. ենթարկվում էին հալածանքների «ոչ կաթոլիկ պատրիարք Լազարի (Ղազար) կողմից, որը պահանջում էր, որ բոլոր քարոզիչները իրանից դուրս քշվեն, եկեղեցիները կործանվեն»: Նա

<sup>887</sup> The Cambridge History of Iran, vol. 7, Cambridge, 1991, pp. 35-36.

<sup>888</sup> یکصد و پنجاه سند تاریخی از جلایریان تا پهلوی، بکوشش سرهنگ جهانگیر قایم مقامی، ص. 97.

<sup>889</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, p. 613.

<sup>890</sup> Նույն տեղում:

<sup>891</sup> Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 141-143:



հինգ անգամ այս հարցով դիմում է փոխարքա Ռեզա Ղուլի Միրզային, մեծ գումարներ ծախսում, որի արդյունքում շատ կաթոլիկներ բանտ են նետվում և շահական հրովարտակ է ձեռք բերվում<sup>892</sup>: Պահպանվել են նրա կողմից Նադիր շահից ձեռք բերված 1741թ. երկու հրովարտակ՝ ուղղված միսիոներական քարոզչության դեմ: Առաջին հրովարտակով, որ հրապարակվել է 1741 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, հրահանգվում է Իրանի տեղական իշխանություններին չմիջամտել հայերի դավանանքին վերաբերող գործերին և, մասնավորապես, չնպաստել հայերի կաթոլիկացմանը, երկրորդով, որ հրապարակվել է նույն թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, կարգադրվում է սահմանափակել կաթոլիկ միսիոներների գործունեությունը հայերի շրջանում<sup>893</sup>:

Ղազար Ջահկեցու կողմից ներկայացված խնդրագրի մասում կաթոլիկ քարոզիչները մեղադրվում են Իրանում լրտեսությամբ զբաղվելու մեջ, ինչպես նաև նշվում են նրանց գործունեության ծանր հետևանքները հայության համար. «Սպահանի Ջուղայում ու Թիֆլիսում մոտավորապես կեսը ֆարանգի է դարձել: Նույն կերպ նշված *պատրիսերը* որոշակիորեն ակտիվ են Համադան, Թավրիզ քաղաքներում, Նախջևանում, Գանձակում ու Դերբենդում... խնդրում ենք աշխարհի ու մահկանացուների ապավենին ... վճռական *ռադամ* շնորհել Ձեր ծառային, որպեսզի *հաքիմները* հայերի հավատի գործերին չմիջամտեն, հայերից ով էլ, որ ֆարանգի դարձած լինի, և այս ծառան նրան արգելի, բայց նրա հորդորները չլսի, եթե բարձրագույն *ռադամի սավադն* ուղարկի այն *մահալի հաքիմի* ու *զաքիթի* մոտ, որտեղ մոլորեցնում և *ֆարանգի* են դարձնում, որպեսզի նա որևէ բան որպես կաշառք չվերցնի, և այն հայի տունն ու ունեցվածքը բռնագրավի հօգուտ բարձրագույն դիվանի ու նրան քաղաքից վտարի»<sup>894</sup>:

Կաթոլիկ հայրերը իրենց հերթին միջոցներ են ձեռք առնում՝ օգտագործելով կաթոլիկացած Շահրիմանյանների ֆինանսական հնարավորությունները, պալատական կապերը, ինչպես նաև Հռոմի

<sup>892</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, pp. 631-633.

<sup>893</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 18, 23:

<sup>894</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 23, էջ 52-3:

Պապ Բենեդիկտ XIV –ի միջնորդությամբ Նադիրի առաջ<sup>895</sup> և կարողանում են հակահարված տալ Ղազար Ջահկեցու իրենց դեմ ուղղված ձեռնարկումներին: Նադիր շահը վերադառնալով իր հնդկական արշավանքից՝ վերահաստատում է կաթոլիկ քարոզիչների արտոնություններն ու իրավունքները ի վնաս հայ լուսավորչականների: Կաթոլիկ հայրերի այս քայլերը վտանգավոր դրության մեջ են գցում Ամենայն Յայնոց կաթողիկոսին, որը 1745թ. շահին այս հարցով դիմած լինելու համար ծանր պատժի է արժանանում, նրա մորուքն ու ականջները կտրում են, պաշտոնակ հայտարարում և բանտարկում՝ պահանջելով 5000 թուման և նրա հաջորդ տարվա աթոռակալության ողջ հասույթը նրան բանտից ազատելու համար<sup>896</sup>:

Նադիր շահի իշխանության հետագա մի քանի տարիների ընթացքում դադարում են կաթոլիկների հետապնդումները հայ լուսավորչականների կողմից և կաթոլիկ քարոզիչները վայելում էին գործունեության լիակատար ազատությունն ինչպես Նոր Ջուղայում, այնպես էլ Թիֆլիսում և Աջարական տերության մեջ ընդգրկված մյուս քաղաքներում, որոնցում հաստատվել էին կաթոլիկական առաքելություններ. Գանձակում, Գորիում, Ռեշտում, Թավրիզում, Յամադանում, Ծիրագում, Բուշիրում և Բենդեր Աբբասում:

Նադիր շահի մահից հետո իրանում տեղի ունեցող երկպառակչական կռիվների ու խռովությունների շրջանը ծանր հետևանքներ է ունենում ինչպես հայ լուսավորչականների, այնպես էլ կաթոլիկների համայնքի համար: Անդադար պատերազմներն ու դրանց ընթացքում քրիստոնյա բնակչության անխնա կողոպուտը հանգեցնում են Նոր Ջուղայի ու հարակից շրջանների, ինչպես նաև Նախիջևանի կաթոլիկական գյուղերի հայության զանգվածային արտագաղթին: Եթե 1742թ. տվյալներով Նախիջևանի 9 գյուղերում հաշվվում էին ընդամենը 1800 կաթոլիկներ, ապա 1750-ականների սկզբին այդ թիվը նվազել էր մինչև 320-ը<sup>897</sup>: Նույն խառնակ դրության հետևանքով խիստ տուժում է

<sup>895</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, pp. 639-40:

<sup>896</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, p. 641.

<sup>897</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, p. 676.

Նոր Ջուղան: Թեև Քերիմ խանի իշխանության շրջանը ընդհանուր առմամբ բնութագրվում է դրական գծերով, քանի որ այս տիրակալն լավ էր տրամադրված դեպի քրիստոնյա բնակչությունը, այնուամենայնիվ Նոր Ջուղայի հայ լուսավորչականների համայնքը խիստ նվազել էր, իսկ կաթոլիկներն ընդամենը 30-ն էին<sup>898</sup>: Չնայած այն հանգամանքին, որ ինչպես վերն արդեն նշել ենք, Քերիմ Ալի Մուրադ խաների կողմից վերահաստատվում են կաթոլիկ հայրերին տրված իրավունքներն ու արտոնությունները<sup>899</sup>, արտագաղթած հայերը զգուշանալով հետագա անկանխատեսելի խռովություններից՝ չէին վերադառնում: Նոր Ջուղայի կաթոլիկական համայնքի համարել ավելի կործանարար են լինում Քերիմ խանի մահից հետո իրանում վերսկսված երկպառակչական կռիվները Ղաջարների ու Չենդերի միջև<sup>900</sup>:

XVIII դարի երկրորդ կեսին արդեն Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հայաբնակ շրջաններում կաթոլիկական քարոզչության դեմ պայքարը շարունակում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որին հաջողվում է Կոստանդնուպոլսի ազդեցիկ հայերի աջակցությամբ սուլթանական հրամանագրեր ձեռքբերել և չեզոքացնել կաթոլիկական քարոզչության վտանգը Ախալցխայում ու Բայազետում<sup>901</sup>:

Այսպիսով, դիտարկվող շրջանի պարսկերեն հրովարտակները հայոց պատմության ցավալի խնդիրներից մեկի՝ կաթոլիկական քարոզչության ու նրա դեմ Յայ Եկեղեցու առավել հեռատես ներկայացուցիչների մղած համառ պայքարի ու ձեռնարկած համարձակ քայլերի արժեքավոր սկզբնաղբյուրներն են: Այդ տվյալների համադրումը ժամանակաշրջանի մյուս աղբյուրների հետ հնարավորություն է տալիս լուսաբանել իրանահպատակ հայության շրջանում կաթոլիկական քարոզչության ընթացքը XVII-XVIII դարերում:

## ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

<sup>898</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, pp. 662, 669

<sup>899</sup> یکصد و پنجاه سند تاریخی از جلایریان تا پهلوی، بکوشش سرهنگ جهانگیر قایم مقامی، ص. 103, 105.

<sup>900</sup> A Chronicle of the Carmelites in Persia, v. I, p. 699.

<sup>901</sup> Դիվան Յայոց պատմության, գիրք Գ., Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը 1763-1767, էջ 66-66Դ.:

**ՄՍՏԵՆԱԴԱՐԱՆԻ XVII-XIX ԴԱՐԵՐԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԻ Լ ԵԶՎԱ-  
ՌՃԱԿԱՆ, ԿԱՌՈՒ ՑՎԱՃՔԱՅԻՆ ՈՒ ԵԶՐԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՅՍԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1 Մատենադարանի XVII-XIX դարերի պարսկերեն վավերագրերի  
բնագրագիտական վերլուծությունը**

Գրագրություն արվեստը իր զարգացման գագաթնակետին է հասնում Սեֆյան ժամանակաշրջանում, երբ վարչական համակարգում զգալի տեղ էր զբաղեցնում գրագրության վարչությունը՝ մաջլեսնեհիսի կամ վաղիենեհիսի գլխավորությամբ: Վաղիենեհիսը (واقعه نویس) կամ մաջլեսնեհիսը պալատական գրագիրներից էր և բարձրաստիճան ամիրների խորհրդի հանձնակատարը, որը երեք գլխավոր պարտականություն ուներ. նախ՝ պալատական պատմագրության շարադրումը, համարվում էր շահի անձնական քարտուղարն ու նաև նրա գլխավոր երազահանը: Վաղիենեհիսը ներկա էր լինում արքունի նիստերին և գրի առնում դրանց արձանագրությունները: Նա էր գրում շահի նամակները, նաև տարբեր պաշտոնյաների նշանակումները, *համեսալեների* ու *թիուլների* հատկացումները բովանդակող հրամանագրերը, որոնք *դաֆթարների* հիման վրա կամ շահի բերանացի (*մոշաֆեհե*) հրամանով էին հրապարակվում<sup>902</sup>: *Մաջլեսնեհիսի* մոտ էր շահն ուղարկում տարբեր տեսակի խնդրագրերը, որը վերջինս ընթերցում ու պատասխան էր գրում: Բացի այդ նագրում էր շահական հրամանագրերի պատճենները (مسوده): *Վաղիենեհիսի* ենթականերն էին *նադամնեհիսները*<sup>903</sup>, որոնք թվով 10-ն էին՝ բարձրագույն *դիվանի նադամնեհիսը* և նրա երեք օգնականները, նաև *սարրեշթեդարը* (իր հինգ ենթականերով); կային նաև *դաֆթարներում* պատճենվող *նադամների նադամնեհիսներ* (երկու հոգի); *նամենեհիս* (մեկ հոգի) և երկու այլ անձիք, որոնք աշխատում էին *մաջլեսնեհիսի* ենթակայությամբ<sup>904</sup>:

*Մաջլեսնեհիսին* որպես *համեսալե* հատկացվում էր տարեկան 300 թուման Մազանդարանի բնակավայրերի հարկերից: Բացի այդ, նրան

<sup>902</sup> تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، ص. 15.

<sup>903</sup> دستور الملوك ميرزا رفيعا، به کوشش وتصحيح محمد اسماعيل مارچينکوفسکي، ترجمه علی کردآبادي، تهران، 1385، ص. 205, 239.

<sup>904</sup> تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، ص. 15-16.

Էին վճարում *բեկլ արբեկերը, հաքիմները, դարու դաներն* ու *խասսե-ե շարիֆեի* պաշտոնյաները նրանց արված ռոճիկային հատկացումների ժամանակ յուրաքանչյուր թումանից 200 դինարի չափով՝ հրամանագիրը գրել ու ժամանակ և մինչև որ այդ գումարը չվճարվեր, *մաջլե սննհիսը թողրան* չէր դնում: Այնպես որ նրա եկամուտները հասնում էին տարեկան շուրջ 3000 թումանի<sup>905</sup>:

Սկզբում *մաջլե սննհիսի* ենթակաները երեքն էին, սակայն հետագայում նրանց թիվն ավելանում է՝ հասնելով երեսուկնի: Վերջիններից մի քանիսը շահական *դաֆթարխանեում* գրում էին *դաֆթարի ռադամները*, որը հրապարակում էր *խասսե-ի սարքարը*: Մնացյալը գրում էին *բայ ազի* (մաքրագիր) *ռադամները* և գրանցում դրանք<sup>906</sup>:

*Մաջլե սննհիսը* պարտավոր էր ներկագտնվել բոլոր (ավագանու և ստորին խավի) ժողովներին, շահին զեկուցել նրան ներկայացվող բոլոր խնդիրների ու դիմումների մասին և շահական հրամանին համապատասխան հրովարտակ գրել: Այս պաշտոնը ստեղծվել է շահ Աբբաս Ա-ի կողմից՝ մեկ անձի վրա դնելով մեծ *վեզիրի, մուսթոֆի ալ-մամալիքի* ու *մուհշի ալ-մամալիքի* պարտականությունների մի մասը<sup>907</sup>:

Հետագա Աֆշարական ու Չենդյան թագավորական տների ժամանակաշրջանում գրագրության *դիվանների* մասին շատ տեղեկություններ չունենք: Ամենայն հավանականությամբ այդ շրջանում գրագրության վարչությունը սահմանափակվում էր մի քանի գրագիրների գործունեությամբ, քանի որ այս փաստաթղթերի հակառակ կողմի գրությունները սահմանափակվում էին մի քանի կնիքներով: Նույնպիսի վիճակ էր նաև Աղա Մուհամմադ խանի իշխանության շրջանում: Ֆաթիալի շահի օրոք իշխանության կայունացման և վարչական ապարատի ընդլայնման հետգրագրության գործը ևս սկսում է զարգանալ:

Մատենադարանում պահվող XVII-XIX պարսկերեն վավերագրերի մեծ քանակը հնարավորություն է տալիս հետազոտել ու ընդհանրացումներ կատարել նրանց լեզվա-ոճական և

<sup>905</sup> 27 نصیری میرزا علی نقی، القاب و مواجب دوره دور سلطین صفوی، ص.

<sup>906</sup> 27 نصیری میرزا علی نقی، القاب و مواجب دوره دور سلطین صفوی، به تصحیح یوسف رحیم لو، مشهد، 1371، ص.

<sup>907</sup> Նույն տեղում, էջ 28:

կառուցվածքային առանձնահատկությունների մասին, դիտարկել առանձին տեսակների զարգացումները պատմության ընթացքում:

Պարսկերեն վավերագրերի բնագրային քննության ժամանակ կարևոր է բնօրինակի տարբերակումը պատճենից: Բնօրինակը որպես կանոն կրում է մեկ կամ ավելի կնիքներ՝ դրոշմված շահական, խանական կամ շարի'աթական-նոտարական գրասենյակների կողմից, գրված է ժամանակաշրջանին ու վավերագրի տեսակին բնորոշ վայելչագրությամբ, որը դիտարկվող շրջանում՝ հիմնականում շիքասթե-նասթալիդն էր կամ նասթալիդը՝ երբեմն զուգակցված նասխգրով:

Վավերագրերի բնագրերը կառուցվածքային առումով պարսկերեն վավերագրագիտության մեջ բաժանում են երեք մասի՝ *մաթլա* (مطلع թղթառաջք կամ սկիզբ), *մաթն* (متن բուն տեքստ կամ բովանդակություն) և *խաթեմե* (خاتمه - թղթավարտ) կամ *ֆաթեհե* (فاتحه)<sup>908</sup>:

Այս մասերից գառվավերագրերն ունեն նաև թահմիդիե (تحمیدیه - Ալլահին փառաբանող խոսքեր), որը սովորաբար վավերագրի ամենավերին մասում է: Թահմիդիեն գրում էր *մունշի ալ-մամալեքը*<sup>909</sup>: Վերջինս գրում էր նաև *թողրան* հրովարտակի սկզբում, հաճախալ զույնով և առանձնացնում այն հրովարտակի *մաթլալից*:

Վավերագրերի տեսակներից յուրաքանչյուրն (հրովարտակներ կամ հրամանագրեր, *շարի'աթական*-նոտարական փաստաթղթեր, նամակներ, դիմում-խնդրագրեր, պայմանագրեր) ունի իր կառուցվածքային, բովանդակային ու լեզվա-ոճական առանձնահատկությունները, որոնք միմյանցից տարբերվում են նաև ելնելով դրանց գրության ժամանակաշրջանից:

Վավերագրերի ամենավերին կենտրոնական մասում Ալլահին փառաբանող արտահայտություններն են՝ «թահմիդիեն»: Վավերագրերի տեսակներից յուրաքանչյուրի *մաթլան*, *մաթնը* և *ֆաթեհեն* ունեն իրենց կաղապարային առանձնահատկությունները:

<sup>908</sup> .16-12 .է ,1392 ,Ýëoq ÈİÆ MCoD;OÛC ,ÚCpèN ,oDVDA ÍBC òoÈk íwèBÛÚD×p¼ ívopF ,ÖDv íİµ

<sup>909</sup> 16 .է ,1392 ,Ýëoq ÈİÆ MCoD;OÛC ,ÚCpèN ,oDVDA ÍBC òoÈk íwèBÛÚD×p¼ ívopF ,ÖDv íİµ

**Շահական հրովարտականեր:** Շահական հրովարտակաների վերին կենտրոնական մասում, *թահմիդիեից* հետո դրվում էր շահի կնիքը, որը սովորաբար մի քանի տեսակի էր:

Որոշ շահերի կնիքներ, ինչպիսիք են օրինակ Նադիրինը և Աղա Մուհամմադ Խանինը<sup>910</sup>, նախքան նրանց պաշտոնական թագադրությունը հրապարակված հրովարտականերում դրված են հրամանագրի տեքստի վերջում, ստորին ձախ հատվածում: Մատենադարանի ղաջարական շրջանի հրովարտակաների մի մասը տրված է Ատրպատականի փոխարքա թագաժառանգ Աբբաս Միրզայի, ինչպես նաև նրանից հետո այդ շրջանը կառավարող մյուս արքայազների կողմից, որոնց կնիքի դրոշմը գտնում ենք հրամանագրի տեքստի սկզբում՝ *թողրայից* դեպի աջ:

Մատենադարանի XVII դարի II կես – XIX դարի I կեսի պարսկերեն հրովարտակաները որպես գրագրության նմուշներ ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները՝ կախված դրանց ստեղծման ժամանակաշրջանից: Սեֆյան, Նադիրյան, Ետ-Նադիրյան ու Ղաջարական շրջաններում գրված հրովարտակաները միմյանցից տարբերվում են ինչպես իրենց արտաքին ձևավորման, այլև ներքին բովանդակային ու լեզվա-կառուցվածքի կառուցվածքի առանձնահատկություններով:

**Սեֆյան** շահերի հրովարտականերն ըստ բովանդակության և հրապարակման առանցքների բաժանվելով մի քանի տեսակի՝ տարբերվում են միմյանցից կառուցվածքային ու բնագրային որոշ առանձնահատկություններով: Սեֆյան շահերից յուրաքանչյուրն ունեն մի քանի կնիք, որոնք իրարից տարբերվում էին թե՛ արտաքին ձևով, թե՛ իրենց գրություններով: Ընդ որում հրամանագրերի տեսակներից յուրաքանչյուրը կրում էին շահի համապատասխան կնիքը կամ կնիքները: Այնուամենայնիվ, գրեթե բոլոր կնիքների գրությունները կրոնական երանգ ունեին և մատնանշում էին նրանց հավատարմությունը շիական սկզբունքներին: Սեֆյան շահեր Աբբաս Բ-ի, Սուլեյմանի, Սուլթան Յուսուֆի կնիքների մեծ մասի կենտրոնական մասում հետևյալ գրությունն է՝ «Սրբություն շահի

<sup>910</sup> Համեմատիր Զ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Դ, վավ. 1-6 և 7, 13, 17-26, վավ. 53, 54 և 55:

<sup>911</sup> «بندة شاه ولايت – Ծառա», ավելի ուշ նաև՝ «Յավատի շահի Ծառա – 912, «بندة شاه دين – Ծառա», «کمترین کلب امیر المؤمنین – 913, որոնցում «սրբույթան շահ», «հավատի շահ» և «բարեպաշտների ամիր» արտահայտությունները բնորոշում էին շիաների առաջնորդ համար Ալիին՝ Մուհամմադ մարգարեի դուստր Ֆաթիմայի ամուսնուն: Վավերագրերի այս շարքում բացառություն է կազմում շահ Սուլեյման Յուսեյնի կնիքներից մեկը, որտեղ նա իրեն անվանում է «Սուլեյմանի թագավորության ժառանգորդ – 914: «وارث ملک سليمان»: Բացի այս, կնիքներում առկա են Աստուծուն, Մուհամմադ մարգարեին ու շիա իմամներին փառաբանող խոսքեր՝ կենտրոնը եզերող շրջանակի մեջ, որում թվարկվում են իմամների անունները, կամ նրանց փոխարինող բնորոշումները կամ երկուսն էլ միասին <sup>915</sup>: Եթե հիշյալ շրջանակի մեջ գրված է «բարձրագույն դիվանի պատճենի կնիքը - «مهر مسودة ديوان اعلى», ապա դա նշանակում է, որ գործ ունենք բարձրագույն դիվանի կողմից մի քանի օրինակով հրատարակված հրովարտակի նմուշի հետ, որն իր արժեքով հավասար էր բնօրինակին, ստեղծվում էր նրա հետ միաժամանակ և նախատեսված էր մի քանի վայրերում միաժամանակ օգտագործման համար: Նման վավերագրերը ստեղծվել են Սեֆյան շրջանում և մեծ թիվ են կազմում Մատենադարանի հավաքածուի մեջ <sup>916</sup>: Սեֆյան շահ Սուլեյմանի վաղ շրջանի հրամանագրերում դրոշմված կնիքներում նշվում է Սեֆի Բ անունը <sup>917</sup>, մյուսներում՝ Սուլեյման անունը: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ հիշյալ շահը երկու անգամ է թագադրվել՝ երկու տարբեր անուններով: Շահ Աբբաս Բ-ի 19 ամյա որդի Սամ Միրզան առաջին անգամ թագադրվել է հիջրայի 1077 թ. ռաբի Բ ամսի 1-ին (1666 թ. հոկտեմբերի 1) Սեֆի Բ

<sup>911</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 4-11, 13-16, 18, 19, 44, 65-71, 73-85:  
<sup>912</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 25-28, 31, 33-42, 45, 47, 50-52, 54, 56, 57:  
<sup>913</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 73-85: Այս արտահայտությունը շրջանավում էր դեռևս շահ Աբբաս Ա-ի կողմից, որն իրեն այդպես էր անվանում իր գրություններում շատ հրամանագրերում ( 306, ص. 1373, انتشارات نوید, شیراز, انتشارات نوید, 1373):  
<sup>914</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 59:  
<sup>915</sup> Տե՛ս կնիքների տեքստը Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 59, 62, 64, 66, 68, 72  
<sup>916</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 4-7, 10, 13, 18, 19, 27, 33, 34, 35, 39-42, 44, 46, 50-52, 54, 59:  
<sup>917</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 18,19:



անվամբ, երկրորդ անգամ՝ 1078 թ. շավալ ամսի 10-ին (1668 թ. մարտի 20) Սուլեյման անվամբ<sup>918</sup>:

Սեֆյան շահերի այն հրովարտակները, որոնք հրապարակվել էին նախկին շահերի հրովարտակների հիման վրա, շահի կնիքից դեպի աջ և վեր, բովանդակում էին օրհնաբանող խոսքեր՝ հասցեագրված նրանց, ինչպես օրինակ՝

«Իմ հայր շահը, Ալլահը թող նրահողին լուսավորի»<sup>919</sup>:

«Շահ Թահմասպը, թող Ալլահը նրագերեզմանը լուսավորի  
Իմ մեծ պապը<sup>920</sup>, թող հողը նրավրաթեթև լինի»<sup>921</sup>

Սեֆյան շրջանի հրովարտակները սկսվում էին *թողրայ ով*, որը գրում էր *մունշի ալ-մամալիքը*<sup>922</sup> և որը ևս տարբեր էր՝ կախված հրամանագրի տեսակից:

Սեֆյան շահ Սուլեյմանի ժամանակաշրջանի (1666-1694 թթ.) գրագրության մեջ մշակվել էր հրովարտակների մի քանի տեսակների գրության կարգը, որի ժամանակ առանձնացվում էին *նեշան*, *փարվանչե* և *նաղամ* տեսակի հրամանագրերը:

*Թահմիդիեն*, որ ուներ հետևյալ գրությունները՝ «Նա է՝ Ալլահը. փառք նրան - هو الله سبحانه», «Իշխանությունն Ալլահինն է - الملك الله», «Ո՛վ Մուհամմադ, ո՛վ Ալի - یا محمد یا علی», հատուկ էր հրամանագրերի ***նեշան*** կոչվող տեսակին, որոնք հրապարակվում էին *սոյուրդալի*, *թիուլի* և պաշտոնի շնորհման կապակցությամբ<sup>923</sup>: *Նեշանի թողրան* սովորաբար հետևյալն էր. «Արքայական հրաման հրապարակվեց - فرمان جانب هر که با علی نه نکوست هرکه گو باش

ندارم دوست

هر که چون خاک نیست بر در او گر فرشته است خاک بر سر او

<sup>918</sup> Rudi Matthee, "SOLAYMĀN I, " *Encyclopædia Iranica*, online edition, 2015, available at <http://www.iranicaonline.org/articles/solayman-1> (accessed on 26 August 2016).

<sup>919</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 1:

<sup>920</sup> խոսքը Շահ Աբաս Ա-ի մասին է:

<sup>921</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 2:

<sup>922</sup> تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، ص. 24

<sup>923</sup> منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، ص 29

Մատենադարանի XVII դարի երկրորդ կեսի վավերագրերից չորսը *Նեշան* տեսակի հրովարտակներ են, որոնք հաստատում են Աղվանից կաթողիկոսների, Տաթևի ու Դարաշամբի հայոց վանքերի հոգևոր առաջնորդների<sup>924</sup>:

Սեֆյան հրամանագրերի տեսակներից է ***փարվանչ են*** (կամ փարվանե پروانه،- پروانچه)، որի *թահմիդի են* ուներ հետևյալ գրույթ ունը՝ «Նաե - هو»، «Իշխանությունն Ալլահինն է - الملك الله»: Այս հրամանագրերի *թողրայի* տեքստը հետևյալն էր՝ «Արքայական հրաման եղավ - فرمان همایون - شد», իսկ շահական կնիքը կլոր կամ տանձանման տեսք ուներ, որտեղ կենտրոնի շուրջ շիա իմամների անուններն են: Եթե փարվանչ են հրապարակվել էր քարձրագույն *դիվանի*ն դիմում ներկայացված լինելու արդյունքում, ապա *թողրան* այսպիսին էր՝ «Աշխարհաստ հրամանագիր հրապարակվեց - حکم جهانمطاع شد»، իսկ կնիքի գրույթն մեջ նշվում էր՝ «քարձրագույն դիվանի պատճենի կնիքը - مهر مسوده دیوان اعلى»<sup>925</sup>: Մատենադարանում պահվող հրամանագրերի զգալի քանակ են կազմում *փարվանչ եները*, որոնք հիմնականում բովանդակում են թույլ տվություն եկեղեցիների վերանորոգման համար, արգելում հայ զիմմիների ու հայոց վանքերի նկատմամբ զանազան անօրինականությունները, այդ թվում նաև սահմանափակում կաթոլիկ միսիոներների քարոզչությունը հայության շրջանում, նաև հաստատում են Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսների, հայ մելիքների մելիքական իրավունքները և ռոճիկային հատկացումներ կատարում հայկական բնակավայրերից գանձվող հարկերից<sup>926</sup>: *Փարվանչ եները* հաճախ վերաբերում էին ֆինանսական հարցերին և արքյունների հավաստմամբ նրանց հրապարակում էր *մուսթովֆի ալ -մամալ եքի* վարչությունը<sup>927</sup>:

Տարբերությունը *Նեշանների* և *փարվանչ եների* միջև այն էր, որ վերջինները ավելի շատ ֆինանսական հարցերին էին առնչվում, իսկ *Նեշանները* ավելի փոքր պաշտոններին, *սոյուրդալ ներին* ու

<sup>924</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 1, 49, 58, 61, 70:

<sup>925</sup> منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، به کوشش رسول جعفریان، تهران، 1388. ص. 30

<sup>926</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 2-8, 10-13, 15-43, 45-47, 50-57, 62, 64-66, 68, 70-72:

<sup>927</sup> قائم مقامی ج، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، ص. 88

թիուլ ներին վերաբերող *նաղամներն* ու հրամանագրերն էին վերահաստատում<sup>928</sup>:

Մատենադարանի Սեֆյան հրովարտակների մեջ զգալի քանակ են կազմում նաև *նաղամ* կոչվող տեսակի հրամանագրերը, որոնք իրենց հերթին ըստ բովանդակության բաժանվում են մի քանի խմբի: Մի տեսակի *նաղամը խալ 'աթի* շնորհման կապակցությամբ էր հրապարակվում, մյուսը՝ *թիուլի* շնորհման, երրորդը՝ *մավաջիբի*<sup>929</sup>: Կային նաև վարձակալության, *թանխահի*, *մավաջի*, *սոյուրդալի*, *մուսֆոնթյան*, *համեսալեի*, *Էսթիֆայի*, *հոքուլմաթի* և մի քանի այլ բնույթի *նաղամներ*: Կախված գրության առանձնահատկություններից՝ տարբերակում էին դաֆթարի «մատյանի-دفتری», բայազի «մաքրագիր-بیاضی», բելմոշաֆեհե «բերանացի-بالمشافهه» *նաղամներ*: Եթե առաջին տեսակի *նաղամները* կարող էին հրապարակվել պատճենի՝ «մոսավվադե - مسوده» կնիքով, ապա *բայազի նաղամները*՝ մաքրագիր էին, իսկ երրորդը հրապարակվում էր շահի ուղիղ հրամանով<sup>930</sup>: *Ռաղամ-ե մավաջիբ*, որը ռոճիկային հատկացման հրամանագիրն էր, հրապարակում էր տվյալ պաշտոնյայի վերադասը. *դորջիինը՝ դորջիի վեզիրը, թոֆանգչիինը՝ թոֆանգչիի վեզիրը, թուֆչիինը՝ թուֆչիի վեզիրը* և այլն: Այնուհետև այն հաստատվում էր շահի ու *Է'թեմադալ-դովլեի* կնիքներով և հանձնվում էր *սահիբ-մավաջիբին*: Մեծ *մուսթովֆիները* այն գրանցում էին *դաֆթարում* ու ամեն տարի *թանխահ* տալիս տվյալ պաշտոնյային<sup>931</sup>:

Մատենադարանի հրովարտակների մեջ նշանակալի տեղ են զբաղեցնում Սեֆյան շահեր Սուլթան Յուսեյնի ու Թահմասպ-ի բերանացի հրամանով, կամ «Նորին Մեծության անմիջական թելադրանքով - بالمشافهه العلیه العالیه» հրապարակված հրամանագրերը<sup>932</sup>:

*Բայազի* և *դաֆթարի նաղամների* վրա, նրանց հակառակ կողմում *վադիենևհիսը թողրայով*, իսկ *դավաթդարը* մատանու «արեգակնային կնիքով - مهر مهراثار» հաստատում էր<sup>933</sup>: *Դավաթդարն* էր կնիքով հաստատում նաև հրամանագրերը, որոնց *թողրաները մուսնջի ալ-*

<sup>928</sup> قائم مقامی ج، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، ص. 82.

<sup>929</sup> منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، ص. 31.

<sup>930</sup> قائم مقامی ج، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، ص. 76.

<sup>931</sup> منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، ص. 31.

<sup>932</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 9, 44, 67, 73, 74, 75, 77-83, 85, 86, 88-90:

<sup>933</sup> تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، ص. 26.

մամալ իքն էր դնում<sup>934</sup>: Այդ մասին նշվում էր նաև հրամանագրի ստորին հատվածում, որ երբ այն հաստատվի «արեգակնային», կամ «արքայական» կնիքով, նրան «կարող են վստահել» կամ «հավատ ընծայել»: Մասնավորապես այդ արտահայտությունը առկա է Սեֆյան շահ Աբբաս Բ-ի 1654 թ. հրամանագրի տեքստում. «چون پروانچه بمهر اشرف رسد اعتماد»<sup>935</sup>: Վերը նշված *թողրան* և կնիքը բավականին հստակ ու ընթեռնելի են շահ Սուլեյմանի 1682 թ. և Սուլեյման Յուսեյնի 1706 թ. հրովարտակաների հակառակ կողմում՝ «Ապավինում եմ Ալլահին...[مهر] دل موامین خلیل - توکلت علی الله...»,<sup>936</sup> «حسین است»<sup>936</sup>:

Հրովարտակաների մի քանիսի հակառակ կողմում ևս դրոշմված է շահական կնիքը, որը գտնվում էր *մոհրդարի* մոտ և փաստում էր փաստաթղթի գրանցված լինելու մասին. «Գրանցման մասին թագավորական կնիքը, [կնիք]. գրանցման մասին թագավորական կնիքը<sup>937</sup>: Այդ նշումն ըստ «Թեգքիրաթ ալ-մուլուք» աշխատության արվում էր *վեգիրների, քալանթարների* նշանակման, տարբեր պաշտոնյաներին շնորհվող *սոյուրդալների, մուաֆուլայան* ու *թիուլների* հատկացումների մասին հրովարտակաները *դաֆթարներում* գրանցվելուց հետո *մոհրդարի* կողմից փաստաթղթի հակառակ կողմում և կնքվում նույն գրությունը բովանդակող կնիքով<sup>938</sup>: Մատենադարանի դիտարկվող ժամանակաշրջանի հրովարտականերից այդ գրանցումը գտնում ենք Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսների, Տաթևի հոգևոր առաջնորդի, նաև Գեղարքունիքի Մելիք Բեկ Մելիք-Շահնազարյանի իրավունքները հաստատող հրովարտակաների հակառակ կողմում<sup>939</sup>:

Բացի կնիքներից հրովարտակաները շահը վավերացնում էր նաև իր կողմից կարճ գրությամբ՝ նշելով, որ այն «ճիշտ է - صح» և որը Սեֆյան շրջանում հրամանագրի հակառակ կողմում էր<sup>940</sup>,

<sup>934</sup> Նույն տեղում:

<sup>935</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 2:

<sup>936</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 68:

<sup>937</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 3, 8:

<sup>938</sup> تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، ص. 25.

<sup>939</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 1, 8, 14, 43, 49, 61, 65, 70:

<sup>940</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 12, 14, 16, 24, 30, 37, 43, 45, 50, 52, 56, 58, 63-5, 68, 70- 85:

հետագայում նույն գրությունը հանդիպում է հրամանագրի տեքստի լուսանկարում:

Սեֆյան հրովարտակաների *մաթլ ան*, որ հաջորդում էր *թողրայ ին*, բովանդակում էր այն անձի անունը, պաշտոնն ու տիտղոսաշարը, որին ուղղված էր հրամանը՝ նշելով նաև խնդրագրով դիմողի անունը և տիտղոսաշարը, եթե այդպիսին կար, նշվում էր նաև այն մասին, թե ինչպիսի փաստաթղթերի հիման վրա է հրամանագիրը հրապարակվել: Ընդ որում որպես հիմք կարող էին վկայակոչվել ինչպես նախորդ շահերի հրամանագրերը, այնպես էլ հրամանագրին կցված, կամ նրա հակառակ կողմում գրված մահմեդական բարձրաստիճան աստվածաբանների ու իրավագետների կամ դիվան ալ-սադարաթի կայացրած վճիռները (*Ֆաթվաու միսալ*) այս կամ այն խնդրի շուրջ:

Սեֆյան հրովարտականերում *մաթլ ան* շատ հակիրճ է և նրան հետևում է հրամանագրի բուն տեքստը (կամ *մաթնը*), որը հիմնականում շարադրված է պարզ, ըմբռնելի ոճով: Բուն տեքստը Սեֆյան հրովարտականերում հաճախ սահմանափակվում էր տեղական իշխանություններին ուղղված հրամանով՝ կցված *Ֆաթվայ ին* կամ հակառակ կողմում գրված *միսալ ին* համապատասխան վարվելու մասին, կամ կցված խնդրագրում բարձրացված հարցի քննությունը տեղի *շար'ի* դատարանում անցկացնելու և ճշմարտությունը պարզելու վերաբերյալ: Որոշ դեպքերում հակիրճ վերաշարադրվում էր տվյալ խնդրի շուրջ նախկին շահերի կայացրած վճիռները և դրանց հիման վրա արվում համապատասխան կարգադրություն:

Հրամանագրի բուն տեքստին հետևում է *խաթեմեն* (կամ թղթավարտը), որում ցուցումներն են հրամանի գրանցման ու գործադրման պարտադիր լինելու մասին: Հրովարտակաների խաթեմեն սովորաբար ավարտվում էր «Թող այս իրենց պարտականությունը համարեն - *در عهدہ شناسند*» խոսքերով, որոնց երբեմն կարող էին նախորդել հետևյալ խոսքերը. «Թող այս ընդունեն որպես խիստ հրաման և ամեն տարի նոր հրաման չպահանջեն – *درین باب قدغن دانسته هر ساله حکم مجدد طلب ندارند*», նրան չհակառակվելու մասին «*از فرموده تخلف نوزند*», առանձին դեպքերում հրամանի խտությունը շեշտվում էր նրա խախտման դեպքում պատժի մասին՝

հետևյալ ձևակերպմամբ. «պատճառ կդառնա պատժելու ու հետկանչելու համար — مورد تنبيه و بازخواست خواهند گرديد»<sup>941</sup>:

Որպես կանոն հրամանագրերի տեքստը եզրափակում է լուսնային հիջրայի թվականի ու ամսի մասին նշումը՝ ինչպես օրինակ. «Գրվեց 1065 թ. սրբազան մուհարրամ ամսին - فی شهر محرم الحرام - 1065 سنه»:

Երբեմն, երբ հրամանագիրը վերաբերում էր հարկային իմունիտետին կամ ռոճիկային հատկացումներին, նաև կաթողիկոսական իրավունքների հաստատմանը, ապա հրամանագրի տեքստը պետք է գրանցվեր *մուսթովֆիների դաֆթարներում* և այդ մասին նշվում էր հենց հրամանի վերջին մասում հետևյալ կերպ՝ «Մեծ *մուսթովֆիները* թող գրվածը գրանցեն *դաֆթարներում*»<sup>942</sup>:

*Մուսթովֆիների* գրանցումները օգտագործվում էին խնդրարկուների բարձրացրած հարցերի քննության ժամանակ և այդ մասին հաճախ էր նշվում հրովարտակների գրության մեջ: Ինչպես, օրինակ, շահ Աբբաս Բ-ի 1654 թ. հրովարտակում. «...հայտնի դարձավ բարձրագույն *դիվանի* մեծահոգի բարձրաստիճան *մուսթովֆիների* հաստատումից, որ Ագուլիսի վանքի ու միաբանների *մուղարարին* Ագուլիսի [համայնքի] վրա է դրել»<sup>943</sup>: Կային հատուկ *մուսթովֆիներ*, որոնք զբաղվում էին *վակֆային* կալվածքներին վերաբերող հաշվարկներով, որոնք կոչվում էին *մուսթովֆի-ե մովկուլֆաթ* և նրանց գրանցումները ևս վկայակոչվում են *վակֆային* կալվածքներին վերաբերող խնդիրների շուրջ կայացված վճիռներում: Այսպես, օրինակ, շահ Սուլեյմանի 1669 թ. հրովարտակի հակառակ կողմում առկա *միսալ ու մ* նշվում էր, որ «Պաշտպանության տակ գտնվող երկրների *մովկուլֆաթի մուսթովֆիի* հավաստմամբ Դարաշամբ գյուղը չի նշվում Շեյխիե դամբարանին ենթակա *մահալների* մեջ»<sup>944</sup>; իսկ 1672թ. *միսալ ու մ*, որ «Ինչպես հայտնի դարձավ պաշտպանության տակ գտնվող երկրների *վակֆային մուսթովֆիի* հաստատումից, 1079թ. շավալ ամսին (1669 թ.) *միսալ* է հրապարակվել Չուխուր Սա'ադի Կարպի *նահիեի* Ուլջիլիսա գյուղի

<sup>941</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 77, 82, պրակ Գ, վավ. 17, 18, 22, 46, 50:

<sup>942</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 8, 74, 86, 87, 88, 90:

<sup>943</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 2:

<sup>944</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 30:

մուլլ քերի վերաբերյալ»<sup>945</sup>; 1675թ. մեկ այլ միսալ ում նշվում էր. «Ինչպես հայ տնի դարձավ պաշտպանության տակ գտնվող երկրների մուսթովֆի-ե մովկուֆաթի հաստատումից, ստորև թվարկվող մահալ ներք Տաթևի վանքի վակֆն են և 1079 թ. սաֆար ամսին (1668 թ.) միսալ<sup>946</sup> էր հրապարակվել ...»<sup>947</sup>:

**Միսալ** (مثال) էին կոչվում մուսուլմանական հոգևոր ատյանների վճիռները: *Միսալ* եզրույթը նախքան Սեֆյան ժամանակաշրջանը ուներ այլ իմաստ: Այն համարժեք էր *ֆիրման* բառին և նշանակում էր հրովարտակ<sup>948</sup>: Սեֆյան շրջանում իրավական կարևոր նորմերի (*վակֆայի* ու *մուլլ քայի* իրավունքների, կրոնական ազատությունների) խախտման կասկածից զերծ դիվան ալ-սադարաթը կայացնում էր դրանց վերաբերող որոշումներ՝ *միսալ ներ*, որոնք հաստատվում էին *միսալի* հակառակ կողմում գրված հրովարտակներով: Այս հրովարտակները հիմնականում ունեն *վարվանչե* կոչվող հրամանագրերին բնորոշ *թահմիդիե*, շահական կնիք և *թողրա* եթե *ֆաթվաները* մահմեդական աստվածաբանների ու իրավագետների որոշումներն էին իրավական զանազան հարցերի շուրջ՝ դրանք օրինական կամ ոչ օրինական (Աստծո խոսքով թույլատրելի կամ անթույլատրելի) լինելու տեսանկյունից, ապա *միսալ ները* *դիվան ալ-սադարաթի* որոշումներն էին իրավական տեսանկյունից օրինական իրավունքների հաստատմամբ ու դրանց խախտման արգելմամբ: Մատենադարանի կաթողիկոսական դիվանի հրատարակված վավերագրերի մեջ կան *միսալ ներ* հրապարակված շահ Թահմասպ Ա-ի, Իսմայիլ Բ-ի, Աբբաս Ա-ի, Սեֆիի, Աբբաս Բ-ի, Սուլեյմանի<sup>949</sup> հրովարտակների հակառակ կողմում: Թե՛ *միսալ ը* և թե՛ հրովարտակը ունենին հրապարակման ժամանակի մասին նշում, որից երևում է, որ *միսալ ը* կարող էր հրապարակված լինել հրամանագրի հետևում և ամսում, կամ նրանից ավելի վաղ: Սեֆյան վարչակարգում կար հատուկ պաշտոնյա *միսալ-նահիս*, որ գրում էր *միսալ ները*<sup>950</sup>:

<sup>945</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 38:

<sup>946</sup> Տե՛ս վերը, Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 2ա, վավ. 68:

<sup>947</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 45:

<sup>948</sup> 51-50. قايم مقامی ج.، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، ص. 50-51

<sup>949</sup> Զ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 17, 19; պրակ Բ, վավ. 3, 15, 21, 24-26, 41; պրակ Գ, վավ. 22, 24, 28, 30, 31, 38, 45:

<sup>950</sup> 56. قايم مقامی ج.، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، ص. 56

Միսալ ների վերին մասում թահմիդիեի հետևյալ տարբերակն է հանդիպում «*هو الله ولاسواه* - «Նա է՝ Ալլահը՝ անզուգական»:

Միսալի սկզբում դրվում էր *սադրի թողրան*, այնուհետև շարադրվում էր խնդրի եռթյունը, եթե կային ավելի վաղ որոշումներ այդ խնդրի կապակցությամբ, նշվում էր նաև այդ մասին, բերվում էին խնդրին առնչվող փաստաթղթերի տվյալները (հակիրճ բովանդակությունն ու թվականը), որից հետո՝ *դիվան ալ-սադարաթի* կայացրած որոշումն էր և *միսալի* գրության թվականը: Բնօրինակները կնքված էին լինում *սադրի, է՛էթեմադ ալ-դովլեի*, նաև *մուսթովֆի ալ-մամալիքի, դիվանբեկիի* կնիքներով<sup>951</sup>: Եթե որոշումը կայացվել էր *վակֆային* կալվածքների կապակցությամբ, ապա շահի հրամանագրի տեքստից ու թվականից հետո նշվում էր, որ այն գրանցվել է *վակֆերի* մայր անում, անկախ այն հանգամանքից, թե այդ որոշումը հաստատում էր *վակֆային* պատկանելությունն, թե ժխտում:

Մատենադարանի դիտարկվող ժամանակաշրջանի *միսալները* ու թև են: Առաջինը, թեև 1657 թ. հրատարակված բնօրինակի ուշ շրջանի պատճենն է, սակայն *թողրայի* ընդօրինակության մեջ ընթերցվում է *սադր* Միրզա Մեհդի *է՛էթեմադ ալ-դովլեի* անունը<sup>952</sup>: Մյուս յոթ միսալները, որոնք բովանդակում են հայ զիմմիների ու հայոց վանքերի իրավունքների նկատմամբ զանազան խախտումները արգելող որոշումներ, հրատարակվել են *սադր-ե ամմե* Միրզա Աբու Սալեհ Ռեզվիի<sup>953</sup> *դիվանի* կողմից:

**Տարվան** (قتوی) մահմեդական կրոնապետների՝ *շեյխ ուլ-իսլամների* և *մուֆթիների*, ինչպես նաև կրոնական բարձրագույն ատյանի՝ *շարի* կողմից այս կամ այն հարցի մասին տրված վերջնական վճիռն էր, որն օրենքի ու ժողովների<sup>954</sup>:

<sup>951</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 22, 38, 45:

<sup>952</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 3: Միրզա Մեհդին հիջրայի 1063-1072 թթ. (1652-1662 թթ.) եղել է շահ Աբբաս Բ-ի սադրը, ապա հիջրայի 1081 թ. (1670/1 թ.) դարձել նրա մեծ վեզիրն ու *էթեմադ ալ-դովլե* ն սակայն նույն թվականին էլ հեռացվում է պաշտոնից և մահանում հիջրայի 1082 թ. (1671/2 թ.) (տե՛ս 19 *مدرسی طبایعی، تهران 1353، ص.* (مثالهای صدور صفوی، تهران 1353، ص.)):

<sup>953</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 22, 24, 28, 30, 31, 38: Միրզա Սոհամադ Սոհսենի որդի Միրզա Աբու Սալեհ Ռեզվին հիջրայի 1077 թ. (1666/7 թ.) շահ Սուլեյմանի կողմից նշանակվում է սադր-ե ամմե և վարում այդ պաշտոնը մինչև հիջրայի 1092 թ. սաֆար ամիսը (1681 թ.) (տե՛ս 20 *مدرسی طبایعی، مثالهای صدور صفوی، ص.* 20):

<sup>954</sup> Զ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 123:



*Ֆաթվաներ* ներառող հրովարտակաների ստորին մասում ևս կար Ալլահի որպես Գերագույն դատավորի փառաբանում՝ «Հանուն Ողորմած ու Գթառատ Ալլահի – بسم الله الرحمن الرحيم», «Նա է Գերագույն դատավորը – هو الحسيب المتعالی»<sup>955</sup>:

Ալլահի փառաբանում կա նաև *Ֆաթվայի* վճիռը պարունակող հատվածում՝ «Կենդանի է: Նա է – حی، هو», «Ահեղ Ալլահը մշտնջենական է – ابد الله تعالى»:

Եթե հրովարտակը հրապարակվել էր ի հաստատումն հայ *զիմմիների* իրավական հարցերի շուրջ մահմեդական բարձրաստիճան հոգևորականների՝ «շիա *ուլլամաների* և *ֆակիհների*» կողմից կայացրած վճռի՝ *Ֆաթվայի*, ապա այդ *Ֆաթվայի* տեքստը կցվում էր հրամանագրի ստորին եզրին և հրամանագրով հրահանգվում էր վարվել *Ֆաթվայում* կայացրած վճռին համապատասխան: Իսկ հրամանագրի տեքստին հաջորդում էր *է'էթեմադ ալ-դովլեի* գրույթը՝ Աստուծոն ուղղված փառաբանումներով, որը տարբեր էր այդ պաշտոնը զբաղեցրած տարբեր անձանց մոտ, նրա ստորագրույթը և կնիքը՝ «ճիշտ է բարձրագույն օրենքը և թող այն հենվի իրավունքի ու պարտականույթույթների պահանջների վրա, և փառք Բարձրյալ Ալլահին, որը գիտի ճշմարտույթույթը, [ստորագրույթույթ], [կնիք]. Ալլահի հավատի ծառա, Մոհամմադ Մոհսեն»<sup>956</sup>, «Թող վարվեն պարտադիր հպատակույթան արժանի շար'ի օրենքի համաձայն, [ստորագրույթույթ], [կնիք]. «Ի սեր Ալլահի, Մոհամմադ իբն Մեհդի 1062»<sup>957</sup>, Թող անբիժ ու սրբազնագույն շար'ի օրենքին համապատասխան վարվեն, ստորագրույթույթ. [կնիք]. «Աբու Սալեհ...»<sup>958</sup>:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել են XVII դարի Սեֆյան 50-ից ավելի *Ֆաթվաներ* հրապարակված հայ *զիմմիների* իրավունքներին վերաբերող զանազան հարցերի շուրջ, որոնց վերն արդեն անդրադարձել ենք:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահվող *Ֆաթվաներ* ու *միսալները* հաստատող շահական հրովարտակները հիմնականում

<sup>955</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 32, 35:

<sup>956</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 4, 6, 7:

<sup>957</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 10:

<sup>958</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 19:

հրապարակվել են XVII դարում Սեֆյան շահեր Աբբաս Ա-ի, Սեֆիի, Աբբաս Բ-ի և Սուլեյմանի օրոք: Թե՛ Սեֆյան շահ Սուլեյան Յուսեյնի, թե՛ շահ Թահմասպ Բ-ի և թե՛ հրանում իշխանության գլուխ անցած հետագա XVIII-XIX դարերի տիրակալների հրովարտականերին կցված մահմեդական բարձրաստիճան հոգևորականների որոշումներ չկան Մատենադարանի կաթողիկոսական դիվանում:

Եթե հրովարտակը հրապարակվել էր որևէ կոնկրետ իրավունքի, օրինակ, կաթողիկոսության, վանահայրության, *մուլ'աֆուլթյան*, մի բնակավայրից մյուսը տեղափոխվելու և մի քանի այլ իրավունքների հաստատման կապակցությամբ, կամ նախկին շահի հրամանագրի հիման վրա, ապա խնդիրը ներկայացվում էր շատ հակիրճ, նշվում նախկին հրամանագրի կամ հրամանագրերի հրապարակման թվականները և տրվում համապատասխան կարգադրությունը: Եթե խնդրագրում նշվում էր որևէ նոր խնդիր կամ խնդիրներ, բողոք էր հայտնվում որևէ մեկի անօրինականությունների ու ոտնձգությունների դեմ, ապա խնդրագրի մասը կցվում էր հրամանագրի ստորին եզրին և հրամանագրում սովորաբար հրահանգվում էր տեղի կառավարչին քննել հարցը, խնդրարկուհի նկատմամբ անօրինականությունն թույլ չտալ և «հին կարգին համապատասխան» արդար լուծում տալ:

Յետաքրքրության են արժանի Սեֆյան շահերի հրովարտակաների հակառակ կողմում արված գրառումները, որոնք որոշակի տեղեկություններ են տալիս այդ փաստաթղթերի գրությանն ու գործադրմանը ուղեկցող հանգամանքների, տարբեր հաստատություններում դրանց գրանցման ու հաստատման մասին:

Գրեթե բոլոր հրովարտակաների հակառակ կողմում, բացառությամբ բերանացի (կամ բել մոշաֆեհե) հրամանագրերի, առկա է Սեֆյան պետության իշխանության շահից հետո երկրորդ դեմքի՝ *է'էթեմար ալ-դովլեի* գրությունն այն մասին, որ հրամանագիրը գրվել է նրագրության հիման վրա և նրակնիքը:

Կախված հրովարտակի բովանդակությունից ու գործադրման ոլորտներից հրովարտակաների հակառակ կողմում նշվում էին նաև հետևյալ գրասենյակներում ու մատյաններում (*ռուզնամէ*,

սարխաթի<sup>959</sup>, նազարաթի<sup>960</sup>, խալիսեի<sup>961</sup>, ավարեջեի ու թովջիհի<sup>962</sup> դաֆթարներում կամ սարքարոլթյուկներում), որը տվյալ դեպքում նույն իմաստն ուներ, դրանց գրանցման մասին:

Թովջիհի ու ավարեջեի մատյաններում էին գրանցվում գինվորական ռոճիկների հատկացումները տարբեր բնակավայրերի հարկերից, նաև կաթողիկոսների իրավունքները հաստատող, կաթուղիկական քարոզչությունը հայություն շրջանում սահմանափակող, հարկային իմունիտետին վերաբերող և հայ գիմմիների իրավունքները պաշտպանող հրամանագրերը<sup>963</sup>:

Այս գրանցումները կարևոր նշանակություն ունեին Սեֆյան կառավարման համակարգում, և շատ հրովարտակների բուն տեքստում նշվում է հիշյալ գրանցումների օգտագործումը նոր հրամանագրերի հրապարակման ժամանակ. «Ավարեջեի ու թովջիհի դաֆթարի հիման վրա հաստատեցին այդ իրողության անփոփոխ լինելը»<sup>964</sup>, «Ազերբայջանի ավարեջեի, թովջիհի ու սարխաթի սարքարոլթյուկից հաստատեցին, որ 1107թ. ռաբի' առաջին ամսի ամսաթվով (1695 թ.) փարվանչե է հրապարակվել այդ վանքի առաջնորդության վերաբերյալ հետևյալ հակիրճ բովանդակությամբ»<sup>965</sup>:

Բացի այս գրանցումները, Սեֆյան շահերի հրովարտակների հակառակ կողմում գտնում ենք նաև հետևյալ պաշտոնյաների նշումները հրամանագրի բովանդակությանը ծանոթացած լինելու և հաշվի առնելու մասին. մուսթովֆիալ-մամալիթ, դիվանբեկի, նազիր-ե սարր-ե խասսեի<sup>966</sup>, 'ուրֆի դաֆթարդարի<sup>967</sup>, խասսե-ե շարիֆեի սարքարի<sup>968</sup> կողմից: Այս մասին իմանում ենք հիմնականում վավերագրերի նոտարական պատճեններից, քանի որ բնօրինակներում նշվում էր, ոչ թե պաշտոնը, այլ պաշտոնյայի անունը և կնիքը, իսկ հիշյալ պատճեններում՝ հաճախ պաշտոնյայի պաշտոնը:

<sup>959</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 8:

<sup>960</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 70, 76:

<sup>961</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 70, 83:

<sup>962</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 73, 74, 75, 80, 83:

<sup>963</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 1, 65, 71, 74, 80, 83:

<sup>964</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 1, 43:

<sup>965</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 59, 61, 65, 68:

<sup>966</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 22, 48, 53:

<sup>967</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 14, 43, 58, 65:

<sup>968</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 76:

Ընդգրկված ժամանակաշրջանի գրեթե բոլոր հրովարտակաները գրված են շիքասթե-նասթալիզ գրով: Միայն *Ֆաթվաների* տեքստերը գրված են նասխ գրու թյամբ, մինչդեռ նրանց կից հրովարտակի մասը նորից շիքասթե-նասթալիզ գրով է: *Ֆաթվայի* տեքստում մանրամասն շարադրվում էր խնդրի էությունը, իսկ նրանից հետո առանձին, ստորին հատվածում, կամ լուսանցքում՝ վճիռը. «այո» կամ «ոչ»՝ Աստուծոն փառաբանող արտահայտություններով: Սեֆյան շահերի շատ հրովարտականեր ունեն գեղարվեստական ձևավորում: Առավել հաճախ դեկորատիվ ծաղկային նախազարդով նկարազարդված էր շահի կնիքի շուրջը: Սեֆյան շահեր Սուլեյմանի ու Սուլթան Յուսեյնի որոշ հրովարտականեր ունեն լուսանցքներում ծաղկային նախշերով գեղարվեստական ձևավորում: Ուշ-Սեֆյան ժամանակաշրջանի հրովարտականերից շատերի լուսանցազարդերը, ճակատազարդը, մոտ են Նոր Ջուղայի մանրանկարչության նմուշներին, զարդանախշերի մեջ կան այնպիսիք, որոնք կրկնում են հայկական զարդանախշերը: Այդ հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ այդ հրամանագրերը ստացվելուց հետո երբեմն ձևավորվում էին նաև Նոր Ջուղայի հայ վարպետների ձեռքով: Դա ակնհայտ է օրինակ հայերեն ձեռագրերից հ. 389 էջ 23ա-ի, հ. 200 էջ 8ա-ի, հ. 201, էջ 10ա-ի, հ. 204 էջ 1ա-ի, հ. 248, էջ 253ա-ի<sup>969</sup> և հետևյալ վավերագրերի<sup>970</sup> լուսանցազարդերի համեմատության ժամանակ:

**Աֆշարական** շրջանի հրամանագրերը ավելի պարզ են և աչքի չեն ընկնում իրենց կառուցվածքային ու լեզվա-ոճական բազմազանությամբ, սակայն Սեֆյան հրովարտականերից նրանք կտրուկ տարբերվում են իրենց լեզվա-կառուցային ձևերով: Տարբեր են Աստուծոն փառաբանող արտահայտությունները՝ *թահմիդիեները*: Նախքան Նադիրի պաշտոնական թագադրությունը հրապարակված հրամանագրերի *թահմիդիեն* հետևյալն էր՝ «Անուններից լավագույն Ալլահի անունով - *بِسْمِ اللَّهِ خَيْرِ الْأَسْمَاءِ*»: Գահակալ ու մից հետո Նադիրի և նրա հաջորդների հրովարտականերում հանդիպում են *թահմիդիեի* հետևյալ ձևակերպումները՝ «Յանուն

<sup>969</sup> Տեր-Վարդանեան Գ., Նոր Ջուղայի եւ Յարակից շրջանների հայկական ձեռագրական արուեստը, Նիւթեր Մաշտոցեան Մատենադարանի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ցուցահանդէսների, Յուլիս Օգոստոս 2005, էջ 33, 47, 51, 61:  
<sup>970</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան թղթ 1բ, վավ. 185, 1գ, վավ. 255, 268, 331 տես՝ հրատարակված Զ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 56, 71, 82, 88:

Ալլահի - بسم الله» կամ «Յանուս Բարձրյալ Ալլահի بسم الله تعالى», կամ «Յանուս Ողորմած և Գթառատ Աստժոն - بسم الله الرحمن الرحيم» տարբերակները: Իբրահիմ շահի հրովարտականերում առավել հաճախ հանդիպում է «Յանուս Բարձրյալ Ալլահի - بسم الله تعالى», երբեմն նաև՝ «Յանուս Ողորմած և Գթառատ Աստժոն - بسم الله الرحمن الرحيم» ձևերը: Աֆշարական ժամանակաշրջանում *թահմիդիենները* գրվում էին սև կամ կարմիր թանաքով:

Նադիր շահի հրամանագրերի *թողրան*, ունի հետևյալ բովանդակությունը՝ «Բարձրյալ Տիրոջն եմ ապավինում, արքայական հրաման եղավ - اعود بالله تعالى فرمان همايون شد», կամ «Բարձրյալ ու երկրպագելի Տիրոջն եմ ապավինում, արքայական հրաման եղավ اعود بالله تعالى شأنه فرمان همايون شد»:

Իբրահիմ շահ Աֆշարի Մատենադարանի արխիվային ֆոնդում պահվող հրովարտականերում նրա *թողրան* ու կնիքը տարբեր են կախված այն հանգամանքից, թե դրանք երբ են հրապարակվել: Իբրահիմ Միրզան իրեն շահ է հայտարարել 1748թ. դեկտեմբերի 8-ին, որից հետո փոխվել է նրա հրովարտակաների կնիքն ու *թողրան*<sup>971</sup>: Նախքան նրա պաշտոնական թագադրությունը հրովարտականերում առկա *թողրան* ունի հետևյալ գրությունը. «Ալլահինն են իշխանությունն ու զորությունը: Բարձր հրաման եղավ հետևյալի մասին - والا شد الله القوه الله فرمان والاشد», իսկ թագադրումից հետո այն դառնում է՝ «Ալլահինն են իշխանությունն ու զորությունը: Թագավորական հրաման եղավ հետևյալի մասին الله القوه الله فرمان همايون والاشد»:

Նախքան Նադիրի պաշտոնական թագադրությունը Մուղանի դաշտում 1736թ. մարտի 6-ին հրապարակված հրամանագրերում նրա կնիքը դրված է հրամանագրի տեքստից հետո, ստորին ձախանկյունում և ունի հետևյալ գրությունը. «Չկա [ավելի] արժանավորը քան Ալլան է, չկա այլ սուր, բացի Չուլֆիկարը<sup>973</sup>: Ալլահի կամքով միակն<sup>974</sup> եմ և ութնյակի ու քառյակի<sup>975</sup> ծառան - لاقتى الا»:

<sup>971</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 28-37:

<sup>972</sup> Բ. Կոստիկյան, հրովարտականեր, արակ Գ, վավ. 28-37:

<sup>973</sup> Ալլահի սրիանունն է:

<sup>974</sup> Բառախաղ Նադիր անվամբ և նրան շանակություն ամբ:

<sup>975</sup> Խոսքը 12 շիա իմամների մասին է:

976: «على لاسيف الا ذو الفقار نادر حقيرم زلطف حق غلام هشت و چهار»<sup>976</sup>: Թագադրու թյ ու նից հետո փոխվում է կնիքը և այն արդեն դրվում էր հրամանից վեր՝ կենտրոնական մասում: Այս շրջանից Նադիր շահը հրամանագրերը հաստատում էր այլ կնիքներով. «Ալլահի բարեհաճությամբ մարմնացում Նադիրն է, 1148 - 1148 است»<sup>977</sup>, «Պետության ու հավատի գոհարը կորել էր, երբ նրա փոխարեն Աստված Իրանը հաստատեց ընտրյալի [իշխանության] տակ - بسم الله، نگین دولت و دین رفته بود چون از جا - «بنام نادر ایران قرار داد خدا»<sup>978</sup>: Նադիր շահն ունեցել է նաև երկու այլ կնիք, որոնց դրոշմը պահպանվել է Վրաստանում պահվող վավերագրերի վրա<sup>979</sup>: Իբրահիմ շահի կնիքը ևս նրա պաշտոնական թագադրու թյ ու նից հետո փոխվում է, եթե պաշտոնական թագադրու թյ ու նից հետո նրա կնիքը հետևյալ գրությունն ուներ. «Հանուն Ալլահի, խաղաղության և Իբրահիմին, 1161 - 1161 سلام على ابراهيم»<sup>980</sup>, ապա նախքան նրա պաշտոնական թագադրու թյ ու նը նրա կնիքը այլ էր և դրված էր *թողրայից* դեպի աջ, ինչպես, որ հետագայում դաջար արքայ որդիների կնիքներն էին դրվում<sup>981</sup>:

Նադիր շահի հրովարտակները Իրանի Սեֆյան տիրակալների հրապարակած հրամանագրերից առանձնանում են նաև մի շարք այլ հատկանիշներով: Նադիրի հրամանագրերը հիմնականում գրված են ներկայացված խնդրագրին կից, վերին մասում: Խնդրագրերում ի տարբերություն Սեֆյան բավականին զուսպ ոճին, գերակշռում են շահի ու նրա իշխանության երկարաշունչ փառաբանումն ու համեմատությանը Իսթանդարի (Ալեքսանդր Մակեդոնացու) փառքի հետ:

Այսպես, եթե Սեֆյան հրովարտակներին կից խնդրագրերում խնդրարկուհի անվան հիշատակությանը հաջորդում էր հետևյալ ձևակերպումը՝ «Պատվի գագաթնակետին են հասցնում» (կամ «Բարձրագույնին տեղեկացնում են»), որ «بذروه عرض ميرسانند», ապա Նադիրի հրովարտակներում կարելի է գտնել հետևյալ ձևակերպումները՝ «Գերագույն, Ալեքսանդրի փառքին արժանի Նորին վեհապանձ

976 ք. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 1-10:

977 ք. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 12, 13

978 ք. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 23:

979 Тбилисская коллекция персидских фирманов, т. II, док. 21 и док. 22-42.

980 ք. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 34-7:

981 ք. Կոստիկյան, հրովարտակներ, արակ Դ, վավ. 28-33:

Մեծ ության երկնահաս գահին հանգրվանածների բարձրությանը խոնարհաբար հասցնում է – بذروه عرض مقيمآن سرير عرش نظير نواب فلکچناب سکندرشآن –<sup>982</sup>, կամ «Երկնային գահին նմանվող ճակատագրի թագավորության գահի ուղեբերում կանգնածների կայանին է հասցնում – بموقف عرض ایستادگان پایه سریر خلافت مصیر عرش نظیر میرسانند»<sup>983</sup>:

Այս առանձնահատկություններից գուրկ են նրա որդի Ռեզա Ղուլի Միրզայի անունից հրապարակված հրովարտակները, որը Իրանի փոխարքա Էր նշանակվել Նադիրի կողմից՝ դեպի Յնդկաստան նրա կատարած արշավանքի ընթացքում (1738 թ. նոյեմբեր – 1740 թ. մայիս): Նրա կողմից հրապարակված հրամանագրերում բացակայում է Նադիրի թողրան հրամանի սկզբում, իսկ Ռեզա Ղուլիի կնիքը դրված է հրամանագրի տեքստի վերջում, ստորին հատվածում:

Նադիր շահի հրովարտակները առանձնանում են ևս մեկ հատկանիշով, դա հակառակ կողմում նշումների և կնիքների սակավությունն է, որը խոսում է նրա իշխանության միանձնյա բնույթի ու պետական ապարատի բավականին պարզեցվածության մասին: Հրամանագրերի գրանցումները Նադիր շահի իշխանության շրջանում կատարվում էին ըստ հրամանագրերի տեսակների ու բովանդակության տարբեր մատյաններում: Այս պատճառով Նադիր շահի հրովարտակների հակառակ կողմում կարելի է գտնել սեղմ ու ոչ մեծ քանակի նշումներ այդ մատյաններում գրանցվելու մասին: Ինչպես օրինակ՝ «Գրանցվեց *նադամների սարրեշթեում* – ثبت سررشته ارقام –<sup>984</sup>, կամ «Գրանցվեց *խուլասեի* (կամ հակիրճ գրանցումների) *սարրեշթեում* - ثبت سررشته خلاصه شد»<sup>985</sup>:

Սարրեշթե (سررشته) բառը, որը «մասնագետ, գիտակ» իմաստն ունի, տվյալ դեպքում գործածվում է «համապատասխան», «որևէ կոնկրետ տեսակի» մատյանի կամ գրասենյակի իմաստով, ինչպես, օրինակ, *նադամների սարրեշթե, խուլասեի* (հակիրճ գրանցումների) *սարրեշթե*: Սեֆյան ժամանակաշրջանում *խուլասեի* մատյանում կատարվում էին

<sup>982</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 6:

<sup>983</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 11:

<sup>984</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 15:

<sup>985</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 3-6, 9:

Ֆինանսական տարբեր վարչությունների հիմնական օրագրային գրանցումները<sup>986</sup>:

Այլ են հերահիմ շահի հրովարտակների հակառակ կողմում առկա նշումները կատարված գրանցումների մասին: Գրեթե բոլոր հրովարտակների դարձերեսին կանրամեծ վեզիրի կնիքի դրոշմը. «Զկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունը և արդար օրենքը, Աստծո ծառայող Մուհամմադ Յասսին عبد الحق المبین محمد حسن<sup>987</sup>: Բացի այդ, նշված են երկրի տարբեր շրջանների սարքարների կողմից հրամանագրի գրանցման մասին. ինչպես օրինակ՝ «գրանցվեց Իրաքի սարքարի կողմից; գրանցվեց Ֆարսի սարքարի կողմից, գրանցվեց Խորասանի սարքարի կողմից»<sup>988</sup>:

ԱՖշարական հրովարտակների *խաթեմեն* գրեթե նույնությամբ կրկնում է Սեֆյան հրովարտակների համապատասխան մասում առկա արտահայտությունները հրամանի կատարման պարտադիր ու խիստ լինելու մասին, միայն թե դրանք ավելի հաճախ և միաժամանակ մի քանի ձևակերպումներով են նշված<sup>989</sup>:

**Ղաջարական շրջան:** Մատենադարանի արխիվային փաստաթղթերի մեջ պահպանվել են Ղաջարական թագավորական տան հիմնադիր Աղա Մուհամմադ խանի կողմից հրապարակված փոքրաթիվ հրովարտակներից երեքը: Մեծ թիվ են (շուրջ 100 նմուշ) կազմում Ֆաթիալի շահի ու նրա թագածառանգ և Ատրպատականի կառավարիչ Աբբաս Միրզայի հրամանագրերը, որոնք հրապարակվել են հիմնականում Յարավային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտության շրջանում մինչև 1828 թ.: Քիչ քանակությամբ առկա են նաև հետագա շրջանի փաստաթղթեր, որոնք վերաբերում են Ատրպատականի հայոց վանքերին ու Իրանի հայ համայնքի պատմությանը:

Ղաջարական շրջանի հրովարտակներում շահերից յուրաքանչյուրը մեկ տեսակի *թահմիդիե* էր գործածում<sup>990</sup>: Աղա Մուհամմադ խանի հրովարտակների *թահմիդիե* նուներ հետևյալ

<sup>986</sup> فلور و، تاريخچه مالی - مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ص. 145

<sup>987</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 32, 35-36:

<sup>988</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 35, 36:

<sup>989</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 1-27:

<sup>990</sup> سام علی، بررسی فرمان نویسی دوره اول قاجار، ص. 16



գրու թյ ու նը՝ «Յանուս Բարձրյալ Ալլահի – بسم الله شأنه تعالى»<sup>991</sup>, Ֆարսի ի շահի հրովարտակներում թահմիդիեն հետևյալն է՝ «Յանուս Ալլահի, փառք նրան – بسم الله شأنه العزيز»<sup>992</sup>:

Աղա Մուհամմադ խանի հրովարտակներից երկուսը հրապարակվել են նախքան նրա պաշտոնական թագադրությունը 1796 թ. մարտին<sup>993</sup> և այդ պատճառով նրա կնիքը, որը հետևյալ գրությունն ունի. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառայող Մուհամմադ. افوض امرى الى الله الله عبيده محمد» առաջին երկուսում՝ դրված է հրամանագրի տեքստի վերջում, իսկ երրորդը՝ «Իշխանությունն Ալլահինն է: Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառայող Մուհամմադ. – افوض امرى الى الله عبيده محمد» հրամանագրի վերին մասում է՝ որպես շահական կնիք:

Աղա Մուհամմադ խանի թողրան նախքան պաշտոնական թագադրությունը հետևյալն էր՝ «Բարձր հրաման եղավ – فرمان والا شد», գահակալման շրջանում՝ հետևյալը՝ «Աշխարհասատ հրաման հրապարակվեց - حکم جهانمطاع شد»:

Ֆարսի ի շահի կնիքը նրա հրովարտակներում հետևյալ գրությունն ունի՝ «Փառք Ալլահին, որի կամքով իշխանությունը Ֆարսի շահի ձեռքում հաստատվեց 1217 – العزه الله، قرار در كف زمانه فتحعلى گرفت خاتم – 1217 شاهى ز قدرت ازلى»:

Մատենադարանի փաստաթղթերում հրամանագրի սկիզբը ներկայացնող Ֆարսի ի շահի թողրան հետևյալն է եղել՝ «Փառք Բարձրյալ Ալլահին, իշխանությունը նրանն է, արքայական հրաման եղավ - انشاء الله تعالى الملك الله حكم همایون شد»:

Մատենադարանի Ղաջարական շրջանի հրամանագրերից շատերը հրապարակված են Ֆարսի ի շահ Ղաջարի որդի Աբբաս Միրզայի (1789 – 1833 թթ.) անունից, որը 1799թ. նշանակվել էր Իրանի թագաժառանգ, իսկ 1805 թվականից՝ Ատրպատականի նահանգի կառավարիչ<sup>994</sup>: Նա պաշտոնապես համարվում էր Դերբենդից մինչև Ղախլանքուհ ընկած տարածքի կառավարիչը և այդ տարածքում պաշտոնյաներ նշանակելու ու պաշտոնից հեռացնելու իրավունք ուներ: Ատրպատականը նա

<sup>991</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 53, 55:

<sup>992</sup> Տե՛ս Կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 538, 539, 554, 571 և այլն:

<sup>993</sup> J. R. Perry, "ĀĠĀ MOĤAMMAD KHAN QĀJĀR," Encyclopædia Iranica, Online Edition, 1982, available at <http://www.iranicaonline.org/articles/aga-mohammad-khan>

<sup>994</sup> Աբբաս Միրզան պաշտոնապես նշանակվում է այդ շրջանի կառավարիչ միայն 1805թ. (رضا قليخان هدايت، روضه الصفاء ناصرى، جلد 9، تهران، انتشارات كتابفروشيهاى پيروز، 1339، ص. 413):

կառավարում է մինչև 1831թ.<sup>995</sup>: Նրա կնիքը, որը դրված է նրա հրամանագրերի սկիզբն ազդարարող *թողրայից* դեպի աջ, հետևյալ գրույթը ունենում էր՝ «Արքայական ծովի մարգարիտ Աբբաս 1214 دردیای - 1214 «خسروی عباس»: Թագաժառանգի *թողրան* այնպիսին էր, ինչպիսին մյուս արքայազներին էր՝ «Բարձր հրաման եղավ – حکم والاشد»:

Հրամանագրի *մաթլան*, որը գրագիրները ջանում էին առավել գեղեցիկ գրել, դաջարական շրջանում սովորաբար գովաբանում էր այն անձին, որին տրվում էր, նշվում էր նրա պաշտոնը, տիտղոսները բազմաթիվ հանգավորված հատկանիշների շարքով: Ընդհանրապես դաջարական հրովարտակաների ոճն ավելի ծանր է, ձգձգված, քան նախորդ շրջաններինը, լի երկարաչունչ, պատկերավոր արտահայտույթ ունենեցող, ածականներով ու պատվանունների երկար թվարկումներով: Թե՛ Ֆաթիալի շահի և թե՛ թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրերում ընդունված խաթեմեն՝ կամ թղթավարտը սովորաբար հետևյալն է. «թող սա իրենց պարտականությունը համարեն - در عهدہ شناسند», «թող հրամանին չհակառակվեն – از فرموده عدول نورزیده», «խախտողը կարժանանա շահի հրամանով նախատեսվող պատժի - تجاوز را مورد از مدلول فرمان قضاگریان همایون پادشاهی و رقم قضا – «شیم قدر توأم والا تخلف نورزیده»<sup>997</sup>:

Ֆաթիալի շահի իշխանության շրջանում վարչական ապարատի ձևավորման հետ կապված՝ գրառումները հրովարտակաների դարձերեսին նորից դառնում են բազմազան, ինչը հատուկ էր Սեֆյան հրովարտականերին: Մատենադարանի գրեթե բոլոր դաջարական (թե՛ Ֆաթիալի և թե՛ թագաժառանգ Աբբաս Միրզայի) հրամանագրերի հակառակ կողմի գրառումների մեջ նշվում էր *Էսթիֆայի դաֆթարում* կամ *Էսթիֆայի սարքարի* կողմից հրամանագրի գրանցման մասին «Գրանցվեց *Էսթիֆայի սարքարի* կողմից – ثبت سرکار استیفاء شد»<sup>998</sup>, ընդ որում միևնույն հրամանագրի վրա կարող էին լինել *Էսթիֆայի* մեկից ավելի պաշտոնյաների կողմից գրառումներ: Մյուս բոլոր

<sup>995</sup> H. Busse, “ABBĀS MĪRZĀ QAJAR,” *Encyclopædia Iranica*, I/1, pp. 79-84, available online at <http://www.iranicaonline.org/articles/abbas-mirza-qajar> (accessed on 30 December 2012).

<sup>996</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1478:

<sup>997</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1489:

<sup>998</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 539, 554, 574, 575, թղթ. 1ե, վավ. 632, 633, 634, 639, 650, 667, 680, 682, 685, թղթ. 1գ, վավ. 1006, թղթ. 1ը, վավ. 1475, 1487, 1545 և այլն:

գրառու մները հրամանագրի գրանցման ու նրան ծանոթացած լինելու մասին կատարվում են առանց պաշտոնյայի պաշտոնի մասին տվյալի և դրվում էր կնիքը, ինչպես օրինակ. «Անցկացվեց, [կնիք], (مهر) شد», «գրի առնվեց [կնիք]- (مهر) رسيد بقلم», «գրվեց [կնիք]- (مهر) شد، ترقيم شد، مرقوم شد»، «ծանոթացա [կնիք]- (مهر) شد ملاحظه شد», «տեսա [կնիք]- (مهر) رسيد بنظر»<sup>999</sup>:

*Էսթիֆան (استيفاء) մուսթովֆի ալ-մամալ էքին* ենթակա վարչությունն էր (դաֆթարը)՝ բաղկացած չորս բաժիններից<sup>1000</sup>, որոնք էին *ջոզվ վա ջամ'ի դաֆթարը* (հարկերից ստացված եկամուտների գրասենյակը), *դասթուր օլ-ամալի* բաժինը, որում աշխատող *մուսթովֆիները* պատասխանատու էին շրջանների հարկային հաշվարկների համար: Երրորդն *ավարեջեի դաֆթարն* էր, որը զբաղվում էր բացառապես պալատի ունեցվածքով ու ծախսերով: Այս *դաֆթարի մուսթովֆիների* պարտականությունը վերահսկողությունն էր հրապարակվող հրովարտակների ու մյուս փաստաթղթերի նկատմամբ: Չորրորդ բաժինը *մոհասեբեի* (կամ հարկավճարման) դաֆթարն էր, որի ղեկավարը պարտավոր էր ամեն տարվա վերջում բոլոր շրջանների ծախսերի ու եկամտների փաստաթղթերն իշխանությանը ներկայացնել<sup>1001</sup>:

Այսպիսով, *Էսթիֆայի* վարչությունը Ղաջարական իշխանության կարևորագույն օղակներից էր, որի պաշտոնյաների գրանցումներն են այդ շրջանի հրամանագրերի դարձերեսին:

Այս գրանցումների մասին ցուցումներ կան թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրերի վերջաբանում, որոնք արվում էին հետևյալ ձևակերպմամբ. «*Դաֆթարխանեի* պատվարժան պաշտոնյաները ռադամի բովանդակությունը թող գրանցեն և փոփոխություններից զերծ պահեն - از شایبه تغییر و تبدیل مصون دارند و در عهدہ - شناسند»<sup>1002</sup>:

Ղաջարական հրամանագրերը ևս երբեմն ունենին գեղարվեստական ձևավորում՝ ճակատագարդ և լուսանցազարդեր: Այս առումով ուշագրավ են հայ մելիքների ու Եփրեմ կաթողիկոսի իրավունքները հաստատող հրովարտակները: Ղաջարական

<sup>999</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 538, 539, 554, 574:

<sup>1000</sup> فلور و، تاريخچه مالی - مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ص. 361

<sup>1001</sup> فلور و، تاريخچه مالی - مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ترجمه مرتضی کاظمی، تهران، نشر تاریخ ایران، 1394، ص. 362

<sup>1002</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 584, թղթ. 1ե, վավ. 594, թղթ. 1ը, վավ. 1503, թղթ. 1գ, վավ. 1022:

հրամանագրերի գրուելու գործընթացը սկսվում էր թղթի հարթեցումից, որից հետո արվում էին նկարագրողումները, եթե այդպիսիք պետք է լինեին, այնուհետև, գրի էր առնվում *մոնշի ալ-մամալ եքի* կողմից շարադրված բնագիրը, վերջինիս կողմից դրվում էր թողրան և վերջում միայն կնիքը, որի շուրջը հաճախ նուրբ զարդանախշեր էին<sup>1003</sup>: Աբբաս Միրզայի զարդանկար հրամանագրի<sup>1004</sup> զարդանախշերը փոքր ինչ պարզունակ են և հեռու իրանական մանրանկարչության դասական ավանդույթներից: Սակայն նույնը չի կարելի ասել Ֆաթիալի շահի նույն մեղիքին տրված հրովարտակի մասին, որի շքեղ մանրանկարչական ձևավորումը հիշեցնում է ղաջարական շրջանի ձեռագրերի ճակատագրորդերին հատուկ նուրբ գունային բարձրարվեստաչխատանքները<sup>1005</sup>:

### **Խանական հրամանագրերը**

Որոշակի լեզվա-ոճական, կառուցվածքային ու արտաքին առանձնահատկություններով են միմյանցից տարբերվում նաև շահական ու խանական հրամանագրերը:

Խանական հրամանագրերի հիմնական տարբերությունները շահական հրովարտակներից հետևյալն են. նախ, որ խանի կնիքը, որպես կանոն, դրված էր հրամանագրի վերջում, ստորին ձախանկյունում, տեքստը ավելի հակիրճ է, կցված չէ հոգևորական ասյանների որոշումներին, որոնց մասին կարող է նշված լինել հրամանագրի տեքստում:

Խանական հրովարտակներում *թողրան* սովորաբար նույնն է՝ «Բարձր հրաման եղավ - حکم عالی شد»: *Մաթալ ալ* սկսվում է այն պաշտոնյայի տիտղոսաշարով ու անվամբ, որին ուղղված է, կամ ներկայացված խնդրագրի մասին հակիրճ ծանուցմամբ, որին հետևում է *մաթալը*, որը բովանդակում է հրամանի բուն նյութը և ապա *խաթե մեն*, որը ցուցում էր հրամանի խիստ և պարտադիր լինելու մասին՝ ձևակերպված հետևյալ արտահայտություններով, որոնք առկա են նաև շահական հրամանագրերում. «թող այս իրենց պարտականությունը համարեն - درعهده شناسند», որին կարող էր նախորդել

<sup>1003</sup> سام علی، بررسی فرمان نویسی دوره اول قاجار، تهران، انتشارات کلک زرین، 1392، ص. 39-40.

<sup>1004</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 1022:

<sup>1005</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 1024:

«در این باب قدغن لازم دانسته», և այս արտահայտությունները երբեմն փոխարինվում էին հետևյալ արտահայտությամբ՝ «իրամանին հակառակվողը կպատժվի – خلاف مقرر را»<sup>1006</sup>: «مورد بازخواست دانند»

Մատենադարանի արխիվային ֆոնդում պահվող խանական հրամանագրերի մեծ մասը հրապարակված են Երևանի խաների կողմից և վերաբերում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքներին, նրա հարկային արտոնություններին ու այլևայլ խնդիրներին, կան նաև մի քանի հրամանագրեր հրապարակված Նախիջևանի ու Ղարաբաղի խաների կողմից նրանց իշխանության տակ բնակվող հայերին ու հայոց վանքերին վերաբերող տարբեր խնդիրների առնչությամբ:

Վերը նշված հատկանիշները հատուկ են նաև Նադիր շահի մահից (1747 թ.) հետո XVIII դարի երկրորդ կեսում Չարավային Կովկասի շրջանների նկատմամբ հավակնություններ հանդես բերած և Իրանի շահի գահին հավակնող Ազատ խան Աֆղանի, Մուհամմադ Չասան խան Ղաջարի, Քերիմ խան Վեթիլի, ինչպես նաև վրաց թագավոր Յերակլ Բ-ի ու նրա որդի արքայազն Գեորգիի հրովարտակներին<sup>1007</sup>: Այս հրամանագրերի դարձերեսի գրառումները հաճախ կրկնում են Աֆշար շահերի հրովարտակների հակառակ կողմի նշումները դրանց համապատասխան մատյանում գրանցման ու բովանդակությանը ծանոթացած լինելու մասին: Ազատ խանի հրովարտակներում առկա է *ավարեջեի սարրեշթեում*, նաև «գորքերի սարրեշթեում - عساکر سررشته»<sup>1008</sup>, «գորակոչի սարրեշթեում - سررشته احظار»<sup>1009</sup> այդ փաստաթղթերի գրանցման մասին, հանգամանք, որ մատնանշում է Ազատ խանի իշխանության ռազմական բնույթը, որը բնական էր Իրանում շահի գահի համար պայքարող հիշյալ տիրակալի համար:

### **Նամակագրություն (مکاتبات)**

Սեֆյան շրջանի նամակները ևս, ինչպես հրամանագրերը, գրվում էին որոշակի կանոններով: Ժամանակաշրջանի գրագրության ուղեցույցում մանրամասն նշվում են ազգականներից

<sup>1006</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 411, թղթ. 1դ, վավ. 452:

<sup>1007</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 38-52:

<sup>1008</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 38, 44, 45, 47:

<sup>1009</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 42:

յ ու ր ա ք ա ն չ յ ու ր ի ն, հ ա տ կ ա պ ե ս ք ա ր ձ ր ա ս տ ի ճ ա ն ա ն ձ ա ն ց դ ի մ է լ ու ձ ն ե ր ը և օ գ տ ա գ ո ր ծ վ ո ղ մ ե ծ ա ր ա ն ք ի խ ո ս ք ե ր ը, ո ր ո ն ք ք ա ղ կ ա ց ա ծ է ի ն ք ա գ մ ա ք ի վ ա ծ ա կ ա ն ն ե ր ի ց <sup>1010</sup>:

Ս ե Ֆ յ ա ն շ ա հ ե ր ի պ ա շ տ ո ն ա կ ա ն ն ա մ ա կ ա գ ր ու թ յ ու ն ը վ ա ր ու մ է ր մ ու ն շ ի ալ -մ ա մ ալ ի ք ը <sup>1011</sup>, ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ շ ա հ ե ր ի կ ո ղ մ ի ց ն ա մ ա կ ն ե ր հ ղ վ ու մ է ի ն օ տ ա ր ե ր կ ր յ ա մ ի ա պ ե տ ն ե ր ի ն, ի ս կ Յ ա յ ո ց կ ա թ ո ղ ի կ ո ս ն ե ր ը շ ա հ ի հ ա պ ա տ ա կ ն ե ր ն է ի ն, ո ր ո ն ց հ ա ս ց ե ա գ ր վ ու մ է ի ն մ ի ա յ ն հ ր ա մ ա ն ա գ ր ե ր, ա յ ն ա պ ե ս, ո ր Մ ա տ ն ա դ ա ր ա ն ի ար խ ի վ ու մ չ կ ա ն Ս ե Ֆ յ ա ն ու ն ա ն հ ե տ ա գ ա շ ր ջ ա ն ի (XVIII դ.) շ ա հ ա կ ա ն ն ա մ ա կ ն ե ր: Կ ա թ ո ղ ի կ ո ս ն ե ր ի ն ու ղ ղ վ ա ծ ն ա մ ա կ ն ե ր չ կ ա ն ն ա ն Ս ե Ֆ յ ա ն ար ք ու ն ի պ ա շ տ ո ն յ ա ն ե ր ի ց, ս ա կ ա յ ն զ գ ալ ի ք ա ն ա կ ե ն կ ա գ մ ու մ XIX դ ա ր ի ս կ զ ք ի Ղ ա ջ ար ա կ ա ն պ ալ ա տ ի պ ա շ տ ո ն յ ա ն ե ր ի և է ր ն ա ն ի խ ա ն ե ր ի ն ա մ ա կ ն ե ր ը է ջ մ ի ա ծ ն ի կ ա թ ո ղ ի կ ո ս ն ե ր ի ն:

Դ ի տ ա ր կ վ ո ղ ժ ա մ ա ն ա կ ա շ ր ջ ա ն ի ն ա մ ա կ ն ե ր ու մ ս ո վ ո ր ա ք ա ր ն ա մ ա կ ի հ ե ղ ի ն ա կ ի և հ ա ս ց ե ա տ ի ր ո ջ ա ն ու ն ն ե ր ը գ ր վ ա ծ ե ն դ ա ր ձ ե ր ե ս ի ն, ը ն դ ո ր ու մ հ ե ղ ի ն ա կ ի ա ն վ ա ն փ ո խ ա ր ե ն հ ա ճ ա խ դ ր վ ու մ է ր ն ր ա կ ն ի ք ը, ի ս կ հ ա ս ց ե ա տ ի ր ո ջ ա ն ու ն ը ն շ վ ու մ է ր ե ր կ ա ր ա շ ու ն չ տ ի տ ղ ո ս ա շ ար ի ց ու պ ա տ վ ա ն ու ն ն ե ր ի ց հ ե տ ո: Ն ա մ ա կ ն ե ր ի ք ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ը գ ա ղ տ ն ի պ ա հ է լ ու ն ա պ ա տ ա կ ո վ հ ա ճ ա խ դ ր ա ն ք կ ն ք ու մ ու զ մ ռ ս ու մ է ի ն, ի ն չ ա պ ե ս ա յ դ ն ա պ ա տ ա կ ո վ ա յ դ կ ե ր պ վ ա ր վ է լ է խ ո ր ի հ ու ր դ տ ալ ի ս է ղ ի ա Կ ա ր ն ե ց ի ն ի ր ե ն ծ ա ն ո թ պ ա ր ս ի կ պ ա շ տ ո ն յ ա յ ի ն՝ «ի ն ձ գ ր ե լ ի ս գ լ ու խ ն մ օ հ ր ե ս, ո ր մ ար դ չ ի մ ա ն ա թ է ի ն չ գ ր ե ց ի ր» <sup>1012</sup>: Ա յ ս ա փ ս ո վ, կ ա թ ո ղ ի կ ո ս ն ե ր ի ա ն ու ն ը ն ր ա ն ց ու ղ ղ վ ա ծ ն ա մ ա կ ն ե ր ու մ, ո ր ո ն ք ս ո վ ո ր ա ք ա ր ծ ալ վ ու մ է ի ն լ ա յ ն ու թ յ ա մ ք ո չ լ ա յ ն շ ե ր տ ե ր ո վ, ս ո վ ո ր ա ք ա ր ն շ վ ա ծ է ն ա մ ա կ ի հ ա կ ա ռ ա կ կ ո ղ մ ի վ ե ր ի ն հ ա տ վ ա ծ ու մ ե ր կ ա ր ա շ ու ն չ պ ա տ վ ա ն ու ն ն ե ր ի շ ար ք ի վ ե ր ջ ու մ, ը ն դ ո ր ու մ է ր ն ա ն ի խ ա ն ե ր ի կ ո ղ մ ի ց հ ղ վ ա ծ ն ա մ ա կ ն ե ր ի հ ա կ ա ռ ա կ կ ո ղ մ ի վ ե ր ի ն հ ա տ վ ա ծ ու մ կ ա թ ո ղ ի կ ո ս ի ն պ ա տ վ ո ղ ե ր կ ա ր ա պ ա տ ու մ խ ո ս ք ե ր ի ու ա ն վ ա ն հ ե տ մ ի ա ժ ա մ ա ն ա կ հ ա ճ ա խ կ ա ր ո ղ է ր ն շ վ է լ «ք ա ր ե կ ա մ» ք ա ռ ը, ո ր ը ց ու յ ց է ր տ ալ ի ս վ ե ր ջ ի ն ի ս ի ր ե ն ց հ ա վ ա ս ար դ ի տ է լ ու և ն ր ա հ ե տ ք ա ր ե կ ա մ ա կ ա ն փ ո խ ա ր ա ք ե ր ու թ յ ու ն ն ե ր ը պ ա հ է լ ու ջ ա ն ք ե ր ի մ ա ս ի ն: Ի ն չ ա պ ե ս, օ ր ի ն ա կ է ր ն ա ն ի Մ ու հ ա մ մ ա դ խ ա ն ի ց Ղ ու կ ա ս կ ա թ ո ղ ի կ ո ս ի ն ու ղ ղ վ ա ծ

<sup>1010</sup> منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، ص. 39-81

<sup>1011</sup> قائم مقامی ج، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، تهران، سلسله انتشارات انجمن آثار ملی 1350، ص. 257

<sup>1012</sup> Եղիա Կարնեցի, Դիվանը, էջ 83:

Նամակում, որտեղ վերջինս մեծարվում է հետևյալ բառերով. «Քահանաների գլխավոր ու քրիստոնյա մեծամեծների ընտրյալ, մեր բարեկամ, խալիֆաների խալիֆա, Ուլջիլիսայի վանքի Ղուկաս կաթողիկոսին - عمدة الاعظم الاخيار القسيسين و زبدة الافاخم المسيحين دوستى و مودت نشان خليفه الخلفاء - 1013, կամ Երևանի Յուսեյն խան սարդարի կողմից Եփրեմ կաթողիկոսին ուղղված նամակում. «Նամակ ուղղված բարձրաստիճան, վսեմաշուք ու փառահեղ, քրիստոնյա հոգևորականների գլխավոր ու Յիսուսի հետևորդների առաջնորդ, բարեկամության ավանդույթները պահող Եփրեմ կաթողիկոս – مكاتبه به – عاليجاه رفيع جاياگاه مجدت و مناعت اکتناه عمدة الخلفا المسيحين و قدوة الكبرالعیسويين دوستى و مودت آيين خليفه ابرم» 1014:

Նամակների վրա թվականը սովորաբար նշված չէ, և ժամանակը հնարավոր է պարզել միայն նամակում նշված անձանց ու իրադարձությունների պարզաբանումից հետո, նաև հակառակ կողմում երբեմն տեղ գտած հայերեն գրառումներից:

### **Շարի'աթական-նոտարական փաստաթղթեր**

Մատենադարանի XVII դարի II կես – XIX դարի I կեսի պարսկերեն փաստաթղթերի մի մասը հրապարակվել են մահմեդական *շարի'* դատական ատյաններում և բովանդակում են սոցիալ – տնտեսական տարբեր բնույթի գործարքներ՝ առքուվաճառքի, փոխանակման ու վարձակալության, նվիրատվության (վակֆի), կտակի, ժառանգության բաժանման, սեփականության շուրջ վեճերի ու համաձայնության մասին, համախոսական վկայագրեր, պարտամուրհակներ ու ստացականներ: Սեֆյան շահ Սուլեյմանի շրջանի գրագրության ուղեցույցում բերվում են այս շարի'աթական-նոտարական փաստաթղթերի նմուշներ, որոնց հիման վրա հնարավոր է ճշտել վավերագրի տեսակների անվանումները ու գրության սկզբունքային հարցերը<sup>1015</sup>: Փաստաթղթերի տեսակներից յուրաքանչյուրի գրության սկզբունքներն ու լեզվակաղապարային առանձնահատկությունները փոփոխվում էին ժամանակի ընթացքում: Շարի'աթական ատյաններում գրված այս

<sup>1013</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 519:

<sup>1014</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 666:

<sup>1015</sup> منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، 162-173.

փաստաթղթերը սովորաբար հաստատվում էին *ղազիի, դիվանբեկիի* ու *շարի* սպասավորների (խադեմների), հաճախ նաև վկաների կնիքներով: Մատենադարանի պարսկերեն այս վավերագրերի առատ նյութը հնարավորություն է տալիս ուսումնասիրել տեսակներից յուրաքանչյուրի առանձնահատկություններն իրենց զարգացման մեջ: Մատենադարանի պարսկերեն շարի'աթական-նոտարական վավերագրերի ուսումնասիրությունը նվիրված իր աշխատանքում Յ. Փափազյանը «կալվածների առուծափի, օտարման և ընդհանրապես հողի սեփականատիրության հարցերին վերաբերող վավերագրերը անվանում է կալվածագրեր»<sup>1016</sup>: Այս փաստաթղթերը կոչվում էին նաև *շարի'աթական* եզրույթով «հոջջաթ - حجت» («ապացույց»), որոնցով ապացուցվում էին սեփականատիրությանը վերաբերող հարցերը<sup>1017</sup>:

**Ղաբալե (قبالة) - Առքուվաճառքի պայմանագիր:** Մատենադարանի պարսկերեն ղաբալեները հիմնականում վերաբերում են հայոց վանքերի և հատկապես Էջմիածնի կալվածքներին: Եթե XIV-XVI դարերի կալվածագրերի մեջ տվյալների մանրամասնությամբ միմյանցից բավականին հեռու էին ընդարձակ և համառոտ շարադրանքով ղաբալեները<sup>1018</sup>, ապա XVII դարից այդ տարբերությունները փոքրանում են: Ժամանակի ընթացքում միտում է նկատվում դեպի շարադրանքի պարզեցումը և արաբերեն ձևակերպումների նվազումը: XIX դարի առաջին կեսում ևս առքուվաճառքի պայմանագրերը Յարավային Կովկասում հաճախ գրվում էին պարսկերեն և պարզեցված կարգով՝ սյունակներով, առանձին-առանձին նշելով նախ վաճառողի անունը «վաճառող - بايع» բառի տակ, ապա գնորդինը՝ «գնորդ - مشتری» բառի տակ, այնուհետև՝ գնման առարկա «գնման առարկա - مبيع» բառի տակ և գինը «գին - ثمن» բառի տակ: Այս ամենին հաջորդում էին գործարքի համապատասխանությունը շարի'աթի օրենքներին ու գնման առարկայի նկատմամբ իրավունքների փոխանցումը վաճառողից գնորդին հաստատող ձևակերպումները պարսկերեն ու արաբերեն արտահայտություններով<sup>1019</sup>:

<sup>1016</sup> Յ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, էջ 8:  
<sup>1017</sup> Յ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, էջ 13:  
<sup>1018</sup> Յ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, էջ 10:  
<sup>1019</sup> Որպես XIX դարի առաջին կեսի պարսկերեն կալվածագրի օրինակ տես՝ ս. Խաչատուր Աբովյանի կողմից իրականացված գնման գործարքի կալվածագրի բնագիրը և հայերեն թարգմանությունը Ք. Կոստիկեան, Խաչատուր Աբովյանի



Եթե վաղ շրջանի *ղաքալ եկեղեցու*՝ զգալի տեղ էր զբաղեցնում արաբերեն նախաբանը, որը հիմնականում բաղկացած էր Ալլահին, նրա հիմաստությունն ու արդարադատությունը, Մուհամմադ մարգարեին գովաբանող արտահայտություններից, ապա հետագայում այդ արտահայտությունների ծավալը փոքրանում է, կամ փոխարինվում նույն բովանդակությամբ պարսկերեն պերճախոս ձևակերպումներով:

Գործարքի բուն նյութը *ղաքալ եու*՝ շարադրվում է որպես փաստաթղթի գրություն պատճառ և սկսվում հետևյալ արտահայտություններով՝ «այս օրինական և ընդունելի խոսքերի գրություն նպատակն այն է, որ – غرض از تحریر و تسطیر این ارقام شرعیه و باعث بر تقریر و تنسیق –<sup>1020</sup> կամ «հստակ ապացույցների շարք ներկայացնող այս օրինական խոսքերի գրություն պատճառն այն է - باعث بر تحریر این کلمات -<sup>1021</sup>», կամ «այսպիսով, սույն օրինական ու գործադրելի շարադրանքի գրություն պատճառը այն է, որ - اما بعد باعث بر تحریر این ارقام شرعیه -<sup>1022</sup> և ներկայացվում էր հետևյալ կերպ. Նախ նշվում էին վաճառող(ներ)ի անուն(ներ)ն ու տիտղոսաշարը, այնուհետև վաճառվող գույքը՝ իր չափով ու սահմաններով, ապա գնորդ(ներ)ի անուն(ներ)ը և գույքի արժեքը: Երբեմն գնորդի և վաճառվող գույքի տեղերը փոխված են: Գույքի արժեքի հարցում շփոթությունից խուսափելու նպատակով որպես կանոն նշվում էր նաև արժեքի կեսը և լրիվ ներկայացվում դրամական միավորը, որով այն գնահատված է: Գնման արժեքի լրիվ վճարումը ավելի ուշ կատարվելու դեպքում կազմվում էին նաև ստացականներ՝ տրված վաճառողի կողմից, որոնք հավաստում էին գույքի լրիվ արժեքի վճարված լինելու մասին<sup>1023</sup>:

Բուն նյութի շարադրանքին հաջորդում էին արաբերեն բառերի ու արտահայտությունների լայն կիրառմամբ ձևակերպումները գործարքի կայացմանը, նրա անբեկանելի լինելու, նաև գնի լրիվ վճարումից հետո սեփականատիրական իրավունքների վաճառողից գնորդին անցնելու վերաբերյալ: Ինչպես օրինակ. «Այժմ այս

կենսագրություն մի մասնիկ, 3-րդ կազմի հայ ազգիտական հանդես, Բեյրութ, 2013 թ. 33, էջ 291-296:

<sup>1020</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 51:

<sup>1021</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 71:

<sup>1022</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1076

<sup>1023</sup> Այս մասին տե՛ս նաև ստացականներին նվիրված ենթաբաժնում:

շարի՝աթական գործարքով վերը նկարագրված վաճառքի առարկան դառնում է հիշյալ գնորդի օրինական ու բացառիկ ունեցվածքը և նրա կամքն է, որ ... ըստ իր ցանկության այն տնօրինի, ինչպես, որ սեփականատերն է տնօրինում իր օրինական սեփականությունը – تمامی مبيع مزبور کشت حق طلق و مال مختص خاص خالص مشتری بهر گونه که خواهد و اراده نماید در بيع مزبور تصرف کند<sup>1024</sup>, կամ հետևյալ օրինակում՝ «[Գույքի] օտարումից և գումարի վճարումից հետո այս օրինական առքովաճառքի գործարքով նրա նկատմամբ օրինական ու բացառիկ սեփականատիրական իրավունքը հիշյալ գնորդինն է և նրա տնօրինության տակ է նրա մալ իքանեն, ինչպես, որ սեփականատերերին է պատկանում իրենց օրինական սեփականությունը – اکنون بموجب این مبیاعه شرعیه تمامی مبيع موصوف حق طلق و مال مختص خاص خالص مشتری مزبور است و اوراست تصرف مالکانه در ان کما بتصرف المالك في املاکهم الحقوق في ايديهم بأى وجه شاء و اراد جری ذالک»<sup>1025</sup>:

*Ղաբալ ԵնԵրը* եզրափակում էր փաստաթղթի գրություն տարվա ու ամսաթվի մասին նշումը: *Ղաբալ ԵնԵրի* վերին լուսանցքում *ղազիի* կամ *շարի* այլ պաշտոնյայի հաստատումն էր՝ արաբերեն ձևակերպմամբ, ստորին լուսանցքում՝ հաճախ վաճառողի ստորագրությունն ու կնիքը, իսկ աջ լուսանցքում՝ վկաների կողմից գործարքին ներկա գտնվելու ու փաստաթղթի իրականությանը համապատասխանելու մասին գրառումները և կնքադրոշմները:

**Վակֆնամե (կամ վակֆնամչե, վակֆիե** وقفنامه، وقفنامه، وقفیه): Վակֆային նվիրատվություններին վերաբերող արձանագրությունները կոչվում էին *վակֆնամեներ*<sup>1026</sup>: Բարձրաստիճան հոգևորականները ջանում էին հայոց վանքերի կողմից գնված ու նրանց նվիրաբերված կալվածքները վերածել *վակֆերի*, որոնք մահմեդական իրավունքի տեսանկյունից առավել պաշտպանված սեփականությունն էին: *Վակֆի* օրենքները Սեֆյան իրանում հատկապես խստորեն էին պահպանվում մահմեդական կրոնական հաստատություններին վերաբերությամբ<sup>1027</sup>: Թեև Մատենադարանի վավերագրերի մեջ չկան այնպիսիք, որոնք

<sup>1024</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 54:

<sup>1025</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 51:

<sup>1026</sup> Յ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, էջ 9, 11:

<sup>1027</sup> Папазян А., նշվ. աշխ., էջ 118:

բովանդակ են *վակֆայի* կալվածքների վաճառքի մասին տվյալներ, սակայն բազում վավերագրեր կան, որոնք արտացոլում են հայոց վանքերի *վակֆայի* ունեցվածքի նկատմամբ ոտնձգությունները<sup>1028</sup>, հատկապես գրավի դիմաց դրանց բռնագրավման դեպքերը<sup>1029</sup>:

*Շարի'աթական* օրենքով միայն այն կալվածքները կարող էին *վակֆի* վերածվել, որոնց սեփականությունն անվիճելի էր. այսինքն կամ ժառանգված էին, որի մասին նշվում էր փաստաթղթում<sup>1030</sup>, կամ գնված: Ուստի հաճախ *վակֆ* արվող կալվածքների համար նախապես կազմվել են գնման *ղաթալեներ* և ապա ձևակերպվել նվիրատվությունը: Երբ վավերագիրը բովանդակում է և՛ *ղաթալե* և՛ *վակֆնամե*, այն կոչվում է «ղաթալե-վակֆնամե», որպիսիք կան Մատենադարանի վավերագրերի մեջ<sup>1031</sup>: Երբեմն նախկինում կատարված գնման մասին նշվում է *վակֆնամեում* շեշտելով, որ գնորդն իր կամքով է *վակֆ* անում, ինչպես օրինակ Սաղմոսավանքին 1668 թ. *վակֆ* արված Օշական գյուղում գտնվող մեկ կտոր այգու *վակֆնամեում*<sup>1032</sup>:

Որոշ դեպքերում նույն օրը տեղի ունեցած երկու գործարքները (գնումը և վակֆ անելը) կարող էին ձևակերպված լինել առանձին-առանձին փաստաթղթերով, ինչպես օրինակ 1664 մարտի 23-ին Շահր-ե Ղադիմի այգու գնման ու Մուղնու վանքին *վակֆ* արվել ու փաստաթղթերում է<sup>1033</sup>:

Պահպանվել է *վակֆնամե* գրված 1116 թ. (1704/5 թ.), որով Կավակերտ (Գյոզգուլմբեթ) գյուղի համայնքն է վակֆ անում իր 30 սոմարի ցանքատարածությունը Էջմիածնի վանքին<sup>1034</sup>:

XVII- XIX դարերի *վակֆնամեների* հիմնական մասը արձանագրել են մասնավոր անձանց հատկապես նախկին պաշտոնյաների ու վաճառականների նվիրատվությունները հայոց վանքերին:

XVII դարում գրված որոշ կարևոր *վակֆնամեներում* պահպանվում է ընդարձակ արաբերեն նախաբանը, որը փառաբանում է Ալլահին, *վակֆ* անողին, ինչպես օրինակ 1658 թ. Նախիջևանի *շարի* դատարանում գրված փաստաթղթում, ըստ որի Երևանցի Խոջա Յակոբը

<sup>1028</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 48, 52, 53:

<sup>1029</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 46, 50:

<sup>1030</sup> Տե՛ս Մատենադարանի Կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 523:

<sup>1031</sup> Յ. Փախազյան, կալվածագրեր, պրակ Ա, էջ 11:

<sup>1032</sup> Մատենադարան, կաթողիկոս. Դիվան, թղթ. 1բ, վավ. 142:

<sup>1033</sup> Մատենադարան, կաթողիկոս. Դիվան, թղթ. 1բ, վավ. 117, 118:

<sup>1034</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 213:

իր կամքով Նորագեղն ամբողջովին և Եղվարդի 4.5 դանգը որպես վակֆ նվիրում է Էջմիածնին<sup>1035</sup>:

Սակայն երբեմն նախաբանը շատ կարճ էր՝ սահմանափակվելով ընդամենը փառաբանման մասին հիշատակությամբ (Ալլահի փառաբանումից հետո *بعد الحمد والبسملة والتصليه*)<sup>1036</sup>:

Որոշ դեպքերում վակֆ արվելու մասին նշվում է կալվածքի առթուվաճառքից հետո լուսանցքում արված գրությամբ, ինչպես օրինակ Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից 1655 թ. Օշականի կես դանգի գնման կալվածագրում<sup>1037</sup>:

Երբ վակֆ էր արվում փոքր կալվածք, ասենք մեկ կտոր այգի, բավարար էր լինում ընդամենը *վակֆի* ձևակերպումը մեկ փաստաթղթով<sup>1038</sup>:

**Մաջլես (مجلس) - Դատավարություն:** Սեֆյան գրագրության ուղեցույցում *մաջլես* եզրույթն է օգտագործվում դատական վիճաբանությունների մասին արձանագրություններն ու կայացած համաձայնագրերը գրանցող փաստաթղթերն անվանելու համար: Մատենադարանի XVII-XIX դարերի փաստաթղթերի մեջ քիչ չեն նաև հայերի ու մահմեդականների միջև ծագած բազում վեճերն արձանագրող այս փաստաթղթերի նմուշները: Այս կարգի փաստաթղթերում ներկայացվում է ծագած խնդրի էությունը, ապա որոշման համար հիմք հանդիսացող փաստարկները, հաշվի առնված փաստաթղթերը կամ իրավական նորմերը և վերջում *շարհի* ատյանի կայացրած որոշումը: Սովորաբար նման փաստաթղթերը կրում են մի շարք վկաների կնիքներով վկայությունները տեղի ունեցած նիստին ներկա գտնվելու ու փաստաթղթի համապատասխանությունը շարադրանքին հաստատելու վերաբերյալ:

Այս սխեմայով գրված *շարհի* արձանագրություններից հետաքրքրության է արժանի 1671 թ. մի փաստաթուղթ, ըստ որի Վերին Ազուլիսի մահմեդականները բողոք են ներկայացնում՝ պնդելով, թե Ազուլիսի վանահայրը վանքի շուրջն ապրիսաբար բարձր պարիսպ ու այլ շինություններ է կառուցել: Տեղի հայերն իրենց հերթին

<sup>1035</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 108:

<sup>1036</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 118:

<sup>1037</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 123:

<sup>1038</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 151, 153:

Նշում են, որ այդ պարիսպը վանքի վակֆային տարածքում է և վանքի հյուրերի ու ուխտավորների պաշտպանության համար է: Ըստ այդմ, Մուհամմադ Ղասեմ Բեկին կարգադրվում է քննության անցկացնել, թե արդյոք այդ շինությունները հնում եղե՞լ են և թե՞ ապրիևաբար են կառուցվել: Քննության արդյունքում որոշվում է, որ քանի որ այդ շինությունները պաշտպանության համար են և դրանք ոչ ոքի չեն խանգարում, ուստի նրանց կառուցումը օրենքին հակառակ չէ<sup>1039</sup>: Նշված փաստաթուղթը հաստատված է 25 վկաների արաբատառ կնիքներով:

Կաթողիկոսական դիվանում բազմաթիվ են էջմիածնի կալվածքների շուրջ տեղի ունեցած վեճերն արձանագրող փաստաթղթերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի դժվարությունների առաջ էին կանգնում Հայոց կաթողիկոսներն ու բարձրաստիճան հոգևորականները Մայր Աթոռի ու մյուս վանքերի ունեցվածքը պաշտպանելու ճանապարհին: Փաստաթղթերի մի մասի բովանդակությունը փաստում է, որ հաճախ հավակնորդների անհիմն ճանաչվող պահանջները շարունակում էին ձգձգել դատը և լուծվում էին միայն հայ հոգևորականներից որոշ գումար կորզելուց հետո: Ինչպես փաստում է, օրինակ, *շարհ* դատական նիստի արձանագրությունը բովանդակող 1683 թ. փաստաթուղթը, ըստ որի Վելի Բեկ Սաճալուի որդի Օսթադ Ալին բողոք էր ներկայացրել էջմիածնի *մութավալլի* դեմ, թե նա ապրիևաբար գավթել է իր պապենական ժառանգությունն հանդիսացող Օշականի 6 դանգ մուլլքը, բայց չի կարողանում հստակ ապացույցով այն վերադարձնել: Վեճը երկարում է և ի վերջո վճիռ է կայացվում, որ էջմիածինը պետք է 4 թուման վճարի հայցվորին, որպեսզի վերջինս այլևս պահանջներ չներկայացնի<sup>1040</sup>:

Նմանատիպ իրավիճակ է ներկայացված նաև *շարհ* 1819 թ. մեկ այլ *մաջլեսուն*, ըստ որի Վելի Բեկ Մուղանլուի որդի Հաջի Մուհամմադ Հասան Բեկը *շարհ* դատարանում վեճ է սկսում Եփրեմ կաթողիկոսի դեմ՝ պնդելով, թե Օշականում գտնվող 3 կտոր ավերակ այգիները և 1 ավերակ ջրաղացը, նաև Շիրաբադում գտնվող մեկ կտոր այգին իրեն են պատկանում և անիրավ կերպով գավթվել են էջմիածնի կողմից:

<sup>1039</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 154:  
<sup>1040</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 179:

Այս պնդմանն ի պատասխան ապացուցվում է, որ այդ այգիները Էջմիածնի *վակֆն* են: Դատն ավարտվում է կողմերի միջև կայացված համաձայնության մեջ, որ վանքը վճարի 12 թուման և վեճը դադարեցվի<sup>1041</sup>:

**ԷջարեՆամե (اجاره نامه) - Վարձակալ ագիր:** Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ կան ոչ մեծ քանակով վարձակալագրերը՝ հիմնականում գրված XVIII-XIX դարերում: Այս կարգի փաստաթղթերի սակավության պատճառը թերևս այն է, որ հայ սեփականատերերը գերադասում էին իրենց գույքը վարձակալության տալ հայերին և ոչ այլազգիների՝ հետագա խնդիրներից խուսափելու համար, իսկ հայերի միջև նման գործարքները կնքվում էին հայերեն: Ինչպես երևում է այս կարգի որոշ գործարքներ արտացոլող մի քանի փաստաթղթերի բովանդակության ընդհանուր կազմակերպման հիմքի վրա, եթե որոշ կազմակերպչներ էլ վարձակալության են տրվել մահմեդականների կամ հակառակը, ապա դատողի էությունը կամ անհրաժեշտության ընդհանուր դրված կամ հանգամանքների բերմամբ:

Այսպես, 1678 թ. կնքված մի շարի'աթական նոտարական փաստաթղթի բովանդակության համաձայն Ուրմիացի Գրիգորի որդի Սահակը վաճառում է Յաջի Վելի Բեկի որդի Ռուստամին իր մի կտոր 15 *ման* հացահատիկ ցանելու հողը 12000 դինար գումարով, որի կեսն է վճարում գնորդը, պայմանով, որ եթե մեկ տարի անց ամբողջ գումարը վաճառողը վերադարձնի, ապա վաճառքը չեղյալ կհամարվի, հակառակ դեպքում վաճառողն այն պետք է վարձակալի տարեկան 2400 դինար գումարով<sup>1042</sup>: Փաստաթուղթը ցույց է տալիս, որ սեփականատերը գումարի անհրաժեշտության պատճառով էր իր գույքը վաճառել՝ ստանալով արժեքի կեսը և պայման դրել, որ եթե չկարողանա այդ գումարը վերադարձնել, որոշակի գումարով այն վարձակալի:

XVIII դարի երեք պարսկերեն վավերագրերի տվյալները փաստեր են պարունակում Էջմիածնի Թավրիզում գտնվող կալվածքի վարձակալության գործարքի վերաբերյալ: Մուհամմադ Շաֆիի (1766/7 թ.) նամակից հայտնի է դառնում, որ վերջինս Նոր Ջուղայի հայ հոգևոր առաջնորդից իմացել էր, որ Թավրիզում գտնվող իր այգուն կից մեկ կտոր այգին Էջմիածնի *վակֆային* կալվածքն է, որի պատերը

<sup>1041</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 748:

<sup>1042</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 1092:

վնասված լինելով, այդ հողից ոչ մի բերք չէր ստացվում, ուստի առաջարկում է այն 99 տարով իր վարձակալությանը հանձնել՝ վարձակալագիր ուղարկելով: Այդ դեպքում նա այդ հողատարածքն իր այգուն էր միացնելու, մյուս պատերը վերանորոգելու էր և տարեկան վարձավճար պետք է հանձներ թավրիզի հայ հոգևորականներից ում, որ կաթողիկոսը կհանձնարարեր<sup>1043</sup>: Յամապատասխանաբար, Սիմեոն Երևանցի կաթողիկոսը հավանությամբ է տալիս այս առաջարկությանը, և գրել տալիս նրա վարձակալագիրը, որով 99 տարով Մուհամմադ Շաֆիին վարձով է տրվում թավրիզի Շամբե Ղազանում գտնվող Էջմիածնի վանական կալվածքը՝ պայմանով, որ վարձակալողն ամեն տարի 1 *խարվար* ցորենով վարձահատույց լինի<sup>1044</sup>: Կաթողիկոսական դիվանում այս վավերագրին հաջորդումյուս վավերագրի բովանդակությաննից հայտնի է դառնում, որ այս վարձակալության պայմանագիրը կազմում է Սիմեոն կաթողիկոսը և ուղարկում Մուհամմադ Շաֆիին այն հաստատելու<sup>1045</sup>: Այսպիսով, վարձակալագրի վրա դրված Մուհամմադ Շաֆիի կնքադրոշմով և *շարհ* պաշտոնյայի հաստատմամբ կնքվում է Էջմիածնի վերոհիշյալ կալվածքի վարձակալության պայմանագիրը:

Ինչպես հայտնի է դառնում Երևանի վերջին խան Յուսեյն խան սարդարի Էջմիածնի կաթողիկոսին գրած նամակներից, խանի պահանջով XIX դարի սկզբին նրա վարձակալությանն է հանձնվում Եղվարդում գտնվող Էջմիածնի *վակֆային* կալվածքը, որը շենացնելու նպատակով մի քանի տարի է, ինչ խանը մեծ ծախսեր էր կատարել<sup>1046</sup>:

XIX դարի սկզբի երկու պարսկերեն վավերագրերի բովանդակությաննից իմանում ենք, որ կալվածքները վարձակալության էին տրվում նաև պարտքերի դիմաց<sup>1047</sup>:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի վարձակալագրերի հազվագյուտ նմուշների հիմնական մասը վերաբերում է ցանքատարածությունների, այգիների վարձակալությանը, կանան մեկը, որով 1733 թ. վարձակալության է

<sup>1043</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 457:

<sup>1044</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 458:

<sup>1045</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 459:

<sup>1046</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 664, թղթ. 1ը, վավ. 1730:

<sup>1047</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 996, 997:

հանձնվում Օրդոնբադում գտնվող մի քարվանսարա և չիթ պատրաստողների արհեստանոց<sup>1048</sup>:

Այս վարձակալագրերը գրված են առանց նախաբանի, նրանցում հիմնականում նշված է վարձակալության տվողի ու վարձակալողի անունները, վարձակալության տրվող գույքը, ժամկետը և վարձի չափով և թե ինչպես պետք է վճարվեր:

1804 թ. կնքված գործարքի բովանդակության քննությունը ցույց է տալիս, որ սովորաբար նախքան նրա կնքումը գնահատվում էր կալվածքը և արժեքին ու վարձակալության տրվելու ժամկետին համապատասխան որոշվում վարձակալման գինը<sup>1049</sup>:

Վարձակալման պայմանագրում հնարավոր էր նաև վարձակալման գումարի մի մասի հատկացում վարձակալվող գույքի վիճակի բարելավմանը, ինչպես օրինակ, 1766 թ. կնքված մի պայմանագրում, որտեղ վարձավճարի մի մասը զեղչվում է՝ այգու բարեկարգման համար<sup>1050</sup>:

**Մոսլեզե-նամե (معاوضه نامه) - Փոխանակման համաձայնագիր:**

Մատենադարանի արխիվում պահվող մի քանի փոխանակման համաձայնագրերը հիմնականում գրվել են XVIII-XIX դարերում հետևյալ պարզ սխեմայով՝ փոխանակողներ (անունները և պաշտոնները), փոխանակվող գույքը՝ յուրաքանչյուրինը իր անվան տակ և փաստաթղթի վավերացումը շարի'աթական ոճին համապատասխան ձևակերպումներով:

Այս շարքի հետաքրքրական վավերագրերից է 1182թ. զի հաջջե ամսի 13-ին (1769 թ. ապրիլի 20) գրված փոխանակման փաստաթուղթը, որով Երևանի Յուսեյն Ալիխանը փոխանակում է Քյոնլթափագյուղի 6 *դանգ մուլլքը*, Ֆռանկանոց գյուղի 3 *դանգի* հետ: Գործարքը հաստատված է 26 անձանց՝ *դագիի, շար'ի* սպասավորների ու վկաների կնիքներով<sup>1051</sup>: Այս կարգի փաստաթղթերի տվյալները ցույց են տալիս, որ փոխանակվող գույքերը կարող էին լինել տարբեր տեսակի, ինչպես օրինակ հիջրայի 1152թ. մուհարրամ ամսին (1739 թ.) գրված փաստաթղթում, որով Վանանդի Մուհամմադ Նադիի դուստր

<sup>1048</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1164:  
<sup>1049</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1477:  
<sup>1050</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1365:  
<sup>1051</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1375:



Չէյնաքը փոխանակում է իր ժառանգական *մոլլը* հանդիսացող Վանանդում գտնվող 800 ման ցանքատարածություները Խոջա Ավանեսի Վանանդ գյուղի Դերազ թաղամասում գտնվող մեկ ձեռք տանու այգու հետ<sup>1052</sup>: Յնարավոր էր նաև համաձայնության գալ հավելավճարով փոխանակման շուրջ<sup>1053</sup>:

**Վահաթնամե** (وصيت نامه) - **Կտակ**: Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ կան նաև քիչ քանակի կտակագրեր: Այս փաստաթղթերը հիմնականում գրված են կարճ նախաբանից հետո կամ առանց նախաբանի: Նշվում է նախ կտակ անողի և ժառանգողի անունները, ապա կտակվող գույքը, ապա լուսանցքում հաստատվում էր վկաների կնիքներով: Կտակը սովորաբար կազմվում էր, երբ այն նախատեսում էր որևէ մեկի ժառանգելը, որին գործող ժառանգության օրենքներով այն կարող էր չհասնել: Ինչպես օրինակ, ավելի հեռու ազգականի որդեգրման դեպքում: Նման մի փաստաթուղթ *շար'ի* դատարանում կազմվել է 1761թ., որում նշվում է, որ Կոստանի դուստր Ջավահիրը, որը Քանաքեռցի Ավետիսի կինն էր, ուներ երկու որդիներ՝ Սիմեոն և Խաչատուր անուններով, որոնք նրա ամուսնու մահից հետո մահանում են, մնում է մեկ հիվանդ դուստր և Ջավահիրը իր եղբորորդի Մարգարին որդեգրում է և իր ողջ ունեցվածքը նրան կտակում<sup>1054</sup>: Այս կտակը հաստատված է 15 կնիքներով:

Կտակ կարող էր կազմվել նաև հարստությանը *ջարիդ օլ-իսլամների* ոտնձգության ներքին պաշտպանելու նպատակով: Այս նպատակով գրված կտակում ձևակերպվում էր նաև նվիրատվության (սուլի կամ սուլիսամե), որն այն անձեռնմխելի էր դարձնում նոր մահմեդականացած ազգականների ոտնձգության ներքին համար<sup>1055</sup>: Նման կտակ կազմվել է Նոր ջուղայեցի Յովհաննես Թուրունջիի կողմից 1669 թ., որում նշվում է, որ վերջինիս ողջ հարստությանը, որը մանրամասն թվարկվում է, ներառյալ նրա կալվածքներն ու գործատները, նա կտակում է իր կնոջը՝ Դադեամին և այդ առթիվ նաև

<sup>1052</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1234:

<sup>1053</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 1003:

<sup>1054</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 440:

<sup>1055</sup> Տե՛ս ատենախոսության էջ 144:

200 դրամ գումարով *սուլի* է կնքում ու արաբերեն *սիդե* է կարդացվում՝ ամրագրելով վերջինիս ժառանգության իրավունքը<sup>1056</sup>:

**Մահգար (محرر) – Համախոսական (կամ համաձայնության գիր):**

Մահգար էին կոչվում որևէ իրողությանը ն հաստատելու համար կազմված ընդհանրական համախոսական վկայագրերը: Շահական հրովարտակներում հաճախ է նշվում այս փաստաթղթերի հիման վրա նրանց հրապարակված լինելու մասին<sup>1057</sup>:

Այս փաստաթղթերը գրվում էին շատ պարզ սխեմայով: Առանց նախաբանի շարադրվում էր նրագրության նպատակը և բուն նյութը: Համախոսական վկայագրերի ստորին և աջ լուսանցքում մեծ տեղ էր հատկացվում վկաների կողմից արված նշումներին նրանց վկա լինելու մասին՝ բաղկացած վկայի անուն, հայրանունից, պաշտոնից ու տիտղոսից, նրա բնակության վայրը և սովորաբար հաստատված էին կնիքներով կամ մատնահետքերով: Համախոսական-վկայագրի վերին հատվածներում սովորաբար դրվում էին շար'ի անդամ(ներ)ի ու տեղի մահմեդական պաշտոնյաների ու կառավարիչների հաստատումը՝ նրանց կնիքներով: Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ զգալի քանակ են կազմում այս կարգի փաստաթղթերը, որոնք կազմվել են Աղվանից կաթողիկոսների ու որոշ մելիքների իրավունքների հաստատմանը տրված ընդհանուր համաձայնությանը հավաստելու առիթով: Նման փաստաթղթերի պատմական բարձր արժեքը պայմանավորված է նրանցում հայկական բնակավայրերի օտար անվանումների, նրանց էթնիկ կազմի և աշխարհիկ ու հոգևոր վերնախավի անդամների անունների մասին փաստերի գրանցմամբ:

Այս կարգի փաստաթղթերից ուշադրության են արժանի 1652թ. գրված նման մի մահգարը, որով հաստատվում է Ղարանլուղ գյուղի պատկանելությանը Գեղարքունիքի Մելիք Շահնազարյանների տոհմից Մելիք Ասաբովին<sup>1058</sup>, 1691 թ. Քաշաթաղի մի շարք հայաբնակ գյուղերի հայության անունից գրված մահգար-համախոսականը, որով նրանց լիազոր ներկայացուցիչ է ընտրվում Մելիք Հախնազարի որդին՝ Եղիան, պարսից արքունիքին իրենց խնդիրները

<sup>1056</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 25:

<sup>1057</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 11, 14, 27, 57, 65:

<sup>1058</sup> Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 125:

Ներկայացնելու նրանց շահերը պաշտպանելու համար<sup>1059</sup>, «Խաչենի Ղազանչի, Չորման, Ներքին Քոլատակ, Բազարքենդ, Բալլուղայա, Դոշանլու, Խնձիրստան, Տամկալե, Վանք, Շալվա» և մի քանի այլ գյուղերի տանուտերերի ու ավագների անուկից 1734 թ. գրված համախոսական վկայագիրը ավագերեց Դավթին իրենց առաջնորդ ու մելիք նշանակելու մասին<sup>1060</sup>:

Արցախի, Գանձակի, Շաքիի ու Շիրվանի բազմաթիվ հայկական բնակավայրերի անուններն են նշվում Աղվանից կաթողիկոսներ Եսայու, Յովհաննեսի ու Սարգսի<sup>1061</sup> կաթողիկոսական իրավունքների հաստատման նպատակով կազմված համախոսականներում:

Խնձիրստանի Միրզախանի, Խաչենի վեքիլ Ալլահվերդիի, Խաչենի մելիք Գրիգորի, զաքիթ Մուրթուզա Ղուլի Բեկի, Ջրաբերդի Մելիք Յաթամի, Վարանդայի Մելիք Շահնազարի, և այլոց կողմից գրված համախոսական գրույթամբ են հաստատվում նաև Գանձասարի վակֆային կալվածքները<sup>1062</sup>:

**Թամառք (تمسک) - Պարտամուրհակ:** Մատենադարանի XVIII – XIX դարերի պարսկերեն վավերագրերի մեջ կան զգալի թվով պարտամուրհակներ: Պարտամուրհակները ևս գրվում էին որոշակի կաղապարով՝ նախ նշվում էր գումարը, ապա նրակեսը (շփոթմունքից խուսափելու համար), պարտք վերցնողը և թե ումից է վերցնում և որքան ժամանակով: Որոշ պարտամուրհակներում գումարից հետո նախ նշվում է, թե ումից է պարտք արվել, հետո պարտք անողի անունը, ապա ժամկետը: Երբ գումարը մեծ էր, փոխարենը գրավ էր հանձնվում որևէ մի գույք, ինչպես օրինակ 1644 թ. գրված մի մուրհակում, որի համաձայն Թահմասպ Ղուլի Բեկ Սաճաղլուի որդիներ Մեջնուն Բեկն ու Սեֆի Ղուլի Բեկը 1 տարով Փիլիպոս կաթողիկոսից պարտք են վերցնում Թավրիզի 6 թուման գումար և որպես գրավ նրան հանձնում Օշականի իրենց պատկանող մեկ դանգ մուլլքը<sup>1063</sup>:

<sup>1059</sup> Այդ փաստաթուղթը տե՛ս հրատարակված Ք. Կոստիկյան, Քաշաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Երևան, 2001, էջ 168-175:

<sup>1060</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 177, նրա պատճեն տե՛ս վավ. 376: Տե՛ս այս վավերագիրը հրատարակված Ք. Կոստիկյան, Ղարաթաղի հայ մելիքները Նադիր շահի իշխանության տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVI, Երևան, 2007, էջ 261-262:

<sup>1061</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 208ա,բ, 215, 241ա:

<sup>1062</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 204:

<sup>1063</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 66:

Պարտամուրհակները սովորաբար հաստատված են *շարհ* առյանի մեկ պաշտոնյայի կնիքով: XIX դարի պարտամուրհակներում հաճախ առկա է նաև պարտք վերցնողի ու մեկից ավելի վկաների կնիքներն ու նշումները: Դարասկզբի ռուս-իրանական հակամարտության շրջանում Էջմիածնի կաթողիկոսարանը ծանր պարտքերի մեջ է ընկնում, որը պատերազմի հետևանքով ֆինանսական դժվարությանն են կրող Երևանի խանի ու ղաջարական իշխանությանն են դրամաշորթ քաղաքականության հետևանքն էր<sup>1064</sup>:

Կաթողիկոսական դիվանի թղթապանակ 1գ, վավերագիր 982-ում առանձնացած են Եփրեմ կաթողիկոսի օրոք Էջմիածնի պարտքերին վերաբերող պարտամուրհակների ու մի քանի նամակների ժողովածու՝ բաղկացած 145 փաստաթղթերից, որոնցից 1-73-ը և 137-145-ը բնօրինակներ են, կամ նոտարի կնիքով հաստատված կամ առանց հաստատման ավելի ուշ շրջանի պատճեններն են: Փաստաթղթերի մեծ մասը վավերացված է մեծ թվով (5-10) վկաների կնիքներով, հիմնական մասի վրա Եփրեմ կաթողիկոսի կարմիր կնիքն է:

**Ղաբզ (قبض) - Ստացական:** Ստացականները տրվում էին ամենատարբեր տիպի վճարումները հավաստելու առիթով: Դա կարող էր լինել առքուվաճառքի գործարքով նախատեսվող գումարի կամ պարտքի մարում<sup>1065</sup>, հարկերի վճարում, որպես ռոճիկ (մալաջիբ, թանխահ) տրվող գումար: Ստացականում բնականաբար նշվում է, թե ում կողմից էր այն տրված, որ տարվա և ինչի համար, այնուհետև նշվում էր, թե ումից էր այն ստացվել և գումարի չափը՝ հիմնականում *սիաղ* թվային համակարգով, կամ *և՛ սիաղով* և՛ սովորական արաբական թվերով: Ստացականում նշված վճարը կարող էր կատարված լինել նաև բնամթերքով՝ ինչպես օրինակ մետաքսով<sup>1066</sup>: Փաստաթղթի ստորին հատվածում նշվում էր ստացականի տրման ամիսը և թվականը, որից հետո փաստաթուղթը հաստատվում էր *շարհ* պաշտոնյայի կնիքով:

<sup>1064</sup> Այս մասին մանրամասն տես՝ առենախոսության էջ 50, 170:

<sup>1065</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 461, 509, թղթ. 1Է, վավ. 1106, 1132, 1150,

<sup>1066</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 514:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի թղթապանակ 1գ, վավերագիր 983-ում հավաքված է 95 բնօրինակ ստացականներից բաղկացած մի ժողովածու, որի մեջ կան փաստաթղթեր, որոնք բովանդակում են տվյալներ էջմիածնի կողմից կատարված տարբեր (հարկերի, ռոճիկների) վճարումների մասին:

### **Պարսկերեն վավերագրերի պատճենները**

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մի մասը պատճեններ են՝ գրված բնօրինակներին մոտ ժամանակներում նոտարների կողմից ու հաստատված նրանց կնիքներով կամ հետագայում, հիմնականում XIX դարում, տարբեր գրագիրների կողմից, որոնք կամ նշել են իրենց անունները կամ էլ չեն թողել վավերագրերի վրա իրենց մասին ոչ մի նշում: Բնականաբար, բնօրինակներին առավել մոտ ու ճշգրիտ են նոտարական պատճենները, որոնք կարելի է գտնել մյուս պատճեններից հետևյալ հատկանիշներով՝

Ա. Պատճենի համապատասխանությունը բնագրին հաստատված է երբեմն արաբերեն, երբեմն պարսկերեն արտահայտու թյուններով և կնիքով, ինչպես օրինակ, «Պատճենը համապատասխանում է բնօրինակին – سواد مطابع و موافق اصل است»<sup>1067</sup>; «Համապատասխանում է օգտակար, բարձրագույն, սրբազնագույն, արքայական բնօրինակին - قوبل لاصل الاشراف», «الاقدمس الارفع الانفع», «համեմատվեց – مقابلته شد»<sup>1068</sup>, «Համապատասխանում է բարձրագույն, սրբազնագույն, արքայական բնօրինակին, գրեց, [կնիք]. Աբու Թալեբ... - ابو طالب -»<sup>1069</sup>, «Համեմատվեց բարձրագույն օրինակելի իսկականի հետ- قوبل ذامع اصل الارفع-»<sup>1070</sup>, «الاعلى المطاع»<sup>1070</sup>,

Բ. Գրված է լինում բնօրինակին մոտ վայել չագրություն ամբ,

Գ. Փորձ չի արվում արտանկարել կնիքները և ընդօրինակել նրանց միջի գրությունը, այլ նշվում է կամ պարզապես «կնիքի տեղ», կամ հաճախ նշվում է նաև պաշտոնյայի պաշտոնը «Նորին գերազանցությունն *է՛թեմադ-ու դ-դովլ էի* կնիքի տեղը», «Նորին Գերազանցությունն հավատի առաջնորդ *սադր-ե մամալ իքի* կնիքը- مهر

<sup>1067</sup> ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 2:

<sup>1068</sup> ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 17:

<sup>1069</sup> ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 20:

<sup>1070</sup> ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 22:

«مباشر كيش صدر الممالك» «Նորին արքայ ական սրբազնության պատճենի կնիքի տեղը - موضع مهر مسودة نواب اشرف اقدس» կամ «Արքայ ական սրբազան բարձրագույն օրհնյալ կնիքի տեղը-موضع مهر مبارک نواب اشرف ارفع»<sup>1071</sup>: Այս առումով նոտարական պատճենները փաստորեն հավելյալ տեղեկություններ են բովանդակում փաստաթուղթը հաստատած, նրա բովանդակությանը ծանոթացած կամ գրանցած պաշտոնյայի մասին՝ նշելով նրա պաշտոնը, մինչդեռ բնօրինակներում երբեմն նշվում է միայն պաշտոնյայի կնիքը: Մասնավորապես, նոտարական պատճեններից մեկի շնորհիվ իմանում ենք, որ տվյալ *միսալը* հաստատված է եղել *մուսթովֆի ալ-մամալիքի, դիվանբեկիի, սարդ-եխասսեի* ու *դաֆթարխանեի նազիրի* կնիքներով<sup>1072</sup>:

Նույն սկզբունքներով են գրված նոտարական պատճենները նաև հետագա շրջանի Աֆշար տիրակալների օրոք: XVIII-XIX դարերի որոշ պատճենների հակառակ կողմում փաստաթղթի վավերականությունը հաստատող այլ կնիքներից բացի առկա է նաև հայոց կաթողիկոսներից որևէ մեկի կարմիր կնիքը, որը հաստատում է պատճենի համապատասխանությունը բնօրինակին. «Սավադը համապատասխանում է բնագրին, [Յայերեն] [Կնիք]. Ղազար կաթողիկոս, ՌՃՁԶ»<sup>1073</sup>: Ի դեպ այս կնիքն առկա է ոչ միայն պատճենների, այլև Ղազար կաթողիկոսի ջանքերով ձեռքբերված մի քանի այլ հրովարտակների բնօրինակների հակառակ կողմում, այնպես որ կաթողիկոսը, փաստորեն, այդպես նշում էր իր ջանքերով հրապարակված հրովարտակներն ու նրան պատճենները<sup>1074</sup>: Այս պատճենները կամ *սավադները* գրեթե համազոր էին բնօրինակներին և լիարժեք կերպով կարող էին օգտագործվել նրանց սեփականատերերի կողմից: Այս առնչությամբ եղիա Կարնեցին նշում է. «Եւ Երաղամն, որ նոր հանեցաք, ամենն սաւատարի և պարօն Տօմինիկոսի ձեռօվն դրկեցի ձեր հրամանուց ղուլլուղն, որ այդ գրերօվն ձեզ փոքր ինչ հանգստութիւն լինի»<sup>1075</sup>:

Փաստաթղթերի բնօրինակներին հարազատ ու ճշգրիտ են Էջմիածնի և այլ պարսկալեզու հմուտ գրագիրների ընդօրինակած

<sup>1071</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ 9, վավ. 2, 17, 20, 21:

<sup>1072</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ 9, վավ. 22:

<sup>1073</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ 7, վավ. 11, 14, 17:

<sup>1074</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ 7, վավ. 19, 21, 23:

<sup>1075</sup> Եղիա Կարնեցի, նշվ. աշխ., էջ 211:

պատճենները, որոնք հաճախ կրում են ընդօրինակողի ստորագրությունն ու կնիքը: Մատենադարանի XVIII-XIX դարերի պարսկերեն վավերագրերի մեջ կարելի է գտնել տասնյակ պատճեններ ընդօրինակված Էջմիածնի պարսկալեզու գրագիրներ Միրզա Ահմադի ու նրա որդի Միրզա Քյալբալիի կողմից, որոնց մասին վերև արդեն մանրամասն խոսել ենք ատենախոսության առաջին գլխի համապատասխան բաժնում: Հարկ է նշել, որ հիշյալ անձիք էին հաճախ ընդօրինակում Մայր Աթոռի համար առավել կարևոր փաստաթղթերը և այս շարքում ուշագրավ է Քերիմ խան Վեքիլի հրովարտակի պատճենը, որի վերին անկյունում հիշյալ գրագիրը պարսկերեն գրություն է թողել, որի թարգմանությունն է. «Դրախտաբնակ Քերիմ Վեքիլի վճռական ֆերմանի պատճենն է, որն ընդօրինակել է Ուչքիլիսայի երկնախայլ օջախի կաթողիկոսի արդար սարքար գրագիր պատվարժան Միրզա Քյալբալին, [կնիք]. Աստճո ծառաՔալբալի»: Իսկ վավերագրի հավաստիությունը հաստատում են Անդրեաս, Ալեքսան, Սահակ արքեպիսկոպոսները և Գրիգոր, Սերովբե, Ստեփան վարդապետներն իրենց ստորագրություններով ու կնիքներով<sup>1076</sup>:

Բնօրինակներից բավականին հեռու, սխալ ներով ու անփուլյ ձեռագրով են ընդօրինակված XIX դարի երկրորդ կեսում ռուսական տիրապետության շրջանում գրված որոշ պատճեններ, որոնց լիարժեք հավաստիությունը միայն վերապահումով կարելի է վստահել: Այս պատճենների նյութի վրա հենվելուց առաջ պետք է ստուգել այն գուգահեռ այլ աղբյուրներով, ճշգրտել տեղանուններն ու մյուս տվյալները: Այդ վավերագրերից շատերի հակառակ կողմում առկա են ռուսերեն հակիրճ անոտացիաներ<sup>1077</sup>:

Բնօրինակներից որոշ չափով հեռացել են Էջմիածնի կալվածքներին ու մյուս իրավական հարցերին վերաբերող փաստաթղթերի պատճենները, որոնք ընդօրինակված են 19 թղթապանակի մեջ մեկ մատյանում որպես վավերագրեր 869- 981: Այս մատյանը գրվել է մեզ անհայտ անձնավորության կողմից թերևս XX դարի սկզբին: Գրագիրը, որ բավարար չափով տիրապետել է պարսկերենին ու պարսկերեն գրագրության ու վայելչագրության

<sup>1076</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 49:

<sup>1077</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 87, պրակ Դ, վավ. 33:

կանոններին, ավելի հմուտ կերպով ընդօրինակել է նաև բնօրինակների հակառակ կողմում առկա հայերեն գրությունները: Պետք է նշել, որ այս պատճեններում տեղ են գտել որոշ սխալներ, որոնք հետևանք են վավերագրերի ոչ ճիշտ ընթերցման: Մասնավորապես սխալ է ընդօրինակված Նադիրու Տաթալի շահերի, Ազատ խանի թողրաները<sup>1078</sup>: Վավերագրերի պատճենները մատյանում սովորաբար վերնագրված են՝ նշելով, թե ինչ կարգի փաստաթուղթ է և ինչի մասին: Սակայն երբեմն ընդօրինակողը չի կարողացել ճիշտ նշել հրովարտակը հրապարակած շահի անունը, ինչպես օրինակ Նադիր շահի հրովարտակներից մեկի դեպքում, որում սխալ է նաև շահի թողրան<sup>1079</sup>: Սխալ է նշված նաև Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ի հրովարտակի վերնագիրը՝ վերագրվելով այն Ադիլ շահին<sup>1080</sup>:

Պահպանվել են այս մատյանում ընդգրկված փաստաթղթերից շատերի բնօրինակները նույնպես, ինչպես օրինակ վավերագիր 900-ի բնօրինակը առկա է նույն ֆոնդի թղթ. 1բ-ում որպես վավ. 186, իսկ վավ. 902-ը թղթ. 1բ-ում գրանցված է որպես վավ. 191, վավերագիրը 912-ը՝ նույն ֆոնդի թղթ. 1ա-ում որպես վավերագիր 19 և այլն: Այնուամենայնիվ պատճեններից շատերի բնօրինակները չեն պահպանվել և այդ պատճենները, որոնք բավականին գրագետ ընդօրինակություններ են, միակ աղբյուրն են այդ փաստաթղթերի մասին տեղեկություններ ունենալու համար:

Ինչպես տեսնում ենք, Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի հարուստ հավաքածուի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել տվյալ ժամանակաշրջանի պարսկերեն հրովարտակների գրության կառուցվածքային, լեզվա-ոճական, վայելչագրական և վավերացման առանձնահատկությունները և նոր դիտարկումներով հարստացնել պարսկերեն վավերագրագիտության ձեռքբերումներն ու միջազգային փորձը:

<sup>1078</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 886, 887, 891:

<sup>1079</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 976:

<sup>1080</sup> Համեմատի՛ր Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 875, 876 և 3. Փափագյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 1:



### 3.2 Հայ ոց կաթողիկոսների պատվանուհներն ու տիտղոսաշարը Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերում

Մատենադարանի արխիվային հավաքածուի նմուշները հիմնականում կապված լինելով էջմիածնի կաթողիկոսների գործունեության հետ հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել դիտարկվող ժամանակահատվածում նրանց անունների հետ օգտագործվող պատվանուհների ու տիտղոսաշարի մասին:

XVII-XIX դարերի պարսկալեզու աղբյուրներում, այդ թվում նաև վավերագրերում թե՛ Աղվանից և թե՛ էջմիածնի կաթողիկոսները, ինչպես նաև խոշոր վանական հաստատությունների վանահայրերն ու եպիսկոպոսները, հիմնականում նշվում են «խալիֆա» տիտղոսով:

«խալիֆա» (خليفة) եզրույթը ծագում է արաբ. «փոխանորդ, տեղապահ» բառից և առաջ է եկել Մուհամմադ մարգարեի մահից հետո՝ անվանելով համար նրա հաջորդների իշխանության իրավական կարգավիճակը, որպես նախ «Աստծո առաքյալի փոխանորդի», ապա նաև «Աստծո փոխանորդի»: Դեռևս XIII դարից «խալիֆա» անվանումը օգտագործվում էր Հռոմկլայում նստող Ամենայն Հայ ոց կաթողիկոսի վերաբերությամբ արաբական աղբյուրներում՝ նկատի առնելով նրա «Աստծո փոխանորդ» կամ «Քրիստոսի փոխանորդ» լինելու հանգամանքը<sup>1081</sup>: Պարսկերեն աղբյուրներում ևս «խալիֆա» անվանումը հանդես է գալիս սկսած XIII դարից՝ առաջին անգամ նշվելով Բուրհան ալ-Դին Անավիի «Անիսալ-Ղուլուբ» երկում<sup>1082</sup>:

Պարսկերեն վավերագրերում արդեն XV դարից էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսներին նշում են «խալիֆա» անվամբ, թեև զուգահեռաբար օգտագործվում էին նաև «մեհրասիա» (քրիստոնյա բարձրաստիճանի ոգևորական - محراسيا)<sup>1083</sup> կամ աղավաղված «քաթյաթոս -

<sup>1081</sup> Գ. Գ. Դանիելյան, Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, Երևան, 2016, էջ 218:

<sup>1082</sup> Գ. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 220, հղում՝ A. Peacock, An interfaith polemic of Medieval Anatolia, Islam and Christianity in Medieval Anatolia, ed. By A.C.S. Peacock, Bruno De Nicola and Sara Nur Yildiz, Ashgate, 2015, pp. 233-261.

<sup>1083</sup> Հ. Փախալյան, Իրավարտական, պրակ Ա, վավ. 13, էջ 269:

«کتیاکوس» տարբերակները<sup>1084</sup>: Այսպես, «խալիֆա» տիտղոսն օգտագործվում է դեռևս 1431 թ. Էջմիածնի կաթողիկոս Գրիգոր Մակվեցու Ամիր Ռուստամ Օրբելյանից գնած ու վակֆ արված գյուղերի կալվածագրում<sup>1085</sup>, ինչպես նաև Աղվանից կաթողիկոս Շմավոնի իրավունքները հաստատող Ակ-Կոյունլու Յաղուբ շահի 1487 թ. հրովարտակում<sup>1086</sup>:

Իրանում Սեֆյան ժամանակաշրջանում «խալիֆա» եզրույթն առավել ասես օգտագործվում էր սուֆիական միաբանության մոլրշիդի տեղակալի իմաստով<sup>1087</sup>: Նույն շրջանում կար նաև խալիֆաթ ալ-խուլլաֆայի պաշտոնը, որը զբաղվում էր սուֆիական գործերով և միապետի անունից իր մարդկանց էր նշանակում նահանգներում: Սեֆյան շահերը խալիֆաթ ալ-խուլլաֆայի և սուֆիների միջոցով վերահսկում էին այն ուժերը, որոնք կազմում էին նրանց հենարանը<sup>1088</sup>:

Այնուամենայնիվ, Սեֆյան իրանում XVI - XIX դարերում «խալիֆա» էին անվանում նաև հայոց կաթողիկոսներին՝ համարելով նրանց քրիստոնյաների մարգարեի՝ Քրիստոսի հաջորդը: Այդ տիտղոսով մեծարվում էին նաև թեմական առաջնորդները և նույնիսկ վանքերի վանահայրերը:

Սեֆյան հրովարտակներում «խալիֆա» տիտղոսի հետմիաժամանակ հաճախ օգտագործվում էին հետևյալ բնորոշիչ պատվանունները. «քրիստոնյաներից լավագույն շեյխ ալ-մսիհի» կամ «քրիստոնյաների գլխավոր, առաջնորդ ամեմե ալ-մսիհի»<sup>1089</sup>:

Մատենադարանի վավերագրերի բնագրային հետազոտությունը ի հայտ է բերում որոշ օրինաչափություններ «խալիֆա» տիտղոսի հետմիաժամանակ օգտագործվող պատվանունների շարքում՝ կախված հրամանագրերը հրապարակող իրանական իշխանությունների քաղաքական դրությունից և հայության նկատմամբ նրանց վարած քաղաքականությունից: Այսպես, Սեֆյան պետության թուլացման

<sup>1084</sup> Տե՛ս Զ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 3, էջ 248, ընդ որում այս հրովարտակի ազդեցությամբ հետագայում ևս ուշ շրջանի մի քանի հրամանագրերում կաթողիկոս անվանումն է նշվում (Զ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 5, էջ 472, նաև Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 61, էջ 625):

<sup>1085</sup> Զ. Փափագյան, կալվածագրեր, պրակ Ա, վավ. 5, էջ 428:

<sup>1086</sup> Զ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 6, էջ 254:

<sup>1087</sup> دستور الملوك ميرزا رفيعا، به كوشش و تصحيح محمد اسماعيل مارچينكوفسكى، ترجمه على كردابادي، تهران، 1385، ص 562

<sup>1088</sup> Tadhkirat al-mulūk, p. 125-126.

<sup>1089</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 1, 8, 9, 44, 56, 57, 67, 83:

շրջանում, արդեն Ալեքսանդր կաթողիկոսի իրավունքները հաստատող շահ Սուլթան Յուսեյնի 1706 թ. հրովարտակում «խալիֆա» տիտղոսի կողքին ընթերցում ենք պատվանունների մի երկար շարք. «Քրիստոնյա մեծամեծների ընտրյալ առաջնորդ Ջուղայի խալիֆա, Ալեքսանդր խալիֆա - زبدة الامجاد والاعيان المسيحية قدوة العيسويه خليفه اغكسندر خليفه جولاہ»<sup>1090</sup>:

Պատվանունների նմանատիպ երկար մի շարք է նշված նաև նույն շահից 1712 թ. Ալեքսանդր կաթողիկոսի ձեռք բերած հրովարտակներում. «Նմանների ու հավասարների մեջ լավագույն, քրիստոնյաների առաջնորդ Էջմիածնի Ալեքսանդր խալիֆա زبدة الاشباه»<sup>1091</sup>. «والاقران عمدةالمسيحية الكسندر خليفه اوچ كليسيا -

Պատվանունների երկար շարքով է մեծարվում Ամենայն Յայնոց կաթողիկոսը նաև աֆղանների կողմից նվաճված Իրանի կենտրոնական նահանգներից հեռացած և իրեն Սեֆյան շահ հռչակած Թահմասպ-ի հրովարտակներում՝ «քրիստոնյա մեծանուն ու փառաբանյալ անձանց մեջ լավագույն Աբրահամ խալիֆան - زبدة الامجاد العيسويه قدوة الافاخر المسيحية ابراهيم خليفه»<sup>1092</sup>. «اوچ كليسيا», կամ «Քրիստոնյա հոգևորականների մեջ լավագույն և Յիսուսի ծառաների առաջնորդ Ուլջիլիսայի Աբրահամ կաթողիկոս - زبدة الرهبانين المسيحية عمدة القسيسين العيسويه ابراهيم خليفه اوچ كليسيا»<sup>1093</sup>:

Նադիր շահի հրովարտակներում Ամենայն Յայնոց կաթողիկոսի կամ խալիֆայի պատվանունները սահմանափակվում են միմյանց համարժեք հետևյալ արտահայտություններով՝ «عمدة القسيسين», «قدوة السيسين», «رهبر الرهبانين», «اسوة الراهبين», որոնց բոլորի նշանակությունը նույնն է՝ «քրիստոնյա հոգևորականների առաջնորդ» և որոնք հրովարտակներում սովորաբար մեկական կամ երկուական օրինակներով հանդես են գալիս «խալիֆա» տիտղոսի հետ միաժամանակ<sup>1093</sup>:

Նադիր շահի մահից հետո, Աֆշարական հարստության ներկայացուցիչների և Իրանում իշխանության համար պայքարող և Երևանի խանությունը ժամանակավորապես իրենց տիրապետության տակ առած որոշ հավակնորդների կողմից, Ամենայն Յայնոց կաթողիկոսին տրված հրովարտակներում, նրա «խալիֆա» տիտղոսին

<sup>1090</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 69, էջ 654:

<sup>1091</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 74, 77, 78-82, 84:

<sup>1092</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 88, 90:

<sup>1093</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 5, 6, 9, 10, 14, 15, 23:

հաջորդող պատվանունների շարքը նորից սկսում է երկարել: Այսպես, Ազատ խան Աֆղանի հրամանագրերում նշվում են հետևյալ բնորոշումները. «քրիստոնյա մեծամեծներից լավագույն ու պատվավոր անձանց առաջնորդ - *زيدة الاعظم المسيحيه و قدوة الافاخم العيسويه*<sup>1094</sup>: Պատվավոր բնորոշումների այս շարքն էլ ավելի երկար է Քերիմ խան Վեքիլից Սիմեոն Երևանցու ձեռք բերած հրովարտակներում, որը թեև իրական ազդեցություն ունի իշխանությունն Յարավային Կովկասի նկատմամբ չուներ, սակայն շրջահայաց Ամենայն Յայոց կաթողիկոսը ջանում էր շահել նրա բարյացկամ վերաբերմունքը: Քերիմ խանի երկու հրովարտակներում Սիմեոն կաթողիկոսին մեծարող բնորոշումների շարքը բավական երկար է. «քրիստոնյա մեծամեծների առաջնորդ ու նրանցից լավագույն, քահանայապետ *بقدوة الاماجد المسيحيه و زبدة الاكابر العيسويه عمدة القسيسين و* - Ուչքիլիսայի Սիմեոն խալիֆա - *«الرهبانين خليفه سيمون عاليشان معلى - عايشان معلى»* և *«مكان اخلاص و عقيدت نشان عقيدت نشان عمدة الاعظم العيسويه خليفه سيمون خليفه»*<sup>1095</sup>:

Յայոց «խալիֆային» մեծարող այս պատվանունների շարքն էլ ավելի երկարում է Ղաջարական ժամանակաշրջանում, թեև այդ թագավորական տան հիմնադիր Աղա Մուհամմադ շահի հրովարտակներում դրանք առանձնապես երկար չեն: Վերջինիս կողմից Ղուկաս կաթողիկոսին տրված հրովարտակներում «խալիֆա» տիտղոսին նախորդում են «քրիստոնյա մեծամեծների գլխավոր - *عمدة زبدة الاماثل - زبدة الاعظام المسيحيه*» և «քրիստոնյա արժանավոր անձանցից լավագույն - *المسيحيه*» բնորոշումները: Այնուամենայնիվ հենց Աղա Մուհամմադ խանի առաջին հրովարտակից սկսած Ամենայն Յայոց կաթողիկոսի պատվանունների շարքում սկսում է գործածվել մի նոր եզրույթ, որը դրանից առաջ որևէ այլ տեղ կաթողիկոսներին տրված պատվանունների մեջ մեզ չի հանդիպել, դա «խալիֆաների խալիֆա - *خليفه الخلفاء*» արտահայտությունն է: Առաջին անգամ այդ եզրույթն օգտագործվում է Աղա Մուհամմադ խանի 1795 թ. հրովարտակում<sup>1096</sup>, որից հետո հաճախ է օգտագործվում Ֆաթիալի շահի ու Աբբաս

<sup>1094</sup> Տե՛ս ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 31, 32, 34, 37:

<sup>1095</sup> Տե՛ս ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 49, 51:

<sup>1096</sup> Տե՛ս ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 53:

Միրզայի հրովարտականերում Ամենայն Յայնց կաթողիկոսին մեծարող բնորոշումների մեջ:

Տաթևալի շահի վաղ շրջանի (1798-1803 թթ.) հրովարտականերում հիմնականում պահպանվում է Աղա Մուհամմադ խանի հրովարտականերին բնորոշ քիչ ավելի զուսպ ոճը, որոնցում կաթողիկոսին մեծարող բառերի շարքը տեղավորվում էր մեկ տողի վրա՝ «քրիստոնյա մեծամեծների վսեմաշուք ընտրյալ խալիֆաների խալիֆա Ուլջիլիսայի Ղուկաս խալիֆա *زيدة الاعظم العيسويه و نخبة الافاخم المسيحيه خليفه* <sup>1097</sup>, կամ «քրիստոնյա մեծամեծների վսեմաշուք ընտրյալ, մեծահոգի խալիֆաների խալիֆա Ուլջիլիսայի Դավուդ (Դավիթ) խալիֆա - *عمدة الاعظم العيسويه و زبدة الافاخم المسيحيه خليفه الخلفاء الكرام داوود مهرايساي خليفه اوج - كليسيا* <sup>1098</sup>: Ընդ որում այս պատվանունները նշվում էին ոչ միայն կոնկրետ անձի վերաբերությամբ, այլև անգամ առանց որևէ անվան կաթողիկոսի տեղապահին ուղղված հրամանագրում <sup>1099</sup>:

Ամենայն Յայնց կաթողիկոսի պատվանունների շարքը կրկնակի ավելանում է 1804 թվականից հետո, մի տարեթիվ, որ նշանավորում է ռուս-պարսկական առաջին պատերազմի սկիզբը: Վերը նշված բնորոշումներին սկսում է նախորդել նոր պատվանունների մեկ ամբողջ տող, որի հիմնական բաղադրիչները մատնանշում էին կաթողիկոսի բարձր դիրքը. «բարձրաստիճան ու վսեմաշուք, *عاليجاه رفيع جايگاه مجدت و مناعت انتباه عزت و اقبال پناه - كليسيا* <sup>1100</sup> կամ «բարձրաստիճան ու մեծաշուք, պատվարժան *عاليجاه رفيع جايگاه دولت و عزت دستگاه فخامت و مناعت اكتناه اخلاص و ارادت آگاه* <sup>1101</sup>»:

Բնորոշումների գրեթե նույնատիպ մի շարքով է սկսվում նաև իրանական բարձրաստիճան պաշտոնյաների նամակներն ուղղված Ամենայն Յայնց կաթողիկոսներին, ինչպես օրինակ Միրզա Բոզորգի *ղայեմմաղամիի* <sup>1102</sup> նամակը. «Բարձրաստիճան պատվելի, բարեբախտ, վսեմաշուք ու գերապատիվ տեր, մեծ խալիֆաների խալիֆա Դավուդ

<sup>1097</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 539:

<sup>1098</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 554, 571:

<sup>1099</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 548:

<sup>1100</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1478

<sup>1101</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 574:

<sup>1102</sup> Միրզա Իսան, որ հայտնի էր Միրզա Բոզորգը անվամբ և առաջին մարդն էր, որ վարելով Ատրպատականի *սադարաթի ղայեմմաղամիի* պաշտոնը, կրում էր *ղայեմմաղամի* տիտղոսը (عبد الرفيع حقيقت (رفيع)، وزيران ايرانی از بزرگ مهر تا امير كبير، تهران 1386، ص. 378)

(Դավիթ) - عالیجاه رفیع جایگاه عزت و سعادت همراه فخامت و مناعت همراه متانت و بسالت اکتناه عمدة الخلفاء العظام  
«خليفة داود»<sup>1103</sup>:

Յայ ոց կաթողիկոսներին պատվանուհիների նման երկար շարքով մեծարելը թեև համահունչ է ղաջարական իշխանության ունեների հայության հանդեպ բռնած ընդհանուր, մեծամասամբ ձևական, սիրաշահող տոնին, այնուամենայնիվ չէր տարբերվում այդ ժամանակաշրջանում զարգացող պերճախոսության ու նրբագեղ համարվող, ածականներով ծանրաբեռնված լեզվական ոճին: Յարկ է նշել, որ ղաջարական այս շրջանի հրովարտակներում նման պատվանուհիների երկար շարք էր ուղեկցում նաև այլ պաշտոնյաներին, մասնավորապես երևանի խաներին, Ատրպատականի սարդար Փիր Ղուլի խան Ղաջարին, Բայազետի փաշային ուղղված խոսքերը<sup>1104</sup>:

Այսպիսով, Մատենադարանի պարսկերեն վավերագրերի առատ նյութը հնարավոր է դարձնում նրանց որպես պարսկալեզու գրագրության տարբեր տեսակների նմուշների լեզվա-ոճական ու կառուցվածքային առանձնահատկությունների զատորոշումն ու ուսումնասիրությունը պատմական զարգացման մեջ, որը մեկ անգամ ևս ապացուցում է այդ փաստաթղթերի կարևորությունը պարսկական վավերագրագիտության համար:

### **3.3 Յայ ոց վանքերի անվանումների ու տեղանունների պարսկերեն վավերագրերում օգտագործվող տարբերակները**

Արևելյան Յայաստանի բնակավայրերն ու շրջանները, ինչպես նաև նրանցում գտնվող հայ ոց վանքերն ու եկեղեցիները պարսկական աղբյուրներում, այդ թվում նաև պարսկերեն վավերագրերում հիմնականում նշվում են իրանականացված ու թյուրքացված օտար տարբերակներով, որոնք որոշ դժվարություններ են ստեղծում ուսումնասիրողների համար դրանք հայկական անվանումների հետ նույնացման հարցում,

<sup>1103</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 570:

<sup>1104</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 538, թղթ. 1ը, վավ. 1475, 1483 և այլն:

ինչ պես նաև առիթ են տալ իս դրանց հիման վրա բնակչության էթնիկ կազմի հետևյալ պահանջներին համար:

Հայկական բնակավայրերի օտարահունչ անունների մի մասը տրվել են XII դարից ի վեր նրանց հարևանությամբ հաստատվող թյուրքական ծագում ունեցող քոչվոր ցեղերի ու իշխող վերնախավի կողմից: Հարկ է հիշել, որ թյուրքական ցեղերը և նրանց ավագանին գերիշխող դիրք էին զբաղեցնում պատմական Հայաստանի շրջանները իրենց պետության մեջ ներառած Ակ Կոյունլուների և Կարա Կոյունլուների տիրապետության շրջանում: Սեֆյան պետության ժամանակաշրջանում նրանց փոխարինում են ղզլբաշ ցեղերի առաջնորդները, որոնք կառավարում էին ոչ միայն Հարավային Կովկասի այլ ողջ Իրանի նահանգների մեծ մասը<sup>1105</sup>: Բացի այդ Սեֆյան գահակալները շարունակաբար բնակեցնում էին իրենց երկրի սահմանային վարչական միավորների մեջ ընդգրկված Արևելյան Հայաստանի շրջանները թյուրքական ղզլբաշ ցեղերով, որոնք նրանց ռազմական հենարանն էին Օսմանյան կայսրության դեմ պայքարում: Այդ քաղաքականությունը բնորոշ էր ինչպես Սեֆյան վաղ շրջանի շահերին, այնպես էլ շահ Աբբաս Ա-ի իշխանության շրջանին<sup>1106</sup>: Սեֆյան պետության մեջ ընդգրկված Արևելյան Հայաստանի շրջանները կառավարող թյուրք ղզլբաշ ցեղերի ավագանուն ժառանգական տիրույթներ էին տրվում այդ տարածքներում, ինչպես օրինակ Ղարաբաղի շրջանը, որը կառավարում էին ղաջարական գիադօղլի ցեղից սերող բեկլարբեկերը և որտեղ ստեղծվել էին «իգիրմիդորտ» (24) և «օթուզիքի» (36) կոչված արհեստական ցեղային միությունները, Նախիջևանի շրջանը, որը ուսթաջլու ցեղի ճյուղ հանդիսացող քենգերլու ցեղի ժառանգական *օլքան* էր<sup>1107</sup>: Ուստի և պարսկերեն փաստաթղթերում նշվող հայկական տեղանունների ու հայոց վանքերի անվանումների փոփոխությունները հիմնականում կապված են այդ ցեղերի խոսակցական ու իրանական պետության պաշտոնական լեզուների՝ թուրքերենի ու պարսկերենի հնչյունական և տառային

<sup>1105</sup> The Cambridge History of Iran, vol. 6 (The Timurid and Safavid Periods), p. 358.

<sup>1106</sup> H. Maeda, Exploitation of the Frontier: The Caucasus Policy of Shah 'Abbas I, p. 477.

<sup>1107</sup> И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIXвв., сс. 132-136.

համակարգերի, նաև էգզամտածողության որոշ առանձնահատկությունների հետ:

### **Հայոց վանքերի անվանումները**

Հայկական վանքերն ու եկեղեցիները Մատենադարանի պարսկերեն վավերագրերում սովորաբար նշվում են այն բնակավայրերի անուններով, որոնցում դրանք գտնվում են. ինչպես օրինակ Ագուլիսի վանք, Դարաշամբի վանք, Շոռոթի, Բիստի<sup>1108</sup>, Մեյսարիի ու Մուղնու վանք: Եկեղեցիների անունները (Ս. Ստեփաննոս Նախավկա, Ս. Թովմա Առաքյալ, Ս. Աստվածածին, Ս. Թադեիս այլև) սովորաբար չեն նշվում: Դրանք նշվում են միայն այն դեպքում, երբ հրամանագիրը հրապարակվել է տվյալ եկեղեցու վերանորոգումը թույլատրելու համար, ինչպես օրինակ Արցախի Քոչիզ շրջանի Հիրիեր գյուղի Ս. Գրիգորիս և Երևանի Նահանգի Կարաի շրջանի Մուղնի գյուղի Ս. Գևորգ եկեղեցիների վերանորոգումը թույլատրող հրովարտակներում<sup>1109</sup>: Կամ էլ երբ մեկ վայրի անվան հետ էին կապվում մեկից ավելի վանքերի անուններ, ինչպես օրինակ Քասաղի ձորում գտնվող Օհանավանքն ու Սաղմոսավանքը<sup>1110</sup>:

Այս դեպքերում նշվող վանքերի անուններում եղած փոփոխությունները տեղի էին ունենում նույն կերպ, ինչպես որ տեղանուններում էին կատարվում, ուստի այդ դեպքերը կդիտարկվեն տեղանվանական փոփոխված տարբերակները ներկայացնող մասում<sup>1111</sup>:

Երբեմն օտար անվան հիմքում տվյալ վայրում առկա եկեղեցիների թիվն էր, ինչպես օրինակ Էջմիածնի վանքի անվանումն է՝ «Ուչքիլիսա», որը թուրքերեն նշանակում է «երեք վանք»՝ մեկ անվան մեջ ընդգրկելով նաև Էջմիածնին մոտ գտնվող Ս. Գայանեի ու Ս. Հռիփսիմեի վանքերը: Ուչքիլիսա են կոչվել նաև

<sup>1108</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 15:

<sup>1109</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 16, 19:

<sup>1110</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 9:

<sup>1111</sup> Բնակավայրերի օտար անվանումների մասին տե՛ս Թ. Կոստիկյան, Արցախի տեղանուններն ըստ պարսկական աղբյուրների, Արցախ. ժողովրդագրության և տեղանվանակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում (կոլեկտիվ մենագրություն), Աշխատանքային տետրեր 3-4 (31-32). 2014, էջ 70-81:



պատմական Հայաստանի մի քանի այլ հայկական վանքեր ու գյուղեր<sup>1112</sup>, այնուամենայնիվ, Մատենադարանի պարսկերեն վավերագրերում նշվող «Ուչքիլիսա» անվանումը վերաբերում է միայն Էջմիածնի վանքին: Եդիքիլիսե անվամբ է հայտնի Վարագավանքը (կամ Վարագի Ս. Խաչ) Վանում<sup>1113</sup>, որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է 7 վանք և նկատի ունի այդ վանական համալիրի մեջ ընդգրկված եկեղեցիների քանակը:

Գուևանուևները<sup>1114</sup> լայնորեն օգտագործվում են հայոց վանքերի օտար անվանումներում՝ հենվելով այն քարերի գույնի թուրքերեն տարբերակի հետ, որոնցով կառուցվել են, ինչպես օրինակ Ղարաքիլիսա և Ղըզըլքիլիսա անվանումները, որոնցից առաջինը թուրքերենից թարգմանաբար նշանակում է «սև վանք», մյուսը՝ «կարմիր վանք»: Ընդ որում հայտնի են մի քանի հայկական վանքեր, որոնք պարսկերեն վավերագրերում հանդես են գալիս այդ անվանումներով:

1489 թ. մի կալվածագրում Կըզըլվանք է կոչվում Չուխուր Սաադի վիլայեթի մեջ մտնող Գառնիի շրջանի մի գյուղ, որ պատկանում էր Հավուցթառի Չաքարիա վարդապետին, իսկ վանքը նշվում է հենց այդպես՝ «Հավուսթառ – هوستار»<sup>1115</sup>: Ինչպես հայտնի է դառնում որոշ ժամանակ անց՝ 1505 և 1526 թթ. գրված վավերագրերից, այդ անունը գործածվում էր նաև Հավուցթառի վանքի վերաբերությամբ<sup>1116</sup>: Կըզըլվանք էր կոչվում նաև Սյունիքի վանքերից մեկը, որի վերանորոգման համար հրովարտակ է ձեռքբերվում 1669 թ.<sup>1117</sup>: Դա ամենայն հավանականությամբ Ղ. Ալիշանի կողմից նշվող Վաղադին գյուղի եկեղեցին է, որը կոչվել

<sup>1112</sup> Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, ԵՊՀ հրատ., 2001, էջ 198:

<sup>1113</sup> L. Sahakyan, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal-Arod Books, 2010, p. 29.

<sup>1114</sup> Հայկական տեղանուններում գուևանուևների կիրառության մասին տե՛ս Ս. Գ. Ասատրյան, Արցախի տեղանունների դասակարգման հարցի շուրջ, Արցախ. ժողովրդագրություն և տեղանվանակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում (կոլեկտիվ մենագրություն), Աշխատանքային տետրեր 3-4 (31-32). 2014, էջ 34:

<sup>1115</sup> Հ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, Երևան, 1968, վավ. 8:

<sup>1116</sup> Հ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, վավ. 16, Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 9:

<sup>1117</sup> Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 34:

Է Ս. Ստեփաննոս Նախավկա և հայ տնի Է Նան Կարմիր Վանք անվամբ<sup>1118</sup>: Նույն անվամբ Է կոչվել նաև Աստապատ գյուղի Ս. Ստեփաննոս վանքը<sup>1119</sup>: Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ կան այս երեք վանքերին Էլ վերաբերող փաստաթղթեր: Աստապատի Կըզըլվանքին են վերաբերում 19-րդ դարի սկզբի մի քանի պարսկերեն վավերագրեր, որոնք փաստում են վանքի ծանր դրույթանու այդ կապակցությամբ Նախիջևանի խանի հետ նամակագրության, նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի նախածնունդով ու Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզայի հաստատմամբ կատարված վանքի առաջնորդի դիրքում խաչատուր Եպիսկոպոսի նշանակման ու որոշ հարկերի կրճատման մասին<sup>1120</sup>: Պարսկերեն վավերագրերում հայոց վանքերի այս միանման անվանումները ոչ միայն հաճախ շփոթության առարկա էին դառնում, այլև անօրինական հավակնությունների հնարավորությունն տալիս որոշ անազնիվ անձանց: Այս կապակցությամբ հետաքրքրության է արժանի շահ Սուլեյմանի 1675 թ. հրովարտակը, որին կցված խնդրագրում նշվում է, որ «Սեֆի Ղուլի խանի օրոք Առաքել անունով մի վանական բարձրագույն պալատ գալով՝ կեղծ խնդրագիր է ներկայացրել, թե [իրեն ենթակա] վանքի անունը Կըզըլվանք է և ցանկանում էր այդ [Ս. Ամենափրկիչ] խաչը վերցնել ու Ֆարանգի երկիրը (Եվրոպա) տանել: Նվաստ խնդրագրով դիմեցի Սեֆի Ղուլի խանին: Վերջինս, այդ խաչը վերցնելով, նվաստիս տվեց, և տեսնելով, որ նրա պահանջն անհիմն է, ցանկացավ նրան պատժել»<sup>1121</sup>: Տվյալ դեպքում խոսքը թերևս Առաքել Բոպիկ Շոռոթցու մասին է (1613-1680 թթ.), որը ծագումով Աստապատից էր և 1649 թվականից դառնալով Երնջակի Ս. Կարապետի վանքի առաջնորդը և Նախիջևանի արքեպիսկոպոսը<sup>1122</sup>, հավանաբար փորձել է օգտվել Աստապատի Ս. Ստեփաննոս վանքի և Հավուցթառի վանքի օտարահունչ Կըզըլվանք անվան նույնականությունից և իր կաթոլիկամետ գործունեությունը<sup>1123</sup> համապատասխան Եվրոպա տանել

<sup>1118</sup> Ղ. Ալիջան, Սիսական, Էջ 219:

<sup>1119</sup> Ղ. Ալիջան, Սիսական, Էջ 511:

<sup>1120</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 782, 836, թղթ. 1ը, վավ. 1486, 1530, 1684:

<sup>1121</sup> Զ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ 9, վավ. 41:

<sup>1122</sup> Ղ. Ալիջան, Սիսական, Էջ 352:

<sup>1123</sup> Այս մասին տե՛ս Հ. Գրիգորիս ծ.վ. Գալեմբեարեան, Կենսագրություններ Ա., Վիեննա, 1915, Էջ 280-3:

Յարգելի Վանքի Ս. Խաչը, որի կապակցությամբ էլ հրապարակվել է նշված հրովարտակը:

Հայ տնի են նաև մի քանի Ղարաքիլիսաներ. մեկը Մակվի Ս. Թադեի վանքի օտար անվանումն է, որին վերաբերող պարսկերեն փաստաթղթերը մեծ թիվ են կազմում Մատենադարանի կաթողիկոսական դիվանում: Ղ. Ալիշանը նշում է ևս մի քանի Ղարաքիլիսաներ (Գարագիլիսե) Այրարատ նահանգում՝ Բագրևանդում, Կարսում, Ապարանում<sup>1124</sup>, որոնց վերաբերող պարսկերեն վավերագրեր Մատենադարանի արխիվում չկան:

Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսությանը վերաբերող պարսկերեն վավերագրերում հաճախ նշվում է «Աղվանք - آغ وانک» անվանումը<sup>1125</sup>: Այդ տեղանվան ծագումը ուսումնասիրած Բ. Յարոնյանը եզրակացնում է, որ նրա հայկական լինելը և հայերենով բացատրվելը կասկածներ չի հարուցում, և որ «այն գուտ հայկական երևույթ է»<sup>1126</sup>:

XVII դարում հենվելով շահ Թահմասպ Ա-ի 1570թ. հրովարտակի վրա<sup>1127</sup>, մասնավորապես Աղվանից կաթողիկոսների կաթողիկոսական իրավունքները հաստատող հրովարտակներում Աղվանք անվանումը կիրառվում է Շիրվանի փոխարեն, իսկ ենի ու Գանձակի կողքին՝ նշելով այդ կաթողիկոսությանը ենթակա շրջանները<sup>1128</sup>, որից հետո Աղվանք անունը շարունակում է գործածվել Աղվանից կաթողիկոսության իմաստով նաև XVIII-XIX դարերում Շիրվանի թեմի պատկանելության ու Աղվանից կաթողիկոսի ընտրության կապակցությամբ կազմված պարսկերեն համախոսականներում, նաև այդ կաթողիկոսության կալվածքներին վերաբերող փաստաթղթերում<sup>1129</sup>: Այս անվան կայունությունը պարսկերեն վավերագրերում այն դեպքում, երբ նրա փոխարեն հայերեն նյութերում առավել գործածական ու ընդունված էր այդ անվան

<sup>1124</sup> Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 39, 77, 254, 522:

<sup>1125</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, էջ 53, 104, 143, 151; նաև Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 156, 237, 245, 254, 286, 287, 333, 374:

<sup>1126</sup> Բ. Յարոնյան, Հայոց Արևելից կողմերի և Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր, Հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 134:

<sup>1127</sup> Տե՛ս այդ հրովարտակը տպագրված Հ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Ա., վավ. 18; նաև այդ հրովարտակի բովանդակության մեջբերումները այլ հրովարտակներում՝ Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, էջ 104, 143, 151:

<sup>1128</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, էջ 53, 104:

<sup>1129</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 156, 208բ, 215, 241ա, 245:

սեռական հոլովով տարբերակը Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսության նշանակությամբ, թերևս կապվում է «Աղվանք - غانك وانك» անվան գունային իմաստավորում՝ «թուրք. Սախտակ վանք» ստացած լինելու հանգամանքի հետ:

Հայոց վանքերը երբեմն դառնում էին հարևան մահմեդականների ուխտատեղիները և արդյունքում կրում նրանց կողմից տրված անուններ: Նման երևույթների հետ են կապվում, մասնավորապես «Աղ Օղլան – թուրք. Սախտակ տղա» անվան հիշատակությունը Արցախի Ամարասի վանքի և Ծիծեռնավանքի, ինչպես նաև Դիզակ գավառում գտնվող մի մատուռ-ուխտատեղիի վերաբերությամբ<sup>1130</sup>: Նման ուխտատեղի են հանդիսացել նաև Փիրջամալ գյուղի հանդում գտնվող երկու մատուռները, որոնցում ըստ ավանդության ամփոփված են «Փիրու եւ ճամալի մարմինները, վասն որոյ ուխտատեղի է յարգուած է ոչ միայն հայերից այլեւ մահմեդականներից»<sup>1131</sup>: Այնուամենայնիվ, տվյալ դեպքում, կարծում ենք, որ անվան հիմքում մեկ մարդու անունն է՝ «Ջամալ», իսկ «փիր» բառը, որը պարսկերեն նշանակում է «ծեր, շեյխ, հոգևոր առաջնորդ և մարգարեի հետևորդ», այդ անվան լրացումն է: Մատենադարանի պարսկերեն վավերագրերից մի քանիսը վերաբերում են Արցախի Ամարաս վանքին (Աղ Օղլան), նույնանուն գյուղին և Փիրջամալ բնակավայրին առնչվող խնդիրներին և փաստում նրանց հայաբնակ լինելու մասին<sup>1132</sup>:

Որոշակի պատմական իրողությունների հետ է կապվում Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի «Դանիելի վանք» անվանումը՝ պարսկական աղբյուրներում, այդ թվում նաև Մատենադարանի պարսկերեն վավերագրերում:

Ինչպես վերև արդեն նշել ենք շահ Սուլեյմանի 1668թ. հրովարտակի բովանդակությունից հայտնի է դառնում<sup>1133</sup>, որ վանքի ու նրա կալվածքների նկատմամբ XVII դարի 60-ական թվականներին հավակնություններ էին ցուցաբերում որոշ մահմեդականներ, որոնք *սադրի դիվանին* էին դիմել ու հրամանագիր ձեռքբերել այն

<sup>1130</sup> Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախչյան, Յ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 205:

<sup>1131</sup> Մ. Եսա. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, էջ 226:

<sup>1132</sup> Կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 49, թղթ. 2բ, վավ. 149, 240, 277, 278, 327, 328:

<sup>1133</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 22:

մասին, թե վանքի մոտակայքում է գտնվում Դանիել մարգարեի գերեզմանը և կան նրան պատկանող վակֆային կալվածքներ, որոնց մոլթավալլին է հայցորդը: Ու թեև այս պնդումը, ինչպես նշվում է վավերագրում, անցկացված քննության արդյունքում հերքվում է, սակայն, անշուշտ, նման խնդրի առկայությունը պետք է, որ լուրջ դժվարությունների պատճառ դառնար վանքի միաբանների համար: Չարկ է նշել, որ ըստ ավանդության, Յին Կտակարանում հիշվող Դանիել մարգարեի (Դանիելը այդպիսին է համարվում մահմեդական հավատի ավանդույթներում) գերեզմանը գտնվել է Շոշում (Սուզա), որի հետքերը այժմ էլ կան<sup>1134</sup>: Այնուամենայնիվ այդ ժամանակից ի վեր պարսկալեզու աղբյուրներում Դարաշամբի Մադարդա վանքը անվանվում է Ս. Դանիելի վանք<sup>1135</sup>, իսկ վանքի սրահներից մեկը համարվում է «Դանիելի օջախը»<sup>1136</sup>:

### **«Ղարաբաղ» և «Չոխուր Սամաղ» անվանումների ծագումը<sup>1137</sup>**

Պատմական Չայաստանի և մասնավորապես Չայոց արևելից կողմանց վարչատարածքային միավորների՝ գավառների առավել վաղ շերտը ձևավորվել ու զարգացել է հայկական միջավայրում<sup>1138</sup>: XIII-XIV դարերից գործածության մեջ են մտնում հայկական բնակավայրերի հարևանությամբ հաստատված քոչվոր ցեղերի ու տարածաշրջանում իշխող դիրք զբաղեցնող նրանց վերնախավի շրջանակներում օգտագործվող մի շարք անվանումներ, որոնք մուտք են գործում պարսկալեզու գրագրության և լեզվի մեջ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում է «Ղարաբաղ» անվան պատմությունը, որն առաջին անգամ հիշատակում է իրանցի պատմագիր Ռաշիդ ալ-Դինն (1247-1318) իր «Տարեգրությունների ժողովածու» կոչված պատմական աշխատության մեջ, որպես Առանում

<sup>1134</sup> دهخدا، جلد 12، ص. 203

<sup>1135</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 602, 754, 792; թղթ. 242, վավ. 113; Լան՝ Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Գ, վավ. 60:

<sup>1136</sup> محمد علی مخلصی، فهرست بناهای تاریخی آذربایجان شرقی، تهران، 1371، ص. 193.

<sup>1137</sup> Այդ մասին տե՛ս Լան Ք. Կոստիկյան, Չայոց վանքերի ու բնակավայրերի անունները մեները պարսկերեն վավերագրերում, Չայկաջան հայագիտական հանդես, Բեյրութ, 2017 թ. 37, էջ 130-153:

<sup>1138</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Գ. Մ. Բադալյան, Չայոց արևելից կողմերի տեղանուններն ըստ հայկական սկզբնաղբյուրների, Արցախ. ժողովրդագրության և տեղանվանակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում (կուլեկտիվ մենագրություն), Աշխատանքային տետրեր 3-4 (31-32). 2014, էջ 36-44:

գտնվող ձմեռանոցի անվանում: Նրա առաջին հիշատակությունը կապված է Ահմեդ Իլխանի օրոք Կոնկուրտայի դեմ տարվող դատի հետ, որը տեղի է ունենում «Առանի Ղարաբաղում» 1284 թ.<sup>1139</sup>: Այս հեղինակի մյուս հիշատակությունները կապվում են Ղազան խանի 1295 թ. պաշտոնական թագադրության և 1301թ. այդ վայրում իր ձմեռանոցը հաստատելու հետ<sup>1140</sup>: Ընդ որում, ամեն անգամ «Ղարաբաղ» անվանումը հիշատակելիս պատմագիրը շեշտում է, որ այն գտնվում է Առանում: Այս հիշատակություններն, անշուշտ, ավելի հին են, քան վրացական ժամանակագրության և Համդալլահ Ղազվինիի XIV դարի հիշատակությունները, որոնք մինչ վերջերս համարվում էին հնագույնը<sup>1141</sup>:

Հարկ է նշել նաև, որ «Ղարաբաղ» անվանումը չի հիշատակվում Ռաշիդ ալ-Դինից մի փոքր վաղ հանդես եկած պարսկալեզու մեկ այլ պատմագրի՝ Ալաալ-Դին Ջուվեյնիի «Աշխարհի նվաճումը» երկում: Ջուվեյնին, որ մահացել է 1283 թ., Կուր-Արաքսյան միջագետքի մասին խոսելիս այն նշում է «Առան» անվամբ: Ուստի կարելի է ենթադրել, որ նրա կենդանության օրոք գործածական չէր «Ղարաբաղ» անվանումը:

XVI դարի առաջին կեսին անհայտ հեղինակի պարսկալեզու պատմագրական երկում որպես Ղարաբաղի մեջ մտնող վայր երկու անգամ հիշատակվում է Սուլթանբուդը<sup>1142</sup>, որն ըստ Մ. Բարխուդարյանցի՝ Կուրի և Խաչենագետի աջ և Գարգառի ձախափերի ու դաշտաբերանի մեջ ընկած Արցախի Տուչքատակ կամ Տիգրանակերտ գավառի ստորին մասում գտնվող «մի հողե բերդ էր»<sup>1143</sup>: Ամենայն հավանականությամբ՝ Ղարաբաղն այդ ժամանակաշրջանում ընդգրկում էր հիշյալ հայկական գավառը, և ձմեռանոցային հարմար վայր էր պատմական Հայաստանի արևելյան շրջաններն իրենց տիրապետությանը ենթարկած մոնղոլ տիրակալների, այնուհետև նրանց փոխարինած Ակ Կոյունլու, Կարա Կոյունլու և Սեֆյան իշխանությունների համար: Ուստի այդ տեղանունը շարունակաբար

<sup>1139</sup> Տե՛ս *Рашид-ад-Дин*. Сборник летописей, т. III. Москва-Ленинград, 1946, с. 104:

<sup>1140</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 166, 188, *Рашид-ад-Дин*. Переписка. Москва, 1971, с. 231:

<sup>1141</sup> Տե՛ս Բ. Ա. Ուլլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 40-41:

<sup>1142</sup> Տե՛ս 313, 76. جهانگشای خاقان (تاریخ شاه اسماعیل) تالیف در 948، اسلامآباد، مرکز تحقیقات تاریخی ایران و پاکستان، ص.

<sup>1143</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյանց, Արցախ, Երևան, 1996, էջ 174:

օգտագործվում է հետագա պարսկալեզու պատմագրության մեջ ու փաստավերագրական նյութերում՝ կիրառվելով ավելի ու ավելի հաճախ և ժամանակի ընթացքում տարածվելով շրջակա ավելի ընդարձակ տարածքի վրա:

«Ղարաբաղ» անվանումը գործածվում է XV-XVI դարերում որպես Առանում գտնվող ձմեռանոցային վայրի անվանում, մասնավորապես՝ Լենկ Թեմուրի պալատական պատմագիրներ Նեզամ ալ-Դին Շամիի ու Շարաֆ ալ-Դին Եզդիի «Գիրք հաղթության նեների», Ակ-Կոյունլու պետության պատմագիր Ֆազլուլլահ իբն Ռուզբեհանի հուլնջիի «Ամինի պատմություն» պատմագրական երկերում<sup>1144</sup>: XVI դարի պարսկալեզու պատմագիր ազգությամբ քուրդ Շարաֆ խան Բիթլիսին ոչ միայն մի քանի անգամ հիշատակում է «Ղարաբաղ» տեղանունը որպես Առանում գտնվող ձմեռանոցի անվանում<sup>1145</sup>, այլ և նշում է, որ շահ Թահմասպ Ա-ը 1550 թ. ձմեռն անց է կացնում Առանի Ղարաբաղում<sup>1146</sup>: Այնուհետև, անդրադառնալով 1579 - 1580 թթ. դեպքերին՝ նա Գանձակի բեկլարբեկին անվանում է «Գանձակի, Բարդայի ու Առանի Ղարաբաղի վալի Իմամ Ղուլի սուլթան»<sup>1147</sup>, իսկ նրան ենթակա տարածքը՝ «Գանձակի, Ղարաբաղի ու Բարդայի վիլայեթ»<sup>1148</sup>: ՌԻստի ակնհայտ է, որ մինչև XVII դարը «Ղարաբաղը» ընկալվել է որպես Կուր-Արաքսյան հովտում գտնվող մի ձմեռանոցային շրջան, որտեղ ինչպես իլխանական ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում սովորաբար ձմեռում էին քոչվոր ցեղերը և նրանց ավագանին:

«Ղարաբաղ» անվանումը Գանձակի բեկլարբեկության վրա տարածվել է ուշ Սեֆյան տիրապետության ժամանակաշրջանում և ավելի հաճախ սկսում է գործածվել XVII դարում<sup>1149</sup>: XVII դարի երկրորդ կեսից այս անվանումը պարսկական վավերագրերում ավելի ու ավելի հաճախ է գործածվում Գանձակի բեկլարբեկության

<sup>1144</sup> St'u ... شرف الدين على يزدي، ص. 1382، 288، 296، 329، 356. جلد 1، 2، تهران 1387، ص. 187، 193، 1121، 1227. 292، 249، 243، 214، 212، 101. Է. ، 1364 ، kC1×DF MCoD;OÛC ، ÚCpèN ، é×DÛpç± ، í×Dz ÝèlĬC ÖD²Û

<sup>1145</sup> St'u Шараф-хан Шамсаддин Бидлиси. Шараф-наме, т. II. М., 1976, сс. 101, 111, 113, 193:

<sup>1146</sup> St'u նույն տեղում, էջ 196:

<sup>1147</sup> Նույն տեղում, էջ 236:

<sup>1148</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>1149</sup> St'u Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ: Ե., 1959, էջ 100, 110, 125:

իմաստով «Գանձակի» փոխարեն կամ նրա հետ միաժամանակ<sup>1150</sup>: XVII դարի երկրորդ կեսին, պարսկերեն աշխարհագրական երկում Ղարաբաղը նշվում է որպես մի «շրջան, որտեղ կան քաղաքներ, մեծ բնակավայրեր ու ամրոցներ, և այնտեղ էր գտնվում գործ ունեցող հզոր ու անկախ *բեկլարբեկերի* ամրացված նստավայրը: Ըստ պատմագիրների՝ դա մի երկիր է, որ գտնվում է Շիրվանի ու Ատրպատականի միջև»<sup>1151</sup>:

Այրարատյան նահանգի և Երևանի խանությունն անվան հետ գուգահեռ պարսկերեն վավերագրերում սկսած XV դարից գործածական էր Չոխուր (Չուխուր) Սա՛ադ անվանումը, որը հանդես է գալիս նաև որպես Սեֆյան պետության վարչական միավոր՝ «Չուխուր Սա՛ադի վիլայեթ» ձևով: Այդ անվան ծագումը ուսումնասիրած Յ. Փափազյանը այն կապում է XIV դարի վերջերին Երասխանոսում, Սուրմալիի ու մերձակա այլ վայրերում բնակվող թուրքմենական ցեղերն իր իշխանության ներքո միավորած Ամիր Սա՛ադի անվան հետ<sup>1152</sup>: Այդ շրջանները սկսում են կոչվել «Չուխուր Սա՛ադ – چخور سعد» (Սա՛ադի փոս), հայկական աղբյուրներում՝ «Սահաթա փոս» կամ «Երկիրն Սահաթուն»<sup>1153</sup>: Չուխուր Սա՛ադ անվան առաջին հիշատակությունը գտնում ենք 1428 թ. Վաղարշապատին վերաբերող կալվածագրում, որտեղ այդ գյուղը նշվում է «Վրաստանի շրջաններից Ազերբայջանի երկրին ենթակա Չուխուր Սա՛ադի վիլայեթում»<sup>1154</sup>: Ընդ որում նույն տարածքի վերաբերությամբ XV դարի պատմագիր Աբուլ Բեքր Թեհրանին իր «Դիարբեքրի պատմություն» երկում օգտագործում է նաև «Չոխուր-ե Սուրմալու», այսինքն «Սուրմալուի փոս» անվանումը<sup>1155</sup>:

«Չուխուր Սա՛ադ» անվանումը հաճախ է հանդիպում պարսկերեն վավերագրերում ու այլ աղբյուրներում՝ գործածվելով ընդհուպ մինչև նրամիացումը Ռուսաստանին 1828թ.:

<sup>1150</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 3, 14, 26, 33, 55, 59, 60, 63:

<sup>1151</sup> Տե՛ս. مختصر مفید، جغرافیای ایران زمین در عصر صفوی، بکوشش ایرج افشار، با همکاری محمد رضا ابویی مهریزی، تهران 1390، ص. 168.

<sup>1152</sup> Յ. Փափազյան, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դար), Տեղեկագիր 1960, հ. 7-8, էջ 25:

<sup>1153</sup> Տե՛ս Առ. Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 104, 201, 474:

<sup>1154</sup> Յ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, վավ. 4, էջ 60:

<sup>1155</sup> طهرانى ابو بكر، كتاب دیاربکریه تاریخ حسن بیک آق قویونلو و اسلاف او، جزو اول، جزو ثانی، انکری، 1356، ص. 75.



## Հայ կական անվանումների օտար աղավաղումները

Արևելյան Հայաստանի շրջանների ու բնակավայրերի հայ կական անվանումների հետ զուգահեռաբար գործածվող օտար անվանումները, որոնք տրվել են այլազգի հարևանների կամ տիրապետողների կողմից, ըստ իրենց բնույթի կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբում կառանձնացնելնք աղավաղումների հետևանքով ի հայտ եկած տարբերակները: Այս աղավաղումները հիմնականում պայմանավորված էին տեղանքի նկատմամբ գերիշխանության ձեռքբերած ժողովրդի լեզվական առանձնահատկություններով և հարմարեցնում էին դրանք տվյալ լեզվի հնչյունական ու տառային համակարգին, երբ որոշ հայերեն հնչյուններ որոնք պարսկերենում չկան օրինակ ց-ն հանդես է գալիս ս-կամ թս-տառերով՝ Աղվերց-Աղվերս <sup>1156</sup>افورس, Հավուցթառ – Հավուսթառ – هوستاروانک <sup>1157</sup>, Մանկանոց – Մանկանուս <sup>1158</sup>منكانوس, Ֆրանկանոց-Ֆրանկանոս – فرنكانوس <sup>1158</sup>, Կից – کيس <sup>1159</sup>, Աղջոց – اچچوتس <sup>1160</sup>: Հնչյունական ձևափոխումները առանձին դեպքերում լինում էին կամայական բնույթի, երբեմն ի հայտ գալով բառի գրության սխալ ընթացքման հետևանքով, որոնք մեկ անգամ այդպես հանդես գալուց հետո կրկնվում էին հետագա վավերագրերում. Ինչպես օրինակ Շոռոթ անվան փոխարեն հիմնականում հանդես է գալիս Շոռլութ տարբերակը <sup>1161</sup>, Անգեղակոթի փոխարեն՝ Անգելակոթը <sup>1162</sup>, Սաղմոսավանքի փոխարեն Սարմոսավանք <sup>1163</sup>: Տեղի էին ունենում անվանումների կրճատումներ թե՛ սկզբից, թե՛ վերջից: Վավերագրերից մի քանիսում կրճատվել էր, օրինակ, Ֆրանկանոցի-«անոց» ածանցը՝ մնալով միայն «Ֆրանկ – فرنک» <sup>1164</sup>, իսկ Մանկանոց գյուղը դարձել է «Մանկուս – منکوس» <sup>1165</sup>: Հիմնականում առանց խոր

<sup>1156</sup> Թ. Կոստիկյան, Իրավարտականեր, պրակ Գ, վավ. 32, 34

<sup>1157</sup> Թ. Կոստիկյան, Իրավարտականեր, պրակ Գ, վավ. 41:

<sup>1158</sup> Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 1Է, վավ. 1180

<sup>1159</sup> Թ. Կոստիկյան, Իրավարտականեր, պրակ Գ, էջ 48, 67, 68, 107, 113, 122:

<sup>1160</sup> Թ. Կոստիկյան, Իրավարտականեր, պրակ Դ, վավ. 9, էջ 36, 228:

<sup>1161</sup> Թ. Կոստիկյան, Իրավարտականեր, պրակ Գ, վավ. 2, 68:

<sup>1162</sup> Թ. Կոստիկյան, Իրավարտականեր, պրակ Գ, վավ. 32:

<sup>1163</sup> Թ. Կոստիկյան, Իրավարտականեր, պրակ Դ, վավ. 9:

<sup>1164</sup> Թ. Կոստիկյան, Իրավարտականեր, պրակ Դ, վավ. 19, 22:

<sup>1165</sup> Հ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, վավ. 27, Հ. Փափազյան, Իրավարտականեր, պրակ Ա, վավ. 19, Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 328:

բաղադրիչի է հանդես գալիս խորվիրապ անվանումը՝ «վիրաբ – ویراب» ձևով<sup>1166</sup>:

Երբեմն Արևելյան Յայաստանի տեղանունների աղավաղման պատճառ էին դառնում տառերի բնագրային սխալ ընթերցումները, որոնք հաճախակի էին տեղի ունենում կետերի բացակայության ու ավելացման հետևանքով և հանգեցնում սխալ տարբերակների ամրագրմանը: Նման տեքստային աղավաղման ու սխալ ընթերցման հետևանք կարելի է համարել հ-խ, թ-ս, ն-լ անցումները Յունան (خنان) – խունան (خنان), Վարդան[ակերտ] (ورثان) – Վարսան (ورثان)<sup>1167</sup>, Չավնդուր (چوندور) – Չուլդուր (կամ Չըլդըր) (چولدور) տարբերակներում<sup>1168</sup>:

Արաբական այբուբենում որոշ ձայնավորների չգրվելն էլ ավելի դժվարացնում էր հայերեն տեղանունների գրությունն այդ տառերով, ինչպես օրինակ, Աղավաատուն տեղանունը, որի գրությունը տարբեր վավերագրերում տարբեր է (Աղունադուն - اقونادون<sup>1169</sup>, Աղունադին - اغنه دين<sup>1170</sup>, Աղունադան - اغندن<sup>1171</sup>):

Տառային փոփոխություններում հաճախակի էր-ի փոխարինումը լ-ով: Նման փոփոխություն է տեղի ունեցել Երնջակ գավառի ու Նույնանուն բերդի անվան հետ<sup>1172</sup>, որը պարսկերեն վավերագրերում նշվում է Ալինջա կամ Ալնջաղ النجق-ձևով<sup>1173</sup> և այդ կերպ է հիշատակվում պարսկերեն աղբյուրներում արդեն XIV դարում<sup>1174</sup>:

Նման աղավաղման հետևանքով հայկական աղբյուրներում հիշատակվող ճարաբերդ կամ Չարաբերդի (Ներկայիս՝ Ջրաբերդի)<sup>1175</sup>

<sup>1166</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 9, էջ 36, նաև Կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 534, 535, 542:

<sup>1167</sup> Տե՛ս Զ. Թ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Յայաստանի և հարևան երկրների մասին: Ե., 1965, էջ 61, 120:

<sup>1168</sup> Սյունիքի Չավնդուր գավառի իրանականացված տարբերակն է, որը ըստ հին ցուցակների Տաթևի թեմի մեջ մտնող գավառներից էր (Ղ. Ալիջան, Սիսական, էջ 242, 272): Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 49, նաև Միրզա Յուսուֆ Ներսեսով, Նշվ. աշխ., էջ 44, 46; چهل سند فارسی از جمهوری آذربایجان، تیمور مناف اوغلی موسوی، ترجمه: از پرویز زارع شاهمرسی، مرکز اسناد و تاریخ دیپلوماسی، تهران 1386، ص. 121، 122:

<sup>1169</sup> Զ. Փախազյան, կալվածագրերը պրակ Ա, վավ. 5, էջ 71:

<sup>1170</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1372:

<sup>1171</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1Է, վավ. 1385:

<sup>1172</sup> Այդ կերպ այն հիշատակվում է դեռևս Աշխարհացույցում, որպես Սյունիքի առաջին գավառի և Նույնանուն բերդի անվանում (Ս. Տ. Երեմյան, Յայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 51):

<sup>1173</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 782, թղթ. 1Է, վավ. 1219, 1222:

<sup>1174</sup> شرف الدين علی یزدی، طفرنامه، جلد 1، 2، تهران، موزه و مرکز اسناد مجلس شورای اسلامی، ص. 575، 767-770، 834، 1001 ...

<sup>1175</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Յայոց պատմություն, Երևան, 1982, էջ 258, Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 316, Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 157, 355:

փոխարեն պարսկական վավերագրերում ու այլ աղբյուրներում հանդիպում են «Ջալբերդ (Ջալփերդ) կամ Չելեբերդ - چله برد» տարբերակները<sup>1176</sup>:

Էլ ավելի ձևափոխված տարբերակ է Չորման տեղանունը, որը որոշ հետազոտողների կարծիքով հանդիսանում է հայկական Շիրմանանց բնակավայրի անվանումը<sup>1177</sup>: Չորման բնակավայրի հիշատակությունը պարսկերեն վավերագրերում կապվում է Արցախի Քոլատակ ու Առաջածոր բնակավայրերի միջև ծագած խնդիրների հետ<sup>1178</sup>: Իսկ այն հանգամանքը, որ Չորմանի տանուտերը Խաչենի Ղազանչի, Չորման, Ներքին Քոլատակ, Բազարքենդ, Բալլուղայա, Դոշանլու, Խնձիրստան, Տամկալե, Վանք, Շավաև միքանի այլ գյուղերի տանուտերերի ու ավագների հետ հիշատակվում է XVIII դարի առաջին կեսում Առաջածոր գյուղի ավագերեց Դավթի մելիքությանը համաձայնություն տրված համախոսականում<sup>1179</sup>, խոսում է բնակավայրի էթնիկ կազմի հայկական լինելու մասին:

Աղավաղված տարբերակները, ստանում էին նաև իմաստային որոշ երանգավորումներ, մի երևույթ, որ բնորոշ է ժողովրդական ստուգաբանությանը: Թե՛ պատմագիրները և թե՛ հասարակ ժողովուրդը իմաստային բացատրություններ էին փնտրում հատուկ անուններում: Որպես օրինակ կարելի է հիշել XI դարի բանաստեղծ Նասիր Խոսրովի «Սաֆարնամե» ուղեգրության այն հատվածը, որտեղ հեղինակը բացատրում է «Խլաթ» անունը այն հանգամանքով, որ այնտեղ երեք լեզուներով էին խոսում՝ հայերեն, պարսկերեն ու արաբերեն («Խլաթ» արաբերեն «խառնուրդ» է նշանակում)<sup>1180</sup>: Այս երևույթը հանդիպում է նաև Օսմանյան տիրապետության տակ գտնվող հայաբնակ տարածքների անունների թյուրքական տարբերակներում: Մասնավորապես, Էվլիա Չելեբին XVII դարում փորձում է թուրքերենով ստուգաբանել հայկական Բայբերդ-

<sup>1176</sup> Տե՛ս ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 4, էջ 211: Միրզա Յուսուֆ Ներսեսով, Նշվ. աշխ., էջ 39, 43, 920-թ. Վ. 411, 1383, Վ. 411.

<sup>1177</sup> Ս. Սարգսյան, Արցախ. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996, էջ 79:

<sup>1178</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 119, 125, 362,

<sup>1179</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 177, նրա պատճեն տե՛ս վավ.

376

<sup>1180</sup> 8. سفرنامه ناصر خسرو قبادیانی، از انتشارات آیینة هنر محمد سلحشور 1368، ص. 8.

Բաբերդի Բայբուրդ, ճորոխ գետանվան Ջուհ-ռուհ, Ակն քաղաքի Էգին օտարահունչ տարբերակները<sup>1181</sup>:

Նման փոփոխության է ենթարկվել Նախիջևանի հայկական Աստապատ անվանումը՝ դառնալով Եգդաբադ, որտեղ «եգդ»-ը (بزد) «աստված» բառն է, իսկ «աբադ» բաղադրիչի գործածվում էր ինչպես հայկական, այնպես էլ պարսկական տեղանուններում, ինչպիսիք են Աստաբադ, Աշխաբադ, Վաղարշապատ և այլն<sup>1182</sup>: Այն հին հայկական բնակավայրերից է, որն Աստապատ ձևով հիշատակվում է հայ պատմիչների կողմից սկսած IX դարից<sup>1183</sup>: Նադիր շահի մահից հետո Նախիջևանում զարգացող իրադարձությունները նկարագրող Մ. Չամչյանը փաստում է, որ այդ շրջանում դեռևս նրա «բնակիչք գրեթե բոլոր հայք էին»<sup>1184</sup>: XIX դարի սկզբին այդ գյուղի տեղում Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզան կառուցում է մի բերդ և անվանում այն Աբբասաբադ, իսկ գյուղի բնակիչներին տեղափոխում քիչ դեպի հյուսիս: Այդ նոր վայրը ևս անվանվում է Աստապատ կամ Թագաբեանտ<sup>1185</sup>:

Հայկական տեղանունների աղավաղումների ու ձևափոխումները ակնհայտ են Քաջաթաղի պատմությանը վերաբերող մի պարսկերեն վավերագրում, որով 1691 թ. այնտեղի մի շարք հայկական գյուղերի ավագներն ու տանուտերերն իրենց համաձայնությունն էին տալիս Մելիք Չախնազարի որդի Իլյասին որպես իրենց լիազոր ներկայացուցիչը հաստատելու հարցում: Այդ փաստաթղթում Քաջաթաղի շրջանը նշվում է Քոշթաս \$ ձևով, Յոչանց գյուղը՝ Յոչաս, իսկ Աղբաթետ (նաև Ալպատխիր, Աղվատխեր, Ալբադխու) գյուղը, որ գտնվում է Աղավնո գետակի վերնահովտում, հիշատակվում է Աֆաթխար (آفتخر) ձևով<sup>1186</sup>: Եթե փորձենք իմաստային վերլուծության ենթարկել «աֆաթխար» բառը, ապա այն պարսկերենից թարգմանաբար

<sup>1181</sup> L. Sahakyan, նշվ. աշխ., էջ 29-30:

<sup>1182</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 58, էջ 162; Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 527

<sup>1183</sup> Թովմայ Արծրունի եւ անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, քնն. բնագիրը, առաջաբանը և ծանոթագր., Երևան, Մագաղաթ, 2006, էջ 119; Առ. Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 89, 175, 176, 286 և այլն:

<sup>1184</sup> Մ. Չամչյանց, նշվ. աշխ., հ. Գ, էջ 837:

<sup>1185</sup> Ե. Լալայեան, Նախճաւան կամ Նախիջեւանի ոստիկանական շրջան, էջ 47:

<sup>1186</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, Քաջաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ: 'Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ', հ. XX: Ե., 2001, էջ 169:

կարելի է ընկալել որպես «մեծ աղետ կամ վնաս»: Քաշաթաղ գավառը այլ վավերագրերում ևս նշվում է Քոշթասֆ ձևով<sup>1187</sup>, որը, սակայն, չափեր է շփոթել Կուրից մինչև Կասախց ծով ձգվող նույնանուն շրջանի հետ<sup>1188</sup>: Այս դեպքում ևս տեղանունը ստացել է իմաստային երանգավորում: «Քոշթ-ե ասաֆ կամ ասաֆի - كشت اسفى» - բառակապակցությունը պարսկերեն կարելի է հասկանալ «գուր սպանություն» իմաստով:

Աղավաղման հետևանքով ի հայտ է եկել «Չառուզիբիլ - زاروزبيل» անվանումը, որը XVII դարից տարածվում էր Ճար գավառի վրա<sup>1189</sup>: Չառուզիբիլ տեղանունը ծագել է Ճար գավառի «Չար-زار» և նրա Տալը բնակավայրի «Չիբիլ - زبيل» արաբատար տարբերակների կցումից: Տալը հիշատակվում է XII - XVIII դարերի հայկական աղբյուրներում որպես Թարթառի վտակ Թուրխուլի հովտում գտնվող տարածքի անվանում, որը հետագայում տեղայնացվում է գավառի գյուղերից մեկի վրա<sup>1190</sup>: Տալը հիշատակվում է XII-XVIII դարերի հայկական աղբյուրներում որպես Թարթառի վտակ Թուրխուլի հովտում գտնվող տարածքի անվանում, որը հետագայում տեղայնացվում է գավառի գյուղերից մեկի վրա<sup>1191</sup>: Չառուզիբիլը որպես շրջանի անվանում գործածվում է նաև XVII դարի մի քանի այլ վավերագրերում<sup>1192</sup>: Չառուզիբիլը Իրանի Սեֆյան տիրապետության շրջանում մտնում էր Չուխուր Սա'ադի (կամ Երևանի) բեկլարբեկության մեջ<sup>1193</sup>: Չառուզիբիլ գավառի հայությունն հիմնական արտագաղթը տեղի է ունեցել 1725 թ., և հետագա 2-3 տարիների ընթացքում այն գրեթե ամբողջովին դատարկվել է: Այնպես որ, 1760-ական թթ. նրա տարածքը գրեթե լիովին հայազրկվել էր՝ բացառությամբ Խուրթավան գյուղից և թեմական կենտրոն Դադի

<sup>1187</sup> Տե՛ս Զ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 89, 100, 124:

<sup>1188</sup> Տե՛ս Ս. Ջալալեան, ճանապարհորդություն Սեճն Չայաստան, մասն Բ: Տփղիս, 1858, էջ 361: 107-106. ص. 1336, تهران, نزهة القلوب, 1336:

<sup>1189</sup> Տե՛ս Մատենադարան, Մելիք-Շահնագարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 26, Ս. Կարապետյան, Չայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանիս բնակցված շրջաններում: Ե., 1999, էջ 13:

<sup>1190</sup> Տե՛ս Ա. Ա. Չակոբյան, Ա. Յ. Սիմոնյան, Դադի վանքի նորահայտ արձանագրությունը և Տալի տեղադրության հարցը: Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ): Ե., 1998, հմ. 1-2, էջ 231:

<sup>1191</sup> Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Մելիք-Շահնագարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 27: Տե՛ս նաև Բ. Կոստիկյան, Գեղարքունիքի Մելիք-Շահնագարյանների պատմությունից, էջ 311:

<sup>1192</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 37:

<sup>1193</sup> Տե՛ս 76. ص. 1332, تهران, تذكرة الملوك, بکوشش محمد دبیرسیاقی, 1332:

վանքից<sup>1194</sup>: Պարսկերեն վավերագրերում այն ստացել է հետևյալ իմաստային երանգավորումը՝ «ողբ և աղբ (կամ անպետքություն)»:

Ավելի ուշ շրջանում, մասնավորապես՝ XIX դարում ևս տեղի են ունենում անվանումների ձևափոխումներ, և դրանք ստանում են իմաստային նոր երանգավորումներ: Օրինակ՝ Շուշի անվանումը երբեմն հանդես է գալիս «Շիշե - شیشه» ձևով, որ պարսկերեն նշանակում է «ապակի»<sup>1195</sup>: Պարսկերեն վավերագրերից մեկի XIX դարի պատճենում կարդում ենք. գրեց Քարբալայի Մուսթովֆիի որդի Ջաբրայիլը, 1309թ. ջումադի առաջին ամսի 25-ին<sup>1196</sup>, Շիշեում<sup>1197</sup>: 19-րդ դարի պարսկալեզու պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Ճմարտացի պատմություն» պատմագրական երկում 1795 թ. Աղա Մուհամմադ խանի անունից Շուշիի պաշտպաններին և Ղարաբաղի հերահիմ խանին ուղղված հանդիմանական խոսքերում ու սպառնալիքներում Շուշին համեմատում է ապակու («շիշեի») հետ:

### **«Քենդ» քաղաքիչը հայ կական բնակավայրերի անվանումներում**

«Շուշի» տեղանունը նախապես վերաբերել է Շուշի քաղաքի արևելյան կողմի ձորամեջում գտնվող հայ կական բնակավայրին<sup>1198</sup>, որը «Շուշի, Շոշ» ձևերով հիշատակվում է դեռևս 1428 թ. գրված մի Ավետարանում<sup>1199</sup>: Իսկ իրանական ծագում ունեցող -քենդ քաղաքիչը, որն իրանական լեզուներում որպես բայ անուն (kanta-katha " kat-katha) ունի «քաղաք, տուն» իմաստը<sup>1200</sup>, այդ տեղանվանը ավելացվել է միայն հետագայում, Շուշի քաղաքի հիմնադրումից ու զարգացումից հետո՝ դարձնելով այն Շուշիքենդ և քաղաքից տարբերակելու համար<sup>1201</sup>: Վերոհիշյալ քենդ-քեթ-ղանդ բայ անունն ունեցող տեղանունները տարածված են հատկապես Միջին Ասիայում՝ Ախսիքեթ, Բայքենդ, Բունջիքեթ, Վաքքենդ, Կոկանդ, Շութուրքենդ և այլն<sup>1202</sup>:

<sup>1194</sup> Տե՛ս Ս. Կարապետյան, Չայ մշակույթի, էջ 12:

<sup>1195</sup> Տե՛ս Միրզա Յուսուֆ Ղարաբաղի, Թարիխ-ե Սաֆի, Թեհրան, 1390, 179-181 (պարսկ.):

<sup>1196</sup> 1891թ. դեկտեմբերի 27:

<sup>1197</sup> Զ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ. վավ. 3, էջ 33:

<sup>1198</sup> Տե՛ս Ս. Ջալալեան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 245:

<sup>1199</sup> Տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 308:

<sup>1200</sup> Տե՛ս *В. И. Абаев. Этимологические заметки, т. VI. М., 1956, с. 448:*

<sup>1201</sup> Տե՛ս Միրզա □□□□□\$ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 123:

<sup>1202</sup> Տե՛ս *В. И. Абаев.*, նշվ. աշխ., էջ 448:

Վերը նշված Շուշիքենդ անվանումն ու մի քանի այլ անվանումներ ցույց են տալիս, որ «քենդ» բաղադրիչը հաճախ պարզապես կցվել է հայկական տեղանուններին հիմնականում ուշ շրջանում (XVIII - XIX դարեր)՝ տալով նրանց օտար հնչողություն, ինչպես, օրինակ, Քարվաճառի Սոգքենդ գյուղի դեպքում է: Սոգքենդի «քենդ» բաղադրիչը ավելացել է Մոսկամ Սոգ տեղանվանը XVIII դարից հետո<sup>1203</sup>: Սոգը (կամ Մոս) որպես Սյունիքին կից շրջանի անվանում հիշվում է հայ պատմիչների երկերում VII դարից<sup>1204</sup>: Պահպանվել է 1653-1654թթ. Ճարի Մոս գյուղում Մարտիրոս Խնձորեսկցու կողմից ընդօրինակված մի Ավետարան<sup>1205</sup>: Այդ գյուղը Մոս ձևով հիշատակվում է նաև XVIII դարի կեսին Խութավանքի (կամ Դադիվանքի) կալվածացու ցակում<sup>1206</sup>:

Որպես կանոն՝ տեղանունների մեջ «քենդ» վերջավորությունը մասնացույց է անում տվյալ բնակավայրի բնակչության նստակյաց լինելը, ուստիև տրվել է հիմնականում հայկական բնակավայրերին: Այս փաստը հստակ կերպով արտացոլվել է 1823 թ. Ղարաբաղում ռուսական իշխանությունների կողմից անցկացված վիճակագրական նկարագրության մեջ, որտեղ որպես հայկական բնակավայրեր նշվում են Մխիթար-քենդը, Աղքենդը, Քեշիշքենդը, Մեհդիքենդը (Մեյտիշեն) Խաչեն գավառում, որ հիմնվել է 1828 թ., Մադաթքենդը Վարանդայում, Աղջեքենդը Դիզակում և այլն<sup>1207</sup>: Այս երևույթն արտացոլվել է նաև Դարաշամբի Օրթաքենդ, Դիբքենդ ու Բաշքենդ<sup>1208</sup>, Երևանի նահանգի Դարաքենդ (Ձորագեղ)<sup>1209</sup>, Ղրխբուլարի Չելեբի[քենդ] (նաև Քեշիշքենդ կամ Այդինդարվիշ)<sup>1210</sup>, Սյունիքի Աղաքենդ<sup>1211</sup>, Դիզակի Աղջաքենդ<sup>1212</sup> հայկական գյուղերի

<sup>1203</sup> Տե՛ս Ս. Կարապետյան, Զայ մշակույթի, էջ 73:

<sup>1204</sup> Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 321, 322, Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 64:

<sup>1205</sup> Տե՛ս Յուզակ Ձեռագրաց, հ. Ա, Երևան, 1965, ձեռ. 3647:

<sup>1206</sup> Տե՛ս Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 396:

<sup>1207</sup> Տե՛ս «Описание Карабагской провинции, составленное в 1823 году по распоряжению главноуправляющего в Грузии Ермоловым, действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м». Тифлис, 1866, сс. 42, 91, 107, 215, 222:

<sup>1208</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 48, թղթ. 1բ, վավ. 103, թղթ. 1ե, վավ. 678, թղթ. 4, վավ. 112 և այլն:

<sup>1209</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 50, 54, 69, 71 և այլն:

<sup>1210</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 158

<sup>1211</sup> Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, էջ 66, 68, 107, 113, 122:

<sup>1212</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 138, 140, 165, 178 և այլն:

պատմութեանը վերաբերող Մատենադարանի պարսկերէն վավերագրերում:

Քենդ-բաղադրիչով առանձին անվանումները երբեմն մատնանշում են նաև որևէ մեծ բնակավայրի առանձին թաղամասերը, ինչպես, օրինակ, Գանձակի հայկական թաղամասերից երկուսը՝ Քիլիսաքենդը (Եկեղեցու թաղամաս) և Ենիքենդը (Նորաշեն): Քիլիսաքենդը Գանձակ քաղաքի հայկական թաղամասերից ամենամեծն էր, որը գտնվում էր Գանձակ գետի ձախափնյակում և ավելի բարձր դիրք էր զբաղեցնում մահմեդական թաղամասերի համեմատությամբ: Ենիքենդը<sup>1213</sup> գտնվում էր Գանձակի թրքաբնակ հատվածում՝ նշանավոր «մեյդանից» (հրապարակ) դեպի հյուսիս - արևմուտք: Գանձակի այս երկու հայկական թաղամասերի հոգևոր և աշխարհիկ իշխանութեան ներկայացուցիչների անուններն ու ստորագրությունները նշվում են 1794 թ. կազմված պարսկերէն մի համախոսականում, որով հայ բարձրաստիճան հոգևորականների, հայ մելիքների ու Աղվանից կաթողիկոսութեանը հպատակ հայության անունից ընդհանուր համաձայնություն էր տրվում Սարգիս Յասան Ջալալյանի՝ Աղվանից կաթողիկոս հաստատվելուն<sup>1214</sup>:

### **Յայկական տեղանունների թարգմանական տարբերակները**

Մեծ խումբ են կազմում այն օտար անվանումները, որոնք հայկական տեղանունների թարգմանական տարբերակներն են, ընդ որում բառի առաջին բաղադրիչի թարգմանական տարբերակը երբեմն կարող էր զուգակցվել քենդ բայանվան հետ՝ երբեմն փոխարինելով հայերեն «շեն-գյուղ» բառին (Վաճառ-Բագարքենդը, Գետաշեն-Չայքենդ, Երիցուշեն-Քեշիշքենդ և այլն): Խաչենի Քարագլուխ կամ Շիկաքար կոչված բնակավայրի անվանումների շարքում հիշատակվում են նաև Դաշուշեն ու Դաշքենդ («դաշ» թուրքերեն նշանակում է «քար») տարբերակները<sup>1215</sup>:

Յայկական Գետաշեն անվանումը հիշատակվում է XVII դարից: Մասնավորապես 1621 թ. այն նշվում է նրավրավրացական գործի

<sup>1213</sup>Տե՛ս Ս. Կարապետյան, Յյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 35:

<sup>1214</sup>Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 241ա:

<sup>1215</sup>Տե՛ս Ս. Лисицян, Армяне Нагорного Карабаха. Е., 1992, с. 25:



հարձակման կապակցությամբ<sup>1216</sup>: Գյուղը Գետաշեն է կոչվում XVIII դարի երկրորդ կեսին այնտեղ այցելած Յովսեփ Էմինի գրքում<sup>1217</sup>: Պարսկական վավերագրերում, որոնք վերաբերում են Գետաշենի Մելիք Մնացականյանների պատմությանը, XVIII դարից գյուղի անվանումը հիշատակվում է «Չայքենդ» ձևով, որը «Գետաշեն» անվան բառացի թուրքերեն թարգմանությունն է կցված «քենդ» բաղադրիչին<sup>1218</sup>:

Խաչենի Առաջածոր գյուղից մեկ մղոն հեռավորության վրա գտնվող հայկական Վաճառ գյուղը<sup>1219</sup>, որը Մ. Բարխուդարյանցի վկայությամբ Ծմակահող գյուղի հին անվանումն էր, ունի օտար «Բազարքենդ» տեղանվանական տարբերակը: Այս բնակավայրը, գտնվելով քոչվոր անասնապահների հարթավայրային շրջաններից դեպի լեռնային արոտավայր քոչելու ճանապարհին, զարգանում էր հայ գյուղացիների ու արհեստավորների հետառևտրի շնորհիվ<sup>1220</sup>: Բնակավայրը XIX դարի երկրորդ կեսին ուներ 40 ծուխհայ բնակիչ և XIII դարի արձանագրություններ ունեցող Ս. Ստեփանոս Եկեղեցի<sup>1221</sup>: Խաչենի «Բազարքենդ»- «بازارکند» անվամբ հայկական գյուղը հիշատակվում է Մատենադարանի XVII դարի պարսկական վավերագրերում, որոնք կազմվել են գյուղին վերաբերող զանազան խնդիրների կապակցությամբ և բովանդակում են այդ խնդիրների լուծման նպատակով Գանձակի *բեկլարբեկի* հրահանգներն՝ ուղղված իր պաշտոնյաներին<sup>1222</sup>:

Տեղանունների թարգմանության և այդ կերպ յուրացման գործընթացն առավել բնորոշ էր հայաբնակ վայրերի հարևանությամբ հաստատված թյուրքական ցեղերին<sup>1223</sup> և ընդունելի պատմական Յայաստանի տարածքում հաստատված Կարա-Կոյունլու ու Ակ-Կոյունլու, Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական մահմեդական իշխանությունների համար, որոնք թեև իրանական պետականության

<sup>1216</sup> Տե՛ս Ս. Կարապետյան, Յյունսիսային Արցախ, էջ 321:

<sup>1217</sup> Տե՛ս *Emin Jozeph, Life and Adventures of Joseph Emin*. Calcutta, 1918, p. 306:

<sup>1218</sup> Տե՛ս Զ. Կոստիկյան, Ղարաբաղի հայ մելիքները Նադիր շահի իշխանության տարիներին: 'Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ', հ. XXVI, Երևան, 2007, էջ 260:

<sup>1219</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Արցախ, էջ 80:

<sup>1220</sup> Տե՛ս *U. C. Лисиян*, նշվ. աշխ., էջ 69:

<sup>1221</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 118:

<sup>1222</sup> Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2ա, 92, թղթ. 2բ, վավ. 124ա, թ. 286:

<sup>1223</sup> L. Sahakyan, նշվ. աշխ., էջ 28:

շարունակողներն էին, սակայն թյուրքագրի էին և Արևելյան Յայաստանի տարածքում հենվում էին հիմնականում թյուրքական ցեղերի ու նրանց ավազանու վրա:

Արդյունքում չնայած որպես գրագրության լեզու շրջանավոր պարսկերենին՝ վավերագրերում հայկական բնակավայրերն ու շրջանները հանդես են գալիս թուրքերեն թարգմանական տարբերակներով, կամ պարսկերեն բառերի թյուրքացված հնչողությամբ, ինչպես օրինակ «Դարաչիչաք - دره چيچک» անվանումն<sup>1224</sup> է հայոց Ծաղկունիք, Ծաղկունեաց Ձոր (Վարաժնունիք) գավառի փոխարեն, բաղկացած պարսկերեն «Դարա - دره» ու թուրքերեն «չիչաք - چيچک» թարգմանական տարբերակների կցումից<sup>1225</sup>:

Երբեմն օտար թարգմանական տարբերակով օգտագործվում էին տեղանվանը կից «Վերին», «Ներքին», «Մեծ», «Փոքր», «Յարավային» և «Յուսիսային» բառերը: Այս բաղադրիչները օգտագործվում են Արցախի կրկնվող տեղանունների հետ: Վարանդայի Յարավային կամ Արեգոտեմ ճարտար (թյուրք. Գյունի ճարտար) և Յուսիսային ճարտար (թյուրք. Դուզի ճարտար) գյուղերի անվանումները կապված են այդ բնակավայրերի՝ մի սարի հյուսիսային ու հարավային լանջերին գտնվելու հետ<sup>1226</sup>: Պարսկական վավերագրերում հանդիպում են «Սաֆլա (պարսկ. سفله – سفلی) - Ստորին (կամ Ներքին)» և «Ալիյա (պարսկ. علیا) - Վերին» բառերը մասնավորապես՝ Քուլատակ տեղանվան հետ<sup>1227</sup>: Այս բաղադրիչները օգտագործվում են նաև Ագուլիս անվան հետ՝ տարբերակելով Վերին Ագուլիսը (Ագուլիս-ե Ալիյա – اگلیس علیا) և Ներքին Ագուլիսը (Ագուլիս-ե Սաֆլա – اگلیس سفلی)<sup>1228</sup>:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել են պարսկերեն կապվածագրեր, որ վերաբերում են Արցախի Թաղ-ե Թանգի (طاق تنگی - պարսկ. Փոքր կամ Նեղ Թաղ), և Թաղ-ե Ալիյա (طاق علیا - պարսկ. Վերին Թաղ) գյուղերի պատմությանը: Յիշյալ վավերագրերում այդ տեղանունները մշտապես նշվում են Առանի կամ Ղարաբաղի Դիզակի շրջանում, և որպես նրանց հարևան շրջան նշվում է Յաքարիի

<sup>1224</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 955, թղթ. 1ե, վավ. 1076:

<sup>1225</sup> Առ. Դավրիժեցի, Նշվ. աշխ., էջ 87, 104: Ըստ Ալիշանի դասախոսին Վարաժնունիք աշխարհն է (Ալիշան, Այրարատ, էջ 277)

<sup>1226</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյանց, Նշ. աշխ., էջ 220-1:

<sup>1227</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 3, 55:

<sup>1228</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, 1ա, վավ. 29, թղթ. 1բ, վավ. 154, 1դ, վավ. 545, թղթ. 1ե, վավ. 688, թղթ. 1ե, վավ. 1108, 1171 և այլն:

(Յագարա կամ Աղավնո գետի) շրջանը<sup>1229</sup>: Մի քանի կալվածագրերում հիշատակվում են հարևանությամբ գտնվող Տումի, Աղջաբենդ, Փարաջան, Յադրութ գյուղերը<sup>1230</sup>: Ուստի կարծում ենք, ճիշտ է հիշյալ տեղանունների նույնացումը Արցախի Բերձոր կամ Բերդաձոր գավառի ավերակ հայկական բնակավայրերի թվում Մ. Բարխուդարյանցի կողմից հիշատակված Յին Փոքր Թաղլար և Յին Մեծ Թաղլար տեղանունների հետ<sup>1231</sup>, որոնք իրենց հերթին Ալեքսան Յակոբյանը իրավացիորեն նույնացրել է Յին Թաղերի հետ<sup>1232</sup>: Յարկե նշել նաև, որ Վարանդայում նշվող Թաղլարի բնակիչները թե՛ ըստ Ս. Ջալալյանի և թե՛ ըստ Մ. Բարխուդարյանցի՝ եղել են Դիզակի վերը նշված Թաղլար կամ Թաղեր բնակավայրի վերաբնակիչները<sup>1233</sup>: Այս տվյալները և հիշյալ գյուղերի նշված չլինելը 1823 թ. Ղարաբաղի վիճակագրական նկարագրության մեջ, հիմք են տալիս ենթադրելու, որ Դիզակի Յին Թաղերի բնակիչները XIX դարի սկզբին ռուս-իրանական պատերազմների ընթացքում հավանաբար լքել են իրենց նախնական բնակավայրերը և այնուհետև վերահաստատվել Վարանդայի վերոհիշյալ վայրերում:

### **Տեղանքի առանձնահատկությունների ու պատմության հետ կապվող անվանումները**

Օտարալեզու հարևանները բնակավայրերին նոր անվանումներ էին տալիս՝ ելնելով նաև այն հանգամանքից, թե ինչպես էին նրանք ընկալում տվյալ բնակավայրն ու նրա բնակիչներին: Ընդ որում, հնարավոր էր, որ տեղի հայկական անվանումը նույնպես կապված լիներ բնակավայրի առանձնահատկությունների հետ, բայց չհամընկներ օտարների կողմից նրա ընկալման ձևի հետ:

Տեղանունների այս խմբի մեջ կարելի է նշել Քուրքեջ (کورکج) – Գյոռքեջ (گورکج) անվանումը, որ պարսկերեն վավերագրերում գործ էածվում Այրիվանք - Գեղարդի վանքի վերաբերությամբ<sup>1234</sup>: Ղ.

<sup>1229</sup> Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս . դիվան, թղթ. 2ա, վավ. 90, թղթ. 2բ, վավ. 137ա, թ. 128:  
<sup>1230</sup> Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս . դիվան, թղթ. 2բ, վավ. 137ա, 140, 148, 152:  
<sup>1231</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյանց, Նշ. աշխ., էջ 204:  
<sup>1232</sup> Տե՛ս Ա. Յակոբյան, Պատմա-աշխարհագրական և վիճակագրական հետազոտություններ (Արցախեւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 318:  
<sup>1233</sup> Տե՛ս Ս. Ջալալեան, Նշ. աշխ., մասն Բ, էջ 262, Մ. Բարխուդարյանց, Նշ. աշխ., էջ 204:  
<sup>1234</sup> Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 372, 382, թղթ. 1ե, վավ. 1380ա:

Ալ իշանը նշում է անվան հետևյալ տարբերակը՝ «Կեօրկեչ»<sup>1235</sup>: Սա թուրքախոս հարևանների կողմից վանքին տրված անվանումն է, որի մեջ իրար են կցվել հավանաբար թուրքերեն հնչողությամբ պարսկերեն «գերեզման» (Գյոռ - گور) բառը և հայերեն «խաչ» բառի օտարահունչ «քաչ-քեչ» տարբերակը՝ նկատի ունենալով այնտեղ գտնվող Պռոշ իշխանի ու նրա տոհմի գերեզմանատունն ու Գեղարդի վանքում պահվող Ս. Ամենափրկիչ խաչը կամ գեղարդը<sup>1236</sup>:

Գեղարքունիքի գավառը հիշատակվում է «Գյոքչա - کوجه» անվամբ<sup>1237</sup>, որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է «երկնագույն, կապույտ» և հանդիսանում Սևանա լճի օտար գունանունը: Իհարկե, երբ նկատի է առնվում հենց լիճը, Գյոքչա անվան հետ միաժամանակ նշվում է նաև «ծով – թուրք. դենիզ - دنگیز» բաղադրիչը:

Տեղանքի առանձնահատկություններով պայմանավորված է հանդես գալիս նաև Ղըրխբուլաղ (քառասուն աղբյուր – թուրք. قرخبلاغ) տեղանունը որպես Կոտայքի շրջանի անվանում ինչպես պարսկերեն վավերագրերում<sup>1238</sup>, այնպես էլ հետագայում ռուսական իշխանությունների կողմից կազմած վիճակագրական ուսումնասիրություններում<sup>1239</sup>:

Այս խմբի տեղանունների մեջ կարելի է նշել Յյուսիսային Արցախի Դաշքեսանի շրջանի Յարցհանգիստ բնակավայրը, որի թե՛ հայ կական և թե՛ օտար անվանումները (Չովդառ) կապվում են տեղանքի առանձնահատկությունների հետ: Յայ կական անվանումը՝ Յարցհանգիստ, այսինքն՝ Յարանց (հայրերի) գերեզման, կապվում է գյուղի հարավարևմտյան կողմի լեռան վրա եղած գերեզմանների հետ<sup>1240</sup>: Օտար անվանումը՝ Չովդառ (օսմ. պարսկ. չովդառ - چاودار, ճոն), հայ կական անվանման հետ զուգահեռաբար գործածվել է XVIII դարի վերջի գրավոր աղբյուրներում<sup>1241</sup>, ամենայն

<sup>1235</sup> Ղ. Ալ իշան, Այրարատ, էջ 347:

<sup>1236</sup> Ղ. Ալ իշան, Այրարատ, էջ 339-340:

<sup>1237</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, էջ 115, 137, 158, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 161, թղթ. 1է, վավ. 1076, թղթ. 1ը, վավ. 1585ա և այլն:

<sup>1238</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 8:

<sup>1239</sup> Մ. Шопен, նշվ. աշխ., էջ 509-510.

<sup>1240</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյանց, նշ. աշխ., էջ 309:

<sup>1241</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 241ա:

հավանականությունը ամբ կապվում է նրա հացառատ վայր լինելու հանգամանքի հետ, որի մասին ևս նշում է Մ. Բարխուդարյանը:

Տեղանքի առանձնատկությունների հետ էր կապված նաև հայ կական Կեչան (կամ Կիչան) գյուղի «Բալլուղայա» (թուրք. - بالوقايه - մեղրոտ լեռ) անվանումը, որը Յայկունին անվանում է «Մեղրոտ ժայռ»: Խաչենի շրջանում նշվող այս հայ կական գյուղը XIX դարում ուներ 15 ծուխբնակիչ և Ս. Աստվածածին եկեղեցի<sup>1242</sup>:

«Բալլուղայա» ձևով այս բնակավայրը պարսկական վավերագրերում հիշատակվում է XVIII դարի առաջին կեսից: Այդ տեղանունը նշվում է Խաչենի Առաջածոր (Դովչանլու) գյուղի ավագերեց Դավթի մելիքությանը<sup>1243</sup> համաձայնությամբ տված հայ կական գյուղերի կողմից կազմված համախոսականում<sup>1244</sup>: Ըստ պարսկալեզու պատմագիր Ներսեսովի՝ XVIII դարի կեսին «Խաչենի մահալում Ուլուբաբի թոռը ըմբոստանալով՝ տարբեր գյուղերից մարդ է հավաքում ու ամրանալով Բալլուղայայում, սկսում կռվել Փանահ խանի դեմ»<sup>1245</sup>: Այդպես է նշվում գյուղը XIX դարի առաջին կեսին Ղարաբաղի դատարանում գրված մի փաստաթղթում, ըստ որի Աղվանից կաթողիկոսությունը կալվածքներ ուներ Բալլուղայա գյուղում<sup>1246</sup>:

Տեղանքի առանձնատկությունների հետ է կապվում Առաջածոր գյուղի հայ կական անվանումը: Ըստ Մ. Բարխուդարյանի՝ Առաջածոր (կամ Առջածոր, Արջածոր) գյուղը գտնվում է Արցախի Խաչեն գավառում, դեպի Արծաթասար ձգվող լեռնաշղթայի հարավային ստորոտում, անդնդախոր ձորի եզրին<sup>1247</sup>: Իսկ գյուղի օտար անվանումը՝ «Դովչանլու կամ Դովչանլու - دوشانلو» հավանաբար ծագում է արաբերեն «պատվավոր, պատվարժան, մեծատուն-դովչան - ذوشان» արաբերեն բառից և նրան կցված որակը կամ ծագումը ցույց տվող - لولությունը քական վերջավորությունից: Այդ պարագայում նման անվանումը կապվում է նրա՝ Խաչենի Յասան-Ջալալյանների

<sup>1242</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 247:

<sup>1243</sup> Նրա մասին տե՛ս Բ. Կոստիկյան, Ղարաբաղի հայ մելիքները Նադիր շահի իշխանության տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, 2007, էջ 259:

<sup>1244</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 376: Այն հրատարակված տե՛ս Բ. Կոստիկյան, Ղարաբաղի հայ մելիքները ..., էջ 261:

<sup>1245</sup> Տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 50:

<sup>1246</sup> Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 286:

<sup>1247</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 257:

իշխանական տոհմին պատկանելու և նրա ճյուղի ներկայացուցիչների՝ այնտեղ բնակվելու հանգամանքի հետ, որի մասին նշվել է այդ գյուղին տրված սկզբնական այլալեզու փաստաթղթերում: Քանի որ յուրաքանչյուր փաստաթուղթ կազմվում էր՝ հենվելով նախկին փաստաթղթերի վրա, այդ բառը սկսել է ընկալվել որպես գյուղի անվանում և օգտագործվել «Առաջածոր» անվանը զուգահեռ: Իսկ կետերի կորուստը (دوشانلو- دوشانلو) և համապատասխան հնչյունափոխությունը հաճախակի երևույթ էր արաբատառ այբուբենն օգտագործող լեզուներում:

Առաջածորը եղել է Խաչենի Յասան-Ջալալյան տոհմի ժառանգների հայրենական կալվածքներից: Յիշյալ բնակավայրի արևելքում Անապատ կոչվող կիսաժայռափոր մատուռների առջևի ժայռաբեկորի վրա պահպանվել է XIII դարի մի արձանագրություն, որտեղ հիշատակվում են Խաչենի արքայի Ջալալ Դուլայի և նրա որդի Աթաբեկի անունները<sup>1248</sup>: Իսկ նույն գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում հնում պահվում էին երկու ձեռագիր մատյաններ՝ Ավետարան ու Աստվածաշունչ, որոնք ունեին կարևոր հիշատակարաններ գյուղի Խաչենի Յասան-Ջալալյաններին պատկանելու ու նրանց հետևորդների միջև տեղի ունեցած վեճի մասին<sup>1249</sup>: Յետագայում ևս Յասան-Ջալալյանների տոհմի մի ճյուղի ներկայացուցիչները բնակվում էին Առաջածոր գյուղում՝ վարելով այնտեղի հողերը իշխանությունը և անգամ երբեմն զբաղեցնելով Աղվանից կաթողիկոսության աթոռը, ինչպես, օրինակ, 1554թ. Դավիթ Առաջածորեցին<sup>1250</sup> և Եսայի Յասան-Ջալալյանը (1700-1728 թթ.)<sup>1251</sup>:

Ըստ Յայկունու՝ XIX դարում Առաջածորի բնակիչներից 60-ը կրում էին Շահեշանեան ազգանունը: Այդ ազգանունը ծագել է Շահանշահ կամ վերը նշված Շահանշե անունից: Շահանշահ անունը (թագավորաց թագավոր, արքայից արքա), լայնորեն տարածված էր Յասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչների շրջանում<sup>1252</sup>:

## Արհեստների ու գյուղերի այլ մասնագիտացման հետևապլոդ

<sup>1248</sup> Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 88:

<sup>1249</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյանց, Նշ. աշխ., էջ 257:

<sup>1250</sup> Տե՛ս Լ. Մկրտումյան, Նշվ. աշխ., էջ 219:

<sup>1251</sup> Տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, Նշ. աշխ., էջ 377:

<sup>1252</sup> Տե՛ս Յ. Աճառյան, Յայնց անձնանունների բառարան, Կ. Դ, Երևան, 1948, էջ 111-112:

## օտար անվանումները

Յետաքրքրական են հայկական տեղանուններին զուգահեռ օգտագործվող այն օտար անունները, որոնք մատնանշում են արհեստներ և որ տվյալ վայրում զբաղվել են այդ արհեստով: Այդ կարգի տեղանունները հիմնականում վերջանում են թյուրքական «-چى» վերջածանցով, և զարմանալի է, որ դրանք հաճախ կրկնվում են նաև հարևան շրջաններում:

Հայկական գյուղերի բնակիչները բացի հողագործություներից զբաղվում էին նաև արհեստներով: Ընդ որում, եթե թե՛ հայ, թե՛ թյուրք ու քուրդ կանայք զբաղվում էին գորգագործությամբ ու կարպետագործությամբ, ապա արհեստավորներ լինում էին հիմնականում հայ տղամարդիկ: Ուստի այդ օտար տեղանունները ևս մատնանշում են բնակավայրի հայկական լինելը, եթե ոչ ներկայումս, ապա գոնե անցյալում: Արցախի ու Չանգեզուրի հայկական գյուղերի բնակիչները զբաղվում էին կավագործությամբ (բրուտներ), քարտաշությամբ, դարբնագործությամբ, արծաթագործությամբ, կոշկակարությամբ և այլ արհեստներով<sup>1253</sup>:

Օտար տեղանունների այս խումբը, ամենայն հավանականությամբ տեղի բնակչության բնորոշման հարցում շատ ավելի մեծ կարևորություն ունենալով Արևելյան Հայաստանի հայ և օտարազգի բնակիչների շրջանում, հաճախ գործածություներից գրեթե լիովին դուրս է մղել բնակավայրի հին հայկական տարբերակը: Այսպիսին է իրավիճակը Արցախում և Սյունիքում եղած մի քանի «Ղազանչիների» (թյուրք. Կարսայագործ - قزغانچى, قزانچى, قزانچى) դեպքում: Ղազանչի է կոչվել Հյուսիսային Արցախի Կասում-Իսմայլովի շրջանի բնակավայրերից մեկը, որ XIX դարի վերջին պատկանել է Ռսկանապատցի կալվածատերեր Նազար Մելիք-Ծահնազարյանին և Լազար Էմմանուելյան Լազարյանցին<sup>1254</sup>: Նույն անվամբ մեկ այլ հայկական բնակավայր էլ կա Հյուսիսային Արցախի Գետաբեկի շրջանում: Մինչև 1770-ական թվականները հայաբնակ այդ

<sup>1253</sup> Տե՛ս С. П. Зелинский, Экономический быт государственных крестьян в Зангезурском уезде, Елисаветпольской губернии, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. IV, ч. I. Тифлис, 1886, сс. 103, 117:

<sup>1254</sup> Տե՛ս Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, էջ 427:

բնակավայրի անվան հայկական տարբերակը ևս մոռացվել է<sup>1255</sup>։  
 Հայ տնի է Ղազանչի – Շահկերտ բնակավայրը<sup>1256</sup> նաև Սիսականի  
 Երնջակ գավառում, որի բնակիչները հայ տնի էին որպես  
 պղնձագործներ (կամ կաթսայագործներ)<sup>1257</sup>։ Այստեղից գաղթած  
 բնակիչների մի առանձին թաղամաս է եղել Շուշի քաղաքում, որոնք  
 նույնպես հմուտ կաթսայագործներ էին<sup>1258</sup>։ Ղազանչի անունով  
 բնակավայրերից մեկը, ըստ Մ. Բարխուդարյանցի գտնվում էր  
 Ջրաբերդ գավառում, Կիչանի արևելահյուսիսային կողմում, Խաչեն  
 և Ջրաբերդ գավառների սահմանագլխի սարի հյուսիսային  
 կողմում<sup>1259</sup>։ Ղազանչի անվամբ մեծ թվով բնակավայրեր կան ոչ միայն  
 Արցախում, այլ և Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ, Սուրմալու  
 գավառներում<sup>1260</sup>։

Արցախի Ջրաբերդ գավառում նշվող Ղազանչի հայկական  
 բնակավայրի պատմությանը վերաբերող տվյալներ պահպանվել են  
 ինչպես տեղի արձանագրություններում, այնպես էլ Մատենադարանի  
 XVIII դարի պարսկերեն վավերագրերում<sup>1261</sup>։

Երևանի նահանգի Նորք գյուղի հայերեն անվան հետպարսկերեն  
 վավերագրերում հաճախ օգտագործվում է Չոլմաքչի (կամ Չոմլաքչի -  
 چلمکچی) թուրքերեն անվանումը, որը նշանակում է «բրուտ, կավագործ,  
 խեցեգործ» և հուշում այդ բնակավայրի բնակչության  
 արհեստագործական զբաղվածության մասին<sup>1262</sup>։ Գրեթե նույն  
 նշանակությունն ունի Չանախչի բառը «չանաղչի – چناقچی» («հողե  
 պնակներ, անոթներ պատրաստող»), որը Վարանդայի Ավետարանոց  
 գյուղի օտար անվանումն է։ Չանախչի էին կոչվում նաև Տանձուտ և  
 Համասրաբակ բնակավայրերը Հյուսիսային Արցախում<sup>1263</sup>։ Հարկ է  
 նշել, որ նույն անվամբ մի շարք բնակավայրեր են եղել թե՛

<sup>1255</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 66:

<sup>1256</sup> Շահկերտ ձևով տես Առ. Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 286:

<sup>1257</sup> Տե՛ս Ղ. Ալիջան, Սիսական, էջ 362:

<sup>1258</sup> Տե՛ս Ս. С. Лисиця, նշվ. աշխ., էջ 70:

<sup>1259</sup> Տե՛ս Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 271:

<sup>1260</sup> Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան՝ հ. III: Ե., 1991, էջ 497-498:

<sup>1261</sup> Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2, վավ. 49, 2բ, վավ. 190, նաև Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 3:

<sup>1262</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 34, 38; Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 382

<sup>1263</sup> Տե՛ս Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, էջ 80, 256:



Արևմտյան ու Արևելյան Յայաստանի տարբեր շրջաններում<sup>1264</sup> և թե՛ հրանի Ատրպատական նահանգում<sup>1265</sup>:

Տեղանունների այս խմբի մեջ կարելի է դիտարկել նաև «Ղուշջի - قوشچی» անվամբ հայտնի մի քանի տեղանուններ, որ հիշատակվում են պատմական Յայաստանի տարբեր շրջաններում: Յայաստանի ու Վրաստանի լեռնային շրջանները Արևելքում հայտնի էին որսի թռչունների և նրանց տեսակների առատությամբ<sup>1266</sup>: Որսը Սեֆյան արքունիքի սիրելի զբաղմունքներից էր և մի ամբողջ վարչություն *ամիր շեքարի* գլխավորությամբ զբաղվում էր որսի կենդանիների, այդ թվում բազենների ու այլ թռչունների խնամքով<sup>1267</sup>: Սեֆյան վարչական համակարգում կային «*ղուշջի*» կոչվող պաշտոնյաներ<sup>1268</sup>: Ըստ երևույթին, բազենների մատակարարումը պալատին ապահովում էին առանձին բնակավայրեր, որոնք բացի հողի մշակությունից, զբաղվում էին բազենների բուծմամբ ու բազմացմամբ, իսկ բազեներ որպես *վիշաք* շահի *խասսե-ե շարիֆեին* մատակարարում էին սահմանային շրջանների *հաքիմներն* ու *ամիրները*<sup>1269</sup>: Կային անգամ ուղեցույցներ (Գիրք բազենների մասին -*բազ-նամե* - بازنامه), որոնցում տրվում էին նրանց բուծման ու բազմացման, նաև բուժման եղանակները<sup>1270</sup>:

Ղուշջի անվամբ բնակավայրերից մեկը նշվում է Քաշաթաղի շրջանում, Մերիկ գյուղից շվմ հարավ-արևելք, Աղավնագետի աջ կողմում, որի մոտակայքում պահպանվել է «Մկնատամի խաչ» կոչված XII-XIII դարերի եկեղեցին<sup>1271</sup>: Նրա գեղջավազները 1691թ. իրենց համաձայնությունն են տալիս Քաշաթաղի Մելիք Յախնազարի որդու՝ Իլյասի ընտրությունը որպես իրենց լիազոր ներկայացուցիչ<sup>1272</sup>:

<sup>1264</sup> Տե՛ս Յայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. IV, Երևան, 1998, էջ 210-211:

<sup>1265</sup> Տե՛ս 321 ص. دهخدا، لغت نامه، جلد 9، ص.

<sup>1266</sup> A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, pp. 298-299.

<sup>1267</sup> Նույն տեղում, էջ 299-301.

<sup>1268</sup> Ղուշջիների մասին բազմիցս հիշատակվում է Սեֆյան պետության վարչա-քաղաքական կառուցվածքին վերաբերող Դասթուր ալ-մուլուք աշխատության մեջ, 239, 238, 229, 57-55, ص. 1385, تهران، ترجمه علی کردآبادی، تهران، 1385، ص. 268

<sup>1269</sup> القاب و مواجب دورة سلاطين صفوی، به تصحیح یوسف رحیم لو، مشهد، 1371، ص. 69.

<sup>1270</sup> Բազենների բուծման ու խնամքին նվիրված աշխատություններից մեկի ձեռագիր օրինակ կա նաև Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ֆոնդում և գրանցված է որպես ձեռ. հ. 183:

<sup>1271</sup> Տե՛ս Ս. Կարապետյան, Յրուսիսային Արցախ, էջ 138:

<sup>1272</sup> Տե՛ս Բ. Կոստիկյան, Քաշաթաղի 17-րդ դարի պատմությունը ..., էջ 170:

Նույնանուն բնակավայր գտնվել է նաև Սյունիքում, որը հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրության» Տաթևի թեմի հարկացուցակում<sup>1273</sup>: Ղուշչի անվամբ մեկ այլ բնակավայր է նշվում Գանձակի գավառում, որի հայկական անվանումը հաջակապ կամ հաջափակ է<sup>1274</sup>, իսկ նրա Ղուշչի անվանումը կապվում է շահ Աբբաս Ա-ի ժամանակներին վերաբերող մի ավանդության հետ: Ըստ այդ ավանդության՝ շահ Աբբասի արշավանքների ժամանակ Գրիգոր անունով մեկը ցանկանում է բազե բռնել շահին ընծայելու համար, բայց ժայռից ընկնում ու մահանում է: Ծահ Աբբասն էլ գյուղը նվիրում է տեղի համայնքին և այն անվանում Ղուշչի<sup>1275</sup>:

Ռուսական տիրապետության շրջանում Չանգեզուրի շրջանում նշվում են երկու տեղանուններ, որոնց հիմքում Ղուշչի բառն է. մեկը Ղուշչիլուն է, որն ուներ թյուրքալեզու բնակչություն, և մյուսը՝ հայաբնակ Ղուշչի Թազաբենդը՝ իր 74 ծուխ հայ բնակչությամբ<sup>1276</sup>: Ղուշչի անվամբ բնակավայր է նշվում նաև Այրարատ նահանգի Նիգ (Ապարան) գավառում, որն ըստ Ղ. Ալիշանի ունեն Աստուածածին եկեղեցի<sup>1277</sup> և XIX դարի սկզբի տվյալներով 72 շունչ հայ բնակչություն<sup>1278</sup>:

Ղուշչի բառի բովանդակային նշանակության հետ են կապվում Զյուսիսային Արցախի Ռսկանապատ գյուղի Սկնապատ-Սոնդորաբադ տարբերակները: Հայկական բարբառներում այն հիշատակվում է Սկնապատ ձևով<sup>1279</sup>, իսկ պարսկական աղբյուրներում՝ «Սոնդորաբադ - سنقرآباد» ձևով: «Սոնդորաբադ» տեղանունը պարսկական վավերագրերում հիշատակվում է XVII դարի սկզբից: Մասնավորապես՝ շահ Աբբաս Ա-ի 1607 թ. հրամանագրով քրիստոնյա Մելիք Նազարը նշանակվում է Ղարաբադի Սոնդորաբադի մելիք և առաջնորդ<sup>1280</sup>: Մելիք Սարուխանը և նրա եղբայր Նազարն այն հայ մելիքներից էին, որոնց շահ Աբբաս Ա-ն իր հետ տանում է Սպահան<sup>1281</sup>:

<sup>1273</sup> Տե՛ս Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբելեանի, Երևան, 1942, էջ 42:

<sup>1274</sup> Տե՛ս Ե. Լալայեան, Գանձակի գավառ, էջ 105:

<sup>1275</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 106:

<sup>1276</sup> Տե՛ս С. П. Зелинский, Экономический быт государственных крестьян в Зангезурском уезде, Елисаветпольской губернии, т. IV, ч. I, с. 158:

<sup>1277</sup> Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 254:

<sup>1278</sup> И. Шопен, նշվ. աշխ., էջ 587.

<sup>1279</sup> Տե՛ս Ս. Ջալալեան, նշվ. աշխ., մասն Ա, էջ 22:

<sup>1280</sup> Տե՛ս Тбилисская коллекция персидских фирманов, т. I, с. 20.

<sup>1281</sup> Առ. Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 63:

1637թ. շահ Սեֆի Ա-ի հրովարտակով նախկինում Մելիք Նազարին ու Մելիք Սարուխանին շնորհված Սոնդորաբադ ու Ղարաբեշիշ (Բրաջուր) գյուղերի համեսալ են\* շնորհվում է «Սաֆար Ղուլիին և այլ ղուլ շի ղուլ ամներին»<sup>1282</sup>: «Սոնդոր - سنقر» բառը պարսկերեն նշանակում է «որսորդական բազեի տեսակ», իսկ «աբադ - اباد» նույն «շեն, բնակավայր» ցույց տվող բաղադրիչն է, որը հաճախակի է հանդիպում թե՛ հայկական և թե՛ իրանական տեղանուններում: «Սոնդորաբադ» անվան թարգմանությունը և այն, որ նրա հարկերից բաժին է հատկացվում արքունի բազեապաններին, հուշում են, որ այդ բնակավայրում, հավանաբար, զբաղվում էին բազեների կամ որսի այլ թռչունների բուծմամբ: Այստեղից էլ, ամենայն հավանականությամբ, ծագում է հայկական անվանումը, որը սկզբնապես պետք է որ եղած լինի Որսկանապատ՝ կապվելով այնտեղ բազեների կամ որսականների<sup>1283</sup> բուծման հետ և ոչ Ոսկանապատ, որտեղ «որսկանը» պետք է հասկանալ «որսի թռչուն» իմաստով: Ի դեպ, նույն կերպ է ստուգաբանվում նաև Իրանի Քերմանշահի շրջանում գտնվող «Սոնդոր – سنقر» տեղանունը<sup>1284</sup>:

Յետագայում ևս, օրինակ, 1794 թ. Սարգիս կաթողիկոսի ընտրության կապակցությամբ կազմված պարսկերեն համախոսական գրության մեջ նշվում է Սոնդորաբադի Մելիք Յուսուֆի անունը<sup>1285</sup>, որը հուշում է, որ այդ շրջանում ևս գյուղը հայաբնակ էր և ուներ իր մելիքը: Ընդ որում, հայ ազգագրագետ Ե. Լալայանի ուսումնասիրության համապատասխան՝ Ոսկանապատը, ինչպես նաև Միրզիկ, Մուռութ և Բրաջուր գյուղերը պատկանում էին Մելիք Շահնազարյաններին, որոնցից Մելիք Յուսուֆ Գ-ը մահացել էր 1826 թ.<sup>1286</sup>:

Շատ հազվադեպ սակայն մի քանի հայաբնակ վայրերի անունները պարսկերեն վավերագրերում նշվում են մի քանի տարբերակներով՝ հիմնականում շփոթությունից խուսափելու նպատակով: Դա օգնում է ավելի հեշտ կողմնորոշվել այդ

<sup>1282</sup> Տե՛ս Тбилисская коллекция персидских фирманов, т. I, с. 37.

<sup>1283</sup> «Որսական» բառն ըստ Յայկազյան բառարանի ունեցել է «որսի թռչուն», «բազե» իմաստը (Նոր Բառգիրք Յայկազյան լեզուի, Կ. Բ, Երևան, 1981, էջ 538):

<sup>1284</sup> ایرج افشار سیستانی، پژوهش در نام شهرهای ایران، تهران، 1378، ص. 410.

<sup>1285</sup> Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս . դիվան, թղթ. 2բ, վավ. 241ա:

<sup>1286</sup> Տե՛ս Ե. Լալայան, Գանձակի գավառ, էջ 58:

բնակավայրի տեղադրության հարցում ու նրան վերաբերող պատմական տեղեկություններ քաղելիս ավելի վստահ օգտվել հայև օտար աղբյուրներից: Երկու անուններով են հանդես գալիս Թեղենիս-Քիրաշլու և Նորք-Չումաքչի (Չումաքչի) բնակավայրերը: Թեղենիս գյուղը Թեղենիք ձևով հիշատակվում է Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ<sup>1287</sup>: Երկու անվամբ են այդ գյուղերը նշվում մասնավորապես Էջմիածնի կալվածքների գնմանը վերաբերող 1431 թ. կալվածագրում<sup>1288</sup>: Յետագայի` XVII – XIX դարերի վավերագրերում պահպանվել են միայն «Քիրաշլու-Քիրաշլու» տարբերակները<sup>1289</sup>: XVII դարի պարսկերեն վավերագրերի տվյալների հիման վրա ճշգրտվում է այն, որ Սյունիքի Դարաբաս գյուղը դա հայոց Աղվերձ բնակավայրի օտար տարբերակն է, ինչպես պնդում է Նոր Դար պարբերականում (Է, 180) տպագրված ուղեգրության հեղինակը և որը փորձում է հերքել Ղ. Ալիշանը, թեև նշում է երկու գյուղերում ևս Ս. Ստեփանոս եկեղեցիների գոյություն մասին<sup>1290</sup>:

Երեք` Քեշիշքենդ, Այդինդարվիշ և Չելեբի[քենդ] անուններով է հանդես գալիս Էջմիածնի կալվածքներից մեկը հանդիսացող գյուղը, որն ըստ հետազոտողների գտնվել է Արայի լեռան արևելյան ստորոտին, ժամանակակից Սարալ անջ բնակավայրի մոտ<sup>1291</sup>:

Հայկական բնակավայրերի պարսկական վավերագրերում գրանցված օտար անվանումները հետագայում տեղ են գտնում Ռուսաստանի տիրապետության տակ անցած շրջաններին վերաբերող պաշտոնական գրանցումների մեջ, որոնք կատարվել են հիմնականում մահմեդական բեկերից ստացված տեղեկությունների հիման վրա<sup>1292</sup> և հիմք դարձել ադրբեջանցի կեղծարարների շահարկումների համար:

Այսպիսով, Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները օգնում են հիմնավոր կերպով լուսաբանել Արևելյան Հայաստանի բազմաթիվ օտար տեղանունների ծագման ու

<sup>1287</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Էջ 128:

<sup>1288</sup> Հ. Փախազյան, կալվածագրերը, պրակ Ա, վավ. 5, Էջ 72:

<sup>1289</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 209, թղթ. 1դ, վավ. 464, թղթ. 1ե, վավ. 1096, 1180:

<sup>1290</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Էջ 221:

<sup>1291</sup> Ս. Երևանցի, Ջամբռ, Էջ 488:

<sup>1292</sup> Պ. Ա. Չոբանյան, Ա. Ս. Վիրաբյան, Արցախի 1832-1833 մարդահամարի տվյալները, Աշխատանքային տետրեր, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված 3-4 (31-32), 2014, Էջ 88-89:

պատմության հանգամանքները, որոնք կապված չէին բնակավայրի  
էթնիկ կազմում տեղի ունեցած որևէ փոփոխության հետ: Այդ  
տեղանունները հիմնականում արտացոլում են բնակավայրերի  
սոցիալ-տնտեսական ու քաղաքական որոշ իրողությունները և օտար  
հարևանների պատկերացումներն ու վերաբերմունքը նրանց  
նկատմամբ՝ այդպիսով կարևոր նշանակություն ունենալով այդ  
բնակավայրերի պատմության համար:

- Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերը որպես հայոց պատմության սկզբնաղբյուրներ, մշտապես գտնվել են հայագետների ուշադրության կենտրոնում և օգտագործվել հայոց պատմության տարբեր հարցերի քննության ժամանակ: Պարսկերեն վավերագրերի տվյալների գիտական շրջանառությանը մեծապես նպաստել են որոշ հայագետների ուսումնասիրությունները և հատկապես նրանց բնագրերի ու թարգմանված տարբերակների գիտական հրատարակումը «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» հինգ արակներում: Այնուամենայնիվ, այդ ահռելի աղբյուրագիտական նյութի միայն մի փոքր մասն էլ իրաժեք կերպով օգտագործվել հայագիտության մեջ:

- Քննվող վավերագրերի հաղորդումները մատնանշում են Հայոց Եկեղեցու վաստակաշատ առաջնորդների դերը իրանական տիրապետության ներքո հայության իրավունքների պաշտպանության, հայ-իրանական փոխհարաբերությունների կառուցման գործում, որը հատկապես XVII-XVIII դարերում մեծապես հենվում էր Նոր Ջուղայի հայ համայնքի ու նրա ազդեցիկ վաճառականների գործունեության վրա: Պարսկերեն վավերագրերի տվյալներից ակնհայտ է, որ միաժամանակ Նոր Ջուղայի ազդեցությունը XVII-XVIII դարերում այնքան վճռորոշ էր, որ թույլ էր տալիս նրան միջամտել Հայոց կաթողիկոսների ընտրության հարցին, առաջ քաշել իրեն ցանկալի թեկնածուներին, ուղղորդել կաթողիկոսներին և վերահսկել նրանց գործունեությունը:

- Մատենադարանի պարսկերեն փաստաթղթերի մի մասը ստեղծվել ու ձեռք է բերվել Հայոց վանքերի ու խոշոր վանական համալիրների առաջնորդների ջանքերով՝ արտացոլելով նրանց պատմության շրջափուլերն ու կարևոր իրադարձությունները՝ ելնելով նրանց ու նրանց հպատակ հայ կական բնակավայրերի շահերից: Ուստի նրանք հայ ժողովրդի ու Հայոց Եկեղեցու պատմության անբաժան մասնիկն են և արժեքավոր սկզբնաղբյուրները:

- Հայ մելիքներին ու խոջաներին վերաբերող պարսկերեն վավերագրերի տվյալների հակիրճ ակնարկն ու

ուսումնասիրությունը մատնանշում են նրանց սերտ կապը ժամանակաշրջանի պատմական ընթացքի ու դեպքերի զարգացման հետ, արդյունքում նաև նրանց արժեքը հայ մելիքական տների պատմության ու նրանց առնչվող հարցերի քննության համար: Այդ տվյալները ճշգրտում ու լրացնում են ժամանակաշրջանի քաղաքական պատմության իրողություններն ու որոշ իրադարձությունների ընթացքը՝ կապելով այն հիշյալ անձանց քաղաքական գործունեության մանրամասների հետ:

- Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ու ժամանակաշրջանի մյուս աղբյուրների տվյալները թույլ են տալիս բացահայտել Յայոց եկեղեցու առաջնորդների և Իրանի կենտրոնական իշխանությունների ու Երևանի խանի միջև գրագրությունը վարող և պարսկերեն փաստաթղթերը կազմող գրագիրներից շատերի անունները, որոնց մի մասը իրանական կառավարության բարձրաստիճան գրագիրներն էին, մի քանիսն էլ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու Երևանի խանին ենթակա, հետագայում նաև ռուսական զանազան ատյաններում աշխատող գրագիրները: Այս վերջին տեսակի գրագիրների մեջ կային նաև հայազգի ծագում ունեցողները, որոնք այնքան էին հմտացել այս բնագավառում, որ անգամ ինքնուրույն պատմագրական երկերի հեղինակ էին:

- Մահմեդական տիրապետության տակ գտնվող թե՛ հայ Առաքելական և թե՛ քրիստոնեական մյուս դավանանքների առաջնորդների ձեռքում եղած տարալեզու պայմանագրերի (որոնց ուշ միջնադարի ընդօրինակությունների օրինակներ կան նաև Մատենադարանի պարսկերեն արխիվային հավաքածուի մեջ) աղբյուրագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք ունեն բովանդակային և ձևակերպումների ընդհանրություններ, որոնք խոսում են երկու տարբեր արաբերեն սկզբնաղբյուրներից ծագած լինելու մասին: Այդ պայմանագրերը ստեղծվել են IX-XIX դարերում պատմական հենքի վրա՝ որոշակի չափով պահպանելով իրենց սկզբնաղբյուրներում առկա պատմական իրողությունների հետքը և հարմարեցվելով ժամանակի ու միջավայրի պահանջներին: Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անուններից հայերի ու մյուս քրիստոնյաների հետ կնքված հրովարտակ-պայմանագրերը դարեր

շարունակ եղել են այն հենարանը, որի վրա խարսխվել է նրանց կացությանը մահմեդականների գերիշխանության պայմաններում: Հիշյալ փաստաթղթերն էլ ավելի կարևորվել են մահմեդականների կրոնական մոլեռանդության պոռթկումների և անհանդուրժողականության աճի շրջաններում: Հարմարեցվելով ժամանակի ու միջավայրի պահանջներին՝ հիշյալ փաստաթղթերը հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդների կողմից օգտագործվել են համայնքի դրությունը բարելավելու և մահմեդականների հետ հարաբերություններում ծագած խնդիրները կարգավորելու նպատակով:

- Մուհամմադ մարգարեի անուկից կնքված պայմանագրերում հայ գիմմիներին վերաբերող իրավական ձևակերպումները, նաև ընդհանրապես իրանական պետությանը հպատակ մահմեդական բնակչությանը ևս վերաբերող որոշ այլ օրենքներ արտացոլվել են Մատենադարանի XVII- XIX դարերի պարսկերեն վավերագրերում: Պարսկերեն վավերագրերի տվյալները որոշ կոնկրետացում են մտցնում այդ հարցերի մանրամասներում և հնարավորություն են տալիս հանգամանալից քննել և լուսաբանել իրանական տիրապետության տակ ապրող հայության կրոնա-քաղաքական իրավունքներն ու պարտավորությունները, իրավունքների պաշտպանվածության ուղիները և միջոցները: Քննվող վավերագրերի տվյալներն օգնում են պարզաբանումներ կատարել գիմմիների ժառանգական իրավունքին վերաբերող շիա իսլամի իմամ Ջաֆարին վերագրվող օրենքի նրբություններում, որոշել նրա շրջանառության դրվելու ժամանակը, պատճառները, հայության համար կործանարար հետևանքները և նրա դեմ Հայոց եկեղեցու առաջնորդների ձեռնարկած քայլերը:

- Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն փաստաթղթերով ձեռք են բերվել կալվածքներ, հարկային և այլ արտոնություններ, պաշտպանվել դրանք գանազան ոտնձգություններից: Եվ փաստորեն, այդ կերպ ամրագրվել են Էջմիածնի տնտեսական կայունությունը և իրավա-քաղաքական պաշտպանվածությունը իրանական պետության գերիշխանության պայմաններում: Այս պատճառով դիտարկված վավերագրերն այն



սկզբնաղբյուրներն են, որոնք առավել լիարժեք ու մանրամասն տվյալներ են բովանդակում Հայոց Եկեղեցու իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական դրույթանայ դժբանքի հարցերի շուրջ:

- Անժխտելի է Մատենադարանի պարսկերեն վավերագրերի արժեքն ու կարևորությունը իրանական իշխանությունների հետ Հայոց Եկեղեցու հոգևոր առաջնորդների փոխհարաբերությունների ենթաշերտերի և կաթողիկոսական աթոռակռիվների մանրամասների ուսումնասիրության տեսանկյունից: Այս աղբյուրների տվյալներով ճշգրտվում են Հայոց կաթողիկոսների կողմից տարբեր ժամանակահատվածներում իրենց իրավունքների հաստատման համար վճարվող փիշքաշիջափը և նրա, որպես հարկ, ամրագրված լինելը Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական թագավորական տների գերիշխանության շրջաններում: Վավերագրերի տվյալները նաև հստակություն են մտցնում կաթողիկոսական աթոռակռիվներում օտար միջամտության դերի, բնույթի ու դրդապատճառների հարցերում:

- Ատենախոսության մեջ դիտարկվող պարսկերեն վավերագրերը մանրամասն տվյալներով հարստացնում են Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսությունների ներքին այնպիսի խնդիրների պատմությունը, որպիսիք են Հայոց Եկեղեցու որոշ թեմերի ու բնակավայրերի թեմական պատկանելության շուրջ տեղի ունեցած վեճերի պատմությունը:

- Դիտարկվող շրջանի պարսկերեն հրովարտակները հայոց պատմության ցավոտ խնդիրներից մեկի՝ կաթոլիկական քարոզչության ու նրա դեմ Հայ Եկեղեցու առավել հեռատես ներկայացուցիչների մղած համառ պայքարի ու ձեռնարկած համարձակ քայլերի արժեքավոր սկզբնաղբյուրներն են: Այդ տվյալների համադրումը ժամանակաշրջանի մյուս աղբյուրների հետ հնարավորություն է տալիս լուսաբանել իրանահպատակ հայության շրջանում կաթոլիկական քարոզչության ընթացքը XVII-XVIII դարերում:

- Մատենադարանի պարսկերեն վավերագրերի առատ նյութը հնարավոր է դարձնում նրանց որպես պարսկալեզու գրագրության տարբեր տեսակների նմուշների լեզվա-ոճական, կաղապարային ու

կառուցվածքային առանձնահատկությունների զատորոշումն ու ուսումնասիրությունը պատմական զարգացման մեջ, որը մեկ անգամ ևս ապացուցում է այդ փաստաթղթերի կարևորությունը պարսկական վավերագրագիտության համար:

- Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները օգնում են հիմնավոր կերպով լուսաբանել Արևելյան Հայաստանի բազմաբնույթ օտար տեղանունների ծագման հանգամանքները, որոնք կապված չէին բնակավայրի էթնիկ կազմում տեղի ունեցած որևէ փոփոխության հետ: Այդ տեղանունները հիմնականում արտացոլում են բնակավայրերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական որոշ իրողությունները և օտար հարևանների պատկերացումներն ու վերաբերմունքը նրանց նկատմամբ՝ այդպիսով կարևոր նշանակություն ունենալով այդ բնակավայրերի պատմության համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

### ԱՆՏԻՊ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Իրանի պառլամենտի գրադարան, ձեռ. 8855, Էջ 3բ-6ա, (պարսկ.):
2. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա-1ե, 1գ-1ը, վավ. 30-828, 869-1787; թղթ. 2ա-2բ, վավ. 25-379; թղթ. 3, վավ. 130; թղթ. 4, վավ. 1-150; , թղթ. 242, վավ. 184 (պարսկ.):
3. Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 18-136 (պարսկ.):
4. Մատենադարան, Ձեռագրատանից ստացված նյութեր, թղթ. 80գ, վավ. 38, (պարսկ.):
5. Մատենադարան, հայերեն ձեռ. 2622, 2826, 2968:
6. Մատենադարան, արաբատառ ձեռ. 233, 239, 272, 357, 358 (պարսկ.):
7. Չարենցի անվան Գրականություն և Արվեստի թանգարան, Յ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 3945տ (պարսկ.):

### ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

8. Աբրահամ Կրետացի, Պատմություն, քնն. բնագիր, ռուս. թարգ., առաջ. թարգմ. Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հարտ., 1973, Էջ 312:
9. Աճառյան Յ., Վավերագրեր հայ-պարսկական յարաբերությունց մասին, Երևան, Համալսարան (ապսկետիպ), 1927, Էջ 94:
10. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմությունց, աշխ. Լ. Ա. Խանլարյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, Էջ 595:
11. Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ Մատենագիրներ IX – X դարեր, Ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 2005, Էջ 703:

12. Բարխուդարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երեւան, Գանձասար աստուածաբանական կենտրոն, 1999, էջ 416:
13. Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, տպ. Առաք. Աթոռոյ Ս. Յակոբեանց, 1915, էջ 668:
14. Դիվան Յայոց պատմութեան, գիրք Գ., Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը 1763-1767, Թիֆլիս, Տպ. Ս. Շարաձէ, 1894, էջ 891:
15. Դիվան Յայոց պատմութեան, գիրք Ը, Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը, Թիֆլիս, Ելեքորաշարժ տպարան օր. Ն. Աղանեանցի Պօլից, 1908, էջ 663:
16. Դիվան հայ վիմագրութեան, կազմեց Ս. Բարխուդարյան, պրակ IV, Գեղարքունիք, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 526:
17. Դիվան հայ վիմագրութեան, կազմեց Ս. Բարխուդարյան, պրակ V, Արցախ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 348:
18. Եղիա Կարնեցի, Դիվան, աշխ. Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, «Միտք» հրատ., 1968, էջ 368:
19. Եսայի Յասան Ջալալեանց, Պատմութիւն Յամառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց, 1868, էջ 58:
20. Չաքարիա Ագուլեցու որագրութիւնը, Երևան, Արմֆանի հրատ., 1938, էջ 200:
21. Չաքարիա Սարկաւագի պատմագրութիւն, հ. Ա, Բ, Գ, Վաղարշապատ, տպ. Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 1870, էջ 88, 144, 46:
22. Թովմայ Արծրունի եւ անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, քնն. քնագիրը, առաջաբանը և ծանոթագր. Մ. Յ. Դարբինյան-Մելիքյանի, Երեւան, Մատենադարան. «Մագաղաթ», 2006, էջ 504:
23. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, Երևան, Մատենադարան, 1942, էջ 46:
24. Կիրակոս Գանձակեցի, Յայոց պատմութիւն, Երևան, «Սովետական գրող», 1982, էջ 351:
25. Կոստիկեան Բ., Խաչատուր Աբովեանի կենսագրութեան մի մասնիկ, Յայկազյան հայագիտական հանդես, Բեյրութ, 2013 հ. 33, էջ 291-296:

26. Կոստիկյան Բ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները, պրակ Գ, Երևան, «Չանգակ-97», 2005, էջ 728, պրակ Դ, Երևան, Նաիրի, 2008, էջ 386:
27. Կոստիկյան Բ., Քաջաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Երևան, 2001, էջ 168-175:
28. Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ, հ. Ա կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, հ. Ա (1601-1620թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 826, հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 1016:
29. Հիսուն իրավունք ըստ Ալի Էբն Հոսեյնի, Երևան, հեղ. հրատ. «Ոսկան Երևանցի» տպ., 2014, էջ 59:
30. Հովհաննես Քոնեցի, Յաղագս քերականին, աշխ. Լ. Ս. Խաչիկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 258:
31. Ղաֆարյան Կ., Երևան. Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1975, էջ 250:
32. Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմության, կազմեց Վ. Գրիգորյանը, գիրք I, հատոր Ա, Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 2003, էջ 596, 804:
33. Ղևոնդ, Պատմություն, Երևան, «Սովետական գրող», 1982, էջ 182:
34. Մինասյան Լ. Գ., Երկու հրովարտակ Մահամմադ մարգարեից և Ալի ամիրապետից, Սպահան 1363 (1985), էջ 24:
35. Միրզա Յուսուֆ Ներսեսով, Թարիխե Սաֆի, աշխ. Բ. Կոստիկյանի, Երևան, «Չանգակ 97» հրատ., 2000, էջ 360:
36. Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 383:
37. Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխ. Ա. Մաղալյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2010, էջ 166:
38. Նալբանդյան Յ. Թ., Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 365:
39. Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 1984, էջ 1092:

40. Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, ԶՍՄ ԳԱ հրատ., 1979, էջ 448:
41. Սամուել Անեցի, Զաւաքմունքի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղաքաբեալ, Երևան, «Նաիրի», 2011, էջ 152:
42. Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Սեծն Զայաստան, Մասն Ա, Բ, Տիփսիս, տպ. Ներսիսեան Զոգևոր Զայոց ճեմարանի, 1842, 1858, էջ 234, 517:
43. Ստեփանոս Երեց, Պատմագիրք, աշխ. Թ. Մինասյան, Լ. Թումանյան, Վ. Բայբուրդյան, Զ. Կիրակոսյան, Թեհրան, «Ալիք» տպ., 2017, էջ 338:
44. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմութիւն, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 616:
45. Ստեփանոս Օրբելեան մետրապոլիտ Սիւնեաց, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Ա, Բ, Փարիզ, ի գործատան Կ. Վ. Շահնազարեանց, 1859, էջ 346, 371:
46. Փափազյան Զ., Երկու նորահայտիլ խանական յառլիղներ, Բանբեր Մատենադարանի, հ. 6, Երևան, 1962, էջ 379-401:
47. Փափազյան Զ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Զրովարտականեր, պրակ Ա, Երևան, ԶՍՄ ԳԱ հրատ., 1956, էջ 315, պրակ Բ, Երևան, ԶՍՄ ԳԱ հրատ., 1959, էջ 593:
48. Փափազյան Զ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, կալվածագրերը, պրակ Ա, Երևան, ԶՍՄ ԳԱ հրատ., 1968, էջ 640:
49. Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. I, II, III, VI ч. II, VIII, Тифлис, изд. Тип. Главного Управления Наместника Кавказского, 1866, 1868, 1869, 1875, 1881, с. 816, 1237, 767, 954, 1033.
50. Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. 2, ч. I, II, сост. П. Арутюнян, С. А. Тер-Авакимова, Ереван, изд. АН АрмССР, 1964, 1967, с. 396, с. 420.
51. Армяно-русские отношения, т. 4, сост. А. В. Алексанян, В. М. Мартиросян, М. Г. Нерсисян, П. А. Чобанян, Ереван, изд. АН АрмССР, 1990, с. 590.
52. Зайцев И., Костилян К., Указ сефевидского шаха Сулеймана еврейской общине Гиляна из собрания Государственной публичной исторической библиотеки в Москве, Ирано-славика, 2010, н. 2 (22), сс. 48-49.

53. Закарий Канакерци, Хроника, перев. с арм., пред. И комментарий М. О. Дарбинян-Меликян, Москва, изд. "Наука", 1969, с. 320.
54. Описание Карабагской провинции, составленное в 1823 году по распоряжению главноуправляющего в Грузии Ермоловым, действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м. Тифлис, тип. Главн. Управления Наместник Кавказского, 1866, с. 272.
55. Присоединение Восточной Армении к России, ред. Ц. Агаян, т. 1, 2, Ереван, изд. АН АССР, 1972, 1978, с. 715, 658.
56. Рашид ад-Дин, Переписка, пер., введ. И коммент. А. И. Фалиной, Москва, "Наука", 1979, с. 498.
57. Рашид-ад-Дин, Сборник летописей, т. III. Москва-Ленинград, изд. АН СССР, 1946, с. 340.
58. Тбилисская коллекция персидских фирманов, т. I, подг. М. Тодуа, Кутаиси, 1995, т. II, подг. М. Тодуа, К. Шамс, Тбилиси, 1989, сс. 1128, 1176.
59. Хубов Е., Описание достопамятныхъ произшествій въ Арменіи, Санктпетербург, 1811, с. 130.
60. Шараф-хан Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. II. Москва, Наука, 1976, с. 350.
61. Шопен И., Исторический памятник состояния Армянской области въ эпоху ея присоединения къ Российской – империи, Санктпетербург, тип. Имп. Академии Наукъ, 1852, с. 1235.
62. A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the 17th and 18th Centuries, vol. I, II, London, Eyre & Spottiswoode, 1939, p. 720, 674.
63. A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, translated from the Latin and annotated by Collette Ouahes and Willem Floor, Washington, Mage publishers, 2014, p. 550.
64. Binning R., A Journal of Two Years' travel in Persia, Ceylon, etc. vol. I, II, London: Wm. H. Allen and Co., 7, Leadenhall street, 1857, pp. 433, 438.
65. Emin Jozeph, Life and Adventures of Joseph Emin, Calcutta, published by the Baptist Mission Press, 1918, p. 532.
66. Histoire Nestorienne (Chronique de Seert), Patrologia Orientalis, vol. 13, Paris, 1918, pp. 273-286.
67. K. Kostikyan, Documents in Persian on the St. Thaddeus Monastery of Maku, Aramazd, vol. IV, 2, Yerevan, 2009, pp. 159-175.

68. Mufakkhkam, Muhsin. "Asnad va mukatibat-i tarikhi." Barrasi-ha-yi tarikhi 2, 3-4 (1346/1967): pp. 363-66. 363-64 (<http://www.asnad.org/en/document/22/>).
69. Myr Davoud Zadour de Melik Schahnazar, Notices sur L'Etat Actuel Dela Perse, Paris 1818, p. 360.
70. Raphael Du Mans, L'etat de la Perse en 1660, Paris, 1890, p. 464.
71. Tadhkirat al-mulūk, A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, printed by W. Heffer and sons LTD., 1943, p. 348.
72. امیر صدر الدین ابراهیم امینی هروی، فتوحات شاهی، تاریخ صفوی از آغاز تا سال 920 ه.ق.، تهران، انجمن آثار و مفاخر فرهنگی، 1383، ص. 642
73. بها الدین محمد بن حسین عاملی، جامع عباسی، سنه 1331، ص. 306
74. تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، تهران، کتابفروشی زوار، 1332، ص. 120.
75. جهانگشای خاقان (تاریخ شاه اسماعیل) تألیف در 948، اسلامآباد، مرکز تحقیقات نارسی ایران و پاکستان، 1406، ص. 663.
76. چهل سند فارسی از جمهوری آذربایجان، تیمور مناف اوغلی موسوی، ترجمه: از پرویز زارع شاهمرسی، مرکز اسناد و تاریخ دیپلوماسی، تهران 1386، ص. 176.
77. دستور الملوك میرزا رفیعا، به کوشش و تصحیح محمد اسماعیل مارچینکوفسکی، ترجمه علی کردآبادی، تهران، 1385، ص. 672 .
78. دنبلی عبد الرزاق مفتون، مآثر سلطانیه، تهران، انتشارات ابن سینا، 1351، ص. 255
79. دنبلی عبد الرزاق، تذکره نگارستان دارا، به کوشش عبدالرسول خیام پور، جلد 1، تبریز، 1343، ص. 220
80. رضا قلیخان هدایت، روضه الصفاء ناصری، جلد 9، تهران، انتشارات کتابفروشیهای پیروز، 1339، ص. 768.
81. سفرنامه ناصر خسرو قبادیانی، از انتشارات آیینۀ هنر محمد سلحشور، 1368، ص. 122
82. شاه طهماسب صفوی: مجموعه اسناد و مکاتبات تاریخی همراه با یادداشت‌های تفضیلی، عبدالحسین نوایی 1368
83. شرف الدین علی یزدی، ظفرنامه، جلد 1، 2، تهران کتابخانه، موزه و مرکز اسناد مجلس شورای اسلامی، 1387، ص. 1950
84. طهرانی ابو بکر، کتاب دیاربکریه تاریخ حسن بیک آق قوینلو و اسلاف او، جزو اول، جزو ثانی، بتحصیص و اهتمام نجاتی لوغال فاروق سومر، انگری، کتابخانه طهوری، 1356، ص. 652.
85. عهدنامه محمد پیغمبر، اصفهان، مطبعه میرزا علی اصغر، 1327، ص. 15.
86. فضل الله روزبهان خنجی اصفهانی، تاریخ عالم آرای امینی، تصحیح محمد اکبر عشق، تهران، میراث مکتوب، 1382، ص. 528
87. قایم مقامی جهانگیر، یکصد و پنجاه سند تاریخی از جلایریان تا پهلوی، انتشارات ارتش، 1348، ص. 432
88. قزوینی حمدالله مستوفی، نزهة القلوب، تهران، طهوری، 1336، ص. 182.
89. مختصر مفید (جغرافیای ایران زمین در عصر صفوی) بکوشش ایرج افشار با همکاری محمد رضا ابویی مهریزی، تهران، انتشارات بنیاد موقوفات دکتر محمود افشار، 1390، ص. 486



90. منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، به کوشش رسول جعفریان، تهران، کتابخانه موزه و مرکز اسناد مجلس شورای اسلامی، 1388، ص. 345.
91. نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقیق و گردآورده دکتر محمد حمیدالله، تهران، سروش، 1377، ص. 800.
92. نصیری میرزا علی نقی، القاب و مواجب دوره دور سلاطین صفوی، به تصحیح یوسف رحیم لو، مشهد، دانشگاه فردوسی، 1371، ص. 157.
93. نظام الدین شامی، ظفرنامه، تهران، انتشارات بامداد، 1364، ص. 368.
94. نوایی عبد الحسین، شاه عباس: مجموعه اسناد و مکاتبات تاریخی همراه با یادداشت های تفضیلی، تهران، انتشارات بنیاد فرهنگ ایران، 1365، ص. 286.
95. هاشمی، شکوه السادات اعرابی، ارامنه جلفای نو در عصر صفوی، تهران، سازمان اسناد و کتابخانه ملی جمهوری اسلامی ایران، 1394، ص. 449.

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

96. Ալ իշ ան Ղ., Այ րարատ, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, Էջ 590:
97. Ալ իշ ան Ղ., Արցախ, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 2003, Էջ 121:
98. Ալ իշ ան Ղ., Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, ի Միփթարայ վանս ի Ս. Ղազար, 1893, Էջ 564:
99. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, ԵՊՀ հրատ., 1948, Էջ 684:
100. Աճեմյան Հ., Պատմական Թավրիզի հին հայոցոլոնը, Դիվան Ատրպատականի հին հայոց պատմության, հ. 1, Բեյրութ, 1980, Էջ 49-80:
101. Այվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, Լուսակն, 2003, Էջ 343:
102. Անասեան Յ. Ս., Թուրքական Ֆուլթուկվաթը եւ հայերը, Մանրերկեր, Լոս Անջելես, հրատ. Ամերիկահայ միջազգային կոլեջի, 1988, Էջ 581-620:
103. Անասեան Յ. Ս., Մահմեդականութիւնը եւ քրիստոնեայ հարկատուները, Ա. Մահմեդի Դաշնագիրը, Բ. Ալիի հրովարտակը, Մանրերկեր, Լոս Անջելես, հրատ. Ամերիկահայ միջազգային կոլեջի, 1988, Էջ 627-632:

104. Անասյան Յ. Ս., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 412:
105. Ասատրյան Ս. Գ., Արցախի տեղանունների դասակարգման հարցի շուրջ, Արցախ. ժողովրդագրություն և տեղանվանակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում (Կոլեկտիվ մենագրություն), Աշխատանքային տետրեր 3-4 (31-32). 2014, էջ 31-35:
106. Բադալյան Գ. Մ., Հայոց արևելից կողմերի տեղանուններն ըստ հայկական սկզբնաղբյուրների, Արցախ. ժողովրդագրություն և տեղանվանակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում (Կոլեկտիվ մենագրություն), Աշխատանքային տետրեր 3-4 (31-32). 2014, էջ 36-69:
107. Բայբուրդյան Վ. Ա., Արևելյան Հայաստանում միսիոներների գործունեության պատմությունից, ՊԲՀ, 1989, № 2, էջ 147-157:
108. Բոզոյան Ա. Ա., Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, Երևան, «Գիտություն» հրատ., 1995, էջ 256:
109. Գալեմբեարեան Հ. Գրիգորիս ծ.վ., Կենսագրություններ Ա., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1915, էջ 384:
110. Գրիգորյան Վ., Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 228:
111. Դանիելյան Գ. Գ., Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2016, էջ 200-288:
112. Դիլոյան Վ. Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 1989, էջ 356:
113. Երանյան Գ., Հայերի բռնի իսլամացման և մահմեդականություն ընդունելու դեպքերը XIV – XV դդ., Պատմաբանասիրական Հանդես, 1, Երևան, 2016, էջ 43-59:

114. Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, էջ 153:
115. Երիցեանց Ա. Դ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը եւ Կովկասի հայք XIX դարում, մաս Ա (1800 - 1832), Թիֆլիզ, տպ. Մ. Շարածեի, 1894, էջ 658:
116. Երևանցի Ս., Ջամբռ, Երևան, Մուղնի հրատ., 2003, էջ 546:
117. Թորոսյան Հ., Էջմիածնի վանական տնտեսությունը XV- XVIII դարերում, Երևան, Մեսրոպարք. Աշճեան մատենաշար, 2007, էջ 266
118. Թփփեան Յ., Տուրակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Բ, 1878-1898, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1898, 1900, էջ 112, 74:
119. Լալայեան Ե., Գանձակի գաւառ, Ա. Հատոր, Արտատպված Ազգագրական հանդիսից, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1901, էջ 152:
120. Լալայեան Ե., Նախնական կամ Նախիջեւանի ոստիկանական շրջան, արտատպված Ազգագրական հանդեսից, Թիֆլիս, էջ 65:
121. Կարապետյան Մ., Իմամ Ջաֆարի օրենքը և արևելահայերը, Պատմա-բանասիրական հանդես, 1988, թիվ 1, էջ 219-221:
122. Կարապետյան Մ., Հայ կաթողիկէ թեմը եւ Էթնոգրաւանական գործընթացները Նախիջեւանում XVII-XVIII դարերում, Հ. Սահակ Ճեմճեմեան, Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հռոմը, Վենետիկ Ս. Ղազար, 2000, էջ 1-14:
123. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 247:
124. Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2004, էջ 583:
125. Կիլիկեւերեան Բ. Եսս., Իսլամը հայ մատենագրութեան մէջ, Վիեննա, Մխիթարեան տպ., էջ 240:
126. Կոստիկյան Ք., Արցախի տեղանուններն ըստ պարսկական աղբյուրների, Արցախ. ժողովրդագրության և տեղանվանակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում (կուլեկտիվ մենագրություն), Աշխատանքային տետրեր 3-4 (31-32). 2014, էջ 70-81:

127. Կոստիկյան Բ., Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, «Չանգակ 97», 2005, էջ 303-329:
128. Կոստիկյան Բ., Երևանի խանության հայ մելիքները ժողովրդի սկզբին Յարալային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտության սրման շրջանում, Յանդես ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2017, թիվ 1-12, էջ 221-234:
129. Կոստիկյան Բ., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-31թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Երևան, «Չանգակ 97», 2004, էջ 356-371:
130. Կոստիկյան Բ., Կաթուղիկ քարոզչությունը Իրանում և հայ իրականությունը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, «Չանգակ 97», 2002, էջ 200-219:
131. Կոստիկյան Բ., Յայ-իրանական հարաբերությունները ժողովրդի առաջին երեսնամյակում, Լևոն Խաչիկյան, 90 (Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի), Երևան, «Նաիրի», 2010, էջ 182-190:
132. Կոստիկյան Բ., Յայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները պարսկերեն վավերագրերում, Յայկազան հայագիտական հանդես, Բեյրութ, 2017, հ. 37, էջ 123-153:
133. Կոստիկյան Բ., Յայոց եկեղեցու շահերի և հայ ապահպանության համար Ղազար Ջահկեցի կաթողիկոսի ձեռք բերած շահական հրովարտակների մասին, Բանբեր Մատենադարանի, 18, Երևան, 2008, էջ 115-123:
134. Կոստիկյան Բ., Ղարաբաղի հայ մելիքները Նաիրի շահի իշխանության տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, Ասողիկ, 2007, էջ 257-279:
135. Կոստիկյան Բ., Մկրտումյան Գ., Մուհամմադ մարգարեի ու Ալի իբն Աբու Թալիբ խալիֆայի անունից հայերի հետ կնքված դաշնագրերը որպես պատմական փաստաթղթեր, Բանբեր հայագիտության, 2015, թ. 3(9), էջ 118-149:

136. Կոստիկյան Բ., Նոր Ջուղան Իրանի Նադիր շահի իշխանության շրջանում, Հանդես ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2016, էջ 272-314:
137. Կոստիկյան Բ., Պարսկալեզու վավերագրերը Մակվի Ս. Թադեի վանքի մասին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXV, Երևան, 2006, էջ 351-370:
138. Կոստիկյան Բ., Սյունիքի Օրբելյանները XVIII-XIX դարերում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIX, Երևան, 2000, էջ 70-78:
139. Կոստիկյան Բ., Տաթևի վանքի XVII դարի երկրորդ կեսի պատմությունը ըստ պարսկալեզու հրովարտակաների տվյալների, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, XXII, Երևան, 2003, էջ 186 – 200:
140. Հախնազարյան Ա., Արտազի երեք վանքերը, Երևան, ՀՃՈՒ հրատ., 2012, էջ 351:
141. Հակոբյան Ա. Հ., Սիմոնյան Հ. Ա., Դադիվանքի նորահայտ արձանագրությունը և Տաբլի տեղադրության հարցը, Պատմաբանասիրական հանդես (ՊԲՀ), Երևան, 1998, հմ. 1–2, էջ 227-232:
142. Հակոբյան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիճակագրական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, Մխթարեան հրատ. 2009, էջ 476:
143. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. Ա, Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1951, 1956, էջ 456, 686:
144. Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-5, Երևան, ԵՊՀ հրատ., 1986, 1988, 1991, 1998, 2001, էջ 990, 992, 992, 810, 912:
145. Հակոբյան Տ. Հ., Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIII դարերում), Արևելագիտական ժողովածու, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 266-284:
146. Հասրաթյան Ա., Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 278:

147. Հարությունյան Բ., Հայոց Արևելից կողմերի և Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր, Հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 348:
148. Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 696:
149. Ղուլյան Ա., Արցախի ու Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2001, էջ 183:
150. Մակարյան Վ., Ալի իբն Աբու Թալիբի՝ քրիստոնյաներին տրված երաշխավորագիրը, Լևոն Խաչիկյան, 90, Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսուսամյակին նվիրված միջազգային գիտաժողովի, Երևան, «Նաիրի», 2010, էջ 170-174:
151. Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 326:
152. Մայր Յուզակ Հայերեն Ձեռագրաց Մաշտոցի անունի Մատենադարանի, Կ. Ը, Երեւան, «Նաիրի» հրատ., 2013, էջ 1560:
153. Մարտոյան Թ., «Կարմելյանների տարագրությունը» որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմագիտական աղբյուր, Երևան, Լիմուշ հրատ., 2011, էջ 142:
154. Մինասյան Լ. Գ., Դիվան Ս. Ամենափրկիչ վանքի 1606-1960, Նոր Ջուղա, տպ. Ս. Ամենափրկիչ վանքի, 1983, էջ 134:
155. Մկրտումյան Գ., Հրովարտակ-պայմանագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր VII-XII դդ., Երևան, «Մուղնի» հրատ., 2017, էջ 200:
156. Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX, դարերում, Երևան, Տնտեսագետ, 2006, էջ 270:
157. Նոր Բազիրք Հայկազան Լեզուի, կազմեցին Հ. Գաբրիել Ալետիքեան, Հ. Խաչատուր Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Ալգերեան, Կ. Ա. Բ, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 1979, 1981, էջ 1140, 1066:
158. Շահխաթունեանց Հ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ Գաւառացն Արարատայ, Կ. Ա. Բ, ի Կաթողիկէ Էջմիածին, 1842, էջ 294, 410:

159. Շերմազանեան Գ., Նիւթեր ազգային պատմութեան համար. Երեւելի հայկազունքի Պարսկաստան, Ռոստով, տպ. Յովհաննու Տեր-Աբրահամեան, 1890, էջ 400:
160. Ոսկեան Զ. Զամազասպ, Վասպուրական-Վանի վանքերը, Բ. Մաս, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1942, էջ 385:
161. Չոբանյան Պ. Ա., Վիրաբյան Ա. Ս., Արցախի 1832-1833 մարդահամարի տվյալները, Աշխատանքային տետրեր, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված 3-4 (31-32), 2014, էջ 87-93:
162. Պողոսյան Ֆ., Խամսայի մեկիքների իրավունքներն ու պարտականությունները, Բանբեր Հայաստանի արխիվների, 1966, № 1, էջ 197-208:
163. Սաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հ. Ա., Երուսաղէմ, տպ. Սրբոյ Յակոբեանց, 1931, էջ 688:
164. Սարգսյան Ա., Արցախ. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, Երևան, «Հայ Էդիթ», 1996, էջ 79:
165. Սմբատեանց Մ. արք., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք 'ի Շամախոյ թեմի, Տփղիս, տպարան Մովսէս Վարդանեանցի, 1896, էջ 594:
166. Սմբատեանց Մ. արք., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1895, էջ 843:
167. Ստեփանյան Գ., Բաբվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, Մեսրոպ արք. Աշճեան Մատենաշար, 2010, էջ 248:
168. Ստեփանյան Զ., Հայերի ներդրումը Օսմանյան կայսրությունում, Երևան, ԳԱԱ պրինտհրատ., 2011, էջ 744:
169. Տէր Յովհանեանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայոս որ յ Ասպահան, հ. Ա, Բ, Նոր Ջուղա, տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց, 1880, 1881, էջ 497, 317
170. Տէր Յովհաննիսեանց Գ., Բաղտասար Մետրապօլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, Փորձ, Տփղիս, 1880, հ. 5, էջ 131-164:

171. Տեր-Մկրտչեան Կ., Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք, Նիւթեր հայ մելիքութեան մասին, Ս. Էջմիածին, Ելեքտրաշարժ Տպ. Մայր Աթոռոյ, 1914, Էջ 233:
172. Տեր-Վարդանեան Գ., Նոր Ջուղայի եւ Յարակից շրջանների հայկական ձեռագրական արուեստը, Նիւթեր Մաշտոցեան Մատենադարանի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ցուցահանդեսների, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2005, Էջ 158:
173. Բաֆֆի, Խամսայի մելիքություններ, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, Հայ պետհրատ, 1964, Էջ 161-383:
174. Տուցակ Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթաբյան, հ. Ա, Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965, 1970, Էջ 1635, 1532:
175. Ուլլուբաբյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, Էջ 454:
176. Փափազյան Հ., Սեֆյան իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1956, № 3, Էջ 85-99:
177. Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 – 1728 թթ. թուրքական հարկացուցակները, Բանբեր Մատենադարանի, № 5, Երևան, 1960, Էջ 431-465:
178. Փափազյան Հ., Վանական կալվածքների սեփականատիրական միջանի առանձնահատկություններ, Բանբեր Մատենադարանի, № 10, Երևան, 1971, Էջ 237-250:
179. Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (Ժեղար), Տեղեկագիր 1960, հ. 7-8, Էջ 21-40:
180. Օրմանյան Մ. Արք., Ազգապատում, հ. Բ, Գ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2001, Էջ 3894, 5970:
181. Ֆրանգեան Ե., Ատրպատական (պատկերազարդ ժողովածու), Թիֆլիս, Հերմես, 1905, Էջ 296:
182. Абаев В. И., Этимологические заметки, «Труды Института языкознания. АН СССР», VI, М., 1956, стр. 450-457.
183. Арунова М. Р. И Ашрафян, К. З., Государство Надир шаха Афшара, Москва, изд. Восточной Литературы, 1958, с. 284.



184. Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке, Ереван, изд. АН АрмССР, 1969, с. 165.
185. Зелинский С. П., Экономический быт государственных крестьян в Зангезурском уезде, Елисаветпольской губернии, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. IV, ч. I. Тифлис, тип. Меликова, 1886, с. 221.
186. Кавказский сборник, т. 21, Тифлис, тип. Окр. Штаба Кавк. Военного Округа, 1900, с. 184.
187. Костикян К., Персоязычные писцы и переписчики Закавказья конца XVIII- начала XIX в. Армения – Иран: История. Культура. Современные перспективы взаимодействий: Сборник статей (Моск. гос. университет им. М. В. Ломоносова, Ин-т стран Азии и Африки); [рук. проекта М. С. Мейер; сост. Б. С. Зулумян; редкол.: И. В. Иванов и др.], Москва; Ключ.-С., 2013, (с. 168), сс. 87-91.
188. Костикян К., Указы Ереванских ханов как источники истории армянского народа, Проблемы источниковедения, историографии и истории Востока, Луганск, ДЗ «ЛНУ имени Тараса Шевченко, 2013, сс. 111-117.
189. Лисициан С., Армяне Нагорного Карабаха, Ереван, изд. АН АрмССР, 1992, с. 240.
190. Мартиросян А. У., Армянские поселения на территории Ирана в XI-XV вв., Ереван, «Айастан» 1990, с. 258.
191. Панахиян М. Г., О режиме капитуляций в Иране (1568-1715), Автореферат диссертации, Москва, 1962, с. 12.
192. Папазян А., Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, изд. АН АрмССР, 1972, с. 302.
193. Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIXвв., Ленинград, изд. Ленинградского гос. университета им. А. А. Жданова, 1949, с. 383.
194. Семенова Л. А., Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, Ближний и средний Восток. Сборник статей, Москва, изд. Вост. Лит., 1962, с. 94-110.
195. Чобанян П., Проблема легитимности карабахских ханов в контексте политической истории Шуши, Պիտիւնի փրփիւնի իրավան հանդես, 1 (195), Երևան, 2014, էջ 164-182:

196. Busse H., “‘ABBĀS MĪRZĀ QAJAR,” *Encyclopaedia Iranica*, I/1, pp. 79-84, available online at <http://www.iranicaonline.org/articles/abbas-mirza-qajar> (accessed on 30 December 2012).
197. The Cambridge History of Iran, vol. 6 (The Timurid and Safavid Periods), edited by P. Jackson, Cambridge-London-New York-New Rochelle-Melbourne Sydney, Cambridge University Press, p. 1087.
198. The Cambridge History of Iran, vol. 7 (from Nadir Shah to the Islamic Period), Cambridge, New York, Port Chester, Melbourne, Sydney, Cambridge University Press, 1991, p. 1072.
199. Dadoyan Seta B., *The Armenians in the Medieval Islamic World. Paradigms of Interaction seventh to Fourteenth Centuries*, v. I, Transaction Publishers New Brunswick (U.S.A.) and London (U.K.), 2011, p. 235.
200. Emon A. M., *Religious pluralism and Islamic law. Dhimmīs and Others in the Empire of Law*, Oxford University Press, 2012, p. 368.
201. Floor W., *The Chaparkhāna System in Qajar Iran*, Iran, vol. 39 (2001), British Institute of Persian Studies, pp. 257-291.
202. Ghougassian V., *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the 17<sup>th</sup> Century*, Facsimile of Doctoral Dissertation, Columbia University, A Bell and Howell Company, 1995, p. 364.
203. Gignoux P., Michael Bates, Dirhem, *Encyclopaedia Iranica*, Vol. VII, Fasc.4, pp. 424-428, տե՛ս նաև <http://www.iranicaonline.org/articles/dirham>
204. Gignoux P., Michael Bates, Dinar, *Encyclopaedia Iranica*, Vol. VII, Fasc. 4, pp. 412-416 <http://www.iranicaonline.org/articles/dinar>
205. Hewsen R., *The Meliks of Eastern Armenia*, VI, *The House of Ałamaleanc՝*, Բաղձաւորութեան, 1984, թ. 3-4, էջ 319-334:
206. Hodgson M.G.S., Djafar al-Sadiq, *The Encyclopedia of Islam*, vol. II, pp. 374-375.
207. Kostikyan K. *Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran*, Yerevan “Nairi” publ., 2017, p. 348.
208. Kostikyan K., *European Catholic Missionary Propaganda among the Armenian population of Safavid Iran, Iran and the World in the Safavid Age*, London, New York, 2012, pp. 371-378.
209. Lambton Ann K. S., *Landlord and Peasant in Persia*, London-NewYork-Toronto, Oxford University Press, 1953, p. 460.

210. Lambton A. K., Pishkash: present or tribute? *Bulletin of the School of Oriental and African Studies, University of London*, Vol.57, No. 1, In Honour of J. E. Wansbrough (1994), pp. 145-158.
211. Lambton A., *Qajar Persia*, London, I.B. Tauris & Co Ltd Publishers, 1987, p. 342.
212. H. Maeda, *Exploitation of the Frontier: The Caucasus Policy of Shah 'Abbas I, Iran and the World in the Safavid Age*, London, New York, 2012, pp. 471-490.
213. Marcinkowski M. Ismail, *Dastur al-Moluk*, *Encyclopædia Iranica*, originally published 2005, <http://www.iranicaonline.org/articles/dastur-al-moluk>.
214. Matthee R., "SOLAYMĀN I," *Encyclopædia Iranica*, online edition, 2015, available at <http://www.iranicaonline.org/articles/solayman-1> (accessed on 26 August 2016).
215. Moreen Vera B., *Jizya*, *Encyclopaedia Iranica*, vol. XIV, Fasc. 6, pp. 643-6452 <http://www.iranicaonline.org/articles/jezya>
216. Perry J. R., *Afsharids*, *Encyclopædia Iranica*, I/6, pp. 587-589, available online at <http://www.iranicaonline.org/articles/afsharids-dynasty>.
217. Perry J. R., "ĀĠĀ MOḤAMMAD KHAN QĀJĀR," *Encyclopaedia Iranica*, Online Edition, 1982, available at <http://www.iranicaonline.org/articles/aga-mohammad-khan>
218. L. Sahakyan, *Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey*, Montreal-Arod Books, 2010, p. 70.
219. اسعد شيخ الاسلامی، احکام وصیت و ارث ذمی از نظر فقهای اسلامی، مقالات و بررسیها، کله الایهات دانشکده الهیات نشریه گروه تحقیقاتی، 1355 ص. 136-173
- See online ([https://jmb.ut.ac.ir/article\\_28012\\_61461a215efdf1936dc882a8178b7da6.pdf](https://jmb.ut.ac.ir/article_28012_61461a215efdf1936dc882a8178b7da6.pdf))
220. ایرج افشار سیستانی، پژوهش در نام شهرهای ایران، تهران، روزنه، 1378، ص. 618.
221. تاجبخش ا.، تاریخ صفویه، شیراز، انتشارات نوید، 1373، £. 924.
222. تاریخ ایران: دوره صفویان، پژوهش از دانشگاه کمبریج، ترجمه یعقوب آژند، تهران، چاپ شفق، 1380، ص. 711.
223. ثواقب جهانبخش، تاریخ نگاری عصر صفویو شناخت منابع و مآخذ، شیراز، انتشارات نوید شیراز، 1380، ص. 930
224. حقوق اقلیتهای دینی در قوانین ایران (منابع دانشنامه جهان اسلام، بنیاد دائره المعارف اسلامی برگرفته از مقاله «حقوق اقلیتهای دینی در قوانین ایران»، شماره 6348.
- (<http://www.rwgn.net/index.aspx?siteid=1&pageid=287>)

225. دهخدا، لغت نامه، جلد 1-27، دانشگاه تهران، 1340-1325، ص. 26475.
226. حقیقت عبد الرفیع (رفیع)، وزیران ایرانی از بزرگ مهر تا امیر کبیر، تهران، چاپخانه احمدی، 1386، ص. 526.
227. سام علی، بررسی فرمان نویسی دوره اول قاجار، تهران، انتشارات کلک زرین، 1392، ص. 112.
228. سیوری راجر، ایران عصر صفوی، ترجمه کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1372، ص. 292.
229. شعبانی رضا، تاریخ ایران عصر افشاریه، جلد 1، 2، تهران، انتشارات سخن، 1388، ص. 1015.
230. فرهنگ جغرافیایی ایران، جلد چهارم، استان 3 و 4 آذربایجان، تهران، چاپخانه ارتش، 1330، ص. 597.
231. فلور و.، تاریخچه مالی - مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ترجمه مرتضی کاظمی، تهران، نشر تاریخ ایران، 1394، ص. 727.
232. فهرست اسناد قدیمی وزارت امور خارجه، دوران قاجاریه (2131-4311)، مؤسسه چاپ و انتشارات وزارت امور خارجه 1992، ص. 611.
233. قائم مقامی ج.، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، تهران، سلسله انتشارات انجمن آثار ملی 1350، ص. 502.
234. محمد جعفری هرنندی، فقها و حکومت، تهران، انتشارات روزنه، 1379، ص. 304.
235. مخلصی محمد علی، فهرست بناهای تاریخی آذربایجان شرقی، تهران، سازمان میراث فرهنگی کشور، 1371، ص. 236.
236. مدرسی طباطبایی، مثالهای صدور صفوی، تهران، کتابخانه، موزه و مرکز اسناد مجلس شورای اسلامی، 1387، ص. 68.
237. میراحمدی مریم، دین و دولت در عصر صفوی، تهران، نشریت امیر کبیر، 1369، ص. 159.

## ՀԱՎԵԼ ՎԱԾ

### Բառարան հարկային, սոցիալական, վարչական և այլ եզրույթներին

Պարսկերեն պատմական փաստաթղթերում օգտագործվում են մեծ քանակությամբ եզրույթներ, որոնք բացատրության կարիք ունեն,

քանի որ արտացոլում են ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու վարչա-քաղաքական համակարգի իրողությունները և թարգմանությունների ժամանակ հիմնականում չեն կարող փոխարինվել մեկ համարժեք բառով: Ուստիև պարսկերեն վավերագրերի լիարժեք ուսումնասիրությունը ենթադրում է այդ եզրույթների համակողմանի աղբյուրագիտական հետազոտություն ու մեկնաբանում: Այսպիսով, եզրույթների համակողմանի մեկնաբանությունը, Մատենադարանի պարսկերեն վավերագրերին նվիրված ուսումնասիրությունների ու հրատարակությունների կարևոր մասն է կազմում՝ առանձնացված լինելով «հարկային, սոցիալական ու վարչական եզրույթների բառարանում»<sup>1293</sup>: Ատենախոսության այս գլխում կփորձենք ներկայացնել Մատենադարանի պարսկերեն վավերագրերում հանդիպող եզրույթների առավել ամբողջական քննությունն ու բացատրությունը՝ օգտագործելով պատմական սկզբնաղբյուրների տվյալներն ու այս բնագավառում հայ և օտար հետազոտողների փորձը:

Աբվաբ-ե ջամ' – (ابواب جمع) - Աբվաբ-ե ջամ' - جمع' Երկոչվում հարկերի հաշվառման այն ձևը, երբ որևէ հարկատու օբյեկտից կամ առանձին գյուղական համայնքից գանձվող բոլոր պետական հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին հարկային մատյաններում գրանցվելուց հետո ի մի էին բերվում և ի վերջո դրամական արտահայտությամբ արձանագրվում որքան հարկ պետք է վճարի և դրանից որքանը որ հարկի հաշվից<sup>1294</sup>:

Ալ աֆե ուլ ուֆե (علفه و علوفه) - Եզրույթը բաղկացած է «ալ աֆ - علف» (խոտ) բառի եզակի և հոգնակի ձևերից: Ինչպես բառն ինքը ցույց է տալիս, դա այն տուրքն էր, որ *ռայ աթները* պարտավոր էին հատուցել երթևեկող պետական պաշտոնյաներին, որպես նրանց ձիերի և գրաստների կեր: Այս տուրքը ի հարկե նախապես հատուցվել է բնամթերքով (խոտ, դարման, գարի և այլն), սակայն հետագայում շատ դեպքերում այն փոխարինվել է դրամական տուրքով<sup>1295</sup>:

<sup>1293</sup> Տե՛ս Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 103-123, պրակ Բ, էջ 211-234, պրակ Գ, էջ 188-203, պրակ Դ, էջ 102-112:

<sup>1294</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 103:

<sup>1295</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 103:

Ամիլ (عامل) - Այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները, չափում ցանքսերն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում, թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է գանձվի:

Ամիր (امير) - Բարձրաստիճան գորահրամանատար, քոչվորական ռազմական միավորումների առաջնորդ:

Ամիր ախոռ բաշի (اميرآخورباشی) – Գլխավոր ախոռապետը, որը պետք է ներկա գտնվեր *խասսե-ե շարիֆեի* կողմից նվիրված կենդանիների և այլ նվերների ախոռ տարվելու և *խասսեի* ավանգարդների հեծնելու ժամանակ, հետևեր արքունի ախոռների կարգուկանոնին և նշանակեր *ամիր ախոռների* ու ախոռների մյուս աշխատողներին: Նա էր նախապես գրում հիշյալ անձանց և *խասսեի* ձիապանների ու մյուս ծառաների *թալիղեները*, որոնց *նազիր-ե բոյու թաթը* ծանոթանում էր և ապա տալիս *ամիր ախոռ բաշիի* հաստատմանը: Ախոռում աշխատող մնացած ծառաների՝ պայտողների, անասնաբույժներին նա էր հաստատում, ապա բարձրագույն դիվանի հրամանագրով նրանց *թանխահ* էր նշանակվում<sup>1296</sup>:

Ամիր ալ-ումարա (امير الامرا) - Այսպես էին կոչվում բարձրագույն գորահրամանատարները, նահանգապետներն ու կուսակալները: Բառացի նշանակում է «ամիրների ամիր» և համապատասխանում է հայոց «իշխանաց իշխան» եզրույթին: Սա փաստորեն թուրքական «բեկլարբեկ – بيگلربیگ» եզրույթի արաբական համանիշն է:

Աշրաֆի (اشرفی) - Իրանական ոսկեդրամի անվանումը, որը համարժեք էր թումանին և հաճախ օգտագործվում էր նրա փոխարեն:

Ավարեջե (اوارجه) - Սեֆյանների օրոք *ավարեջե* են կոչվել հարկային այն մատյանները, որոնց մեջ մանրամասն հաշվառման էին ենթարկված յուրաքանչյուր հարկատու օբյեկտից ստացվող հարկերը՝ ըստ հատուցման առանձին նվազների: *Ավարեջեի* հատուկ *դաֆթարներ* կային ոչ միայն մայրաքաղաք Սպահանում, այլ նաև նահանգային խոշոր կենտրոններում: Այս *դաֆթարները*, նաև հարկային հաշվումների հետ կապված հաշվապահական բոլոր գործարքները վստահված էին *ավարեջենահսներին*, որոնք գտնվում

تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، تهران، کتابفروشی زوار، 1332، ص. 17<sup>1296</sup>

Էին մուսթովֆի ալ-մամալիքի անմիջական ենթակայության տակ: Բնակչությանը զանձվող հարկերի հաշվին տրված թիուլ նամեներն ու մյուս հրովարտակները, ինչպես նաև դրանց վերաբերող պաշտոնական գրությունները, հաստատվում էին *ավարեջենևիսի* ստորագրությամբ ու կնիքով, որից հետո հանձնարարվում էր գրանցման հատուկ մասյաններում<sup>1297</sup>:

Ավարիզաթ (عوارضات) եզրույթի տակ հասկացվում էր ռայաթների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը ևս շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով<sup>1298</sup>:

Արբաթ (ارباب) - Այդպես էին կոչվում խոշոր կալվածատերերն ու գյուղատերերը: Այս եզրույթը ավելի լայն տարածում ստացավ XVIII – XIX դարերում և մինչև օրս էլ հիմնում խոշոր կալվածատերերը «արբաթ» են կոչվում<sup>1299</sup>:

Բահրե կամ բահրեջե (بهره، برهجه) Էր կոչվում հողագործ գյուղացիության կողմից կալվածատիրոջն ու պետությանը վճարվող հողային հարկը, որի պետությանը հատուցվող մասը կոչվում էր «բահրաջե-ե դիվանի» (بهرچه دیوانی), իսկ կալվածատիրոջը հատուցվողը՝ «բահրեջե-ե մալիքանե» (بهرچه مالکانه): Եզրույթի վերջում ավելացված «ջե» փոքրացուցիչ մասնիկը նրա բովանդակության մեջ փոփոխությունն չի մտցնում և հանդիսանում է գուտլեզվական երևույթ, ինչպես օրինակ «ղաբալ չե» (կալվածագիր), «փարվանջե» (հրովարտակ), «վաղֆնամ չե» (կտակագիր) և այլ բառերում:

Բայազի (بیاضی) - Որոշակի կադաստրով գրված շահական հրովարտակ, որ դաժթարում չէր կազմվում, այլ տրվում էր շահի անմիջական կարգադրությամբ:

Բաջ (باج) – Մաքսային հարկ:

Բարաթ (برات) - Պարտամուրհակ:

Բեկ (بیگ) - Տեր, պարոն: Տիտղոս, որ տրվում էր ավելի կրտսեր գինվորականներին և հատկապես քրդական և կըզըլբաջ ցեղերի (այ մաղների) առաջնորդներին<sup>1300</sup>:

<sup>1297</sup> Տե՛ս Զ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 212:

<sup>1298</sup> Զ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 105:

<sup>1299</sup> Նույն տեղում:

<sup>1300</sup> Զ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 106:

Բեկլարբեկ (بیگلریگ) - Սեֆյան իրանի սահմանամերձ նահանգներում կամ կոլսակալ ու թյուններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկեր»: Իրանում XVI - XVII դարերում կային 13 բեկլարբեկ ու թյուններ, որոնցից հյուսիս-արևմտյան սահմանումն էին գտնվում Ատրպատականի, Ղարաբաղի (Գանձակի), Շիրվանի և Չուխուր Սաադի կամ Երևանի բեկլարբեկ ու թյունները<sup>1301</sup>:

Բեյթ ուլլ-մալի (بيت المال) - Բառացի «գանձատուն» իմա՝ պետական գանձարան: Այս եզրույթը գոործածության մեջ է եղել խալիֆայության տիրապետության շրջանից, երբ արքունի գանձարանը կոչվում էր «բեյթ ուլլ-մալ-ե մուսլիմին – بيت المال مسلمين»: Այնուհետև այս եզրույթի տակ հասկացվում էին նաև պետական հարկերը, իսկ ավելի ուշ հարքունիս գրավվող և պետական սեփականություն դարձվող ամեն ինչ<sup>1302</sup>:

Բիգար (بيكار) Յոզագործ գյուղացիության կամ ռայաթների պարտադիր անվճար աշխատանքը ամրությունների, բերդերի, ջրանցքների և ճանապարհների վրա, ինչպես նաև ռազմական արշավանքների ժամանակ<sup>1303</sup>:

Բուլուք (بلوک) շրջան, թաղամաս:

Բունիչե (بنیچه) Գյուղի կամ այլ հարկատու օբյեկտի խմբակային հարկում, այսինքն՝ երբ գյուղից գանձվում էր մեկ ընդհանուր գումար, իսկ յուրաքանչյուր շնչից գանձվող գումարը բաշխվում էր տեղում:

Գուսֆանդ (گوسفند) տարբեր առիթներով հատկապես, երբ գյուղում որևէ պաշտոնյա էր կան առնում, գյուղացիներից ալաֆե կոչված հարկի հետգանձում էին նաև *գուսֆանդ* և *ջոլ* կոչվող հարկերը:

Դահբաշի (دهباشی) Բաղկացած է պարսկերեն «10 - د» թվականից և թուրքերեն «-باشی» առաջնորդ» բառից: Տասնապետ: Տաս շնչից բաղկացած ջոկատի հրամանատար:

Դանգ (دانگ) - Կալվածատիրական՝ մուլլաբային գյուղերից ստացվող ամբողջ եկամուտը կամ ռենտան, որ սովորաբար կոչվում էր «մուլլաք»,

<sup>1301</sup> تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، ص. 5

<sup>1302</sup> 3. Փախազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 107:

<sup>1303</sup> Նույն տեղում:



դիտվում էր որպես մի ամբողջություն և, ծանրության մանր միավոր «միսդալ»-ի նման բաժանվում էր 6 դանգի: Գյուղերի մուլլքերը առուծափի էին ենթարկվում ինչպես ամբողջությամբ, որ կոչվում էր «շեշդանգ - ششدانگ» (վեց դանգ), այնպես նաև մի քանի, երբեմն էլ մեկ, կես կամ քառորդ դանգով, որ անվանվում էր «թասուջ»<sup>1304</sup>:

Դասթանդազ (دست انداز)- Եզրույթը կազմված է «դասթ – دست» (ձեռք) գոյականից և «անդախթան - انداختن» (նետել) բայից և բառացի նշանակում է «ձեռք նետող», «ձեռք ձգող»: Խոսքը վերաբերում է պետական պաշտոնյաների կողմից գանազան պատրվակներով *նայաթներից* գանձվող տուրքերին, երբ նրանք, այսպես ասած, “ձեռք էին երկարում” *նայաթների* ունեցվածքին և փորձում դրամ կամ այլ արժեքավոր իրեր շորթել նրանցից<sup>1305</sup>:

Դարուդա (داروغه) - Այսպես էր կոչվում տվյալ վայրի ոստիկանապետը, որն ակտիվ մասնակցություն ուներ բնակչությանից գանձվող հարկերի իրացման գործում<sup>1306</sup>:

Դաֆթար (دفتر)- Տետր, մատյան: Գլխավորապես օգտագործվում էր հարկային մատյանների իմաստով. *դաֆթար* կամ *դաֆթարխանե* - دفترخانه - էր կոչվում նաև այն հիմնարկությունը, որտեղ պահվում էին հարկային մատյանները<sup>1307</sup>:

Դինարը (նոր պարսկ. دينار, միջ. պարսկ. *dēnār* < լատ. *denarius aureus*), ոսկի դրամն է: *Denarius* բառը գործածվում էր դեռ Յռոմի Յանրապետության շրջանից դրամի իմաստով: Իրանում այն սկսում է հատվել Սասանյան Արտաշիր Ա -ի օրոք և կշռում էր 7 - 7.4գ: Իսլամական ոսկի դինարները սկսել են հատվել սկսած 696 թվականից և կշռով հավասար էին 4.25 գրամի: Իսլամական ոսկե դինարներ սկսում են հատել սկսած 835 թվականից Մերվում, այնուհետև նաև Ահվազում, Մուհամմադիեում, Սամարղանդում, Կովկասի, Իրաքի ու Ատրպատականի քաղաքներում մինչև XIII դարը<sup>1308</sup>: XV դարից դինարը խիստ արժեզրկվում է՝ վերածվելով արծաթի դրամի: XVII դարում 200

<sup>1304</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 213-4:

<sup>1305</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 107:

<sup>1306</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 214:

<sup>1307</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 108:

<sup>1308</sup> Philippe Gignoux, Michael Bates, Dinar, Encyclopædia Iranica, Vol. VII, Fasc. 4, pp. 412-416 <http://www.iranicaonline.org/articles/dinar>

դիևարը, որ կոչվում էր մեկ արասի, կշռում էր 7-9 գրամ մաքուր արծաթ<sup>1309</sup>:

Դինգ (دنگ) - Այ դպես էին կոչվում բրնձի մաքրման գործատները:

Դիվան ալ -սադարաթ (ديوان الصدارة) Սեֆյան շրջանում կրոնական բարձրագույն առաջնորդի՝ սադրի առյանը:

Դիվան (ديوان)- Պետական գործերի առյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով: Երբ ասում էին «դիվանական պարտավորություններ» («թաքալիֆ-ե դիվանի», «հոկուկ-ե դիվանի» կամ «ավարիզ-ե դիվանի») հասկացվում էր ռայաթների հարկային պարտավորությունները պետության հանդեպ, իսկ «դիվանի հողեր» («արազի-ե դիվանի») էին կոչվում այն հողերը, որոնք պատկանում էին պետությանը և որոնց եկամուտները անմիջապես մտնում էին պետության գանձարանը կամ ռոճիկի դիմաց տրվում էին պետական պաշտոնյաներին ու զինվորականությանը<sup>1310</sup>:

Դիվանբեկին (ديوان بیگی) Սեֆյան պետության գլխավոր դատավորն էր, որը մեծ լիազորություններ էր վայելում: Երկրի տարբեր կողմերից բոլոր հարցերի շուրջը տրված բոլոր բողոքները ուղղվում էին *դիվանբեկին*: Վերջինս սովորաբար դրանք ներկայացնում էր քննության *սադրի* գլխավորած *շարի*՝ հոգևոր խորհրդին՝ *դիվան-ալ-սադարաթին* և կամ կոնկրետ հարցերի վերաբերյալ դիմում էր *սադրին*՝ նրակարծիքն իմանալու: Վերջինիս կողմից տրված վճիռները ենթակա էին հաստատման *դիվանբեկին* կողմից առանց որի դրանք չէին կարող օրինական համարվել: *Դիվանբեկին* փաստորեն քաղաքացիական դատարանի ֆունկցիաներն էր իրագործում և առաջնորդվում էր սովորույթային կամ *՛ուրֆի* օրենքներով՝ սերտ կապ պահպանելով սակայն հոգևոր դատարանի պետի՝ *սադրի* հետ<sup>1311</sup>:

Չաբթ (ضبط) - Տվյալ հարկատու օբյեկտից պետական հարկերի տնօրինման իրավունքը:

Չաբիթ (ضابط) - Գրավող, բռնագրավող: XVII - XVIII դարերում *զաբիթ* էին կոչվում նաև պետական հարկերի վարձակալները, որոնք

<sup>1309</sup> Հ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 108:

<sup>1310</sup> Հ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 108:

<sup>1311</sup> Հ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 215:

Նախապես որոշ գումար մուծելով պետական գանձարանը, իրավունք էին ստանում տվյալ օբյեկտի հարկերը գանձելու<sup>1312</sup>:

Չար' (زرع) - Երկարության միավոր, որ հավասար էր 1,4 մետրի:

Չաբյաթ (نكوة) - Եկամտի 1/40-ի չափով եկեղեցուն կամ մզկիթին վճարվող տուրք. Յայերեն՝ «քառասնից»<sup>1313</sup>: Չաբյաթ և նազր անվամբ նշվում էին եկեղեցական օրենքներով օրինականացված հայ ժողովրդի պարտավորությունները եկեղեցու հանդեպ (աթոռահաս, հիշատակ, հոգեբաժին, աջահամբույր, մատաղ, խոստմունք, փոքրավորեք և այլն), որոնք ամբողջացված էին հայրապետական, եպիսկոպոսական ու քահանայական «հասք և տուրք» անուններով:

Չիմմի (ذمی) - Այդպես էին կոչվում քրիստոնյա և հրեա հպատակները, որոնք ի տարբերություն մուսուլման հպատակների, բոլոր հարկերից ու պարտավորություններից բացի, պարտավոր էին վճարել նաև հատուկ գլխահարկ՝ «ջիզյա», որով իրավունք էին ստանում իրենց կրոնը դավանելու<sup>1314</sup>: Յայ գիմմիների իրավունքների ու պարտավորությունների մասին ավելի մանրամասն տե՛ս ատենախոսության երկրորդ գլխի առաջին և երկրորդ ենթաբաժիններում:

Է՛թեմադ ալ -դովլեն (اعتماد الدولة) - պետության առաջին վեզիրն էր, որը կոչվում էր նաև «մեծ վեզիր» (կամ «վեզիր-ե ազամ-اعظم»): Նա վերահսկում էր երկրի բոլոր վարչական և ֆինանսական գործերին, փաստորեն, կատարելով մինիստր – նախագահի և արտաքին գործերի մինիստրի ֆունկցիաները: Նրա հաստատմամբ էին շահի հրամանագրերը գործադրվում և վարչական ապարատի պաշտոնյաների նշանակումները առանց նրա կնիքի վավերական չէին<sup>1315</sup>: Շահ Աբբաս Ա-ի մեծ վեզիրն էր Միրզա Մուհամմադ Սարութադին, որն այդ պաշտոնը վարում է հիջրայի 1025-1044 թթ. (1616-1634/5 թթ.), այնուհետև Շահ Աբբաս Բ-ի օրոք ու թատրի հիջրայի 1056-1064 թթ. (1646/7-1653/4 թթ.) այդ պաշտոնը վարում էր Սեիդ Ալաալ -Դին Յուսեյնին, հիջրայի 1064-1072 թթ.: Մուհամմադ Բեկ Թաբրիզին, հիջրայի 1072-1080 թթ. (1661/2-1669/70 թթ.): Միրզա Մուհամմադ Մահդին, նրամահից հետո 1673 թ. քուրդ

<sup>1312</sup> Նույն տեղում:

<sup>1313</sup> Յ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 216:

<sup>1314</sup> Յ. Փախազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 108:

<sup>1315</sup> The Cambridge History of Iran, vol. 6, p. 354:

Շեյխ Ալի Չանգանեն էր մինչև 1690 թ., հիջրայի 1102-1110 թթ. (1690/1-1698/9 թթ.)՝ Միրզա Մուհամմադ Թահիր Վահիդը, հիջրայի 1110-1118 թթ. (1698/9-1706/7 թթ.) Մուհամմադ Մո'մեն խան Բիգդելի Շամլուն, հիջրայի 1118-1127 թ. (1706/7-1715 թթ.)՝ քուրդ Շահ Ղուլի խան Չանգանեն, հիջրայի 1127-1133 թթ. (1715-1720/1 թթ.)՝ Ֆաթիալի խան Դաղստանին, հիջրայի 1133-1135 թթ. (1720/1-1722/3) Մուհամմադ Ղուլի խան Բիգդելի Շամլուն<sup>1316</sup>: Շահ Թահմասպ Բ-ի օրոք մի քանի անձանց անուններ են հիշատակվում *Է'թեմադ ալ-դովլեի* պաշտոնում՝ Իսմայիլ Բեկի, Մուհամմադ Ալի խան Մոքրիի, Միրզա Աբդալլահ Մար'աշիի, Միրզա Մո'մեն Ղազվինիի և Ռաջաբ Ալիի անունները: Միաժամանակ Թահմասպ Բ-ի բարձրաստիճան պաշտոնյաների մեջ նշվում են դիվանի վաքիլ Մորթազա Ղուլի խանի և վաքիլ-ալ-դովլե Մուհամմադ Ալի խանի, Ֆաթիալի խան Ղաջարի հիջրայի 1137-1139 թթ. (1724/5-1726/7 թթ.) ու Նադիր Ղուլի խան Աֆշարի անունները: Յետագայում մինչև Ղաջարական թագավորական տան իշխանության հաստատումը այս եզրույթը գործածությունից դուրս է գալիս: Իմաստային առումով նրան փոխարինում նաեւ ալ-սոլթանե, վեզիր-ե դիվան-ե ալա Ղաջարական ժամանակաշրջանում *Է'թեմադ ալ-դովլեի* անվանումը փոխարինվում է *սադր-ե ազամ* եզրույթով:

Էյդի (عیدی) - Ֆեոդալին, կամ տեղի պետական բարձրաստիճան պաշտոնյաներին մուսուլմանական մեծ տոներին (Էյդ-ե Ֆեթր, Էյդ-ե Ղադիր, Էյդ-ե Ղորբան) նվերների անվան տակ տրվող պարտադիր տուրք<sup>1317</sup>:

Էսթեսվափաթ (استصوابیات) - Դրամական հատկացում պետական պաշտոնյաներին, որի չափը քալանթարն էր որոշում յուրաքանչյուր տարվասկզբին<sup>1318</sup>:

Էսթիֆա (استیفاء) - այդ մասին մանրամասն տեսաւտեսախոսության էջ 220:

Թալիդե (تعليقه) - Խաների, մեծ ամիրների, վեզիրների ու այլ բարձրաստիճան պաշտոնյաների հրամանագիր:

Թահվիլդար (تحویلدار) - Գանձապետ, պաշտոնյա, որ զբաղվում էր դրամական գործարքներով:

<sup>1316</sup> عبد الرفيع حقيقت (رفيع)، وزیران ایرانی از بزرگ مهر تا امیر کبیر، تهران 1386، صص. 337-356.

<sup>1317</sup> Յ. Փափազյան, հրովարտական, պրակ Ա, էջ 109:

<sup>1318</sup> دستور الملوك ميرزا رفيعا، ص. 240.

Թաղար (تغار) - Պարսկական կշռի միավոր, որը հավասար էր մոտ 83,4կգ: Որպես ծավալի միավոր, այն ուներ տարբեր մեծություն, և համարժեք էր 100 մանին:

Թահմիդիե (تحميديه) Ալլահին փառաբանող արտահայտություններն են, որոնցով սկսվում են շահական հրամանագրերը<sup>1319</sup>:

Թանխահ (تخخواه) – Հարստություն, ապանք: XVII-XVIII դարերի վավերագրերում գործ է ածված պետական պաշտոնյաների և զինվորականության ռոճիկների դիմաց՝ բնակչությունից գանձվող հարկերի հաշվին տրվող հատուցումների իմաստով: Այդ հատուցումները կարող էին ինչպես բնամթերով, այնպես էլ դրամով<sup>1320</sup>:

Թավար (تاواد) - Վրաց իշխան, ազնվական:

Թիուլ (تیول) - XVI - XVII դարերում Ֆեոդալական պարզևական հողատիրության տարածված ձևերից մեկը: Պետական և զինվորական ծառայության դիմաց թիուլներ էին տրվում ինչպես ամբողջական գյուղեր - (եթե դրանք պետական՝ «դիվանի» գյուղեր էին), այնպես նաև առանձին մուլքային գյուղերից և այլ հարկատու օբյեկտներից ստացվող պետական հարկերը կամ նրանց մի մասը<sup>1321</sup>:

Թիուլդար (تیولداری) - Այսպես էին կոչվում այն բարձրաստիճան զինվորականները, պետական պաշտոնյաներն ու ամիրները, որոնք ռոճիկի դիմաց ստանում էին շրջանից, գյուղերից կամ առանձին գյուղից գանձվող ամբողջ պետական հարկերի կամ նրանց մի մասի գանձման իրավունքը, որպես «թիուլ»: Խոշոր թիուլդարներն իրենց տրված օբյեկտների բնակչության նկատմամբ, թիուլդարության ժամանակաշրջանում հաճախ ունենում էին նաև վարչական ու դատական իրավունք:

Թողրա (طغرا) - Հրովարտակների սկզբում դրվող և թագավորի, կրոնապետի կամ այլ բարձրաստիճան անձնավորության անունը պարունակող մոնոգրամ, որը գրվում էր իրար մեջ հյուսված բարդ և դժվար ընթեռնելի գրությամբ: Թողրան գործածվում էր նաև փաստաթղթի կամ հրովարտակի բնօրինակ իմաստով: Մասնավորապես

<sup>1319</sup> قایم مقامی ج، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، تهران، سلسله انتشارات انجمن آثار ملی 1350، ص. 167

<sup>1320</sup> Հ. Փափազյան, հրովարտակները պրակ Բ, էջ 217:

<sup>1321</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 218:

կալ վաճագրերում այդ բառով նշվում էին որպես ապացույց, հիմք ներկայացվող փաստաթղթերը՝ ներկայացվող փաստաթղթի տեսակի հետ միասին, ինչպես օրինակ «երկու թողրաղաբալ չե – دو طغری قبالچه»<sup>1322</sup>:

Թովջիհ (توجیه) - Այս եզրույթի տակ հասկացվում էր որևէ բանի ցրում, բաշխում, ուղղում դեպի տարբեր կողմեր: Դա կարող էր վերաբերել ինչպես առանձին հարկային օբյեկտների հարկերի ընդհանուր գումարի բաշխմանը տվյալ օբյեկտի ռայթների կամ առանձին տնտեսությունների վրա, նշելով թե նրանցից ով որքան պետք է վճարի, այնպես նաև այդ գումարների գանձման իրավունքի բաշխումը գինվորականության և պետական պաշտոնյաների միջև: *Թովջիհի* վարչությունը 12 տարբեր նշումներ ուներ գործերի տարբեր տեսակների ու մասերի համար<sup>1323</sup>: Վերջինիս գլխավոր տնօրենը կոչվում էր «բարձրագույն դիվանի *սահիբ-թովջիհ*» (սահիբ թովջիհե դիվան-ե ալա – صاحب توجیه دیوان اعلى): *Սահիբ թովջիհը* վերահսկում էր գինվորականությանը և պետական պաշտոնյաներին տրվող հանձնարարական գրությունները (*բարայթ, հավալե, իթլաղ*), գրանցում դրանք հատուկ մատյանում և վավերագրի հակառակ կողմում մակագրում՝ «գրի առնվեց – بقلم آمد» ու կնքում<sup>1324</sup>:

Թֆանգչի աղասի (تفنگچی اقاسی) - Պետության հենասյուններ կոչվող արքունի չորս ամիրներից մեկն էր: Նա մինբաշիների, յուզբաշիների, ջառչիների ու բուլոր հրացանակիրների պետն էր և մասնակցում էր 7 ամիրների «ջանկի» (جانقی) կոչվող արտակարգ գերագույն խորհրդին<sup>1325</sup>:

Թուման (تومان) - Դրամական խոշոր միավոր, որ հավասար էր 10.000 *դիևարի*: XVI - XVIII դարերում իրանում ընդունված էին չափուկ շահի և դրամահատության վաղուց հետե Թավրիզում հաստատված չափերը: Անկախ դրանից, առանձին նահանգներում կային նաև տեղական չափեր: Այդ է պատճառը, որ շատ հաճախ առուժախի վերաբերյալ փաստաթղթերում, կալ վաճագրերում և պաշտոնյաների ռոճիկների

<sup>1322</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 438:

<sup>1323</sup> فلور و.، تاریخچه مالی – مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ص. 147.

<sup>1324</sup> Տե՛ս 3. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 218, նաև Զ. Կոստիկյան, հրովարտականեր, պրակ Գ, վավ. 64, 66:

<sup>1325</sup> 3. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 219:

նշանակման հրամանագրերում, նշվում էր, որ դրամը պետք է վճարվի «թավրիզի թումանով»<sup>1326</sup>:

Իթլաղ (اطلاق) - Բառացի՝ «հեռացում», «ուղարկում»: Խոսքը պետական պաշտոնյաներին այս կամ այն հարկատու օբյեկտն ուղարկելու մասին է. պաշտոնյաներ, որոնք իրենց ռոճիկները ստանում էին տվյալ օբյեկտից գանձվող հարկերի հաշվից: Այս առիթով նրանց ձեռքը տրվող հանձնարարական գրույթում ներկայացվում էին «հավալե»<sup>1327</sup>:

Իլթիզամ (التزام) - Պետական պաշտոնյաներին որևէ խնդիր կարգավորելու համար որպես վարձատրույթումն որոշակի գումար վճարելու պարտավորություն:

Իխրաջաթ (اخراجات) - Բառացի նշանակում է «ծախսեր»: Այդպես էին կոչվում այն արտակարգ ծախսերը, որ տարբեր առիթներով ռայաթները պարտավոր էին հատուցել պետությանը կամ նրա պաշտոնյաներին<sup>1328</sup>:

Իխրաջաթ-ե դալե (اخراجات قلعه) – բառավոր՝ «ամրոցի իխրաջաթ», տուրքեր, որոնք գանձվում էին մոտակա բերդերի և այնտեղ հաստատված բերդապահ կայազորների ծախսերը հոգալու համար:

Իմամ (امام) - Մուսուլմանական հոգևորական առաջնորդ, կրոնապետ: Ծիա մահմեդականները այս անվան տակ ինկատի ունեն հատկապես Ալիի սերնդից հայտնի դարձած 11 իմամներին և հավատում ու սպասում են նաև 12-րդ իմամին, որը պիտի գա և փրկի մարդկությանը<sup>1329</sup>:

Խալ 'աթ (خلعت) Ջյուրասիրություն և կամ զանազան տոների առթիվ կազմակերպված ընդունելությունների ժամանակ, հարգանքի և մեծարման նպատակով տրվող մեծարժեք նվեր, որը մեծ մասամբ լինում էր շքեղ և թանկագին հագուստ:

Խալիսե (خالصه) XVII դարի փաստաթղթերի տվյալների հիման վրա Ջ. Փափազյանը հանգել է այն եզրակացությանը, որ այդ շրջանում «խալիսե» հոդերը պետական սեփականություն էին համարվում, սակայն նրանք տվյալ վիճակի տնօրինության տակ էին և նրանց

<sup>1326</sup> Ջ. Փափազյան, հրովարտականեր, արակ Բ, էջ 219:

<sup>1327</sup> Ջ. Փափազյան, հրովարտականեր, արակ Ա, էջ 110:

<sup>1328</sup> Նույն տեղում:

<sup>1329</sup> Ջ. Փափազյան, հրովարտականեր, արակ Բ, էջ 219:

եկամուտներն ամբողջովին պատկանում էին խաներին ու բեկլարբեկերին<sup>1330</sup>:

Խալիֆա - տե'ս մանրամասն Գլուխ III, ենթավերնագիր II:

Խան (خان) «Ղան» (տեր, իշխան) տիտղոսն է, որով մեծարվում էին բարձրաստիճան գինվորականության ներկայացուցիչները: Պարսիկները այդպես էին կոչում նաև վրաց թագավորներին՝ «վալիներին»: Ավելի ուշ այս տիտղոսը դարձավ հասկապես խոշոր ֆեոդալ -նահանգապետների սեփականություն<sup>1331</sup>:

Խասսե-ե շարիֆե (خاصه شريفه) էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները, և առհասարակ, շահին ու թագավորական ընտանիքին պատկանող մյուս բոլոր հաստատությունները միասին վերցրած: Դրանք բոլորն ունեին հատուկ գործերի կառավարչություն, որ կոչվում էր «սարքար-ե խասսե-յե շարիֆե»<sup>1332</sup>:

Խարաջ (خراج) Արաբական տիրապետության շրջանում այսպես էր կոչվում գլխավոր հողային հարկը: XVI - XVIII դարերում այս եզրույթը քիչ գործածական էր և հասկացվում էր բնակչությունից գանձվող մի շարք պետական հարկերի իմաստով, որպես հավաքական հարկային եզրույթ<sup>1333</sup>:

Խարվար (خوار) Կշռի խոշոր միավոր, որ հավասար էր 100 մանի: Եթե ինկատի ունենանք, որ յուրաքանչյուր թավրիզի ման կշռում էր 3000 գրամ, ապա մեկ խարվարը կարող էր կշռել 300կգ<sup>1334</sup>:

Խեդմաթանե (خدمتانه) - թեյանվեր, մանր դրամական նվեր, այդպես էր հատուկ հանձնարարականով գյուղերն ուղարկվող պետական պաշտոնյաներին միանվագ վճարվող հարկագումարը:

Խոջա, ճիշտը՝ խաջե (خواجه) - Այսպես էին կոչվում մեծահարուստ վաճառականներն ու դրամատերերը: Այն խոջաները, որոնք առևտրի բնագավառում ձեռքբերած հարստությամբ սկսում էին գանձագին կալվածներ կամ «մուքեր» գնել, հաճախ ազդեցիկ դիրք էին գրվում

<sup>1330</sup> А. Папазян, նշվ. աշխ., էջ 106:

<sup>1331</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, արակ Ա, էջ 110:

<sup>1332</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, արակ Ա, էջ 110:

<sup>1333</sup> Նույն տեղում:

<sup>1334</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, արակ Բ, էջ 220:



արքունիքում, զբաղեցնելով նույնիսկ ֆինանսների մինիստրի՝ «սահիբ դիվանի» պաշտոնը<sup>1335</sup>:

Խուլմա (خمس) - Բառացի «հնգորդ», եկեղեցական տուրք<sup>1336</sup>:

Յամեսալե (همه ساله) - Այսպես էր անվանվում ռոճիկների հատուցման այն ձևը, ըստ որի ռոճիկ ստացող պաշտոնյան իրավունք էր ստանում, ցնոր տնօրինություն, ամեն տարի նույն վայրի հարկերի հաշվից ստանալու իր ռոճիկի գումարը: Այսպիսի իրավունք ստացող զինվորականներն ու պետական պաշտոնյաները կոչվում էին «համեսալե դար»<sup>1337</sup>:

Յամեսալե դար (همه شاله دار) տե՛ս վերը:

Յավալե (حواله) Դիվանի կողմից պաշտոնյաներին ու զինվորականներին տրվող հանձնարարական գրություններ, որը նրանք ներկայացնում էին այս կամ այն գյուղական համայնքներին կամ ցածր հարկային վերակացուներին, որպեսզի ստանային նրանցից որոշակի քանակի գումար կամ մթերք<sup>1338</sup>:

Յաքիմ (حاكم) - Գավառապետ, քաղաքացիական դատավոր<sup>1339</sup>:

Յոդդուդ-ե դիվանի (حقوق دیوانی) - Ռայաթների հարկային պարտավորությունները պետության նկատմամբ:

Յոքմ (حکم) - Յրամանագիր, հրաման, բարձր կարգադրություն:

Ղաբալե (قباله) - Կալվածագիր:

Ղայեմմաղամ (قائم مقام) – Այս եզրույթը գործածության մեջ է դրվում շահ Ֆաթիալի շահ Ղաջարի իշխանության շրջանից՝ կապված այն հանգամանքի հետ, որ երբ հիջրայի 1213 թ. (1798/9 թ.) *Նաեբ ալ-սուլթանե* Աբբաս Միրզան նշանակվում է թագաժառանգ և ուղարկվում Ատրպատականի նահանգը, նրա բարձրաստիճան պաշտոնյան՝ *սարարաթի դայեմմաղամը* լինի և այդ շրջանի գործերը կառավարի: Փաստորեն *դայեմմաղամ* բառը *դայեմմաղամ-ե սարարաթի* կրճատ անվանումն է: Միրզախան, որ հայտնի էր ՄիրզաԲոզորգը անվամբ և առաջին մարդն էր, որ կրում էր *դայեմմաղամ* տիտղոսը, սկզբում *սարրազամ* Յաջի հերահիմ խան *Է՛թեմաղալ-դովլեի մու նշի* էր<sup>1340</sup>: Նրանից հետո այդ

<sup>1335</sup> Յ. Փախազյան, հրոժվար տակներ, պրակ Ա, էջ 111:

<sup>1336</sup> Նույն տեղում:

<sup>1337</sup> Յ. Փախազյան, հրոժվար տակներ, պրակ Բ, էջ 221:

<sup>1338</sup> Յ. Փախազյան, հրոժվար տակներ, պրակ Ա, էջ 111:

<sup>1339</sup> Նույն տեղում:

<sup>1340</sup> عبد الرفيع حقيقت (رفيع)، وزیران ایرانی از بزرگ مهر تا امیر کبیر، تهران 1386، ص. 378.

տիտղոսը փոխանցվում է որդուն Միրզա Աբու-լ-Ղասեմ Ղայեմմադամին:

Ղազի (قاضی) - Դատավոր, շար'ի դատական ատյանի պետը, որը նշանակվում էր բարձրաստիճան հոգևորականության շարքերից, որը շարիաթի օրենքով քննում էր քաղաքացիական ու քրեական գործերը<sup>1341</sup>:

Ղշլաղ (قشلاق) - Քոչվորների ամառանոցային նստավայր:

Ղորչի (قرچی) - Թագավորական հեծյալ գվարդիայի զինվոր<sup>1342</sup>:

Ղորչի բաշի (قرچی باشی) - Պետության հենասյուներ կոչված արքունի չորս ամիրներից էր, նրանցից գլխավորը: Նա համարվում էր բոլոր ցեղերի ու ցեղախմբերի առաջնորդը, հետևաբար նաև արքունի հեծելազորի պետը: Նա էր նշանակում բոլոր բոլոր ղորչիների թիուլները, համեսալ եները, թանխահները ու ռոճիկային հատկացումները, որոնք այնուհետև տրվում էր բարձրագույն դիվանի վեզիրի հաստատմանը<sup>1343</sup>:

Ղուլամ (غلام) - Այսպես կամ պարզապես «ղուլ» էին կոչվում այն հեծյալները, որոնք մեծ մասամբ կամ իրենք էին նոր մահմեդականություն ընդունել և կամ հանդիսանում էին մեկ կամ երկու սերունդ առաջ մահմեդականություն ընդունած քրիստոնյաների զավակներ: Սրանք փաստորեն կազմում էին շահի անձնական թիկնապահների գվարդիան՝ «ղուլլար - قللر», որոնց թիվը տարբեր աղբյուրների վկայությամբ տատանվել է 10-30 հազարի միջև: Շահի օրինակով, ղուլամների հատուկ ջոկատներ ունեին նաև վիլայեթներում և սահմանամերձ կուսակալություններում իշխող բեկլարբեկերը<sup>1344</sup>:

Ղուլլուղ (قلق) - Չարկ, որ գանձվում էր պաշտոնյաների հյուրասիրության համար:

Ղուշչի (قوشچی) էին կոչվում պալատական պաշտոնյաները, որոնք զբաղվում էին շահական պալատի որսորդության համար անհրաժեշտ բազենների խնամքով<sup>1345</sup>: Ըստ երևույթին, բազենների մատակարարումը

<sup>1341</sup> Ջ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 222:

<sup>1342</sup> Նույն տեղում:

<sup>1343</sup> تذکره الملوک، بکوشش محمد دبیرسیاقی، تهران، کتابفروشی زوار، 1332، ص. 5, 7

<sup>1344</sup> Ջ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 222:

<sup>1345</sup> Ղուշչիների մասին բազմիցս հիշատակվում է Սեֆյան պետության վարչաքաղաքական կառուցվածքին վերաբերող Դասթուրալ-մուլուք աշխատության մեջ

պալ ատին ապահովում էին առանձին բնակավայրեր, որոնք բացի հողի մշակութային ոլորտից, զբաղվում էին բազենների բուծմամբ ու բազմացմամբ: Ղուլչիների ռոճիկն ու հատկացումները կատարում էր *մոշարրաֆ-ե դուլչխանեն* և այդ մասին գրանցում իր *դաֆթարում*<sup>1346</sup>:

Մազրաե (مزرعه) - Հացահատիկի հող, գյուղակ, որ պատկանում է մայր գյուղին:

Մալ (مال) - Գլխավոր եկամտահարկը և սեփականության հարկը, որ գանձվում էր ամեն տեսակի եկամտաբեր օբյեկտներից ու շենքերից, այգիներից, վարելահողերից, ջրաղացներից, ձիթահանքերից, գութաններից, տներից, խանութներից և այլն: Մալը գանձվում էր ինչպես բնամթերքով, այնպես և կանխիկ դրամով: XV դարից սկսած «մալ» հարկի հետ միատեղ հիշվում է նաև «ջահաթը» (տե՛ս մալ ոջահաթ)<sup>1347</sup>:

Մալիե (مالیه) - XV դարից և ավելի վաղ ժամանակներից գոյություն ունեցող գլխավոր եկամտահարկի «մալի» տարբերակներից, որ ավելի գործածական դարձավ XVIII դարում և փոխարինում էր «մալին» կամ «մալ ոջահաթին»<sup>1348</sup>:

Մալիքանե (مالکانه) - Կալվածատիրոջ կամ մալիքին վճարվող հողային ռենտա: Համանիշների «բահրաջե», «մուլլե»: Այն կազմում էր ամբողջ բերքի 1/10-ը<sup>1349</sup> կամ 2/10-ը: *խասս* համարվող գյուղերում *մալիքանեն* ինչպես և *բահրաջե-ե դիվանին* գանձվում էին հոգուտ արքունիքի, իսկ *դիվանին* պատկանող գյուղերում՝ հոգուտ պետական գանձարանի: Վանքերին պատկանող գյուղերի բնակիչները այդ հարկը վճարում էին վանքին: Էջմիածնի ու Գանձասարի, հայոց վանքերի առաջնորդները նախանձախնդիր էին այդ հարկի գանձումը վանական կալվածքներից գանձման հարցում և Մատենադարանի միջարք հրովարտակներ հրապարակվել են այդ հարում ծագած խնդիրները՝ գյուղացիության անհնազանդությունն, օտարների

دستور الملوك ميرزا رفيعا، به كوشش وتصحيح محمد اسماعيل مارچينكوفسكى، ترجمه على كردابادى، تهران، 1385، ص. 57-55, 229, 238, 239, 268

نصیری میرزا علی نقی، القاب و مواجب دوره دور سلطین صفوی، ص. 69, 1346

1347 Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 112:

1348 Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 222:

1349 Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 974:

ոտնձգութայնուններ, կարգավորելու նպատակով<sup>1350</sup>: Էջմիածնին պատկանող Օշականի բնակչությունը ծանր վիճակում գտնվելով 1722 թ. Աստվածատուր կաթողիկոսի հետ համաձայնության է գալիս, որ նրատրամադրած 150 թումանի դիմաց վանքին ամեն տարի վճարի ոչ թե բերքի 1/10-ը, այլ 1/5-ը<sup>1351</sup>: Մալիքանեն պետք է վանքին վճարվեր, եթե նույնիսկ նրա հարկերից բաժին էր հատկացվում որպես *համեսալ* է այլ անձանց<sup>1352</sup>:

Մալ ոջահաթ (مالوجهات) - Եզրույթը կազմված է «մալ» (ապրանք, հարստություն) և «ջահաթ» (կողմեր, վայրեր, վարելահողեր) բառերից: «Մալը» սեփականության հարկն էր, իսկ «ջահաթը» գյուղի վարելահողերից գանձվող հողային հարկը: Այս երկու հարկերը միշտ միատեղ էին հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից: Մալ ոջահաթը բնակչությունից գանձվող ռենտա-հարկի մեծ մասն էր կազմում և մի անգամ որոշված լինելով անխախտ չափերով գանձվում էր ռայաթներից: Դրա համար էլ, շատ հաճախ այս անվան տակ հասկանում էին տվյալ օբյեկտից գանձվող նաև այլ հարկերը, այս դեպքում «մալ ոջահաթ» եզրույթը դիտվում էր որպես հավաքական հարկային եզրույթ<sup>1353</sup>:

Մահալ (محل) - Շրջան, գավառ, XVII-XIX դարերում Անդրկովկասի վարչական բաժանման միավորներից է:

Ման (من) - Կշռի միավոր: XVIII դարում 1 թավրիզի մանը հավասար էր մոտ 3 կգ<sup>1354</sup>:

Մանալ (منال) - Սկզբնաղբյուրներում և վավերագրերում երբեմն 'մալ և ջահաթ' (մալ ոջահաթ) հարկային եզրույթի փոխարեն, հանդիպում է 'մալ և մանալ' (մալ ոմանալ) եզրույթը, որից կարելի է ենթադրել, որ 'մանալ' -ը փոխարինում էր «ջահաթ» կամ «մութավաջ ջեհաթ» եզրույթներին: Սակայն վավերագիր 39-ում այն օգտագործված է իրեն համանիշ «մալի» կամ ընդհանրապես «մալ ոջահաթի» իմաստով<sup>1355</sup>:

<sup>1350</sup> Թ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 13, 30, էջ 47, 79; նաև Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 552, 572; թղթ. 1ե, վավ. 794բ,

<sup>1351</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 870:

<sup>1352</sup> Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 1096:

<sup>1353</sup> Զ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 112:

<sup>1354</sup> Զ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 223:

<sup>1355</sup> Նույն տեղում:

Մանգել (منزل) - Կայ ան, իջևան: Այ դպես էր կոչվում մի կայ անից մինչև մյուսն ընկած հեռավորությունը:

Մաջլեսնևիս (مجلسنویس) նաև վաղիենևիս: Տես այս մասին ատենախոսության էջ 198-199:

Մավաշի (مواشی) - Յարկ, որ գանձվում էր այծեր, ջորիներ ու ավանակ պահելու համար:

Մարաի (مراعی) - Յարկ, որ գանձվում էր այծեր, ջորիներ ու ավանակ պահելու համար:

Մարսումաթ տե'ս ռուսում-ռուսումաթ:

Միրաբ (میراب) - Պաշտոնյա, որ պատասխանատու էր ոռոգովի ջրի բաշխման համար:

Միրզա (میرزا) - «Ամիրզադե - امیرزاده» (իշխանագուն) աղավաղված ձևն է: Երբ այն դրվում է անունից հետո նշանակում է «տեր», «իշխան», «արքայազն», իսկ երբ հիշվում է անունից առաջ նշանակում է «գրագետմարդ», «դպիր», «գրագիր»:

Մուլլա (ملا) - Մահմեդական հոգևորական:

Մուլլաբաշի (ملاباشی) - Մահմեդական հոգևորականության աստիճանասանդղակում բարձրագույն պաշտոնն էր՝ ստեղծված շահ Սուլթան Յուսեյնի իշխանության տարիներին: Վերջինս բացի գիտնական աստվածաբանների ու աղքատների համար վազիֆե ինդրելուց ու խեղճերին բռնություններից ազատելու համար միջնորդելուց, նաև աղոթքներ ուսուցանելուց բացի այլ գործիչ էր միջամտում<sup>1356</sup>: Միր Մոհամմադ Բադեր Մաջլեսին առաջին մարդն էր, որ շահ Սուլթան Յուսեյնի օրոք նշանակվում է այդ պաշտոնում, որը հիմնում է Չահարբադի մարասեն և այնտեղ սկսում դասավանդել: Նրանից հետո այդ պաշտոնում նշանակվում է Սուհամմադ Յուսեյնը:

Մոհրդար (مهردار) - Կնիքապահ, դպիր: Սեֆյան ժամանակաշրջանում կային մի քանի մոհրդարներ՝ գրանցման մասին փաստող թագավորական կնիքի մոհրդարը, մատանու կնիքի դավաթդարը:

Մոհլաթանե (مهلتانه) - Բառացի նշանակում է «վճարի հետաձգման համար»: Այ դպես էր կոչվում հարկահավաքման նպատակով գյուղերն ուղարկվող պետական պաշտոնյաներին հարկահավաքության հետաձգման համար միանվագ վճարվող գումարը:

تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، ص. 2<sup>1356</sup>

Մուլ'աֆ (معاف) - Հարկային իմունիտետ, ազատում բոլոր տեսակի պետական հարկերից, երբեմն նաև միայն որոշ հարկերից և պարտավորություններից: Համանիշ՝ «մուսալլամ, թարխան»<sup>1357</sup>: Ավելի մանրամասն այդ մասին տե՛ս ատենախոսության երկրորդ գլխի չորրորդ բաժնում:

Մուլբաշիր (مباشراً) - Հարկահավաք, վերակացու, ձեռնավոր: Այսպես էին կոչվում հատկապես այն պաշտոնյաները, որոնք չափում էին կալերում կուտակված բերքը և առանձնացնում էին կալվածատիրոջն ու պետությանը տրվող ռենտա-հարկը<sup>1358</sup>:

Մուլթասադդի (متصدى) - Վերակացու: Այսպես էին կոչվում հատկապես դիվանական հարկային գործերի վերակացուները «մուլթասադդիան-ե օմուր-ե դիվանի – متصدیان امور دیوانی»<sup>1359</sup>:

Մուլթավալի (متولى) - Խնամակալ, տնօրեն: Այսպես էին կոչվում հատկապես մզկիթների կամ վանքերի առաջնորդները: Այդ պաշտոնում գտնվելու ընթացքում, տվյալ կրոնական հաստատությանը պատկանող բոլոր կալվածների և այլ ստացվածքների իրավասությունը և նրանցից ստացվող եկամուտների տնօրինության իրավունքը ամբողջապես վերապահված էր նրանց<sup>1360</sup>:

Մուլլազիմ (ملازم) - Ծառայող, սպասավոր: Առանձին նահանգներում տեղական իշխանավորների բեկլարբեկերի կամ հաքիմների անմիջական ենթակայության տակ գտնվող, տեղում կազմակերպված կարգապահական ջոկատներում ընդգրկված զինվորներ<sup>1361</sup>:

Մուլլք (ملك) - Սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված<sup>1362</sup>:

Մուլհասիլ (محصل) - Հարկահավաք, սովորաբար ցածրաստիճան պաշտոնյա:

Մուլղաթթա՛ (مقطعه) - Կտրված, որոշված, վերջնականապես որոշյալ չափով հաստատված գումար, որ պաշտոն կամ մի եկամտաբեր

<sup>1357</sup> Հ. Փափազյան, հրոժար տակներ, պրակ Ա, էջ 114:

<sup>1358</sup> Նույն տեղում:

<sup>1359</sup> Նույն տեղում:

<sup>1360</sup> Հ. Փափազյան, հրոժար տակներ, պրակ Բ, էջ 224:

<sup>1361</sup> Հ. Փափազյան, հրոժար տակներ, պրակ Բ, էջ 224-5:

<sup>1362</sup> Հ. Փափազյան, հրոժար տակներ, պրակ Ա, էջ 115:

հաստատության տնօրինության իրավունքը ձեռքբերելու համար հանձն էին առնում սիստեմատիկ կերպով մուծել պետական գանձարանը<sup>1363</sup>:

Մուղարարի (مقرری) - Բառացի նշանակում է «որոշված» կամ «որոշյալ»: Այսպես էր կոչվում այն որոշյալ գումարը, որ որպես նպաստ կամ թոշակ կանոնավոր կերպով տրվում էր հոգևորականներին, գիտնականներին և նման այլ մարդկանց<sup>1364</sup>:

Մուժայիզ (مميز) Այսպես էին կոչվում այն պաշտոնյաները, որոնք ստուգման նպատակով չափում էին ցանքատարածությունները, այգիները, բանջարանոցներն ու այլ ստացվածքները, նշում, թե ինչքան եկամուտ կարող է ստացվել դրանցից և ըստ այնմ որոշում, թե որքան հարկ պետք է գանձվի<sup>1365</sup>:

ՄուՆշի (منشی) - Գրագիր:

ՄուՆշի ալ-մամալիքը (منشی الممالک) գրում էր *դիվանբեկիի* կողմից հրապարակվող հրամանագրերը, իսկ մնացած հրովարտակները, որ հրապարակվում էր շահական *դաֆթարխանես*, մյուս պաշտոնյաների կողմից դրանց վավերացումից հետո *մուՆշի ալ-մամալիքը* ոսկով, կարմիրով կամ լաջվարդով *թողրա* էր դնում, որից հետո միայն այն հաստատվում էր մեծ վեզիրի կողմից<sup>1366</sup>:

Մուսալլամ (مسلم) - Յարկերից ազատված, հարկային իմունիտետ վայելող. գործածված է ինչպես անհատների, այնպես նաև օբյեկտների վերաբերյալ: Յամանիշ «մու'աֆ»<sup>1367</sup>:

Մուսթաաջիր (مستأجر) - Գյուղերից ու այլ հարկատու օբյեկտներից գանձվող հարկերը հաճախ վարձակալության էին տրվում, որոնց վարձակալողները կոչվում էին մուսթաաջիրներ:

Մուսթովֆին (مستوفی) - Պետության, արքունիքի, ինչպես նաև կրոնական հաստատությունների ֆինանսական, հաշվապահական գործերի գլխավոր կառավարիչներն էին: *Մուսթովֆիներ* կային խոշոր նահանգային վարչական կենտրոններում, որոնք վերահսկում ու կառավարում էին տվյալ նահանգի կամ երկրամասի հաշվապահական գործերը: Սրանք ենթարկվում էին մայրաքաղաքում

<sup>1363</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 225:

<sup>1364</sup> Նույն տեղում:

<sup>1365</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 115-6:

<sup>1366</sup> میرزا علی نقی نصیری، القاب و مواجب دوره دور سلطین صفوی، به تصحیح یوسف رحیم لو، مشهد، دانشگاه فردوسی، 1371، ص. 51-52.

<sup>1367</sup> Յ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 116:

նստող մուսթովֆի ալ-մամալ էքիս, որը երկրի ֆինանսական գործերի գերագույն կառավարիչն էր և հաշվետու էր միայն մեծ վեզիր Է'էթեմադ ալ-դովլ էի առաջ<sup>1368</sup>:

Մուսթովֆի ալ-մամալ իքը (مستوفى الممالك) - երկրի ֆինանսական գործերի գերագույն կառավարիչն էր և հաշվետու էր միայն մեծ վեզիր Է'էթեմադ ալ-դովլ էի առաջ: Նահսկում էր պետական ամբողջ ելու մուտին, նախապատրաստում էր բյուջեն և ստուգում տարեկան հաշվեկշիռները: Բոլոր բեկլարբեկերի, խաների, հաքիմների ու սուլթանների թիուլներն ու համեսալ եները, վեզիրների, մուսթովֆիների ու քալանթարների ռուսումաթը գրագիրների ու զինվորականների ռոճիկները, վազիֆեները, սոյուրդալ ներն ու այլ հատկացումները նրավերահսկողության տակ է, նրակնիքով են տրվում մասյաններից քաղվածքները առևտրական գործարքների ու թանխահները<sup>1369</sup>: Մուսթովֆի ալ-մամալ էքի առաջ հաշվետու էին դաֆթարխանեի դարուդան, նազիրը, սահիբթովջիհը, ավարեջենևիսը և հարկային – ֆինանսական գործերի հետ առնչվող մյուս բարձրաստիճան պաշտոնյաները: Յարկ եղած դեպքում նա իրավասու էր ստուգելու նաև արքունի կալվածների և վակֆային ստացվածքների գլխավոր հաշվապահության (մուսթովֆի-ե խասսե – مصطفى موقوفات և مصطفى خاصة) գործերը:

Մուֆթի (مفتى) մահմեդական բարձրաստիճան հոգևորական, որը հրատարակում էր ֆաթվաները:

Յայլաղ (بیلاق) քոչվորների ամառանոցային օթևանը:

Յասավուլլ-ե դուռ (يساول قور) - զինամթերքի ու պահեստի գեներալի համար պատասխանատու սպասավոր, հեծյալ զինվորական:

Յասավուլլ-ե սոհբաթ (يساول صحبت) - Շահի ընդունելու թյան սրահի սպասավոր: Այս պաշտոնին նշանակվում էին հիմնականում նշանավոր *ամիրների* որդիները: Նրանք, որ ընդամենը 8–9 հոգի էին, *իշիք աղասիի* ենթականերն էին, ծառայում էին *իշիք աղասիին խասսեի* ժողովների ժամանակ, իսկ *ամմեի* հանդիսությունների ընթացքում՝ կանգնած էին շահի դիմաց: Նրանց էին վստահում վտանգավոր հանձնարարություններ, և այնպիսի ձեռնարկումներ,

<sup>1368</sup> Ջ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 225:

<sup>1369</sup> تذكره الملوك، بكوشش محمد دبیرسیاقی، ص. 17.



որոնց համար անհրաժեշտ էր լիակատար նվիրվածություն: Արքունի բարձրաստիճան սպասավորի պարտականություններից էր շահի սեղանի վրակարգուկանոնի պահպանումը<sup>1370</sup>:

Յուզբաշի (یوزباشی) - 100 շնչից բաղկացած զորագնդի հրամանատար:

Յուրտանե (یورتانه) Յարկ, որ վճարվում էր քոչվոր ցեղերի կողմից իրենց քոչի ընթացքում որևէ տեղ կանգ առնելու համար տեղի սեփականատիրոջը:

Նադիրի (نادری) Նադիր շահի օրոք հրանում շրջանառվող արծաթ դրամ, որը կշռում էր 11,5 գրամ, համարժեք էր 10 շահիի կամ 500 *դինարի* և հայտնի էր նաև ռուփի անվամբ (տե՛ս <http://www.azariha.org/?muid=48&item=656>): Յամապատասխանաբար 60500 Նադիրի գումարը համարժեք էր 3025 թումանի:

Նազարաթ (نظارت) էր կոչվում *Նազիր-ե բոյուլթաթի* գլխավորած վարչությունը: Այդ մասին է փաստում մասնավորապես *Նազիր-ե բոյուլթաթ* Սեֆի Ղուլի Բեկին տրված տիտղոսաշարը՝ «*Նազարաթի* ու բախտի *սարքար*, *Նազիր-ե բոյուլթաթ* Սեֆի Ղուլի Բեկ – سرکار نظارت و اقبال»<sup>1371</sup>: «عاليجاه...صفی قلی بيک ناظر بيوتات»:

Նազիր (ناظر) - Արքունի ծախսարարապետ, մատակարարումների գլխավոր վերակացու, որը գլխավորում էր արքունիքին առընթեր բոլոր տնտեսական հաստատությունները «բոյուլթաթը», դրա համար էլ նասովորաբար կոչվում էր «*Նազիր-ե բոյուլթաթ – ناظر بيوتات*»: «Բոյուլթաթի» մեջ մտնում էին արքունի պահեստները, խոհանոցները, ախոռատները, հատկապես հագուստներ և հանդերձանք արտադրող արհեստանոցներն ու գործատները և այս կարգի տնտեսական այլ հաստատություններ: Որքանով որ արքունի մատակարարումների մեծ մասը կատարվում էր ի հաշիվ բնակչությունից ստացվող հարկերի և ընդհանրապես սերտաղերս ուներ ընդհանուր ֆինանսների հետ, ուստի հարկերի հետ կապված և տնտեսական հարցեր շոշափող բոլոր հրովարտակները ենթակա էին Նազիրի հաստատմանը, որը վավերագրի մյուս երեսում մակագրում էր «աչքի անցկացվեց» (بنظر رسید) ու կնքում: Մի այլ մակագրությամբ՝ «համեմատվեց» (مقابله شد) նա հաստատում էր նաև շահի կողմից տրվող պար·աներին,

<sup>1370</sup> A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, p. 265:

<sup>1371</sup> Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2ա, վավ. 50:

շնորհումներին և այլ նվիրատվություններին վերաբերող հրովարտակաները: Ճահական արքունիքի օրինակով, առանձին երկրամասերում իշխող խաների և բեկլարբեկերի լիազոր ծախարարները ևս կոչվում էին նազիրներ<sup>1372</sup>:

Նազր (نذر) - Այն տուրքը, որ հավատացյալները ուխտում էին սիստեմատիկաբար հատուցել եկեղեցուն կամ մզկիթին: Վավերագրերում հանդիպում են նաև այս եզրույթի հոգնակի «նոզուր» և կրկնակի հոգնակի «նոզուրաթ» ձևերը:

Նահիե (ناحية) - Գավառ, շրջան: Համանիշ` «մահալ»:

Նայեբ (نایب) - տեղակալ, փոխանորդ: Տվյալ դեպքում խոսքը Սպահանի կառավարչի մասին է:

Նայեբ ալ-սուլթանե (نایب السلطنة) - Պաշտոն և տիտղոս, որ տրվել է Աֆշարական ու Ղաջարական շրջաններում որոշ արքայորդիների ու պաշտոնյաների, որոնք շահի բացակայության ժամանակ կամ նրա մահակասակ լինելու պատճառով, վարում էին իշխանությունը: Այս տիտղոսը Ֆաթիալի շահի օրոք կրում էր թագաժառանգ Աբբաս Միրզան, որը վճռորոշ դեր ուներ երկրի քաղաքական կյանքում:

Նասաղչի (نسقی) - Պահակազորային ջոկատի գինվոր, որի պարտականությունն էր բարձրաստիճան անձանց, հատկապես շահի պաշտպանությունը: Նադիր շահի նասաղչիները 300-ն էին:

Նովրուզի (نوروزی) - Նոր տարվա առաջին օրը` գարնանամուտին, ֆեոդալին կամ պետական պաշտոնյաներին վճարվող պարտադիր նվեր-տուրքը<sup>1373</sup>:

Շահրիար ալ-մուլք (شهريار الملك) - Քալանթար, քաղաքի կամ շրջանի կառավարիչ, հաքիմ:

Շար' (شرع) - Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները<sup>1374</sup>:

Շարի'աթ (شريعة) - Մուսուլմանական կրոնական օրենքներ հաստատված նորմեր, որոնցով առաջնորդվում էր հոգևորականների բարձրագույն կրոնական - դատական ատյանը: Այս հաստատությունը հաճախ անվանվում էր հեևց այդ օրենքների անունով, սակայն

<sup>1372</sup> Հ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 226:

<sup>1373</sup> Հ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 116:

<sup>1374</sup> Հ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 117:

սովորաբար այն կոչվում էր «Շար'»: Շարի'աթի կամ Շար'ի հոգևոր ատյաններում էին քննվում մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջը քաղաքացիների միջև առաջացած վեճերը: Այդ ատյանին կից կային նաև նոտարական գրասենյակներ՝ «մահզարներ», որտեղ տեղի էին ունենում կալվածքի առուծախի, վարձակալման, փոխատվության, ամուսնության և քաղաքացիների սոցիալական դրույթանը վերաբերող այլ ակտեր, կազմվում էին արձանագրություններ և տրվում էին համապատասխան փաստաթղթեր և նոտարական պատճեններ<sup>1375</sup>:

Շեյխուլլ-իսլամ (شیخ الاسلام) - Այսպես էր կոչվում տվյալ վայրի մուսուլմանների գլխավոր կրոնապետը: Յուրաքանչյուր խոշոր նահանգական-վարչական կենտրոն ուներ իր «շեյխուլլ-իսլամը», որը գլխավորում էր «շար'ի» հոգևոր դատական խորհուրդը: Խորհրդում քննվող գանազան հարցերի մասին շեյխուլլ-իսլամները տալիս էին վճիռներ՝ «ֆաթվաներ», որոնք օրենքի ուժ ունեին և ենթակա էին գործադրման տվյալ նահանգի կամ շրջանի սահմաններում<sup>1376</sup>:

Շիլթադ (شلتاق) - Այս եզրույթով անվանում էին այն անօրինական հարկերը, որոնք գանձվում էին *ռայաթներից* պետական պաշտոնյաների կողմից գանազան կեղծ ու հնարովի պատճառներով<sup>1377</sup>:

Շիքար (شیکار) - Այս հարկային եզրույթը նախապես եղել է «շահ-քար», ապա դարձել է «շաքար», որ ըստ Գևորգ Դարի բառարանի նշանակել է թագավորի, շահի (իմա՝ արքունիքի) համար կատարվող անվճար աշխատանք: Լինելով համանիշ և միշտ հիշվելով «բիգար» եզրույթի հետ միատեղ, ենթարկվել է բառային ասիմիլյացիայի և դարձել «շիգար»: Այնպես որ սխալ է այն բացատրել «շիքար – شیکار» (որս) բառով<sup>1378</sup>:

Չավուշ (چاوش) - Չորսիրամանատար: Նադիր շահի իշխանության տարիներին չավուշները թվով 30 հոգի ներկա էին գտնվում շահի դիվան դուրս գալու հանդիսությանը:

<sup>1375</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 227:  
<sup>1376</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 227:  
<sup>1377</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 117:  
<sup>1378</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 117:

Չափարի (սուրհանդակի) ձի (اسب چاڤاری) տես ատենախոսության էջ 155:

Չըրաղլըղ (چراغلق) - Բառացի՝ «լուսավորության համար», եկեղեցիների համար գանձվող մոմի դրամ<sup>1379</sup>:

Չոբանբեկի (چوبانبكى) - Եզրույթը տրված է տեղական թյուրքական արտասանությամբ, պարսկական արտասանությամբ պետք է կարդալ «չուֆանբեկի»: Սամեժ մասամբ կանխիկ դրամով գանձվող այն հարկներ, որ գանձվում էր մանր եղջերավոր անասուններից<sup>1380</sup>:

Պադրի (پادری) – Պադրե՝ «կաթոլիկ հայր» բառի իրանականացված տարբերակը, որը նկատի էին առնվում Իրանում կրոնական քարոզչությամբ զբաղվող միսիոներները:

Ջադիդօլ-իսլամ (جدیدالاسلام) - Նոր մահմեդականությունն ընդունած: Այսպես էին կոչվում այն քրիստոնյաներն ու այլադավանները, որոնք հասուն տարիքում հավատափոխ էին լինում և մահմեդականությունն ընդունում<sup>1381</sup>:

Ջահաթ (جهات) Ջահաթը վարելահողերից գանձվող հողային հարկներ, որը հաճախահանդես էր գալիս մալ հարկի հետմիասին՝ մալոջահաթ ձևով<sup>1382</sup>:

Ջամ’- (جمع) , կամ արվար-ե ջամ’ – (ابواب جمع) - Երկոչվում հարկերի հաշվառման այն ձևը, երբ որևէ հարկատու օբյեկտից կամ առանձին գյուղական համայնքից գանձվող բոլոր պետական հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին հարկային մատյաններում գրանցվելուց հետո, ի մի բերվելով, դրամական արտահայտությամբ արձանագրվում, թե որքան հարկ պետք է վճարվի և դրանից որքանը որ հարկի հաշվից<sup>1383</sup>:

Ջառչի (چارچی) - Մուսուլմանական պաշտոն:

Ջենս (جنس) բնամթերային հարկ:

Ջիզյա, տես՝ ս ատենախոսության էջ 114-119:

Ջով (جو) - Գարի, որպես հարկատեսակ տես՝ ս գուսֆանդ:

Ռահդար (راهدار) - Ճանապարհի պահակային ծառայող:

<sup>1379</sup> Յ. Փափազյան, հրո վարտակներ, արակ Ա, էջ 118

<sup>1380</sup> Յ. Փափազյան, հրո վարտակներ, արակ Բ, էջ 228:

<sup>1381</sup> Յ. Փափազյան, հրո վարտակներ, արակ Բ, էջ 228:

<sup>1382</sup> А. Д. Папазян, նշվ. աշխ., էջ 229-233:

<sup>1383</sup> Յ. Փափազյան, հրո վարտակներ, արակ Ա, էջ 103:

Ռահդարի (راهداری) - Մաքսային հարկ:

Ռադամ (رقم) - Պաշտոնական գրու թյ ու ն, թագավորական հրովարտակ:

Ռայ աթ, ճիշտը՝ ռաիյյաթ (رعیث) Սկզբնաղբյուրներում գործ է ածվում հպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես նստակյաց, հողագործ գյուղացիության իմաստով<sup>1384</sup>:

Ռուզնամ[չ]են (روزنامه) - դա օրագրային մատյանն էր, ուր գրանցվում էին բարձրաստիճան հոգևորականների (կաթողիկոսներ, վանքերի առաջնորդներ) ու այլ պաշտոնյաների (մելիքներ) իրավունքները հաստատող շահական հրամանագրերը<sup>1385</sup>: Վարչական բոլոր կարևոր հաստատություններն ունեին իրենց օրագրային մատյանները կամ ռուզնամաները, որոնցում նշվում էին տեղի ունեցող կարևոր ունեցվածքային փոփոխությունները, նորամուծությունները, նշանակումներն ու դեպքերը: Շահական արհեստանոցներում (կամ բոյունթաթում), մասնավորապես, օրագրային մատյաններում կատարված գրանցումները ամեն ամիս ներկայացվում էին այլ փաստաթղթերի հետ համեմատման համար, որից հետո նազերն այն կնքում էր ու ուղարկում մուսթովֆիին, վերջինս էլ՝ հարկահանին ու հարկեր վճարողին էր ուղարկում<sup>1386</sup>:

Ռուսում (رسوم) «ռասմ - رسم» բառի հոգնակին: Բառացի նշանակում է «կարգ», «սովորույթ»: Ընդհանրապես այսպես էին կոչվում այն բոլոր տուրքերը, որոնք գանձվում էին ոչ թե անմիջապես պետության, այլ պետական բարձրաստիճան և կրտսեր պաշտոնյաների ու հոգևորականության օգտին: Ինչպես, օրինակ «ռասմ-ալ-վիզարաթ», «ռասմ-ե դարուղեգի», «ռասմ-ալ-սուդուր» և այլն: Սկզբնաղբյուրներում և վավերագրերում հաճախ այս տուրքերը հիշվում են հոգնակի «ռուսում - رسوم» և կրկնակի հոգնակի «ռուսումաթ - رسومات» ձևերով:

Սադերիաթ (صادریات) – Արտակարգ հարկեր:

Սադր (صدر) - Մուսուլմանական կրոնական բարձրագույն առաջնորդ, հոգևոր բարձրագույն ասյանի պետ: XVII դարում գլխավոր

<sup>1384</sup> Չ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 118-9:

<sup>1385</sup> Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 1, 8, 43, 58, 65:

<sup>1386</sup> فلور و.، تاریخچه مالی – مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ص. 145

սադրերը երկուսն էին «սադր-ե խասսե – صدر خاصه» և «սադր-ե 'ամմե – صدر عامه», այս վերջինը կոչվում էր «սադր ալ -մամալ իք – صدر الممالك: *Սադր-ե խասսեի* պարտականությունների մեջ էր մտնում թագավորության *խալ իսեի* գործերի կառավարումը, *Սադր-ե ամմեն* զբաղվում էր հասարակ ժողովրդի *մուլլ քերի* հետկապված գործերով և գտնվում էր *սադր-ե խասսեի* վերահսկողության տակ<sup>1387</sup>: Նա դիվանբեկիի հետ ներկա էր գտնվում չորս տեսակի հանցագործությունների՝ «սպանության», «կոլսությունից զրկման», «ատամ կոտրելու» ու «կուրացնելու» գործով դատավարությունները, նաև նա էր նշանակում Յազդի, Աբրդուհի, Նախի, Արդեստանի, Ղումեշի, Նաթանզի, Դելիջանի, Խուեսարի, Ֆարիդանի, Ղումեշի, Քաշանի, Կումի, Աստարաբարի, Չաջիլարի ու Քաբուդջամեի *շար'ի հաքիմների*: Նրան էին ենթակա հիշյալ շրջանների *նաեբ ալ -սադարաթները*<sup>1388</sup>: *Սադր-ե ամմեն* նշանակում էր Ատրպատականի, Ֆարսի, Իրաքի ու Խորասանի *շար'ի հաքիմների*, մադրասեների, մզկիթների, *մովկուլ ֆաթի մուբաշիրների*<sup>1389</sup>:

*Սադրագամը* (صدر اعظم) պետության առաջին վեզիրն էր, որը կոչվում էր նաև «մեծ վեզիր» (կամ «վեզիր-ե ազամ – وزير اعظم»), որը գործածական է դառնում Ղաջարական շրջանում: Այդ պաշտոնը վարում են Չաջի Իբրահիմ խան Շիրազին հիջրայի 1209-1215 թթ. (1794/5-1800/1 թթ.), Միրզա Մուհամմադ Շաֆի Մազանդարանին՝ հիջրայի 1215-1234 թթ. (1800/1-1818/9 թթ.), Մուհամմադ Չուսեյն Ամին ալ -դովլեն՝ հիջրայի 1234-1239 թթ. (1818/9-1823/4 թթ.): Այդ պաշտոնում հիջրայի 1239-1240 (1823/4-1824/5 թթ.) և 1243-1250թթ. (1827/8-1834/5 թթ.) վարում էր Աբդալահ Ամին ալ -դովլեն, իսկ հիջրայի 1240-1243 թթ. (1824/5-1827/8 թթ.) Ալլահյար Ասաֆ ալ -դովլեն: Այս շրջանից մեծ վեզիրի պաշտոնի համարավելի գործածական է դառնում սադրագամ տիտղոսը: Չիջրայի 1250-1251թթ. (1834/5-1835/6 թթ.) այդ պաշտոնը վարում էր Միրզա Աբուլ - Ղասեմ *դայեմադամը*, որին սպանում են շահի հրամանով<sup>1390</sup>:

Սալամի (سلامی) - Այսպես է կոչվել այն տուրքը, որ պարտադիր նվերների ձևով ռայաթները հատուցում էին նոր նշանակված խանին,

<sup>1387</sup> Զ. Փախազյան, հրովարտականեր, պրակ Բ, Էջ 229:

<sup>1388</sup> تذكره الملوك، بكوشش محمد دبیرسیاقی، ص. 2

<sup>1389</sup> Նույն տեղում, Էջ 2-3:

<sup>1390</sup> عبد الرفیع حقیقت (رفیع)، وزیران ایرانی از بزرگ مهر تا امیر کبیر، تهران 1386، ص. 382.

հաքիմին, թիուլ դարին և մյուս պաշտոնյաներին, երբ գնում էին նրան ներկայ անալու և բարի գալու ստմաղթելու:

Սահեբ ջամ' (صاحب جمع) - Այդպես էին կոչվում խասսե-ե շարիֆեի գործատներին ու մյուս հաստատությունների ղեկավարները, որոնք գտնվում էին *Նազիր-ե բոյու թաթի* անմիջական ենթակայության տակ: Արքունի գանձարանի սահեբ ջամ'ը մանրամասն հաշվարկ էր ներկայացնում յուրաքանչյուր գործատան տարեկան ծախսերի վերաբերյալ որի քննությունից հետո ստացական գրելով գումարը ստանում: Հիշյալ պաշտոնյան արքունի գանձարանի համար նաև ստանում էր Սեֆյան հրանի տարբեր շրջաններից դիվանի սարքարին փոխանցվող գումարները:

Սահիբթովջիի տե'ս թովջիի:

Սավադ (سواد) - Պատճեն:

Սարխաթը (سرخط) - Տեղդալներին, հոգևորականությանը, բարձրաստիճան պաշտոնյաներին և հատկապես զինվորականությանը տրվող ռոճիկների և այլ կարգի պարգևատրությունների իրացմանը հսկող և հաշվառման ենթարկող հատուկ գրասենյակն էր, որի պետը կոչվում էր «բարձրագույն դիվանի սարխաթենևիս» («սարխաթենվիս-ե դիվան-ե ալա – سرخطنویس دیوان اعلى»): Սա բարձրագույն դիվանի 18 խոշոր ֆինանսական պաշտոնյաներից մեկն էր, որ «լազգյարնվիսի» հետ միասին հսկում էր զինվորականությանը տրվող ռոճիկներին: Ռոճիկների հատուցման, պաշտոնների և այլ պարգևատրությունների վերաբերյալ տրվող բոլոր հրովարտակները առանց *սարխաթենևիսի* ստորագրության և կնիքի համարվում էին անվավեր: Ներկայացվող բոլոր հրովարտակները նա գրանցում էր հատուկ մատյանում, որ կոչվում էր «սարխաթի դաֆթար», ապա հրովարտակի մյուս էջի վրա մակագրում էր «արձանագրվեց սարխաթի դաֆթարում» (ثبت دفتر سرخط) և կնքում<sup>1391</sup>:

Սարրեշթե (سررشته) - Հաշվապահության գրասենյակ, ֆինանսական բաժին:

<sup>1391</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 230:

Սարքար (سرکار) - Գործերի լիազոր-կառավարիչ, տնօրեն: Գործ է ածվում հատկապես տնտեսական գործերը տնօրինող հաստատության կամ վարչության իմաստով<sup>1392</sup>:

Սեիդ (سید) - Տեր, պարոն: Այսպես էին կոչվում հատկապես այն հոգևորականները, որոնք, իբր սերած էին Ալիի սերունդներից<sup>1393</sup>:

Սիադ (سیاق) – Գրչության և թվերի գրության համակարգ, որը մինչև Ղաջարական ժամանակաշրջանի վերջը կիրառվում էր հաշվապահական ու հարկային դրամով ու կշռով հաշվարկները կատարելու համար:

Սիջիլ (سجل) - Վավերագիր, հաստատուն գրություն, վկայական, սիգիլ<sup>1394</sup>:

Սիփահսալար (سپهسالار) - Այսպես էր կոչվում բանակի գլխավոր հրամանատարը: XVIII դարի առաջին կեսում այս պաշտոնում սովորաբար նշանակվում էին Ատրպատականի բեկլարբեկերը<sup>1395</sup>:

Սուլթան (سلطان) - Սուլթանը իշխանական աստիճանակարգում հաջորդում էր խանին և որոնց հաջորդում էին մինբաշիները ապա յուզբաշիները<sup>1396</sup>: Սուլթանին ենթակա տարածքը համապատասխանաբար կոչվում էր սուլթանություն, մասնավորապես հայ տնի էտրևանի կազմի մեջ մտնող Շորագյալի սուլթանությունը:

Սոյուրսաթ կամ սուրսաթ (سیورسات) – *Ռայ աթների* կողմից տվյալ վայրում գտնվող զորքի ապահովումը մթերքով, նաև ընդհանրապես բանակի գլխավոր ուժերի համար պարենի ու մթերքի մատակարարումը, որը հաստատված էր հատուկ մատյաններով:

Վազիֆե (وظیفه) – Հատուկ պարգև, որ որպես կենսաթոշակ շահի կամ խոշոր իշխանավորների կողմից ի նշան մեծարման և հարգանքի տրվում էր գիտնականներին, գրողներին, անվանի մարդկանց ու հոգևորականներին որպես կեր<sup>1397</sup>:

Վալի (والی) - Իրանի ծայրամասային 4 վիլայեթներից (Արաբիստան, Լուրիստան, Վրաստան և Քրդստան) մեկի կառավարիչն է: Վալիները պատկանում էին տվյալ վիլայեթի տիրակալների տոհմին

<sup>1392</sup> Հ. Փափազյան, հրո վարտականեր, պրակ Բ, էջ 230:

<sup>1393</sup> Նույն տեղում:

<sup>1394</sup> Հ. Փափազյան, հրո վարտականեր, պրակ Ա, էջ 120:

<sup>1395</sup> Հ. Փափազյան, հրո վարտականեր, պրակ Բ, էջ 231:

<sup>1396</sup> A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, p. 278.

<sup>1397</sup> Հ. Փափազյան, հրո վարտականեր, պրակ Բ, էջ 232:



և ունեին ինքնավարության իրավունք: Չամարվում էր, որ այդպիսի վիլայեթի եկամուտը չէր մտնում իրանի պետական գանձարան: Վալին պարտավոր էր կառավարությանը ցուցաբերել ռազմական աջակցություն և շահին ուղարկել բառխանե: Վրաստանի վալին իրանից որպես ռոճիկ ստանում էր այնտեղ հավաքվող հարկերից: Այդպիսով ենթադրվում էր, որ վրաց վալին իրանի պաշտոնյա էր և ամիրների կարգում ամենաբարձրն էր, որին հաջորդում էին բեկլարբեկերը, այնուհետև՝ խաները, ապա՝ սուլթանները<sup>1398</sup>:

Վակիֆ (واقف) - Վակֆ անող, եկեղեցուն կամ մզկիթին, որևէ բան, հարստություն և, հող կամ կալված նվիրող:

Վակֆ (وقف) - Բառացի նշանակում է «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին նվիրված, վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որովհետև, նվիրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այլևս ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և որպես այդպիսիք ազատվում էին պետական հարկերից<sup>1399</sup>: Ինչպես վերը՝ ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ բաժնում արդեն նշվել է, վակֆը պաշտպանված էր նաև ջադիդ ուլլ-իսլամ ժառանգների ոտնձգություններից: Վակֆային հողատիրությունն ուներ ամենամոլոր իրավական հիմքը և վակֆի օրենքն առավել խիստ էր պահպանվում Սեֆյան պետության մեջ<sup>1400</sup>:

Վակֆնամե (վակֆնամչե) (وقفنامه) - Ավելի հաճախ հանդիպում է առանց վերջի «չե - چه» փոքրացուցիչ մասնիկի «վակֆնամե - وقفنامه» ձևով: Կտակագիր, փաստաթուղթ, որով հավատացյալները գանազան շարժական կամ անշարժ ստացվածքներ էին նվիրում եկեղեցիներին կամ մզկիթներին: Վերջի «չե» մասնիկը իմաստային փոփոխություն չի մտցնում այս եզրույթի մեջ<sup>1401</sup>:

Վադիենևհիսի (واقعه نویسی) կամ մաջլեսնևհիսի մասին մանրամասն տես ատենախոսության մեջ էջ 54-55, 198-199:

Վաքիլ – (وكيل)- Որևէ մեկի կողմից լիազորված անձ, ներկայացուցիչ կամ գործերի տնօրեն, նաև գործակատար<sup>1402</sup>: Ինչպես

<sup>1398</sup> تذكره الملوك، بكوشش محمد دبیرسیاقی، ص. 4-5

<sup>1399</sup> Չ. Փափազյան, հրո վարտակներ, պրակ Ա, էջ 120:

<sup>1400</sup> А. Папазян, նշվ. աշխ., էջ 118.

<sup>1401</sup> Չ. Փափազյան, հրո վարտակներ, պրակ Ա, էջ 120-1:

<sup>1402</sup> Չ. Փափազյան, հրո վարտակներ, պրակ Ա, էջ 121:

երևում է վավերագրի բովանդակությունն ից, Նադիր շահի օրոք այդպիսի պաշտոնյաներ (*մալ իյյ աթի վաթիլ*) էին հանդես գալիս, որոնք միջամտում էին դատավարության գործընթացին՝ հարկային մարմինների օգտին գանձումներ կատարելու համար:

Վեզիր (*وزير*)- Սեֆյանների օրոք այսպես էին կոչվում այն բարձրաստիճան ֆինանսական պաշտոնյաները, որոնք մուսթովֆիների հետմիասին հսկում էին պետության, արքունիքի և բանակի ֆինանսներին և զինվորականությանը տրվող ռոճիկների բաշխման գործին: Նրանք անմիջապես պատասխանատու էին էթեմադալ-դովլեի առաջ և փաստորեն հանդիսանում էին վերջինիս ազենտները ֆինանսական կառավարչություններում՝ սարքարություններում: Երկրամասային և նահանգային խոշոր կենտրոններում ևս կային լայն արտոնություններ վայելող վեզիրներ, որոնք հանդիսանում էին մեծ վեզիր՝ էթեմադալ-դովլեի ներկայացուցիչները իրենց ենթակա մարզերում<sup>1403</sup>: Աֆշարական թագավորական տան իշխանության շրջանում վեզիր եզրույթը հիմնականում հանդես է գալիս մի որևէ շրջանի կամ քաղաքի ներքին գործերը տնօրինող պաշտոնյայի անվան կամ ընդհանրապես պետական պաշտոնյայի իմաստով<sup>1404</sup>:

Վիլայեթ (*ولایت*) - Երկիր, երկրամաս, նահանգ: Աղբյուրներում և վավերագրերում գործածվում է փոփոխակի իմաստով: Երբեմն *վիլայեթ* անվան տակ հասկացվում էր մի ամբողջ երկիր, երբեմն ընդարձակ նահանգ, իսկ երբեմն նույնիսկ մեծ գավառ<sup>1405</sup>:

Վջուհաթ - *وجوهات* - Տվաջի - *وجه* (գումար) բառի կրկնակի հոգնակի ձևն է (*وجوه وجوهات*): Այս անվան տակ հասկացվում էին առհասարակ այն բոլոր հարկերը, որոնք գանձվում էին կանխիկ դրամով: Աղբյուրներում հանդիպում է նաև «թավաջջուհաթ- *توجهات*», «մուլթավաջջեհաթ- *متوجهات*» ձևերով<sup>1406</sup>:

Ուլամա «*علماء* - հոգև. - *عالم*» (գիտնական, գիտուն) բառի հոգնակին է, որը նշանակում է կրոնական գիտելիքներին լավատեղյակ անձնավորություն:

<sup>1403</sup> Յ. Փափազյան, հրո վար տակներ, պրակ Բ, էջ 232-3:

<sup>1404</sup> رضا شعبانی، تاریخ ایران عصر افشاریه، جلد 2، ص. 645

<sup>1405</sup> Յ. Փափազյան, հրո վար տակներ, պրակ Ա, էջ 121:

<sup>1406</sup> Յ. Փափազյան, հրո վար տակներ, պրակ Ա, էջ 121:

Ուլլաղ ուլլամ (اللاغ الام) - «Ուլլաղ» նշանակում է «չորքոտանի», «գրաստ», իսկ «ուլլամ» նշանակում է «սայլ» (վերջի «մ»-ն չի բացատրվում): Վավերագրերում այս երկու եզրույթները գործ են ածվում որպես համանիշ եզրույթներ: Այսպես էր կոչվում գյուղացիների այն պարտավորությունը, որ նրանք կատարում էին իրենց փոխադրական միջոցները տրամադրելով զինվորականությանն ու պետական պաշտոնեությանը մի տեղից մյուս տեղը գնալու համար: Ձիերի, էշերի, ջորիների, ուղտերի և այլ գրաստների հավաքագրումներ կատարվում էին նաև խոշոր գորաշարժերի ժամանակ: Այս դեպքում գյուղացիները իրենք ևս պարտավոր էին հետիոտն գնալ իրենց գրաստների ետևից և տեղափոխել բանակի պաշարն ու հանդերձանքը<sup>1407</sup>:

Ուջրաթ-ուլլ-միսալ (اجرة المثل) – Բառացի նշանակում է «վարձ»: Շարիաթական եզրույթով այդպես էր կոչվում հողային ռենտան, որ հողագործ գյուղացիությունը պարտավոր էր հատուցել հողի սեփականատիրոջը: Համանիշներ են «մալիքանեն», «բահրաչեն», «մուլլքը»<sup>1408</sup>:

Ուրֆ (عرف) էին կոչվում սովորույթային օրենքով առաջնորդվող քաղաքացիական դատարանները, որոնց գլխավորում էին տեղական նահանգապետներն ու գավառապետները՝ խաները, բեկլարբեկերն ու հաքիմները: Ուրֆի դատարանների դերը ավելի մեծ էր հատկապես երկրի ոչ մուսուլմանական բնակչությանն ունեցող նահանգներում: Ընդհանրապես *‘ուրֆի* դատարանները ավելի մեծ իրավասություններ ունեին և *շարի*՝ հոգևոր դատարանների վճիռները մեծ մասամբ ենթակա էին նրա վավերացմանը: *Ուրֆի* էր վերապահված հատկապես քրեական խոշոր հանցանքների (սպանություն, բռնաբարություն, մարմնական վնասվածքներ հասցնել) քննությունը: *Ուրֆի դաֆթարդարը* պետք է ենթադրել, որ այդ դատարանների մատյաններում գրանցում կատարող պաշտոնյան էր<sup>1409</sup>:

Փարվանչե (پروانچه) – Հրովարտակի տեսակ, ավելի մանրամասն տեսաւտեսնախոսություն է ջ 201-202:

<sup>1407</sup> Նույն տեղում:

<sup>1408</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 122:

<sup>1409</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 233:

Փիշքաշ (پيشکش)- Չանազան առիթներով բնակչության կողմից  
Ֆեռդալին կամ պետական պաշտոնյաներին նվերների անվան տակ  
հատուցվող տուրք, ինչպես նաև ստորադաս պաշտոնյաների կողմից  
իրենց վերադասին, կամ խոշոր ֆեռդալների կողմից՝ շահին  
մատուցվող նվեր<sup>1410</sup>: Տե՛ս ավելի մանրամասն ատենախոսության էջ  
160-169:

Քալանթար (کلانتر) Էին կոչվում քաղաքների կամ քաղաքային  
խոշոր թաղամասերի աշխարհիկ ղեկավարները, որոնք զբաղվում էին  
բնակչության քաղաքացիական հարցերով և հետևում քաղաքի  
հասարակական գործերին: Սրանք սովորաբար ընտրվում էին քաղաքի  
մեծահարուստ վաճառականների կամ խոջաների շարքերից<sup>1411</sup>:

Քարբալայի (کربلايي) - Քարբալայ ցեղածուխաժողովների անվանը  
կցվող մակդիր<sup>1412</sup>:

Քեշիք-նևիս (کشيکنويس) – Պաշտոնյա, որը որոշում է  
պահակագործայինների հերթը և պատասխանատու է պահակության ու  
հսկողության կազմակերպման համար:

Քյադխոդա (کدخدا) - Այսպես էին կոչվում գյուղական ավագները:  
Սակայն չպետք է հասկանալ միայն գյուղի «գեղջավագի»,  
«տանուտերի» կամ «ռեսի» իմաստով. մի գյուղում կարող էին լինել  
մի քանի քյադխոդաներ, դրանք փաստորեն գյուղի ավագների կամ  
«աղսախկալների» (պարսկ. – «ռիշսեֆիդ») խորհրդի անդամներն էին,  
որոնք այդ անունը ստացել էին երբեք գյուղի տանուտեր եղած  
Ժամանակ: Այդ պաշտոնից ազատվելուց հետո էլ նրանք շարունակում  
էին կոչվել քյադխոդաներ ու մասնակցում էին ավագների  
խորհրդին<sup>1413</sup>:

Քրքրա (کرکره) - Այսպես էին կոչվում «բամբակահան» բամբակը  
չանաքանելու գործատերերը:

Օլքա (الکا) - Յողային այնպիսի տիրույթներ, որոնք որպես ավատ  
տրվում էին քոչվոր ցեղերի պարագլուխներին և բարձրաստիճան  
զինվորականությանը՝ ամիրներին: Օլքա ստացող ամիրները  
պարտավոր էին պահանջված դեպքում որոշյալ քանակությամբ զորք

<sup>1410</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 122:

<sup>1411</sup> Նույն տեղում:

<sup>1412</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 234:

<sup>1413</sup> Յ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 122:

տրամադրել կենտրոնական իշխանությանը: Օլքայի ամիրները իրավունք ունեին առանձին դրոշակ ունենալ և հանդիսավոր երթերի ու գորաշարժերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարել<sup>1414</sup>:

Ֆակիհ (فقيه) - Ֆիկհի կամ իսլամի օրենսդրության գիտակ անձնավորություն:

Ֆարանգ (فرنگ) - Ֆրանսիայի աղավաղված տարբերակը: Այս անվանումն էին իրանցիները տալիս Եվրոպային ու Եվրոպական պետություններն ընդհանրապես:

Ֆարանգի (فرنگی) - Ֆրանսիացի կաթուղիկ Չայրերի պարսկական անվանումը: Պարսկալեզու վավերագրերում ու սկզբնաղբյուրներում այսպես են անվանվում Եվրոպացի միսիոներներն ընդհանրապես:

Ֆերման (فرمان) - Հրաման, թագավորական հրովարտակ:

Այսպիսով, Մատենադարանի տվյալ ժամանակաշրջանի պարսկերեն վավերագրերը պարունակում են մեծ թվով սոցիալ-տնտեսական, վարչական և այլ եզրույթներ, որոնց մեկնաբանությունը պարսկերեն վավերագրագիտության առաջնահերթ խնդիրներից է: Միաժամանակ նաև այդ վավերագրերի տվյալները կարևոր նշանակություն ունեն դրանցից շատերի ուսումնասիրության համար և օգնում են լիարժեք պատկերացնել տվյալ եզրույթի ամբողջական իմաստն ու նշանակությունը:

---

<sup>1414</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 123: